

ՎԱՂԻՆԱԿ ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

**ՄԵՐ ՏԻՐՈՋ ԵՒ ՓՐԿԻԶԻՆ՝
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ԱՌԱԿՆԵՐՈՒՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ
(Բ. ՀԱՏՈՐ)**

«Այս գործը Աստուծոյ օգնութեամբ կատարուեցաւ»
(Նէեմեայ 6.16):

Պէյրուք
2010

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Մեր երկնաւոր Հօր կամփով, մեր Տիրոջ եւ Փրկիչին Յիսուս Քրիստոսի շնորհով, եւ մեր անսխալական Առաջնորդին՝ Սուրբ Հոգիին առաջնորդութեամբ ու ներշնչումով, առակներուն բացատրութիւնը իր աւարտին հասցուցի, եւ ուստի, ամէն բանէ առաջ, իմ ամբողջ սրտովս ու հոգիովս, փա՛նֆ ու գոհութի՛ւն կը յայտնեմ Աստուծոյ որ զիս կարող դարձուց եւ արժանի գտաւ իր սուրբ խօսքին մեկնութիւնը կատարելու:

Աստուածաշունչը Աստուծոյ կենդանի խօսքն ու յայտնութիւնն է: Աստուածաշունչը Աստուծոյ գանձատունն է մեզի յանձնուած: Գանձատուն մը՝ որ ովկիանոսի նման անձայրածիր ու խորունկ է: Եւ որովհետեւ այդպիսին է, հաւատացեալ մարդը երբ իր ձեռքին մէջ բռնէ Աստուածաշունչը, պէտք է ակնկալէ գանձեր հանդէս բերել անկէ. գանձեր՝ անոնցմով նախ ի՛նք հարստանալու եւ ապա ուրի՛շը հարստացնելու:

Երկնային այդ գանձերուն մեծ բաժինը կը գտնենք մեր Տիրոջ խօսած առակներուն մէջ: Սոյն հատորը այդ գանձերուն յայտնաբերումն է որ կ'ընէ: Զեզի կը մնայ ձեր մտքի ու հոգիի ուռկանը լայն բանա՛ք եւ գայն խորունկ նետէ՛ք Աստուածաշունչի ովկիանոսէն հոսող այս հատորի գետին մէջ, որպէսզի անկէ ձեր դուրս բերած գանձերով լեցուի՛ք նշմարտութեան գիտութեամբ եւ դառնա՛ք անվեհեր ու արի վկաները նշմարտութեան:

Առակներու մեկնութեան այս երկրորդ հատորին վերատեսութեան աշխատանքը եւս կատարեց անխոնջ օգնականս՝ Յիսուսասէր՝ Մարալ Կրակեան, որուն կը յայտնեմ իմ երախտապարտութիւնս: Թող Աստուած վարձահատոյց ըլլայ իրեն, եւ օրհնէ ձեզ բոլորդ՝ որ Յիսուսը կը սիրէք եւ անոր խօսքն ու սէրը կը տարածէք:

Աղօթարար՝
Վաղինակ Վարդապետ

ԱՅՐԻ ԿՆՈՋ ԵՒ ԴԱՏԱԻՈՐԻՆ ԱՌԱԿԸ

«Յիսուս առակ մը պատմեց իր աշակերտներուն, ցոյց տալու համար թէ պէտք է միշտ աղօթել՝ առանց վհատելու: Եւ ըսաւ.

Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար, որ ո՛չ Աստուծո՛ւմէ կը վախնար եւ ո՛չ ալ մարդոցմէ կ'ամչնար: Նոյն քաղաքին մէջ այրի կիւն մըն ալ կար, որ անոր կը դիմէր եւ կը խնդրէր.՝ "Իրաւունքս պաշտպանէ հակառակորդէս": Դատաւորը երկար ժամանակ մերժեց դատը տեսնել, սակայն ի վերջոյ ըսաւ ինքնիրեն.՝ "Թէեւ Աստուծո՛ւմէ չեմ վախնար եւ մարդոցմէ չեմ ամչնար, բայց քանի այս այրին նեղութիւն կու տայ ինձի, իր դատը տեսնեմ, որպէսզի մինչեւ վերջ քովս գալով զիս չանհանգստացնէ"»:

Ապա Տէրը շարունակեց.

«Լսեցէք թէ ի՛նչ կ'ըսէ անիրաւ դատաւորը: Իսկ Աստուած որքա՞ն պիտի համբերէ իր ընտրեալներուն կրած անիրաւութեան. պիտի չպաշտպանէ՞ զանոնք, որոնք գիշեր ու ցերեկ իրեն կը դիմեն: Այո՛, կ'ըսեմ ձեզի՛ որ անոնց իրաւունքը անմիջապէս պիտի պաշտպանէ: Բայց Մարդու Որդին երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ» (Ղկ 18.1-8):

«Յիսուս առակ մը պատմեց իր աշակերտներուն, ցոյց տալու համար թէ պէտք է միշտ աղօթել՝ առանց վհատելու» (Ղկ 18.1): Քանի մը հաստատումներ.՝

1.՝ Որո՞նց պատմեց Յիսուս այս առակը: Ղուկաս կը հաստատէ թէ «պատմեց իր աշակերտներուն»: Իսկ ինչո՞ւ պատմեց: Պատմեց՝ «ցոյց տալու համար թէ պէտք է միշտ աղօթել՝ առանց վհատելու»: Արդ, մենք այստեղ ունինք երկու նշումներ նոյնիմէն Ղուկաս Աւետարանիչին կողմէ: Ի՛նքն է որ մեզի կ'ըսէ թէ Յիսուս որո՞նց պատմեց այս առակը եւ ի՛նքն է որ մեզի կ'ըսէ թէ ինչո՞ւ կամ ի՞նչ նպատակով պատմեց: Ղուկաս Աւետարանիչ իր այս վերաբերմունքով, ի՞նչ կը սորվեցնէ մեզի՛ այսօրուան աւետարանիչներու: Քանի մը բան.՝

ա.՝ Կը սորվեցնէ, թէ երբ ոեւէ հատուած առնենք Աստուածաշունչէն խօսելու համար անոր մասին, նախ պէտք է ճշդել թէ որո՞նց ուղղուած է տուեալ հատուածը: Յիսուս ոչինչ խօսեցաւ պատահականօրէն: Ան ինչ որ պատմեց՝ յատուկ դասակարգ մը նկատի ունենալով պատմեց: Աւետարանիչը կամ քարոզիչը պէտք է գիտակցի այս իրողութեան, որովհետեւ ան չի կրնար ամէն պատգամ՝ ամէն

դասակարգի ուղղել: Ան պետք է նկատի առնել թէ ի՛նչ տեսակ մարդոց կը խօսի, ըստ այնմ ճշդէ թէ ի՛նչ պիտի խօսի:

բ.- Կը սորվեցնէ նաեւ, թէ ոեւէ ֆարոգիչ երբ Աստուծոյ խօսքը պիտի փոխանցէ մարդոց, առանց նպատակի պետք չէ ընէ: Յիսուս առանց նպատակի բան մը չխօսեցաւ: Օրինակ, այս առակը որ Տէրը խօսեցաւ, նպատակը՝ իր հետեւորդները աղօթքի մղելն է: Աննպատակ խօսքը՝ կը նմանի պարապ օդը արձակուած նետին: Ամէն ֆարոգ պետք է յատուկ պատգամ մը ունենայ ժողովուրդին, եւ այդ պատգամն է որ պետք է դառնայ նպատակը ֆարոգին:

գ.- Ղուկաս Աւետարանիչ Յիսուսի պատմած առակը կապեց աշակերտներուն կեանքին: Ինչո՞ւ համար: Սորվեցնելու համար մեզի, թէ երբ Աստուածաշունչէն առնենք ոեւէ բաժին խօսելու համար անոր մասին, պետք է գայն կապենք այսօրուան մարդուն, այսօրուայ մեր կեանքին: Եթէ մեր ֆարոգներն ու պատգամները չկապենք ներկայ մարդու կեանքին եւ չբացատրենք թէ տուալ հատուածը ի՛նչ ըսելիք ունի մեզի այսօր՝ կը ձախողինք մեր առաքելութեան մէջ, եւ մեր ֆարոգը կը կորսնցնէ իր արժէքը:

Աստուածաշունչը անցեալի՛ն գրուած է բայց միայն անցեալին համար չէ գրուած, այլ՝ անցեալի, ներկայի եւ գալիք բոլոր մարդոց համար: Աստուածաշունչը կը նմանի արեւին, որ թէպէտ անցեալին մէջ ստեղծուած է, բայց միայն անցեալին համար չէ ստեղծուած, այլ բոլոր դարերու մարդոց ու բոլոր ժամանակներուն համար: Ինչպէս արեւը անցեալին ստեղծուած է, բայց այսօր ալ մեզի լոյս կու տայ, այնպէս ալ, Աստուածաշունչը անցեալին գրուած է, բայց այսօր ալ մեզի իր իմանալի լոյսէն կը բաշխէ:

դ.- «Յիսուս առակ մը պատմեց իր աշակերտներուն»: Կա՛նգ առնենք այս բառերուն վրայ եւ խորհրդածենք ու խոկանք անոնց մասին: «Աշակերտ» կը նշանակէ՝ հետեւորդ: Երբ Ղուկաս կը ճշդէ թէ Յիսուս այս առակը պատմեց իր աշակերտներուն, ասիկա ինքնին ցոյց կու տայ որ Յիսուս ըսելիք ունի իր հետեւորդներուն:

Եթէ դուն, սիրելի ընթերցող, Յիսուսի հետեւորդ մըն ես, վստահ եղիր որ ան ըսելիք ունի քեզի: Երբ կ'ըսեմ՝ ըսելիք ունի քեզի, առաջին հերթին, կը հասկնամ որ ան քեզի հետ խօսիլ կ'ուզէ, քեզի հետ ժամանակ անցնել կ'ուզէ, ինքզինք քեզի տրամադրել ու յանձնել կ'ուզէ: Յիսուս հաճոյք կ'առնէ երբ իր հետեւորդներուն հետ կը խօսի: Պէտք չէ զինք գրկենք իր այդ հաճոյքէն: Ասիկա կ'ըսեմ, որովհետեւ այսօր երբ մարդիկ աղօթքի կենան, սովորաբար միայն իրե՛նք կը խօսին եւ երբեք առիթ չեն տար Յիսուսի որ ինքն ալ խօսի:

Որքան յաճախ կը պատահի որ երբ աղօթքի կենանք, մեր ըսելիքը վերջացնելէ ետք, անմիջապէս կ'եզրակացնենք ըսելով. «Տէր Յիսուսի անունով աղօթեցիմք, ամէն» եւ կը ձգենք ու ոտքի կ'ելլենք: Ասիկա աղօթք եղաւ: Ո՛չ, ասիկա աղօթք չեղաւ: Աղօթքը երկխօսութիւն է, իսկ երկխօսութիւն՝ կը նշանակէ՝ երկու անձերու միջեւ խօսակցութիւն: Բայց տուեալ ձեւով աղօթելը երկխօսութիւն չէ, այլ՝ մենախօսութիւն, այսինքն՝ միմակ խօսիլ: Աղօթքի պահուն մենք միմակ չենք, որովհետեւ ԱՆՁԸ որուն կ'աղօթենք ներկայ է: Իսկ եթէ ներկայ է, պէտք է յարգեմք անոր ներկայութիւնը եւ թոյլ տանք կամ առիթ տանք որ ի՛նքն ալ խօսի: Դուն անհագիստ պիտի չըլլայի՞ր եթէ մէկու մը հետ խօսիլ ուզէիր եւ ան բնա՛ւ քեզի առիթ չտար որ խօսէիր, այլ միայն ի՛նք խօսէր: Վստահաբար: Բայց դուն ալ նո՛յնը Յիսուսին կ'ընես, երբ «Տէր Յիսուսի անունով աղօթեցի» կ'ըսես ու ոտքի կ'ելլես, առանց թոյլ տալու որ ինքն ալ քեզի՛ խօսի: Գրիչ մը ըսած է. «Երբ աղօթքի պահուն խօսիս՝ Յիսուս լուռ կը մնայ, իսկ երբ դուն լուռ մնաս՝ Յիսուս ինք կը խօսի»: Ուստի, ասկէ ետք փորձենք քիչ մը լուռ մնալ աղօթքի պահուն, որպէսզի Տէրը ի՛նք խօսի մեզի:

Այս կէտիս սկիզբը ըսի, որ երբ Դուկաս կը ճշդէ թէ Յիսուս այս առակը պատմեց իր աշակերտներուն, ատիկա ինքնին ցոյց կու տայ որ Յիսուս ըսելիք ունի իր հետեւորդներուն: Արդ, ի՞նչ ըսելիք ունի: Ան իր հետեւորդներէն իւրաքանչիւրին իրեն յատուկ ըսելիք ունի:

– Ան նախ խօսիլ կ'ուզէ մեզի՛ ինքնիր անձին մասին: Կ'ուզէ ինքզինքն ճանչցնել մեզի: Կ'ուզէ գիտնանք թէ ինք բարեկամ է մեզի, ընկեր է մեզի, եղբայր է մեզի: Կ'ուզէ ցոյց տալ մեզի թէ ինք որքան մեզ կը սիրէ, որքան հետաքրքրուած է մեզմով: Կ'ուզէ բացայայտել մեզի թէ ի՛նչ գեղեցիկ ծրագիր ունի մեզի համար, եւ թէ ի՛նչ անպատմելի փառք վերապահած է մեզի համար: Այո՛, ան կ'ուզէ իր քաղցր ներկայութեամբ ողողել մեզ, մեր ուրախութիւնը դառնալ եւ մեզ իր ուրախութիւնը դարձնել:

– Ան կ'ուզէ նաեւ խօսիլ մեզի՛ նոյնիման մեր անձերուն մասին: Մենք շատ բան ունինք սորվելիք մեր անձերուն մասին: Ամենէն դժուար բանը՝ ինքնաճանաչողութիւնն է, այսինքն՝ ինքզինքն ճանչնալը: Քրիստոս ի՛նքն է որ կ'օգնէ մեզի որ ճանչնանք մեր անձերը, մեր տկարութիւնները, մեր առաւելութիւնները, մեր մեղքերը, մեր կարողութիւնները: Ուստի, որպէսզի ճանչնանք մեր անձերը, աղօթենք եւ ըսենք. «Տէ՛ր, գիտցո՛ւր մեզի թէ ո՛վ եմք մենք: Օգնէ՛ ճանչնանք մեր անձերը, մեր ինքնութիւնը, մեր ծագումը, մեր կեանքի նպատակը: Յայտնէ՛ մեզի մեր տկարութիւնները, մեր խեղճութիւնները եւ

նկարագրային մեր այն գիծերը՝ որոնք հանոյ չեն քեզի, եւ օգնէ որ
ձերբազատինք անոնցմէ»:

– Տակաւին, Տէրը կ'ուզէ խօսիլ մեզի՝ մեր նմաններուն մասին, մեր
միջավայրին մասին, մեր ընկերութեան ու ընկերներուն մասին, մեր
պարագաներուն մասին, մեր բարեկամներուն մասին: Յիսուս շատ բան
կը յայտնէ մեզի մեր շրջապատի մարդոց մասին եւ կը սորվեցնէ թէ
ի՛նչպէս պէտք է անոնց հետ վերաբերիլ, գործել, խօսիլ, աշխատիլ: Եթէ
աղօթող մարդիկ ենք, Տէրը կը յայտնէ մեզի մեր շրջապատին մէջ
գտնուող կարիքները: Յիշեցէ՛ք որ Կանայի հարսանիքին ընթացքին
Մարիամ գիտցաւ թէ գինին վերջացած էր, եւ դառնալով Յիսուսին՝
ըսաւ. «Գինի չունիմ» (Յհ 2.3): Մարիամ ի՞նչպէս գիտցաւ որ գինին
վերջացած էր: Մէ՞կը ըսաւ իրեն: Ո՛չ: Մարիամ գիտցաւ, որովհետեւ
լեցո՛ւն էր Սուրբ Հոգիով, լեցո՛ւն էր աղօթքի կրակով, լեցո՛ւն էր
Աստուծոյ ներկայութեամբ: Ոեւէ մէկը որ լեցո՛ւն է Աստուծով՝
կ'անդրադառնայ իր շրջապատին մէջ գտնուող պակասութիւններուն,
կարիքներուն, նիշդ ինչպէս մեր սուրբ մայրը՝ Մարիամ անդրադարձաւ,
եւ ո՛չ միայն կ'անդրադառնայ, այլեւ այդ բոլոր կարիքները կը
ներկայացնէ Յիսուսին, ինչպէս Մարիամ ինք ներկայացուց:

Կ'եզրակացնենք ըսելով, աղօթքի պահուն, Յիսուս կ'ուզէ խօսիլ
մեզի՝ ինքնիր անձին մասին, մեր անձերուն մասին եւ մեր շրջապատի
մարդոց մասին:

2.– «Իր աշակերտներուն»: Շատ մը առակներու պարագային,
Ղուկաս Աւետարանիչ մեզի չ'ըսեր թէ անոնք որո՛նց ուղղուած են, բայց
այստեղ, ինչպէս դիտել տուինք, յատուկ շեշտուածութեամբ մը կը
հաստատէ թէ այս առակը Յիսուսի աշակերտներուն ուղղուած է: Ինչո՞ւ
արդեօք: Երբ նկատի առնենք առակին բովանդակութիւնը, ուր մեզի
կ'ըսուի թէ դատաւոր մը կար որ կը զլանար այրի կնոջ մը իրաւունքը
պաշտպանել, պարզ կը դառնայ որ Յիսուս իր հետեւորդներուն կը
յիշեցնէ որ աշխարհ յանախ պիտի զլանայ տալ իրենց իրաւունքը:

3.– «Պէտք է միշտ աղօթել՝ առանց վիատելու»: Բաներ կայ որ
Յիսուսի հետեւորդները պէ՛տք է ընեն: Բաներ՝ որ իրենց ազատ կամքին
չէ ձգուած, այլ՝ պարտաւոր են ընելու: Այդ բաներէն մին՝ աղօթքն է:
Յունարէն բնագիրին մէջ «պէտք է» բացատրութեան համար
գործածուած է՝ $\tau\omicron$ $\delta\epsilon\iota\nu$ բառերը, որ կը թարգմանուի՝ «Անհրաժեշտ է»,
կամ՝ «իսիստ անհրաժեշտ է»: Տարբերութի՛ւն կայ «պէտք է» եւ
«անհրաժեշտ է» բառերուն միջեւ: «Պէտք է» կը նշանակէ՝ «կարելոր է»,
բայց «անհրաժեշտ է» կը նշանակէ՝ «շատ կարելոր է»: Ուստի, այստեղ
Ղուկաս Աւետարանիչ կ'ուզէ մեր ուշադրութեան յանձնել թէ Յիսուս

աղօթքը կամ աղօթելը՝ հաւատացեալ մարդուն համար բացարձակ անհրաժեշտութիւն կը սեպէ:

Քրիստոս ինքն է մեր հաւատքի հիմնադիրը (Եբր 12.2): Աղօթքէն զատ արդեօք ուրիշ միջոց կա՞յ, որով հաւատացեալ մարդը կարենայ հանդիպիլ իր հաւատքի Հիմնադիրին: Աղօթքէն զատ ուրիշ միջոց կա՞յ, որով փրկութեան կարօտ եղող մարդը կարենայ հանդիպիլ իր Փրկիչին: Աղօթքի պահը այն պահը չէ՞ ուր Արարիչ ու արարած բով-բովի կու գան:

Հաւատացեալ մարդը միայն աղօթքով կրնայ յարաբերութեան մէջ ըլլալ իր հաւատքի Հիմնադիրին հետ: Աղօթքէն զատ, մարդս Աստուծոյ կապող եւ մարդս Աստուծոյ մտերմացնող ուրիշ միջոց չկայ: Յիսուս կ'ուզէ որ իր հետեւորդները աղօթքով մարդիկ ըլլան: Աղօթական կեանք չապրող մարդը՝ չի կրնար Քրիստոսի աշակերտ սեպուիլ:

4.- «Պէտք է միշտ աղօթել՝ առանց վիատելու»: Ի՞նչ պէտք է հասկնալ «միշտ աղօթել» բացատրութեամբ: Մէկ-երկու նշումներ.-

ա.- «Միշտ աղօթել» բառերով, Յիսուս ըսել չ'ուզեր թէ օրը քանչորս ժամ պէտք է ծունկի գանք եւ աղօթենք, այլ ըսել կ'ուզէ, թէ մնայուն եւ յարատեւ կերպով կապի ու յարաբերութեան մէջ պէտք է ըլլանք Աստուծոյ հետ: Աստուծոյ զաւակներուն կոչումն է աղօթքի նամբով մնայուն կերպով հաղորդակցիլ Աստուծոյ հետ: Եւ աղօթքէն զատ արդեօք Աստուծոյ հետ հաղորդակցելու ուրիշ կերպ կա՞յ:

բ.- Չմոռնանք որ առակը մեզի կը խօսի անիրաւուած եւ իրաւագրկուած կնոջ մը մասին: Ուստի, «միշտ աղօթել», կը նշանակէ՝ մնայուն կերպով աղօթել անիրաւուածներուն, իրաւագրկուածներուն, որբերուն, որբեւարիներուն, տկարներուն, հիւանդներուն, սգաւորներուն եւ տառապողներուն համար: Բայց ո՞չ միայն պէտք է աղօթել այս դասակարգի մարդոց համար, այլ պէտք է այցելութիւն եւս տալ անոնց: Արդարեւ, անիրաւուածներուն եւ իրաւագրկուածներուն այցելելը՝ միշտ աղօթել է: Որբերուն եւ որբեւարիներուն այցելելը՝ միշտ աղօթել է: Տկարներուն, հիւանդներուն, սգաւորներուն եւ տառապողներուն այցելելը՝ միշտ աղօթել է:

Այլապէս, ինչն՞ով կ'օգտուինք երբ կ'աղօթենք հիւանդներուն համար, բայց չենք այցելել հիւանդներուն:

Ինչն՞ով կ'օգտուինք երբ կ'աղօթենք տկարներուն համար, բայց չենք աշխատիր գօրացնել տկար ձեռքերը:

Ինչն՞ով կ'օգտուինք երբ քառասուն օր պահք կը պահենք, բայց քառասուն օրուան մէջ ո՞չ մէկ աղօթքի կ'այցելենք:

Ինչն՞ով կ'օգտուի՞նք երբ ֆառասուն օր արցունք կը թափենք, բայց ֆառասուն օրուան մէջ արցունք մը չենք սրբեր:

Եւ նոյնիսկ, ինչն՞ով կ'օգտուի՞նք երբ կ'այցելենք տկարին, աղփատին, հիւանդին, անկարին, մոռցուածին, անտեսուածին, լքուածին, բայց բանով մը օգտակար չենք դառնար անոնց, այլ կը մնանք միայն խօսքի սահմաններուն մէջ:

Այո՛, միայն այցելութիւն տալը բաւարար չէ, այլ պէտք է տա՛լ գիտնանք: Տա՛լ՝ նոյնիսկ երբ մենք չունինք: Տա՛լ՝ նոյնիսկ երբ մենք կարիքի մէջ ենք: Ահա այն ատեն է որ Տէրը մեզ պիտի գնահատէ ու վարձատրէ: Յիշեցէք, երբ «Յիսուս կեցած էր տաճարի գանձանակին մօտ», տեսաւ այրի կին մը որ «եկաւ եւ նետեց երկու լումայ» (Մր 12.41-42): Անցեալին, հրէական տաճարի գանձանակին մէջ նետուած գումարները կը յատկացուէին աղփատներուն, կարիքաւորներուն, եւ կամ՝ այլ բարի նպատակներու համար: Արդեօք մենք ալ կը հետեւի՞նք այրի կնոջ օրինակին, եւ կը մտածե՞նք մեզմէ աւելի աղփատին մասին: Այրի կինը չփաւոր մըն էր, բայց բաժին հանեց չփաւորներուն: Անոր նման մենք եւս բաժին կը հանե՞նք չփաւորներուն, անկեալներուն: Այրի կինը իր արարքով սորվեցուց մեզի տա՛լ գիտնանք բարի նպատակներու համար: Տա՛լ գիտնանք նոյնիսկ երբ մե՛նք կարիքի մէջ ենք: Կեանքիդ մէկ անկիւնը ունեցիր գանձանակ մը եւ այդ գանձանակին անուներ դիր՝ «աղփատին գանձանակը»:

Եթէ մեր ֆրիստոնէութիւնը կ'ապրինք առանց զրկեալի մը կամ հիւանդի մը գործնապէս օգտակար դառնալու, թոյլ տուէք համեստօրէն ըսեմ՝ ատիկա պարա՛յ ֆրիստոնէութիւն է: Մենք չենք կրնար մեր ֆրիստոնէութիւնը ապրիլ մեր պատեանին մէջ ֆաշտելով: Այո՛, մարդ չի՛ կրնար իր ֆրիստոնէութիւնը ապրիլ գրասենեակներու մէջ: Մարդ չի՛ կրնար իր ֆրիստոնէութիւնը ապրիլ գրասեղաններու ետին: Մարդ չի՛ կրնար իր ֆրիստոնէութիւնը ապրիլ առանց այցելելու աղփատներուն եւ օգնելու անոնց: Մարդ չի՛ կրնար իր ֆրիստոնէութիւնը ապրիլ առանց այցելու եւ կարեկից ըլլալու հիւանդներուն:

Եզրակացնելով կ'ըսենք, «միշտ աղօթել»ը՝ միշտ այցելու ըլլալն է անկարներուն, հաշմանդամներուն եւ զրկուած ու տառապող բոլոր մարդոց:

5.- «Միշտ աղօթել՝ առանց վիատելու»: Քրիստոս ո՛չ միայն կը պատուիրէ միշտ աղօթել, այլեւ՝ աղօթել «առանց վիատելու»: Արդ, ի՞նչ պէտք է հասկնալ «աղօթել՝ առանց վիատելու» ըսելով: Քանի մը նշումներ.–

ա.- Որպեսզի նշգրիտ կերպով հասկանամք թե ի՞նչ կը նշանակե «աղօթել՝ առանց վհատելու», պետք է մեր ուշադրութիւնը դարձնենք առակին: Այրի կինը առանց վհատելու, երկա՛ր ժամանակ հետապնդեց իր դատը ու պահանջեց իր իրաւունքը: Ուստի, «աղօթել՝ առանց վհատելու», կը նշանակե աղօթել եւ խնդրել Աստուծմէ որ պաշտպանէ մեր դատն ու իրաւունքը, նոյնիսկ եթէ մեզի կը թուի որ Աստուած լուռ է:

Շատեր կ'աղօթեն եւ բան մը կը խնդրեն Աստուծմէ, բայց երբ տեսնեն որ շուտով պատասխան չեն ստանար՝ կը յուսահատին ու կը վհատին: Ահա թէ ինչո՛ւ Յիսուս կը պատուիրէ «աղօթել՝ առանց վհատելու», մինչեւ որ մեր սրտի խնդրանքը ստանանք, եւ առակը (8-րդ համարը) ցոյց կու տայ որ ի վերջոյ պիտի ստանանք այն ինչ որ խնդրած ենք կամ կը խնդրենք Տիրոջմէն:

Աստուած բազմաթիւ պատմառոներով կ'ուշացնէ պատասխանը մեր աղօթքին: Թուեմ մի քանի հատը պարզապէս: Օրինակ, երբեմն Աստուած կ'ուշացնէ պատասխանը մեր աղօթքին, որպէսզի տեսնէ թէ հաւատարիմ պիտի մնա՞նք իրեն: Երբեմն կ'ուշացնէ՝ մեզի յատուկ բան մը սորվեցնելու համար: Երբեմն կ'ուշացնէ՝ մեր մէջ կերտելու յարատեւելու ոգին: Երբեմն կ'ուշացնէ՝ որովհետեւ մե՛նք պատրաստ չենք ըլլար ստանալու այն ինչ որ կը խնդրենք իրմէ: Երբեմն կ'ուշացնէ՝ որովհետեւ տակաւին ժամանակը չէ եկած մեր խնդրանքը ստանալու: Երբեմն կ'ուշացնէ՝ գօտեպնդելու համար մեր հաւատքը:

բ.- Այրի կինը դատաւորին դիմելով կ'ըսէ. «Իրաւունքս պաշտպանէ հակառակորդէս»: Այս բառերը կը պարզեն որ հաւատացեալ մարդը անպայման հակառակութիւններու պիտի հանդիպի այս աշխարհին մէջ: Նկատի առնելով այս իրողութիւնը, կրնանք հաստատել թէ «աղօթել՝ առանց վհատելու», կը նշանակե աղօթել առանց տեղի տալու հակառակութեանց: Աշխարհի հակառակութիւնները մեզ վհատութեան պէտք չէ առաջնորդեն, ընդհակառակը, անոնք մեր աղօթական կեանքը աւելի՛ պէտք է արծարծեն, եւ մեր հաւատքը աւելի՛ պէտք է ամրացնեն:

գ.- Յիսուս այստեղ պատահական աղօթքի մասին չէ որ կը խօսի, այլ՝ արդարութեան ու իրաւունքի համար մատուցուած յարատեւ աղօթքի մասին: Անիրաւ դատաւորի մը մասին խօսելով, մեր Տէրը կ'ուզէ պարզել որ աշխարհ անարդարութեամբ եւ անիրաւութեամբ միշտ լեցուն եղած է եւ միշտ լեցուն պիտի ըլլայ: Այդ անարդարութեան եւ անիրաւութեան դիմաց, հաւատացեալ մարդը պէտք է միշտ աղօթէ առանց վհատելու:

Քրիստոս այս առակով եւ այրի կնոջ վերաբերմունքին ընդմէջէն կը սորվեցնէ մեզի, թէ Աստուծոյ զաւակը աշխարհի մէջ արդարութեան հաստատման համար մնայուն կերպով աղօթո՞ղ պէտք է ըլլայ: Աստուծոյ զաւակը անիրաւուածին իրաւունքին ձեռք բերման համար աղօթո՞ղ պէտք է ըլլայ: Աստուծոյ զաւակը արդարութիւնը հետապնդող մա՞րդ պէտք է ըլլայ, Աստուծոյ արդարութիւնը պահանջող մա՞րդ պէտք է ըլլայ:

Կեանքի անարդարութիւնները աղօթքով պէտք է դիմագրաւուին: Անարդարութիւնը՝ մնայուն պատկեր մը կը ներկայացնէ, անոր դիմաց աղօթքը եւս մնայուն պատկեր մը պէտք է ներկայացնէ:

դ.– «Միշտ աղօթել՝ առանց վիատելու»: Այս բառերուն մէջ ուրիշ հետաքրքրական իմաստ մը եւս կը գտնենք: Այս բառերով Յիսուս կարծէ՛ք մեզի կ'ըսէ. «Պայքարեցէ՛ք Աստուծոյ հետ: Յամա՛ն եղէ՛ք ձեր խնդրանքին մէջ: Մի՛ թողուք զԱստուած հանգիստ: Փակէ՛ք իրեն: Կառչեցէ՛ք իրեն: Մի՛ ձգէ՛ք կոկորդը մինչեւ որ ձեր ուզածը ստանա՛ք: Մի՛ ձգէ՛ք իր վերարկուն մինչեւ որ իր օրհնութիւնը ձեռք ձգէ՛ք: Եղէ՛ք Յակոբ նահապետին նման որ բռնեց զԱստուած եւ ըսաւ.– "Ձեմ թողուր ինձ մինչեւ որ զիս չօրհնես"» (Ծն 32.26): Այո՛, դուք ալ բռնեցէ՛ք զԱստուած ինչպէս Յակոբ ի՛նք բռնեց: Բռնեցէ՛ք զայն ձեր յամա՛տ ու յարատեւ աղօթքներով: Բռնեցէ՛ք զայն հաւատքի կապերով: Աստուծոյ օրհնութիւնը չստացած՝ մի՛ հեռանա՛ք: Ձեր սրտի փափաքը չկատարուած՝ մի՛ դադարինք թախանձելէ»:

Երբ կ'աղօթենք եւ առանց Աստուծոյ օրհնութիւնը ստանալու կը ձգենք կ'երթանք՝ կը նշանակէ թէ վիատեցանք, բայց Յիսուս ըսաւ պէտք է «միշտ աղօթել՝ առանց վիատելու»: Երբ կ'աղօթենք եւ առանց մեր սրտի փափաքը իրականացած տեսնելու կը ձգենք կ'երթանք՝ կը նշանակէ թէ վիատեցանք: Բայց Յիսուս կ'ուզէ որ մենք՝ իր հետեւորդներս, չվիատող ու չյուսալուող մարդի՛կ ըլլան: Ան կ'ուզէ որ յամա՛ն ըլլանք մեր հաւատքին ու աղօթական կեանքին մէջ:

Երբեմն կը մտածենք ըսելով. «Արդեօք անհանգիստ չե՞նք ընք զԱստուած մեր յարատեւ խնդրանքով կամ պահանջով»: Ո՛չ սիրելիներ, անհանգիստ չե՛նք ընք: Այս մտածումը Սատանան ինքն է որ կը դնէ մեր մտքին մէջ, որպէսզի շիջեցնէ աղօթքի մեր եռանդը: Եթէ Աստուած անհանգիստ կ'ըլլայ մեր յարատեւ աղօթքներէն ու խնդրանքներէն, այդ պարագային, ի՞նչպէս պէտք է հասկնալ Եսայի մարգարէին հետեւեալ կոչը. «Դուք, ո՛վ Տէրը յիշողներ, լուռ մի՛ կենա՛ք ու անոր հանգստութիւն մի՛ տա՛ք, մինչեւ անիկա հաստատէ, մինչեւ Երուսաղէմը երկրին գովելի փառաքը դարձնէ» (Ես 62.7): Ահաւասիկ մարգարէն ի՛նքն է որ կը

պատուիրէ հանգիստ չտալ Աստուծոյ: Անոնք որոնք կը խորհին որ Աստուած անհանգիստ կ'ըլլայ անդու կերպով մեր մատուցած աղօթներէն, հարց կ'ուզեմ տալ անոնց.– Աստուած անհանգիստ կ'ըլլա՞յ երբ յարատեւօրէն զինք փառաւորեմք կամ պաշտեմք:

Աստուած կ'ուզէ ու կը պահանջէ որ առանց վհատելու յարատեւութեամբ աղօթեմք: Ան անհանգիստ չ'ըլլար եթէ նոյն բանին համար միշտ աղօթեմք, մանաւանդ եթէ արդարութեա՛ն համար աղօթեմք, մարդոց փրկութեա՛ն համար աղօթեմք, արդար դատաստանի՛ համար աղօթեմք: Յայտնութեան գիրքին մէջ կը կարդանք թէ ինչպէս անոնք որոնք Աստուծոյ խօսքին իրենց հաւատարմութեան համար սպաննուած էին, անդադար կերպով կ'աղաղէկին ու կ'ըսէին. «Մինչեւ ե՞րբ պիտի սպասես, սուրբ եւ ճշմարիտ Տէր, ե՞րբ պիտի դատես երկրի բնակիչները եւ մեր արեան վրէժը լուծես անոնցմէ» (Յյտ 6.10): Ասիկա արդար դատաստան պահանջող աղօթք մըն է որ անուշաբոյր պատարագի նմա՛ն է Աստուծոյ համար: Աստուած չլոնցո՛ւց գանոնք: Զպատուիրեց որ դադրին աղաղակելէ: Այլ պարզապէս թելադրեց «որ կարն ժամանակ մը եւս հանգիստ ընեն, մինչեւ որ ամբողջանայ թիւր իրենց ծառայակիցներուն եւ եղբայրներուն, որոնք իրենց նման պիտի սպաննուին» (Յյտ 6.11): Յիշեալ հոգիները առանց վհատելու աղօթողներ չե՞ն:

Յիշեմք նաեւ մեր Տիրոջ խօսքը անվհատ կերպով աղօթելու մասին. «Յովհաննէս Մկրտիչի փարոգութեան օրերէն մինչեւ այսօր մարդիկ երկինքի արքայութիւնը ձեռք ձգելու համար ոյժ կը բանեցնեն, եւ զօրաւորները ձեռք կը ձգեն գայն» (Մտ 11.12): Որո՞նք են զօրաւորները որ կը յաջողին երկինքի արքայութիւնը ձեռք ձգել: Իրենց հաւատքին ու աղօթական կեանքին մէջ զօրաւոր եղողները չե՞ն: Առանց յոգնելու իրենց անձերուն փրկութիւնը հետապնդողները չե՞ն: Փորձութեանց դիմաց չյուսահատողները չե՞ն: Հալածանքներու դիմաց չընկրկողները չե՞ն: Այլ խօսքով, առանց վհատելու աղօթողները չե՞ն:

Ե.– Սուրբ Բասիլիոս հարց կու տայ թէ առաքեալները ի՞նչպէս կրցան անդադար կերպով աղօթել, եւ կը պատասխանէ, թէ առաքեալները ինչ որ կ'ընէին՝ Աստուծոյ մասին կը մտածէին, եւ իրենք զիրենք լիովին Աստուծոյ ընծայաբերած էին: Անոնց հոգեկան այս վիճակը՝ իրենց համար անդադար աղօթել կը նշանակէր:

Այո՛, զԱստուած մեր մտածութեան նիւթ դարձնելը՝ անդադար աղօթել է: Քրիստոսի փրկագործութեան մասին խոկալը՝ անդադար աղօթել է: Մարդիկը մնայուն կերպով փրկութեան բերելը՝ անդադար աղօթել է: Յիսուսի խօսքը տարածելը՝ անդադար աղօթել է: Աստուծոյ

սիրոյն արտացոլացումը ըլլալը՝ անդադար աղօթել է: Մարդոց առաքինի կեանքի մը օրինակ ըլլալը՝ անդադար աղօթել է:

«Եւ ըսաւ.– "Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար, որ ո՛չ Աստուծմէ կը վախնար եւ ո՛չ ալ մարդոցմէ կ'ամչնար"» (Ղկ 18.2): Քանի մը հաստատումներ.–

1.– «Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար»: Քրիստոս պարզ ու անիշխան անձի մը մասին չէ որ կը խօսի, այլ իշխանութեան գլուխը եղող եւ իրաւասութիւններ ունեցող դատաւորի մը մասին: Դատաւոր մը՝ որ արդար դատաստան չ'ըներ եւ տկարին ու աղքատին իրաւունքներուն պաշտպան չի կենար: Դատաւոր մը՝ որ իր ունեցած իշխանութիւնը կ'օգտագործէ իր անձին փառքին ու հանգիստին համար: Յիսուս անիրաւ դատաւորի մը մասին խօսելով, խորքին մէջ որոշ նշմարտութիւն մը կ'ուզէ սորվեցնել մեզի մեր երկնաւոր Հօր մասին: Կ'ուզէ սորվեցնել մեզի որ մեր երկնաւոր Հայրը յիշեալ դատաւորին միշտ հակառակ պատկերը կը ներկայացնէ:

Երկրաւոր դատաւորներ կրնան խտրութիւն դնել մարդոց միջեւ, մինչդեռ Աստուած իբրեւ դատաւոր, երբեք խտրութիւն չի դներ մարդոց միջեւ: Երկրաւոր դատաւորներ կրնան իրենց ունեցած իշխանութիւնը գործածել ոտնակոխ ընելու համար տկարներուն կամքը, մինչդեռ Աստուած, երբեք իր իշխանութիւնը կամ գօրութիւնը չ'օգտագործեր իր կամքը պարտադրելու համար ուրիշին, կամ ոեւէ մնշում բանեցնելու անոր վրայ: Երկրաւոր դատաւորներ կրնան անիրաւողին իրաւունք տալ եւ իրաւագրկել իրաւունքի տէր մարդիկը, մինչդեռ Աստուած, անիրաւողին իրաւունք չի տար եւ ո՛չ ալ կ'իրաւագրկէ իրաւունքի տէր եղողները: Երկրաւոր դատաւորներ իրենց ականջը կը փակեն դրամ ու գօրութիւն չունեցողներուն առջեւ, այլ խօսքով՝ աղքատներուն, տկարներուն, տառապեալներուն դիմաց, մինչդեռ Աստուած, իր ականջները լայն կը բանայ աղքատներուն, անգօրներուն, չարչարողներուն, հարստահարուածներուն աղաղակին դիմաց: Երկրաւոր դատաւորներ կրնան կաշառք ստանալ եւ ծածկել նշմարտութիւնը, մինչդեռ Աստուած չի կաշառուիր: Եւ այլն:

2.– Խորքին մէջ այս դատաւորը անձ մը չէ որ կը ներկայացնէ, այլ՝ աշխարհը: Մեր Տէրը կ'ուզէ որ իր գաւակները գիտնան, թէ աշխարհի մէջ արդարութիւն չկա՛յ: Աշխարհ իրաւունք չի՛ տար աղքատին ու որբին, տէր չի՛ կանգնիր տկարին ու ինկածին: Աշխարհ արդար դատաստան չ'ըներ:

Աշխարհասէր իւրաքանչիւր մարդ դատաւոր մըն է, անիրաւ դատաւոր մը: Աշխարհին կապուած մարդիկ ո՛չ Աստուծմէ կը վախնան

եւ ո՛չ ալ մարդոցմէ կ'ամչնան: Զո՛ւր է արդար դատաստան սպասել անոնցմէ՝ որոնք Աստուծմէ չեն վախնար եւ մարդոցմէ չեն ամչնար:

Քրիստոս անիրաւ ու մարդոց ցաւին հանդէպ անտարբեր դատաւորի մը օրինակը կու տայ, որպէսզի սորվեցնէ մեզի որ աշխարհ լեցուն է անիրաւներով ու անիրաւութիւններով:

3.- Տարբեր պիտի ըլլայ դատաստանը անիրաւութիւն ընող անձի մը որ պարզ անձ մըն է, որ ո՛չ հանգամանք ունի, ո՛չ պաշտօն եւ ո՛չ ալ իշխանութիւն, եւ ամբողջովին տարբեր պիտի ըլլայ դատաստանը անոր՝ որ անիրաւութիւն կ'ընէ եւ ինք իշխանութեան տէր անձ մըն է:

Եթէ հանգամանքէ ու պաշտօնէ գուրկ մարդիկ անիրաւութիւն ընեն, առաջին հերթին մեղանշած կ'ըլլան իրենց իսկ անձին դէմ, եւ երկրորդ, իրենց ընկերոջ դէմ: Բայց եթէ անձ մը դատաւորի կամ այլ բարձր պաշտօնի հանգամանք ունենայ եւ անիրաւ ըլլայ, այն անձը մեղանշած կ'ըլլայ ամբողջ իր շրջապատին դէմ, ընկերութեան դէմ, իր երկրին օրէնքին դէմ, համայն մարդկութեան դէմ եւ Աստուծոյ դէմ:

Այո՛, իշխանութեան տէր անձ մը որ անիրաւութիւն կ'ընէ եւ անարդարութեան կողմնակից է, մեղանշած կ'ըլլայ թէ՛ Աստուծոյ դէմ եւ թէ՛ մարդկութեան դէմ: Զուր տեղ չէ որ Քրիստոս դատաւորը կը ներկայացնէ իբրեւ մէկը որ «ո՛չ Աստուծմէ կը վախնար եւ ո՛չ ալ մարդոցմէ կ'ամչնար»: Մէկը որ Աստուծմէ չի վախնար՝ թշնամի՛ է Աստուծոյ. մէկը որ մարդոցմէ չ'ամչնար՝ թշնամի՛ է մարդկութեան: Այս իմաստով, իշխանութեան տէր մարդիկ պատասխանատու են թէ՛ Աստուծոյ եւ թէ՛ մարդոց դիմաց:

Ուստի, բարձր դիրքերու ու պաշտօններու վրայ գտնուողներ թող յիշեն որ իրենք պիտի դատուին իրենց ունեցած իշխանութեան եւ հանգամանքին համաձայն: Այո՛, ամէն մարդ իր ունեցած հանգամանքին ու պաշտօնին համաձայն պիտի դատուի: Վարդապետը իբրեւ վարդապետ պիտի դատուի: Եպիսկոպոսը՝ իբրեւ եպիսկոպոս: Թագաւորը՝ իբրեւ թագաւոր: Զինուորը՝ իբրեւ զինուոր: Ծառան՝ իբրեւ ծառայ: Մայր մը՝ իբրեւ մայր: Ուսուցիչը՝ իբրեւ ուսուցիչ: Աշակերտը՝ իբրեւ աշակերտ: Երկրագործը՝ իբրեւ երկրագործ: Վաճառականը՝ իբրեւ վաճառական: Աւելածուն՝ իբրեւ ավելածու: Գիտունը՝ իբրեւ գիտուն: Եւ այլն:

Ըսեմ նաեւ որ մարդուն փրկութիւնը երբեք կախում չունի իր ունեցած պաշտօնին, հանգամանքին, դիրքին կամ իշխանութեան հետ: Աստուած մեզ փրկելու համար, պիտի չնայի մեր ունեցած պաշտօնին կամ հանգամանքին, այլ՝ պիտի նայի թէ մեզի յանձնուած պաշտօնը ի՞նչպէս ըրած ենք: Եթէ թագաւոր մը լաւ թագաւոր չէ եղած՝ դժո՛խք

պիտի նետուի, մինչդեռ իր ծառան եթէ լաւ ծառայ եղած է՝ պիտի փրկուի:

4.- «Ո՛չ Աստուծմէ կը վախնար եւ ո՛չ ալ մարդոցմէ կ'ամչնար»: Այս հաստատումին վերաբերեալ քանի մը նշումներ.---

ա.- Ինչո՞ւ Յիսուս կը խօսի մեզի Աստուծմէ չվախցող եւ մարդոցմէ չամչցող անիրաւ դատաւորի մը մասին, երբ իր նպատակը մեր երկնաւոր Հօր մասին մեզի բան մը սորվեցնել է: Յիսուս կ'ուզէ ցոյց տալ մեզի այն՝ որ եթէ անիրաւ դատաւոր մը տեղի կու տայ անիրաւուած մարդու մը մնայուն թախանձանքներուն, թակումներուն ու հետապնդումներուն դիմաց, ո՛րքան աւելի Աստուած, որ Տէրն ու տիրականն է բոլոր իրաւունքներուն ու իրաւատէրերուն, արդար դատաստան պիտի ընէ բոլոր անոնց՝ որոնք կը դիմեն ու կ'աղաղակեն իրեն:

բ.- Բնական բան է որ եթէ մէկը Աստուծմէ չվախնայ՝ մարդոցմէ ալ պիտի չամչնայ: Մէկը որ Աստուծմէ չի՛ վախնար՝ ի՞նչպէս պիտի ամչնայ Աստուծոյ պատկերով ստեղծուած մարդէն: Մէկը որ Աստուծոյ ամենակալ ձեռքէն չի վախնար եւ անոր հաշիւը չ'ըներ՝ ի՞նչպէս հաշիւը պիտի ընէ Աստուծոյ ձեռքին գործը եղող մարդ արարածին:

Ահաւասիկ մէկը որ ո՛չ երկինքէն կը վախնայ եւ ո՛չ ալ երկիրը նկատի կ'առնէ: Մէկը՝ որ ո՛չ Աստուծոյ բարկութենէն կը սարսափի եւ ո՛չ ալ մարդոց բամբասանքէն ու զրպարտութենէն կը վախնայ: Մէկը՝ որ ո՛չ իր խղճին ձայնը կը լսէ եւ ո՛չ ալ որբին ու աղքատին աղաղակը: Մէկը՝ որ իր պարտականութիւնը չ'ըներ ո՛չ Աստուծոյ եւ ո՛չ ալ մարդոց նկատմամբ:

Աստուծոյ երկիւղը չունեցող մարդը՝ սիրտ չի կրնար ունենալ: Աստուծոյ ձայնը չլսող մարդը՝ տառապողին ձայնը չի կրնար լսել: Եթէ մարդ արարածը երկիւղ չունենայ Աստուծոյ նկատմամբ, իր մէջ կը ցամփի մարդասիրական ամէն զգացում, եւ իր սրտէն կը վերնայ ամէն գութ ու գորով:

Աստուծոյ երկիւղը ինքնիր սրտէն դուրս շարտող մարդը, կը դառնայ անտարբեր մարդուն ցաւին ու տառապանքին նկատմամբ, եւ կը հեռանայ մարդկայնութենէն: Արդարեւ, Աստուծմէ հեռու եղող մարդը՝ մարդէն ալ հեռու կ'ըլլայ: Աստուծոյ մօտիկ եղող մարդը՝ մարդամօտ կ'ըլլայ: Աստուծոյ հետ առողջ յարաբերութեան մէջ չեղող մէկը, չի կրնար առողջ յարաբերութեան մէջ ըլլալ իր նմանին հետ նաեւ:

գ.- Մի՛ ակնկալեր մարդէն բարին գործել երբ ինք կապ չունի բարերար Աստուծոյ հետ: Մի՛ սպասեր որ մարդիկ արդարութիւն գործեն երբ իրենք չեն արդարացած Յիսուսի արիւնով: Ի՞նչ կարելի է

սպասել մէկէ մը որ սպասելիք չունի Աստուծմէ: Ի՞նչ բարի բան կարելի է յուսալ մարդէ մը որուն յոյսը Տէրը ինք չէ: Մէկը որ զԱստուած չէ դարձուցած իր բաժինը՝ ի՞նչպէս կարելի է ակնկալել անկէ՝ տալ մեզի մեր բաժինը:

դ.– Որո՞նք են այն մարդիկ որոնք Աստուծմէ չեն վախնար: Անոնք որոնք իրենց յանձնուած գործը կամ պաշտօնը լաւագոյնս չեն կատարեր, կը նշանակէ թէ Աստուծմէ չեն վախնար: Եթէ անիրաւ դատաւորը Աստուծմէ վախնար՝ իր պաշտօնը պիտի կատարէր ու տեսնէր դատը այրի կնոջ:

Անոնք որոնք չեն հետապնդեր իրենց անձերուն փրկութիւնը, եւ անտարբեր են նաեւ ուրիշներու փրկութեան հանդէպ, կը նշանակէ թէ Աստուծմէ չեն վախնար:

Անոնք որոնք չեն հաւատար հոգեւոր նշմարտութեանց ու կը ծաղրեն զանոնք, կը նշանակէ թէ Աստուծմէ չեն վախնար:

Անոնք որոնք չեն հաւատար Աստուածաշունչին մէջ գրուածին եւ զանիկա խեղաթիրուած կը սեպեն կամ կը կոչեն, կը նշանակէ թէ Աստուծմէ չեն վախնար:

Անոնք որոնք բնաւ չեն աղօթեր եւ Աստուծոյ կարիքը չեն զգար, կը նշանակէ թէ Աստուծմէ չեն վախնար:

Անոնք որոնք չեն մտածեր մահուան ու մահէն ետք ըլլալիքին մասին, կը նշանակէ թէ Աստուծմէ չեն վախնար:

Անոնք որոնք չեն մտածեր յարութեան ու դատաստանին մասին, կը նշանակէ թէ Աստուծմէ չեն վախնար:

ե.– Պէ՞տք է վախնալ Աստուծմէ: Այո՛, պէտք է վախնալ. բայց ի՞նչ կը նշանակէ վախնալ Աստուծմէ: Աստուծմէ վախնալ՝ չի նշանակեր սարսափիլ անկէ, այլ՝ կը նշանակէ երկիւղ ունենալ անոր հանդէպ: Իսկ «երկիւղ» բառը մեր լեզուին մէջ կը նշանակէ նաեւ՝ յարգանք, պատկառանք, ակնածանք: Մենք պէտք չունինք սարսափելու Աստուծմէ, որովհետեւ ան հայր է, թգառատ ու ողորմած հայր մը, բայց վստահաբար պէտք է երկիւղ, այլ խօսքով՝ յարգանք, պատկառանք, ակնածանք ունենանք անոր հանդէպ:

Երբ Զարեհ Արք. Ազնաւորեան մեր եկեղեցւոյ Հաւատամք-ին մեկնութիւնը կը կատարէր, հարց տրուեցաւ իրեն թէ ինչո՞ւ երկիւղով պէտք է երկրպագենք Աստուծոյ եւ ոչ սիրով: Սրբազանը պատասխանեց.–

«Երկիւղ» ըսելով մենք վախ կամ սարսափ չենք հասկնար: Երբ մտածենք Աստուծոյ անսահմանութեան կամ անհուն զօրութեան մասին, երբ մտածենք որ Աստուած մեզի համար մարդացաւ ու

խաչուեցաւ, ատիկա կրնայ մեզ առաջնորդել զգալու մեր ոչնչութիւնը, իսկ երբ զգանք մեր ոչնչութիւնը՝ բնականօրէն եւ ինքնաբերաբար երկիւղ մը յառաջ կու գայ մեր սիրտերուն մէջ: Այսպիսի պարագայի մը, երկիւղը անպայմանօրէն վախը կամ սարսափը չէ, այլ՝ Աստուծոյ մեծութեան դիմաց՝ մեր փոքրութիւնը զգալն է, Աստուծոյ փառաւորութեան դիմաց՝ մեր փառագուրկ զգալն է:

Թէպէտ, պէտք է ըսել, նաեւ, որ վախը կրնայ դրականօրէն ալ հասկցուիլ: Այնպիսի՝ վախեր կան որոնք մեզ կրնան խորտակումի, փնացումի եւ հիւանդութեան առաջնորդել, բայց միաժամանակ այնպիսի՝ վախեր կան, որոնք կրնան մեզ առաւել զգուշութեան եւ զգօնութեան մղել: Երբ կը խօսինք Աստուծմէ վախնալու մասին, «վախը» իր այս երկրորդ իմաստով պէտք է առնել:

Վախը կրնայ պատճառ դառնալ որ զգուշանանք շատ մը մեղքերէ: Վախը կրնայ առիթ դառնալ որ փոխենք մեր կեանքի ընթացքը: Աստուածավախութիւնը կրնայ մեզ ինքնագիտակցութեան բերել, իսկ ինքնագիտակցութիւնը՝ զղջումի եւ ապաշխարութեան: Աստուծմէ չվախցող մարդը՝ ամէն տեսակ մեղքի մէջ կրնայ իյնալ, ամէն տեսակ անիրաւութիւն կրնայ գործել: Յիշեցէք այրի կնոջ եւ դատաւորին առակը (Ղկ 18.1-5): Դատաւորը անիրաւ եւ անիրաւութիւն ընող մէկն էր, որովհետեւ Աստուծմէ չէր վախնար: Եթէ իսկապէս Աստուծմէ վախնար՝ հեռու կը մնար անիրաւութենէն:

Հետեւաբար, անբնական երեւոյթ մը չէ որ մենք երկիւղի զգացում ունենանք Աստուծոյ հանդէպ, մանաւանդ որ մնայուն կերպով մեղք կը գործենք: Եւ ի՞նչպէս չվախնալ Աստուծմէ որ մեզ ազատագրեց մեղքի ստրկութենէն իր Որդիին արիւնով, իսկ մենք կը շարունակենք ապրիլ մեղքի կեանք մը»:

Վերեւ Սրբագանը անդրադարձաւ վախին դրական ու բացասական երեսներուն: Թոյլ տուէք քիչ մը աւելի ընդարձակեմ այս կէտը: Նախ անդրադառնամ բացասական վախին:

Վախը յատուկ է մարդուն բնութեան, բայց եթէ երբեք այդ վախը մնայուն ներկայութիւն ըլլայ մարդուն կեանքին մէջ՝ կրնայ կործանումի տանիլ մարդը:

Եթէ մարդ վախնայ՝ կեանքէն ու կեանքի պայքարէն՝ կը ձախողի՝ իր կեանքին մէջ:

Եթէ մարդ մտահոգուի իր ապագային համար ու վախնայ գալիքէն՝ մո՛ւթ կ'ըլլայ անոր ապագան:

Յանկարծական վախը՝ կրնայ հիւանդութիւն բերել: Օրինակ, յանկարծական գորաւոր պայթում մը՝ կրնայ տեսակ-տեսակ հիւանդութեանց դո՛ւռ բանալ մեր կեանքին մէջ:

Աշակերտ մը եթէ վախնայ ուսուցիչէն կամ դասէն՝ չի՛ կրնար դասը սորվիլ եւ դատապարտուած է ձախողելու:

Ո՞վ չի գիտեր որ յաճախ մտավախութիւնն է որ կ'անդամալուծէ մարդուն մտքին կարողութիւնը, պայծառ մտածողութիւնը:

Բացասական վախին դիմաց կայ դրական վախը, որ Աստուծոյ հանելի եղող եւ յաճախ մարդս Աստուծոյ առաջնորդող վախն է: Որքա՛ն մարդիկ եղած են ու դեռ պիտի ըլլան, որոնք վախցած են մահէն ու դժոխքէն ու դարձի եկած են Աստուծոյ: Սուրբ Ներսէս Շնորհալի իր Հաւատով Խոստովանիմ-ին 17-րդ տունին մէջ կ'ըսէ. «Մոլորեալները դարձի բերող Տէր, դարձո՛ւր զիս իմ չար սովորութիւններէս դէպի բարի սովորութիւն, եւ իմ հոգիս մէջ բեւեռէ մահուան սոսկալի օրը, դժոխքի սարսափը եւ արքայութեան սէրը, որպէսզի գոջամ իմ մեղքերուս համար եւ արդարութիւն գործեմ»: Դժոխքի կրակը շատ մարդիկ նետած է Յիսուսի գրկին մէջ: Արդար դատաստանի մը սարսափը շատ մարդիկ ծունկի բերած է իսպառն դիմաց: Յաճախ Աստուծոյ վախը չէ՞ որ մեզ հեռու կը պահէ մեղքէն: Յաճախ Աստուծոյ վախը չէ՞ որ մեզ Աստուծոյ յանձնուելու կը մղէ: Մեզմէ ո՞վ չի գիտեր որ Աստուծոյ ձեռքէն ազատելու միակ կերպը՝ Աստուծոյ ձեռքին յանձնուիլն է:

Դարձեալ, Զարեհ Սրբազանին հարց տրուեցաւ թէ արդեօք աւելի լաւ չէ՞ սիրել զԱստուած քան վախնալ իրմէ: Սրբազանը պատասխանեց. –

«Երբ կը հաստատենք թէ աստուածսիրութիւնը աւելի՛ լաւ է քան աստուածավախութիւնը, կրնանք այն տպաւորութիւնը ձգել, որ անոնք իրար հակասող բաներ են: Եւ սակայն, խորքին մէջ այդպէս չէ: Աստուածսիրութիւնը պատճառ մը չէ որ մենք երկիւղի զգացում չունենանք Աստուծոյ հանդէպ: Երկիւղի այդ զգացումը յաճախ մեր մէջ կ'արթննայ անոր համար որ մենք չունինք Աստուծոյ կատարեալ եւ ամբողջական գիտութիւնը, այսինքն՝ չենք քանչնար զԱստուած կատարելապէս: Երբ մարդիկ անծանօթ երեւոյթներու դիմաց կը գտնուին՝ ատիկա պատճառ չի՞ դառնար որ վախ յառաջ գայ իրենց սիրտերուն մէջ: Վստահաբար: Նոյնն է պարագան մարդուն երբ Աստուծոյ դիմաց կը կանգնի, մանաւանդ երբ մարդը լաւապէս չի քանչնար զԱստուած եւ անոր մարդասէր բնութիւնն ու նկարագիրը:

Մենք որքան ալ ըսենք որ կը քանչնանք զԱստուած, որքան ալ վկայենք որ բաւականաչափ մօտեցած ու մտերմացած ենք Աստուծոյ, պէտք է մի՛շտ յիշենք որ մեր աստուածմանաչողութիւնը մասնակի է:

Եթե մարդը ինքզինք չի կրնար կատարելապես ֆանչնալ, ի՞նչպես կրնայ ֆանչնալ իր Արարիչը: Յանախ մեծագոյն մտածող մարդիկը, բոլոր տեսակի մասնագիտութեանց տէր մարդիկը, կը վկայեն ու կը խոստովանին, թէ ահաւոր բան է գիտնալ, որ մարդ արարածը որ երկա՛ր տարիներ շարունակ ինքզինք կը պեղէ՝ անկարող կը մնայ ինքզինք ֆանչնալու, որովհետեւ ամէն օր նոր երեւոյթ մը հանդէս կու գայ իր անձին մէջ:

Կարելոյ է մեր մտքին մէջ ունենալ այն՝ որ «երկիւղ» բառը կ'ընդգրկէ նաեւ «հիացում» իմաստը: Մենք Աստուծմէ աւելի կարծէք իր գործն է, իր արարչագործութիւնն է որ կը ֆանչնանք, եւ եթէ իրողապէս կը ֆանչնանք, անկարելի է որ երկիւղի կամ հիացմունքի որոշ զգացում մը չունենանք անոր հանդէպ: Աստուծոյ անսահման ու սֆանչելի ստեղծագործ կարողութեան դիմաց՝ մարդուն կը մնայ իր գլուխը խոնարհեցնել եւ երկիւղի ու հիացմունքի զգացումներով համակուրիլ:

Երբ տիեզերքի ուսումնասիրութեան ու ֆննութեան կը ձեռնարկեն լուրջ ու մեծ գիտնականներ, պատահականութի՞ւն է արդեօք որ անոնք հիացմունքով կ'արտայայտուին այն Ոյժին համար որ պատճառն ու հեղինակն է այս ստեղծագործութեան, եւ ո՛չ միայն հիացմունքով կ'արտայայտուին, այլեւ իրենց գլուխները կը խոնարհեցնեն Անոր դիմաց: Մարդ արարածը ի՞նչպէս կրնայ յարգանքով ու հիացմունքով չերկրպագել իր Արարիչը: Գիտակցօրէն հիացում բառին կողմին աւելցուցի «յարգանք» բառը: Խորքին մէջ, յարգանքի արտայայտութիւն է այն ինչ որ «երկիւղ» կը կոչենք: Հետեւաբար, «երկիւղ»ը անպայման վախն ու դողը չէ, այլ՝ բարեպաշտական երկիւղն է:

Առակաց գիրքին 8-րդ գլուխը կը հաստատէ որ Տիրոջ վախը չարիքէն հեռու մնալն է, չարիքը ատելն է (Առ 8.13): Աստուածնաչառութիւնը մեզ պէտք է առաջնորդէ հեռանալու չարիքէն ու չարէն եւ մօտենալու բարիին: Բայց որովհետեւ մենք մեր մէջ այդ կատարեալ բարին չենք գտներ, ինքնաբերաբար, գերագոյն Բարիին դիմաց՝ երկիւղի, հիացմունքի եւ բացարձակ յարգանքի զգացումներով կը լեցուինք: Երկիւղը այն բնական զգացողութիւնն է, որ իւրաքանչիւր արարած արդարօրէն պէտք է ունենայ Աստուծոյ դիմաց»:

«Աստուծմէ չե՛մ վախնար» ըսելը՝ գոռոզութիւն է, հպարտութի՛ւն է, կուրութի՛ւն է: Որո՞ւ սիրտը երկիւղի զգացումով չի լեցուիր երբ կը մտածէ Աստուծոյ սրբութեան մասին:

Երբ մտածենք Աստուծոյ բացարձակ սրբութեան մասին, եւ անոր բացարձակ սրբութեան դիմաց մեր գործած մեղքերուն մասին՝ երկի՛ւղն է որ մեզ կը պատէ:

Երբ խորհիմն Լստուծոյ անսահմանութեան մասին եւ մեր աչքին դիմաց բերեմք մեր սահմանաւորութիւնը՝ դարձեալ, երկիւղն է որ մեզ կը լեցնէ:

Երբ աչքի դիմաց ունենանք Լստուծոյ անհուն համբերատարութիւնը եւ մեր անհամբերատար բնութիւնը՝ երկիւղն է որ մեզ կը շրջապատէ:

«Նոյն քաղաքին մէջ այրի կին մըն ալ կար, որ անոր կը դիմէր եւ կը խնդրէր.– "Իրաւունքս պաշտպանէ հակառակորդէս"» (Ղկ 18.3): Քանի մը հաստատումներ.–

1.– «Նոյն քաղաքին մէջ այրի կին մըն ալ կար»: Պատահականութիւն է արդեօք որ Յիսուս կը հաստատէ որ դատաւորն ու այրի կինը «նոյն քաղաքին մէջ» կ'ապրէին: Ո՛չ, պատահականութիւն չէ: Յիսուս այստեղ կ'ուզէ մեզի սորվեցնել թէ աստուածատէր ու աշխարհատէր մարդիկ, հաւատացեալ ու անհաւատ մարդիկ, արդար ու անարդար մարդիկ, կոչուած են միասի՛ն եւ միատե՛ղ ապրելու այս աշխարհին մէջ:

Որոմի առակին ընդմէջէն նոյն նշմարտութիւնն է որ Յիսուս կ'ուսուցանէ մեզի: Երբ ծառաները եկան եւ իրենց տիրոջ հարցուցին. «Կ'ուզե՞ս որ երթանք եւ որոմը քաղենք»: «Ո՛չ», պատասխանեց տէրը՝ աւելցնելով. «Որպէսզի չըլլայ թէ որոմը քաղած ատեն ցորենն ալ միասին արմատախիլ ընէք: Զգեցէք որ երկուքն ալ միասին անին մինչեւ հունձփ ժամանակ» (Մտ 13.28–30): Վերջին տողը յստակօրէն ցոյց կու տայ որ նոյնիմէն Լստուծոյ կամքն է որ որոմն ու ցորենը, այլ խօսքով՝ չար ու բարի մարդիկը «երկուքն ալ միասին անին մինչեւ հունձփ ժամանակ»:

Մեր բացատրութեանց կարկինը քիչ մը աւելի լայն բանանք եւ հարց տանք.– Այսօր Քրիստոսի Եկեղեցիին մէջ երկու դասակարգի մարդիկ չկա՞ն: Այո՛, կա՛ն: Նոյնիմէն Պօղոս առաքեալ կը վկայէ թէ կեղծ քրիստոնեաներ կային «որոնք հաւատացեալներու շարքերուն սարդած էին՝ Յիսուս Քրիստոսով» իրենց «ունեցած ազատութիւնը լրտեսելու...» (Գղ 2.4): Առաքեալին այս վկայութիւնը ցոյց չի՞ տար որ սկիզբէն Քրիստոսի Եկեղեցին իր մէջ ունեցած է թէ՛ նշմարիտ քրիստոնեաներ եւ թէ՛ կեղծ քրիստոնեաներ:

Հաւատացեալ ու ամբարիշտ մարդիկ մի՛շտ միասին եղած են Քրիստոսի Եկեղեցիին մէջ: Ինչպէս հաւատացեալը կը մօտենայ Սուրբ Հաղորդութեան՝ այնպէս ալ անհաւատը կը մօտենայ: Ինչպէս հաւատացեալը սուրբ Պատարագին կը մասնակցի՝ այնպէս ալ անհաւատը կը մասնակցի: Ինչպէս հաւատացեալը մոմ կը վառէ՝ նոյնպէս ալ անհաւատը: Ինչպէս հաւատացեալը մաս կ'առնէ՝ նոյնպէս ալ

անհաւատը: Երկուքը նոյն Պատարագին կը մասնակցին, նոյն խօսքին
ֆարոգութիւնը կը լսեն, նոյն բանը կը տեսնեն, եւ սակայն, անոնք
իրարմէ անհունօրէն տարբեր են: Այդ տարբերութիւնը կրնայ ներկայիս
յայտնի չըլլալ, բայց Տէրը իր երկրորդ գալուստին, իր կատարելիք
դատաստանով բացայայտ պիտի դարձնէ այդ տարբերութիւնը:

2.- «Քաղաք» բացատրութեամբ պէտք է հասկնալ յատուկ ֆաղափ
մը, այլ՝ նոյնիման աշխարհը: Եթէ «ֆաղափ» ըսելով պէտք է հասկնալ
աշխարհը, այդ պարագային ինչո՞ւ Յիսուս ինք «աշխարհ» բառը չի
գործածեր: Այնքան ատեն որ Յիսուս առակին մէջ կը խօսի անիրաւ
դատաւորի մը մասին, չի կրնար կամ չ'ուզեր «աշխարհ» բառը
գործածել, որպէսզի այն տպաւորութիւնը չտայ մեզի որ անիրաւներ եւ
անիրաւութիւնը իրե՛նք է որ կը տիրեն աշխարհի վրայ: Աշխարհի վրայ
տիրողը Աստուած ի՛նք է:

3.- Նկատի պէտք է առնել որ «ֆաղափ» բառը անցեալին եւ այսօր
նոյն իմաստը չունի: Քաղափ մը անցեալին կրնար պատիկ ըլլալ, հազիւ
ֆանի մը հագար հոգիներով բնակուած. այսօր սակայն, ֆաղափ մը
կրնայ միլիոններով բնակիչ ունենալ: Արդ, ինչո՞ւ Յիսուս աշխարհը կը
նմանցնէ պատիկ ֆաղափի մը: Յոյց տալու համար մեզի, թէ ինչպէս
պատիկ ֆաղափի մը մէջ, ո՛չ մէկ անիրաւութիւն կրնար վրիպիլ
դատաւորին ուշադրութենէն, այնպէս ալ, աշխարհի մէջ տեղի ունեցող
ո՛չ մէկ անիրաւութիւն կրնայ վրիպիլ դատաւոր Աստուծոյ
ուշադրութենէն: Հետեւեբար, կարծէք Յիսուսու կ'ուզէ ցոյց տալ մեզի,
թէ աշխարհ որքան ալ մեծ ըլլայ՝ Աստուծոյ աչքին պատիկ ֆաղափ մըն է,
եւ ուստի, ո՛չ ոք պէտք է խորհի թէ ինք Աստուծոյ աչքին դիմաց կրնայ
կորսուիլ կամ անյայտ մնալ անծայրածիր այս աշխարհին մէջ:

4.- «Այրի կին մըն ալ կար»: Ինչո՞ւ Յիսուս կը խօսի այրի կնոջ մը
մասին փոխանակ խօսելու, օրինակ, երիտասարդի մը կամ
վաճառականի եւ կամ այլ դասակարգի մարդու մը մասին: Գտնելու
համար «ինչու»ին պատասխանը, նախ պէտք է հարցնել՝ ո՞վ է այրի
կինը, կամ՝ որո՞ւ համար կը գործածենք «այրի» բացատրութիւնը: Այրի
կինը իր ամուսինը կորսնցուցած կինն է: Ամուսին մը, (մանաւանդ
անցեալին), ի՛նք կը համարուէր սի՛ւնը ընտանիքին, տէ՛րն ու
պաշտպանը տունին: Այս իմաստով, երբ Յիսուս «այրի» բառը կը
գործածէ, խորքին մէջ ան կը խօսի անպաշտպան ու անտէր կնոջ մը
մասին: Եւ ինչո՞ւ: Որպէսզի յիշեցնէ իր հետեւորդներուն, թէ իրենք եւս,
միշդ այրի կնոջ նման, յաճախ անպաշտպան պիտի ըլլան աշխարհի
անիրաւութիւններուն դիմաց: Հարկաւ ըսել չեմ ուզեր թէ Քրիստոսի
հետեւորդը անպաշտան ու անտէր պիտի ըլլայ այս աշխարհի մէջ. անոր

տերն ու պաշտպանը նոյնիման Գրիստոս՝ Է. բայց երբ կ'ըսեմ թէ ներկայ աշխարհին մէջ Գրիստոսի հետեւորդը անպաշտան ու անտէր պիտի ըլլայ, ըսել կ'ուզեմ՝ որ Գրիստոսի հետեւորդը աշխարհին պաշտպանութիւնն է որ պիտի չվայելէ: Այո՛, աշխարհ տէր ու պաշտպան պիտի չկենայ Գրիստոսի հետեւորդներուն եւ անոնց իրաւունքին:

5.- Յիշեմք նաեւ որ անցեալին, (յատկապէս Երբայեցի ժողովուրդին կեանքին մէջ), անիրաւուած կամ իրաւագրկուած կին մը դժուար թէ կարենար դատարանի միջոցաւ իր իրաւունքը ձեռք ձգել: Կարծէք Գրիստոս անուղղակիօրէն մեզի կը յիշեցնէ, թէ մենք ալ յաճախ անկարող պիտի ըլլանք մեր իրաւունքը ձեռք ձգել, անիրաւութեամբ լի այս աշխարհին մէջ: Գրիստոսի ժամանակ կնոջ մը ձայնը անլսելի էր դատարանին մէջ: Իսկ ներկայ աշխարհին մէջ, քանի՞ դատարաններ կան որոնք կը լսեն Գրիստոսի հետեւորդներուն կողմէ հնչեցուած՝ իրաւունք ու արդարութիւն պահանջող ձայնը:

6.- «Որ անոր կը դիմէր եւ կը խնդրէր»: Այս բառերուն վերաբերեալ երկու նշումներ.-

ա.- «Անոր կը դիմէր»: Այրի կինը կը դիմէ անիրաւ դատաւորին: Ի՞նչ կը պատկերացնէ այս իրողութիւնը կամ ի՞նչ կը յիշեցնէ մեզի: Կը յիշեցնէ, թէ Աստուծոյ զաւակը կամայ թէ ակամայ ստիպուած է դիմելու աշխարհին, այլ խօսքով՝ աշխարհի մարդուն: Բայց ի՞նչ պէտք է հասկնանք «դիմել» ըսելով: Դիմել աշխարհին՝ պարզապէս կը նշանակէ կապի ու յարաբերութեան մէջ ըլլալ աշխարհին հետ: Գրիստոսի հաւատացեալները երբեք պիտի չփափաքէին յարաբերիլ անիրաւ այս աշխարհին հետ, բայց այնքան ատեն որ անբաժան մասը կը կազմեն այս աշխարհին, կ'ապրին, կը գործեն, կ'աշխատին, կը վկայեն ու կը տփնին այս աշխարհին մէջ՝ անոնք միշտ ալ ստիպուած պիտի ըլլան գործ ունենալու աշխարհին հետ: Բայց աշխարհին հետ գործ ունենալ, չի նշանակեր անպայման աշխարհի սէրը ունենալ մեր սրտին մէջ: Մենք կրնանք ապրիլ այս աշխարհի մէջ առանց թոյլ տալու որ աշխարհ ինք ապրի մեր մէջ: Մենք կը գործենք աշխարհին մէջ, բայց Աստուծոյ փառքին համար է որ կը գործենք:

Յիսուս խօսքը ուղղելով իր աշակերտներուն՝ ըսաւ. «Դուք այս աշխարհին չէք պատկանիր այլեւս» (Յհ 15.19): Ի՞նչ ցոյց կու տայ «այս» ցուցական դերանունը: Երբ Յիսուս կը հաստատէ թէ մենք «այս» աշխարհին չենք պատկանիր, յստակ է ուրեմն որ ուրիշ «աշխարհի» մը կը պատկանինք, եւ որուն կ'ակնարկէ Յիսուս անուղղակիօրէն: Եւ այդ ուրիշ «աշխարհը» նոյնիման երկինքն է, Գրիստոսի թագաւորութիւնն է: Հաւատացեալներ թէպէտ այս աշխարհի մէջ կ'ապրին, բայց երկինքի

յոյսով է որ կ'ապրին, ահա թէ ինչու Առաքեալը կը պատուիրէ անոնց ըսելով. «Ձեր ուշադրութիւնը երկինք դարձուցէ՛ք» (Կղ 3.1):

Քրիստոսի աշակերտները որոնք այս աշխարհի մէջ կ'ապրին, միշտ պէտք է յիշեն որ իրենք Աստուածապատկան մարդիկ են եւ ո՛չ թէ աշխարհապատկան մարդիկ: Ուստի, այրի կնոջ համար գործածուած «կը դիմէր» բառերը, երբեք ցոյց չեն տար որ հաւատացեալ մարդը աշխարհին դիմելով՝ աշխարհի՛ն պատկանած կ'ըլլայ, այլ, ինչպէս ըսի, պարզապէս մատնանիշ կ'ընեն որ հաւատացեալ մարդը միշտ ալ գո՛րծ պիտի ունենայ աշխարհին հետ:

բ.- «Եւ կը խնդրէր»: Ինչո՞ւ այրի կինը անիրաւ դատաւորէն «կը խնդրէր» իր իրաւունքին պաշտպանութիւնը, փոխանակ պահանջելու կամ տարբեր միջոցներու դիմելու: Խնդրելը՝ սիրոյ ու հեզութեան նամբան է: Այլ խօսքով, «կը խնդրէր» բառերով, Յիսուս կ'ուզէ սորվեցնել մեզի որ իր հաւատացեալները, պէտք է սիրով ու հեզութեամբ փորձեն ձեռք ձգել իրենց իրաւունքը. պէտք չէ բռնի միջոցներու դիմեն: Նման միջոցներու դիմելը՝ աշխարհի մարդուն յատուկ է:

7.- «Իրաւունքս պաշտպանէ հակառակորդէս»: Քանի մը նշումներ.-

ա.- «Իրաւունքս պաշտպանէ»: Քրիստոս այս բառերով կը սորվեցնէ մեզի թէ սխալ բան չէ պահանջել մեր իրաւունքներուն պաշտպանութիւնը: Այո՛, իրաւունքը պահանջելուն մէջ սխալ բան չկայ: Քրիստոնեան պէտք է իր իրաւունքը պաշտպանէ ու պահանջէ: Բայց եթէ մեր իրաւունքը պահանջելը բաղխումի պիտի առաջնորդէ եւ վէճերու ու կռիւներու դուռ պիտի բանայ, աւելի լաւ կ'ըլլայ մեր իրաւունքէն հրաժարիլ, որպէսզի չվիրաւորենք մեր սիրելի Յիսուսին սիրտը:

բ.- Յիսուս կը խօսի անիրաւուած այրի կնոջ մը եւ անոր արդարութեան բուն պահանջին մասին, ցոյց տալու համար որ քրիստոնեաներս պէտք է մի՛շտ աղօթենք եւ պահանջենք Աստուծոյ միջամտութիւնը ի խնդիր արդարութեան: Երբե՛ք սխալ չէ խնդրել Աստուծմէ որ մեր դատը պաշտպանէ: Բնա՛ւ սխալ չէ պահանջել Աստուծմէ որ տէր կանգնի մեր իրաւունքներուն, մանաւանդ եթէ գիտենք որ աշխարհը որուն մէջ կ'ապրինք անիրաւ եւ իրաւագրկող աշխարհ է:

Ինչպէս անիրաւուած այրի կնոջ իրաւունքն էր արդարութիւն ու իրաւունք պահանջել, այնպէս ալ անիրաւուած քրիստոնեայ մարդուն բացարձակ իրաւունքն է արդարութիւն ու իրաւունք պահանջել: Աստուած կ'ուզէ որ իր գաւակները իրենց հայեացքը երկինք սեւեռած՝

անդադար աղօթեն եւ արդարութիւն պահանջեն, անարդարութեամբ լի այս աշխարհին մէջ:

գ.- Ինչպէս կինը իր դատը ներկայացուց դատաւորին, այնպէս ալ մենք մեր դատը պէտք է ներկայացնենք մեր երկնաւոր Դատաւորին: Այրի կինը իր վերաբերմունքով սորվեցուց մեզի թէ Աստուծոյ զաւակները աշխարհի մէջ գոյութիւն ունեցող անարդարութիւնները պէտք է յարատեւօրէն ներկայացնեն Աստուծոյ:

դ.- «Իրաւունքս պաշտպանէ հակառակորդէս»: Այստեղ ունինք իրաւագրկուած մէկը եւ ունինք հակառակորդ մը: Ո՞վ է հակառակորդը: Խօսելէ առաջ հակառակորդին մասին, յիշեցնեմ թէ ասկէ առաջ բացատրեցի թէ կինը կը ներկայացնէ Քրիստոսի իւրաքանչիւր հետեւորդ: Մեկնիչ հայր մը ըսած է. «Կինը կը ներկայացնէ Քրիստոսի Եկեղեցին, ինչպէս նաեւ եկեղեցւոյ իւրաքանչիւր անդամ»: Երկու բացատրութիւնները զիրա՛ր կ'ամբողջացնեն, քանի եկեղեցին անդամներէ բաղկացած է, եւ անդամներն ալ միասին՝ եկեղեցին կը կազմեն:

Գալով, «հակառակորդ» բնորոշումին: Ո՞վ է Քրիստոսի Եկեղեցիին հակառակորդը: Հակառակորդը առաջին հերթին՝ Սատանան է: Պետրոս առաքեալ Սատանան կը կոչէ մեր «հակառակորդը» (Ա.Պտ 5.8, հին թրգմ.): Պօղոս առաքեալ երբ կը խօսի ժամանակներու աւարտին «անօրէնութեան մարմնացումը եղող մարդ»ուն յայտնուելուն մասին՝ զայն դարձեալ կը կոչէ՝ «հակառակորդ» (Բ.Թս 2.3-4): Երկրորդ, հակառակորդը նաեւ Սատանայի հետեւորդներն են: Սատանան իր կամքը կատարողներուն միջոցաւ է որ կը հակառակի Քրիստոսի Եկեղեցիին:

Բոլորս ալ գիտենք որ Քրիստոսի մարմինը՝ եկեղեցին, ներկայ աշխարհին մէջ մեծ հակառակութիւններու կը հանդիպի: Մեզմէ ո՞վ չի գիտեր որ աշխարհի մէջ եկեղեցիներ կան որոնք տիրապետուած են ու կը դեկավարուին աշխարհային ոյժերու կողմէ: Ասիկա Քրիստոսի Եկեղեցիին հակառակորդ ըլլալ չի՞ նշանակեր:

Մեզմէ ո՞վ չի գիտեր թէ այսօր կարգ մը եկեղեցիներ տակաւին չեն կրցած վերջնականապէս յայտարարել թէ միասեռականութիւնը սխալ է: Անկլիքեան Եկեղեցւոյ մէկ մասը արդէն գրեթէ պաշտօնական հանգամանք տալու վրայ է միասեռականութեան: Դուք ըսէք, ասիկա աշխարհին ու Սատանային կողմէ Քրիստոսի Եկեղեցիին ընդդիմանալ ու հակառակիլ չէ՞:

Տակաւին, ո՞վ չի գիտեր թէ կան որոշ եկեղեցիներ, յատկապէս արեւմտեան եկեղեցիներ, որոնք կը զգուշանան «մեղք» բառը

գործածելու, որոնք չեն համարձակիր մեղքը իբրև մեղք որակելու, եւ ինչո՞ւ, որպէսզի եկեղեցի յաճախող «հաւատացեալներուն» զգացումները չվիրաւորուին «եղեր»: Բայց եւ հարց կու տամ, եթէ Յիսուս մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ, արիւնեցաւ ու մեռաւ, շա՞տ կ'ըլլայ եթէ մեղք բառը գործածենք: Եկեղեցին մարդոց զգացումները չվիրաւորելու մասին պէտք է մտածէ, թէ՛ Քրիստոսի սիրտը չվիրաւորելու մասին: Ան որ «մեղք» բառը լսելով կը վիրաւորուի, արդէն կը նշանակէ թէ քրիստոնեայ չէ, եւ երբե՛ք կապ չունի Քրիստոսի հետ: Ես ինչո՞ւ Քրիստոսի հետ կապ չունեցող անձի մը համար վիրաւորեմ Քրիստոսը:

Հակառակութեան ուրիշ երես մը կը բացուի մեր դիմաց երբ խօսինք աւետարանչութեան մասին: Յիսուս իր համբարձումէն առաջ պատուիրեց իր աշակերտներուն եւ անոնց ընդմէջէն մեզի, որ իր ուսուցումները փոխանցենք ամբողջ աշխարհի մարդոց (Մտ 28.20): Ո՞վ չի գիտեր կամ ո՞վ չէ լսած այն դժուարութիւններուն եւ կատաղի ընդդիմութիւններուն մասին որոնց կը հանդիպի Քրիստոսի Եկեղեցին, երբ ուզէ Աւետարանին բարի լուրը հասցնել այս կամ այն մարդուն, այս կամ այն ժողովուրդին, այս կամ այն երկրին, մէկ խօսքով՝ աշխարհի չորս ծագերուն:

Խօսի՞նք անհատական մակարդակի վրայ տեղի ունեցող հակառակութիւններուն մասին: Աշխարհ միշտ իբրև հակառակորդ կը ներկայանայ Աստուծոյ գաւակներուն: Աշխարհի մարդիկ տարբեր աչքով կը նային Քրիստոսի հետեւորդ եղող մարդուն եւ տարբեր աչքով՝ պարզ մարդուն: Քրիստոսի հաւատացողներ եւ մանաւանդ Քրիստոսը քրոջողներ, սովորաբար կ'անարգուին ու կը հալածուին իրենց շրջապատի մարդոց կողմէ: Քիչ են այն մարդիկը որոնք յարգանք ունին հաւատացեալին հանդէպ: Իսկ անոնք որոնք յարգանք չունին, պատճառը այն է որ անոնք կը տեսնեն թէ հաւատացեալ մարդը իրենցմէ տարբեր է եւ տարբեր կ'ապրի: Իսկ աշխարհի մարդը չի՛ հանդուրժեր ուրիշը իրմէ տարբեր տեսնել: Ան կ'ուզէ որ բոլոր մարդիկ իրեն պէս ըլլան: Իսկ եթէ չըլլան՝ արդէն սկիզբ կ'առնէ հակառակութիւնն ու հալածանքը:

Ե.- Այրի կիներ իր վերաբերմունքով սորվեցուց մեզի որ հակառակութիւնները պէտք չէ մեզ տկարացնեն ու վհատեցնեն: Ան չվհատեցաւ երբ անկարող դարձաւ իր իրաւունքը շուտով ձեռք ձգել, այլ յարատեւութեամբ շարունակեց իր իրաւունքին հետապնդումը: Քիչ առաջ խօսեցանք «կը դիմէր եւ կը խնդրէր» բառերուն մասին: Բնագիրը չ'ըսեր՝ «դիմեց... խնդրեց», այլ կ'ըսէ՝ «կը դիմէր, կը խնդրէր»: Եթէ

ըսուէր «դիմեց... խնդրեց», կրնայինք հասկնալ որ մէկ անգամ դիմեց եւ վե՛րջ: Մինչդեռ «կը դիմէր, կը խնդրէր» բառերը յարատեւութիւն եւ շարունակականութիւն ցոյց կու տան: Հետեւաբար, Յիսուս այրի կնոջ վերաբերմունքին ընդմէջէն, կոչ կ'ուղղէ մեզի չվհասելու կեանքի փորձութիւններուն դիմաց, չնահանջելու երբ հակառակութիւններու հանդիպինք, չընկրկելու դժուարութեանց առջեւ:

«Դատաւորը երկար ժամանակ մերժեց դատը տեսնել, սակայն ի վերջոյ ըսաւ ինքնիրեն.– "Թէեւ Աստուծով չեմ վախնար եւ մարդոցմէ չեմ ամչնար, բայց քանի այս այրին նեղութիւն կու տայ ինձի, իր դատը տեսնեմ, որպէսզի մինչեւ վերջ բովս գալով զիս չանհանգստացնէ"» (Ղկ 18.4-5): Քանի մը հաստատումներ.–

1.– Անիրաւ դատաւորը նկատի առնելով այրի կնոջ անխոնջ եւ անձանձրոյթ հետապնդումները, կու գայ այն եզրակացութեան, որ պէտք է կատարէ անոր խնդրանքը որպէսզի բովը գալով ալ զինք չնեղացնէ: Դատաւորին այս կեցուածքը՝ յաղթանակ մըն էր այրի կնոջ համար: Այրի կնոջ յաղթանակը՝ ամէն մէկ նշմարիտ քրիստոնեայի յաղթանակն է որ կը պատկերացնէ, որովհետեւ այրի կինը, ինչպէս նշուեցաւ, կը ներկայացնէ հաւատացեալ մարդը:

Նախորդ բաժնին մէջ խօսեցանք Հակառակորդին եւ հակառակութիւններու մասին: Երբ դատաւորը կ'որոշէ կնոջ խնդրանքը կատարել, ատիկա ինքնին ցոյց կու տայ այդ Հակառակորդին եւ հակառակութեանց վերջնական պարտութիւնը: Կասկածէ վեր է, որ Չարն ու չարագործներ, ի վերջոյ իրենց գլուխը պիտի ծոեն Աստուծոյ եւ անոր զաւակներուն առջեւ:

Հաստատեցինք թէ մեր առաջին եւ գլխաւոր հակառակորդը Սատանան է: Ի՞նչ կ'ըսէ Պօղոս առաքեալ անոր պարտութեան վերաբերեալ: Կ'ըսէ. «Խաղաղութեան պարգեւիչը, Աստուած, շուտով ձեր ոտքերուն տակ պիտի խորտակէ Սատանան» (Հռ 16.20): Բացատրեցինք նաեւ որ «հակառակորդ» բառին ետին մենք կը տեսնենք Չարին բոլոր հետեւորդները, որոնք տարբեր-տարբեր կերպերով կը հալածեն Քրիստոսի հաւատացեալները, որոնց ճակատագիրը՝ կորո՛ւստն է, ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Երբեք մի՛ վախնաք հակառակորդներէն. այդ հակառակութիւնը անոնց կորուստին եւ ձեր փրկութեան ապացոյցն է» (Փլպ 1.28): Դիտել տուինք նաեւ որ սովորաբար աշխարհ ինք հակառակ է Յիսուսի հետեւորդներուն: Բայց միաժամանակ դիտել կու տանք որ Յիսուսի ամէն մէկ հետեւորդ՝ Յիսուսի հետ միասին կրնայ ըսել եւ օր մը վերջնականապէս պիտի ըսէ. «Ե՛ս յաղթեցի աշխարհին» (Յհ 16.33):

2.- «Դատաւորը երկար ժամանակ մերժեց դատը տեսնել»: Աշխարհ չի սիրեր արդարութիւնը: Այս է պատճառը որ դատաւորը շուտով չի կատարեր այրի կնոջ ինդրանքը: «Երկար ժամանակ մերժեց դատը տեսնել»: «Երկար ժամանակ» սպասեցուց ու յոգնեցուց:

Ի՞նչ կը սորվեցնէ մեզի Յիսուս երբ կը գործածէ «երկար ժամանակ» բառերը: Համբերութի՛ւն կը սորվեցնէ: Աստուծոյ գաւակը, փորձութիւններով լեցուն այս աշխարհին մէջ համբերող եւ համբերատար պէտք է ըլլայ: Յիսուս խօսելով հալածանքներու եւ նեղութիւններու մասին՝ կ'ըսէ. «Ձեր համբերութեամբ պիտի փրկէ՛ք ձեր հոգիները» (Ղկ 21.19): Համբերութիւն չունեցող մարդը՝ չի՛ տոկար նեղութեանց, եւ ո՛չ միայն չի տոկար, այլեւ պատճառ կ'ըլլայ որ յաճախ Աստուծոյ գործը կամ իրեն համար ունեցած ծրագիրը խափանուի: Ահա թէ ինչո՛ւ Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Ոնեւ բանով պատճառ մի՛ ըլլա՛ք որ Աստուծոյ գործը խափանուի կամ վարկաբեկուի. այլ՝ բոլոր պարագաներուն ալ, դուք ձեզ ցոյց տուէ՛ք որպէս Աստուծոյ պաշտօնեաներ, մեծ համբերութեամբ յանձն առնելով նեղութիւնը, վիշտը չարչարանքը, ծեծը, բանտը, խոտմարարներու վայրագութիւնները, յոգնութիւնը, անփութիւնը, անօթութիւնը» (Բ.Կր 6.3-5):

Առանց համբերութեան չենք կրնար Քրիստոսի թագաւորութիւնը ժառանգել: Եթէ ունինք հաւատք Քրիստոսի հանդէպ՝ պէտք է համբերենք Քրիստոսի սիրոյն: Առաքեալը կը յիշեցնէ որ մենք «հաւատով եւ համբերութեամբ» միայն կրնանք «Աստուծոյ խոստումը ժառանգել» (Եբր 6.12): Ինչպէս այրի կինը իր համբերութեամբ կրցաւ իր դատը շահիլ, նոյնպէս ալ մենք, մեր համբերութեամբ կրնանք փրկութեան մեր դատը շահիլ: Եթէ չունինք համբերութիւն՝ ինդրենք Սուրբ Հոգիէն որ շնորհէ մեզի ատիկա, որովհետեւ համբերութիւնը կամ համբերատարութիւնը Սուրբ Հոգիին պտուղներէն մէկն է (Գղ 5.22):

3.- «Սակայն ի վերջոյ...»: Ի՞նչ ցոյց կու տան «ի վերջոյ» բառերը: Քանի մը բան.–

ա.– Յոյց կու տան որ աշխարհ «ի վերջոյ» պիտի մանչնայ Աստուծոյ գաւակներուն իրաւունքը: Եթէ ոչ հոս՝ երկրի վրայ, բայց վստահաբար՝ դատաստանի օրը:

բ.– Յոյց կու տան որ աշխարհ «ի վերջոյ» դատապարտուած է պարտութեան:

գ.– Յոյց կու տան որ եթէ Աստուծոյ գաւակները համբերող ըլլան՝ «ի վերջոյ» ձեռք պիտի ձգեն իրենց իրաւունքը եւ յաղթական դուրս պիտի գան:

դ.– «Ի վերջոյ», կը նշանակէ՝ վերջաւորութեան, այլ խօսքով՝ ժամանակներու աւարտին կամ կատարածին: Ուստի, տուեալ երկու բառերուն մէջ, մենք կը տեսնենք անուղղակի ակնարկութիւն մը Տիրոջ երկրորդ գալուստին: Եւ արդէն, առակը Տիրոջ երկրորդ գալուստին աւետիսով կ'աւարտի (Ղկ 18.8): Երբ Յիսուս ժամանակներու աւարտին յայտնուի՝ պիտի պաշտպանէ իր հետեւորդներուն դատը, եւ պիտի վերականգնէ անոնց ամբողջական ու կատարեալ իրաւունքը:

4.– «Ըսաւ ինքնիրեն»: Այս բառերուն մէջ կարեւոր գնահատութիւն մը կայ գոր պէտք է հանդէս բերել: Չմոռնանք որ առակը պատմողը Յիսուս ինքն է: Երբ Յիսուս կը հաստատէ թէ դատաւորը «ըսաւ ինքնիրեն», ատիկա ցոյց կու տայ թէ Յիսուս կրցաւ կարգաւ դատաւորին միտքը, եւ հետեւաբար, կրնայ կարգաւ բոլորիս միտքը: Երբ կ'ըսեմ թէ Յիսուս կրնայ կարգաւ բոլորիս միտքը, յստակ է ուրեմն, թէ ան կը նանչնայ մեր սիրտերը, գիտէ մեր մտածումները, խորհածները, մտորումները, եւայլն:

Մեր ըսածը հաստատելու համար՝ տանք քանի մը օրինակներ Աստուածաշունչէն: Երբ Պետրոս առաքեալ վիճեցաւ Տիրոջ հետ եւ չուզեց իր խաչելութեան մասին խօսքեր լսել, Յիսուս անոր ըսաւ. «Աստուծոյ ծրագիրը չէ որ կը խորհիս, այլ մարդոց մտահոգութիւնը կ'արտայայտես» (Մտ 16.23): Այս խօսքը կը բացայայտէ թէ Յիսուս գիտէ մեր բոլոր խորհածները, եւ գիտէ եթէ երբեք անոնք Աստուծոյ ծրագիրին համաձայն են, թէ՛ պարզապէս «մարդոց մտահոգութիւնը» արտայայտող մտածումներ են: Երբ Յիսուս Կափառնաումի անդամալոյծին ըսաւ. «Որդեա՛կ, մեղքերդ ներուա՛ծ ըլլան քեզի», Մարկոս Աւետարանիչ կը հաստատէ թէ «Օրէնքի ուսուցիչներէն ոմանք,... սկսան մտովի քննադատել զայն.– Ի՞նչպէս կը համարձակի ասանկ բան ըսել. ըրածը հայհոյութիւն է: Աստուծմէ գատ ո՞վ կրնայ մեղքերը ներել»: Յիսուս կրցա՞ւ կարգաւ Օրէնքի ուսուցիչներուն մտածածը: Այո՛: Լսեցէք թէ ի՞նչ կ'ըսէ Մարկոս. «Յիսուս վայրկեանին գիտցաւ անոնց մտածումը եւ ըսաւ.– Ինչո՞ւ այդպէս կը մտածէք» (Մր 2.5–8): Տակաւին, Յիսուս գիտցաւ Փարիսեցի Սիմոնին մտածումը (Ղկ 7.39–40), գիտցաւ ժողովարանին մէջ զինք ամբաստանելու միտքով հարցում հարցնողներուն մտածումը (Մտ 12.10–14), կարդաց աշակերտներուն միտքը որոնք կը մտահոգուէին թէ իրենց հետ հաց չմնաց (Մտ 16.8), եւայլն:

Այս բոլորը գիտնալէ ետք, սիրելի՛ ընթերցողներ, գիտցէք նաեւ որ Յիսուս ձե՛ր ալ միտքը կը կարդայ եւ գիտէ ինչ որ կը մտածէք, կը խորհիք, կը ծրագրէք: Ուստի, զգո՛յ՛ջ եղէք ձեր մտածածին: Զանացէք

միայն աստուածահաճոյ մտածումներ ու խորհուրդներ սնուցանել ձեր մտքին մէջ, եւ որպէսզի կարենա՛ք յաջողապէս ասիկա ընել, փորձեցէ՛ք մնայուն կերպով ձեր մտածութեան նիւթը Յիսուսը դարձնել, ձեր ուշադրութիւնը միայն երկինքի վրայ կեդրոնացուցէ՛ք, եւ ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Երկնաւոր բաներու մասին խորհեցէ՛ք եւ ո՛չ թէ երկրաւոր բաներու» (Կղ 3.2):

5.- «Թէեւ Աստուծմէ չեմ վախնար եւ մարդոցմէ չեմ ամչնար»: Ասկէ առաջ (2-րդ համարին մէջ) խօսեցանք այս հաստատումին մասին: Բայց հոս շատ կարեւոր կէտ մը կայ որուն պէտք է անդրադառնալ: 2-րդ համարին մէջ, Յիսուս ի՛նքն է որ կը հաստատէ թէ դատաւորը Աստուծմէ չի՛ վախնար եւ մարդոցմէ չ'ամչնար, իսկ այստեղ, (4-րդ համարին մէջ), դատաւորը ի՛նքն է որ կը խոստովանի թէ Աստուծմէ չի՛ վախնար եւ մարդոցմէ չ'ամչնար: Երբ կը խոստովանի, կը նշանակէ թէ իր ապօրէն ու անիրաւ ընթացքին գիտակցութիւնը ունի, այլ խօսքով՝ գիտնալով՝ մեղք կը գործէ, անիրաւութիւն կ'ընէ: Եւ քանի գիտնալով կ'ընէ՝ ներում չունի: Եւ հոսկէ կը սորվինք, թէ ներում չկայ անոնց՝ որոնք իրենց գործած մեղքերուն գիտակցութիւնը ունին, եւ սակայն, կամովին ու գիտակցաբար կը մերժեն հրաժարիլ անոնցմէ:

6.- «Բայց քանի այս այրին նեղութիւն կու տայ ինձի, իր դատը տեսնեմ, որպէսզի միևնչեւ վերջ բովս գալով զիս չանհանգստացնէ»: Քանի մը նշումներ.-

ա.- Դատաւորը «երկար ժամանակ» մերժել է ետք անոր դատը տեսնել, «ի վերջոյ» կ'որոշէ կատարել անոր խնդրանքը: Բայց ինչո՞ւ կը կատարէ: Դատաւորը ինքն իսկ կը պատասխանէ այս հարցումին. «Քանի այս այրին նեղութիւն կու տայ ինձի»: Ուշագրաւ է որ աշխարհի մարդուն համար նեղացուցի՛չ բան է արդար դատ տեսնելը, նեղացուցի՛չ բան է անիրաւուածին ու որքին տէր կենալը, եւ ինչո՞ւ, որովհետեւ ան արդարութեան ճաշակը չունի, եւ անարդարութենէն աւելի՛ հաճոյք կը ստանայ քան արդարութենէն:

բ.- «Միևնչեւ վերջ բովս գալով»: Այս բառերով, դատաւորը կը խոստովանի որ այրի կինը իր դատը հետապնդելու աննկուն կամք ունի: Ան իր հետապնդումի աշխատանքը «միևնչեւ վերջ» կը կատարէ: Կէս ճամբէն ետ չի դառնար, ինչպէս Դեմաս դարձաւ (Բ.Տմ 4.10): Նեղութիւններու եւ անտեսումի դիմաց՝ չի տկարանար ու նահանջ չ'արձանագրեք: Եւ անիրաւ դատաւորը տեղեակ է այս իրողութենէն, որովհետեւ ի՛նքն է որ կը հաստատէ թէ այրի կինը «միևնչեւ վերջ» բովը գալով՝ զինք պիտի անհանգստացնէ, եթէ իր դատը չտեսնէ:

«Մինչեւ վերջ փոխ գալով»: Դատաւորին այս յայտարարութիւնը կամ խոստովանութիւնը, խորքին մէջ նոյնիմէն աշխարհին խոստովանութիւնն է, այլ խօսքով՝ աշխարհի ի՛նք, շատ լաւ գիտէ որ Աստուծոյ զաւակները պիտի շարունակեն պայքարիլ «մինչեւ վերջ», հաւատքի ֆամբան պիտի ֆալեն «մինչեւ վերջ», իրենց համար ետդարձ չկա՛յ, նահանջ չկա՛յ, պատերազմի դաշտը ձգել ու փախչիլ չկա՛յ: Աշխարհ լա՛ւ գիտէ որ Քրիստոսի իսկական հաւատացեալներուն «մէջ բնակող Աստուծոյ Հոգին աւելի մեծ է քան Քրիստոսի հակառակորդին հոգին, որ կը գտնուի աշխարհին պատկանողներուն մէջ» (Ա.Յի 4.4), եւ ատիկա յանախ կը խոստովանի կամայ թէ աւամայ:

գ.- «Քովս գալով զիս չանհանգստացնէ»: Այս տողին յատկապէս վերջին բառը, ցոյց կու տայ թէ աշխարհի մարդիկը կ'անհանգստանան Աստուծոյ մարդոց ներկայութենէն: Այո՛, անարդար մարդիկ՝ անհանգիստ կ'ըլլան արդար մարդոց ներկայութենէն: Անոնք ո՛չ միայն կը մերժեն պաշտպանել Աստուծոյ զաւակներուն իրաւունքը, այլեւ անոնց ներկայութեան անգամ չեն հանդուրժեր: Միւս կողմէ, «չանհանգստացնէ» բառը կը պարզէ նաեւ որ դատաւորին համար անհանգստութիւն էր իր պարտականութիւնը կատարելով ուրիշին իրաւունքը պաշտպանելը: Ձեր շուրջ չկա՞ն այնպիսի մարդիկ որոնք անհանգիստ կ'ըլլան երբ անոնցմէ կը պահանջէք որ իրենց պարտականութիւնը ընեն ձեզի հանդէպ:

դ.- Վերջապէս, պէտք է նկատի առնել որ դատաւորին որոշումը կատարելու այրի կնոջ խնդրանքը, ցոյց կու տայ, որ երբեմն աշխարհ կը կատարէ մեր խնդրանքը, ո՛չ թէ որովհետեւ կը սիրէ մեզ կամ բարեկամ է մեզի, այլ որովհետեւ իր անձնական շահն ու հանգիստը ա՛յդ կը պահանջէ: Ասիկա գիտնալը կարեւոր է, որպէսզի երբ աշխարհ օգնութեան ձեռք երկարէ մեզի՝ չխաբուինք եւ չկարծենք որ ան մեր շահն ու հանգիստն է որ կը փնտռէ:

«Ապա Տէրը շարունակեց.- "Լսեցէք թէ ի՛նչ կ'ըսէ անիրաւ դատաւորը» (Ղկ 18.6): Երեք նշումներ.-

1.- Վերել խօսած ատեն «ըսաւ ինքնիրեն» բառերուն մասին, ցոյց տուինք թէ ինչպէս Յիսուս կրնայ գիտնալ մարդոց մտածումները, իսկ այստեղ, կը տեսնենք թէ ինչպէս, ո՛չ միայն Յիսուս ի՛նք գիտէ մարդոց մտածումները, այլեւ կը հրաւիրէ որ զինք լսողները եւս գիտնան. «Լսեցէք թէ ի՛նչ կ'ըսէ անիրաւ դատաւորը»:

Երբ Յիսուս կ'ըսէ՝ «Լսեցէք թէ ի՛նչ կ'ըսէ», ատիկա ինքնին ցոյց կու տայ որ իր հետեւորդները բաներ կան որ պիտի լսեն գոր չէին գիտեր, տեղեակ չէին: Արդ, ի՞նչ են այն բաները որ Յիսուսի հետեւորդները չեն

գիտեր: Խորհին մէջ հարցը վախճանաբանական երես ունի, եւ ուստի՝ առնչուած է Տիրոջ երկրորդ գալուստին:

Ինչ որ Յիսուս ըսաւ անիրաւ դատաւորին համար. «Լսեցէք թէ ի՛նչ կ'ըսէ անիրաւ դատաւորը», նոյնը իր հաւատացեալներուն պիտի ըսէ բոլոր անիրաւ մարդոց վերաբերեալ, երբ երկրորդ անգամ յայտնուի. «Լսեցէք թէ ի՛նչ կ'ըսեն անիրաւ մարդիկը, տեսէք թէ ի՛նչ բաներ մտածեր են ձեր կամ ուրիշին մասին, նայեցէք թէ ինչե՛ր ըրեր են, ինչե՛ր ծրագրեր են, ինչե՛ր խորհեր են, ինչե՛ր ծածկեր են ձեզմէ»:

«Լսեցէք»: Այս մէկ բառը սարսափի պէտք է մատնէ աշխարհի մարդիկը: Բառ մը՝ որ պէտք է իրենց եւ մեզի յիշեցնէ, թէ երբ Յիսուս գայ, բան մը պիտի չմնա՛յ անլսելի, բան մը պիտի չմնա՛յ ծածկուած, անյայտ, անծանօթ, թաքուն, այլ ամէն ինչ եւ ամէն բան երեսան պիտի գայ:

Այսօր շատ անիրաւութիւններ կան որոնք ծածուկ կերպով կը գործուին: Նենգութիւններ կան որոնք անյայտ կերպով ի գործ կը դրուին: Կեղծիքներ ու կեղծաւորներ կան որոնք մեր չորս դիմ կը վիտան սպիտակ պատմունաններ հագած: Եւ սակայն, մեղքն ու յանցանքը, անօրէնութիւնն ու անիրաւութիւնը իրենց բոլոր տեսակներով հանդէս պիտի գան երբ Տէրը յայտնուի:

2.- Զմոռնանք որ անիրաւ դատաւորին կատարած անիրաւութիւնը՝ այրի կնոջ դէմ կատարուած անիրաւութիւն մըն էր: Մենք բացատրեցինք որ այրի կինը կը ներկայացնէ ամէն մէկ հաւատացեալ, իսկ անիրաւ դատաւորը՝ մեղսասէր աշխարհը: Այս իմաստով, աշխարհ ի՛նքն է որ կը մեղանչէ ու կ'անիրաւէ Աստուծոյ զաւակները: Այսօր որքա՞ն անիրաւութիւններ կան որոնց կը հանդիպի հաւատացեալ մարդը: Բայց այդ անիրաւութիւնները ծածուկ պիտի չմնան, ահա թէ ինչո՛ւ Յիսուս կ'ըսէ. «Լսեցէք թէ ի՛նչ կ'ըսէ անիրաւ դատաւորը»: Այս կոչը ուղղուած է հաւատացեալներուն: Այո՛, Յիսուս պիտի հրաւիրէ իր հետեւորդները, իր անուան համար անիրաւուածներն ու չարչարուածները լսելու ու գիտնալու բոլոր այն անիրաւութիւններուն մասին՝ որ աշխարհ գործած է իրենց դէմ: Ո՛չ միայն Յիսուս ի՛նք գիտէ իր հետեւորդներուն դէմ գործուած գաղտնի անիրաւութիւններուն մասին, այլ իր հետեւորդները իրե՛նք նաեւ պիտի գիտնան այդ բոլորին մասին:

3.- «Լսեցէք թէ ի՛նչ կ'ըսէ»: Այս բառերով Յիսուս նաեւ կը յիշեցնէ մեզի թէ հաւատացեալ մարդիկ պիտի գիտնան թէ դժոխք նետուողը՝ ինչո՞ւ նետուեցաւ: Աստուած առանց պատճառի չի դատապարտեր մարդը գեհեմի: Մեր կեանքին մէջ եւ համայն աշխարհին մէջ տեղի

ունեցող շատ երեւոյթներ կան որոնց պատճառը չենք գիտեր, բայց Տիրոջ յայտնութեան օրը, դատաստանի օրը, ամէն բան պիտի գիտնանք, պիտի հասկնանք, ամէն բան պարզ ու որոշ պիտի ըլլայ: Հարկաւ Տէրը ինք մեզի պիտի չյայտնէ ու չպատմէ ամէն բան: Մենք՝ հաւատացեալներս, որոնք այլակերպուած մարմիններ պիտի ունենանք եւ լեցուած պիտի ըլլանք Սուրբ Հոգիով եւ Քրիստոսի փառքով ու իմաստութեամբ՝ ինքնաբերաբար եւ բնականաբար պիտի գիտնանք ամէն բան՝ ամէն իմաստով:

4.- «Լսեցէք թէ ի՛նչ կ'ըսէ անիրաւ դատաւորը»: Հոս արձանագրուած «լսեցէք» կամ «կ'ըսէ» բառերը պէտք չէ մտածել տան մեզի, թէ դատաստանի օրը առիթ պիտի տրուի անիրաւ մարդոց որ խօսին, խոստովանին կամ իրենք գիրենք պաշտպանեն, եւ եթէ ըսելիք ունին՝ իրենց ըսելիքը ըսեն: Չմոռնանք որ անիրաւ դատաւորը ոչինչ ըսաւ բարձրաձայն, այլ խօսքով՝ լսելի կերպով, այլ պարզապէս մտածեց, խորհեցաւ, ա՛յս է ինչ որ ցոյց կու տայ «ըսաւ ինքնիրեն» բառերը, որոնց մասին խօսեցանք արդէն:

Դատաւորին լոկ մտածելը, առանց լսելի կերպով արտայայտուելու, յստակօրէն ցոյց կու տայ որ չար մարդիկ դատաստանի օրը ոչինչ պիտի կարենան ըսել, իրենց առիթ պիտի չտրուի խօսելու, եւ նոյնիսկ եթէ առիթ տրուի՝ ոչինչ պիտի ըսեն, այլ պարզապէս պիտի պապանձին, միշտ ինչպէս արքայութեան հարսնարանը մտած «մարդը պապանձեցաւ» երբ Տէրը իրեն հարցուց. «Բարեկա՛մ, ի՞նչպէս հոս մտար առանց հարսանիքի հագուստ ունենալու» (Մտ 22.12):

Եթէ դատաստանի օրը առիթ պիտի չտրուի անիրաւ մարդոց խօսելու, հապա ինչո՞ւ Յիսուս կ'ըսէ. «Լսեցէք թէ ի՛նչ կ'ըսէ»: Տուեալ բառերով Յիսուս պարզապէս կ'ուզէ ցոյց տալ մեզի թէ չար մարդոց մշմարիտ ինքնութի՛ւնը հանդէս պիտի գայ դատաստանի օրը: Ուստի, «լսեցէք թէ ի՛նչ կ'ըսէ» բառերով, վերեւ տրուած իմաստներուն կողքին, կարծէք նաեւ Յիսուս ըսել կ'ուզէ. «Ճանչցէք անիրաւները իրենց ինքնութեան մէջ, իրենց իսկութեան մէջ: Տեսէք անոնց գործած չարիքները: Տեսէք անոնց կեղծ նկարագիրը: Գիտցէք մշմարտութիւնը անոնց մասին»:

«Իսկ Աստուած որքա՞ն պիտի համբերէ իր ընտրեալներուն կրած անիրաւութեան» (Ղկ 18.7): Քանի մը մատնանշումներ.–

1.- «Աստուած որքա՞ն պիտի համբերէ»: Հարցադրումի ձեւով կատարուած այս հաստատումը, ցոյց կու տայ որ Աստուած մինչեւ որոշ ժամանակ միայն «պիտի համբերէ իր ընտրեալներուն անիրաւութեան»: Արդ, Աստուծոյ համբերութիւնը սահման ունի՞ թէ ոչ: Յաճախ կ'ըսուի

որ Աստուած անհուն եւ անսահման համբերութիւն ունի: Եւ ասիկա բացարձակ կերպով շիտակ է, բայց շիտակ է միայն մեր երկրաւոր կեանքին համար: Այսինքն՝ այնքան ատեն որ մարդիկ կ'ապրին այս հողեղէն մարմիններուն մէջ՝ Աստուած համբերութիւն կը ցուցաբերէ անոնց հանդէպ, սպասելով որ դարձի գան, բայց անգամ մը որ մահուամբ բաժնուին այս աշխարհէն՝ Աստուծոյ համբերութիւնը «վերջ կը գտնէ», որովհետեւ մարդուն մահէն յետոյ՝ մարդուն համբերելու հարց չկայ:

Ինչո՞ւ չակերտներու մէջ առի «վերջ կը գտնէ» բառերը: Առի, որովհետեւ ուրի՛շ բան է ըսել Աստուծոյ համբերութիւնը «վերջ կը գտնէ», եւ ուրի՛շ բան՝ Աստուծոյ համբերութիւնը «կը հատնի»: Աստուծոյ համբերութիւնը չի՛ հատնիր, բայց կրնայ վերջ գտնել: «Կը հատնի» բառերը կը գործածենք երբ Աստուած կ'որոշէ լիել մարդը երեսի վրայ երբ տակաւին ան կ'ապրի հողեղէն իր մարմնին մէջ, իսկ «վերջ կը գտնէ» բառերը կը գործածենք երբ մարդը մահուամբ այս կեանքէն բաժնուի:

2.- «Աստուած որքա՞ն պիտի համբերէ իր ընտրեալներուն կրած անիրաւութեան»: Որո՞նք են Աստուծոյ ընտրեալները: Աստուծոյ ընտրեալները անոնք են որոնք ընտրած են զԱստուած իբրեւ իրենց բաժինը այս կեանքէն: Բաժին մը՝ որ բնաւ ետ պիտի չառնուի իրենցմէ (Ղկ 10.42): Անոնք որոնք ընտրած են հետեւիլ Աստուծոյ, անոնք անիրաւութիւն պիտի կրեն այս աշխարհին մէջ: Մեծագոյն անիրաւողը Աստուծոյ զաւակներուն՝ Սատանան ի՛նքն է: Աստուած երկար պիտի չհամբերէ Սատանային եւ սատանայութիւն ընող մարդոց կատարած անիրաւութիւններուն: Աստուած տէր պիտի կանգնի իր զաւակներուն «որոնք գիշեր ու ցերեկ իրեն կը դիմեն»:

3.- «Իր ընտրեալներուն»: Այստեղ կարեւոր կէտ մը կայ որ յաճախ վէճի դուռ բացած է եկեղեցւոյ կեանքին մէջ նոյնիսկ առաջին դարերէն սկսեալ: «Ընտրեալ» կամ «ընտրուած» բառը մենք ունինք նաեւ Յունարէն բնագիրին մէջ՝ *εκλεκτων* – էփեկթօն: Արդ, մա՞րդն է որ կ'ընտրէ զԱստուած, կամ՝ Աստուա՞ծ է որ կ'ընտրէ մարդը: Խորքին մէջ Աստուած ի՛նքն է որ կ'ընտրէ մարդը, բայց կ'ընտրէ միայն այն մարդիկը՝ որոնք զինք ընտրել կ'ուզեն, որոնք իր զաւակները դառնալ կ'ուզեն, որոնք փափաք ունին հանդէպ երկինքին:

Աստուած պիտի չընտրէ ու չփրկէ այնպիսի մարդիկ որոնք կամովին զինք կը մերժեն, որոնք ոեւէ սէր, փափաք ու հետաքրքրութիւն չունին իրեն հանդէպ: Եթէ Աստուած պիտի փրկէ այնպիսի մարդիկ որոնք սէր ու հետաքրքրութիւն չունին իրեն հանդէպ՝

կը նշանակէ թէ Աստուած մարդուն շնորհած ինքնիր ազատ կամքի պարգեւը չի յարգեր, բայց քա՛ն լիցի որ Աստուած այդպիսի բան ընէ:

Եկեղեցւոյ պատմութեան ընթացքին, եղած են հայրեր որոնք հարց տուած են ըսելով.– Եթէ Աստուած կը յարգէ մարդուն ազատ կամքի պարգեւը եւ չի փրկեր մէկը իր կամքէն անկախ, այդ պարագային, ինչո՞ւ Դամասկոսի ցամբուն վրայ երեւցաւ Պօղոս առաքեալին եւ փրկեց գայն: Պատասխանը շատ պարզ է եւ արդէն իսկ յիշեցինք: Աստուած սիրտերը կը ցանցնայ, եւ ուստի չի փրկեր այն մարդիկը՝ որոնց սրտին մէջ սէր, փափաք ու հետաքրքրութիւն չկայ իրեն հանդէպ, որոնք չեն սիրեր զինք: Բայց կրնա՞նք ըսել որ Պօղոս առաքեալ դարձի գալէ առաջ սէր չունէր Աստուծոյ հանդէպ: Ո՞վ կրնայ ըսել թէ առաքեալը փափաք եւ հետաքրքրութիւն չունէր Աստուծոյ հանդէպ: Քա՛ն լիցի որ մէկը համարձակի այդպիսի բան ըսել: Առաքեալը ինչ որ ըրաւ եւ ինչ որ պիտի ընէր՝ Աստուծոյ հանդէպ իր բացարձակ սիրոյն ապացոյցներն էին:

Ան Աստուծոյ եւ Աստուծոյ Օրէնքին հանդէպ իր ունեցած բացարձակ բծախնդրութեան համար էր որ կը հալածէր Յիսուսի հետեւորդները: Ան Յիսուսի հետեւորդները աղանդաւորներ կը սեպէր, եւ ուստի անոնց ներկայութիւնը՝ անարգանք կը նկատէր Աստուծոյ սուրբ անունին ու Օրէնքին, ահա թէ ինչու կը հալածէր զանոնք: Եւ Յիսուս շատ լաւ գիտէր ասիկա: Յիսուս չէր կրնար կորսնցնել մէկը որ լեցուած էր Աստուծոյ Օրէնքին սիրով ու կրակով: Չէր կրնար դատապարտել մէկը որ իր համակ կեանքը Աստուծոյ նշմարտութեան ընծայաբերած էր: Չէր կրնար չընտրել մէկը որ լիովին Աստուծոյ Խօսքին պաշտպանութեան նուիրուած էր: Եւ հետեւաբար, Յիսուսի երեւումը իրեն Դամասկոսի ցամբուն վրայ եւ զինք փրկելը, երբեք պէտք չէ ըմբռնենք՝ Աստուծոյ կողմէ մարդուն ազատ կամքը չյարգելու կեցուածք իբրեւ:

Առաքեալը գիտէ՞ր որ Յիսուս Աստուած էր, գիտէ՞ր որ ան Խոստացեալ Մեսիան ու Փրկիչն էր: Ո՛չ: Հետեւաբար, ան առանց գիտնալու ըրաւ ինչ որ ըրաւ: Բան մը գիտնալով ընելը ուրիշ բան է, առանց գիտնալու ընելը՝ ուրիշ բան: Յիսուս գիտէր որ առաքեալը առանց գիտնալու ըրաւ ինչ որ ըրաւ, ուստի ան չէր կրնար զինք դատապարտել իր տգիտութեան համար. ինք՝ որ իսաչին վրայ ըսաւ. «Հա՛յր, ներէ՛ անոնց, որովհետեւ չեն գիտեր թէ ի՛նչ կ'ընեն» (Ղկ 23.34):

Ոմանք Յուդա Իսկարիոտացիին եւ Պետրոս առաքեալին օրինակը եւս կու տան, ըսելու համար՝ թէ Աստուած որու որ ուզէ՝ կ'ընտրէ, եւ որու որ չուզէ՝ կը մերժէ: Տուեալ անձերուն օրինակը տուողներ՝ կ'ըսեն.

«Քրիստոս ընտրեց Պետրոսը եւ մերժեց Յուդան»: Այդպէ՞ս է: Յուդան ալ Յիսուս ինձ չընտրե՞ց: Յուդա սակայն ի՛նքն էր որ չէր ընտրած Յիսուսը իր ամբողջ սրտով, ի՛նքն էր որ չէր սիրեր Յիսուսը անկեղծ սիրով: Իր Տէրը սիրողը՝ գայն դրամով կը ծախէ՞, գայն անգութ մարդոց ձեռքը կը մատնէ՞: Թէ գիտէր կամ չէր գիտեր որ զինք մահուան պիտի դատապարտեն՝ ատիկա բոլորովին երկրորդական է. մէկ բան յստակ է, որ իր ըրածը մատնութիւն էր, իր ըրածը դրամով Յիսուսը ծախելու արարք մըն էր: Ոեւէ մէկը անմտաբար թող չըսէ թէ Յուդան Յիսուսը մատնեց՝ որպէսզի ստիպէր զինք իր թագաւորութիւնը հռչակելու: Չկա՛յ այդպիսի բան: Յուդայի ըրածը Յիսուսը ծախել էր, թէ՛ մատնել: Յստակ է որ ծախել էր, մատնութիւն ըլլալէ առաջ: Եւ ինչո՞ւ պիտի ծախէր: Յովհաննէս Աւետարանիչ կը պատասխանէ այս հարցումին. «Որովհետեւ գող էր: Իր բով կը գտնուէր գանձանակը եւ ի՛նչ որ հոն կը ձգուէր՝ անկէ կ'օգտուէր» (Յհ 12.6): Յովհաննէսի այս վկայութիւնը բաւարար չէ՞ հերքելու այն երկու կարծիքները որ յանախ կը լսենք, առաջինը՝ թէ «Յիսուս մերժեց Յուդան», եւ երկրորդը՝ թէ «Յուդան Յիսուսը մատնեց՝ որպէսզի ստիպէր զինք իր թագաւորութիւնը հռչակելու»: Եթէ իրողութիւնը ատիկա ըլլար, այդ պարագային, հարց կու տանք թէ ինչո՞ւ Յուդան դրամ առաւ Յիսուսը մատնելու համար: Ան չէ՞ր կրնար Յիսուսը մատնել առանց դրամ առնելու: Կրնա՛ր, բայց չըրա՛ւ, եւ ինչո՞ւ. որովհետեւ իր նպատակը դրա՛մն էր եւ ո՛չ Յիսուսի թագաւոր հռչակուիլը: Յիշենք նաեւ որ նոյնինքն Յիսուս կը վկայէ որ Յուդա մահուր չէ: Ան խօսքը ուղղելով աշակերտներուն՝ կ'ըսէ. «Դուք մահուր էք, բայց ո՛չ բոլորդ»: Աւետարանիչը կը նշդէ թէ ինչո՞ւ համար Յիսուս այս խօսքը ըսաւ. «Քանի Յիսուս գիտէր թէ ո՛վ պիտի մատնէր զինք, ահա թէ ինչո՞ւ ըսաւ.– Դուք մահուր էք, բայց ո՛չ բոլորդ» (Յհ 13.10-11): Յիսուսի եւ Յովհաննէս Աւետարանիչի տուած այս երկու վկայութիւնները բաւարար չե՞ն ցոյց տալու համար որ Յուդա չէր սիրեր Յիսուսը:

Բայց նոյնը կրնա՞նք ըսել Պետրոս առաքեալին համար: Աստուածաշունչին մէջ կա՞յ համար մը որ ուղղակի թէ անուղղակի կերպով ցոյց տայ որ Պետրոս չէր սիրեր Յիսուսը: Ընդհակառակը, Աստուածաշունչը եւ նոյնինքն Պետրոսի բերնով, երեք անգամներ կը հաստատէ թէ Պետրոս կը սիրէր Յիսուսը (Յհ 21.15-17): Պետրոս Յիսուսը ուրանալու կամ գանհկա զինուորներուն ձեռքը ձգելու համար դրամ չառաւ: Ընդհակառակը, ան երբ տեսաւ զինուորներու գունդ մը, ինչպէս նաեւ աւագ քահանաներուն ու Փարիսեցիներուն կողմէ զրկուած սպասաւորներ մօտեցան Յիսուսը ձերբակալելու, սուրբ քաջեց եւ կտրեց

Քահանայապետին ծառային՝ Մադոսի ականջը (Յհ 18.10): Պետրոս նման բան պիտի ընէ՞ր եթէ անհուն սէր չունենար Յիսուսի հանդէպ: Պետրոս չէ՞ր գիտեր որ Քահանայապետին վրայ սուրբ բարձրացնող մը կրնար ցմահ բանտարկութեան եւ կամ մահուան դատապարտուիլ: Այո՛, գիտէ՛ր, եւ գիտնալով ըրաւ, եւ ասկէ աւելի մեծ սէր կարելի չէր երեւակայել: Ան իր կեանքը վտանգի ենթարկեց՝ Յիսուսի կեանքը ազատելու համար: Թէ իր ըրածը Աստուծոյ ծրագիրին մաս կը կազմէր թէ ոչ՝ այդ բոլորովին երկրորդական է եւ աւելորդ՝ անոր մասին խօսիլը:

Պետրոսի ուրացումը մարդկային տկարութեան մը եւ վախի արտայայտութիւն էր եւ ո՛չ թէ Տիրադաւութեան կամ Տիրավանտութեան արտայայտութիւն: Յուդային պարագան հիմնովին տարբեր էր: Ան ա՛յնքան դրամատէր էր որ սկիզբէն գնաց եւ աւագ ֆահանաներուն հետ համաձայնութիւն կնքեց Յսուսը ուրանալու համար, եւ սկիզբէն՝ նախքան Յիսուսը մատնելը արդէն առաւ «երեսուն արծաթ դահեկանը» (Մտ 26.15-16): Եւ կարելոր է չմոռնալ որ ինք «գնաց աւագ ֆահանաներուն մօտ», եւ ո՛չ թէ աւագ ֆահանաները ֆովը եկան. ասիկա ցոյց կու տայ իր անչափ դրամատէր ըլլալը:

Կան տակաւին մարդիկ, որոնք կ'ըսեն. «Աստուած որու որ ուզէ ընտրել ու փրկել՝ կը կակուղցնէ անոր սիրտը, եւ որու որ չուզէ փրկել՝ կը կարծրացնէ անոր սիրտը»: Նման խօսք հակառակ է Աստուածաշունչին եւ հակառակ է Աստուծոյ բարի ու մարդատէր բնութեան: Պօղոս առաքեալ կը հաստատէ թէ Աստուած կը փափաքի եւ կ'ուզէ «որ բոլոր մարդիկը փրկուին եւ հասնին նշմարտութեան նանաչումին» (Ա.Տմ 2.3-4):

Անոնք որոնք կը խորհին թէ Աստուած ինք է որ որոշ մարդոց սիրտը կը կարծրացնէ, իրենց տեսակէտը կը հիմնեն Ես 6.10: Մտ 13.14-15: Դկ 8.10 համարներուն վրայ: Այս նիւթին մասին տարբեր առիթով մը խօսած եմ, ուստի կը բաւարարուիմ հպանցիկ անկնարկով մը:

Աստուած Եսային կ'ըսէ.

«Այս ժողովուրդին սիրտը թանձրացուր

եւ ականջները ծանրացուր

եւ անոր աչքերը գոցէ,

որպէսզի չըլլայ թէ աչքերովը տեսնէ

եւ ականջներովը լսէ եւ սրտովը իմանայ

եւ դարձի գայ ու բժշկուի» (Ես 6.10):

Երբ այս տողերը կարդանք, այն տպաւորութիւնը կրնանք ունենալ որ Աստուած ի՛նք էր որ կամեցաւ որ ժողովուրդին սիրտը կարծրանայ, ականջները ծանրանան եւ աչքերը փակուին, բայց իրականութիւնը

նի՛շդ հակառակն է: Ժողովուրդը ի՛նք է որ չուզեց իր սիրտը, ականջները եւ աչքերը բանալ Աստուծոյ փրկարար շնորհի լոյսին դիմաց:

Աստուած սիրտերը կը ֆանջնայ: Երբ տեսնէ թէ սիրտ մը զինք չ՛ուզեր ընդունիլ՝ իր կամքէն անկախ գայն չի փոխեր: Աստուած ինքզինք չի պարտադրեր մաղուն: Եթէ Աստուած ուզէ փոխել մարդը եւ ստիպել անոր որ ընդունի զինք՝ կրնա՛յ, բայց չ՛ընեն այդպիսի բան, եւ քանի չ՛ընեն, անուղղակիօրէն կարծէ՛ք ինքն է որ թանձրացուցած կ՛ըլլայ մարդուն սիրտը եւ գոցած անոր ականջներն ու աչքերը: Այս է պատճառը որ ոմանք կը կարծեն որ Աստուած ի՛նքն է որ մարդոց սիրտը կը կարծրացնէ:

Յիսուս շատ լաւ գիտէր որ հրեաներ իրե՛նք է որ իրենց սիրտը փակեցին Աստուծոյ դիմաց եւ մերժեցին գայն եւ ո՛չ թէ Աստուած ինք մերժեց զիրենք, ահա թէ ինչո՛ւ երբ մէջբերեց վերոյիշեալ Եսայի մարգարէութեան խօսքը՝ ըսաւ.

«Անդադար պիտի լսեն, բայց պիտի չհասկնան.
շարունակ պիտի նային, բայց պիտի չտեսնեն,
որովհետեւ այս ժողովուրդին միտքը թանձրացած է.
իրենց ականջները խցած են,
եւ իրենց աչքերը փակած,
որպէսզի չըլլայ որ իրենց աչքերը տեսնեն
ու ականջները լսեն
եւ միտքերը հասկնան ու դարձի գան,
եւ ես զանոնք բժշկեմ» (Մտ 13.14-15):

Հոս յստակօրէն Յիսուս կը հաստատէ թէ հրեաներ իրե՛նք է որ կամովին եւ գիտակցօրէն փակեցին իրենց սիրտը Աստուծոյ դիմաց եւ ո՛չ թէ Աստուած ինք զիրենք մերժեց: Աստուած չի՛ կարծրացնեն սիրտ մը որ զինք կը փնտռէ: Զի՛ ծածկեր ուղարկուածն լոյսը անձէ մը որ որոնիչն է այդ լոյսին:

Եթէ մէկը իսկապէս կը փնտռէ փրկութեան ֆամբան՝ Աստուած կը բանայ անոր սիրտը եւ կ՛օգնէ անոր գտնելու այդ ֆամբան, բայց մէկը որ չի փնտռեր փրկութեան ֆամբան՝ Աստուած չի բանար անոր սիրտը եւ չ՛օգնեն անոր գտնելու այդ ֆամբան: Կարն բացատրութեամբ մը, Աստուած կամեցողին ու փափաֆողին է որ ինքզինք կը յայտնէ, բայց մէկը որ փափաֆ չունի Աստուծոյ հանդէպ՝ Աստուած ինքզինք չի յայտնեն անոր, թէպէտ կը փորձէ զանազան ձեւերով գոնէ մման փափաֆ մէջը արթնցնել նախքան ինքզինք անոր յայտնելը, բայց եթէ մարդը այդքանն ալ մերժէ՛ ալ Աստուած «ոչինչ կրնայ ընել»:

Յիշենք նաև Մարկոսի կողմէ մէջբերուած Եսայի խօսքը: Հոն կը տեսնենք Յիսուս խօսքը ուղղելով աշակերտներուն՝ կ'ըսէ. «Դուք պէտք է գիտնա՞ք Աստուծոյ արքայութեան գաղտնիքները, բայց ուրիշներուն առակներով կը յայտնուի, այնպէս որ "նային՝ բայց չտեսնեն, լսեն՝ բայց չհասկնան"» (Մր 8.10): Հոս եւս, կարդացողը կրնայ այն տպաւորութիւնը ունենալ որ Յիսուս որոշ դասակարգի մարդոց առակներով խօսեցաւ որպէսզի չգիտնան «Աստուծոյ արքայութեան գաղտնիքները»: Բայց եթէ ուշադիր կարդանք բառերը, պիտի տեսնենք որ բացատրութիւնը արդէն անոնց մէջ է: Որո՞նց է որ կ'ուղղէ Յիսուս իր խօսքը երբ կ'ըսէ. «Դուք պէտք է գիտնա՞ք Աստուծոյ արքայութեան գաղտնիքները»: Յստակ է որ իր աշակերտներուն (Մր 8.9): Ըսինք որ «աշակերտ» կը նշանակէ՝ հետեւորդ: Յիսուս կ'ուզէ ու կ'օգնէ որ իր հետեւորդները գիտնա՞ն արքայութեան մասին, եւ ինչո՞ւ կ'ուզէ ու կ'օգնէ, որովհետեւ իր հետեւորդները իրենք է որ կը փափաքին գիտնալ «Աստուծոյ արքայութեան գաղտնիքները»:

Դանք համարին երկրորդ կէսին. «Բայց ուրիշներուն առակներով կը յայտնուի, այնպէս որ "նային՝ բայց չտեսնեն, լսեն՝ բայց չհասկնան"»: Որո՞նք են այս «ուրիշները»: Յստակ է որ անոնք Աստուծոյ արքայութեան հանդէպ անտարբեր եղող մարդիկն են, եւ առաջին հերթին՝ հրեաները իրենք: Հրեաներ իրենք Աստուծո՞յ թագաւորութիւնը կ'ուզէին հաստատել Երուսաղէմի մէջ, թէ՛ հրէական թագաւորութիւն մը: Շատ որոշ է որ անոնց սպասածը հրէական թագաւորութեան վերականգնումն էր. անոնք երբեք մտածած անգամ չունէին Մեսային գալուստով հաստատուելիք աստուածային թագաւորութեան մը մասին:

Մարկոսէն յիշած մեր խօսքին վերաբերեալ կէտ մը եւս: «Ուրիշներ» բառէն առաջ մենք ունինք «բայց» բառը: Ի՞նչ ցոյց կու տայ այս «բայց»ը: «Բայց»ը յիշուած է հակադրաբար «դուք» բառին: Այսինքն, եթէ «դուք»ը՝ ակնարկութիւն է Յիսուսի հետեւորդներուն, «բայց ուրիշներ» բառերը՝ ակնարկութիւն են իրեն չհետեւողներուն: Եւ քանի այս «ուրիշներ»ը իրեն չհետեւող մարդիկն են՝ Աստուած երբեք իր արքայութեան գաղտնիքները չի յայտնեւ անոնց, որպէսզի չտոնակոխեն ու չանարգեն զանոնք, ինչպէս Յիսուս ինքն իսկ ըսաւ. «Ոեւէ սրբութիւն շուններուն մի՛ տաք, ձեր մարգարիտներն ալ խոզերուն առջեւ մի՛ նետէք, որպէսզի չըլլայ թէ զանոնք կոխկոտեն եւ դառնան ձեր վրայ յարձակին» (Մտ 7.6):

Յիշենք նաև թէ կան մարդիկ որոնք «ընտրեալ» բառին մէջ «նախասահմանուած» իմաստը կը տեսնեն: Նախասահմանութեան

Վարդապետութեան հաւատացողներուն համաձայն, Աստուած ինք սկիզբէն նախասահմանած է թէ որո՞նք պիտի փրկուին, եւ որոնք պիտի չփրկուին:

Արծարծելէ առաջ այս հարցը, նախ ըսեմ որ վարդապետական աստուածաբանութեան մէջ «Նախասահմանութիւն» բառին կողքին մենք ունինք ուրիշ բառ մը եւս որ սերտ առնչութիւն ունի «Նախասահմանութիւն» բառին հետ, եւ այդ բառը «Կանխագիտութիւն» կամ «Նախագիտութիւն» բառն է: Այս երկու բառերը բացարձակ կերպով նոյն իմաստը ունին, եւ պարզապէս կը նշանակեն՝ «կանուխէն գիտնալ», կամ՝ «նախապէս գիտնալ»:

«Նախասահմանութիւն» եւ «Կանխագիտութիւն» բառերը սուրբ գրային են (Հո 8.28-29: Եփ 1.5 եւայլն): Զգո՛յշ: Ես ըսի «բառե՛րը» սուրբ գրային են եւ ո՛չ թէ անոնց վրայ հիմնուելով հրապարակ նետուած թիւր վարդապետութիւնը, ըստ որուն՝ ոմանք սահմանուած են փրկուելու, իսկ ուրիշներ՝ կորսուելու:

Նախ խօսինք «Նախասահմանութիւն» եւ «Կանխագիտութիւն» բառերուն առնչութեան մասին: Անոնք որոնք կը հաւատան Նախասահմանութեան Վարդապետութեան, կը հաստատեն, թէ Աստուած կանխագէտ է, այսինքն՝ ամէն ինչ կանուխէն կամ սկիզբէն գիտէ, եւ քանի ամէն ինչ սկիզբէն գիտէ, բնականօրէն գիտէ նաեւ թէ որո՞նք հաւատացեալ պիտի ըլլան եւ որո՞նք՝ անհաւատ, եւ քանի սկիզբէն գիտէ թէ որո՞նք հաւատացեալ պիտի ըլլան եւ որո՞նք՝ անհաւատ, հետեւաբար, սկիզբէն կ'որոշէ թէ որո՞նք պիտի փրկուին, եւ որոնք՝ պիտի չփրկուին:

Ի՞նչպէս պէտք է հասկնալ՝ «սկիզբէն կ'որոշէ թէ որո՞նք պիտի փրկուին, եւ որոնք՝ պիտի չփրկուին» հաստատումը: Հաստատումը կրնայ մեզ գայթակղեցնել եթէ գայն շիտակ կերպով չհասկնանք: Աւելի լաւ կ'ըլլայ հաստատումը տարբեր ձեւով կատարել. «Աստուած սկիզբէն գիտէ թէ որո՞նք պիտի փրկուին, եւ որոնք պիտի չփրկուին»:

«Սկիզբէն գիտէ» ըսելը ուրիշ բան է, «սկիզբէն կ'որոշէ» ըսելը՝ ուրիշ բան: Որքան ալ ընդունինք թէ «Նախասահմանութիւն» եւ «Կանխագիտութիւն» բառերը սուրբ գրային են, այդուհանդերձ, կը զգուշանանք զանոնք գործածել որովհետեւ միշտ ալ սխալ հասկցուած են անոնք որոշ հոսանքներու կողմէ:

Աստուած գիտէ ու կը տեսնէ եթէ երբեք հաւատքի կեանք կ'ապրինք թէ ոչ: Եւ քանի գիտէ ու կը տեսնէ, բնականօրէն նաեւ սկիզբէն գիտէ թէ որո՞նք պիտի փրկուին, եւ որոնք՝ պիտի չփրկուին. բայց այս չի նշանակեր թէ ի՛նքն է որ կ'որոշէ թէ ո՛վ պիտի փրկուի, եւ ո՛վ՝ պիտի

չփրկուի: Կը կրկնեմ, ԱՆ ԳԻՏԷ՛ թէ ով պիտի փրկուի, եւ ո՛չ թէ ԿՆՈՐՈՇԷ՛ թէ ով պիտի փրկուի: Եթէ մարդ մը որոշէ փրկուիլ՝ Աստուած անոր որոշումը պիտի չյարգէ՞, պիտի չզնահատէ՞ եւ անոր զօրակից պիտի չըլլա՞յ: Ինք չէ՞ր որ ըսաւ թէ իրեն եկողը պիտի չմերժէ (Յն 6.37): Եթէ մերժէ իրեն եկողը՝ ինքզինքին հակասած պիտի չըլլա՞յ:

«Պիտի չպաշտպանէ՞ զանոնք, որոնք գիշեր ու ցերեկ իրեն կը դիմեն» (Ղկ 18.7): Այս տողը իմաստային թարգմանութիւն է: Բայց քանի մեկնութիւն է որ կ'ընենք, երբեմն անհրաժեշտ է մեր ուշադրութիւնը Յունարէն բնագիրին դարձնել: Քանի մը նշումներ նախ բնագիրին վերաբերեալ.–

1.– Բնագիրին մէջ տուեալ տողը քիչ մը տարբեր ձեւով կը ներկայանայ: Հոն կը կարդանք. «Աստուած պիտի դանդաղի՞ պատասխանելու իր ընտրեալներուն որոնք գիշեր ու ցերեկ իրեն կ'աղաղակեն»: Յունարէն *μακροθυμει* – մաքրօթիմի բառը որ կը նշանակէ՝ «կը դանդաղի», պարզապէս պէտք է հասկնալ՝ «երկայնամտութիւն ցոյց կու տայ» եւ «համբերութիւն կը ցուցաբերէ» իմաստով: Յանախ մեզի ալ չի՞ թուիր որ Աստուած կը դանդաղի պատասխանելու մեր աղօթքին, կամ միջամտելու հարցի մը գծով երբ խնդրած ենք իր միջամտութիւնը:

Ասկէ առաջ ըսած եմ ու կը կրկնեմ, Աստուած չ'աճապարեր բայց նաեւ չ'ուշանար: Յիսուս ե՞րբ եկաւ աշակերտներուն երբ Գալիլոյ լիճին վրայ ալեկոծութեան բռնուած էին: Փոթորիկին սկսելէն առա՞ջ, թէ՛ փոթորիկին դադրելէն յետո՞յ: Յիսուս չեկաւ ո՛չ Փոթորիկին սկսելէն առաջ եւ ո՛չ ալ փոթորիկին դադրելէն յետոյ: Ճիշդ փոթորիկի պահուն հասաւ աշակերտներուն: Եթէ փոթորիկէն առաջ գար՝ կրնայինք ըսել՝ աճապարեց, իսկ եթէ փոթորիկին դադրելէն յետոյ գար՝ կրնայինք ըսել՝ ուշացաւ կամ դանդաղեցաւ:

Տանք ուրիշ օրինակ մը: Աստուած ե՞րբ յայտնուեցաւ Աբրահամին երբ ան կը պատրաստուէր իր զաւակը մորթելու: Յայտնուեցաւ զոհավայրը հասնելէ առա՞ջ, թէ՛ զոհը մատուցանելէ ետք: Խորքին մէջ, ո՛չ զոհավայրը հասնելէ առաջ եւ ո՛չ ալ զոհը մատուցանելէ ետք Աստուած յայտնուեցաւ, այլ ճիշդ այն պահուն՝ երբ «Աբրահամ իր ձեռքը երկնցուց ու դանակը առաւ, որպէսզի իր որդին մորթէ» (Ծն 22.10): Եթէ Աստուած յայտնուէր Աբրահամին Մօրիայի երկիրը հասնելէ առաջ, կրնայինք ըսել՝ աճապարեց, իսկ եթէ յայտնուէր Իսահակին մորթուելէն ետք, կրնայինք ըսել՝ ուշացաւ:

Առանց բազմացնելու օրինակները, պարզապէս ըսեմ, որ Աստուած ե՛րբեք չ'աճապարեր եւ ե՛րբեք չ'ուշանար: Հեղինակ մը ըսած է.

«Աստուած վերջին վայրկեանի Աստուած է», ըսել ուզելով թէ Աստուած «վերջին վայրկեանին» կը հասնի, բայց կը հասնի՛, ուշի չի մնար: Ինչո՞ւ Աստուած «վերջին վայրկեանին» կը հասնի եւ կը միջամտէ: Նպատակը դաստիարակչական է: Աստուած կը սպասէ որ մեր առջեւ փակուին բոլոր այն դռները որոնց կապած ենք մեր յոյսը, որպէսզի սորվինք իրե՛ն եւ միայն իրե՛ն վստահիլ. եւ երբ սորվինք միայն իրե՛ն վստահիլ, «հիշդ այն պահուն է որ կը միջամտէ: Այս ձեւի աստուածային միջամտութիւն մը, մեզի համար կրնայ թուիլ «վերջին վայրկեանի միջամտութիւն», բայց խորքին մէջ այդպէս չէ: Ասիկա «վերջին վայրկեանի միջամտութիւն» չէ, այլ՝ «հիշդ ժամանակի միջամտութիւն», «յարմար ժամանակի միջամտութիւն»: Ինչ որ մենք «վերջին վայրկեանի միջամտութիւն» կը կոչենք, Աստուած գայն «հիշդ ժամանակ», «յարմար ժամանակ» կը կոչէ:

2.- «Պատասխանելու»: Այս բառին դիմաց Յունարէնին մէջ մենք ունինք՝ *εκδικησις* – էփոիֆիսին բառը որ կը թարգմանուի՝ «միջամտութիւն վասն արդարութեան» իմաստով: Տուեալ բառը կը պարզէ որ Աստուած պիտի պատասխանէ իր ընտրեալներուն աղօթքին ու աղաղակին եւ պիտի միջամտէ ի նպաստ իրենց:

3.- Քիչ ետք կը խօսինք նոր թարգմանութեան մէջ տեղ գտած «իրեն կը դիմեն» բառերուն մասին, բայց հիմա երկու խօսք ըսենք բնագիրին մէջ արձանագրուած «իրեն կ'աղաղակեն» բառերուն վերաբերեալ: Յունարէն բառերը՝ *βουωτων αυτω* ո՛չ միայն «իրեն կ'աղաղակեն» իմաստը ունի, այլ նաեւ՝ բարձր ձայնով պոռալու իմաստը կ'ընդգրկէ: Ասիկա ուրիշ բան չի յիշեցնէր մեզի եթէ ոչ Քրիստոսի հաւատացեալներուն կողմէ արդարութեան համար բարձրացուած ձայնը, աղաղակը: Արդարութեան համար բարձրացուած այդպիսի շատ զօրաւոր աղաղակ մըն էր, օրինակ, «Աստուծոյ խօսքին իրենց հաւատարմութեան եւ տուած վկայութեան համար» սպաննուած մարդոց հոգիներուն աղաղակը, որ կը պահանջէր Աստուծմէ դատել երկրի բնակիչները եւ իրենց արեան վրէժը լուծել անոնցմէ (Յյտ 6.9-10):

4.- Դառնանք նոր թարգմանութեան: Ինչո՞ւ Յիսուս իր խօսքը հարցումի ձեւով կը դնէ՝ «պիտի չպաշտպանէ՞ զանոնք»: Յիսուս իր խօսքը հարցումի ձեւով կը դնէ՝ վստահութի՛ւն ներշնչելու համար իր աշակերտներուն, թէ՛ այո՛, Աստուած պիտի պաշտպանէ իրեն դիմող մարդիկը: Տուեալ խօսքով Յիսուս կարծէք ըսել կ'ուզէ. «Կասկածէ վեր է որ Աստուած պիտի պաշտպանէ՛ այն մարդիկը որոնք գիշեր ու ցերեկ իրեն կը դիմեն: Այդ մասին հարցում հարցնելը՝ բոլորովին անելորդ է:

Աստուծոյ շնորհելիք պաշտպանութիւնը պէտք չէ հարցականի տակ առնել: Ատիկա անխուսափելի իրականութիւն է»:

5.- Ի՞նչ կը նշանակէ գիշեր ու ցերեկ Աստուծոյ դիմել: Աստուծոյ դիմել, կը նշանակէ՝ մեր դատը Աստուծոյ յանձնել, Աստուծոյ վստահիլ: Այստեղ, հետեւաբար, Յիսուս աստուածային պաշտպանութիւն կը խոստանայ հաւատքով Աստուծոյ դիմողներուն ու մօտեցողներուն:

6.- «Գիշեր ու ցերեկ» բացատրութիւնը, յարատեւութի՛ն ցոյց կու տայ, մնայուն ընթացք ցոյց կու տայ: Ըսել կ'ուզեմ, թէ ան որ Աստուծոյ զաւակն է, մի՛շտ պէտք է Աստուծոյ հետ ըլլայ եւ ո՛չ թէ երբեմն, մի՛շտ պէտք է խօսի Աստուծոյ հետ եւ ո՛չ թէ պարագայաբար, մի՛շտ պէտք է իրեն դիմէ եւ ո՛չ թէ երբ որ ուզէ միայն, մի՛շտ պէտք է իրեն վստահի եւ ո՛չ թէ որոշ պարագաներու պարգապէս:

Պէտք է դիմել Աստուծոյ երբ «գիշեր» է եւ պէտք է դիմել երբ «ցերեկ» է: Այլ խօսքով, երբ «գիշեր»ը, այսինքն՝ փորձութիւնները պատեն մեր կեանքը՝ պէտք է վստահութեամբ մօտենանք Աստուծոյ, եւ երբ «ցերեկ»ը, այսինքն՝ ուրախութիւնները լեցնեն մեր կեանքը, դարձեալ պէտք է գանք Աստուծոյ:

Երբ «գիշեր»ի, այսինքն՝ դժուարութեանց հանդիպինք, միայն այն ատեն չէ որ պէտք է վազենք Աստուծոյ քով, այլ մի՛շտ, ամէ՛ն ատեն, ամէ՛ն պահու, ամէ՛ն առիթով, յատկապէս՝ ուրախութեանց եւ յաջողութեանց պահերուն: Աստուած ուրախութեա՛ն Աստուած, եւ իբր այդպիսին, ան կ'ուզէ որ մեր ուրախութիւնները բաժնենք իրեն հետ: Ո՞վ է այն զաւակը որ միայն իր տխուր պահերը կը բաժնէ իր հօրը կամ մօրը հետ: Մեր ուրախութեան պահերը նաեւ չե՞նք բաժնէր մեր ծնողներուն հետ, մեր սիրելիներուն հետ: Եւ երբ բաժնենք՝ մեր ուրախութիւնը չի՞ կրկնապատկուիր: Եթէ Աստուած մեր երկնաւոր Ծնողն ու սիրելին է, պէտք չէ՞ մեր ուրախութիւնները բաժնենք իրեն հետ: Պէտք չէ՞ աղօթքով շնորհակալութիւն յայտնենք իրեն, խոստովանելով որ մեր ձեռք ձգած յաջողութիւնը եւ յաջողութեան իբրեւ հետեւանք՝ ուրախութիւնը, իր պարգեւն է մեզի: Ապերախտութիւն չ'ըլլար յաջողութիւն մը ձեռք ձգել եւ սակայն շնորհակալ չըլլալ Յաջողցնողին, յաջողութիւն Պարգեւողին:

7.- «Գիշեր ու ցերեկ»: Այս երկու բառերուն մէջ կրնանք նաեւ տեսնել համբերութեան գաղափարը: Համբերութիւն թէ՛ Աստուծոյ կողմէ եւ թէ՛ հաւատացեալներուն կողմէ: Աստուած «գիշեր ցերեկ» կը համբերէ չար մարդոց եւ անոնց չարութիւններուն: Հաւատացեալներն ալ «գիշեր ցերեկ» կը համբերեն իրենց դէմ գործուած չարիքներուն:

«Այո՛, կ'ըսեմ ձեզի՛ որ անոնց իրաւունքը անմիջապէս պիտի պաշտպանէ"» (Ղկ 18.8): Քանի մը հաստատումներ.--

1.- «Այո՛, կ'ըսեմ ձեզի»: Երկու հակիմ նշումներ.-

ա.- Այս բառերը՝ բացարձակ վստահութիւն ներշնչելու կերպ մըն են: Տուեալ բառերով, Յիսուս կարծէ՛ք կ'ըսէ. «Այո՛, վստա՛հ եղէ՛ք որ Աստուած պիտի պաշտպանէ, տէ՛ր պիտի կանգնի իր գաւակներու դատին»:

բ.- «Կ'ըսեմ ձեզի»: Ո՞վ է ըսողը: Յիսուս ինք: Երբ Յիսուս կ'ըսէ՝ «կ'ըսեմ», ասիկա հրաւէր մըն է մեզի՝ վստահելու իր խօսքին, որ խորքին մէջ խօսք մը չէ, այլ՝ խոստում մը: Ի՞նչ խոստում: Խոստում՝ թէ պիտի պաշտպանէ իր հետեւորդները:

2.- «Անոնց իրաւունքը»: Ի՞նչն է հաւատացեալին իրաւունքը գոր Աստուած պիտի պաշտպանէ, եւ պիտի տայ իրեն: Առաջին հերթին, անոր իրաւունքը՝ արդարութիւնն է: Երբ Աստուած արդար դատաստան ընէ՝ հաւատացեալին իրաւունքն է որ պաշտպանած կ'ըլլայ: Երկրորդ, հաւատացեալին իրաւունքը՝ փրկութիւնն է: Ճշմարիտ հաւատացեալ մարդը կը չարչարուի իր անձի փրկութեան համար, եւ ատոր փոխարէն Աստուած անոր արդար իրաւունքը կը սեպէ փրկութիւնը: Երրորդ, հաւատացեալին իրաւունքը՝ հանգիստն է: Հաւատքի մարդը ի տես մարդոց անօրէն կեանքին, իր հոգին անհանգիստ կ'ըլլայ: Աստուած անոր փոխարէն յաւիտենական հանգիստ պիտի պարգեւէ իրեն, երբ վերջ դնէ մեղքին:

3.- «Անմիջապէս»: Երեք հակիրճ նշումներ.-

ա.- Եթէ նկատի առնենք որ առակը կ'աւարտի Քրիստոսի երկրորդ գալուստին ակնարկութեամբ, պարզ կը դառնայ որ «անմիջապէս» բացատրութիւնը, Տիրոջ երկրորդ գալստեան թէ՛ մօտալուտ ըլլալուն եւ թէ՛ անխուսափելի ըլլալուն իրողութիւնն է որ կը բացայայտէ:

բ.- Յունարէնը «անմիջապէս» բառին համար ունի՝ *ταχρει* բառը որ բառացիօրէն կը նշանակէ՝ «արագ, արագօրէն»: Ասիկա մեզի պէտք է յիշեցնէ Աստուծոյ անյապաղ միջամտութիւնը ի խնդիր իր հետեւորդներու իրաւունքին եւ ի խնդիր արդարութեան: Այդ միջամտութիւնը միայն Տիրոջ երկրորդ գալստեան ժամանակ չէ որ տեղի պիտի ունենայ: Աստուած տէրն ու դատաւորն է թէ՛ անցեալին, թէ՛ ներկային եւ թէ՛ գալիքին: Ո՞ր հաւատացեալը դժուարին մէկ պահուն կամ անել մէկ կացութեան դիմաց չէ վայելած Աստուծոյ շուտափոյթ միջամտութիւնը:

գ.- Յոյս ներշնչող բառ մըն է «անմիջապէս» բառը: Այո՛, «անմիջապէս» բառին գործածութեամբ, Յիսուս կ'ուզէ նաեւ մեզ ակնկալութեամբ եւ յոյսով լեցնել: Ակնկալութեամբ՝ թէ՛ ներկայ ժամանակին համար եւ թէ՛ ապագայ ժամանակին համար: Այլ խօսքով,

Յիսուս կ'ուզէ որ ակնկալենք թէ Աստուած շուտով պիտի միջամտէ երբ իր կարիքը ունենանք, եւ կ'ուզէ որ բնաւ մտքէ չհանենք, որ ապագային նաեւ՝ ժամանակներու աւարտին, իր վերջնական միջամտութիւնը պիտի կատարէ:

4.- «Պիտի պաշտպանէ»: Քանի մը մատնանշումներ.-

ա.- Չմոռնանք որ Յիսուս անիրաւ դատաւորի մը մասին կը խօսի, ցոյց տալու համար մեզի որ մեր երկնաւոր Հայրը իբրեւ դատաւոր՝ նիշդ հակառակ պատկերն է: Հայր մը՝ որ մեր պաշտպան դատաւորն է: «Պիտի պաշտպանէ» բառերով, Յիսուս կ'ուզէ սորվեցնել մեզի որ Աստուած միայն երկնաւոր դատաւոր մը չէ, այլ նաեւ երկրաւոր դատաւոր մը, եւ իբր այդպիսին, ան կրնայ միջամտել ու կը միջամտէ, մեր առօրեայ կեանքի ընթացքին, միշտ ի նպաստ մեզի:

բ.- Աստուած իբրեւ դատաւոր, ոչ միայն արդար դատաւոր է, այլ նաեւ արդարութիւնը սիրող ու գործող դատաւոր մը: Աքրահամ կ'ըսէ. «Միթէ բոլոր երկրի Դատաւորը արդարութիւն պիտի չընէ» (Ծն 18.25): Տուեալ բառերը բացորոշապէս ցոյց կու տան որ Աստուած Տէրն ու դատաւորն է ինչպէս երկինքին, այնպէս ալ երկրին: Այս առակին պատումով, հետեւաբար, Յիսուս կ'ուսուցանէ մեզի այն՝ որ Աստուած միայն երկնաբնակ Աստուածը չէ, այլեւ՝ երկրաբնակ: Ան կը տեսնէ կատարուած անիրաւութիւնները, կը ցանցնայ անիրաւները, եւ կը խոստանայ շուտով պաշտպանել իր զաւակներուն դատն ու իրաւունքը:

գ.- «Պիտի պաշտպանէ»: Աստուած անպաշտպան չի թողուր իր զաւակները երբ անոնք կարիքը ունին իր պաշտպանութեան: Աստուած կը պաշտպանէ զանոնք եւ անոնց իրաւունքը, որովհետեւ անոնց դէմ կատարուած անիրաւութիւնը իր իսկ դէմ կատարուած անիրաւութիւն կը սեպէ: Սաղմոսագիրը կ'ըսէ. «Ելի՛ր, ո՛վ Աստուած, բու դատող պաշտպանէ. յիշէ այն նախատիւնքը՝ որ անգգամը ամէն օր քեզի կ'ընէ» (Սղ 74.22): Աստուծոյ զաւակներուն դատը Աստուծոյ իսկ դատն է: Երբ Աստուած իր դատի պաշտպանութեան համար ոտքի կանգնի՝ յաղթական դուրս պիտի գայ (Հո 3.4):

դ.- «Պիտի պաշտպանէ»: Այո՛, պիտի պաշտպանէ, բայց որպէ՛սզի պաշտպանէ, պէտք է խնդրե՛նք իր պաշտպանութիւնը, ապաւինի՛նք իր պաշտպանութեան: Աստուած կը սպասէ որ աղօթքով զինք մեր պաշտպանը դարձնենք, զինք մեզի պատերազմակից դարձնենք, որպէսզի կարենանք դէմ դնել Չարին յարձակումներուն, ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Ձեր վրայ առէք Աստուծոյ սպառազինութիւնը, որպէսզի կարենաք Սատանային հնարքներուն դէմ դնել: Որովհետեւ մեր պատերազմը մարդոց հետ չէ, այլ՝ երկինքի տակ գտնուող չար

ոգիներուն իշխանութիւններուն եւ պետութիւններուն, այս խաւար աշխարհի տիրակալներուն դէմ» (Եփ 6.11-12):

Ե.- Ամբողջ Աստուածաշունչ մատեանը վկայութիւն մըն է որ Աստուած՝ պաշտպանո՞ղ Աստուած է: Երեմիա մարգարէն կը յայտարարէ, որ խոռվութեան ենթարկուած մարդոց դատին պաշտպանն ու ջատագովը Աստուած ինք պիտի ըլլայ (Եր 50.34): Աստուած յուսախար պիտի չընէ իր պաշտպանութեան ապաւինողները եւ ո՛չ ալ յաւիտեանական համբերութիւն պիտի ցուցաբերէ իր գաւակները չարչարող մարդոց նկատմամբ:

Իսկութեան մէջ, տուեալ առակին պատումով, Քրիստոս կ'ուզէ մեր ուշադրութեան յանձնել այն՝ որ Աստուած իր գաւակներուն դատը պաշտպանո՞ղ Աստուած է: Ան պաշտպանեց Ղովտը իր տան վրայ յարձակող Սողոմոնացիներուն դէմ (Մն 19.1-11): Ան պաշտպանեց Յակոբը Լաբանին դէմ (Մն 31.24, 42): Պաշտպանեց Մովսէսը Ահարոնին եւ Մարիամին դէմ (Թւ 12.1-10): Պաշտպանեց Մուրթէն Համանին դէմ (Եսթ 7.10): Պաշտպանեց Դաւիթը Գողիաթին դէմ (Ա.Թգ 17.40-54), Սաուղին դէմ (Ա.Թգ 24.1-16) եւ Աբիսողոմին դէմ (Բ.Թգ 15-18): Պաշտպանեց Սեդրաֆը, Միսաֆն ու Աբեղնագովը բամբասող Քաղդէացիներուն դէմ (Դն 3.8-30): Պաշտպանեց Դանիէլը Նաբուգոդոնոսորի կուսակալներուն եւ հրամանատարներուն դէմ (Դն 6.1-24): Պաշտպանեց Եղիա մարգարէն բահաղի սուտ մարգարէներուն դէմ (Գ.Թգ 18.1-39): Պաշտպանեց Յեսուն Գայիին դէմ (Յես 8), Քետացիներուն դէմ (Յես 9), Ամօրհացիներուն դէմ (Յես 10), Յաբինին եւ իր դաշնակիցներուն դէմ (Յես 11): Պաշտպանեց Սալպաադի աղջիկներուն իրաւունքը (Թւ 27.1-7): Յիսուս պաշտպանեց պոռնիկ կին մը Փարիսեցի Սիմոնին դէմ (Ղկ 7.36-50): Պաշտպանեց շնացող կին մը զայն քարկոծել ուզողներուն դէմ (Յհ 8.1-11): Պաշտպանեց իր աշակերտները ծովու կատղած ալիքներուն դէմ (Ղկ 8.22-25), զինք ձերբակալելու եկած գունդ մը զինուորներու դէմ (Յհ 18.8-9): «Պաշտպանեց» Մարիամը իր քրոջը՝ Մարթային «դէմ» (Ղկ 10.38-42): Եւ այլն:

«Բայց Մարդու Որդին երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ» (Ղկ 18.8): Քանի մը հաստատումներ.-

1.- «Բայց Մարդու Որդին երբ գայ»: Ինչո՞ւ համար Յիսուս ամէն անգամ որ խօսի իր երկրորդ գալուստին մասին, կը հաստատէ թէ ինք պիտի յայտնուի իբրեւ՝ «Մարդու Որդի»: Ինչո՞ւ օրինակ չ'ըսեր թէ պիտի յայտնուի իբրեւ՝ «Աստուծոյ Որդի»: Քանի մը պատճառներով.-

ա.– Նախ ցոյց տալու եւ յիշեցնելու համար որ իր գալուստը երեւելի ձեւով պիտի ըլլայ: Ան իբրեւ ՄԱ՛ՐԴ պիտի յայտնուի, եւ ամէն մարդ պիտի տեսնէ գայն (Գրծ 1.11):

բ.– Իբրեւ «Մարդու Որդի» պիտի յայտնուի, որպէսզի ամէն մարդ գիտնայ որ ան մարդեղացած Աստուածն էր, որ մարդեղացած էր իրենց փրկութեան համար:

գ.– «Մարդու Որդի» բացատրութիւնը ցոյց կու տայ թէ Յիսուս պիտի յայտնուի ո՛չ միայն իբրեւ մարդ, այլեւ՝ մարդո՛ց համար, մարդոց փրկութեա՛ն համար, իրեն հաւատարիմ եղող մարդոց յաւիտեանական սիրոյ թագաւորութիւն մը շնորհելու՛ համար:

2.– «Արդեօք հաւատք պիտի գտնե՞ք երկրի վրայ»: Քանի մը նշումներ.–

ա.– Տուեալ խօսքը բառացիօրէն պէտք չէ հասկնալ: Քրիստոս վստահաբար հաւատք պիտի գտնէ երկրի վրայ երբ վերադառնայ, բայց հաւանաբար կատարեալ հաւա՛տք չգտնէ: Օգոստինոս կը հաստատէ թէ Յիսուս տուեալ բառերով կատարեալ հաւատքի մասին է որ կը խօսի, որ շատ քիչ պիտի ըլլայ երկրի վրայ իր գալստեան ժամանակ:

բ.– Տիրոջ այս խօսքը բացորոշ կը դարձնէ որ շատեր այլ եւ այլ պատճառներով պիտի թերանան իրենց հաւատքին մէջ: Ո՛րքան անիրաւութիւններն ու նեղութիւնները շատնան, յատկապէս երբ ժամանակները սկսին իրենց վախճանին մօտեանալ, ա՛յնքան աւելի հաւանականութիւն կայ որ հաւատացեալներ նահանջեն իրենց հաւատքին մէջ:

գ.– Հոս յիշուած «հաւատք» կրնայ նաեւ ակնարկութիւն ըլլալ ա՛յն հաւատքին գորս հաւատացեալներ պէտք է յայտնաբերեն յարատեւ աղօթքի գորութեան նկատմամբ: Չմոռնանք որ Յիսուս այս առակը պատմեց «ցոյց տալու համար թէ պէտք է միշտ աղօթել՝ առանց վիատելու» (Ղկ 18.1): Քրիստոս արդեօք յարատեւ աղօթքի նկատմամբ հաւատք պիտի գտնե՞ք երբ վերադառնայ աշխարհ, այլ խօսքով՝ յարատեւօրէն եւ առանց վիատելու աղօթողներ պիտի գտնե՞ք:

դ.– Ուշագրաւ է որ Յիսուս չ՛ըսեր՝ «կատարեալ մարդ պիտի գտնե՞ք երկրի վրայ», կամ «անմեղ մարդ պիտի գտնե՞ք երկրի վրայ», այլ կ՛ըսէ՝ «հաւատք պիտի գտնե՞ք երկրի վրայ»: Քրիստոս երբ վերադառնայ աշխարհ, կատարեալ մարդ կամ անմեղ մարդ պիտի չփնտռէ, այլ՝ հաւատք: Աստուծոյ սպասածը մեզմէ, հաւատքը մեր ներսիդին միշտ արծարծ պահելն է: Հաւատք՝ իր խօսքին հանդէպ, իր սիրոյն հանդէպ, իր ներումին հանդէպ:

Ե.- «Հաւատք պիտի գտնէ՞» հարցումը ցոյց կու տայ որ այն՝ պիտի գտնէ՛, բայց քիչ պիտի գտնէ: Որքան ժամանակները իրենց աւարտին մօտեան, Յիսուսի Աւետարանը աւելի՛ ու աւելի՛ պիտի տարածուի, բայց զարմանալիօրէն, Յիսուսի մշմարիտ ու անկեղծ հետեւորդներուն թիւը աւելի՛ ու աւելի՛ պիտի պակսի: Այն՝ սիրելիներ, զգո՛յշ ըլլանք, արթո՛ւն ըլլանք, որովհետեւ որքան մօտեան Տիրոջ գալստեան օրերը, կեղծ հաւատացեալներուն ու անհաւատներուն թիւը աւելի՛ պիտի ըլլայ քան անկեղծ հաւատացեալներուն թիւը:

Կարելոր է նկատի առնել որ «հաւատք պիտի գտնէ՞» հարցումը կը վերաբերի թէ՛ կեղծ հաւատք ունեցողներուն եւ թէ՛ բնաւ հաւատք չունեցողներուն: Այլ խօսքով, Տիրոջ գալստեան ժամանակ, թէ՛ կեղծ հաւատացեալներուն թիւը անած պիտի ըլլայ եւ թէ՛ բնաւ հաւատք չունեցողներուն թիւը:

Կեղծ հաւատացեալները աւելի՛ վտանգաւոր են քան բոլորովին անհաւատ մարդիկը: Պօղոս առաքեալ խօսելով վերջին ժամանակներու մասին եւ ակնարկելով կեղծ հաւատացեալներու նկարագիրին՝ կ'ըսէ. «Սա՛ եւս գիտցիր, թէ վերջին օրերուն դժուար ժամանակներ պիտի գան, որովհետեւ մարդիկ պիտի դառնան անձնասէր, դրամապաշտ, ամբարտաւան, հպարտ, հայեոյիչ, ծնողներուն անհնազանդ, ապերախտ, սրբութիւնները ոտնակոխող, տմարդի, անգութ, չարախօս, անհանդուրժող, դաժան, բարիին թշնամի, մատնիչ, անպատկառ, գոռոզ, եւ աւելի հեշտանք սիրող՝ քան զԱստուած: Երեւութապէս աստուածապաշտ են անոնք, բայց խորքին մէջ չեն հաւատար աստուածապաշտութեան զօրութեան» (Բ.Տմ 3.1-5): Վերջին համարը յստակօրէն ցոյց կու տայ որ առաքեալը կեղծ հաւատացեալներուն համար է որ կը գործածէ յիշեալ բոլոր բնորոշումները:

Գ.- «Հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ»: Տուեալ բառերով նաեւ Յիսուս անուղղակիօրէն կ'ուզէ յիշեցնել իր հետեւորդներուն, թէ մարդկութիւնը դէպի աստիճանական չարացում է որ կ'երթայ: Ժամանակներուն հասունացումը՝ մարդիկը բարութեան ու խաղաղութեան չ'առաջնորդեր:

3.- Յիսուս կը խօսի իր գալուստին եւ մարդոց անհաւատ ըլլալուն մասին: Ուշագրաւ է որ մարդոց անհաւատութիւնը պատճառ չի դառնար որ Տէրը չ'այտնուի: Սա ցոյց կու տայ թէ մարդոց չարութիւնն ու անհաւատութիւնը երբեք չեն կրնար խափանել կամ փոխել Աստուծոյ ծրագիրը:

4.- «Երկրի վրայ»: Հետաքրքրական է որ այստեղ Յիսուս իր երկրորդ գալուստին մասին խօսած ատեն, դէպի «երկիր» գալու մասին

է որ կը խօսի: Արդ, ինչո՞ւ «երկրի վրայ» բառերը կը գործածէ: Արդե՞օք «երկիր» ըսելով կ'ուզէ մեզի բան մը յիշեցնել: Յիսուսի դառնալը դէպի երկիր կամ դէպի աշխարհ, խորքին մէջ մատնանշում մըն է Աստուծոյ վախճանաբանական ծրագրին: Իսկ ի՞նչ է Աստուծոյ վախճանաբանական ծրագիրը: Աստուծոյ ծրագիրը՝ իր թագաւորութիւնը երկրի վրայ հաստատելն է, որպէսզի իր կամքը կատարուի «ինչպէս որ երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ» (Մտ 6.10):

Տարբեր առիթներով մանրամասնօրէն բացատրած ենք թէ ինչպէս Աստուծոյ թագաւորութիւնը պիտի ընդգրկէ երկինք ու երկիր: Այստեղ պարզապէս հպանցիկ կերպով կ'ուզեմ յիշեցնել անոնց որոնք կը կարծեն որ աշխարհ ամբողջութեամբ եւ առ յաւեո պիտի փնացուի երբ Տէրը յայտնուի, թէ՛

«երկինքը ստեղծող Տէրը,
այն Աստուածը որ երկիրը կազմեց,
զանիկա շինեց եւ հաստատեց,
զանիկա պարապ տեղ չստեղծեց,
հապա բնակութեան համար կազմեց» (Ես 45.18):

Այս բառերը յստակօրէն եւ անառարկելիօրէն ցոյց կու տան թէ Աստուծոյ վերջնական ու վախճանական նպատակն է որ հաւատացեալ մարդիկ դառնան ժառանգորդները թէ՛ երկինքի եւ թէ՛ երկրի: Եթէ Աստուծոյ թագաւորութիւնը միայն երկինքը պիտի ընդգրկէ, եւ եթէ հաւատացեալները միայն երկինքը պիտի ժառանգեն, այդ պարագային, ինչո՞ւ Աստուածաշունչը կը խօսի «նոր երկինքի մը եւ նոր երկրի մը» ստեղծագործութեան մասին (Բ.Պտ 3.10, 13: Ես 65.17):

Կ'աւարտեմ քանի մը հոգեւոր ամփոփ խորհրդածութիւններով. --

1.-- Այս առակին ընդմէջէն, Յիսուս կոչ կ'ուղղէ մեզի կառչելու աղօթական կեանքին: Աղօթքը պատիւ ու փառք է մեզի՝ համար եւ ո՛չ թէ Աստուծոյ համար: Այլ խօսքով, երբ կ'աղօթենք՝ մե՛նք է որ կը պատուրուինք եւ ո՛չ թէ Աստուած, մե՛նք է որ կ'օգտուինք եւ ո՛չ թէ Աստուած, մե՛նք է որ կը զօրանանք եւ ո՛չ թէ Աստուած, մե՛նք է որ կը սրբուինք եւ ո՛չ թէ Աստուած:

Եթէ երկրի վրայ բարձր դիրք ունեցող մարդ մը, արտօնէ մեզի կատարեալ ազատութեամբ խօսելու իրեն հետ, ատիկա մեզի համար պատիւ չե՞նք սեպեր եւ մեծ ուրախութեան առիթ չե՞նք նկատեր: Անշո՛ւշտ: Ահա նոյնպէս ալ, երբ Աստուած կ'արտօնէ որ աղօթքի

միջոցաւ հետը խօսինք՝ ատիկա մեզի համար մեծ պատիւ է (գաղափարը առնուած Մեծն Կիւրեղէն):

2.- Այրի կինը մէկը չունէր որուն դիմէր կամ որուն միջնորդութիւնը խնդրէր. դրամ ալ չունէր որպէսզի կարենար իր սեփական ուժով իր դատը պաշտպանել: Բայց ասոնցմէ աւելի՛ կարելորդ քաներ ունէր: Ունէր աննկուն կամք եւ յարատեւող ոգի, ունէր հաւատք հանդէպ իր դատին: Հաւատացեալ մարդը տակաւին ասոնցմէ ա՛լ աւելին ունի: Հաւատացեալը Քրիստո՛սը ունի իբրեւ միջնորդ ու պաշտպան, իբրեւ ջատագով ու փաստաբան: Հաւատացեալը իր կողմին ունի երկինքի անհամար հրեշտակները իբրեւ պատերազմակից: Ան իբրեւ աղօթակից ու բարեխօս ունի սուրբերն ու արդարները, անոնք ըլլան երկինքի մէջ թէ երկրի վրայ:

3.- Եթէ երբեք այրի կինը որ դէմ յանդիման կանգնած էր անգութ դատաւորի մը, կրցաւ իր իրաւունքը առնել, որքա՛ն աւելի մեմք, որ կանգնած ենք մեր գթառատ երկնաւոր Հօր դիմաց, պիտի կարենանք ձեռք ձգել մեր խնդրածը, եթէ թախանձագին եւ իր կամքին համաձայն աղօթենք:

4.- Եթէ դատաւորը անիրաւ ըլլալով մտածեց իրաւունք տալ այրի կնոջ, Աստուած ինք որ իրաւունքը սիրող Աստուած է, իրաւունք պիտի չտա՞յ մեզի երբ աղօթքով դիմենք իրեն:

5.- Այրի կինը որոշ ժամերու միայն կրնար դիմել դատաւորին, իսկ մենք՝ «գիշեր ու ցերեկ»: Տուեալ երկու բառերը հրաւեր մըն են մեզի մնայուն յարաբերութեան մէջ ըլլալու Աստուծոյ հետ:

6.- Այրի կինը կրնար իր յարատեւ հետապնդումներուն համար բարկացնել դատաւորը, իսկ մենք՝ այդպէս ընելով, աւելի՛ կ'ուրախացնենք զԱստուած: Երբ յարատեւօրէն նոյն հարցին համար կ'աղօթենք, ատիկա յամառութիւն չէ, այլ՝ վստահութիւն Աստուծոյ խոստումներուն եւ հայրութեան նկատմամբ:

7.- Չմոռնանք որ Աստուած պատուիրած է զրկուածը ազատել հարստահարողին ձեռքէն եւ անիրաւութիւն չընել որբին (Եր 22.3), եւ չմոռնանք որ Աստուած ի՛նքն է հայրն ու դատաւորը որբերուն ու որբեւայրիներուն եւ պաշտպանը անոնց իրաւունքներուն (Սղ 68.5): Չմոռնանք կ'ըսեմ, որպէսզի չըլլայ թէ օր մը իրաւագարկենք անձ մը, մենք՝ որ կոչուած ենք տէր կենալու իրաւագրկուածներուն, եւ աղօթող ըլլալու անոնց համար:

8.- Աղօթող ըլլանք որ երկրի վրայ հաւատքը բոլորովին չպակսի, որպէսզի երբ Տէրը յայտնուի՝ գոնէ քիչ մը հաւատք գտնէ երկրի վրայ:

ԵՐԿՈՒ ՈՐԴԻՆԵՐՈՒՆ ԱՌԱԿԸ

«Արդ, ի՞նչ է ձեր կարծիքը: Մարդ մը երկու զաւակներ ունէր: Առաջին զաւակին գնաց ու ըսաւ. "Տղա՛ս, այսօր այգի գնա աշխատելու": Անիկա պատասխանեց, ըսելով. "Կ'երթամ, հայրիկ". բայց չգնաց: Ապա հայրը միւս զաւակին գնաց եւ նոյնը ըսաւ: Երկրորդ զաւակը պատասխանեց. "Ձեմ երթար". բայց յետոյ գոջաց ու գնաց: Արդ, այս երկուքէն ո՞ր մէկը իր հօրը կամֆը կատարած եղաւ: "Երկրորդը", պատասխանեցին: Եւ Յիսուս ըսաւ. "Կ'ըսեմ ձեզի, թէ մաքաւորներն ու պոռնիկները պիտի կանխեն ձեզ եւ ձեզմէ առաջ պիտի մտնեն Աստուծոյ արքայութիւնը: Որովհետեւ Յովհաննէս եկաւ եւ ձեզի արդար կեանքի մը նամբան ցոյց տուաւ, բայց դուք չհաւատացիք անոր, մինչ մաքաւորներն ու պոռնիկները հաւատացին: Նոյնիսկ ասիկա տեսնելէ ետք չգոջացիք ու չհաւատացիք իրեն"» (Մտ 21.28-32):

Նախ տեսնեմք թէ ի՞նչ բան պատճառ եղաւ որ Յիսուս տուեալ առակը պատմէր: Այսօր կրօնական հարցի մը վերաբերեալ եթէ մէկը հարցում ունենայ՝ եկեղեցիին իրաւասութեան սահմաններէն ներս կ'իյնայ այդ հարցումին պատասխանելը: Եկեղեցի ըսելով, այս պարագայիս եկեղեցական դասը կը հասկնամ: Ասիկա իրականութիւն էր նաեւ Քրիստոսի ժամանակ: Եբրայական ընկերութեան մէջ, Աստուծոյ եւ հրեաներուն վերաբերեալ անոր ծրագիրին մասին հարցուած ոեւէ հարցում կը պատասխանուէր եւ պէտք էր պատասխանուէր Օրէնքի ուսուցիչներուն, ֆահանաներուն, ռաբբիներուն, եւ կրօնական իշխանաւորներուն կողմէ միայն:

Քրիստոս ո՛չ ֆահանայ էր եւ ո՛չ ալ ֆահանաներու ձեռքին տակ դաստիարակուած մէկը: Ան ո՛չ Օրէնքի ուսուցիչներուն աշակերտ եղած էր եւ ո՛չ ալ կրօնական իշխանաւորներուն կողմէ Օրէնքի ուսուցիչ նշանակուած: Այլ խօսքով, ան Սինեոթիոնի, այսինքն՝ հրեաներու բարձրագոյն ատեանին կողմէ, իշխանութիւն եւ իրաւունք չէր ստացած ֆարոգելու, ուսուցանելու, հրաշագործելու եւ կրօնական հարցերու վերաբերեալ հաստատումներ կատարելու: Քրիստոս սակայն այս բոլորը կ'ընէր: Քահանաներն ու ժողովուրդին երէցները մօտեցան իրեն եւ հարց տուին թէ ի՞նչ իշխանութեամբ կը կատարէր այդ բոլորը: Քրիստոս խոստացաւ իրենց հարցումին պատասխանել եթէ երբեք իրենք ալ իրեն ըսէին, թէ՛ «Յովհաննէսի մկրտելու իշխանութիւնը ուրկէ՞ էր. Աստուծմէ՞ տրուած էր իրեն, թէ մարդոցմէ»: Անոնք միասնաբար

խորհրդակցել է ետք որոշեցին չպատասխանել Յիսուսի հարցումին, եւ Յիսուս ինքն ալ մերժեց պատասխանել իրենց հարցումին (Մտ 21.23–27):

Առիթէն օգտուելով Յիսուս պատմեց երկու որդիներուն առակը, եւ ցոյց տուաւ որ ֆահանաները, Փարիսեցիները, Օրէնքի ուսուցիչներն ու ժողովուրդին երէցները կը նոյնանան ա՛յն որդիին հետ՝ որ խոստացաւ երթալ այգի եւ աշխատիլ բայց չգնաց, իսկ մաքաւորներն ու պոռնիկները կը նոյնանան ա՛յն որդիին հետ՝ որ մերժեց այգի երթալ եւ աշխատիլ, «բայց յետոյ զոչաց ու գնաց»:

Մաքաւորներն ու պոռնիկները որոնք չէին հետեւեր Աստուծոյ խօսքին եւ չէին ուզեր հնազանդիլ իր կամքին եւ մաս կազմել իր այգիին մէջ աշխատող մարդոց բանակին, երբ լսեցին Յովհաննէս Մկրտիչի ֆարոգութիւնը՝ զոչացին եւ հաւատացին (Մտ 21.32): Իսկ ֆահանաները, Փարիսեցիները, Օրէնքի ուսուցիչներն ու ժողովուրդին երէցները, ո՛չ միայն չհաւատացին Յովհաննէսի ֆարոգութեան, այլեւ մերժողական ու ժխտական կեցուածք որդեգրեցին իր եւ անոնց հանդէպ՝ որոնք հաւատացին իր ֆարոգութեան:

Ամփոփ բացատրութիւն մը նախ

Այգին կը ներկայացնէ Քրիստոսի Եկեղեցին: Ան որ ըսաւ. «Կ'երթամ... բայց չգնաց» կը ներկայացնէ հրեայ ժողովուրդը, իսկ ան որ ըսաւ. «Զեմ երթար, բայց յետոյ զոչաց ու գնաց» կը ներկայացնէ հեթանոս աշխարհը: Յիսուս տուեալ առակով կ'ուզէ ցոյց տալ մեզի թէ հրեաներ կոչուած ու խոստացած էին աշխատիլ Աստուծոյ այգիին մէջ՝ բայց չաշխատեցան, եւ իրենց չաշխատելու որոշումը՝ կամաւոր որոշում էր, իսկ անդին՝ հեթանոսներ, որոնք սկզբնապէս մերժեցին հնազանդիլ Աստուծոյ կամքին ու աշխատիլ անոր այգիին մէջ, բայց յետոյ զոչացին եւ ընդգրկեցին Քրիստոսի հաւատքը ու սկսան աշխատիլ Աստուծոյ այգիին, այլ խօսքով՝ Քրիստոսի Եկեղեցիին մէջ, ի խնդիր Աստուծոյ թագաւորութեան տարածման:

«Արդ, ի՞նչ է ձեր կարծիքը: Մարդ մը երկու զաւակներ ունէր: Առաջին զաւակին գնաց ու ըսաւ. "Տղա՛ս, այսօր այգի գնա աշխատելու": Անիկա պատասխանեց, ըսելով. "Կ'երթամ, հայրիկ". բայց չգնաց» (Մտ 21.28–29): Քանի մը մատնանշումներ.–

1.– «Արդ, ի՞նչ է ձեր կարծիքը»: Երկու նշումներ.–

ա.- Այս բառերը կը պարզեն որ Յիսուս առակը պատմեց աւագ ֆահանաներուն եւ ժողովուրդի երէցներուն ներկայութեան, եւ ուզեց որ իրե՛նք կատարեն եգրակացութիւնը, այլ խօսքով՝ իրե՛նք ճշդն թէ ո՛ր խումբին կը պատկանին: Այն անձի խումբին որ ըսաւ. «"Կ'երթամ, հայրիկ"». բայց չգնաց», թէ անոր՝ որ ըսաւ. «"Ձեմ երթար"». բայց յետոյ զոչաց ու գնաց»:

Յիսուսի այս վերաբերմունքը կարելոր բան մը պէտք է յիշեցնէ մեզի: Ան երբ այս առակը պատմեց, սպասեց եւ ակնկալեց որ աւագ ֆահանաները եւ ժողովուրդի երէցները անկէ ֆաղեն իրենց ուղղուած եւ իրենց յատուկ պատգամ մը: Զե՞ք կարծեք արդեօք որ Յիսուս, այսօր, իր խօսքը կարգացողներէն եւ իր խօսքին ֆարոգութիւնը լսողներէն կը սպասէ եւ կ'ակնկալէ որ ֆաղեն իրենց յատուկ պատգամ մը:

բ.- «Ի՞նչ է ձեր կարծիքը»: Այս հարցումը նաեւ կը պարզէ որ Յիսուս հետաքրքրուած է մեր կարծիքով: Յիշեցէք որ ան հետաքրքրուեցաւ թէ՛ ժողովուրդին կարծիքով եւ թէ՛ աշակերտներուն կարծիքով իր անձին վերաբերեալ (Մտ 16.13-16):

«Ի՞նչ է ձեր կարծիքը»: Հարցումը ցոյց կու տայ թէ Յիսուս կ'ուզէ որ մենք կարծի՛ք ունենանք, կարծի՛ք արտայայտենք, ըսելի՛ք ունենանք իր խօսքին ու կամքին վերաբերեալ, իր ծրագիրին ու անձին վերաբերեալ, այլ խօսքով՝ կ'ուզէ որ հետը խօսինք, զրուցենք, ժամանակ անցնենք:

Բանա՛ց մեր ականջները եւ լսենք Տիրոջ ձայնը որ կը հարցնէ մեզի.-

«Ի՞նչ է ձեր կարծիքը» իսա՛հն վրայ թափած արիւնիս մասին:

«Ի՞նչ է ձեր կարծիքը» սիրոյս ու համբերութեանս մասին:

«Ի՞նչ է ձեր կարծիքը» ինստումներու կապակցաբար:

«Ի՞նչ է ձեր կարծիքը» շնորհած փրկութեանս վերաբերեալ:

«Ի՞նչ է ձեր կարծիքը» իմ երկրորդ գալուստիս վերաբերեալ:

2.- «Մարդ մը երկու գաւակներ ունէր»: Այս բառերուն վերաբերեալ ֆանի մը նշումներ.-

ա.- «Մարդ մը»: Յովհաննէս Երզնկացի կ'ըսէ թէ հոս յիշուած մարդը կը ներկայացնէ մեր երկնաւոր Հայրը: Ինչո՞ւ Յիսուս այստեղ զԱստուած «մարդ» կը կոչէ փոխանակ կոչելու թագաւոր, կամ իշխան, կամ հայր, կամ այլ բան: Յիսուս զԱստուած «մարդ» կոչելով, կ'ուզէ ցոյց տալ մեզի թէ Աստուած՝ մարդո՛ց Աստուածն է, մարդկային սերունդին մա՛ս կը կազմէ, մարդկային ընտանիքի՛ն կը պատկանի:

Որքա՛ն մարդիկ կան որոնք կը կարծեն թէ Աստուած լոկ երկինքի մէջ բնակող Աստուած է եւ բոլորովին անտեղեակ է մարդոց

տառապանքներէն ու նեղութիւններէն. Յիսուս գԱստուած «մարդ» կոչելով, կու գայ ջրելո՛ւ այս մտածումը, եւ ցոյց տալու որ Աստուած երկինքի մէջ բնակող Աստուած մը չէ, այլ մարդոց մէջ բնակող ու մարդոց Աստուա՛ծը եղող Աստուածն է:

բ.– «Երկու գաւակներ ունէր»: «Երկու» բառը կը պարզէ որ Աստուծոյ հայեացքով համայն մարդկութիւնը երկու մասի կը բաժնուի՝ հաւատացեալ եւ անհաւատ: Յիսուս վերջին դատաստանին մասին խօսած ատեն նաեւ ցոյց տուաւ թէ մարդկութիւնը երկու մասի պիտի բաժնուի, ոմանք իր աջ կողմը պիտի կանգնեցունին, եւ ոմանք՝ ձախ կողմը (Մտ 25.32–33):

Թէեւ հաստատեցինք որ խոստացող բայց խոստումը չկատարող գաւակը կը նոյնանայ քահանաներուն, Փարիսեցիներուն, Օրէնքի ուսուցիչներուն եւ ժողովուրդի երէցներուն հետ, իսկ խոստացող եւ խոստումը կատարող գաւակը՝ մաքաւորներուն եւ պոռնիկներուն հետ, բայց մեր կարկինը քիչ մը աւելի լայն կը բանանք, ըսելու համար որ երկու որդիները կը ներկայացնեն ամբողջ մարդկութիւնը՝ բաժնուած երկու մասի. մէկ մասը՝ հնազանդ, իսկ միւս մասը՝ անհնազանդ:

գ.– Այս բառերը մեզի կը խօսին Աստուծոյ հայրութեան, այլ խօսքով՝ հա՛յր ըլլալու իրողութեան մասին: Ճիշդ է որ Յիսուս չ'ըսեր՝ «Հայր մը երկու գաւակ ունէր», այլ կ'ըսէ. «Մարդ մը երկու գաւակներ ունէր», բայց «գաւակ» բացատրութիւնը ինքնին Աստուծոյ հայրութիւնն է որ կը յուշէ:

դ.– «Երկու գաւակ»: Յովհաննէս Երզնկացի կ'ըսէ թէ երկու գաւակները կը ներկայացնեն հրեայ եւ հեթանոս ժողովուրդները: Յիսուս «գաւակ» կը կոչէ թէ՛ այգի գացող աշխատողը եւ թէ՛ այգի չգացողը: Ինչո՞ւ: Որովհետեւ ան կ'ուզէր իր օրուան եւ մեր այսօրուան քահանաներուն, «Փարիսեցիներուն, Օրէնքի ուսուցիչներուն եւ երէցներուն» սորվեցնել որ աշխարհի բոլոր մարդիկը հաւասարապէս մէկ եւ նո՛յն Հօր գաւակներն են: Աստուծոյ համար բոլոր մարդիկը հաւասար են. անոնք ըլլան հրեայ թէ հեթանոս, քրիստոնեայ թէ ոչ քրիստոնեայ, աշխարհական թէ եկեղեցական, օրէնսգէտ թէ օրէնքը չնանչցող, ուսուցիչ թէ աշակերտ, հարուստ թէ աղքատ, բարձր դիրքերու վրայ գտնուող թէ աննշան, ուսեալ թէ անուս:

Յ.– «Առաջին գաւակին գնաց ու ըսաւ...»: Երկու նշումներ.–

ա.– Առաջին գաւակը որուն հետ կը խօսի հայրը՝ կը ներկայացնէ հրեաները, որոնց Աստուած պատուիրեց որ աշխատին իր այգիին մէջ, անոնք խոստացան աշխատիլ բայց չաշխատեցան:

բ.– «Առաջին գաւակին գնաց»: Նախ ըսեմ որ Յունարէն բնագիրին մէջ «գնաց» բառին փոխարէն ունինք՝ «մօտեցաւ» բառը: Յովհաննէս Երզնկացի կը հաստատէ թէ «մօտեցաւ» բառը Աստուծոյ մարդասիրութիւնն է որ ցոյց կու տայ: Կրնանք նաեւ «մօտեցաւ» բացատրութեան մէջ տեսնել Աստուծոյ մօտիկութիւնը կամ մօտենալ ուզելը մարդկային սերունդին: Երկու բառերն ալ նոյն իմաստը եւ նոյն նպատակը կը հետապնդեն: Որ բառն ալ առնենք՝ «գնաց» թէ «մօտեցաւ», երկու բառերն ալ կը պարզեն որ Աստուած ի՛նքն է որ «կ'երթայ» կամ «կը մօտենայ» մարդուն, ի՛նքն է որ կը փնտռէ մարդը, ի՛նքն է որ աշխատելու կը հրաւիրէ մարդը: Այո՛, Աստուած ի՛նքն է որ կու գայ մարդուն: Եթէ Աստուած չգայ մարդուն՝ մարդը չի կրնար գալ Աստուծոյ: Եթէ Աստուած մարդը չառաջնորդէ դէպի իրեն՝ մարդը չի կրնար հասնիլ Աստուծոյ: Յիսուս ի՛նքն ըսաւ. «Ոեւէ մէկը չի կրնար ինծի գալ՝ եթէ զիս դրկող Հայրը գայն ինծի չբերէ» (Յհ 6.44):

4.– «Տղա՛ս, այսօր այգի գնա աշխատելու»: Ամփոփ նշումներ.–

ա.– «Տղա՛ս»: Երբ խօսեցանք անառակ որդիին դրուագին մասին, Ղկ 15.31-ին մէջ հանդիպեցանք այս բառին, եւ հոն բացատրեցինք, թէ «տղաս» բառին համար գործածուած է Յունարէն ΤΕΚΝΟΝ (դեքնօն) բառը, որ կը նշանակէ՝ ով իմ ծնունդս, ինձմէ ծնած, էութենէս ծնած: Այս բացատրութիւնը ուրիշ բան ցոյց չի տար եթէ ոչ այն՝ որ մենք մեր ծագումը ունինք Աստուծոյ մէջ, այլ խօսքով՝ Աստուծմէ՛ եկած ենք, Աստուծմով՛ սկզբնաւորուած ենք, Աստուծմով գոյաւորուած ենք:

բ.– «Տղա՛ս» բառը կը պարզէ այն՝ որ Աստուած չ'ո՛ւրանար եւ չի՛ մերժեր մեզ իբրեւ իր գաւակները, իբրեւ իր ձեռքին գործը, հակառակ մեր անհնազանդութեան, անհաւատարմութեան, եւ հակառակ մեր բոլոր մեղքերուն ու օրինազանցութիւններուն:

գ.– «Տղա՛ս» բառին գործածութեամբ Յիսուս կոչ մըն է որ կ'ուղղէ հրեաներուն եւ անոնց ընդմէջէն մեզի՝ դառնալու մեր իսկական բնութեան, մեր նշմարիտ էութեան, մեր ինքնութեան, մեր արմատներուն ու աղբիւրին՝ որ Աստուած ինքն է:

դ.– Վերջապէս, «տղա՛ս» բառին մէջ մենք կը գտնենք Աստուծոյ սրտին սէրը, Աստուծոյ ամբողջ փաղցրութիւնը, Աստուծոյ ջերմ կապուածութիւնը մարդկութեան, Աստուծոյ կարեկցութիւնը մարդոց: «Տղա՛ս» բառին մէջ մենք կը գտնենք Աստուծոյ փափաքը դառնալու մեր հայրը եւ մեզ դարձնելու իր գաւակները, Աստուծոյ փափաքը՝ մեզի հետ միասին մէ՛կ ընտանիք կազմելու:

ե.– «Այսօր այգի գնա աշխատելու»: Ուշագրաւ է «այսօր» բառը: Աստուծոյ կողմէ մեզի տրուած պարտականութիւնը անյետաձգելի պէտք

է ըլլայ: «Այսօր» բառը ցոյց կու տայ որ իւրաքանչիւր օր իրեն յատուկ աշխատանք մը ունի որ պէտք չէ ձգուի յաջորդ օրուան: Այն ինչ որ կրնանք ընել այսօր, վաղուայ պէտք չէ ձգենք: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Այսօր երբ կը լսէք Աստուծոյ ձայնը, ձեր սիրտերը մի փակէք» (Եբր 4.7): Այսօր մեզմէ ո՞վ չի լսեր Աստուծոյ ձայնը. «Տղա՛ս, այսօր այգի գնա աշխատելու»: Այսօր դուն աշխատեցա՞ր Աստուծոյ այգիին մէջ. կրցա՞ր փուշ մը արմատախիլ ընել եւ անոր փոխարէն վարդենի մը տնկել. կրցա՞ր տրտմած սիրտ մը ուրախացնել. կրցա՞ր սգաւոր հոգի մը միխիթարել. կրցա՞ր փշուրտութենէն շեղած մը Յիսուսի բերել:

գ.- «Այգի գնա աշխատելու»: Այգիին կը ներկայացնէ Քրիստոսի Եկեղեցին, որուն մէջ ամէն մէկ հաւատացեալ կոչուած է աշխատելու: Հաւատացեալին առաքելութիւնն է իր վկայութիւններով, իր ապրած կեանքով ու կատարած գործերով, ընդարձակել ու անեցնել Քրիստոսի Եկեղեցին, այլ խօսքով՝ Աստուծոյ թագաւորութիւնը:

է.- Եթէ «տղաս» բառին մէջ մենք Աստուծոյ սէրը կը գտնենք, անդին, «գնա» բառին մէջ Աստուծոյ խստապահանջութիւնն է որ կը կարգանք: Աստուծոյ սէրն ու խստապահանջութիւնը իրար չեն հակասեր: Աստուած խստապահանջ է այն իմաստով, որ ան կ'ուզէ ու կը պահանջէ որ մենք աշխատինք իր Որդիին այգիին, այլ խօսքով՝ Եկեղեցիին մէջ: Ոեւէ անձ որ անդամ դարձած է Քրիստոսի մարմինին՝ պարտի՛ աշխատիլ այդ մարմինին անման համար: Աշխատիլը իր ազատ կամքին ձգուած հարց մը չէ, այլ՝ աստուածատուր պարտաւորութի՛ւն է, այլապէս՝ դո՛ւրս կը դրուի Աստուծոյ այգիէն:

Այո՛, Աստուծոյ փառքին համար Քրիստոսի Եկեղեցիին մէջ աշխատիլ մերժող մարդիկը՝ դուրս պիտի մնան Աստուծոյ արքայութենէն: Աշխատող մարդը միայն վարձատրութեան եւ հանգիստի արժանի պիտի ըլլայ: Ինչպէս Աստուած իր գործերը աւարտելէ ետք՝ հանգչեցաւ (Ծն 2.2: Եբր 4.4), այնպէս ալ մարդիկ Աստուծոյ կողմէ իրենց յանձնուած գործերը աւարտելէ ետք միայն պիտի կարենան յաւիտենական հանգիստը ժառանգել եւ վայելիլ այգիին պտուղը:

Քրիստոսի այգիին մէջ աշխատող մարդը՝ պիտի վայելէ անոր պտուղէն: Ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Կա՞յ մէկը որ այգի տնկէ եւ անոր պտուղէն չվայելէ» (Ա.Կր 9.7): Մենք այգի տնկելու պէտք չունինք, Քրիստոս ինք իր Եկեղեցին իբրեւ այգի տնկեց արդէն իր արիւնով եւ Սուրբ Հոգիին գալուստով, մեզի կը մնայ աշխատիլ իր այգիին մէջ եւ սպասել անոր յաւիտենական պտուղներուն:

Ոմանք կ'առարկեն թէ մարդուն տրուած Աստուծոյ արքայութիւնը «պարգեւ» ու «ժառանգութիւն» է, ուստի, ինչո՞ւ պէտք է աշխատիլ բանի մը համար որ «պարգեւ» ու «ժառանգութիւն» է: Կը պատասխանենք: Ճիշդ է որ մենք «պարգեւ» կամ «ժառանգութիւն» բնորոշումները կը գործածենք այնպիսի բաներու համար՝ որոնց համար մենք անձնապէս աշխատանք չենք տարած, բայց միւս կողմէ, պէտք է ընդունիլ որ մենք կրնանք կորսնցնել արքայութեան ժառանգութիւնը, եթէ երբեք չաշխատինք այդ ժառանգութեան պահպանման համար: Ո՞վ է այն մարդը որ չի կորսնցնել իր հօրմէն իրեն մնացած նիւթական ժառանգութիւնը եթէ երբեք չաշխատի անոր պահպանութեան: Մեզմէ պահանջուածը մեր աշխատանքով արքայութիւնը ձեռք ձգելը չէ, այլ Քրիստոսի արիւնով արդէն իսկ ձեռք ձգուած արքայութիւնը՝ ձեռքէ չկորսնցնելն է: Աշխատիլ՝ բան մը շահելու համար ուրիշ բան է, եւ աշխատիլ՝ արդէն իսկ շահուած բան մը չկորսնցնելու համար՝ բոլորովին ուրիշ բան:

ը.- «Գնա աշխատելու»: Այս բառերը ցոյց կու տան որ Աստուած ինքն է որ աշխատելու կը դրկէ իր ծառաները, եւ ո՛չ թ անոնք ինքնագլուխ կերպով գործի կ'երթան: Անոնք որոնք Աստուծոյ այգիին մէջ կ'աշխատին ու կը վազվզեն առանց Աստուծոյ կողմէ դրկուած, լիազօրուած եւ առաջնորդուած ըլլալու, անոնք անպայման պիտի յոգնին, պիտի կանգնին ու պիտի ձախողին իրենց ինքնակամ առաքելութեան մէջ: Ասիկա կ'ըսեմ, որովհետեւ շատ մարդիկ կան որոնք Քրիստոսի այգիին (Եկեղեցիին) մէջ կ'աշխատին առանց Քրիստոսի կողմէ դրկուած ըլլալու, եւ ճիշդ անոր համար ալ անոնց կեանքն ու առաքելութիւնը անպտուղ կը մնայ:

Յիսուս կ'ըսէ. «Դուք չէ որ գիս ընտրեցիք, այլ ե՛ս ձեզ ընտրեցի եւ նշանակեցի ձեզ՝ որ երթաք եւ պտղաբեր ըլլաք եւ ձեր պտուղը մնայուն ըլլայ» (Յի 15.16): Այստեղ երեք կէտ մեր ուշադրութեան կը յանձնուի: Առաջին, մենք չէ որ Յիսուսը ընտրեցինք, այլ Յիսուս ի՛նքն է որ մեզ ընտրեց: Երկրորդ, մենք չէ որ իր այգիին մէջ աշխատելու պէտք է երթանք, այլ ինքն է որ մեզ պէտք է դրկէ: Երրորդ, եթէ ինքն է մեզ դրկողը՝ այն ատեն է որ պտղաբեր կ'ըլլանք եւ մեր «պտուղը մնայուն» կ'ըլլայ:

5.- Ինչո՞ւ Յիսուս իր Եկեղեցին կը նմանցնէ այգիի: Քանի մը բաներ յիշեցնելու համար.-

ա.- Ամէն բանէ առաջ պէտք է նկատի առնել որ «այգի» բառին գործածութեամբ, Յիսուս պատրաստ այգիի մասին է որ կը խօսի եւ ո՛չ թէ պատրաստուելիք այգիի մասին: Այսինքն, ըսել կ'ուզեմ, մենք չէ որ

Քրիստոսի այգին՝ Եկեղեցին, պիտի հիմնենք, կառուցենք, հաստատենք: Եկեղեցին Քրիստոս ի՛նք հաստատեց իր արիւնով եւ գորացուց Սուրբ Հոգիին գալուստով: Մեր պարտականութիւնը պարզապէս Քրիստոսի արիւնով եւ Սուրբ Հոգիին հեղումով հաստատուած ու հիմնուած այգիանման Եկեղեցիին մէջ աշխատիլն է:

Հետեւաբար, այգին՝ Քրիստոսի՝ այգին է, մերը չէ՛: Մենք պարզապէս անոր մէջ աշխատելու կոչուած մարդիկ ենք: Յիշեցէ՛ք այգիի մշակներուն առակը: Հոն կը կարդանք թէ ինչպէս կալուածատէրը (Յիսուս), «առաւօտ կանուխ գնաց մշակներ վարձելու՝ որպէսզի իր այգիին մէջ աշխատին» (Մտ 20.1): Յիսուս այստեղ այգին կը կոչէ «ի՛ր այգին», ցոյց տալու համար որ ստիկա իր սեփականութիւնն է: Մի՛շտ պէտք է յիշենք այս իրողութիւնը, որպէսզի երբ աշխատինք իր այգիին մէջ, իր Եկեղեցիին մէջ, մենք զմեզ չկարծենք տէ՛րը այգիին, տէ՛րը իր Եկեղեցիին:

Քրիստոսի Եկեղեցիին մէջ աշխատող մարդը, պէտք է միշտ յիշէ որ ինք գործակատար անձ մըն է եւ ո՛չ թէ գործատէր անձ մը: Գործատէրը՝ Յիսուս է: Յիսուս ի՛նքն է որ կը տիրէ իր Եկեղեցիին գործին վրայ, ի՛նքն է որ կ'իշխէ իր թագաւորութեան տարածման աշխատանքին:

բ.– Յիսուս իր Եկեղեցին կը նմանցնէ այգիի, յիշեցնելու համար որ մենք կոչուած ենք յատուկ խնամք ցուցաբերել իր Եկեղեցիին հանդէպ: Ինչպէս եթէ այգի մը չխնամուի՝ փուշով, տատակով ու վնասակար խոտերով կը լեցուի, այնպէս ալ, եթէ հաւատացեալներ խնամք չտանին իրենց անձերուն եւ հոգատար չըլլան Քրիստոսի Եկեղեցիին իւրաքանչիւր անդամի նկատմամբ՝ մեղքը իր բոլոր տեսակներով մուտք կը գործէ այդ Եկեղեցիէն ներս եւ կը քայքայէ Տիրոջ մարմինը՝ Եկեղեցին:

գ.– Ընդհանրապէս հաւատացեալ մարդը բայց յատկապէս հոգեւոր հովիւները իրենք, իրենց աղօթքներով պէտք է ցանկապատ դնեն, կամ աւելի ճիշդ՝ ցանկապատ դառնան Քրիստոսի Եկեղեցիին շուրջ: Ինչպէս կենդանիներ կրնան մտնել ցանկապատ չունեցող այգին եւ վնասներ հասցնել անոր, այնպէս ալ, եթէ Քրիստոսի Եկեղեցին մնայ առանց ցանկապատի՝ չար ազդեցութիւններ, սխալ ուսուցումներ եւ վարդապետութիւններ մուտք կը գործեն անկէ ներս եւ կը կործանեն զանիկա:

Եզեկիէլի 34.5-ին մէջ կը կարդանք. «Անոնք հովիւ չունենալուն համար ցրուեցան ու ցրուելով՝ դաշտի բոլոր գագաններուն կերակուր եղան»: Հոս յիշուած «դաշտի գագաններ»ը ակնարկութիւն է սխալ ուսուցումներ փոխանցող մարդոց, եւ անոնց թիւը անհաշիւ է աշխարհի

մէջ եւ մեր անմիջական շրջապատին մէջ: Հովիւներուն պարտականութիւնն է իրենց առողջ ուսուցումներով եւ իրենց աղօթքներով պաշտպանելու հաւատացեալները եւ թոյլ չտալու որ անոնք «դաշտի... գագաններուն կերակուր ըլլան»:

Միշտ ալ պիտի ըլլան «աղուէսներ» որոնք պիտի փորձեն աւերել Տիրոջ այգիին ծաղիկները, ահա թէ ինչո՛ւ Տէրը կ'ըսէ. «Բոնեցէ՛ք... աղուէսները՝ վասնզի մեր այգիները ծաղկեր են» (Երգ 2.15): Տիրոջ հրահանգն է որ բոնենք այն «աղուէսները» որոնք աւեր կը գործեն իր Եկեղեցիին մէջ եւ զանոնք դուրս շարտենք իր Եկեղեցիէն:

դ.- Այգի մը այգի չ'ըլլար եթէ պտուղ չքերէ: Հետեւաբար, երբ Յիսուս իր Եկեղեցին այգիի կը մմանցնէ՝ կը նշանակէ թէ պտուղ կը սպասէ իր հետեւորդներէն: Եթէ մենք կ'ապրինք հաւատքի կեանք մը՝ հաւատքը պէտք է իր պտուղները ունենայ որ սէրն է, խաղաղութիւնն է, համբերութիւնն է: Եթէ իւրաքանչիւր հաւատացեալ ունի այս եւ մման պտուղներ, այն ատեն է որ Քրիստոսի Եկեղեցին կ'ընդարձակուի, կը մեծնայ, կ'անի ու կը զօրանայ: Երբ անհատներ զօրաւոր են՝ հաւաքականութիւնը ինքնաբերաբար զօրաւոր կ'ըլլայ, քանի անհատներն են որ կը կազմեն հաւաքականութիւնը:

ե.- Այգիին որթատունկերը գիտենք որ լայն տերեւներ կ'ունենան, միշտ ինչպէս թգենիին տերեւները լայն կ'ըլլան: Անցեալին մարդիկ հանգիստ ընելու համար սովորութիւն ունէին նստելու որթատունկերու տակ, միշտ ինչպէս երբ ընթերցում կամ խոկում պիտի ընէին՝ կը նստէին թգենիի տակ: Այս իմաստով, այգին հանգիստ պարգեւող կամ հանգստութիւն խորհրդանշող տարրն է: Ուստի Յիսուս իր Եկեղեցին այգիի կը մմանցնէ, ցոյց տալու համար թէ ինք՝ իբրեւ Գլուխը Եկեղեցիին, կրնայ ու կ'ուզէ հանգիստ պարգեւել բոլոր անոնց՝ որոնք իրեն կը դիմեն (Մտ 11.28):

զ.- Հին Կտակարանի մէջ այգին խորհրդանշէ եղած է խաղաղութեան: Հոն կը կարդանք. «Սողոմոնին բոլոր օրերուն մէջ՝ Յուդա ու Իսրայէլ, Դանէն մինչեւ Բերսաբէէ, իւրաքանչիւր մարդ իր որթատունկին տակ ու իր թգենիին տակ ապահովութեամբ կը նստէր» (Գ.Թգ 4.25): Այս համարէն յստակ կ'երեւի որ թէ՛ որթատունկը եւ թէ՛ թգենին խաղաղութեան խորհրդանշէ նկատուած են հրեայ ժողովուրդին կեանքին մէջ: Եւ արդարեւ, Սողոմոնին թագաւորութեան քառասուն տարիները խաղաղութեան տարիներ եղան, որովհետեւ ան բնաւ պատերազմի չմտաւ:

6.- «Անիկա պատասխանեց, ըսելով. "Կ'երթամ, հայրիկ". բայց չգնաց»: Քանի մը նշումներ.-

ա.- Զաւակը խոստացաւ այգի երթալ եւ աշխատիլ բայց չգնաց: Իր մեծագոյն սխալը ո՛չ թէ այգի չերթալ եւ չաշխատիլն էր, այլ խօսք տալ եւ խօսքը չպահելն էր: Ան ստիպուած չէր «կ'երթամ, հայրիկ» ըսելու: Ան իր ազատ կամքով ըսաւ. «Կ'երթամ», եւ այդ իսկ պատճառով ան դարձաւ պատասխանատու իր հօրը առջեւ. պատասխանատու դարձաւ ո՛չ թէ որովհետեւ չգնաց ու չաշխատեցաւ, այլ որովհետեւ ինքնիր խոստումը չպահեց: Մովսէս կը պատուիրէ որ եթէ Աստուծոյ խոստում մը տանք՝ պէտք է գանձիկա կատարենք (Բ.Օր 23.23):

Սիրելիներ, իւրաքանչիւր մարդ որ յօժարակամ յանձն կ'առնէ ոեւէ գործ կամ պարտականութիւն, պարտաւոր է գայն կատարելու եւ իր լրումին հասցնելու: Աւելի լաւ է բնա՛ւ գործ մը յանձն չառնել քան թէ յանձն առնել եւ գայն չկատարել կամ կիսաւարտ թողուլ:

բ.- «"Կ'երթամ, հայրիկ". բայց չգնաց»: Որքան մարդիկ կան մեր կեանքին մէջ որոնք խօսք կու տան բայց իրենց խօսքը չեն կատարեր: Որքան քարոզիչներ կան որոնք կը քարոզեն սուրբ կեանք ապրիլ բայց իրենք անհունօրէն հեռու են սրբութենէն: Խօսող, խոստացող բայց չկատարողներուն մէջ առաջնահերթ տեղը կը գրաւէին Փարիսեցիները (Մտ 23.3): Անհաշիւ է թիւը անոնց՝ որոնք իրենց շրթներով սիրոյ ու ներողամտութեան մասին կը խօսին, բայց իրենց սիրտերը լեցուն են ատելութեամբ ու ֆինախնդրութեամբ:

գ.- «Կ'երթամ, հայրիկ»: Երթալ ուզողը պէտք չունի «կ'երթամ, հայրիկ» ըսելու, այլ ուղղակի ճամբայ կ'ելլէ ու կ'երթայ: Զոջացող եւ այգի գացող ու աշխատող զաւկին բերնին մէջ մեքէ չենք գտներ «կ'երթամ» բացատրութիւնը: Ան իր գոջումէն ետք չգնաց իր հօրը եւ չըսաւ անոր. «Հայրիկ, ահաւասիկ կ'երթամ», այլ ուղղակի գնաց: Գործի հաւատացող մարդը՝ չի խօսիր, այլ ուղղակի գործի կ'անցնի:

դ.- Առաջին զաւակը «հայրիկ» կը կոչէ իր հայրը բայց որդիական հնազանդութիւն չի ցուցաբերեր անոր խօսքին հանդէպ: Որքան մարդիկ կան մեր կեանքին մէջ որոնք «հայր» կը կոչեն զԱստուծո, բայց իբրեւ հայր չեն յարգեր, չեն պատուեր ու չեն սիրեր զինք: Ճիշդ այդպիսիներուն ուղղուած է Աստուծոյ խօսքը. «Եթէ ես հայր եմ, իմ պատիւս ո՞ւր է. եթէ Տէր եմ, իմ վախս ո՞ւր է» (Մդ 1.6): ԶԱստուծո «հայր, հայր» կամ «Տէր, Տէր» կոչողները չեն որ պիտի մտնեն երկինքի արքայութիւն, այլ անոնք՝ որոնք Աստուծոյ կամքը կը կատարեն (Մտ 7.21):

«Ապա հայրը միւս զաւակին գնաց եւ նոյնը ըսաւ: Երկրորդ զաւակը պատասխանեց. "Զեմ երթար". բայց յետոյ գոջաց ու գնաց» (Մտ 21.30): Քանի մը նշումներ.-

1.- Հայրը հրաւիրել է ետք իր առաջին գաւակը (հրեայ ժողովուրդը), աշխատելու իր այգիին մէջ, հրաւիրեց նաեւ իր երկրորդ գաւակը (հեթանոս աշխարհը) աշխատելու: Եւ սա ցոյց կու տայ, որ Աստուծոյ հայեացքով, հրեայ թէ հեթանոս հաւասար են իրարու, բոլորն ալ Աստուծոյ գաւակներն են եւ բոլորն ալ կոչուած են աշխատելու իր այգիին մէջ:

Առակը բացորոշ կերպով ցոյց կու տայ անոնց հաւասար ըլլալը իրարու, որովհետեւ երբ կը խօսի երկու գաւակներու մասին, մէջտեղ չի դնել երէց կամ կրտսեր ըլլալու հարց մը: Անոնց իրարու հաւասար ըլլալը կը փաստուի նաեւ անով՝ որ երկուքին ալ համար կը գործածուի «գաւակ» բացատրութիւնը, երկուքն ալ միեւնոյն հրաւերը կը ստանան, եւ երկուքն ալ միեւնոյն այգիին կը դրկուին աշխատելու: Հրեաներուն համար Աստուած իրենց յատուկ հրաւեր մը չունի, ո՛չ ալ այգի մը կայ որ միայն հրեաներուն համար է: Հրեայ եւ հեթանոս նոյն հրաւերը ստացած են եւ միեւնոյն այգիին մէջ կոչուած են աշխատելու:

2.- Երկրորդ գաւակը որուն հայրը կ'երթայ եւ կը հրաւիրէ այգի աշխատելու՝ կը ներկայացնէ հեթանոս աշխարհը, ինչպէս տեսանք: Սա կը նշանակէ, թէ երբ Յիսուս այս առակը պատմեց, ուզեց հրեաներուն հասկցնել, թէ՛ Աստուծոյ ծրագիրն է որ փրկութիւնը բոլոր ազգերուն ֆարձուի եւ բոլորը գան աշխատելու Աստուծոյ այգիին մէջ: Պօղոս առաքեալ յստակօրէն կը բացատրէ թէ Աստուծոյ ծրագիրին մաս կը կազմէր որ հրեաներ մերժէին Յիսուսը, որպէսզի Աստուծոյ փրկութիւնն ու ողորմութիւնը դառնայ սեփականութիւնը բոլոր ժողովուրդներուն (Հո 11.25-32): Արդարեւ, ի՛նքն էր որ պատուէր տուաւ իր առաքեալներուն երթալու եւ բոլոր ժողովուրդները իրեն աշակերտ դարձնելու (Մտ 28.19-20)

3.- «"Չեմ երթար"». բայց յետոյ գղջաց ու գնաց»: Շուտով պատասխան տալը կամ աճապարանօք որոշում առնելը՝ ընդհանրապէս մեզ կ'առաջնորդեն գղջումի: Ա՛յս է որ կը սորվինք երկրորդ գաւակին վերաբերմունքէն: Հաւանաբար ան անակնկալի եկաւ հօրը կատարծ հրահանգ-խնդրանքին դիմաց, եւ ստիպուած եղաւ արագ որոշում առնելու ու ժիտական պատասխան տալու. բայց յետոյ երբ առանձնանալու պահ մը ունեցաւ, ինքնագիտակցութեան եկաւ եւ տեսաւ որ սխալ որոշում առած էր. եւ քիչդ անառակ որդիին նման, գղջաց եւ վերադարձաւ իր հօրը մօտ՝ անոր հաւատարիմ ծառան ըլլալու համար:

Այսօր, երբ Աստուած մեզմէ ոեւէ մէկուն պարտականութիւն մը կը յանձնէ կամ առաքելութեան մը կը կանչէ, չաճապարենք պատասխան տալու: Աստուած թէեւ կ'ուզէ որ պատրաստակամ մարդիկ ըլլանք, բայց

չ'ուզեր որ անապարանօֆ որոշումներ առնող մարդիկ ըլլան: Ինչպէս Աստուած անապարանօֆ որոշումներ չ'առներ, այնպէս ալ ան չ'ուզեր որ իր գաւակները արագ որոշումներ առնող ըլլան:

Երբ Աստուած մեզ առաքելութեան մը կանչէ, աղօթքով իր կողմէ մեզի յանձնուած առաքելութիւնը դնենք իր ձեռքերուն մէջ եւ խնդրենք իրմէ կարողութիւն, գորութիւն եւ առաջնորդութիւն: Եթէ Աստուած մեզի գործ մը տայ որպէսզի կատարենք, վստահ եղէք, որ պարտականութիւն կը սեպէ այդ գործը ընելու համար, անհրաժեշտ եղած բոլոր պայմանները տալու մեզի: Աստուած երբեք գործ մը չի յանձներ մարդու մը առանց այդ գործը կատարելու անհրաժեշտ կարողութիւնը, պատեհութիւնը, եւ բոլոր պայմանները ընծայելու անոր:

4.- «Ձեմ երթար»: Մեր ուշադրութենէն պէտք չէ վրիպի որ այս երկրորդ գաւակը որ «չեմ երթար» կ'ըսէ, աւելի անկեղծ է քան «կ'երթամ, հայրիկ» ըսողը: «Կ'երթամ, հայրիկ» խօսքին մէջ, անոյշ լեզուով եւ անոյշ բառերով հայրը խաբելու փորձ մը կայ կարծէք: Իսկ երթալ չուզողը՝ իր հայրը ո՛չ «հայր» կը կոչէ եւ ո՛չ ալ «տէր», այլ կտրուկ կերպով կ'ըսէ. «Ձեմ երթար»: Ան չի խաբեր իր հօրը: Ան ամենայն անկեղծութեամբ իր հօրը կ'ըսէ թէ չ'ուզեր երթալ: Աստուած կը նախընտրէ անկեղծօրէն ստուիլ քան կեղծաւորաբար սիրուիլ:

5.- «Բայց յետոյ զոչաց ու գնաց»: Ձկա՛յ մարդ մը որ չսխալի ու մեղք չգործէ. կարելորը սակայն այն է, որ յետոյ անդրադառնանք մեր սխալին եւ ընդունինք մեր մեղաւոր ըլլալը եւ դարձի գանք, ինչպէս դարձի եկաւ առակին մէջ յիշուած երկրորդ եղբայրը: Ոեւէ մարդու համար բնա՛ւ ուշ չէ դարձի գալ:

Երբեմն մարդիկ կը մտածեն որ եթէ դարձի եկան՝ արդե՞օֆ Աստուած պիտի ներէ անցեալի իրենց մեղքերը: Մեղքի կեանքը ապրած անապաշխար մարդիկ պէտք չէ ստրուկը դառնան իրենց անցեալին, այլ պէտք է փառութիւնը ունենան Պօղոս առաքելի նման ըսելու. «Կ'աշխատիմ անցեալը մոռնալ եւ գալիքին նայիլ» (Փլպ 3.13): Անցեալին մէջ մեր գործած մեղքերը պատճառ մը չեն որ չապաշխարենք ու մեր ընթացքը չփոխենք: Աստուած խոստացած է որ եթէ մեղաւոր մարդը դարձի գայ՝ անցեալին մէջ իր գործած մեղքերէն ո՛չ մէկը պիտի յիշուի (Եզ 18.21): Եսայի մարգարէն կ'ըսէ որ եթէ ամբարիշտ մարդը իր ընթացքը փոխէ՝ Աստուած առատապէս պիտի ներէ գայն (Ես 55.7):

6.- «Ձոչաց ու գնաց»: Նախ խօսինք «զոչաց» բառին մասին: Հայերէն լեզուին մէջ «զոչաց» կը նշանակէ՝ ցաւեցաւ: Հետեւաբար, զոչումը՝ գործուած սխալ արարքի մը դիմաց՝ մարդուն ապրած ցաւի

զգացումն է: Օրինակ, Պենտեկոստի օրը երբ Պետրոս առաքելա խօսեցաւ հրեաներուն Յիսուսի հանդէպ իրենց ցուցաբերած անգութ վերաբերմունքին մասին՝ կը տեսնենք թէ ինչպէս հրեաներ «իրենց սրտերուն մէջ զղջացին», այլ խօսքով՝ ցաւեցան (Գրծ 2.37 հին թրգմ.): Հին Կտակարանին մէջ յաճախ կը կարդանք Աստուծոյ զղջումին մասին: Օրինակ, Ծն 6.7-ին մէջ կը կարդանք ուր Աստուած կ'ըսէ. «Անոնք ստեղծելուս կը զղջամ»: Սաւուղին վերաբերեալ Աստուած կ'ըսէ. «Սաւուղը թագաւոր ընելուս կը զղջամ» (Ա.Թգ 15.11): Սաղմոսագիրը Տիրոջ համար կ'ըսէ թէ «իր մեծ ողորմութեանը համեմատ զղջաց» (Սղ 106.45: Տե՛ս նաեւ Ամս 7.3, 6): Այս եւ նման համարներու մէջ «զղջաց» բացատրութիւնը պէտք է հասկնալ ցաւեցաւ իմաստով, եւ ո՛չ թէ «ապաշխարեց» իմաստով: Ասիկա կ'ըսեմ, որովհետեւ կրօնական իմաստով եւ ծիսական հասկացողութեամբ «զղջաց» կրնայ նաեւ նշանակել՝ «ապաշխարեց»: Աստուած սակայն ապաշխարութեան պէտք չունի: Ապաշխարութիւնը մեղաւորներուն համար է, Աստուած սակայն անմեղ է, եւ ուստի՝ կարիքը չունի՝ ապաշխարութեան: Եթէ «զղջում» բացատրութիւնը «ապաշխարութիւն» իմաստով պիտի առնենք, Աստուած չի զղջար. եւ ատիկա Աստուածաշունչը բազմաթիւ անգամներ կը հաստատէ: Օրինակ, Թւ 23.19-ին մէջ կը կարդանք. «Աստուած մարդ չէ... որ զղջայ»: Այլ տեղ կը կարդանք. «Իսրայէլի Ապաւէնը սուտ չի խօսիր ու չի զղջար» (Ա.Թգ 15.29: Տե՛ս նաեւ Եգ 24.14: Սղ 110.4 եւայլն):

Զղջումը չ'առաջնորդեր փրկութեան եթէ անոր չընկերանայ ապաշխարութիւնը: Մէկը կրնայ զղջալ եւ սակայն չապաշխարել: Օրինակ, Յուդա Իսկարիոտացին «զղջաց եւ իր ստացած երեսուն արծաթ դրամը աւագ ֆահանաներուն եւ ժողովուրդի երէցներուն» դարձուց, եւ «ապա գնաց եւ ինքզինք կախեց» (Մտ 27.3-5): Յուդայի նման, Սաւուղ, Փարաւոն եւ ուրիշներ եւս զղջացին, այլ խօսքով՝ ցաւեցան իրենց ըրածին համար բայց չապաշխարեցին: Մեր քննած բառերը՝ «զղջաց ու գնաց», ցոյց կու տան որ երկրորդ գաւկին պարագային՝ զղջումին ընկերացաւ նաեւ ապաշխարութիւնը:

«Զղջաց ու գնաց»: Զղջալէ ետք՝ տեղը չնստաւ, այլ անմիջապէս գործի լծուեցաւ: «Գնաց»: Ո՞ւր գնաց: Աստուծոյ կամքը կատարելու գնաց: Աստուծոյ այգիին մէջ՝ Աստուծոյ խօսքին սերմը ցանելու գնաց: Աստուած իրմէ հաշիւ չպահանջեց անցեալին մէջ իր ցուցաբերած մերժողական կեցուածքին համար: Աստուած գոհացած ու ուրախ էր անոր զղջումով եւ աշխատանքի ձեռնարկումով: Անոր զղջալն ու իսկոյն այգի երթալը, կը սորվեցնէ մեզի որ իր մեղքերուն համար նշմարտապէս ցաւող մարդը՝ պէտք է ապրի իսկական ապաշխարութիւն, պէտք է

անմիջապես կը փոխէ իր կեանքի ընթացքը եւ կը սկսի Աստուծոյ հնազանդիլ, առանց այլեւայլի եւ առանց վարանումի ու ակնկալութեան:

Աստուածաշունչը լեցուն է օրինակներով ու խօսքերով որոնք ցոյց կու տան որ իսկական գոյումին՝ կ'ընկերանայ ապաշխարութիւնը, այլ խօսքով՝ կեանքի ու ընթացքի փոփոխութիւնը: Օրինակ, քիչ մը վերեւ տեսանք, որ Պենտէկոստէի օրը երբ Պետրոս առաքեալ խօսեցաւ հրեաներուն Յիսուսի հանդէպ իրենց ցուցաբերած անգութ վերաբերմունքին մասին՝ անոնք «իրենց սրտերուն մէջ զոջացին»: Բայց զոջալով չբաւարարուեցան, այլ անմիջապէս հարցուցին Պետրոսի եւ միւս առաքեալներուն. «Ի՞նչ պէտք է ընենք, ո՛վ եղբայրներ»: Պետրոս առաքեալ պատասխանեց. «Ձեր ընթացքը փոխեցէ՛ք...» (Գրծ 2.37-38): Այստեղ բացայայտօրէն կ'երեւի թէ ինչպէս իսկական գոյումին՝ ընթացքի իսկական փոփոխութիւն կ'ընկերանայ: Սողոմոն կ'աղօթէ Աստուծոյ եւ կ'ըսէ. «Եթէ այն գերութեան երկրին մէջ զոջան ու դառնան... քու ժողովուրդիդ բեզի դէմ ըրած մեղքը ու բոլոր յանցանքներէ՛ք...» (Գ.Թգ 8.47-50): Ի՞նչ կը հասկնանք «զոջան ու դառնան» ըսելով: Կը հասկնանք՝ զոջան ու դարձի գան, Աստուծոյ դառնան: Եթէ զոջան բայց չդառնան՝ ոչինչով կ'օգտուին: Երբ Յովնան մարգարէն քարոզեց Նինուէացիներուն, անոնք ո՛չ միայն զոջացին իրենց մեղքերուն համար, այլեւ «իրենց չար քամբանքէն դարձան» (Յվն 3.10: Տե՛ս նաեւ Մտ 12.41):

Եթէ տրուած բացատրութեանց եւ օրինակներուն լոյսին տակ դիտենք «զոջաց ու գնաց», բռնորդ, յստակ կը դառնայ որ երկրորդ զաւակը, որ կը ներկայացնէ հեթանոս աշխարհը՝ ոչմարիտ դարձապրեցաւ: «Չզոջաց ու գնաց» դէպի Աստուած, դէպի Աստուծոյ այգին, դէպի նո՛ր կեանք ու նո՛ր առաքելութիւն:

7.- Իր հայրը «հայր» չկոչողն է որ կը հնազանդի իր հօրը խօսքին եւ ո՛չ թէ իր հայրը «հայր» կոչողը: Ասիկա նկատի առնելը կարեւոր է, որպէսզի մարդոց արտասանած բռնորդն ու խօսքերուն վրայ հիմնուելով դատաստան չընենք թէ ո՛վ Աստուծոյ զաւակն է եւ ո՛վ չէ: Մարդոց խօսքը կրնայ խաբել: Մարդիկ կրնան շատ գեղեցիկ դասախօսութիւն կամ քարոզ տալ Աստուծոյ հայրութեան մասին առանց երբեք վայելած ըլլալու անոր հայրութիւնը: Կրնան անոր սիրոյն մասին գիրքեր գրել ու պատգամներ փոխանցել առանց երբեք սիրած ըլլալու զայն կամ ըմբոշխնած ըլլալու անոր սէրը:

«Արդ, այս երկուքէն ո՞ր մէկը իր հօրը կամքը կատարած եղաւ: "Երկրորդը", պատասխանեցին: Եւ Յիսուս ըսաւ. "Կ'ըսեմ ձեզի, թէ

մաֆաւորներն ու պոռնիկները պիտի կանխեն ձեզ եւ ձեզմէ առաջ պիտի մտնեն Աստուծոյ արքայութիւնը: Որովհետեւ Յովհաննէս եկաւ եւ ձեզք արդար կեանքի մը նամբան ցոյց տուաւ, բայց դուք չհաւատացիք անոր, մինչ մաֆաւորներն ու պոռնիկները հաւատացին: Նոյնիսկ ասիկա տեսնելէ ետք չզոջացիք ու չհաւատացիք իրեն"» (Մտ 21.31-32): Քանի մը ամփոփ նշումներ.–

1.– «Արդ, այս երկուքէն ո՞ր մէկը իր հօրը կամքը կատարած եղաւ»: Սկզբնապէս երկու գաւակներն ալ սխալ ընթացքի մէջ էին: Երթալ խոստացող բայց չգացող գաւակը ստախօս ու կեղծաւոր մէկն էր, իսկ երթալ մերժող գաւակը՝ կոշտ ու կոպիտ մէկն էր: Հոսկէ կը սորվինք այն՝ որ գանազանութիւն եւ տարբերութիւն կայ մարդոց միջեւ: Բոլոր մարդիկ նոյն նկարագիրը չունին: Աստուծոյ կոչին դիմաց բոլոր մարդոց հակազդեցութիւնը նոյնը չ'ըլլար:

2.– «Ո՞ր մէկը իր հօրը կամքը կատարած եղաւ»: Թէեւ ըսինք որ սկզբնապէս երկու գաւակներն ալ սխալ նամբայ բռնեցին, բայց առակը յստակ կը դարձնէ որ իր հօրը կամքը կատարողը եղաւ ան՝ որ մերժեց այգի երթալ «բայց յետոյ զոջաց ու գնաց»: Ան իր հօրը կամքը կատարած եղաւ ո՛չ միայն որովհետեւ այգի գնաց եւ աշխատեցաւ, այլ նաեւ որովհետեւ զոջաց ու ապաշխարեց: Աստուծոյ կամքն է որ բոլոր մարդիկ ապաշխարեն ու փրկուին: Ան իր հօրը կամքը կատարած պիտի չըլլար եթէ երբեք այգի երթար եւ աշխատէր, առանց զոջում ու ապաշխարութիւն յայտնաբերելու: Մէկը չի կրնար Աստուծոյ այգիին մէջ աշխատելով Աստուծոյ կամքը կատարել եթէ չէ ապաշխարած: Աստուծոյ կամքը ամէն բանէ առաջ այն է որ ապաշխարենք: Անոր այգիին մէջ աշխատիլը՝ երկրորդ հանգրուանն է: Ասիկա կ'ըսեմ, որովհետեւ շատ մարդիկ կան որոնք կ'աշխատին Քրիստոսի այգիին մէջ, կը վազվզեն ու կը խօսին Քրիստոսի անունով, առանց երբեք նշմարիտ ապաշխարութիւն ապրած ըլլալու:

3.– Երբ Յիսուս զինք լսող աւագ քահանաներուն եւ ժողովուրդի երէցներուն հարցուց. «Երկուքէն ո՞ր մէկը իր հօրը կամքը կատարած եղաւ», անոնք պատասխանեցին. «Երկրորդը»: Յիսուս իրաւունք ունէր իրենց խօսքով դատելու զիրենք. որովհետեւ գիտէին շիտակը բայց չէին ընէր: Յակոբոս առաքեալ կ'ըսէ. «Ով որ շիտակը գիտէ եւ չ'ընէր՝ մեղք է որ կը գործէ» (Յկ 4.17): Անոնք գիտէին որ Յովհաննէս Մկրտիչի քարոզութեան պաշտօնը Աստուծմէ էր, եւ սակայն, կամաւորապէս մերժեցին հնազանդիլ անոր: Անոնք նոյնիսկ եթէ չէին գիտեր որ Յիսուս աշխարհի խոստացուած Փրկիչն էր, բայց կասկածէ վեր է որ գէթ գիտէին որ Յիսուս Աստուծոյ մարգարէն էր եւ կամ մարգարէներէն

մին, բայց իբր այդպիսին չպատուեցին գայն, այլ բռնեցին ու խաչեցին (Գրծ 2.36):

4.- «Կ'ըսեմ՝ ձեզի, թէ մաքուսներն ու պոռնիկները պիտի կանխեն ձեզ եւ ձեզմէ առաջ պիտի մտնեն Աստուծոյ արքայութիւնը: Որովհետեւ Յովհաննէս եկաւ եւ ձեզի արդար կեանքի մը քամբան ցոյց տուաւ, բայց դուք չհաւատացիք անոր»: Քահանաները, Փարիսեցիները, Օրէնքի ուսուցիչները եւ երէցները, որոնք կը կարծէին թէ ամբողջական պատրաստութիւնը եւ պատրաստակամութիւնը ունէին հետեւելու Աստուծոյ եւ ժառանգելու անոր արքայութիւնը, Յովհաննէս Մկրտիչի յայտնութեամբ, հանդէս եկաւ որ ո՛չ պատրաստութիւն ունէին եւ ո՛չ ալ պատրաստակամութիւն: Իրենք որ մնայուն կերպով կ'ակնկալէին Մեսիային գալուստը եւ կը խօսէին անոր գալուստին մասին, երբե՛ք ուշադրութիւն չդարձուցին անոր նախակարապետին՝ Յովհաննէս Մկրտիչի քարոզութեան եւ վկայութեան Մեսիային վերաբերեալ. իսկ մաքուսներն ու պոռնիկները որոնք՝ ռեւել յոյս կամ ակնկալութիւն չունէին որ Մեսիան պիտի յայտնուէր, երբ լսեցին Յովհաննէսի քարոզութիւնը՝ անմիջապէս ընդգրկեցին հաւատքը:

Աւետարաններ յստակօրէն ցոյց կու տան որ արդարեւ, եղա՛ն պոռնիկներ եւ մաքուսներ որոնք արքայութեան գաւակ դարձան աւագ քահանաներէն, Փարիսեցիներէն, Օրէնքի ուսուցիչներէն եւ երէցներէն առաջ: Օրինակ, Մատթէոս եւ Ջակֆէոս մաքուսներ էին եւ երկուքն ալ հետեւեցան Քրիստոսի (Մտ 9.9: Ղկ 19.2, 9): Աղօթող Փարիսեցիին ու մաքուսին առակին ընդմէջէն նաեւ Յիսուս ցոյց տուաւ թէ մաքուսներէն շատեր դարձի պիտի գային ու փրկուէին (Ղկ 18.10-14): Դուկաս մեզի կը պատմէ այն պոռնիկ կնոջ մասին որ եկաւ եւ սկսաւ Յիսուսի ոտները համբուրել երբ Յիսուս նստած կը ճաշէր Փարիսեցի Սիմոնին տան մէջ: Յիսուս Փարիսեցի Սիմոնի՛ն ներկայութեան կնոջ ըսաւ. «Հաւատքդ քեզ փրկեց. խաղաղութեամբ գնա» (Ղկ 7.36-50): Յիշեմք նաեւ շնութեան մէջ բռնուած կնոջ պարագան որ արժանացաւ մեղքերու քաղութեան (Յհ 8.11):

5.- «Մաքուսներն ու պոռնիկները պիտի կանխեն ձեզ»: Քանի ըսուեցաւ որ երկրորդ գաւակը որ հրաւեր ստացաւ այգի երթալու եւ աշխատելու կը ներկայացնէ հեթանոսները, արդ, կ'ուզենք հարց տալ թէ ինչո՛ւ Յիսուս այստեղ կը խօսի մաքուսներու եւ պոռնիկներու դարձի գալուն մասին, փոխանակ խօսելու հեթանոսներու դարձի գալուն մասին: Քահանաները, Փարիսեցիները, Օրէնքի ուսուցիչները եւ երէցները, դատապարտուած ու գեհենի արժանի կը սեպէին մաքուսներն ու պոռնիկները: Ըստ իրենց, փրկութեան ամէն ելք եւ

ամէն դուռ փակուած էր անոնց դիմաց: Յիսուս սակայն իր կատարած յայտարարութեամբ, թէ՛ «մաքսաւորներն ու պոռնիկները պիտի կանխեն ձեզ եւ ձեզմէ առաջ պիտի մտնեն Աստուծոյ արքայութիւնը», կու գայ հիմնովին ջրելու իրենց այս անգութ մտածողութիւնը մեղաւոր դասակարգին նկատմամբ եւ բացայայտելու թէ փրկութիւնը բոլոր դասակարգի մարդոց համար է:

Յովհաննէս Երզնկացի կը հաստատէ թէ Յիսուս չուզեց «հեթանոս» բառը գործածել, «որպէսզի բոլորովին չվիատին» հրեաները, միւս կողմէ, «մաքսաւոր եւ պոռնիկ» բառերուն գործածութեամբ ուզեց ցոյց տալ որ բազում հրեաներ հաւատացին ու պիտի հաւատային իր Աւետարանին: Երզնկացի կը բացատրէ նաեւ թէ Յիսուս «մաքսաւոր եւ պոռնիկ» բառերուն գործածութեամբ ուզեց նախանձր գրգռել քահանաներուն, Փարիսեցիներուն, Օրէնքի ուսուցիչներուն, երէցներուն եւ բոլոր հրեաներուն, որպէսզի նիգ թափեն ու դարձի գան եւ ընդգրկեն փրկութիւնը: Յիսուս «մաքսաւոր եւ պոռնիկ» բառերուն գործածութեամբ, միաժամանակ ուզեց ֆաջալերել մեղաւոր կամ իրենք գիրենք մեղաւոր զգացող դասակարգի մարդիկը դարձի գալու եւ Աստուածապարգեւ հաւատքը ընդգրկելու:

6.- Քահանաները, Փարիսեցիները, Օրէնքի ուսուցիչները եւ երէցները, չուզեցին խոստովանիլ որ Յովհաննէսի մկրտելու իշխանութիւնը Աստուծմէ էր, բայց Յիսուս տուեալ առակով հաստատեց անոնց թէ անոր մկրտելու իշխանութիւնը Աստուծմէ էր, որովհետեւ «արդար կեանքի մը ցոյց տուաւ» քովը եկողներուն, եւ հաւատքի առաջնորդեց մաքսաւորներն ու պոռնիկները: Ինչպէս ծառը իր պտուղէն կը ցանցուի, այնպէս ալ Յովհաննէս իր պտուղին, այսինքն՝ իր տարած աշխատանքին եւ արքայութեան համար իր հաւաքած հետեւորդներուն պատճառով, ցանցուեցաւ որպէս մէկը՝ որ Աստուծոյ կողմէ իշխանութիւն եւ լիազօրութիւն ստացած էր:

7.- «Յովհաննէս եկաւ եւ ձեզի արդար կեանքի մը ցոյց տուաւ»: Երեք նշումներ.-

ա.- Յիսուսի այս բառերը մէկ կողմէ վկայութիւն մըն են Յովհաննէս Մկրտիչի մասին, իսկ միւս կողմէ՝ դատապարտութիւն մը քահանաներուն, Փարիսեցիներուն, Օրէնքի ուսուցիչներուն, երէցներուն եւ բոլոր անոնց համար որոնք լսեցին Յովհաննէսի ֆարոգութիւնը բայց դարձի չեկան: «Եկաւ... ձեզի»: Այս բառերը կը պարզեն որ Յովհաննէս յատուկ կերպով իր ֆարոգութիւնն ու կոչը ուղղեց քահանաներուն, Փարիսեցիներուն, Օրէնքի ուսուցիչներուն եւ

երեցներուն (Յհ 1.19-24), ուստի անոնք իրենց մերժողական կեցուածքին համար ունէ արդարացում չեն կրնար ունենալ Աստուծոյ դիմաց:

Յովհաննէս Երզնկացի խօսելով «եկաւ» բառին մասին՝ կը բացատրէ թէ Յովհաննէս Մկրտիչ խօսեցաւ քահանաներուն, Փարիսեցիներուն, Օրէնքի ուսուցիչներուն եւ երեցներուն, եւ սակայն անոնք զինք չընդունեցին, մինչդեռ յատուկ կերպով չխօսեցաւ մաքաւորներուն եւ պոռնիկներուն եւ սակայն անոնք զինք ընդունեցին, ուստի անոք համար ալ քահանաները, Փարիսեցիները, Օրէնքի ուսուցիչները եւ երեցները զրկուեցաւ թողութենէ, իսկ մաքաւորներն ու պոռնիկները ո՛չ միայն Աստուծոյ շնորհքին արժանացան, այլեւ՝ հաւատացին, լուացուեցան, սրբուեցան, արդարացան եւ սկսան քաղաքացիական կեանքի մասնակցել:

բ.- «Եկաւ»: Ինչպէս Աստուած ինքն է որ կու գայ մարդոց, այնպէս ալ, Աստուծոյ ծառաները իրենք է որ կու գան մարդոց: Պատմութեան ընթացքին, միշտ Աստուած է որ եկած է մարդոց, անձնապէս, եւ կամ՝ իր մարգարէներուն ու առաքելներուն միջոցաւ: Քիչ մը վերեւ ըսի եւ կը կրկնեմ, եթէ Աստուած մարդուն չգայ եւ եթէ ինք մարդը դարձի չբերէ՝ մարդը երբեք ալ իր սեփական գիտելիքով չի կրնար գալ Աստուծոյ:

գ.- «Արդար կեանքի մը համբան ցոյց տուաւ» բառերը յատկօրէն ցոյց կու տան թէ Յովհաննէս Մկրտիչ լաւագոյնս կատարած էր Աստուծոյ կողմէ իրեն յանձնուած առաքելութիւնը: Ի՞նչ էր անոր առաքելութիւնը կամ ի՞նչ էր «արդար կեանքի մը» այն համբան գործ Յովհաննէս ցոյց տուաւ քահանաներուն, Փարիսեցիներուն, Օրէնքի ուսուցիչներուն, երեցներուն եւ բոլոր հրեաներուն (Յհ 1.19-24): Այն «արդար կեանքի համբան» Յիսուսի՝ համբան էր, Յիսուսով արդարանալու՝ համբան էր: Յովհաննէս ինքն իսկ հաստատեց թէ իր առաքելութիւնը Տիրոջ դիմաց համբայ պատրաստելն էր (Յհ 1.23):

Ճ.- «Նոյնիսկ ասիկա տեսնելէ ետք չզղջացիք ու չհաւատացիք իրեն»: Երբ խօսեցանք «զղջալ» բառին մասին, ըսինք, որ եթէ զղջումին չընկերանայ ապաշխարութիւնը՝ ոչինչ կ'արժէ: Յիսուս առակը նոյն այս գաղափարով է որ կ'եզրակացնէ: Ան աւագ քահանաներէն, Փարիսեցիներէն, Օրէնքի ուսուցիչներէն, ժողովուրդի երեցներէն եւ բոլոր հրեաներէն, զղջում եւ հաւատքի ընդգրկում կը սպասէր թէ՛ Յովհաննէս Մկրտիչի օրերուն եւ թէ՛ իր օրերուն, եւ սակայն, անոնք մնացին անզղջ եւ անապաշխար:

Վերջին քանի մը ամիսի մտածումներ.-

1.- Երկու գաւակներուն աշխատանքի դրկուիլը կը պարզէ որ աշխարհի մէջ ապրող իւրաքանչիւր մարդ Աստուծոյ կողմէ իրեն յանձնուած յատուկ պարտականութիւն մը եւ աշխատանք մը ունի: Սիրելի՛ ընթերցող, մտածէ թէ ի՛նչ է այն աշխատանքը որ Աստուած յանձնած է քեզի: Առանց աշխատանքի մի՛ կենար: Երբ կ'աշխատիս, կը նշանակէ թէ Աստուծոյ գործակից ես, քանի Աստուած անդադար կերպով կը գործէ (Յհ 5.17):

2.- Առակը կը բացայայտէ որ կարգ մը մարդիկ կը կատարեն Աստուծոյ կողմէ իրենց յանձնուած պարտականութիւնը, իսկ ուրիշներ՝ չեն կատարեր: Իսկ դուն, ո՞ր մարդոց խումբին կը պատկանիս: Աստուծոյ կողմէ իրենց յանձնուած պարտութիւնը ընողներո՞ւն խումբին, թէ՛ իրենց պարտականութիւնը չընողներուն խումբին:

3.- Աստուծոյ կողմէ մարդուն դրկուիլը այգի աշխատանքի համար, մեզի պէտք է յիշեցնէ հետեւեալը. քանի Աստուած յարատեւօրէն գործող Աստուած է, բնականօրէն ան կ'ուզէ որ իր գաւակներն ալ յարատեւօրէն գործող գաւակներ ըլլան: Մարդիկ ընդհանրապէս չեն ուզեր իրենց սիրած մարդիկը ծանր աշխատանքներ կատարեն, յոգնին ու քրտնին, բայց Աստուծոյ վերաբերմունքը տարբեր է: Ան կ'ուզէ որ իր գաւակները ըլլան պայքարի՛ ու աշխատանքի՛ մարդիկ, քրտնի՛ ու տփնուքեա՛ն մարդիկ, որպէսզի կարենան առաւելագոյն չափով նմանիլ իր Որդիին եւ մեծամեծ վարձատրութեանց արժանի դառնալ:

4.- Մարդոց մեծամասնութիւնը աշխատանքէն չէ որ կը փախի, այլ Աստուծոյ տուած աշխատանքն է որ չ'ուզեր կատարել:

Աստուծոյ հանդէպ սէր չունեցող մարդիկ իրենց սեփական աշխատանքներով աւելի՛ հետաքրքրուած են քան Աստուծոյ տուած աշխատանքով: Անոնցմէ իւրաքանչիւրը իրեն համար «այգի» մը ստեղծած է եւ կը սիրէ անո՛ր մէջ աշխատիլ քան Աստուծոյ այգիին մէջ:

Ընթերցող՝ բարեկամ, այդպիսի բան չընես դուն: Նախընտրէ աշխատիլ Քրիստոսի այգիին մէջ, Քրիստոսի Եկեղեցիին հզօրացման համար, որպէսզի երբ Փեսան Եկեղեցիին՝ Քրիստոս, յայտնուի, դուն եւս հաւատացեալներու բազմութեան հետ երկինք փոխադրուիս եւ միանաս զԱստուած փառաբանող հրեշտակներու անթիւ գունդներուն:

ՏԱՍԸ ԿՈՅՍԵՐՈՒՆ ԱՌԱԿԸ

«Այն ատեն երկինքի թագաւորութիւնը պիտի նմանի հետեւեալին.–

Տասը կոյսեր կային, որոնք իրենց լապտերները առած՝ դիմաւորելու ելան փեսան: Անոնցմէ հինգը յիմար էին, իսկ միւս հինգը՝ իմաստուն: Յիմարները առին իրենց լապտերները, բայց իրենց հետ պահետի ձեռք չառին, մինչդեռ իմաստունները իրենց լապտերներուն հետ սրուակով ձեռք առին: Եւ երբ փեսան ուշացաւ գալու, բոլորն ալ թմրեցան ու քնացան:

Կէս գիշերին կանչ մը լսուեցաւ.– "Ահա փեսան կու գայ, գայն դիմաւորելու ելէ՛ք": Կոյսերը արթնցան եւ սկսան իրենց լապտերները կարգի դնել: Յիմար կոյսերը իմաստուններուն ըսին.– "Ձեր ձեռքէն քիչ մը մեզի տուէ՛ք, որովհետեւ մեր լապտերները ահա կը մարին": Իմաստուն կոյսերը պատասխանեցին.– "Ո՛չ, կրնայ ըլլալ որ մեզի եւ ձեզի չբաւէ. աւելի լաւ կ'ըլլայ որ երթաք խանութպաններուն եւ ձեզի համար ձեռք գնէ՛ք":

Երբ անոնք ձեռք գնելու գացին, փեսան եկաւ, եւ պատրաստ եղողները փեսայի հետ հարսանիքի մտան, եւ դուռը գոցուեցաւ: Քիչ ետք եկան միւս կոյսերը եւ ըսին.– "Տէ՛ր, Տէ՛ր, դուռը բաց մեզի": Փեսան պատասխանեց.– "Իսկապէս որ չեմ գտնուար ձեզ":

Ապա Յիսուս եզրակացուց.– "Ուրեմն՝ արթնու՛ն մնացէ՛ք, որովհետեւ չէ՛ք գիտեր Մարդու Որդիին գալուն ո՛չ օրը եւ ո՛չ ալ ժամը"» (Մտ 25.1-13):

Ընդհանուր ներածական

Այս առակը նախ պէտք է փորձենք տեղադրել ընդհանուր ժողովուրդներու կեանքին մէջ: Յիսուս իր բոլոր առակները առաւ իր ժամանակի առօրեայ կեանքէն, եւ անոնց մէջ դրաւ արտասովոր տարր մը, որ բուն իսկ ուսուցումը կրնայ ներկայացնել: Սովորական պատկերը հարսանեկան ուրախութեան մը սպասումը ցոյց տալն է: Պէտք է նկատի առնել որ այսօր տեղի ունեցող հարսանիքները տարբեր են անցեալին տեղի ունեցող հարսանիքներէն: Անցեալին հարսանեկան ուրախութիւնները մէկ օրով չէին աւարտեր, այլ կ'երկարէին քանի մը օրերու վրայ. այսօր ատոր մնացորդները կան:

Օրինակ, ի՞նչ է այն սովորութիւնը որ ներկայիս կը կոչեն «հասնում», որ պսակէն ետք եղող խրախնամքը չէ, այլ նախքան պսակը

տեղի ունեցող խնդիրներն է՝ բոլոր ազգականներուն ներկայութեամբ: «Հասանումը» ուրիշ բան չէ եթէ ոչ մնացորդը անցեալի այն սովորութեան, որով հարսանեկան ուրախութիւնները կը սկսէին պսակադրութենէն առաջ եւ քանի մը օրերու վրայ կը տարածուէին:

Այդ օրերու աւարտին, հարսին ընկերուհիները իր հետ կ'ըլլային, իսկ փեսային ալ ընկերները՝ փեսային հետ: Երբ կը հասնէր հարսանիքի պահը, իրիկուն ատեն փեսան եւ իր բարեկամները ջահերով ու նրագներով կու գային հարսին տունը. երբ հարսին իմաց տրուէր որ փեսան ժամանեց, անմիջապէս իր ընկերուհիներուն հետ միասին դուրս կ'ելլէր, ջահը իր ձեռքը բռնած, կը դիմաւորէր փեսան եւ յատուկ արարողութեամբ մը գայն դէպի իր տունը կ'առաջնորդէր եւ պատիկ ուրախութիւն մը կ'ըլլար, որմէ ետք փեսան հարսը կ'առնէր ու իր տունը կը տանէր եւ կը սկսէր հարսանեկան ուրախութիւնը:

Հրէական պայմաններուն մէջ տաճար կամ սինակոկ երթալ չկար: Յիշենք որ նշանտուփի առիթով սինակոկ կ'երթային տեսակ մը օրհնութիւն ստանալու համար: Ասիկա պաշտօնական համաձայնագիր մը կնքելու կերպ մըն էր: Նշանտուփը թեպէտ կրօնական նշանակութիւն ունէր, բայց անպայման կապուած չէր տաճարին կամ այլ սրբավայրի մը. նշանտուփը կրնար նաեւ ծնողներուն կողմէ կատարուիլ եւ կամ հոգեւոր պաշտօնեայի մը ներկայութեան (Զարեհ Ա.Ֆր. Ազնաւորեան):

«Տասը կոյսեր կային, որոնք իրենց լապտերները առած՝ դիմաւորելու ելան փեսան» (Մտ 25.1): Քանի մը հաստատումներ.–

1.– Ինչո՞ւ Յիսուս այս առակին մէջ Աստուծոյ արքայութիւնը կը նմանցնէ տասը կոյսերու որոնք «դիմաւորելու ելան փեսան»: Մենք գիտենք որ կոյս աղջիկն ու փեսան ուրախութեամբ եւ անհամբեր կը սպասեն այն պահուան երբ իրարու պիտի հանդիպին: Ուստի, Քրիստոս տուեալ առակով կ'ուզէ սորվեցնել մեզի որ իր հարսը՝ եկեղեցին, ուրախութեամբ եւ անհամբեր պէտք է սպասէ իր աշխարհ վերադարձին: Եւ սակայն, եկեղեցին ո՛չ միայն պէտք է սպասողը ըլլայ երկնաւոր Փեսային երկրորդ գալուստին, այլեւ՝ ցանկացողը այդ գալուստին, փափափողն ու աղօթողը այդ գալուստին, եւ մանաւանդ, այդ գալուստին կարօտով տոչորողը:

2.– Ծատ պարզ է որ կոյս աղջիկն ու փեսան իրարու կը հանդիպին ուրախութեամբ լի հարսնարանի մը մէջ: Ուստի, այս առակին նպատակներէն մին նաեւ ցոյց տալն է որ երկինքի արքայութիւնը ուրախութեամբ լեցուն հարսնարան մը պիտի ըլլայ, ներկայութեամբ երկնաւոր Փեսային՝ Քրիստոսի եւ իր եկեղեցիին:

3.- Ինչո՞ւ Յիսուս կոյսերուն թիւը 10 կը ներկայացնէ: Ինչպէս թիւ 3-ը, թիւ 7-ը, այնպէս ալ թիւ 10-ը հրէական մտածողութեան մէջ ամբողջութեան խորհրդանիշ է: Ուստի, երբ Յիսուս կը հաստատէ թէ կոյսերուն թիւը 10 է, ան պարզապէս ըսել կ'ուզէ թէ ամբողջ մարդկութիւնը կանչուած է դառնալու ժառանգորդը Աստուծոյ արքայութեան: Այո՛, բոլո՛ր մարդիկը կանչուած են փրկութեան եւ ոչ թէ անոնց մէկ մասը միայն: Փրկութիւնը յատուկ անձերու չի պատկանիր, այլ՝ բոլորին: Պօղոս առաքեալ կը հաստատէ թէ Աստուած «կ'ուզէ որ բոլոր մարդիկը փրկուին» (Ա.Տմ 2.4):

Հաւանաբար ուրիշ պատճառ մը եւս կայ թէ ինչո՞ւ կոյսերուն թիւը 10 կը ներկայանայ: Կարգ մը մեկնիչներ մեր ուշադրութեան կը յանձնեն թէ երբ հրեաներ պիտի թլփատուէին, կամ գատիկը պիտի տօնէին, կամ ամուսնութիւն պիտի կնքէին, կամ ազգակիցէ մը արտ մը ծախու պիտի առնէին, առնուազ տասը հոգի ներկայ կ'ըլլար այս արարողութեանց իբրեւ վկայ: Հետաքրքրական է նկատի առնել որ երբ Բոնոս Հոռութիւն հետ պիտի ամուսնանար, տասը մարդիկ վկայ կանգնեցուց (Հոթ 4.2): Հետեւաբար, կոյսերուն թիւը 10 թիւով կը ներկայանայ, կարծէ՛ք յիշեցնելու համար թէ անոնք վկայ են որ բոլո՛րը ձեռնուէին, բոլո՛րը կանչուած էին փեսային հետ հարսնարան մտնելու, բայց անոնցմէ հինգը, իրենց անտարբերութեան գոհը գացին, եւ ասոր մէջ փեսան ո՛չ մէկ յանցանք ունէր, որովհետեւ յիմարները իրենց ազատ կամքով էր որ «իրենց հետ պահեստի ձեռք չառին»:

4.- Որո՞նք են կոյսերը եւ ինչո՞ւ անոնք կոյս կը կոչուին: Ի՞նչ կ'արտայայտէ կոյս բացատրութիւնը: Ստորեւ կը ներկայացնենք Զարեհ Արք. Ազնաւորեանին բացատրութիւնները, մեր կողմէ կատարուած որոշ յաւելումներով եւ յապաւումներով.-

ա.- «Կոյս» բացատրութեան մէջ կարելի է տեսնել բոլոր անոնք՝ որոնք արքայութեան հարսանիքին հրաւիրեալներն են, այլ խօսքով՝ հաւատացեալները: Պէտք չէ մոռնալ որ հարսին ընկերուհիները ամուսնացած ընկերուհիները չեն, այլ աւելի անոնք են՝ որոնք իր տարիքին են, ամուրիներն են, կոյսերն են, բայց միաժամանակ ուրախութեան մասնակիցներն են:

բ.- «Կոյս» բառը մաքրութեան եւ անարատութեան խորհրդանիշ է: Հետեւաբար «կոյսերը» անոնք են՝ որոնք մաքուր են իրենց նկարագիրով, վարքով եւ ապրելակերպով:

գ.- Ուրիշ հետաքրքրական իմաստ մըն ալ կարելի է տեսնել «կոյս» բացատրութեան մէջ: Եթէ երբեք «կոյս» բառը առնենք չամուսնացած անձ հասկացողութեամբ, համագօր է ըսելու աշխարհէն հեռու ապրող,

այլ խօսքով, մէկը որ կենցաղով անխառն, մաքուր, եւ պղծութիւններէն հեռու կեանք մը կ'ապրի: Հետեւաբար, «կոյս» բացատրութիւնը սրբութեան եւ անարատութեան խորհրդանիշ է: Եւ այս իմաստը մենք արտացոլացուած կը գտնենք թէ՛ քրիստոնէական ամբողջ գրականութեան մէջ եւ թէ՛ Նոր Կտակարանին մէջ: Երբ կը կարդանք Յայտնութեան գիրքը, կը տեսնենք թէ ինչպէս որոշ վկաներու համար կը գործածուի «կոյս» բնորոշումը (Յտ 14.4): Արդ, եթէ այս իմաստով առնենք «կոյս» բառը, որո՞նք են անոնք: Անոնք չամուսնացածները չեն հարկաւ, այլ աշխարհի պղծութիւններէն կամովին հեռացած մարդիկն են, ինչպէս ըսինք:

դ.– Կոյսերը նաեւ այն հեթանոսներն են, որոնք անդրադարձան թէ իրենց կենցաղը Աստուծոյ կամեցածը չէ եւ իրենք գիրքէն ձեռքազատեցին իրենց նախկին անմաքութիւններէն: Անոնք կոյս չէին, բայց եղան կոյս: Յայտնութեան գիրքը անոնց վերաբերեալ պիտի ըսէր, թէ՛ անոնք այն մարդիկն են, որոնք իրենց հանդերձները, այսինքն՝ իրենց կեանքը, Գառնուկին արիւնով լուացին եւ այդպէս մաքրուեցան: Այլ բացատրութեամբ մը, կոյսը եղան անոնք՝ որոնք դարձան Քրիստոսի, ցանչցան Քրիստոսը եւ որդեգրեցին փրկութեան շնորհքը:

ե.– Վերջին այս իմաստը նոյնքան հետաքրքրական է: Քիչ մը վերեւ բացատրեցինք որ կոյսերը բոլոր հաւատացեալներն են, այլ բառով մը՝ հարսն է, իսկ հարսը՝ եկեղեցին է: Բայց մեկնիչներու ուրիշ խումբ մը կայ, որոնք կ'ըսեն, թէ հոս յիշուած կոյսերը նոյնինքն հարսը կամ եկեղեցին չեն, այլ հարսին, այսինքն՝ եկեղեցիին բարեկամուհիներն են: Եթէ բարեկամուհիներն են, որո՞նք կրնան ըլլալ անոնք: Որոշ մեկնիչներ այս կոյսերը ակնարկութիւն կը նկատեն Երբայեցի ժողովուրդին, եւ զայն կ'ըմբռնեն վախճանական իմաստով մը:

Այս մեկնիչները կը հաստատեն, թէ՛ վերջին ժամանակներուն, յատկապէս նեղութեանց ատեն, Իսրայէլի որդիներէն շատեր պատրաստ պիտի ըլլան զՔրիստոս ընդունելու, եւ վերջին պահուն պիտի փորձեն հարսին, այսինքն՝ եկեղեցիին միանալ եւ անոր հետ միասին դիմաւորել փեսան: Անոնք տակաւին հարսին հետ նոյնացած չեն, բայց պիտի փորձեն նոյնանալ եւ անոր հետ ալ մտնել հարսնարան:

Այն Իսրայէլացիները որոնք պիտի յաջողին խոստացեալ Մեսիային ձեռքը, այսինքն՝ հաւատքը առնել իրենց սիրտերուն մէջ եւ անեցնել զանիկա, անոնք պատրաստ պիտի ըլլան հարսին հետ միասին մտնելու առագաստ, իսկ անոնք որոնք տակաւին իրենց Մեսիական սպասումը հասունցուցած պիտի չըլլան, անոնք պատրաստ պիտի չըլլան ցանչնալու զՔրիստոս իբրեւ փեսան եւ մուտք գործելու արժայութեան առագաստ:

5.- «Իրենց լապտերները առած...»: Լապտերը՝ հաւատքն է որ կը պատկերացնէ, իսկ լապտերին ձեռքը՝ հաւատքին արտայայտութիւնը եղող գործերը: Ըստ այլ մեկնութեան մը, լապտերը կը ներկայացնէ մարդուն սիրտը, իսկ անոր մէջ դրուող ձեռքը՝ նոյնինքն մարդուն հաւատքը: Ըստ երրորդ մեկնութեան մը, դարձեալ, լապտերը կը ներկայացնէ մարդուն սիրտը, իսկ ձեռքը՝ Քրիստոսի փրկարար ձրի շնորհքը: Տարբեր բացատրութիւններ եւս առաջարկուած են այս մասին, որոնց քիչ ետք պիտի անդրադառնանք աւելի լայնօրէն:

6.- «Իրենց լապտերները առած՝ դիմաւորելու ելան փեսան»: Յստակ է որ փեսան Քրիստոս ինքն է: Ինչո՞ւ Յիսուս հաւատացեալները կը կոչէ կոյս, իսկ ինքզինք՝ փեսայ: Զարեհ Աբբ. Ազնաւորեան կ'ըսէ. «Ծանօթ է մեզի որ Հին եւ Նոր Կտակարանները Աստուծոյ եւ իր ժողովուրդին կապը յաճախ կը ներկայացնեն այր եւ կնոջ պատկերով: Ասիկա արդի մարդուն համար քիչ մը անհասկնալի պատկերացում մը կրնայ թուիլ, որովհետեւ մարդոց մտածողութիւնը գուտ մարմնական է, սակայն Աստուածաշունչին մէջ այր եւ կնոջ պատկերացումը նախընտրուած է անոր համար որ այր եւ կնոջ միջեւ եղող սէրը ամբողջական նուիրումի եւ փոխադարձ սիրոյ արտայայտութիւն է:

Աստուածաշունչը յաճախ նաեւ Աստուծոյ եւ մարդուն յարաբերութիւնը կը նմանցնէ հայր եւ որդիի յարաբերութեան. բայց յաճախ այս յարաբերութեան մէջ պակտող տուեալը այն է, որ գաւակները իրենց վերաբերմունքին մէջ կրնան անգիտակից կամ տհաս ըլլալ, մինչդեռ այր եւ կնոջ պատկերին մէջ, կ'ակնկալուի որ անոնց սէրը իրարու նկատմամբ ըլլայ հասուն եւ գիտակից սէր:

Հին Կտակարանեան ժամանակի ընթացքին բոլոր Եբրայեցիներն ալ Աստուծոյ հետ միասնութեան պահը կը սպասէին: Փեսային եւ իր արդարներուն միասնութիւնը կը պատկերացնէ Աստուծոյ եւ իր ժողովուրդին նոր կապն ու յարաբերութիւնը: Բ.Օրինաց գիրքը, ինչպէս նաեւ Եսայի եւ Ովսէա մարգարէները իրենք ալ Աստուծոյ եւ իր ժողովուրդին կապն ու յարաբերութիւնը կը տեսնեն իբրեւ նոր նշանտուփ մը: Եւ Իսրայէլացիները կը սպասէին իրենց եւ Աստուծոյ միջեւ հաստատուելիք այդ յարաբերութեան»:

7.- «Դիմաւորելու ելան փեսան»: «Դիմաւորել» բառը մէկ կողմէ ցոյց կու տայ որ միայն հաւատացեալները իրենք պիտի կարենան դիմաւորել Յիսուսը իր երկրորդ գալստեան ժամանակ, իսկ միւս կողմէ, կը պատկերացնէ այն անսահման ուրախութիւնը, որով հաւատացեալներ պիտի դիմաւորեն իրենց Փրկիչը: Զար մարդիկ պիտի չուզեն Տէրը դիմաւորել. պիտի չուզեն Յիսուսը տեսնել. անոնք պիտի

նախընտրեն ծածկուիլ լեռներու ու ժայռերու կողմէ, քան Աստուծոյ Գառնուկին ներկայութեան բերուիլ կամ կանգնեցուիլ (Յտ 6.16):

«Անոնցմէ հինգը յիմար էին, իսկ միւս հինգը՝ իմաստուն» (Մտ 25.2): Քանի մը մատնանշումներ.–

1.– Քրիստոսի դարձողներուն մէջ երկու դասակարգի մարդիկ կան՝ իմաստուններ եւ յիմարներ: Որո՞նք են իմաստունները, եւ որո՞նք՝ յիմարները: Իմաստունները անոնք են՝ որոնք անգամ մը որ ընդգրկեցին Քրիստոսի հաւատքը, մնացի՛ն ու յարատեւեցի՛ն այդ հաւատքի ընթացքին մէջ եւ անեցա՛ն այդ հաւատքով, իսկ յիմարները անոնք են՝ որոնք ընդգրկելէ ետք Քրիստոսի հաւատքը, ժամանակի ընթացքին թուլցան իրենց հաւատքին մէջ, ընկրկումներ արձանագրեցին եւ ի վերջոյ ամբողջութեամբ լքեցին իրենց հաւատքը:

2.– Որոշ մեկնիչներ կը հաստատեն թէ հինգ իմաստուն կոյսերը կը ներկայացնեն այն հաւատացեալ մարդիկը՝ որոնք իրենց հինգ զգայարանները՝ տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, քաշակելիք եւ շօշափելիք, պահած են հոգեւորապէս արթուն եւ զգաստ: Անոնք կ'ըսեն, թէ՛ հաւատացեալ մարդը պէտք է մնայուն կերպով աղօթքով արթուն պահէ իր բոլոր զգայարանները, որպէսզի անոնք չիյնան մեղքի մէջ: Այլ խօսքով, ըսել ուզուածը այն է, որ Քրիստոսի հետեւորդ մարդը, պէտք է իր ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացնէ եւ կեդրոնացած պահէ Քրիստոսի անձին վրայ: Իսկ հինգ յիմար կոյսերը կը ներկայացնեն այն մարդիկը՝ որոնք իրենց հինգ զգայարանները ենթակայ կը դարձնեն մեղքին, այլ բացատրութեամբ մը՝ կ'ապրին մեղքի կեանք մը:

3.– Ուրիշ կարեւոր նշմարտութիւն մը եւս կայ որուն պէտք է անդրադառնալ: Առակը մեզի ցոյց կու տայ թէ հինգ իմաստուն եւ հինգ յիմար կոյսերը իրարմէ հեռու չեն, այլ կողք-կողքի են, միասին ու միատեղ են: Ի՞նչ կը յուշէ մեզի այս կէտը: Կը յուշէ թէ հաւատացեալ եւ անհաւատ մարդիկ ամէն տեղ եւ նոյնիսկ եկեղեցւոյ կեանքին մէջ կողք-կողքի կը գտնուին: Մեր Տէրը՝ Յիսուս, բազմաթիւ կերպերով ատիկա ցոյց տուաւ: Օրինակ, որովմերու առակին մէջ կը տեսնենք որ որովմն ու ցորենը, այլ խօսքով՝ ամբարիշտն ու հաւատացեալը միասին ու միատեղ կ'ապրին ու կ'աճին (Մտ 13.30): Ուղկանին օրինակին մէջ եւս կը տեսնենք որ լաւ եւ անպէտ ձուկերը (մարդիկը) միասին են (Մտ 13.47-48): Բայց միտքարականը այն է, որ անոնք առ յաւէտ միասին պիտի չմնան: Երբ Տէրը երկրորդ անգամ յայտնուի, գանձնի պիտի բաժնէ իրարմէ, քիչդ ինչպէս հինգ իմաստուն կոյսերը բաժնեց հինգ յիմար կոյսերէն: Յիշենք նաեւ որ սուրբ Օգոստինոս ինք եւս հինգ իմաստուն եւ հինգ յիմար կոյսերուն մէջ ամբողջ եկեղեցւոյ ներկայութիւնն է որ կը տեսնէ:

Հինգ իմաստուն եւ հինգ յիմար կոյսերուն միասին ապրիլը եւ անոնցմէ հինգին փրկուիլն ու հինգին կորսուիլը՝ ուրիշ կարեւոր նշմարտութիւն մը եւս կը պարզէ մեր դիմաց: Ո՛չ մէկ եկեղեցի, ո՛չ մէկ աղօթատեղի, ո՛չ մէկ յարանուանութիւն կրնայ յաւակնութիւնը ունենալ ըսելու, թէ փրկութիւնը միայն ի՛ր բովն է, կամ թէ՛ իրեն եկողը պիտի փրկուի: Անցեալին Կաթողիկէ եկեղեցին յայտարարեց ըսելով. «Կաթողիկէ եկեղեցիէն դուրս՝ չկա՛յ փրկութիւն»: Այսօր Եհովայի վկաներ կը յայտարարեն, թէ՛ փրկութիւնը միայն իրենց սեփականութիւնը պիտի ըլլայ: Աշխարհի մէջ բազմահարիւր են այն շարժումները որոնք կոչ կ’ուղղեն մարդոց միանալու իրենց շարժումներուն, եթէ երբեք կ’ուզեն փրկութիւն ձեռք գտնել: Տասը կոյսերուն կէսին փրկուիլն ու միւս կէսին կորսուիլը, յստակօրէն ցոյց կու տայ որ աշխարհի մէջ չէ եղած եւ պիտի չըլլայ եկեղեցի մը, կամ յարանուանութիւն մը կամ շարժում մը, որուն բոլոր անդամները փրկուած ըլլան կամ բոլոր անդամները կորսուած ըլլան: Բոլոր եկեղեցիներուն մէջ, բոլոր յարանուանութեանց մէջ, եւ բոլոր կրօններուն մէջ ալ թէ՛ փրկուողներ պիտի ըլլան եւ թէ՛ կորսուողներ: Ինչ կը վերաբերի այն աղանդներուն որոնք կը մերժեն Քրիստոսը՝ դատաստանը Քրիստոսի ձգեմք:

«Յիմարները առին իրենց լապտերները, բայց իրենց հետ պահեստի ձեռք չառին, մինչդեռ իմաստունները իրենց լապտերներուն հետ սրուակով ձեռք առին» (Մտ 25.3-4): Քանի մը մատնանշումներ.–

1.– Որո՞նք են այն մարդիկ որ «իրենց հետ պահեստի ձեռք չառին»: Զարեհ Ա.բ. Ազնաւորեան կը բացատրէ թէ Քրիստոսի ժամանակակից սերունդը, որուն մէջ նաեւ իրեն հաւատացողները, բոլորն ալ կը սպասէին Աստուծոյ թագաւորութեան գալստեան, բայց երբ Աստուծոյ թագաւորութիւնը Քրիստոսով յայտնուեցաւ, բոլոր սպասողները չկրցան Քրիստոսի հետ արքայութեան հարսնարանը մտնել, որովհետեւ պատրաստ չէին, եւ պատրաստ չէին քանի որ «իրենց հետ պահեստի ձեռք չառին»: Ի՞նչ է այդ ձեռքը: Զեթը, կարելի է ըսել առաջին հերթին Աստուծոյ խօսքն է, Աստուծոյ Օրէնքն է, այդ Օրէնքին դաստիարակութիւնն է: Եւ Հրեաները ստացան այդ Օրէնքին դաստիարակութիւնը: Այդ Օրէնքէն սորվեցան սպասել Փեսային:

Պօղոս առաքեալի իսկ բացատրութեամբ. «Օրէնքը մեր խնամակալ դաստիարակը եղաւ, մեզ Քրիստոսի առաջնորդելով, որպէսզի հաւատով արդարանանք» (Գղ 3.24): Այո՛, Օրէնքին պարտականութիւնը Իսրայէլացիները երկնաւոր Փեսային հասցնելն էր: Բայց բոլորը չհասան: Ինչո՞ւ: Զհասան որովհետեւ ումանց մօտ պակսեցաւ ձեռքը, եւ մենք ըսինք որ ձեռքը կը խորհրդանշէ Օրէնքը: Ուրեմն, այդ Օրէնքին

վրայ յաւելեալ բան մըն ալ պէտք է ապահովէին. ոմանք ապահովեցին, իսկ ոմանք չկրցան ապահովել:

Արդ, ի՞նչ բերաւ Քրիստոս Օրէնքին վրայ իբրեւ յաւելում: Յովհաննէս կ'ըսէ. «Օրէնքը Մովսէսի միջոցաւ տրուեցաւ, մինչ շնորհքն ու ուղիւն չուրէն՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ» (Յի 1.17): Նախորդ համարին մէջ առաքեալը կը հաստատէ «որ մենք բոլորս շնորհքի վրայ շնորհք ստացանք» (Յի 1.16): Օրէնքը դարձեալ Աստուծոյ շնորհքն է, կամ Աստուծոյ շնորհքին արտայայտութիւնն է, բայց անոր վրայ եկաւ նոր շնորհք մը աւելնալու. հետեւաբար, անոնք որոնք իրենց ստացած առաջին շնորհքին, այսինքն՝ Օրէնքին վրայ, չաւելցուցին փրկութեան շնորհքը որ Քրիստոս բերաւ, անոնք որքան ալ դաստիարակուած, որքան ալ սպասողական վիճակի մէջ, բայց վերջին պահուն թուլցան, ընկրկեցան եւ չկրցան միւսներուն հետ միասին մտնել հարսնաբանը:

2.- Արքազանը խօսքը շարունակելով կը հաստատէ նաեւ որ ձեռքին նպատակը նրաքը կամ լապտերը վառ պահելն է: Ի՞նչ է այդ նրաքը: Այդ նրաքը՝ հաւատքն է: Պահ մը մեր հայեացքը ուղղենք Մատթէոսի հինգերորդ գլխուն ուր Յիսուս կ'ըսէ. «Ոչ ոք նրաքը կը վառէ եւ կը պահէ կաթսայի տակ. ընդհակառակը, գայն աշտանակի վրայ կը դնէ, որպէսզի տունին մէջ գտնուողներուն լոյս տայ: Նոյնպէս ալ, ձեր լոյսը այնպէս թող շողայ մարդոց առջեւ, որ անոնք ձեր բարի գործերը տեսնեն եւ փառաւորեն ձեր Հայրը, որ երկինքի մէջ է» (Մտ 5.15-16): Յիսուսի այս խօսքը ցոյց կու տայ որ մեր հաւատքի նրաքը ո՛չ միայն մեզի համար է, այլ նաեւ ուրիշներուն համար: Հոս երկու իմաստ միասին կը տեսնենք. թէ՛ անձնապէս նրաք ըլլալ եւ թէ՛ այդ նրաքը ծառայեցնել ուրիշները լուսաւորելու համար:

3.- Հաւատքին առընթեր, նրաքը կարելի է նմանցնել նաեւ յոյսի եւ սիրոյ: Յորին գիրքը գայն կը կապէ յոյսին հետ: Հոն կը կարդանք. «Անոր վրանին մէջ լոյսը պիտի խաւարի ու անոր նրաքը անոր վրայ պիտի մարի» (Յոբ 18.6): Հոս կը խօսի անոնց մասին՝ որոնք կը մեկնին այս կեանքէն առանց պատրաստուած ըլլալու, եւ որոնց յոյսը կը մարի. հոս նրաքը յոյսի արտայայտութիւնն է: Քիչ մը անդին կը կարդանք. «Արդարներուն լոյսը գուարթ պիտի ըլլայ, բայց ամբարիշտներուն նրաքը պիտի մարի» (Առ 13.6, 9): Ի՞նչն է արդարներուն ունեցած լոյսը: Այդ լոյսը առաջին հերթին հաւատքն է եւ այդ հաւատքէն բխող առաքինութիւններու ամբողջ երանգապնակը:

4.- Գլխաւոր բանի մը կէտեր եւս կան որոնց պէտք է անդրադառնալ: Քիչ առաջ հաստատեցինք որ ձեռքը Աստուծոյ Օրէնքն է, Աստուծոյ խօսքն է, բայց միաժամանակ կարելի է ըսել որ նրաքն ալ

Աստուծոյ խօսքն է: Սաղմոսագիրը կ'ըսէ. «Խօսքդ նրագ է փայլերուս, լուսաւորող՝ նամբաներուս» (Սղ 119.105): Շատ հետաքրքրական բաղդատութիւն մը ունինք մարգարէներու եւ նրագի միջեւ. յիշեցէք որ Յիսուս Յովհաննէս Մկրտիչը նրագի նմանցուց: Մարգարէութիւնները որ Աստուծոյ խօսքն են, մարդս կը լուսաւորեն ո՛չ միայն ներկայիս մէջ իբրեւ անմիջական պատգամ, այլ նաեւ ապագային, այլ խօսքով, անոնք եկող ժամանակներուն ապրելիք մարդոց ալ պիտի լուսաւորեն (Ա.Պտ 1.10-12):

5.- Տակաւին, կարելի է ըսել որ Քրիստոս ի՛նքն է այդ նրագը: Յայտնութեան գիրքը երկու առիթներով գՔրիստոս կը նմանցնէ նրագի կամ լուսաւորողի: Հոն կը կարդանք. «Քաղաքը (ակնարկութիւնը երկնաւոր Երուսաղէմին է) լուսաւորելու համար պէտք չունի արեւու եւ լուսինի, որովհետեւ Աստուծոյ փառքը ի՛նք կը լուսաւորէ զայն, եւ անոր նրագը Քառնուկն է» (Յյտ 21.23, տե՛ս նաեւ 22.5): Եթէ նրագի կարիքը պիտի չգագացուի յաւիտեանական արքայութեան մէջ որովհետեւ Աստուած ինք պիտի ըլլայ նրագը, ապա կարելի է ըսել նաեւ որ նրագը Սուրբ Հոգին ի՛նքն է: Եզեկիէլ իր մարգարէութեան մէջ կը ներկայացնէ ապագային գալիք ֆահանայապետ մը, Յեսու ֆահանայապետը, որ կը պատկերացուի տաճարին մէջ նստած եւ իր դիմացը աշտանակը, վառած նրագները:

Ըսինք որ նրագը Քրիստոս ի՛նքն է նաեւ: Յիշենք Ղուկասու Աւետարանին մէջ արձանագրուած կորսուած դրամին առակը: Մէկը տասը դրամ ունէր. երբ անոնցմէ մէկը կորսնցուց, նրագը վառեց եւ սկսաւ աւելով աւել որպէսզի դրամը գտնէ: Անառակ Կիրակիի շարականին մէջ Ներսէս Շնորհալի կ'ըսէ. «Որ գտիրական ֆո պատկեր լուսով նրագի ֆո գտեալ վերականգնեցեր», այսինքն՝ «Ռուսն որ Տիրական (աստուածային) ֆու պատկերդ ֆու նրագիդ լոյսով գտար եւ վերականգնեցիր»: Այստեղ նրագը չի նոյնանար Քրիստոսի հետ, թէպէտ կրնայ նաեւ նոյնանալ: Քրիստոս իր երկրաւոր կեանքով նրագի մը նմանեցաւ որպէսզի մեզ լուսաւորէ, վերանորոգէ եւ Աստուծոյ ընծայէ:

6.- Աստուածաշունչը արդէն կը բացատրէ թէ նրագը նոյնինքն Սուրբ Հոգին է: Տարբեր բացատրութեամբ մը, կրնանք ըսել որ նրագը նշմարտութեան ձայնն է: Երբ Յիսուս ուզեց վկայութիւն մը տալ Յովհաննէս Մկրտիչին մասին, զայն նմանցուց նրագի. ինչո՞ւ: Որովհետեւ Յովհաննէս խօսեցաւ այդ նշմարտութեան մասին, արքայութեան մասին: Ան հանդիսացաւ նշմարտութեան ձայնը, եղաւ խղի մասին՝ ժամանակակից կեանքին մէջ, արքայական պալատէն սկսեալ մինչեւ ժողովրդական վերջին խաւերը:

7.- Սուրբ Յովհան Ոսկեբերան Հայրապետ կը հաստատէ թէ ձեռք կը մատնանշէ արդար եւ սուրբ գործերը, որոնք կը զանազանեն իրարմէ կենդանի հաւատքը մեռած հաւատքէն: Այս իմաստով, պահեստի ձեռք չառնողները այն մարդիկն են, որոնք թէպէտ կը յայտարարեն թէ կը հաւատան Քրիստոսի, բայց իրենց հաւատքը արտայայտող եւ իրենց հաւատքին կենդանութիւնը փաստող արդար ու սուրբ գործեր չունին:

«Եւ երբ փեսան ուշացաւ գալու, բոլորն ալ թմրեցան ու քնացան»
(Մտ 25.5): Քանի մը մատնանշումներ.-

1.- «Երբ փեսան ուշացաւ գալու»: Այս բառերը յստակօրէն ցոյց կու տան որ Քրիստոսի երկրորդ գալուստը կրնայ ուշանալ: Առաքելները կը կարծէին որ Տիրոջ գալուստը իրենց իսկ ժամանակ տեղի պիտի ունենար (Գրծ 1.6): Յիսուս այս առակը պատմեց միանգամընդմիշտ իրենց մտքէն հեռացնելու այս մտածումը:

2.- «Բոլորն ալ թմրեցան ու քնացան»: Երբ մարդիկ Քրիստոսի կը դիմեն, բոլորն ալ ընդհանրապէս նոյն սկզբունքը կ'որդեգրեն, բայց ոմանք ժամանակի ընթացքին կրնան թուլնալ եւ ընկրկիլ իրենց հաւատքին մէջ: Մարդ կրնայ լաւ սկսիլ բայց լաւ չվերջացնել: Հոս թուլնալը կամ հաւատքին մէջ ընկրկիլը արտայայտուած է «բոլորն ալ թմրեցան եւ քնացան» իօսօքով:

Ջարեհ Արք. Ազնաւորեան կ'ըսէ. «Թմրիլը եւ քնանալը ցոյց կու տայ մարդոց նուիրումին ամբողջական չըլլալը: Ինչպէս ձեռք նորոգութեան կը կարօտի, այնպէս ալ մարդուն հաւատքը նորոգութեան կը կարօտի: Երբ մարդիկ չնորոգեն իրենց ձեռքը, այսինքն՝ հաւատքը, բնականաբար ժամանակի ընթացքին այդ հաւատքը սպառելու վտանգին դէմ յանդիման կ'ըլլայ: Ի՞նչպէս կարելի է մեր հաւատքի ձեռք նորոգել: Փորձութիւնները սփանչելի առիթ են մեր հաւատքի ձեռք նորոգելու եւ առատացնելու:

Ձեռք կրնայ պակսիլ եթէ զանիկա չառատացնենք, այլ բացատրութեամբ մը, մեր հաւատքի հուրը կրնայ տկարանալ եւ նոյնիսկ լիովին շիջիլ, եթէ երբեք նեղութեանց դիմաց չխնդրենք Աստուծմէ հաւատքի գօտեպնդում եւ գօրացում: Նման պարագայի, բնականօրէն երբ Տէրը գայ մեզ անպատրաստ պիտի գտնէ: Քրիստոս տուեալ առակով մեզի կը թելադրէ չըլլալ գաղջ եւ անտարբեր, ընդհակառակը, արթնութեամբ հսկել մեր հաւատքի կրակին արծարծ մնալուն վրայ:

Այս առակը մեզի կը սորվեցնէ որ Փեսային վերադարձը անխուսափելի է բայց կրնայ ուշանալ, անոր համար ալ իր հետեւորդները պէտք է մնայուն արթնութիւն մը ցուցաբերեն: Արթնութիւնը միայն որոշ պահու սպասում չէ, որովհետեւ յաճախ

ատիկա մեզի վերաբերող նշմարտութիւնն է: Որոշ տարիներու, որոշ տարիքի մը մէջ կամ որոշ պահերու մեմք արթուն կ'ըլլանք, բայց սպասուածը կը թուցնէ մեզ, եւ Քրիստոս այս առակով չթուլնալու կոչ մըն է որ կ'ուղղէ մեզի: Ուստի, հիմնական պատգամը առակին ցոյց տալն է մեզի Քրիստոսի երկրորդ գալուստին ուշացումը, բայց միւս կողմէ, հոն կայ նաեւ արթուն հսկելու յորդոր մը»:

3.- «Բոլորն ալ թմրեցան ու քնացան»: Զարեհ Արք. Ազնաւորեան կը բացատրէ թէ իսոսքը չի կրնար բնական բունի մասին ըլլալ, որովհետեւ Քրիստոս շատ լաւ գիտէ որ բոլորս ալ իբրեւ մարդ անպայման պէտք ունինք քնանալու: Թմրիլը կամ քնանալը փոխաբերական, այլ իսոսքով, հոգեւոր իմաստով պէտք է առնել: Հոգեւորապէս քնանալը երբեք դրական իմաստ չի կրնար ունենալ: Հետաքրքրականը այն է, որ յիմար կոյսերուն հետ միասին, իմաստուն կոյսերն ալ թմրեցան ու քնացան: Ինչո՞ւ արդեօք: Յիսուս ի՞նչ կ'ուզէ սորվեցնել մեզի: Ան կ'ուզէ սորվեցնել մեզի, որ նոյնիսկ անոնք որոնք Աստուծով իմաստուն դարձած են՝ անոնք եւս ենթակայ են թմրելու: Անհաւատին նման հաւատացեալ մարդն ալ ենթակայ է փորձութեանց դիմաց ընկրկումներ արձանագրելու, բայց կարեւորը այդ ընկրկումը չվերածուի նահանջի ու տապալումի:

Նայինք առաքեալներու կեանքին: Անոնք եւս որոշ հոգեւոր թմրութենէ կամ փորձութենէ անցան. ոմանք զինք լքեցին, ուրիշ մը ուրացաւ, ուրիշ մը մատնեց, եւ այս բոլորը իր յարութենէն առաջ պատահեցան: Քրիստոսի յարութենէն ետք նաեւ կը տեսնենք փորձութեան ներկայութիւնը առաքեալներու կեանքին մէջ: Անոնցմէ ոմանք կասկածով մօտեցան իրեն, ուրիշներ վերադարձան իրենց նախկին գործերուն: Առաքեալները շարունակեցին տատանումներ արձանագրել մինչեւ որ Քրիստոսի յարութեան լոյսը առաւել զօրեղ կերպով ներթափանցեց իրենց մէջ եւ վերյայտնեց ամէն բան որ Քրիստոս իրենց սորվեցուցած էր երկրաւոր իր կեանքի օրերուն, եւ մինչեւ որ Սուրբ Հոգին հետզհետէ աւելի զօրեղ կերպով իրենց կեանքին ու մտքին մէջ բացայայտեց նշմարտութիւնը: Այդ ձեւով է որ առաքեալները կրցան աստիճանաբար յաղթահարել իրենց վախկոտութեան:

Բայց հարցը միայն առաքեալները չեն: Ճիշդ է որ Քրիստոս առաջին հերթին իր նախագգուշացումը անոնց կ'ուղղէ, բայց անոնց ընդմէջէն նաեւ բոլորին: Երբ կը նայինք եկեղեցւոյ կեանքին՝ առաջին դարէն սկսեալ մինչեւ մեր օրերը, կը տեսնենք որ նոյնիսկ իմաստունները, այլ իսոսքով՝ ընտրեալները, ենթակայ եղած են

փորձութիւններու: Ատիկա գիտեմք ո՛չ միայն սուրբերու կենսագրութեան, այլ նաեւ Քրիստոսի նախագգուշացումներէն որ ան կատարեց Յայտնութեան գիրքին մէջ:

Հոն կը կարդանք որ Չարը պիտի փորձէ նոյնիսկ ընտրեալները մոլորեցնել: Ան մոլորեցուց օրինակի համար Դեմասը (Բ.Տմ 4.10), Հիմենէոսն ու Ալեքսանդրոսը (Ա.Տմ 1.19-20), Նիկողայոսը (Յյտ 2.6), եւ ուրիշներ, որոնք սկզբնական շրջանին Պօղոս առաքեալին գործակիցներն էին, բայց ժամանակի ընթացքին ինկան սիւս վարդապետութեանց մէջ: Քրիստոս այս առակով կ'ազդարարէ բոլորը, ինչպէս նաեւ իմաստութեան հասած հաւատացեալը, որ երբեք զգուշաւորութիւնը ձեռքէ չհանեն: Այնքան ատեն երբ այս աշխարհի մէջ ենք, ներկայ կեանքի պայմաններու մէջ ենք, մնայուն կերպով պայքարի զէնքերը մեր վրայ պէտք է ունենանք եւ երբեք զանոնք ձեռքէ չձգենք:

4.- Մեր ուշադրութեան պէտք է վրիպի որ թէպէտ տասը կոյսերը բոլորն ալ կը թմրին, բայց միայն հինգ յիմար կոյսերուն ձեթն է որ կը սպառի: Իմաստուն կոյսերը թէեւ կը թմրին բայց իրենց ձեթը չ'ըսպառիր: Ի՞նչ ցոյց կու տայ այս իրողութիւնը: Իմաստունները արդար մարդիկն են: Արդար մարդիկը իրենք եւս կրնան տկարացումներ արձանագրել, բայց իրենց հաւատքը բնաւ չեն կորսնցնիր: Սողոմոն կ'ըսէ. «Արդարը թէեւ եօթը անգամ ալ իյնայ՝ պիտի կանգնի» (Առ 24.16): Որոշ մեկնիչներ կ'ըսեն թէ յիմար կոյսերը կեղծաւոր քրիստոնեաներն են, այլ խօսքով, անոնք են՝ որոնք կը ձեւացնեն որ հաւատք ունին, բայց խորքին մէջ չունին, եւ ճիշդ անոր համար ալ, երբ հաւատքի հիմնադիրը՝ Քրիստոս յայտնուի, հանդէս պիտի գայ որ իսկական ձեթ, այլ խօսքով՝ անաղարտ հաւատք չունին անոնք, եւ ուստի դուրս պիտի մնան արքայարանէն:

«Կէս գիշերին կանչ մը լսուեցաւ.- "Ահա փեսան կու գայ, գայն դիմաւորելու ելէ՛ք"» (Մտ 25.6): Քանի մը մատնանշումներ.-

1.- «Կէս գիշերին» բառերով Յիսուս ըսել չ'ուզեր թէ իր գալուստը կէս գիշերին կամ գիշեր ատեն պիտի պատահի: Տիրոջ ըսել ուզածը այն է, որ իր գալուստեան ժամանակը մեր չսպասած ու չակնկալած պահուն տեղի պիտի ունենայ: Յիսուս մնայուն կերպով շեշտեց որ իր գալուստը անակնկալ կերպով պիտի պատահի:

2.- «Կէս գիշերին» բառերը նաեւ կը պարզեն որ Տիրոջ գալուստեան ժամանակը անորոշ ու անձանօթ է մեզի համար: Ինչպէս գիշերուայ մութը իր մէջ շատ մը բաներու ինքնութիւնը կը ծածկէ, այնպէս ալ «կէս գիշերին» բառերը իրենց մէջ կը ծածկեն Յիսուսի գալուստեան ժամանակը:

3.- «Կէս գիշերին» բառերը հաւանաբար նաեւ կը յուշեն մեզի որ իւրաքանչիւր հաւատացեալ անժուն պէտք է հսկէ իր հոգիի փրկութեան համար: Քրիստոսի հետեւորդ անհատը պէտք է ապրի աղօթական կեանք մը, որպէսզի չըլլայ «գիշերի» գաւակ, այլ՝ լոյսի գաւակ, ցերեկի գաւակ:

4.- «Ահա փեսան կու գայ»: Այս բառերը նաեւ կը պարզեն որ Տիրոջ երկրորդ գալուստը անխուսափելիօրէն տեղի պիտի ունենայ, ինչ որ վերեւ ըսինք:

5.- Վերջապէս, «ահա փեսան կու գայ» բառերը ցոյց կու տան որ Փեսային գալստեան ժամանակը որոշուած է, բայց մեզի համար այդ ժամանակը անորոշ է եւ անորոշ պիտի մնայ:

«Կոյսերը արթնցան եւ սկսան իրենց լապտերները կարգի դնել: Յիմար կոյսերը իմաստուններուն ըսին.- "Ձեր ձեռքէն քիչ մը մեզի տուէ՛ք, որովհետեւ մեր լապտերները ահա կը մարին": Իմաստուն կոյսերը պատասխանեցին.- "Ո՛չ, կրնայ ըլլալ որ մեզի եւ ձեզի չքաւէ. աւելի լաւ կ'ըլլայ որ երթա՛ք խանութպաններուն եւ ձեզի համար ձեռք գնէ՛ք"» (Մտ 25.7-9): Մեր կողմէ կատարուած որոշ յաւելումներով, յիշենք Ջարեհ Արք. Ազնաւորեանին բացատրութիւնը այս համարներուն մասին, ուր կը յիշէ չորս կէտեր.-

1.- Քանի փեսային սպասումը ակնկալուածէն շատ աւելի երկարեցաւ՝ յիմար կոյսերուն նրազները սկսան մարիլ: Իմաստուն կոյսերուն թելադրութիւնը յիմար կոյսերուն՝ երթալու եւ խանութպաններէն իրենց համար ձեռք ապահովելու, կրնար սովորական թուիլ, բայց յիշենք որ այն ատեն, ինչպէս ներկայիս, գիշերով խանութները բաց չէին ըլլար: Դիւրացնող տուեալը կ'ըլլար այն՝ որ խանութ եւ տուն միասին կամ կողք կողքի կ'ըլլային, եւ եթէ ծանօթ էր խանութպանը, ուշացումի պարագային իսկ կրնային անկէ ձեռք ապահովել, բայց կը տեսնենք որ ուշացածները չեն յաջողիր իրենց համար ձեռք ապահովել: Եւ այն պահուն որ անոնք գացեր էին ձեռք գնելու, փեսան յանկարծ եկաւ, հարսնարան մտաւ, դուռը փակուեցաւ եւ դուրսը մնացած կոյսերը լսեցին իրիստ վնիռը. «Ձեմ քանչնար ձեզ»:

2.- Իմաստուն կոյսերը յիմար կոյսերուն կը պատուիրեն խանութպաններուն երթալ որպէսզի իրենց համար ձեռք գնեն: Որո՞նք են խանութպանները: Խանութպանները Աստուծոյ իսուքը մատակարարողներն են, անոնք ըլլան առաքեալներ, հայրապետներ, վարդապետներ, մէկ իսուքով խանութպանները բոլոր անոնք են՝ որոնք Քրիստոսի հօտին հովիւներն են: Ասոնց պատասխանատուութիւնն է անհրաժեշտ եղած ձեռքը, այսինքն՝ Աստուծոյ շնորհները, փրկութեան շնորհքը, Աստուծոյ իսուքը, աստուածային նշմարտութիւնները,

հաւատքի ու սուրբ վարքի վերաբերող թելադրութիւնները, իրատր, յորդորը, այս բոլոր բաները մատակարարել հաւատացեալներուն: Այս բոլորը կը կազմեն այն ձեռքը գոր հոգեւոր հովիւները պէտք է մատակարարեն հաւատացեալներուն, որպէսզի անոնց նրազները մնայուն կերպով վառ վիճակի մէջ ըլլայ, եւ բոլորն ալ Քրիստոսի երկրորդ գալուստի ժամանակ պատրաստ վիճակի մէջ ըլլան եւ Քրիստոսի հետ միասին կարենան փրկութեան առագաստը մտնել:

3.- Յիմարները անդրադարձան որ իրենց ապահոված ձեռք անբաւարար պիտի ըլլար եւ նորին պէտք պիտի ունենային, ուստի խնդրեցին իմաստուն կոյսերէն որ իրենց ձեռք տան: Իմաստուն կոյսերը մերժեցին ձեռք տալ յիմար կոյսերուն, առարկելով որ ձեռք կրնար չբաւել իրենց եւ անոնց: Մէկուն կողմէ միւսէն ձեռք ուզելը եւ միւսներուն կողմէ մերժելը եւ ուրիշ հասցէի մը դրկելը ի՞նչ ձեւով կարելի է հասկնալ: Ձեռք բանի՞ կերպով բացատրեցինք: Ձեռք ներկայացուցինք նախ իբրեւ Աստուծոյ խօսքը, յետոյ՝ այդ խօսքէն ծնունդ առած կամ առնող հաւատքը, եւ հաւատքին արտայայտութիւնը եղող գործերը՝ Աստուծոյ շնորհով միասին: Եթէ ձեռք այս բոլորն են, հարց կու տանք թէ ի՞նչպէս յիմար կոյսերը կը յանդգնին ձեռք ուզելու իմաստուն կոյսերէն, կարելի՞ բան է:

Եթէ ձեռք ուզենք հասկնալ իբրեւ Աստուծոյ խօսքը, պարզ կը դառնայ, որովհետեւ ոեւէ մէկը կրնայ դիմել ուրիշին եւ խնդրել անկէ որ իրեն բացատրէ Աստուծոյ խօսքը: Հաւատքի մասին քարոզելը եւ Աստուծոյ շնորհները մատակարարելը թէպէտ եկեղեցիին կոչումն է, բայց Աստուծոյ խօսքը ուրիշին բացատրելը միայն եկեղեցականներուն պարտականութիւնը չէ, այլ՝ իւրաքանչիւր իմաստուն քրիստոնեայի պարտականութիւնը:

Ձեռք հոս աւելի կը ներկայացնէ հաւատքը, փրկութեան ձրի շնորհքը, եւ առաքինութիւնները, ինչպէս նաեւ անոնցմով ապահովուած փրկութիւնը: Նման բաներ արդեօք ուրիշին կրնա՞նք փոխանցել: Ո՛չ, եւ ինչո՞ւ ոչ: Որովհետեւ ասոնք բաներ են որ մարդս ի՛նք պէտք է ջանայ անեցնել ինքնիր մէջ: Ահա թէ ինչո՞ւ հինգ յիմար կոյսերը «խանութեաններուն» երթալով չեն կրնար «ձեռք» ձեռք ձգել: Չեն կրնար՝ որովհետեւ հաւատքով մեր ձեռք ձգած փրկութիւնը մենք չենք կրնար ուրիշին փոխանցել, տփնութեամբ մեր ձեռք ձգած առաքինութիւնները անկարելի է որ ուրիշին փոխանցուին: Մենք կրնանք Աստուծոյ խօսքը ուրիշին բացատրել ու փոխանցել, բայց այդ խօսքէն ծնունդ առնող հաւատքը անփոխանցելի է: Ունկնդիրը ի՛նքն է որ հաւատքով պէտք է ընդունի Աստուծոյ խօսքը որ կրնայ իր հոգին փրկել (Յկ 1.21):

Հաւատփի սերմը կամ կայծը բոլորին սրտին մէջ նետուած է, մարդուն կը մնայ գայն անձնապէս անեցնելը:

Մեր հաւատփով ու գործերով մենք կրնանք ուրիշին օրինակ դառնալ, բայց չենք կրնար մեր հաւատփն ու գործերը ուրիշին փոխանցել: Ահա թէ ինչո՛ւ ամէն անգամ երբ Քրիստոս խօսեցաւ հատուցման մասին, շեշտեց թէ իւրաքանչիւր մարդ իր գործերուն համաձայն պիտի վարձատրուի: Իւրաքանչիւրը իր գործերուն պատասխանատուութիւնը ի՛նքն պիտի կրէ:

4.- Առակին մէջ յիմար կոյսերը կը ներկայացուին իբրեւ ուշի մնացած կոյսեր: Կարծէք Քրիստոսի նպատակն է սորվեցնել մարդուն օգտագործել իր ձեռքը եղած ժամանակը: Եւ պարզ է որ պէտք է որ պէտք է եղած ժամանակը կայ մարդուն տրամադրութեան տակ: Զմոռնանք որ բացատրուեցաւ թէ անցեալին հարսանիք մը մէկ օրով չէր աւարտեր, այլ քանի մը օրերու վրայ կը տարածուէր: Նկատի պէտք է առնել որ այն վայրկեանէն որ հարսանիքը կը յայտարարուէր, մինչեւ փեսային գալու վայրկեանը ժամանակամիջոց մը կ'ենթադրէր: Այդ ժամանակամիջոցը, քանի օր որ ըլլար ատիկա, առիթ մըն էր հարսնետրոններուն իրենց նրագները լեցնելու ձեռքով: Այդ ժամանակամիջոցը մեր ներկայ կեանքն է որ կը պատկերացնէ: Ներկայ կեանք ըսելով, կը հասկնանք արքայութեան աւետարանի յայտարարութենէն սկսեալ մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը երկարող ժամանակամիջոցը:

Եթէ մէկը ամբողջ իր կեանքի ընթացքին չկարենայ ինքզինք պատրաստել յաւիտեանականութեան համար, իր կեանքի աւարտին, երբ իր հոգին արդէն կը պահանջուի իրմէ, կրնայ ուշ ըլլալ այդ գործը ընելու համար: Այդպիսի մէկը անմիտ մըն է Քրիստոսի ակնոցով (Ղկ 12.20): Իսկ իմաստուն մարդը այն մարդն է, որ իրեն տրուած կարողութիւնները պէտք է եղած ձեւով կը շահարկէ, իրեն վստահուած հաւատփի ջանք միշտ վառ կը պահէ այն ձեռքով՝ որ առաքինութիւններն են: Այդպիսի իմաստուն մարդիկ, երբ Փեսան՝ Քրիստոս յայտնուի, իրեն հետ միասին արքայութեան հարսնարանը պիտի մտնեն, որպէսզի մասնակից դառնան հարսանեկան ուրախութեան:

Յաւելեալ քանի մը հակիրճ բացատրութիւններ եւս.-

Ի՞նչ ցոյց կու տայ կամ ի՞նչ կը պատկերացնէ հինգ կոյսերուն ձեռքին լմնալը: Այս հարցումին պատասխանը քանի մը ձեւերով կարելի է ներկայացնել.-

1.- Ձէթ՝ ՀԱԻԱՏՔՆ Է: Այս իմաստով, հինգ կոյսերը որոնց ձեռք ժամանակի ընթացքին կը լմնայ, կը պատկերացնեն այն մարդիկը՝ որոնք դարձ ունենալէ ետք, կը սկսին իրենց կեանքը ապրիլ ուղիղ հաւատփով,

բայց ժամանակի ընթացքին, անոնք կը կորսնցնեն իրենց անադարտ հաւատքի ձէքը, այլ խօսքով՝ կը շեղին նշմարիտ հաւատքէն:

2.- **Ձէթ՛Ը՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՓՐԿԱՐԱՐ ՁՐԻ ՇՆՈՐՀՔՆ Է:** Իրենց ձէքը սպառած հինգ կոյսերը կը պատկերացնեն այն մարդիկը՝ որոնք իրենց հաւատքի կեանքը ապրիլ կը սկսին Քրիստոսի շնորհքին ապաւինելով, բայց ժամանակի ընթացքին, անոնք Քրիստոսի փրկարար ճիշտ շնորհքէն աւելի, կը սկսին շեշտը դնել օրէքներու գործադրութեան վրայ: Երբ «օրէքներու գործադրութիւն» կ'ըսեմ, այս պարագայիս չեմ հասկնար Մովսիսական օրէքներու գործադրութիւնը, այլ՝ այն բարի գործերն ու արարքները գորս մարդ արարածը կը կատարէ, եւ կը կարծէ որ անոնցմով կրնայ փրկութիւն ձեռք ձգել:

3.- **Ձէթ՛Ը՝ ԱՂՕՊԹՔՆ Է:** Իրենց ձէքը սպառած հինգ կոյսերը կը պատկերացնեն այն մարդիկը՝ որոնք իրենց հաւատքի կեանքը կը սկսին աղօթքով, բայց ժամանակի ընթացքին, մանաւանդ երբ ժամանակը իրեն հետ փորձութիւններ ու դժուարին պահեր կը բերէ՝ անոնք հետզհետէ կը պաղին իրենց աղօթական կեանքին մէջ, ի վերջոյ ամբողջութեամբ դադարեցնելու համար իրենց աղօթքը, եւ այդ ձեւով, իրենց աղօթքի ձէքն է որ սպառած կ'ըլլայ:

4.- **Ձէթ՛Ը՝ ԲԱՐԻ ԳՈՐԾԵՐՆ ԵՆ:** Տակաւին, իրենց ձէքը սպառած հինգ կոյսերը կը ներկայացնեն այն մարդիկը՝ որոնք երբ տակաւին նոր դարձի եկած են Քրիստոսի, խանդավառութեամբ բարեգործութեան կը լծուին, բայց ժամանակը կը պաղեցնէ անոնց խանդավառութիւնը եւ աստիճանական կերպով կը հեռանան բարեգործութենէն, մինչեւ որ իրենց նախկին չարագործ կեանքին դառնան:

5.- **Ձէթ՛Ը՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔՆ Է, ՕՐԷՆՔՆ Է:** Վերջապէս, իրենց ձէքը սպառած հինգ կոյսերը կրնան նաեւ ներկայացնել այն մարդիկը՝ որոնք սկզբնապէս երբ դարձի կու գան, կը նուիրուին Աստուծոյ խօսքին, կը կարդան ու կը փորձեն գործադրել զայն, բայց որովհետեւ իրենց մարդկային ոյժերուն կը վստահին Աստուծոյ խօսքին ու կամքին գործադրութիւնը, ատիկա պատճառ կ'ըլլայ որ հետզհետէ վհատին եւ տեղի տան:

Վերջին բացատրութիւն մը «խանութեան» բառին վերաբերեալ: Բացատրուեցաւ որ խանութեանը կրնայ ըլլալ ոեւէ հաւատացեալ անձ՝ աշխարհական թէ եկեղեցական, որ պատրաստ պէտք է ըլլայ «Աստուծոյ շնորհքները, փրկութեան շնորհքը, Աստուծոյ խօսքը, աստուածային նշմարութիւնները, հաւատքի ու սուրբ վարքի վերաբերող թելադրութիւնները, խրատը, յորդորը, այս բոլոր բաները մատակարարել հաւատացեալներուն»:

Այսօրուան հասկացողութեամբ, ի՞նչ է իսանութեանին պարտականութիւնը մեզի հանդէպ եւ ի՞նչ է մեր պարտաւորութիւնը իրեն հանդէպ: Այս երկու հարցումներուն պատասխանը գտնելը կարեւոր է, որովհետեւ ատիկա կապ ունի մեր քրիստոնէական կեանքին հետ: Խանութեան մը միշտ պէտք է պատրաստ ըլլայ գոհացնելու եւ հայթայթելու իրեն դիմող անձերուն կարիքները, եւ որպէսզի կարենայ գոհացնել, պէտք է անհրաժեշտ եղած բոլոր ապրանքները խոյր ունենայ: Իսկ գնող մարդուն պարտաւորութիւնն է, վնարել պէտք գումարը որպէսզի կարենայ ուզածը ձեռք ձգել: Այս նշմարտութիւնը հոգեւոր իմաստով մը հասկնալը դիւրին է: Առաջին, յետէ հաւատացեալ ո՛չ միայն պատրաստ պէտք է ըլլայ փոխանցելու ուրիշին Աստուծոյ խօսքը եւ գայն առաջնորդելու փրկութեան շնորհիքին, այլեւ անհրաժեշտ եղած կարողութիւնը պէտք է ունենայ այդ գործը յաջողապէս ընելու: Եւ երկրորդ, Աստուծոյ բացուիլ ուզող եւ Քրիստոսի հաւատքը ընդգրկել ուզող յետէ մարդ, պատրաստ պէտք է ըլլայ անհրաժեշտ եղած գումարը վնարելու, այլ խօսքով՝ պէտք է որպէսզի գոհողութիւնը յանձն առնելու: Քրիստոսի հետեւիլը՝ գոհողութիւն կ'ենթադրէ: Ան որ կը վախճայ գոհողութիւններ կատարելու՝ չի կրնար բաժին ունենալ երկնաւոր Զոհիկն՝ Քրիստոսի հետ:

«Երբ անոնք ձեռք գնելու գացին, փեսան եկաւ, եւ պատրաստ եղողները փեսայի հետ հարսանիքի մտան, եւ դուռը գոցուեցաւ: Քիչ ետք եկան միւս կոյսերը եւ ըսին.՝ "Տէ՛ր, Տէ՛ր, դուռը բա՛ց մեզի": Փեսան պատասխանեց.՝ "Իսկապէս որ չեմ գտնուիր ձեզ"» (Մտ 25.10-12): Քանի մը մատնանշուշմեր.՝

1.- «Երբ անոնք ձեռք գնելու գացին, փեսան եկաւ»: Հինգ յիմար կոյսերը տնտնացին եւ ձեռք գնելու աշխատանքը յետաձգեցին, բայց երբ որոշեցին երթալ եւ ձեռք գնել, արդէն շատ ուշ էր, որովհետեւ փեսան եկաւ, հարսնարան մտաւ եւ «դուռը գոցուեցաւ»: Հոսկէ կը սորվինք, թէ պէտք է ձգձգել ու յետաձգել մեր փրկութեան գործը հետապնդելու աշխատանքը: Ոմանք ծերութեան տարիներուն կը սպասեն ապաշխարելու համար: Եւ սակայն, պէտք է յիշել որ մենք ո՛չ թէ ծերութեան տարիներուն, այլ նոյնիսկ վաղուան տէրը չենք: Վաղուան տէրը՝ Տէրը ի՛նքն է: Ուստի, մեր յոյսը չկապենք բանի մը որուն տէրը չենք:

2.- «Պատրաստ եղողները փեսայի հետ հարսանիքի մտան»: Աստուծոյ արքայութիւնը կը ներկայացուի իբրեւ հարսնարան մը որ լի է ուրախութեամբ, եւ ուր մուտք պիտի գործեն բոլոր սպասողները եւ պատրաստ եղողները միայն: Բնագիրը կը հաստատէ որ երբ փեսան

եկաւ «պատրաստ եղողները փեսային հետ հարսանիքի մտան» (Մտ 25.10): Այս բառերը մնայուն կերպով պատրաստ վիճակի մէջ ըլլալու անհրաժեշտութիւնն է որ կը բացայայտեն: Պատրաստ եղողները միայն արքայութիւնը պիտի ժողանգեն երբ Արքան յայտնուի: Անպատրաստ մարդը արքայութենէն ներս գործ պիտի չունենայ:

3.- «Դուռը գուցուեցաւ»: Արքայութեան դուռը որ գոցուի՝ ալ չի բացուիր: Անշուշտ արքայութիւնը նիւթական դուռ պիտի չունենայ: «Դուռը գուցուեցաւ» բացատրութիւնը, պարզապէս ցոյց կու տայ որ ան որ չէ ապաշխարած՝ պիտի չկրնայ փառութիւն ձեռք ձգել եւ արքայութիւն մտնել: Այս նշմարտութիւնը գորեղ շեշտուածութեամբ մը արձանագրուած կը գտնենք աղֆատ Ղազարոսի առակին մէջ: Աբրահամ մեծահարուստին կ'ըսէ. «Գիտցի՛ր... որ մեծ անդունդ մը կայ մեր եւ ձեր միջեւ: Եթէ ուզեն այստեղէն ձեր մօտ անցնիլ՝ չեն կրնար, եւ ոչ ալ մէկը հոնկէ մեր մօտ կրնայ գալ» (Ղկ 16.26):

4.- «Քիչ ետք եկան միւս կոյսերը»: Հաստատեցինք որ հինգ յիմար կոյսերը կրնան ներկայացնել հրեաները, բայց ընդհանուր բացատրութեամբ մը, կարելի է ըսել որ անոնք կը ներկայացնեն բոլոր այն մարդիկը՝ որոնք կոչուած են Քրիստոսի, բայց Քրիստոսով փրկութեան պատմութեանը չեն առած իրենց վրայ: Այն մարդիկը կրնան ըլլալ սուտ ուսուցիչներ, մարգարէներ, պատասխանատու անձեր, կամ ոեւէ պարզ քրիստոնեայ:

5.- «Եւ ըսին. "Տէ՛ր, Տէ՛ր, դուռը բա՛ց մեզի"»: Հինգ յիմար կոյսերը որոնք վերադարձան առանց ձեռքի, աղաչեցին որ փեսան բանայ անոնց հարսնետան դուռը, բայց փեսան չբացաւ: Ասիկա պէտք է մեզի յիշեցնէ թէ դժոխք նետուող մարդոց աղաչանքը, լացն ու կոծը, ողբն ու աղաղակը՝ անլսելի պիտի մնան եւ ո՛չ մէկ օգուտ պիտի ընեն:

6.- «Փեսան պատասխանեց.-- "Իսկապէս որ չեմ ֆանջնար ձեզ"»: Զարեհ Սրբազանը կ'ըսէ. «Անոնք որոնք Փեսային գալստեան ժամանակ անպատրաստ վիճակի մէջ պիտի ըլլան, անոնք Քրիստոսէ պիտի լսեն «չեմ ֆանջնար ձեզ» խօսքը: Քրիստոս չ'ուզեր որ մեր ֆանաչողութիւնը իր անձին նկատմամբ ըլլայ տեսական ֆանաչողութիւն: Կարելորդ գործով ցոյց տալն է որ կը ֆանջնանք զՔրիստոս: Ես կրնամ իմ երկրիս նախագահը իբրեւ նախագահ ֆանջնալ անունով եւ մականունով, բայց եթէ զինք իբրեւ նախագահ չեմ ընդունիր եւ չեմ յարգեր՝ ի՞նչ իմաստով ան կրնայ նախագահ ըլլալ կեանքիս մէջ:

Ճիշդ նոյնն է հաւատքի մարզին մէջ: Յակոբոս առաքեալ կ'ըսէ. «Դուք կը հաւատաս թէ մէկ Աստուած կայ, չէ՞. շատ լաւ կ'ընես: Բայց դեւերն ալ նոյն բանին կը հաւատան, եւ կը սարսափին: Հետեւաբար

հասկցի՛ր, անմիտ մարդ, որ առանց գործերու՝ հաւատքը անօգուտ է» (Յկ 2.19-20): Գործով արտայայտուած հաւատքն է որ հաւատքը կենդանի՝ հաւատք կը դարձնէ: ԶԱստուած ֆանչնալ, կը նշանակէ գայն ընդունիլ իբրեւ Տէր եւ կատարել անոր կամքը: Եթէ սա՛ է նշմարութիւնը, իմաստուն ըլլալու չափանիշը մեզի համար կը դառնայ յստակ:

Այս կոյսերը որոնք չեն ֆանչցուիր Փեսային կողմէ, կրնան ներկայացնել ժամանակներու աւարտին՝ նեղութեան օրերուն ապրելիք Եբրայեցի ժողովուրդը, կամ անոր պատասխանատուները, կրնան ներկայացնել սուտ առաքեալները, կամ հովիւները քրիստոնէական եկեղեցւոյ, եւ կամ կրնան ներկայացնել ոեւէ քրիստոնեայ անձ մը, որ միայն անունով ֆանչցաւ գՔրիստոս, բայց գործնականին մէջ հետեւորդ չեղաւ անոր իր գործով: Նոյնը հրեայ ժողովուրդին համար կարելի է ըսել: Անոնք որոնք գիտէին որ Աստուած իրենց պիտի դրկէր Օծեալ մը, եւ այդ Օծեալը իրենց փրկութիւն պիտի բերէր, եւ սակայն մերժեցին ընդունիլ գայն, անոնք է որ Քրիստոսէ պիտի լսեն. «Զեմ ֆանչնար ձեզ» խօսքը»:

«Ապա Յիսուս եզրակացուց.– "Ուրեմն՝ արթո՛ւն մնացէ՛ք, որովհետեւ չէ՛ք գիտեր Մարդու Որդիին գալուստն ո՛չ օրը եւ ո՛չ ալ ժամը"» (Մտ 25.13):

Կ'եզրակացնեմ Զարեհ Սրբագանին խօսքով. «Այս առակին բուն նպատակը արթուն մնալու անհրաժեշտութիւնը շեշտելն է, բայց յատկապէս ցոյց տալն է մեզի, որ Քրիստոսի երկրորդ գալուստը կրնայ ուշանալ: Աստուած չ'ուզեր որ իր Որդիին գալուստեան նշգրիտ ժամանակը գիտնանք, բայց կ'ուզէ որ մնայուն կերպով պատրաստ վիճակի մէջ ըլլանք»:

Աստուած չ'յայտնեց մեզի իր Որդիին գալուստեան ժամանակը որպէսզի առաջին առած ըլլայ մարդկային թուլութեան մը: Առնենք դասերու պատրաստութեան օրինակը: Երբոր գիտենք որ վաղը կամ միւս օր դպրոց չկայ, այսօր չենք ուզեր նստիլ եւ դաս պատրաստել. առ հասարակ կը սպասենք վերջին իրիկուան մեր դասերը պատրաստելու համար: Աստուած շատ լաւ գիտէ մարդկային այս տրամադրութիւնը կամ մտածողութիւնը: Անոր համար է որ չ'յայտնեց իր գալուստին նշգրիտ օրը կամ ժամը, որպէսզի մենք զմեզ մնայուն կերպով պատրաստ վիճակի մէջ պահենք»:

ԱՆՆԵՐՈՂ ԾԱՌԱՅԻՆ ԱՌԱԿԸ

«Այն ատեն Պետրոս մօտեցաւ Յիսուսի եւ հարցուց.- "Տէ՛ր, քանի՞ անգամ եթէ եղբայրս մեղանչէ ինձի դէմ՝ պէտք է ներեմ իրեն. մինչեւ եօ՞թը անգամ":

Յիսուս պատասխանեց.-

Ոչ թէ եօթը անգամ, այլ եօթանասուն անգամ եօթը: Որովհետեւ երկինքի արքայութիւնը կը նմանի հետեւեալին.-

Թագաւոր մը կար, որ ուզեց իր ծառաներուն հաշիւները քննել: Եւ երբ հաշուեքննութեան սկսաւ, իրեն բերին պարտապան մը, որ միլիոնաւոր ոսկի պարտք ունէր: Եւ քանի վնարեւու կարողութիւն չունէր, տէրը հրամայեց որ գայն իր կնոջ եւ զաւակներուն հետ որպէս ստրուկ ծախեն, ինչպէս նաեւ ունեցածը վաճառեն եւ պարտքը վնարեն: Ծառան թագաւորին ոտներուն ինկաւ եւ աղաչեց՝ ըսելով.- "Համբերէ եւ ժամանակ տուր ինձի, եւ ես բոլորը կը վնարեմ քեզի": Ծառային տէրը գթաց եւ պարտքը շնորհելով՝ դրկեց զինք:

Հագիւ ծառան դուրս ելաւ, գտաւ իր ծառայակիցներէն մէկը, որ չնչին գումար մը պարտական էր իրեն: Անոր կոկորդէն բռնելով կը խեղդէր գայն ու կ'ըսէր.- "Պարտք վնարէ ինձի": Ծառայակիցը ոտներուն ինկաւ եւ աղաչեց՝ ըսելով.- "Համբերէ եւ ժամանակ տուր ինձի, եւ ես պարտքս կը վնարեմ": Բայց անիկա չուզեց լսել: Ընդհակառակը, գնաց եւ բանտ նետել տուաւ գայն՝ մինչեւ որ պարտքը վնարէ:

Երբ միւս ծառաները պատահածը տեսան, շատ նեղուեցան եւ եկան ու իրենց տիրոջ պատմեցին ինչ որ պատահեցաւ: Այն ատեն տէրը կանչեց այդ ծառան եւ ըսաւ.- "Ձա՛ր ծառայ, ամբողջ պարտքերդ շնորհեցի քեզի, որովհետեւ աղաչեցիք ինձի: Պէտք չէ՞ր որ դուն ալ ողորմէիր ընկերոջդ, ինչպէս որ ես քեզի ողորմեցայ": Եւ տէրը բարկանալով՝ դահիճներուն յանձնեց գայն, որպէսզի պատժեն, մինչեւ որ վնարէ իր բոլոր պարտքերը:

Ապա Յիսուս աւելցուց.-

Ահա նոյն ձեւով իմ երկնաւոր Հայրս պիտի վարուի ձեզի հետ, եթէ ձեզմէ իւրաքանչիւրը սրտանց չներէ իր եղբօր՝ անոր յանցանքները» (Մտ 18.21-35):

Սոյն առակով, Յիսուսի հիմնական նպատակը մեզի սորվեցնելն է որ Աստուծոյ կողմէ մեր ստացած ներումին փոխարէն, մենք ալ մեր կարգին պէտք է ներենք մեր նմաններուն:

«Այն աստե՛ն Պետրոս մօտեցաւ Յիսուսի եւ հարցուց.– "Տէ՛ր, քանի՞ անգամ եթէ եղբայրս մեղանչէ ինձի դէմ՝ պէտք է ներեմ իրեն. մինչեւ եօ՞թը անգամ"» (Մտ 18.21): Քանի մը հաստատումներ.–

1.– Պետրոս առաքեալ հարցում մը հարցուց Յիսուսի եւ Յիսուս այս առակը պատմեց իբրեւ պատասխան Պետրոսի հարցումին: Առաքեալ ի՞նչ բանէ դրդուած այս հարցումը հարցուց Յիսուսի: Երկու իրողութիւններ կան որոնք այս հարցումին ծագման առիթ իբրեւ կը ներկայացուին.–

ա.– Քրիստոսի ժամանակակից ուսուցանելին որ եթէ հաւատակից մը կամ ազգակից մը երկու անգամ մեղանչէր իր նմանին դէմ եւ երկու անգամ ալ գոջար եւ ներում խնդրէր՝ անձը որուն դէմ մեղքը գործուեցաւ պարտաւոր էր ներել անոր: Երրորդ անգամ մեղանչելու եւ ներում խնդրելու պարագային՝ կրնար ներում չչնորհուիլ: Թերեւս Պետրոս առաքեալ ուսուցումին շիտակ ըլլալը ստուգելու համար էր որ յիշեալ հարցումը մէջտեղ դրաւ:

բ.– Հաւանաբար նաեւ ան լսած էր Քրիստոսէ մէկ օրուան մէջ եօթն անգամ մեղանչող եղբօր ներելուն մասին (Ղկ 17.4), եւ հիմա կը մօտենար անոր հարցնելու եւ գիտնալու համար թէ արդեօք միայն եօթն անգամ պէտք է ներել մեղանչող եղբօր, թէ՛ անելի: Պէտք չէ մոռնալ որ եօթը անգամ ներելու հասկացողութիւնն ու պատուէրը Հին Կտակարանէն կու գայ մեզի, թէպէտ անուղղակիօրէն: Օրինակ, յիշեցէք որ երբ Կայէն սպաննեց Աբելը, սկսաւ մտահոգուիլ թէ զինք տեսնողը պիտի սպաննէր զինք: Աստուած զինք իր այս մտահոգութենէն ազատագրելու համար, ըսաւ. «Ուրեմն ով որ Կայէնը սպաննէ, անկէ եօթնապատիկ վրէժ առնուի» (Մճ 4.14-15): Իսկ քիչ մը անդին կը կարդանք. «Եթէ Կայէնին համար եօթնապատիկ վրէժ առնուի, Ղամէֆին համար ալ եօթանասունեօթն անգամ» (Մճ 4.24): Եթէ երբեք տուեալ երկու համարները կը խօսին եօթը կամ եօթանասունեօթը անգամ վրէժ առնելու մասին, կը խօսին անոր համար որ մարդուն պարտաւորութիւնն է ներելու ո՛չ միայն եօթը անգամ, այլեւ՝ եօթանասունեօթը անգամ: Ըսել ուզուածը այն է՝ որ Օրէնքը կը թելադրէ եօթը անգամ ներել եւ եթէ երբեք մարդը Օրէնքին չհնազանդի եօթը անգամ ներելով իր նմանին, այդ պարագային եօթը անգամ վրէժ պիտի առնուի անկէ:

2.- Ցոյց տալէ ետք թէ եօթը կամ եօթանասունեօթը անգամ ներելու հասկացողութիւնը ուրկէ յառաջ եկած է, կարելոր է նաեւ հաստատել, թէ ո՛չ եօթը անգամ ներելը եւ ո՛չ ալ եօթանասունեօթը անգամ ներելը տառացիօրէն պէտք է հասկնալ: Երբայական մտածողութեան մէջ 7 թիւը ինչպէս նաեւ 70 թիւը կատարելութիւն եւ ամբողջականութիւն կը խորհրդանշեն: Հետեւաբար, 7, 70, կամ 77 անգամ ներել, պարզապէս կը նշանակէ կատարելապէս ներել, ամբողջապէս ներել:

Պէտք է մոռնանք որ իւրաքանչիւր ազգ կամ ժողովուրդ իր կեանքին մէջ ունի յատուկ թիւեր որոնք ընդհանրապէս խորհրդանշական իմաստ ունին, եւ հետեւաբար, տառացի կերպով չենք հասկնար գանձնք: Օրինակ.- Միջին Արեւելքի ժողովուրդներուն մօտ 10 կամ 1000 թիւերը խորհրդանշական թիւեր են: Երբ հայր մը իր որդիին ըսէ. «Նդաւ հագար անգամ կ'ըսեմ քեզի...», կամ՝ «Տասը անգամ իրեն ըսի...»: մենք այստեղ գործածուած 10 կամ 1000 թիւերը բառացիօրէն չենք հասկնար: Յստակ է որ «Տասը անգամ իրեն ըսի» արտայայտութիւնը, պարզապէս կը նշանակէ որ «Բազմաթիւ անգամներ իրեն ըսի»:

3.- «Տէ՛ր, քանի՞ անգամ եթէ եղբայրս մեղանչէ ինձի դէմ՝ պէտք է ներեմ իրեն. մինչեւ եօթը անգամ»: Հոս բառ մը կայ որ մեր ուշադրութենէն պէտք է խուսափի: Այդ բառը «եղբայրս» բառն է: Օտար կամ թշնամի եղող մէկու մը մասին չէ խօսքը, այլ՝ եղբօր մը մասին: Ո՞վ է կամ որո՞նք են արդեօք այն եղբայրները կամ քոյրերը որոնց պէտք է ներել: Առաջին հերթին, անոնք մեր հաւատակիցներն են, եկեղեցւոյ անդամներն են, այլ խօսքով՝ Քրիստոսի մարմինին անդամներն են:

Այս իրողութիւնը կրնանք ստոյգ գիտնալ եթէ երբեք մեր աչքին առջեւ ունենանք նոյն այս գլխուն 15-17 համարները որոնք կ'ըսեն. «Եթէ եղբայրդ քեզի դէմ մեղանչէ, գնա յանդիմանէ զայն, երբ որ երկուքդ առանձին էք: Եթէ մտիկ ընէ քեզի՝ եղբայրդ շահած կ'ըլլաս: Իսկ եթէ մտիկ չընէ քեզի՝ հետդ մէկ կամ երկու հոգի եւս առ, որպէսզի "երկու կամ երեք վկաներու բերնով հաստատուի ամէն ամբաստանութիւն": Իսկ եթէ անոնց ալ մտիկ չընէ՝ բոլոր հաւատացեալներուն ներկայութեան ըսէ, եւ եթէ անոնց ալ մտիկ չընէ՝ զինք նկատէ հեթանոս մը կամ մաքաւոր մը»: Վերջին այս համարը ոեւէ կասկած չի ձգեր որ «եղբայրս» բառը կը վերաբերի մեր հաւատակից եղբայրներուն ու քոյրերուն: Քրիստոս կը սպասէ որ բոլոր մարդիկ, բայց մանաւանդ իր հետեւորդները անհուն ներողամտութիւն ցուցաբերեն իրարու նկատմամբ:

4.- Հպանցիկ կերպով անդրադառնամ վերջին կետի մը: Երբեմն մարդիկ կը հարցնեն. «Միայն Յիսուս չէ՞ որ մեղքերը կը ներէ: Մենք իրաւունք ունինք ներելու իրար մեղքերը»: Այո՛, իրաւունք ունինք եւ պէ՛տք է ներենք: Երկու բառեր կան որոնք տարբեր են իրարմէ՝ «ֆաւութիւն» եւ «ներում»: Մեղքերու ֆաւութիւն շնորհելը միայն Յիսուս կրնայ ընել եւ զայն կը շնորհէ իր արիւնով, բայց ներելը՝ ամէն մարդ կրնայ ներել: Քանի կը վշտացնենք իրար՝ պէ՛տք է ներենք իրար, բայց մեղքերը ֆաւելը, այլ խօսքով՝ սրբելը, մաքրելը՝ Քրիստոսի բաժինն է:

«Յիսուս պատասխանեց. "Ոչ թէ եօթը անգամ, այլ եօթանասուն անգամ եօթը"» (Մտ 18.22):

Ի՞նչ ըսել ուզեց Յիսուս տուեալ իր այս խօսքով: $7 \times 70 = 490$: Խօսքը 490 թիւին մասին չէ բնականօրէն: Տեսանք որ Հին Կտակարանը, այլ խօսքով՝ Օրէնքը ինք, կը պատուիրէ եօթը անգամ ներել: Այս իմաստով, 7 թիւը Օրէնքի խորհրդանիշ է: Ուստի երբ Քրիստոս «եօթանասուն անգամ եօթը» ներել կը պատուիրէ, սա ուրիշ բան ցոյց չի տար եթէ ոչ Օրէնքը Աստուծոյ Շնորհքով փոխարինելու ֆայլ մը: Քրիստոսի ուսուցածը այն է, որ Շնորհքի գաւակ դարձած մէկը պէտք է դադրի Օրէնքի տառին ստրուկը ըլլալէ եւ պատրաստ ըլլայ անսահման ներողամտութեան կեանք մը ապրելու:

«Որովհետեւ երկինքի արքայութիւնը կը նմանի հետեւեալին» (Մտ 18.23):

Քրիստոս հաստատել է ետք թէ «եօթանասուն անգամ եօթը» պէտք է ներել, այլ խօսքով՝ անսահման եւ մնայուն ներողամտութիւն ցուցաբերել, անմիջապէս կ'աւելցնէ ըսելով. «Որովհետեւ երկինքի արքայութիւնը կը նմանի հետեւեալին»: Այստեղ «երկինքի արքայութիւն» ըսելով, կը հասկնանք նոյնիման երկինքի Արքան, որովհետեւ Արքան՝ Քրիստոս, ի՛նքն էր եւ ի՛նքն է որ անհունապէս ներեց ու կը շարունակէ ներել մարդոց: Մեզմէ ոեւէ մէկը որ կ'ուզէ երկինքի Արքային գաւակ դառնալ եւ ժառանգորդ անոր արքայութեան, պարտի ներել իր նմանը միշտ այնպէս՝ ինչպէս Քրիստոս ինք ներեց մեզ, ֆաւելով մեր մեղքերը:

«Թագաւոր մը կար, որ ուզեց իր ծառաներուն հաշիւները փննել» (Մտ 18.23): Քանի մը մատնանշումներ. –

1.– Նախ ըսենք, որ անցեալին թագաւոր կը կոչուէր ո՛չ միայն երկրի մը գերագոյն իշխողը, այլ նաեւ թագաւոր կը կոչուէին այն նախարարները կամ այն իշխանները, որոնք իրենց շրջաններուն մէջ կը ներկայանային բացարձակ իշխանութեամբ:

2.- Ո՞վ կը ներկայացնէ հոս յիշուած թագաւորը եւ որո՞նք են ծառաները: Թագաւորը Քրիստոս ինքն է, իսկ ծառաները՝ մարդիկը իրենք: Առհասարակ «ծառայ» բնորոշումը մեզի մտածել կու տայ անոնց մասին որոնք գուրկ են իրենց սեփական կամքը ի գործ դնելու կարելիութենէն: Երբեմն նոյնիսկ «ծառայ» բնորոշումին ետին մենք կը կարդանք ստրուկ հասկացողութիւնը:

Ջարեհ Ա.բ. Բ. Ազնաւորեան խօսելով այս համարին մասին, կ'ըսէ. «Ծառայ բացատրութիւնը առհասարակ մեզի մտածել կու տայ սպասաւորներու մասին: Այստեղ սակայն, ծառայ բառը, քանի թագաւորը շրջապատողներուն մասին է, պէտք է հասկնալ այն պալատականներուն կամ ազնուականներուն համար, որոնք անմիջականօրէն թագաւորին շուրջը կը գտնուին, իր խորհրդականներն են, իր գործակիցներն են: Յիշեմք նաեւ ուրիշ բան մը: Բնագիրը կը հաստատէ թէ ծառաներէն մէկը միլիոնաւոր ոսկի պարտք ունէր թագաւորին վրայ: Եթէ այդ ծառան ստրուկ մը կամ սպասաւոր մը ըլլար, կարելի՞ է երեւակայել որ թագաւոր մը իր մէկ ստրուկին կամ սպասաւորին այդպիսի մեծ գումար մը տար: Ո՛չ: Յստակ է հետեւաբար, որ հոս յիշուած ծառան թագաւորին վստահութիւնը վայելող մարդոցմէ է, եւ կամ իր օգնականներէն մէկն է»:

3.- Այլ մեկնիչներ կը հաստատեն թէ այստեղ «ծառայ» բացատրութիւնը կը գործածուի մարդուն համար, ցոյց տալու համար որ ան մեղաւոր մըն է, եւ կարօտ՝ Քրիստոսապարգեւ ներումին: Այս իմաստով, այստեղ ծառան մեղքի ծառան է: Քրիստոս կ'ըսէ. «Ով որ մեղք կը գործէ՝ ծառայ է մեղքին» (Յհ 8.34):

4.- Կրնանք ըսել նաեւ որ Քրիստոս մարդուն համար կը գործածէ «ծառայ» բացատրութիւնը, յիշեցնելու համար մեզի որ մենք իր արեան գինն ենք: Յիշեմք որ անցեալին ոեւէ հարուստ մարդ կրնար դրամով մարդ մը գնել. եւ այդ գնուած մարդը կը կորսնցնէր իր ազատ կամ սեփական կամքը, եւ կը դառնար զինք գնող մարդուն ծառան, կը դառնար անոր սեփականութիւնը: Արդ, Ինչպէս հարուստի մը կողմէ դրամով գնուած մարդը կը դադրէր իր սեփական կեանքն ու կամքը ունենալէ եւ կը դառնար հարուստին ծառան եւ սեփականութիւնը, այնպէս ալ Քրիստոսի արիւնով գնուած մարդիկը, կը դադրին իրենց սեփական կամքին հետապնդիչները ըլլալէ եւ կը դառնան Քրիստոսի կամակատարները, կը դառնան իր սեփականութիւնը, իր իրաւունքը, իր ծառաները: Յիշեմք նաեւ որ դրամով գնուած ծառային հետ՝ անոր տէրը ուզածին պէս կրնար վերաբերիլ: Ահա նոյնպէս ալ, Յիսուս մեզ իր արիւնով գնած է, եւ իրաւունքն ունի իր ուզածին պէս վերաբերելու մեր

հետ: Ասիկա կ'ըսեմ, որովհետեւ շատ հաւատացեալներ եւ Քրիստոսի նուիրուած մարդիկ կան, որոնք իրե՛նք կ'ուզեն որոշել թէ ի՛նչ պիտի ընեն եւ ի՛նչ պիտի չընեն, թէ ո՛ւր պիտի երթան առաքելութեան եւ ո՛ւր պիտի չերթան: Սխալ է այսպէս ընելը: Այո՛, սխալ է: Քրիստոս ի՛նք պէտք է որոշէ մեր ընելիքը, ի՛նք պէտք է որոշէ մեր առաքելութեան դաշտը, մեր առաքելութեան ժամանակը: Ուր որ Քրիստոս մեզ կը դրկէ՝ հո՛ն պէտք է երթանք, եւ ո՛չ թէ ուր որ մենք կը սիրենք կամ կը նախասիրենք: Յիշեցէ՛ք որ երբ Յիսուս երեւցաւ Սաւուղին եւ Սաւուղ գետին ինկաւ, Յիսուս անոր ըսաւ. «Ոտքի՛ ել եւ քաղաք մտիր. հոն քեզի պիտի ըսուի ինչ որ պիտի ընես» (Գրծ 9.6): Այս բառերը մեզի կը սորվեցնեն թէ երբ մէկը դարձի գայ Յիսուսի՝ այլեւս Յիսուս ի՛նք իրեն պիտի ըսէ իր ընելիքը, իր երթալիք տեղը, իր կատարելիք գործը:

5.- «Ծառայ» բառը մենք առհասարակ կը գործածենք մէկու մը համար որ ծառայութեան մը, պարտականութեան մը կանչուած է: Հետեւաբար, մարդուն համար գործածուած «ծառայ» բառը, բոլոր իմաստներուն կողմէն, նաեւ մեզի կը յիշեցնէ որ մարդ արարածը Աստուծոյ կողմէ իրեն յանձնուած գործ մը, ծառայութիւն մը, աշխատանք մը ունի կատարելիք:

6.- «Ուզեց իր ծառաներուն հաշիւները քննել»: Այս բառերը կը պարզեն որ իւրաքանչիւր մարդ հաշուետու է Աստուծոյ: Ամէն մարդ որ գոյութեան կու գայ, Աստուծոյ ծառայելու համար է որ կու գայ: Իսկ Աստուծոյ ծառայել, կը նշանակէ աշխատիլ իր կամքը կատարելով իր թագաւորութիւնը հաստատել երկրի վրայ, մարդոց կեանքին մէջ:

«Եւ երբ հաշուեքնութեան սկսաւ, իրեն բերին պարտապան մը, որ միլիոնաւոր ոսկի պարտք ունէր» (Մտ 18.24): Քանի մը նշումներ.–

1.- «Եւ երբ հաշուեքնութեան սկսաւ»: Տուեալ բառերով, Յիսուս կը յիշեցնէ մեզի թէ ի՛նքն է որ պիտի որոշէ հաշուեքնութեան ժամանակը: Միշտ պատրաստ պէտք է ըլլալ, քանի որ եւ ատեն կրնայ հաշուեքնութեան ժամանակը սկսիլ: Ոմանք հաշուեքնութեան կը կանչուին իրենց երկրաւոր կեանքի ընթացքին, իսկ ուրիշներ մահէն ետք եւ դատաստանին օրը հաշուեքնութեան պիտի կանչուին: Ըսել կ'ուզեմ, թէ ոմանք իրենց ըրածին փոխարէն՝ աշխարհի՛ մէջ իրենց հատուցումը կը ստանան, եւ ոմանք ալ՝ դատաստանին օրը պիտի ստանան:

2.- «Իրեն բերին»: Ամէն մարդ Յիսուսի՛ պիտի բերուի: Մա՛րդ պիտի չկրնայ ազատիլ կամ ծածկուիլ Յիսուսի հայեացքէն: Յիսուսի զաւակը երբ բերուի Յիսուսի՝ ուրախութեամբ կու գայ, իսկ մէկը որ Յիսուսի զաւակը չէ՝ չ'ուզեր բերուիլ Յիսուսի ներկայութեան:

3.- «Պարտապան մը»: Որոշ է որ պարտապանը մարդ արարածը ինքն է: Մեղքը մարդը պարտապան կը դարձնէ Քրիստոսի նկատմամբ: Մեղքը պարտք մըն է որ մարդը պարտաւոր է վնարելու Աստուծոյ:

4.- «Որ միլիոնաւոր ոսկի պարտք ունէր»: Ի՞նչ ցոյց կու տայ «միլիոնաւոր» բացատրութիւնը: «Միլիոնաւոր» բառը առաջին հերթին ցոյց կու տայ մարդուն գործած մեղքերուն շատութիւնը, մեծութիւնը, սեւաւորութիւնը: Յիշեմք որ բնագիրին մէջ «միլիոնաւոր ոսկի» բառերուն փոխարէն ունինք՝ «տասը հազար տաղանդ» բացատրութիւնը: Դադրոս Մալդի կը հաստատէ թէ 10 թիւը կը ներկայացնէ տասը պատուիրանները, իսկ 1000 թիւը կը ներկայացնէ՝ յաւիտենականութիւնը: Այս իմաստով, 10.000 ըսելով, կը հասկնանք այն մարդիկը, որոնք կտրած են տասը պատուիրանները, եւ այդ ձեւով, յաւիտենապէս պարտապան դարձած են Աստուծոյ ներկայութեան:

Սուրբ Օգոստինոս կ'ըսէ. «Ամբողջ Օրէնքը տրուեցաւ տասը պատուիրաններու միջոցաւ, ուստի, "տասը հազար տաղանդ" բացատրութիւնը կը խորհրդանշէ բոլոր այն մեղքերը գորս գործուած են ընդդէմ Աստուծոյ Օրէնքին»:

5.- «Միլիոնաւոր» բառը, նաեւ ու մանաւանդ, կը յիշեցնէ այն՝ որ Աստուծոյ դէմ մարդուն գործած մեղքը չափ ու սահման չունի: Աստուած անհունօրէն մեծ է, եւ ուստի իր դէմ գործուած մեղքը բնականօրէն կ'ըլլայ անհունօրէն մեծ: Աստուած անսահման ըլլալով՝ իրեն դէմ գործուած մեղքն ալ անսահման կ'ըլլայ:

Մեղքը այնքան մեծ կը նկատուի՝ որքան անձը ինք՝ որուն դէմ մեղքը կը գործուի, մեծ է: Օրինակ, թագաւորի մը դէմ մեղք գործողը եւ պարզ մարդու մը դէմ մեղք գործողը նո՞յն պատիժին ենթակայ են: Բնականօրէն ո՛չ: Ահա նոյնն է պարագան Աստուծոյ դէմ մեղք գործելուն: Պարտքերը կը յիշուին իբրեւ «միլիոնաւոր» որովհետեւ պարտատէրը Աստուած ի՛նքն է: Նոյն մեղքերը եթէ գործուած ըլլային մեր նմանին դէմ անոնք պիտի չ'որակուէին իբրեւ «միլիոնաւոր», այլ՝ իբրեւ «չնչին»:

Մեր այս ըսածը կը փաստէ նոյնինքն առակը: Քիչ ետք երբ հասնինք 28-րդ համարին պիտի տեսնենք որ մարդու մը կողմէ ուրիշ մարդու մը դէմ գործուած մեղքը կ'որակուի կամ կը նկատուի «չնչին»: Հետեւաբար, Աստուծոյ եւ մարդուն դէմ մեղք գործելը նոյն բաները չեն: Հեղի քահանան խօսքը ուղղելով իր որդիներուն, կ'ըսէ. «Եթէ մարդ մը մարդու դէմ մեղք գործէ, անոր դատաստանը Աստուած կը կտրէ. բայց եթէ մարդ մը Տիրոջը դէմ մեղք գործէ, անոր համար ո՞վ աղաչանք պիտի ընէ»: (Ա.ԹՊ 2.25): Այս համարը եւս ուրիշ բան ցոյց չի տար եթէ ոչ այն՝

որ տարբեր բան է Աստուծոյ դէմ մեղք գործելը, եւ տարբեր բան՝ մարդուն դէմ մեղք գործելը:

«Եւ քանի վնարելու կարողութիւն չունէր, տէրը հրամայեց որ գայն իր կնոջ եւ գաւակներուն հետ որպէս ստրուկ ծախեն, ինչպէս նաեւ ունեցածը վաճառեն եւ պարտքը վնարեն» (Մտ 18.25): Քանի մը մատնանշումներ.–

1.– Ի՞նչ պարտքի մասին է խօսքը: Մեղքի պարտքին մասին է խօսքը: «Վնարելու կարողութիւն չունէր» բացատրութիւնը, ցոյց կու տայ թէ մարդ արարածը իր սեփական ֆիզով չի կրնար իր մեղքերուն պարտքէն ազատագրուիլ: Մէկը պէտք է որ անոր մեղքերուն պարտքը վնարէ: Մէկը որ իր կարգին ինքնիր վրայ պարտք ունեցող մը չըլլայ:

Ինչպէս խեղդուելու մօտ եղող մէկը չի՛ կրնար ազատել ուրիշ մը որ իր կարգին կը խեղդուի, այնպէս ալ պարտքի ստրուկ դարձած մէկը չի կրնար ազատութիւն շնորհել ուրիշ պարտապանի մը: Իսկապէս մեղքէ ազատ եղող մը միայն կրնայ մեզ ազատել մեղքէն: Նման անձի մը կողմէ շնորհուած ազատութիւնը՝ իրական ու վաւերական ազատութիւն կ'ըլլայ: Ահա թէ ինչո՛ւ Քրիստոս ըսաւ. «Եթէ Որդին ձեզ ազատէ, այն ատեն իրապէ՛ս ազատ պիտի ըլլաք» (Յհ 8.36):

Քրիստոս երբեք մեղք գործած չէ (Բ.Կր 5.21: Ա.Պտ 2.22): Ան ազատ է ամէն տեսակի մեղքէ, ուստի, ան կրնայ շնորհել մեզի ֆշմարիտ ազատութիւնը, որ հոգեւոր ազատութիւնն է: Մեղքի իշխանութենէն ազատած մարդը՝ հոգեւորապէս ազատ մարդ է: Մեր Փրկիչ Աստուծմէն՝ Քրիստոսէ գատ ուրիշ մէկը չի կրնար մեր մեղքերը սրբել. չի կրնար՝ ո՛չ միայն անոր համար որ միայն ի՛նք անմեղ է, այլեւ անոր համար՝ որ միայն ի՛նք իր արիւնը թափեց մեզ ազատագրելու մեր մեղքերէն: Մի՛այն Աստուծոյ Որդին կրնայ մեր մեղքերը սրբել, որովհետեւ մեր գործած բոլոր մեղքերը վերջ ի վերջոյ միայն իրեն դէմ ուղղուած կը սեպուին:

2.– «Տէրը հրամայեց»: Այս բառերը կը բացայայտեն Քրիստոսի դատաւորական հանգամանքը (Յհ 5.22-23): Բառեր՝ որոնք մեզի կը յիշեցնեն թէ Յիսուս ի՛նք պիտի արձակէ մեր դատավիճի՞ր դատաստանի օրը: Հրեշտակները իրենք Տիրոջ արձակած հրամանները ի գործ պիտի դնեն, ըլլա՛յ իր երկրորդ գալուստին, ըլլա՛յ դատաստանի օրը: Դատաստանին օրը՝ «մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի դատաստանին օրը» պիտի ըլլայ (Բ.Կր 1.14): Ատեանը ուր պիտի կանգնինք՝ Քրիստոսի՛ ատեանը պիտի ըլլայ, ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Բոլորս ալ Քրիստոսի ատեանին դիմաց պիտի կանգնինք» (Հո 14.10):

3.- «Տէրը հրամայեց որ գայն իր կնոջ եւ գաւակներուն հետ որպէս ստրուկ ծախեն, ինչպէս նաեւ ունեցածը վաճառեն եւ պարտքը վճարեն»։ Ի՞նչպէս պէտք է հասկնալ այս խօսքը։ Քանի մը ձեւերով.-

ա.- Նախ ըսեմ թէ այս խօսքը մեզ պէտք է գայթակղեցնէ, եւ մեզի այն տպաւորութիւնը պէտք է տայ որ Աստուած անգութ է մեր եւ մեր հարազատներուն հանդէպ։ Այս բառերը, ինչ որ վերեւ ըսինք, կը պարզեն մարդուն կատարեալ անյոյս վիճակը, կը պարզեն իր բացարձակ անկարողութիւնը իր սեփական միջոցներով իր պարտքերը վճարելու։ Այս բառերով կարծէք Յիսուս ըսել կ'ուզէ, որ եթէ մարդը նոյնիսկ պատրաստ ըլլայ ինքնիր անձը, իր կինը, իր գաւակները եւ իր ամբողջ ունեցածը ծախելու, դարձեալ անկարող կը մնայ վճարելու իր պարտքը Աստուծոյ։ Ո՛չ մեր անձերը գոհելով կրնանք փրկութեան հասնիլ եւ ո՛չ ալ մեր ընտանեկան պարագաները գոհելով։ Ո՛չ մենք զմեզ ծախելով կրնանք ազատութիւն ձեռք ձգել եւ ո՛չ ալ մեր ունեցուածքը վաճարելով։

բ.- Ումանք կը փորձեն տուեալ համարին վերաբերեալ տարբեր մեկնութիւն մը առաջարկել։ Անոնք հիմնուելով Մտ 10.37-39ին վրայ, որ կը պատուիրէ գՔրիստոս սիրել մեր հայրերէն ու մայրերէն աւելի, մեր գաւակներէն ու մեր անձերէն աւելի, կը հաստատեն, թէ՛ սոյն առակին մէջ յիշուած ծառան չէր յաջողած ի գործ դնելու այս պատուէրը։ Ուստի, եթէ երբեք թագաւորը կը հրամայէ ծախել զինք, իր կինը, իր գաւակները եւ իր ամբողջ ունեցուածքը, կարծէք թէ անուղղակի կերպով մեզի ըսել կ'ուզէ որ այս բաներն էին որ արգելք հանդիսացած էին այս մարդուն, կամ կրնան հանդիսանալ ոեւէ մարդուն, երկինքի արքայութենէն ներս մտնելու։ Անոր համար է որ կը հրամայուի որ այս բաները իր ձեռքէն առնուին։

գ.- Դադրոս Մալղի կ'ըսէ. «Մարդը անկարող էր իր պարտքերը վճարելու Աստուծոյ, ուստի հրահանգ տրուեցաւ որ գայն իր կնոջ եւ գաւակներուն հետ որպէս ստրուկ ծախեն, ինչպէս նաեւ ունեցածը վաճառեն եւ պարտքը վճարեն։ Պատուիրանագանցութիւնը պատճառ եղաւ որ մարդը կորսնցնէ ամէն ինչ. նախ կորսնցնէ իր անձը, այսինքն՝ իր հոգին՝ որ զրկուեցաւ իր աղբիւրէն՝ Աստուծմէ. կորսնցնէ իր "կինը", այսինքն՝ այն մարմինը զորս պէտք էր իր անձին կապուած մնար իբրեւ կին եւ հոգատար ըլլար իրեն հանդէպ, բայց այդպէս չեղաւ, ընդհակառակը, բարի մարմինը դարձաւ մեղսալից մարմին մը՝ ծանրաբեռնուած սպաննիչ ցանկութիւններով, որոնք կը ծանրաբեռնեն հոգին ու կը պղծեն միտքն ու զգայարանները։ Իսկ "գաւակները" կը ներկայացնեն բազմատեսակ պարգեւները, որոնք մեղքի պատճառով դադրեցան Աստուծոյ արդարութեան գործիքներ ըլլալէ եւ

վերածուեցան ի նպաստ Սատանային աշխատող չար գործիքներու: Իսկ "բոլոր ունեցածը" ըսելով պէտք է հասկնալ՝ իր ամբողջ ունեցուածքը, ոսկին, արծաթը, պղինձը, եւայլն, որոնք բարի բաներ էին ըստ ինքեան, բայց մարդուն չարացումով, իրենք ալ չար բնոյթ ստացան»:

դ.- «Կին»ը կը ներկայացնէ՝ չար փափաքը, որ երբ միանայ չար մարդուն, ծնունդ կու տայ զաւակներու որոնց գործերը չար կ'ըլլան: Ուստի, երբ կը պատուիրուի որ մարդը իր կնոջ հետ միասին ծախուի, խորհի մէջ կարծես իր ունեցած չար փափաքներուն եւ չար կամքին համար է որ հաշիւ կը պահանջուի իրմէ, իսկ երբ կը պատուիրուի որ զաւակները ծախուին, այս անգամ կարծես իր չար արարքներուն համար է որ հաշիւ կը պահանջուի իրմէ (սուրբ Օգոստինոս):

4.- Ծառան իր պարագաներուն եւ ունեցուածքին հետ ծախելու հարցին վերաբերեալ, վերջին եւ սակայն կարելոք բան մը եւս աւելցնենք: Անցեալին, Քրիստոսէ առաջ, սովորութիւն ու բնական երեսոյթ էր հեթանոս աշխարհին մէջ, որ մարդ մը աղքատութեան պատճառով ինքզինք ծախէր ուրիշին: Նոյնը կը գտնենք հրեաներուն կեանքին մէջ, թէեւ ոչ իբրեւ սովորութիւն, այլ՝ իբրեւ օրէնք:

Մովսէս մարգարէն կը խօսի գողութիւն ընող մարդուն մասին, եւ կը հաստատէ որ եթէ գողը իր գողցածը չվերադարձնէ կամ վերադարձնելու կարող չըլլայ՝ պէտք է ծախուի իր գողցածին համար (Ել 22.2-3): Դւ 25.39-ին մէջ կը կարդանք աղքատութեան պատճառով ինքզինք ծախող մարդուն պարագային մասին: Յիշեցէ՛ք նաեւ այն որբեւայրի կինը որ մտավախութիւնը ունէր որ իր պարտատէրը կրնար գալ եւ իր «երկու որդիները իբրեւ ծառայ» գնել (Դ.Թ.գ 4.1):

Եթէ Օրէնքին մէջ կը կարդանք ինքզինք ծախելու մասին, այդ պարագային ինչո՞ւ առակին մէջ յիշուած թագաւորը չուզեց ծախել իրեն պարտական եղող ծառան: Թագաւորը ըսինքն գՔրիստոս է որ կը ներկայացնէ: Արդ, Քրիստոս չեկաւ մարդը ծախելու, այլ եկաւ գայն գնելու, եկաւ գայն իսելու Չարին ձեռքէն եւ դարձնելու երկինք: Եթէ օրէնքը կը պահանջէր ծախել եւ Քրիստոս չծախեց, ատիկա ինքնին ցոյց կու տայ որ Քրիստոս եկաւ օրէնքը իր շնորհով փոխարինելու:

«Ծառան թագաւորին ոտքերուն ինկաւ եւ աղաչեց՝ ըսելով. "Համբերէ եւ ժամանակ տուր ինծի, եւ ես բոլորը կը վնարեմ քեզի": Ծառային տէրը գթաց եւ պարտքը շնորհելով՝ դրկեց զինք» (Մտ 18.26-27): Քանի մը նշումներ. -

1.- «Ծառան թագաւորին ոտքերուն ինկաւ եւ աղաչեց»: Այո՛, ամէն մարդ երկինքի ու երկրի թագաւորին՝ Քրիստոսի ոտքերուն պէտք է իյնայ եւ փառութիւն, ներում ու փրկութիւն խնդրէ: Պօղոս առաքեալ

կ'ըսէ թէ ամէն մարդ ծունկի պիտի գայ Յիսուսի առջեւ եւ պիտի խոստովանի անոր «Տէր» ըլլալը (Փլլայ 2.10-11): Սիրելի՛ ընթերցող, դուն չե՞ս ուզեր իյնալ Յիսուսի ոտքերուն առջեւ եւ մեղքերուդ համար քաղցիւն աղաչել: Լաւ գիտցիր որ եթէ հիմա կամովին ծունկի չեկար իր առջեւ, դատաստանին օրը՝ կամֆէդ անկախ ծունկի պիտի գաս, կամ աւելի միշդ՝ ծունկի պիտի բերուիս:

2.- «Համբերէ եւ ժամանակ տուր ինձի, եւ ես բոլորը կը վնարեմ քեզի»: Ծառան թագաւորէն խնդրեց համբերութիւն եւ ժամանակ եւ խոստացաւ իր բոլոր պարտքերը վնարել: Թագաւորը համբերութիւն ցուցաբերելու եւ ժամանակ տալու փոխարէն, ծառային պարտքերը ամբողջութեամբ շնորհեց եւ դրկեց զինք: Ի՞նչ կը սորվեցնէ մեզի այս իրողութիւնը Քրիստոսի վերաբերմունքին մասին: Ինչո՞ւ Քրիստոս մարդուն նկատմամբ համբերութիւն ցուցաբերելու եւ անոր ժամանակ տալու փոխարէն, նախըտրեց պարտքը շնորհել եւ ազատ արձակել զայն: Քրիստոս չուզեց համբերութիւն ցուցաբերել մարդուն նկատմամբ, կամ ժամանակ տրամադրել անոր երկու պատճառով.---

ա.- Աստուած գիտէր որ համբերելով մարդուն եւ ժամանակ տալով անոր, ան պիտի չկարենար իր մեղքերէն ձերբազատիլ: Մեղքէն ձերբազատիլը Աստուծոյ կողմէ մարդուն նկատմամբ ցուցաբերուած համբերութենէն եւ անոր տրուած ժամանակէն կախեալ չէ, այլ մարդուն կողմէ Քրիստոսի արիւնին նկատմամբ տաժուած վստահութենէն կախեալ է:

բ.- Քրիստոս համբերութիւն ցուցաբերելու եւ ժամանակ տալու փոխարէն նախըտրեց պարտքը շնորհել եւ ազատ արձակել մարդը, որպէսզի իր կողմէ շնորհուած ներումը ամբողջապէս առանց պայմանի եղած ըլլայ, այլ խօսքով՝ շնորհք մը եղած ըլլայ, քանի որ կարծէք ժամանակ եւ համբերութիւն ցուցաբերելը պայման դնելու պէս բան մը պիտի ըլլար: Շնորհք մը շնորհք եղած կ'ըլլայ միայն այն ատեն երբ թողութիւնը կը տրուի առանց ոեւէ պայմանի:

3.- «Ծառային տէրը գթաց»: Այս բառերը մատնանիշ կ'ընեն այն առատ գթութիւնն ու ողորմութիւնը որ Աստուած յայտնաբերեց եւ կը յայտնաբերէ մարդուն հանդէպ: «Գթաց»: Այո՛, Յիսուս առատօրէն կը գթայ իր ծառաներուն: Բարի Սամարացիին առակին մէջ, կը տեսնենք թէ ինչպէս Բարի Սամարացին երբ տեսաւ գետին ինկած վիրաւոր մարդը՝ «գթաց անոր» (Ղկ 10.33): Ո՞վ է Բարի Սամարացին եթէ ոչ Քրիստոս ինք: Մտաբերենք անառակ որդիին առակը: Հոն եւս կը տեսնենք թէ ինչպէս անառակ որդիին հայրը որ կը պատկերացնէ մեր երկնաւոր Հայրը, երբ տեսաւ իր որդին՝ գթաց (Ղկ 15.20): Աստուծոյ

գթառատութիւնը ցոյց կու տայ որ իր բնութիւնը կատարեալ սիրով լեցուն է:

4.- «Պարտքը շնորհելով՝ դրկեց զինք»: Աստուած մարդուն միլիոնաւոր մեղքերը քանց առանց ունէ պայմանի: Եւ ո՛չ միայն քանց, այլեւ քանելէ ետք՝ ազատութիւն շնորհեց անոր: Ա՛յս է ինչ որ ցոյց կու տայ «պարտքը շնորհելով՝ դրկեց զինք» բացատրութիւնը:

Աստուած քանելէ ու ներելէ ետք մարդուն մեղքերը, անոր շնորհեց ազատ կեանք մը ապրելու իրաւունքը: «Դրկեց զինք» բացատրութիւնը, հետեւաբար, ցոյց կու տայ, որ Աստուած մարդուն մեղքերը քանելէ ետք, զայն իր մօտ չպահեց, զայն չստրկացուց, գերի չբռնեց, այլ ազատ թողուց:

Մարդը քանուելէ ետք, կոչուեցաւ իր ազատ կամեցողութեամբ հետեւելու Քրիստոսի եւ պաշտելու զԱստուած: Քրիստոս քանելէ ետք մարդուն մեղքերը, չստիպեց անոր աստուածաշտութեան կեանք մը ապրելու: Քրիստոսով իրականացաւ փրկութիւնը. այդ փրկութեան ամուր կառչած մնալը կամ այդ փրկութիւնը ուրանալը մարդուն ազատ կամքին ձգուած է:

Մարդը ազատ կամքով ստեղծուած է, եւ ուստի իր ազատ կամքով է որ Քրիստոսի պէտք է յանձնուի: Հետաքրքրական է նկատի առնել, որ մարդ Քրիստոսի յանձնուելէ ետք՝ չի՛ կորսնցնէ իր ազատ կամքի պարգեւը, ինչպէս երկրաւոր ծառայ մը իր տիրոջ յանձնուելէ ետք պիտի կորսնցնէր իր ազատ կամքը:

Քրիստոս թոյլ կու տայ որ իրեն յանձնուած հաւատացեալները շատ բան իրենց սեփական փորձառութեամբ սորվին, ատիկա ինքնին ցոյց կու տայ որ ան կը յարգէ իրեն յանձնուող մարդոց ազատ կամքը: Երկրաւոր տէրեր, յատկապէս Քրիստոսի ժամանակ, որքանով թոյլ կու տային որ իրենց ծառաները՝ իրենց սեփական փորձառութեամբ սորվէին որոշ բաներ: Երբեք:

«Հագիւ ծառան դուրս ելաւ, գտաւ իր ծառայակիցներէն մէկը, որ չնչին գումար մը պարտական էր իրեն: Անոր կոկորդէն բռնելով կը խեղդէր զայն ու կ'ըսէր. "Պարտքը վնարէ ինձի"» (Մտ 18.28): Քանի մը նշումներ. –

1.– «Հագիւ ծառան դուրս ելաւ»: Ի՞նչպէս պէտք է հասկնալ «դուրս ելաւ» բառերը: Անոնք ցոյց կու տան որ մարդը նախապէս մեղքի բանտին մէջ էր, բայց Քրիստոսով «դուրս ելաւ» այդ բանտէն: Իսկ դուն, դուրս ելա՞ծ ես մեղքի բանտէն, թէ՛ տակաւին մեղքի բանտին մէջ ես: Այդ բանտին դրան բանալին միայն Յիսուս ի՛նք ունի: Խնդրէ իրմէ որ բանայ այդ դուռը եւ քեզ ազատ արձակէ մեղքի բանտէն:

2.- Հիմա որ «դուրս ելաւ» մեղքի բանտէն, «գտաւ իր ծառայակիցներէն մէկը, որ չնչին գումար մը պարտական էր իրեն»։ Ուշագրաւ է որ Քրիստոս չ'ըսեր գտաւ իր ծառաներէն մէկը, այլ՝ իր ծառայակիցներէն մէկը։ Ի՞նչ է տարբերութիւնը ծառային ու ծառայակիցին։ Ծառան մեզի ենթակայ եղող մարդն է, մեր կամքը կատարողն է, իսկ ծառայակիցը՝ մեր գործընկերն է, մեր գործակիցն է, մեզի հաւասար եղող մարդն է, մեզի հետ հաւասար իրաւունք եւ իշխանութիւն ունեցողն է։ Մարդուն համար գործածուած «ծառայակից» բառը կը պարզէ մարդոց իրարու հաւասար ըլլալու իրողութիւնը։

3.- «Ծառայակից» բառը, միաժամանակ բացայայտ կը դարձնէ որ մենք միայն մէկ Տէր ունինք, մեր վրայ միայն մէկ Իշխող ունինք, եւ մենք բոլորս անո՛ր ենթակայ ենք, անո՛ր ծառաներն ենք։ Մարդիկ ծառայ՝ են Աստուծոյ եւ ծառայակից իրարու։

4.- Հոս «ծառայակից» բառը կրնայ նշանակել նաեւ մեղսակից, կամ պարգապէս մեղաւոր մարդ։ Եթէ երբեք մարդուն համար գործածուած «ծառայ» բնորոշումը անոր մեղաւորութեան ակնարկութիւն է, ինչպէս վերեւ բացատրեցինք, այդ պարագային, «ծառայակից» բնութագրումը պարգապէս բոլոր մարդոց հաւասարապէս մեղաւոր ըլլալն է որ կը պարզէ։

5.- Ծառան «գտաւ իր ծառայակիցներէն մէկը, որ չնչին գումար մը պարտական էր իրեն»։ 24-րդ համարին մէջ հանդիպեցանք «միլիոնաւոր ոսկի պարտք» բացատրութեան, իսկ հոս կը կարդանք «չնչին գումար մը» բառերը։ Ի՞նչ ցոյց կու տայ այս տարբերութիւնը։ Ցոյց կու տայ Աստուծոյ եւ մարդուն տարբերութիւնը։ Աստուծոյ դէմ մեղք գործելը եւ մարդուն դէմ մեղք գործելը նոյն բաները չեն։ Քրիստոս Աստուծոյ դէմ գործուած մեղքը կ'որակէ իբրեւ «միլիոնաւոր ոսկի պարտք», իսկ մարդուն դէմ գործուած մեղքը կ'որակէ իբրեւ «չնչին գումար մը»։

6.- «Անոր կոկորդէն բռնելով կը խեղդէր գայն ու կ'ըսէր. "Պարտք վճարէ ինձի"»։ Տեսէ՛ք տարբերութիւնը Քրիստոսի եւ մարդուն։ Քրիստոս անսահմանօրէն քաղցր էր մեղաւորին հանդէպ իր վերաբերմունքին մէջ, իսկ մարդը՝ անսահմանօրէն բիրտ ու անգութ էր իր նման մեղաւորին հանդէպ։

Թագաւորը ականջ տուաւ ծառային աղաչանքին, գութը շարժեցաւ եւ անոր պարտքերը շնորհեց (18.26-27), իսկ ծառան, «չուզեց լսել» իր ծառայակիցին աղաչանքին ձայնը, այլ ընդհակառակը, «գնաց եւ բանտ նետել տուաւ գայն» (18.29-30)։

Հոս հանդէս կու գայ մարդ արարածին ապերախտութիւնը եւ Աստուծոյ ողորմութեան նկատմամբ իր յայտնաբերած ուրացողական կեցուածքը: Մարդը դժբախտաբար չմտածեց իր «միլիոնաւոր պարտքերուն» մասին եւ անոնց փոխարէն Աստուծոյ կողմէ իրեն տրուած ֆաւութեան մասին, մոռցաւ եւ ուրացաւ այդ բոլորը, եւ հիմա կարծէք իր ամբողջ ուշադրութիւնը կը կեդրոնացնէր այն փոքրիկ, այն չնչին պարտքին վրայ, որ իր նմանը ունէր իրեն հանդէպ:

Եթէ Աստուած ներեց իր դէմ մեր գործած մեղքերը, մենք ինչո՞ւ չներենք մեզի դէմ գործուած մեղքերը: Եթէ Աստուած ներեց մեր «միլիոնաւոր» պարտքերը, մենք ինչո՞ւ չներենք ուրիշին «չնչին» պարտքը:

Ապերախտութիւն է չներել ուրիշը երբ մենք Քրիստոսով ֆաւած ենք մեր մեղքերը: Աստուած անտեսեց մեր պարտքերուն շատութիւնը, մենք ինչո՞ւ չանտեսենք մեր նմաններուն պարտքերը:

Ինչո՞ւ յանցապարտ նկատենք մեր նմանը երբ Աստուած մեր անպարտ ըլլալը հռչակած է Քրիստոսով:

Ինչո՞ւ մեր նմանին «կոկորդէն բռնելով» գայն կը խեղդենք, երբ Աստուած մեղքի տիղմին մէջ խեղդուածներուս դուրս բերաւ մեղքի տիղմէն եւ վերստին կեանք պարգեւեց մեզի:

Ինչո՞ւ կը մտածենք մեր իրաւունքներուն մասին եւ չենք մտածեր ուրիշներուն իրաւունքին մասին: Այդ ծառայակիցին իրաւունքը չէ՞ր ներում ստանալ իր նմանին կողմէ:

Ինչո՞ւ «տասը հազար տաղանդ»ի մեր պարտքին շնորհուելէն ետք կը դժուարանանք շնորհել մեր նմանին «հարիւր դահեկան»ը:

Ինչո՞ւ երբ Աստուած մոռցած է իրեն դէմ մեր գործած մեղքերը, մենք չենք ուզեր մոռնալ մեր նմանին մեզի դէմ գործած մեղքերը: Սուրբ Յովհաննէս Ոսկեբերան կը պատուիրէ որ բնաւ չմոռնանք մեր մեղքերը եւ կ'ըսէ. «Եթէ յիշեալ մարդը իր մտքին մէջ պահէր այն ներումը որ ստացաւ իր տիրոջ կողմէ՝ այսֆան խիստ ու բիրտ պիտի չըլլար իր ծառայակիցին հանդէպ: Մեր պատուիրանագանցութիւնները յիշելը օգտակար եւ շատ կարեւոր բան մըն է: Երբ մնայուն կերպով յիշենք մեր մեղքերը՝ մեր հոգին իմաստուն, հեզ եւ ներո՞ղ կ'ըլլայ: Ահա թէ ինչու Պօղոս առաքեալ միշտ կը յիշէր իր անցեալի մեղքերը»:

«Ծառայակիցը ոտքերուն ինկաւ եւ աղաչեց՝ ըսելով. "Համբերէ եւ ժամանակ տուր ինծի, եւ ես պարտքս կը վճարեմ": Բայց անիկա չուզեց լսել: Ընդհակառակը, գնաց եւ բանտ նետել տուաւ գայն՝ մինչեւ որ պարտքը վճարէ» (Մտ 18.29-30): Քանի մը նշումներ.–

1.- «Ծառայակիցը ոտֆերուն ինկալ»։ Երբ միլիոնաւոր պարտք ունեցող անհատը իր տիրոջ ոտֆերուն ինկալ՝ տէրը գթաց եւ պարտֆերը շնորհեց։ Բայց ահա ուրիշ մը, որ ծառայակից էր իրեն, ոտֆերուն կ'իյնայ եւ գթութիւն կը հայցէ, բայց ինք կը մերժէ գթութիւն ցուցաբերել անոր հանդէպ։ Սիրելի՛ ընթերցող, երբ Աստուածդ կը ներէ քեզի, դուն եղբօրդ պէտք չէ՞ ներես։ Քեզի նման մարդը երբ ոտֆերուդ կ'իյնայ, պէտք չէ՞ ներես։

2.- «Աղաչեց՝ ըսելով. "Համբերէ եւ ժամանակ տուր ինծի"»։ Ծառայակիցը իր պարտատիրոջմէն կը խնդրէ նոյն այն երկու բաները, որ իր պարտատէրը իր կարգին խնդրած էր թագաւորէն՝ «համբերութիւն եւ ժամանակ», եւ սակայն, պարտատէրը կը մերժէ շնորհել իր ընկերոջ այն ինչ որ ինք խնդրած ու աւելի ստացած էր իր թագաւորէն։

Արդէն իսկ բացատրեցիմք թէ ինչո՛ւ Քրիստոս-թագաւորը իր ծառային նկատմամբ համբերութիւն ցուցաբերելու եւ ժամանակ տալու փոխարէն, ուղղակի պարտքն է որ կը շնորհէ։ Մարդուն ժամանակ տալը աւելորդ էր այն իմաստով որ ամբողջ յաւիտենականութիւնը անգամ բաւարար պիտի չըլլար որ մարդը կարենար իր մեղքի պարտքը վճարել Աստուծոյ եւ իր ընթացքը փոխել։ Այս երկրորդ պարագան սակայն տարբեր է։ Տարբեր է, որովհետեւ հարցը Աստուծոյ կողմէ մարդուն տրուած ժամանակին հետ առնչուած չէ, այլ մարդուն կողմէ մարդուն տրուած ժամանակին հետ առնչուած է։ Եթէ ծառան իր ծառայակիցին նկատմամբ համբերութիւն ցուցաբերէր եւ ժամանակ տար անոր, հաւանական էր որ ան անդրադառնար իր սխալին, գոջար եւ իր ընթացքը փոխէր։

3.- «Բայց անիկա չուզեց լսել»։ Ծառան թագաւորէն խնդրեց համբերութիւն եւ ժամանակ որպէսզի կարենար իր պարտֆերը վճարել, եւ թագաւորը ո՛չ միայն անոր պարտֆերը շնորհեց, այլեւ՝ անոր ազատութիւն ալ տուաւ։ Նոյն այս ծառան հիմա ո՛չ միայն կը մերժէ համբերութիւն ցուցաբերել եւ ժամանակ տալ իր ծառայակիցին, այլեւ նոյնիսկ չ'ուզեր լսել անոր տուած կամ տալիք բացատրութիւնները։ Թագաւորը ականջ տուաւ ու լսեց իր ծառային ձայնն ու խնդրանքը, իսկ ծառան՝ մերժեց լսել ձայնն ու խնդրանքը իր ծառայակիցին։ Ասիկա ցոյց չի՞ տար թէ մարդիկ իրար հանդէպ յաճախ աւելի՛ խիստ են քան Աստուած իրենց հանդէպ։ Ինչո՞ւ երբ Աստուած կը լսէ մեր աղաչական ձայնը, մենք կը մերժենք լսել ուրիշին աղաչական ձայնը։

4.- «Ընդհակառակը, գնաց եւ բանտ նետել տուաւ գայն՝ մինչեւ որ պարտքը վճարէ»։ կը խլէ անկէ անոր ազատութիւնը՝ բանտ նետել տալով գայն «մինչեւ որ պարտքը վճարէ»։ Ի՞նչ պէտք է հասկնալ «բանտ նետել»

բացատրութեամբ: Բանտ նետելը բառացիօրէն չենք հասկնար, որովհետեւ ի՞նչպէս կրնայ իր ծառայակիցը բանտ նետել եւ անկէ ակնկալել որ իր պարտքերը վնարէ: Ձէ՞ որ բանտէն դուրս պէտք է ըլլայ որպէսզի կարենայ աշխատիլ եւ իր պարտքերը վնարել:

Բնականօրէն խօսքը նիւթական պարտքի մասին չէ: Մէկը որ գուր տեղ մեզ վշտացուցած է եւ կամ ոեւէ անիրաւութիւն գործած է մեր անձերուն նկատմամբ, ան ձեռով մը պարտական կը նկատուի մեզի հանդէպ, եւ փոխադարձաբար: Նման մէկը «բանտ նետել», պարզապէս կը նշանակէ՝ մերժել ընդունիլ դէպի մեզի երկարած հաշտութեան ձեռքը: Մեր նմանը «բանտ նետել», կը նշանակէ՝ գայն կաշկանդել, մեր յարաբերութիւնը անոր հետ անդամալուծել, հաշտութեան ամէն միջոց բնաջնջել, ինչ-ինչ գալու ամէն առիթ եւ պատեհութիւն մէջտեղէն վերցնել:

Բայց երբ կը մերժենք հաշտուիլ մեզ վշտացնողին հետ, լա՛ւ գիտնանք, որ, ո՛չ միայն զի՛նք կաշկանդումի մատնած կ'ըլլանք, այլեւ՝ մենք զմեզ: Ինչո՞ւ: Որովհետեւ, ամէն անգամ երբ տեսնենք զինք մեր նամբուն վրայ՝ պիտի ուզենք կամ պիտի փորձենք փոխել մեր նամբան: Ամէն անգամ երբ մեր դիմաց ելլէ՝ մեր երեսը պիտի դարձնենք: Ամէն անգամ երբ աչք-աչքի գանք՝ չտեսնել պիտի ձեւացնենք: Ամէն անգամ երբ իր նիւթը բացուի կամ անունը լսենք՝ անհանգիստ պիտի ըլլանք: Ամէն անգամ երբ տեղ մը երթանք կամ տեղ մը հրաւիրուինք եւ ինք հոն է՝ պիտի կորսնցնենք մեր խաղաղութիւնը: Այս բոլորը ցոյց չե՞ն տար, որ չներելը՝ թունաւորել ու թունաւորուիլ է, կաշկանդել ու կաշկանդուիլ է, նեղացնել ու նեղացուիլ է:

Այո՛, չներող մարդը, ուրիշին ազատութիւնը կորսնցնելէ առաջ, նախ ի՛նք կը կորսնցնէ իր ազատութիւնը: Աւելի լաւ չէ՞ ներել ու ազատ արձակուիլ: Ներելը՝ ազատ արձակելու արարք մը ըլլալէ առաջ, նախ ազատ արձակուիլ է: Ներող մարդը՝ նախ ի՛նք կը վայելէ իր շնորհած ներումին պտուղը, որ խաղաղութեան պտուղն է, ազատութեան պտուղն է:

5.- Մեկնութեան ուրիշ ձեւ մըն ալ կայ որ հաւանաբար պէտք է յիշել: Ոմանք կ'ըսեն թէ հոս «բանտ նետել» կը նշանակէ ենթական խիստ նեղութեան մատնել: Եւ այդ նեղութիւնն է որ պարտքերու վնարում կրնայ նկատուիլ: Կարծէք մեզի նեղացնողին նեղութեան մատնելը կամ մեզի անիրաւութիւն ընողին անիրաւութիւն ընելը՝ մեր պարտքին խլումն է անոր ձեռքէն: Ան երբ մեր կողմէ նեղութեան մատնուի իր պարտքն է որ վնարած կ'ըլլայ: Ահա այս իմաստով պէտք է հասկնալ «մինչեւ որ պարտքը վնարէ» խօսքը: Այս մեկնութիւնը կրնայ խրտչեցնել

ումանց, որովհետեւ հոն կայ մարդկային վերաբերմունք մը որ ամբողջութեամբ հակառակ է քրիստոնէական ոգիին եւ Սուրբ Գիրքի ուսուցման, բայց պէտք է մոռնանք որ մենք արդէն իսկ կը խօսինք ծառայի մը մասին որ լիովին հեռո՛ւ է քրիստոնէական ոգիէն ու ամբողջովին դատարկուած Աստուծոյ սէրէն: Աշխարհի մարդոց յատուկ բան չէ՞ նեղի բերել զիրենք նեղացնողները: Իրենց յատուկ չէ՞ չարչարել իրենց կամքին ընդդիմացնողները: Որքա՛ն յանախ կը պատահի որ աշխարհի մարդիկ, խեղճն ու տկարը, որքն ու աղքատը, անտէրն ու անպաշտպանը բանտ կը նետեն, այլ խօսքով՝ կը նեղացնեն, կը չարչարեն, կը յոգնեցնեն:

«Երբ միւս ծառաները պատահածը տեսան, շատ նեղուեցան եւ եկան ու իրենց տիրոջ պատմեցին ինչ որ պատահեցաւ» (Մտ 18.31):
Քանի մը նշումներ.–

1.– Որո՞նք են հոս յիշուած ծառաները որոնք եկան իրենց տիրոջ եւ պատմեցին պատահածին մասին: Երկու մեկնութիւններ առաջարկուած են իբրեւ պատասխան.–

ա.– Ըստ կարգ մը մեկնիչներու այս առակին 23–30 համարները կը վերաբերին Քրիստոսի առաջին գալուստին, իսկ 31–34 համարները կը վերաբերին Քրիստոսի երկրորդ գալուստին: Անոնք որոնք այս կարծիքին են, այստեղ յիշուած ծառաները ակնարկութիւն կը նկատեն հրեշտակներուն: Մեկնիչներու այս խումբին համաձայն, Քրիստոսի երկրորդ գալուստեան ժամանակ հրեշտակներ գրկուածներուն եւ անիրաւուածներուն բողոքն ու աղաղակը պիտի հասցնեն ու ներկայացնեն Քրիստոսի, եւ ա՛յս է որ ցոյց կու տայ «եկան ու իրենց տիրոջ պատմեցին ինչ որ պատահեցաւ» խօսքը: Հրեշտակներուն կողմէ Տիրոջ ներկայացուած գանգատը բամբասանքի կամ գրպարտութեան բնոյթ չունի, այլ՝ արդար ընդվզումի բնոյթ:

բ.– Ըստ երկրորդ մեկնութեան, հոս յիշուած ծառաները արդար մարդիկն են, Աստուծոյ մարդիկը, հաւատքի մարդիկը, անոնք ըլլան ննջած թէ կենդանի: Թէ՛ զինուորագրեալ եկեղեցիին պատկանող հաւատացեալները եւ թէ՛ յաղթական եկեղեցիին պատկանող հաւատացեալները, արդարութիւն կը պահանջեն իրաւագրկուածներուն համար: Անոնք արդարութիւն կը պահանջեն իրենց հաւատակից բոլոր այն եղբայրներուն ու քոյրերուն համար, որոնք ամէն օր աշխարհիս չորս կողմը կը տանջուին, կը հալածուին, անիրաւ տեղ բանտերը կը նետուին եւ նոյնիսկ սրամահ կ'ըլլան:

Արդարութիւն պահանջողները միայն ապրող հաւատացեալները չեն, այլ նաեւ ննջող հաւատացեալները, ինչպէս ըսինք: Յայտնութեան

գիրքին մէջ կը կարդանք. «Երբ Գառնուկը հինգերորդ կնիքը բացաւ, զոհասեղանին տակ տեսայ հոգիները այն բոլոր մարդոց, որոնք սպաննուած էին Աստուծոյ խօսքին իրենց հաւատարմութեան եւ տուած վկայութեան համար, անոնք բարձրաձայն կ'ըսէին "Մինչեւ ե՞րբ պիտի սպասես, սուրբ եւ նշմարիտ Տէր, ե՞րբ պիտի դատես երկրի բնակիչները եւ մեր արեան վրէժը լուծես անոնցմէ": Եւ անոնցմէ իւրաքանչիւրին մեքմակ պարեգօտ մը տրուեցաւ եւ անոնց ըսուեցաւ՝ որ կարն ժամանակ մը եւս հանգիստ ընեն, մինչեւ որ ամբողջանայ թիւը իրենց ծառայակիցներուն եւ եղբայրներուն, որոնք իրենց նման պիտի սպաննուին» (Յիտ 6.9-11):

Ուշագրաւ է 11-րդ համարին մէջ արձանագրուած «ծառայակից» բառը: Առակը գոր կ'ուսումնասիրենք դարձեալ «ծառայակից» բառն է որ կը գործածէ անիրաւուած ծառային համար: Երկու պարագաներուն ալ Քրիստոսի ծառաներն են որ արդարութիւն կը խնդրեն իրենց մէկ ծառայակիցին կրած անիրաւութիւնը տեսնելով:

2.- «Շատ նեղուեցան»: Այս բառերը կը պարզեն որ Աստուծոյ նշմարիտ գաւակները կը նեղուին պատահող չարիքներուն ու բռնութիւններուն համար: Իսկական քրիստոնեայ մարդը չ'ուրախանար չարիքի համար: Պօղոս առաքեալ խօսելով սէր ունեցող մարդուն մասին կը հաստատէ, թէ ան «անիրաւութեան վրայ չ'ուրախանար, այլ՝ ուրախակից կ'ըլլայ նշմարտութեան» (Ա.Կր 13.6): Աշխարհի մարդը սակայն, կ'ուրախանայ երբ իր շուրջ կը տեսնէ չարագործութիւններ:

3.- «Եկան ու իրենց տիրոջ պատմեցին ինչ որ պատահեցաւ»: Այսօր շատ քիչ կը գտնենք մարդիկ որոնք ամենայն անկեղծութեամբ պատմեն ինչ որ պատահած է, ինչ որ տեսան կամ լսեցին: Ընդհանրապէս մարդիկ կը պատմեն ու կը խօսին իրենց չտեսածին ու չլսածին մասին, եւ այն ալ մեծ համարձակութեամբ: Կամ նոյնիսկ եթէ պիտի պատմեն իրենց տեսածին ու լսածին մասին, երբեք չեն քաշուիր նշմարտութիւնը խեղաթիւրելէ եւ սուտը իբրեւ իրական ներկայացնելէ: Վա՛յ այն մարդուն որ սուտ կը խօսի նշմարիտին մասին: Վա՛յ այն մարդուն որ կեղծաւորաբար կ'արտայայտուի հաւատքի անկեղծ կեանք ապրողներուն մասին: Աստուծոյ իրական գաւակը իր տեսածէն ու լսածէն զատ ուրիշ բան պէտք չէ պատմէ: Ան հաստատումներ պէտք չէ կատարէ եւ ո՛չ ալ դիրք բռնէ մէկու մը նկատմամբ, հիմնուելով այսինչ կամ այնինչ մարդուն խօսքին վրայ:

4.- «Պատմեցին ինչ որ պատահեցաւ»: Այո՛, «պատմեցին ինչ որ պատահեցաւ» եւ ո՛չ թէ ինչ որ սո՛ւտ է: Այս բառերը կը պարզեն որ ո՛չ ոք կրնայ սո՛ւտ բան պատմել Յիսուսի: Յիսուս ամէն բան գիտէ, ուստի

իրենն ունի բան պատմողը՝ պետք է անդրադառնայ որ ինք ամենագետ Աստուծոյ դիմաց կանգնած է:

«Այն ատեն տէրը կանչեց այդ ծառան եւ ըսաւ. "Չա՛ր ծառայ, ամբողջ պարտքերդ շնորհեցի քեզի, որովհետեւ աղաչեցիր ինձի: Պէտք չէ՞ր որ դուն ալ ողորմէիր ընկերոջդ, ինչպէս որ ես քեզի ողորմեցայ» (Մտ 18.32-33): Քանի մը նշումներ.–

1.– «Այն ատեն տէրը կանչեց այդ ծառան»: Սա բառերը կը յիշեցնեն մեզի թէ ամէն մարդ հաշուետուութեան պիտի կանչուի Տիրոջ կողմէ, ինչպէս անիրաւ տնտեսին առակն իսկ ցոյց կու տայ (Ղկ 16.2): Ան որ ներում կը ստանայ Տիրոջ կողմէ բայց չի ներեր՝ հաշիւ պիտի տայ Տիրոջ:

2.– «Չա՛ր ծառայ» բացատրութիւնը ցոյց կու տայ որ չներելը Քրիստոսի հայեացքով չարութիւն է: Աններողամտութիւնը Աստուծոյ կողմէ կը դիտուի իբրեւ չարիք մը մարդուն կողմէ, մարդուն ուղղուած: Ան որ Քրիստոսի կողմէ քաղութիւն կը ստանայ իր մեղքերուն եւ յանցանքներուն համար եւ Աստուծոյ թագաւորութեան անդամ կը դառնայ, պէտք է իր կարգին ներում շնորհէ իր դէմ յանցանք գործողներուն:

3.– «Ամբողջ պարտքերդ շնորհեցի քեզի»: Այս հաստատումը ցոյց կու տայ որ Քրիստոսի կողմէ շնորհուած մեղքերու թողութիւնը ամբողջական ու կատարեալ էր: Ամբողջական ու կատարեալ էր, որովհետեւ ան չներեց միայն անցեալին մէջ մեր գործած մեղքերը, այլեւ՝ ներեց ներկայ ժամանակին մէջ մեր գործած մեղքերը, եւ ներեց նոյնիսկ այն մեղքերը գորս ապագային պիտի գործենք:

4.– «Որովհետեւ աղաչեցիր ինձի»: Ահաւասիկ բառեր, որոնք ցոյց կու տան թէ ունի մարդ որ կ'աղաչէ Տիրոջ որ ներում շնորհէ իրեն՝ Տէրը կը ներէ: Ներում աղաչող մարդուն աղաչանքը՝ անպատասխան չի մնար:

5.– «Պէտք չէ՞ր որ դուն ալ ողորմէիր ընկերոջդ, ինչպէս որ ես քեզի ողորմեցայ»: Աստուած իր ողորմութեամբ փրկուածներէս կը սպասէ ողորմութիւն ցուցաբերել այլոց հանդէպ: Ուշագրաւ է որ ներում շնորհելը՝ ողորմութիւն տալու կը նմանցուի: Ինչո՞ւ: Որովհետեւ ներելը՝ ողորմիլ է, իսկ չներելը՝ անողորմութիւն է, անգթութիւն է:

Ունի անհատ որ վայելած է Յիսուսի ներումը՝ պէտք է ողորմած սիրտ ու կարեկցող հոգի ունենայ: Ա՛յս է որ Յիսուս կը սպասէ մեզմէ: Անողորմ սիրտ մը չի կրնար ներել: Անկարեկից հոգի մը չի կրնար ներել:

Ան որ չի ներեր՝ ապացուցած կ'ըլլայ թէ ինք երբեք ալ ներում չէ ստացած իր մեղքերուն համար: Ներուած մարդը՝ ուրախութեամբ կը ներէ, սիրով կը ներէ, սրտով կը ներէ, մի՛շտ կը ներէ:

6.- «Ինչպէս որ ես քեզի ողորմեցայ»: Ինչո՞ւ փոխանակ ըսուի. «Ինչպէս որ ես քեզի ներեցի», կ'ըսուի՝ «Ինչպէս որ ես քեզի ողորմեցայ»: Այլ խօսքով, ինչո՞ւ Քրիստոս ներելը՝ ողորմիլ կը սեպէ: Որպէսզի ցոյց տայ թէ մենք Աստուծոյ ողորմութեամբ փրկուեցանք: Փրկութիւնը՝ այո՛ շնորհք է, այո՛ ձրի է, այո՛ պարգեւ է, բայց այս բոլորը ըլլալէ առաջ եւ վեր՝ ողորմութիւն է: Թէ՛ շնորհուած փրկութիւնը եւ թէ՛ պարգեւուած յաւիտենական կեանքը՝ Աստուծոյ ողորմութեան ու ողորմած ըլլալուն հետեւանքն է:

7.- «Ինչպէս որ ես քեզի ողորմեցայ»: Տակաւին ըսելիք կայ այս բաներուն վերաբերեալ: Տուեալ բաներով, Յիսուս ըսել կ'ուզէ, թէ ինչպէս որ ես քեզի ողորմեցայ՝ նոյնպէս ալ դուն պէտք է նմանիդ ողորմիս: Արդ, Յիսուս ի՞նչպէս մեզի ողորմեցաւ: Ողորմեցաւ անհունօրէն եւ առանց պայմանի: Իսկ մենք ի՞նչպէս պէտք է ողորմինք մեր նմաններուն: Պէտք է ողորմինք անհունօրէն եւ առանց պայմանի:

Մեզմէ ակնկալուածը այն է, որ մենք ներենք մեր նմաններուն, ներենք անհունօրէն, ներենք անսահմանօրէն, ներենք առանց պայմանի: Այս նոյն գլխարկութիւնը արտացոլացուած կը գտնենք Կղ 3:13-ին մէջ որ կ'ըսէ. «Իրարու հանդէպ հանդուրժող եղէք, եւ ներեցէք իրարու՝ երբ մէկը միւսին դէմ տրտունջ մը ունենաք: Ինչպէս Աստուած Քրիստոսի միջոցաւ ներեց ձեզի, այնպէս ալ դուք իրարու ներեցէք»:

Աստուած Քրիստոսի միջոցաւ ինչպիսի՞ ներում մը շնորհեց մեզի: Ներեց յաւիտենապէս, ներեց առանց պայմանի եւ ակնկալութեան: Ահա այսպիսի՞ ներում մըն է որ Աստուած կը սպասէ որ յայտնաբերենք մեր նմաններուն նկատմամբ: Ոեւէ մարդ որ Քրիստոսի միջոցաւ Աստուծոյ թագաւորութեան անդամ կը դառնայ, պէտք է այդ անսահման ու յաւիտենական ներողամտութեան ցամբան որդեգրէ:

8.- «Պէտք չէ՞ր որ դուն ալ ողորմէիր ընկերոջդ, ինչպէս որ ես քեզի ողորմեցայ»: Այս համարին մասին բաւական խօսուեցաւ արդէն, բայց հոս բառ մը կայ որուն վերաբերեալ երկու խօսք անհրաժեշտ է ըսել: Այդ բառը «ընկերոջդ» բառն է: Հետաքրքրական է որ թագաւորը այստեղ «ծառայակից» բառին փոխարէն կը գործածէ «ընկեր» բառը: Հոս բան մը կայ որ մեր ուշադրութենէն պէտք չէ վրիպի:

28-րդ համարին մէջ պարտական մարդը կը կոչուի «ծառայակից», 33-րդ համարին մէջ կը կոչուի «ընկեր», իսկ 35-րդ համարին մէջ՝ «եղբայր»: Սոյն երեք տարբեր բնութագրումները կը սորվեցնեն

հաւատացեալներուն որ անոնք իրենց նմանները պէտք է նկատեն թէ՛ իրենց ծառայակից, թէ՛ ընկեր եւ թէ՛ եղբայր: Կարծէք ըսել ուզուածը այն է, որ մենք Աստուծմէ մեր ստացած առաքելութեան ու կոչումին մէջ իրարու ծառայակից ենք, այդ առաքելութիւնն ու կոչումը ի գործ դնելու համար մենք պէտք է սորվինք ընկերակցիլ ու գործակցիլ իրարու հետ, որպէսզի կարենանք իրականացնել տիեզերական եղբայրութիւն մը Քրիստոսով ու Քրիստոսի փառքին համար:

«Եւ տէրը բարկանալով՝ դահիճներուն յանձնեց գայն, որպէսզի պատժեն, մինչեւ որ վնարէ իր բոլոր պարտքերը» (Մտ 18.34): Քանի մը նշումներ.–

1.– «Տէրը բարկանալով»: Այս հաստատումը բացայայտ կը դարձնէ որ Քրիստոս իր գալստեան ժամանակ բարկութեամբ պիտի դատէ անհնազանդ, աններողամիտ, անմարդասէր ու անհաւատ մարդիկը: Անոր բարկութիւնը մեղքին եւ մեղքը սիրող մարդուն նկատմամբ ընդվզումի արտայայտութիւն է: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Քու կարծրութեամբդ եւ չզոջացող սրտովդ միայն բարկութիւն է որ կը դիզես քեզի համար, երբ բարկութեան օրը գայ եւ Աստուծոյ արդար դատաստանը յայտնուի» (Հռ 2.5):

2.– «Դահիճներուն յանձնեց գայն, որպէսզի պատժեն»: Որո՞նք են դահիճները որ պիտի պատժեն դժոխք նետուող անզիղջ մարդիկը: Դահիճները չար ու պիղծ ոգիները չեն, ինչպէս ոմանք կը կարծեն: Դահիճ բացատրութեան ետին մենք մարդուն խիղճն ու գիտակցութիւնն է որ պէտք է տեսնենք: Անզիղջ ու անապաշխար մարդը անգամ մը որ դժոխք նետուի, իր խիղճը որ մեղքի խարազանով լոնցուցած էր, եւ իր գիտակցութիւնը որ անօրէնութեան մուրով ու մրուրով բթացուցած ու կուրցուցած էր, պիտի արթննան, ահագանգ պիտի հնչեցնեն, բողբոջի ձայներ պիտի բարձրացնեն, եւ բռնակալ դահիճի նման գայն պիտի պատժեն ու պիտի տառապեցնեն:

3.– «Մինչեւ որ վնարէ իր բոլոր պարտքերը»: Այս բառերը առակին հաւանաբար ամենէն դժուար հասկնալի բառերն են եւ յաճախ սխալ հասկցուած ու բացատրուած են:

Տուեալ խօսքով, արդե՞օք Յիսուս ըսել կ'ուզէ թէ դժոխք նետուող մեղաւոր մարդը, ժամանակ պիտի գայ երբ դժոխքէն պիտի ելլէ եւ արքայութիւն մտնէ: Կարգ մը մարդիկ եւ նոյնիսկ կարգ մը հոսանքներ ունի՛ն այս համոզումը: Համոզում մը՝ որ կը հակասէ թէ՛ Աստուածաշունչին, թէ՛ Հայ Եկեղեցւոյ տեսակէտին, թէ՛ ուղղափառ հաւատքին, թէ՛ սուրբ հայրերու խօսքերուն, եւ թէ՛ նոյնիսկ ողջմտութեան:

Անոնք որոնք կ'ըսեն թէ ժամանակ պիտի գայ երբ դժոխք նետուած մարդը պիտի կարենայ վնարել մեղքին պարտքերը եւ դժոխքի բանտէն դուրս ելլել, հարց կու տանք անոնց.- Ի՞նչպէս կը վնարուի մեղքին պարտքը եթէ ոչ ապաշխարութեամբ: Իսկ ապաշխարութիւն կա՞յ դժոխքին մէջ: Այդպիսի օրինակ ունի՞մք Աստուածաշունչին մէջ: Մեր հայրերէն ո՞վ նման հաստատում ըրած է: Աստուածաշունչը ո՞ր կը խօսի դժոխք նետուելէ ետք՝ ձեռք ձգուելիք փրկութեան մը մասին: Քրիստոս յստակօրէն չ'ըսեր թէ դժոխքն ու արքայութիւնը ՅԱԻՏԵՆԱԿԱՆ են (Մտ 25.46: Բ.Թս 1.9: Մտ 18.8: Յդ 7: Բ.Պտ 2.17: Եւայլն): Ինչո՞ւ Քրիստոսի խօսքին հակառակ բան ըսել: Մե՞նք շիտակ ենք թէ Քրիստոս: Յովհաննէս չի՞ հաստատեր թէ գեհեմն նետուողներուն «տանջանքին ծուխը յաւիտեանս յաւիտենից պիտի ելլէ: Գիշեր ու ցերեկ հանգիստ պիտի չունենան անոնք» (Յյտ 14.11):

«Մինչեւ որ վնարէ իր բոլոր պարտքերը»: Ոեւէ բացատրութիւն տալէ առաջ, նախ պէտք է ուշադրութիւն դարձնել որ Յիսուս տուեալ համարին մէջ, միայն դահիճներուն կողմէ պատժուելու եւ պարտքերը վնարելու մասին է որ կը խօսի: Ան չի խօսիր պարտքը վնարելէն ետք բանտէն դուրս ելլելու մասին:

Քիչ ետք ընդարձակ կերպով պիտի խօսինք «մինչեւ» բառին մասին: Հիմա, նախ հետեւեալը ըսենք: Դժոխք նետուած անապաշխար մեղաւորը դժոխքին մէջ ապաշխարութեան առիթ պիտի ունենա՞յ: Ո՛չ: Կը կրկնեմ, այդպիսի բան չե՛նք կարդար Աստուածաշունչին մէջ: Քանի հոն նետուողը պիտի չկրնայ ապաշխարել եւ վնարել իր մեղքի պարտքերը՝ ի՞նչպէս կրնայ հոնկէ դուրս գալ եւ արքայութիւն մտնել:

Մարդ պարտի հնազանդիլ Աստուծոյ եւ անոր կամքը կատարել՝ որպէսզի կարենայ արքայութիւն մտնել: Բայց քանի որ գեհեմնի կրակին մէջ նետուող մարդը երբեք ալ պիտի չկրնայ Աստուծոյ հնազանդելու եւ անոր կամքը կատարելու իր պարտքը վնարել, ուստի երբեք ալ դժոխքէն դուրս պիտի չգայ:

Արդ, եթէ դժոխք նետուող մէկը իր մեղքի պարտքերը վնարելու կարելիութիւն ու կարողութիւն պիտի չունենայ, այդ պարագային ինչո՞ւ Յիսուս կը խօսի պարտքերը վնարելու մասին: Խորքին մէջ, «պարտքերը վնարել», պարզապէս կը նշանակէ՝ պարտքերուն համար, այլ խօսքով՝ մեղքերուն համար պատժուիլ, չարչարուիլ, տառապիլ:

Մատթէոսի 5-րդ գլխուն մէջ նաեւ կը հանդիպինք համարի մը որ Մտ 18.34-ին հետ նոյն իմաստն ու նշանակութիւնը ունի: Հոն կը կարդանք. «...Վստահ եղիր թէ բանտէն պիտի չելլես, մինչեւ որ տուգանքիդ վերջին դահեկանը չվնարես» (Մտ 5.25-26): Այս տողը եւս

կրնայ մեզի այն տպաւորութիւնը տալ, որ բանտ կամ ըսեմք դժոխք նետուող մարդուն համար կարելի պիտի ըլլայ օր մը իր տուգանքին վերջին դահեկանը վճարել եւ ապա ազատ արձակուիլ: Բայց դարձեալ, Յիսուսի ըսել ուզածը այն է, որ դժոխք նետուող մարդը երբեք ալ պիտի չկարենայ հոնկէ դուրս գալ, որովհետեւ երբեք ալ պիտի չկարենայ իր տուգանքին վերջին դահեկանը վճարել: Եթէ երբեք ազատ եղած ատենը ան չկրցաւ վճարել իր պարտքը, հիմա որ դժոխքի բանտին մէջ է, ի՞նչպէս պիտի կարենայ վճարել իր պարտքը:

«Մինչեւ որ վճարէ իր բոլոր պարտքերը»: Խօսինք «մինչեւ» բառին մասին որ շատերը մոլորեցուցած է: «Մինչեւ» բառը արդեօք ցոյց կու տայ թէ պիտի գայ ժամանակ երբ ենթական պիտի կարենայ վճարել իր մեղքի պարտքերը եւ բանտէն ելլել: Ո՛չ: Մեղաւոր մարդը մեղքին պարտքը պիտի վճարէ, այո՛, այլ խօսքով՝ մեղքերուն համար պիտի պատժուի ու չարչարուի, այո՛, բայց երբեք ալ բանտէն պիտի չելլէ: Եւ ինչո՞ւ պիտի չելլէ: Որովհետեւ դժոխքին պատիժն ու չարչարանքը յաւիտենական է (Մտ 25.46): Այս իմաստով, «պարտքերը վճարել», պարզապէս կը նշանակէ՝ յաւիտենապէս չարչարուիլ: Եւ քանի որ յաւիտենականութիւնը վախճան չունի՝ ուրեմն, դժոխքէն ելլելու հարց չկայ:

«Մինչեւ» բառին իմաստը աւելի լաւ հասկնալու համար, յիշեմք քանի մը օրինակներ: Մտ 1.25-ին մէջ կը կարդանք. «Չյարաբերեցաւ անոր հետ, "մինչեւ" որ իր անդրանիկ գաւակը ծնաւ»: Հոս արձանագրուած ո՛չ «մինչեւ» բառը եւ ո՛չ ալ «անդրանիկ» բառը ցոյց կու տան թէ Յիսուսի ծնունդէն յետոյ Մարիամ եւ Յովսէփ ուրիշ գաւակներ ունեցան: Բնա՛ւ մեր նպատակին մաս չի կազմեր սոյն նիւթը արծարծել այստեղ, բայց հպանցիկ ակնարկ մը շահեկան կրնայ ըլլալ: Բ.Թգ 3.2-ին մէջ կը կարդանք. «Բեբրոնի մէջ Դաւիթին որդիներ ծնան ու անոր անդրանիկը Յեզրայելացի Ափինոամէն ծնան Ամոնն էր»: Ուշագրաւ է որ Աստուածաշունչը Ամոնը «անդրանիկ» կը կոչէ, հակառակ որ Դաւիթ Յեզրայելացի Ափինոամէն Ամոնէն գատ ուրիշ գաւակ չունեցաւ: Այլուր կը կարդանք. «Եղիազարին որդիները՝ առաջինը Հոաբիան էր ու Եղիազար ուրիշ որդի չունէր» (Ա.Մն 23.17): Այստեղ Հոաբիան «առաջին» կոչուած է հակառակ որ ան երկրորդ եղբայր մը չունէր:

Բ.Թգ 6.23-ին մէջ կը կարդանք. «Սաւուղին աղջիկը՝ Մեղֆոն, "մինչեւ" իր մահուան օրը գաւակ չծնաւ»: Ի՞նչ ցոյց կու տայ այս հաստատումը: Հիմնուելով հոս արձանագրուած «մինչեւ» բառին վրայ, կրնա՞նք ըսել թէ Մեղֆոն իր մահէն ետք գաւակ ծնաւ: Անշո՛ւշտ ոչ:

Բ.Օր 34.6-ին մէջ Մովսէսի գերեզմանատեղիին վերաբերեալ կը կարդանք. «Մինչեւ" այսօր ոեւէ մարդ անոր գերեզմանին տեղը չգիտցաւ»: «Մինչեւ այսօր» բառերը երբեք չեն նշանակեր որ այդ «այսօր»էն ետք Մովսէսին գերեզմանատեղիին յայտնաբերուեցաւ կամ գիտցուեցաւ:

Ա.Մն 28.20-ին մէջ կը կարդանք ուր Դաւիթ խօսքը ուղղելով Սողոմոնին՝ կ'ըսէ. «Անիկա քեզ պիտի չթողու ու քեզ երեսէ պիտի չձգէ, "մինչեւ" որ Տիրոջը տանը ծառայութեանը բոլոր գործերը լմնցնես»: Տուեալ խօսքով, արդե՞օք Դաւիթ ըսել կ'ուզէր թէ երբ Սողոմոն հիմնէր ու լմնցնէր տաճարը, անկէ ետք ժամանակ պիտի գար երբ Աստուած պիտի թողուր զինք: Ինչպէս Աստուած պիտի չթողուր Սողոմոնը տաճարի շինութեան աշխատանքը լմնցնելէ ետք, այնպէս ալ մեղաւորը դժոխքէն դուրս պիտի չգայ՝ դժոխք նետուելէն ետք:

Ի՞նչ կը հասկնանք երբ ըսենք. «Այս ինչ նգնաւորը միս չկերաւ մինչեւ մահ»: Արդե՞օք կը նշանակէ որ միս կերաւ իր մահէն ետք: Ինչպէս նգնաւորը իր մահէն ետք միս չ'ուտեր, այնպէս ալ անգիղջ մեղաւորը դժոխք նետուելէն ետք՝ դժոխքէն չ'ելլեր:

Շատ դիպուկ է Փոկէացիներուն օրինակը: Երբ անոնք կը հեռացուէին իրենց քաղաքէն, անոնցմէ մին երկաթի ծանր կտոր մը առաւ եւ գետի ջուրին մէջ նետեց ըսելով. «Պիտի չդառնանք մեր քաղաքը "մինչեւ" որ գետին ջուրին մէջ մեր նետած երկաթը ջուրին երեսը ելլէ»: Ի՞նչ ըսել ուզեց իր այս արտայայտութեամբ: Յստակ է թէ ան ըսել ուզեց, որ երբեք ալ իրեց քաղաքը պիտի չդառնային: Ինչպէս հոս արձանագրուած «մինչեւ» բառը ցոյց չէր տար որ ժամանակ պիտի գար երբ երկաթի կտորը ջուրին երեսը պիտի ելլէր եւ իրենք իրենց քաղաքը պիտի դառնային, այնպէս ալ Մտ 18.34-ին մէջ արձանագրուած «մինչեւ» բառը երբեք չ'ապացուցաներ որ դժոխքի բանտը նետուած մարդը, որոշ ժամանակ ետք դուրս պիտի գայ դժոխքէն:

Տամ ուրիշ օրինակ մը: Կը պատմուի որ հրեայ մարդ մը մեծ կտոր մը ոսկի գողնալու համար՝ կը սպաննէ մարդու մը: Զինք կը բռնեն եւ ցմահ բանտարկութեան կը դատապարտեն: Ան զինք բանտ նետող զինուորին կ'ըսէ. «Ես այս բանտէն պիտի չելլեմ մինչեւ որ աշխարհի բոլոր ծառերը ոսկի ծաղկեցնեն»: Ի՞նչ ըսել ուզեց արդե՞օք: Յստակ է որ ըսել ուզեց թէ երբեք ալ բանտէն պիտի չելլէ, որովհետեւ աշխարհի ծառերը երբեք ալ ոսկի պիտի չծաղկեցնեն: Արդ, ինչպէս տուալ օրինակին մէջ յիշուած «մինչեւ» բառը ցոյց չի տար որ մարդը բանտէն պիտի ելլէ, նոյնպէս ալ Մտ 18.34-ին մէջ արձանագրուած «մինչեւ»

բառը երբեք ցոյց չի տար որ դժոխք նետուող մարդը՝ ժամանակ պիտի գայ երբ վերստին դժոխքէն պիտի ելլէ:

Բազմահազար են Աստուածաշունչին մէջ «մինչեւ» բառին վերաբերող օրինակները, բայց այսֆանով կը բաւարարուինք:

«Ահա նոյն ձեռով իմ երկնաւոր Հայրս պիտի վարուի ձեզի հետ, եթէ ձեզմէ իւրաքանչիւրը սրտանց չներէ իր եղբօր՝ անոր յանցանքները» (Մտ 18.35): Քանի մը նշումներ.–

1.– Ի՞նչ ըսել կ'ուզէ Յիսուս իր այս խօսքով: Արդե՞օք ըսել կ'ուզէ թէ Աստուած պիտի ներէ մեզի՝ եթէ մենք ներենք ուրիշներուն, եւ պիտի չներէ՝ եթէ չներենք: Արդե՞օք մեր ներում ստանալը պայմանաւորուած է մեր ներում շնորհելովը ուրիշին: Բայց չէ՞ որ կ'ըսենք թէ Աստուած ներեց մեր մեղքերը առանց պայմանի: Եթէ Աստուած մեզմէ կը պահանջէ ներել ուրիշը որպէսզի ինքն ալ մեզի ներէ, ասիկա պայման դնել չի՞ նշանակեր:

Հարցումին պատասխանը մեքենականօրէն կարելի չէ տալ: Գտնելու համար հարցումին նշգրիտ պատասխանը, նախ պէտք է փորձենք գտնել եւ գիտնալ թողութիւն եւ փառութիւն բառերուն տարբերութիւնը:

Հին Կտակարանը կը խօսի Քառութեան նոխագին մասին որ Քրիստոսի գոհագործական մահն էր որ կը նախապատկերացնէր (Ղև 16): Մարդկային ցեղի փառութիւնը մէկ անգամ է որ տեղի ունեցաւ, շուրջ 2000 տարիներ առաջ երբ Յիսուս իսաչին վրայ իր արիւնը թափեց: Խաչով իրագործուած փառութիւնը մարդուն սեփականութիւնը կը դառնայ երբ մարդը գիտակցի իր մեղքերուն, ապաշխարէ եւ իր կեանքը Քրիստոսի յանձնէ: Պարզ բացատրութեամբ մը, երբ մարդ ապաշխարէ՝ Յիսուս կը փաւէ իր մեղքերը: Քառութեան կը հետեւի թողութիւնը, որովհետեւ փառութիւն ստանալէ ետք, մարդ կը շարունակէ մեղք գործել, եւ իր գործած մեղքերուն համար Աստուծմէ թողութիւն կը ստանայ միայն այն ատեն՝ երբ ինք իր կարգին ներող ըլլայ իր նմաններուն: Քառութիւնը ճիշդ պարզեւ մըն է որ կը շնորհուի դարձի եկողին, իսկ թողութիւնը՝ հետեւանքն է ուրիշներուն նկատմամբ մեր ցուցաբերած ներողամիտ կեցուածքին:

Զարեհ Արք. Ազնաւորեան բացատրելով փառութիւն եւ թողութիւն եզրերուն տարբերութիւնը կ'ըսէ. «Քառութիւն եւ թողութիւն բառերը իրարմէ զանազանելը անհրաժեշտ է, որովհետեւ անոնք երկու տարբեր հանգրուաններ կը ներկայացնեն: Երբ կ'ըսենք "Ի փառութիւն եւ ի թողութիւն մեղաց", նո՞յն բանն է որ կ'ըսենք: Անոնք տառացիօրէն նո՞յն իմաստը ունին: Ո՛չ: Երկու հանգրուաններ կան որ պէտք է զատորոշենք իրարմէ: Քառելը առաջին հանգրուանն է: Ոեւէ մէկը որ կը

դառնայ Աստուծոյ, կը հաւատայ Քրիստոսի, կ'ընդունի զայն իբրեւ Փրկիչ, իր բոլոր անցեալի մեղքերուն, յանցանքներուն եւ անօրէնութիւններուն համար փառութիւն կը ստանայ, առանց նոյնիսկ անոնց համար ոեւէ բան ըրած ըլլալու: Ասիկա կարելի է ըսել ամենեւին ձրի պարգեւն է:

Թողութիւնը սակայն երկրորդ կամ հետագայ հանգրուան մըն է: Քառութիւն ստանալէ ետք, մենք միշտ ալ մեղանչում պիտի ունենանք եւ կ'ունենանք: Երբ մեր մեղանչումին գիտակցելով թողութիւն կը հայցենք, Աստուած թողութիւն կը շնորհէ. այս շնորհուած թողութիւնը երկրորդ հանգրուանն է որ կը ներկայացնէ՝ թողութեան հանգրուանը, եւ ո՛չ թէ առաջին հանգրուանը՝ որ փառութեան հանգրուանն է:

Քառութեան եւ թողութեան տարբերութիւնը մեծ է, այն իմաստով որ, մենք փառութիւն ստացանք նոյնիսկ այն հանգրուանին, ինչպէս Պօղոս առաքեալ պիտի ըսէր, երբ թշնամի էինք Աստուծոյ (Հո 5.8-10): Աստուած փառութիւնը շնորհեց առանց պայմանի, բայց թողութիւնը չի շնորհեր առանց պայմանի: Թողութեան արժանանալու համար պէտք է մենք ալ մեր կարգին թողութիւն կամ ներում շնորհենք ուրիշին: Այս է որ կ'ուսուցանէ առակը: Միլիոնաւոր պարտքերուն շնորհումը խորքին մէջ մարդը փառել կը նշանակէր: Բայց ծառան ամբողջական փառութիւն, ամբողջական ներում ստանալէ ետք, ի՛նքն ալ պէտք էր իր կարգին ներել իր ծառայակիցին, բայց չներեց, եւ որովհետեւ չներեց, իրե՛ն ալ չներուեցաւ:

Յիշեցէ՛ք Քրիստոսի խօսքը. «Ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ընեն ձեզի, նոյնը ըրէ՛ք դուք անոնց» (Մտ 7.12): Եթէ դուք մարդոցմէ բարիք կ'ակնկալէ՛ք բարիք ըրէ՛ք: Ինչ վարմունք կ'ակնկալէ՛ք այդպէս վարուեցէ՛ք ուրիշներուն հետ: Հետեւաբար եթէ մենք ներում կամ ներողամիտ վարմունք կ'ակնկալենք Աստուծմէ՛ն անպայմանօրէն պէտք է մենք նոյնը ցուցաբերենք մեր կեանքով»:

2.- «Ահա նոյն ձեռով իմ երկնաւոր Հայրս պիտի վարուի ձեզի հետ»: Հետաքրքրական է որ Յիսուս «"Ձեր" երկնաւոր Հայրը» ըսելու փոխարէն, կ'ըսէ. «"Իմ" երկնաւոր Հայրս»: Ինչո՞ւ է արդեօք «Ձեր»ի փոխարէն «Իմ»ի գործածութիւնը: Նկատի պէտք է առնել որ Յիսուս այստեղ կը խօսի չներող եւ անգութ մարդոց մասին. ուստի, Աստուծոյ մասին խօսած առեւն, կարծէ՛ք կը մերժէ գԱստուած իրենց Հայրը կոչել, եւ անոր փոխարէն գԱստուած ի՛ր Հայրը կը կոչէ, ըսելով. «Իմ երկնաւոր Հայրս»: Ասով ան մեզի սորվեցուցած կ'ըլլայ որ Աստուած անգութ, անողորմ եւ աններող մարդոց Հայրը չէ եւ չի կրնար ըլլալ:

Աստուած ներել ու սիրել գիտցող մարդոց Հայրն է: Անոնք որոնք կը յայտարարեն թէ իրենք Քրիստոսի փառաբար արիւնով դարձած են Աստուծոյ զաւակները՝ անոնք պէտք է Աստուծոյ ներողամտութեան եւ սիրոյն արտացոլացումը ըլլան: Ներող Աստուծոյ մը զաւակները ներող զաւակներ պէտք է ըլլան: Գթառատ Աստուծոյ մը զաւակները գթառատ զաւակներ պէտք է ըլլան: Ողորմածն Աստուած կը մերժէ իր զաւակը նկատել անողորմ մէկը: Մարդոց իրաւունքն է Աստուծոյ ողորմութեամբ փրկուածներէս ողորմութիւն ակնկալելը:

3.- «Եթէ ձեզմէ իւրաքանչիւրը սրտանց չներէ իր եղբօր՝ անոր յանցանքները»: «Սրտանց» բառը մեզի կարեւոր բան մը կը սորվեցնէ: Եթէ երբեք Յիսուս սրտանց ներելու մասին կը խօսի, կը խօսի անոր համար որ ան գիտէ որ յանախ մարդիկ սրտանց չէ որ կը ներեն ու կը սիրեն: Աստուած կը փանչնայ մարդոց սիրտերը: Ան գիտէ թէ ինչ բաներ կան անոնց մէջ թաքնուած: Մենք յանախ կը խաբուինք մարդոց փայտը վերաբերմունքէն, որովհետեւ մենք արտափնիսն է որ կը նայինք, երեւցածին վրայ է որ մեր ուշադրութիւնը կը կեդրոնացնենք: Աստուած սակայն կը նայի մարդուն սրտին, որովհետեւ մարդուն սիրտն է որ կը ներկայացնէ մարդը: Աստուած Սամուէլին բերնով կը յայտարարէ. «Մարդը երեւցածին կը նայի, բայց Տէրը սրտին կը նայի» (Ա.ԹԳ 16:7):

Սիրելի՛ ընթերցող, սոյն առակով եւ յատկապէս այս վերջին համարով, Յիսուս կոչ ու մարտահրաւեր կ'ուղղէ մեզի սրտանց ներելու, սրտանց սիրելու, սրտանց աղօթելու: Իբրեւ ֆրիստոնեաներ, ինչ որ կ'ընենք կամ կ'ուզենք ընել՝ սրտանց ընենք: Եթէ կը ներենք՝ սրտանց ներենք: Եթէ կը սիրենք՝ սրտանց սիրենք: Եթէ կ'ապաշխարենք՝ սրտանց ապաշխարենք: Եթէ կ'օգնենք՝ սրտանց օգնենք: Զարեհ Արք. Ազնաւորեան կ'ըսէ. «Յակոբոս առաքեալ մարդը կը նմանցնէ աղբիւրի մը որ իր մէջ առած է Քրիստոսի փայտութիւնը: Աղբիւր մը որ փայտէ՝ չի կրնար դառն բղիւսի: Եթէ երբեք մարդը իբրեւ աղբիւր սրբուած է անգամ մը, այդ մարդուն բղիւսումը, անոր տուած պտուղը, անոր արտաբերած արդիւնքը անպայմանօրէն կ'ըլլայ մաքուր»:

Վերջին խօսք.-

Առակը կոչ կ'ուղղէ Աստուծոյ ծառաներուն ներելու իրարու ինչպէս Քրիստոս ինք ներեց մեզի: Առակին հիմնական նպատակը ուրիշ բան չէ եթէ ոչ ցոյց տալ թէ ինչպիսի՛ն պէտք է ըլլայ Աստուծոյ արքայութեան հետեւորդը: Ահա թէ ինչո՛ւ առակը կը սկսի ըսելով. «Երկինքի արքայութիւնը կը նմանի հետեւեալին» (Մտ 18.23): Ի՞նչ

բանի կը նմանի երկինքի արքայութիւնը: Արքայութիւնը ներումի գործողութեան կը նմանի: Այլ խօսքով, արքայութիւնը ներողամիտներուն, ներել գիտցողներուն տեղն է: Անոնք որոնք Արքային նման ներել գիտեն, անո՛նց է երկինքի արքայութիւնը:

Զարեհ Արք. Ազնաւորեան խօսելով «Երկինքի արքայութիւնը կը նմանի» բառերուն մասին, կ'ըսէ. «Աստուծոյ թագաւորութիւնը նախքան կապուիլը ոեւէ արտաքին պայմանի կամ արտաքին վիճակի, անիկա ներքին վիճակ մըն է: Այն մարդը որ ինքզինք Աստուծոյ կամքին ու իշխանութեան կը հնազանդեցնէ՝ ան ինքնաբերաբար իր մէջ ընդունած կ'ըլլայ Աստուծոյ թագաւորութիւնը: «Երկինքի արքայութիւնը կը նմանի» բառերը, յատկապէս «կը նմանի» բառերը յստակօրէն կը պարզեն որ Աստուծոյ թագաւորութիւնը ամէն բանէ առաջ նախ ներքին հոգեկան վիճակ մըն է: Ներքին հոգեկան վիճակ մըն է անոր համար որ ինքզինք Աստուծոյ թագաւորութեան ու կամքին ենթակայ դարձնողը կ'անցնի ներքին փոփոխութենէ մը որ յատուկ է Աստուծոյ գաւակներուն: Այդ ներքին փոփոխութենէն անցնողներն են որ իրենք զիրենք Աստուծոյ կամքին մէջ կը դնեն, իսկ Աստուծոյ կամքը այն է, որ բոլորին հանդէպ սիրով եւ գթութեամբ վարուինք, սիրոյ եւ գթութեան դրսեւորումը դառնանք, ինչպէս դարձաւ առակին մէջ յիշուած թագաւորը: Դարձաւ եւ ուզեց օրինակ ծառայէ իր ծառային, իր հպատակին: Իր հպատակը սակայն չկրցաւ սիրոյ, գթութեան եւ ներումի այդ օրինակը ցուցաբերել իր անձին վրայ եւ ատոր համար ալ բանտ նետուեցաւ»:

ՃԱՐՊԻԿ ՏՆՏԵՍԻՆ ԱՌԱԿԸ

«Մեծահարուստ մարդ մը կար, որ իր ստացուածքներուն վրայ տնտես մը ունէր: Երբ տնտեսին մասին մարդիկ ամբաստանութիւն ըրին՝ ըսելով թէ իր տիրոջ հարստութիւնը կը վատնէ, մեծահարուստը կանչեց զինք եւ ըսաւ.– "Ի՞նչ են քու մասիդ այս ըսուածները: Քեզի յանձնուած բոլոր ստացուածքներուս հաշիւը տուր: Այլեւս իմ տնտեսս չես կրնար ըլլալ":

Տնտեսը ինքնիրեն խորհեցաւ.– "Ի՞նչ կրնամ ընել. ահա տէրս զիս տնտեսութեան պաշտօնէն կը զրկէ: Բանուորութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ'ամչնամ: Սակայն գիտեմ թէ ինչ պէտք է ընեմ, որ երբ տէրս զիս տնտեսութեան պաշտօնէն հեռացնէ, մարդիկ ընդունին զիս իրենց տուներէն ներս":

Ապա մէկ առ մէկ կանչեց իր տիրոջ պարտապանները եւ առաջինին հարցուց.– "Ո՞րքան պարտք ունիս տիրոջս": Անիկա պատասխանեց.– "Երկու հարիւր թիթեղ ձէթ": Տնտեսը ըսաւ.– "Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ եւ անմիջապէս գրէ՝ հարիւր": Յետոյ հարցուց միւսին.– "Ո՞րքան որքան պարտք ունիս": Անիկա պատասխանեց.– "Չորս հարիւր յիսուն պարկ ցորեն": Տնտեսը ըսաւ.– "Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ եւ գրէ՝ երեք հարիւր յիսուն":

Տէրը ասիկա լսելով՝ գովեց անիրաւ տնտեսը իր հնարամտութեան համար: Որովհետեւ այս աշխարհի մարդիկը իրարու հանդէպ իրենց վարմունքին մէջ աւելի քարպիկ են քան լոյսի որդիները: Եւ ես կ'ըսեմ ձեզի.– "Աշխարհիկ հարստութիւնը գործածեցէք այնպէս՝ որ Աստուծոյ բարեկամութիւնը շահիք, որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք, ձեզ յաւիտեանական յարկերու մէջ ընդունին"» (Գկ 16.1-9):

Սովորաբար խոստովանուած է որ քարպիկ տնտեսին առակը մարդուն միտքը շփոթեցնող եւ դժուար բացատրելի առակ մըն է: Եւ սակայն, եթէ երբեք մեր մտքին մէջ ունենանք որ տնտեսին առակին պատումով, Յիսուս նմանութիւն մը կամ նոյնութեան եզր մը չէ որ կը փորձէ գտնել Աստուծոյ մարդուն եւ աշխարհի մարդուն միջեւ, այլ համեմատական ու բաղդատական մըն է որ կը կատարէ անոնց միջեւ, ինչպէս նաեւ անոնց գործելակերպին միջեւ, այդ պարագային, պարզ կը դառնայ առակին բացատրութիւնը:

Քանի որ Յիսուս համեմատական մըն է որ կ'ընէ Աստուծոյ մարդուն եւ աշխարհի մարդուն միջեւ, ուրեմն, պէտք է խուսափիլ

առակին մէջ յիշուած տարբերուն ետին տեսնել խորհրդանշական բացատրութիւններ: Օրինակ, սիսալ է ըսել թէ առակին մէջ յիշուած «ձէթ»ը կը ներկայացնէ այս ինչ բանը, կամ «ցորեն»ը խորհրդանշիչ է այս ինչ բանին: Առակը այս ձեւով անկարելի է մեկնել, իսկ եթէ մեկնուի՝ մեկնութիւնը փմահան կ'ըլլայ:

Անցնինք առակի ֆննութեան

«Մեծահարուստ մարդ մը կար, որ իր ստացուածքներուն վրայ տնտես մը ունէր: Երբ տնտեսին մասին մարդիկ ամբաստանութիւն ըրին՝ ըսելով թէ իր տիրոջ հարստութիւնը կը վատնէ, մեծահարուստը կանչեց զինք եւ ըսաւ. "Ի՞նչ են քու մասիդ այս ըսուածները: Քեզի յանձնուած բոլոր ստացուածքներու հաշիւը տուր: Այլեւս իմ տնտեսս չես կրնար ըլլալ"» (Ղկ 16.1-2):

Նախ սկսիմ իմ սիրելի Ուսուցիչիս՝ Զարեհ Ա.ր.ֆ. Ազնաւորեանին խօսքով: Սրբագանը կ'ըսէ.՝

«Որպէսզի գիտնանք թէ ի՞նչ բանի մասին կը խօսի Յիսուս եւ ի՞նչ է որ կ'ուզէ սորվեցնել, պէտք է նշոյնք թէ ի՞նչ առիթով եւ որո՞նց կը խօսի այս առակը:

Յիսուս առակներու ամբողջ շարքի մը մէջ այս առակը կը խօսի բազմութեան մը դիմաց, որուն մէջ խառն կերպով կային երեք խումբեր.՝ մաքսաւորներ եւ մեղաւորներ, Փարիսեցիներ եւ դպիրներ, առաքեալներ ու հետեւորդներ: Իւրաքանչիւր առակ որքան ալ բոլորին դիմաց կը խօսուէր, բայց մասնաւորաբար կ'ուղղուէր մէկ կամ միւս խումբին, եւ Աւետարանիչները յաճախ կը նշոյն ատիկա՝ Յիսուսի դիտումը յստակ ընելու համար:

Այստեղ, յիշեալ բազմութեան մէջ, Յիսուս նախ երեք առակներ կը խօսի մեղաւորներու մասին, ուղղուած՝ Փարիսեցիներուն եւ դպիրներուն.՝ կորսուած ոչխարին փնտոտուիք, կորսուած դրամի գտնուելուն եւ անառակ որդիի դարձին առակները, որոնց մէջ Յիսուս զԱստուած կը ներկայացնէ որպէս մեղաւոր մարդը փնտոտող եւ անոր դարձին սպասող բարեգութիւն հայր մը:

Այս հանգրուանին կը դառնայ եւ Տնտեսին առակը կը պատմէ իր աշակերտներուն (Ղկ 16.1):

Որո՞նք են Քրիստոսի աշակերտները: Յիսուսի աշակերտները անոնք են՝ որոնք արդէն դարձած են Աստուծոյ եւ հաւատարմութիւն խոստացած են անոր, եւ որոնք կոչուած են Աստուծոյ ծառայելու եւ

անոր գործակիցները ըլլալու: Եւ արդէն առակը կը խօսի ֆրիստոնեային այդ գործակցութեան եւ հաւատարմութեան մասին:

Յստակ է որ հարուստ մարդու պատկերով Յիսուս կը խօսի մեր երկնաւոր Հօրը՝ Աստուծոյ մասին: Նոր պատկեր մը չէ ասիկա. Աստուածաշունչին մէջ յաճախ Աստուծոյ հարստութեան կ'ակնարկուի: Բայց անշուշտ Աստուծոյ հարստութիւնը նիւթական չէ. Աստուած հարուստ է իր սիրով, իր փաղցրութեամբ, իր ներողամտութեամբ, իր համբերատարութեամբ (Հո 2.4): Եփեսացիներուն գրած իր նամակին մէջ, Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Բայց մինչ մենք մեր մեղքերուն պատճառով հոգեւորապէս մեռած էինք, Աստուած, որ առատ է (հարուստ է) իր ողորմութեամբ, մեզի հանդէպ ունեցած մեծ սիրոյն համար, որով մեզ սիրեց, մեզ վերստին կեանքի կոչեց Քրիստոսով: Այո՛, շնորհիք ըրաւ փրկելով մեզ: Քրիստոսի հետ յարուցանեց եւ անոր հետ միասին ալ երկինքի մէջ նստեցուց մեզ, որ Քրիստոս Յիսուսի միացած ենք, որպէսզի գալիք բոլոր ժամանակներուն մէջ մարդիկ տեսնեն այն գերազանցօրէն մեծ շնորհքը, որ Աստուած ա՛յնքան բարութեամբ ցոյց տուաւ մեզի՝ Քրիստոս Յիսուսի անձին մէջ» (2.4-7):

Առակին մէջ Քրիստոս ինքնիրեն չ'ակնարկեր, բայց ինքն ալ բաժնեկից է Հօրը հարստութեան, ինչպէս առաքեալը հետագային անոր մարդեղութեան մասին խօսելով պիտի ըսէր. «Ինք որ հարուստն էր՝ աղփատացաւ ձեզի համար, որպէսզի իր աղփատանալովը՝ դուք հարստանաք» (Բ.Կր 8.9):

Ո՞վ է հարուստ մարդուն, այսինքն՝ Աստուծոյ տնտեսը:

Տնտեսը մէկու մը ֆոլ պաշտօնի ու ծառայութեան մտած մարդն է, որուն կը յանձնուին որոշ ինչքեր, ստացուածքներ կամ հարստութիւն՝ որպէսզի գանձնի մատակարարէ լաւագոյն ձեւով: Արդ, Աստուծոյ տնտեսը այն մարդն է, որ անոր ծառայութեան մէջ կը մտնէ, ինքզինք Քրիստոսի սպասաւոր կը նկատէ, ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Պէտք է մեզ նկատէք Քրիստոսի սպասաւորները, իբրեւ մարդիկ՝ որոնց յանձնուած է Աստուծոյ ծածուկ ծրագիրին վերակացութիւնը: Արդ, վերակացութիւն ընող մարդէ մը կը պահանջուի՝ հաւատարիմ ըլլալ» (Ա.Կր 4.1-2):

Քրիստոս ինքն ալ ֆրիստոնեայ մարդը կը նմանցնէր տնտեսի մը երբ հարց կու տար. «Ո՞վ է հաւատարիմ եւ իմաստուն տնտեսը: Անիկա է, որ տէրը իր ծառաներուն վրայ վերակացու կը կարգէ որպէսզի նիշդ ատենին անոնց կերակուրի բաժինը տայ» (Ղկ 12.42):

Անշուշտ մասնաւոր կերպով տնտես կը կոչուին անոնք որ Քրիստոսի Եկեղեցիին մէջ յատուկ պարտականութիւն եւ

վերակացութիւն կը ստանձնեն, ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Եպիսկոպոսը որպէս Աստուծոյ տնտես՝ պէտք է անմեղադրելի ըլլայ...» (Տիտ 1.7):

Ի՞նչ է տնտեսութիւնը, այլ խօսքով՝ քրիստոնեայ մարդուն ու վերակացութիւն մատակարարութեան վստահուած հարստութիւնը: Եթէ Աստուծոյ հարստութիւնը՝ անոր սէրն է, անոր փաղցրութիւնն է, անոր ներողամտութիւնն է, անոնց շնորհումը այն տնտեսութիւնն էր՝ որ Աստուած իր Միածին Որդիին տուաւ, եւ Քրիստոս իրենները հրաւիրեց եւ կը հրաւիրէ՝ որ գայն մատակարարեն աշխարհին. այսինքն՝ Աստուծոյ սէրն ու շնորհքը փարոզեն ու պարգեւեն աշխարհին: Պօղոս առաքեալ ինքզինքին համար կ'ըսէ. «Ես եկեղեցիին ծառայ եղայ՝ իբրեւ Աստուծոյ կողմէ տրուած պարտականութիւն, որպէսզի իր ամբողջութեանը մէջ ձեզի փարոզեմ Աստուծոյ խօսքը» (Կղ 1.25): Իսկ Եփ 3.2-ին մէջ կ'ըսէ. «Աստուած իր շնորհքին մատակարարումը ինծի վստահեցաւ՝ ձեզի օգնելու համար»:

Առակին մէջ կ'ըսուի որ տիրոջ գանգատ եղաւ որ տնտեսը իր ունեցուածքը կը փնացնէ, եւ ուստի տէրը գայն հաշուետուութեան կանչեց: Առակը կ'ուզէ ցոյց տալ թէ տնտես մը միշտ ալ ենթակայ է հաշուետուութեան: Ինչպէս աշխարհային ռեւէ գործի եւ հարստութեան վերակացու կարգուած մարդ պարտաւոր է հաշիւ տալու իր մատակարարութեան համար, այնպէս ալ Աստուծոյ գործին վերակացուն եւ Աստուծոյ հարստութեան վրայ կարգուած տնտեսը միշտ պէտք է ունենան հաշուետուութեան հեռանկարը:

Որքան ափսոսալի ու ցաւալի է աշխարհային հարստութեան վատնումն ու փնացումը, նոյնքան եւ շատ աւելի ցաւալի է Աստուծոյ հարստութեան վատնումն ու փնացումը: Եւ ի՞նչպէս կը վատնուի ու կը փնացուի Աստուծոյ շնորհքին աննիւթական հարստութիւնը: Աստուած մարդոց զանազան հոգեւոր պաշտօններ եւ ծառայելու զանազան կարողութիւններ կու տայ, «հասարակաց օգուտին համար» (Ա.Կր 12.5-7): Եթէ մէկուն կարողութիւն կու տայ հոգեւոր գիտութեան հասնելու եւ փարոզելու կամ ուսուցանելու, եւ անիկա Աստուծոյ խօսքը ծրարելով մէկդի կը դնէ. եթէ մէկուն կարողութիւն կու տայ իմաստութեամբ յորդորելու, եւ անիկա այդ պարտականութիւնը չի կատարեր. եթէ մէկու մը հաւատք կու տայ, եւ անիկա այդ հաւատքը ամուրթեան կը դատապարտէ ու գործերով չի պողաւորեր. եթէ մէկու մը բժշկելու զօրութիւն կու տայ, եւ անիկա զօրութիւնը Աստուծոյ գործող բազուկին չի վերածեր. եթէ մէկու մը մարգարէական պատգամախօսութեան պարգեւը կը շնորհէ, եւ անիկա Աստուծոյ կամքը չի պատգամեր, ու

տակաւին՝ կը թերանայ իրեն վստահուած այս կամ այն հոգեւոր պարտականութեան կատարումին մէջ, այդ թերացումով իսկ, Աստուծոյ շնորհքներուն մատակարարումը դադրեցուցած կամ նուազեցուցած կ'ըլլայ, եւ ատով իսկ կը վնասէ Աստուծոյ գործին տարածման եւ ընդարձակման, եւ ուստի կը կանչուի հաշուետուութեան»:

Յաւելեալ քանի մը մատնանշումներ.–

1.– Սրբազանը հաստատեց թէ «Աստուծոյ հարստութիւնը՝ անոր սէրն է, անոր քաղցրութիւնն է, անոր ներողամտութիւնն է», բայց նաեւ կրնանք ըսել թէ այդ ստացուածքը կամ հարստութիւնը կրնայ ներկայացնել ամբողջ աշխարհը: Արդ, ինչպէս մեծահարուստ մարդը իր ստացուածքներուն վրայ տնտես մը նշանակած էր, այնպէս ալ Աստուած մարդ արարածը տնտես նշանակած է իր ամբողջ ստացուածքին, այսինքն՝ աշխարհին վրայ: Աշխարհ Աստուծոյ ստացուածքն է: Բայց Աստուած յօժարակամ գայն յանձնեց մարդուն որպէսզի մարդը տնտեսէ գայն:

2.– Ինչպէս մեծահարուստ մարդը հաշուետուութեան կանչեց իր տնտեսը, այնպէս ալ Աստուած հաշուետուութեան պիտի կանչէ մեզմէ իւրաքանչիւրը (Հո 2.6):

3.– Աշխարհի մէջ շատ մեծահարուստներ կան, բայց ամենէն մեծահարուստը Աստուած ինքն է, որովհետեւ ան տէրն է համայն տիեզերքին, համայն մարդկութեան: Աստուած մեծահարուստ է ո՛չ թէ որովհետեւ աշխարհի բոլոր նիւթական հարստութիւնները իր տրամադրութեան տակ են, այլ որովհետեւ առատ սէր եւ գթութիւն ունի: Աստուած ո՛չ միայն մեծահարուստ մըն է, այլեւ՝ մեծ Հարստութիւնն իսկ:

4.– Ի՞նչ էր այն հարստութիւնը որ տնտեսը կը վատնէր: Եթէ նկատի առնենք որ առակը կը խօսի ձէթի եւ ցորենի մասին, յստակ կը դառնայ որ այդ հարստութիւնը աշխարհային հարստութիւնն էր, դրամն էր: Յիսուս այս մէկը յստակ կը դարձնէ երբ առակին աւարտին կ'ըսէ. «Աշխարհիկ հարստութիւնը գործածեցէք այնպէս՝ որ Աստուծոյ բարեկամութիւնը շահիք...» (Ղկ 16.9, տե՛ս նաեւ 16.12):

Բայց այս նիւթական իմաստին կողքին կայ նաեւ հոգեւոր իմաստը, եւ նիշդ ա՛յդ է որ Յիսուս կ'ուզէ մեզի փոխանցել: Ի՞նչ է այն ստացուածքը կամ այն հարստութիւնը որուն վրայ Աստուած մեզ տնտես նշանակած է: Այդ հարստութիւնը Աստուծոյ կողմէ մարդուն տրուած բազմատեսակ շնորհքներն ու պարգեւներն են, կարողութիւններն ու ձիրքերն են, բարին գործելու համար ընծայուած առիթներն են, մեր հոգեւոր կեանքին ու հաւատքին մէջ անելու համար

մատուցուած առատ ժամանակն է, կորսուածները փրկութեան բերելու պատեհութիւններն են, սգաւորներուն միխթարութիւն եւ տխուր անձերուն ուրախութիւն բերելու աստուածատուր մեր կարողութիւնն է, եւ այլն:

Աստուծոյ մեծագոյն հարստութիւնը՝ իր փրկութիւնն է: Ոեւէ մարդ որ կ'ընդունի Յիսուսի փրկութիւնը՝ կը դառնայ տնտեսը այդ փրկութեան: Այո՛, հաւատացեալ մարդուն մեծագոյն կոչումը՝ Յիսուսի փրկութեան մատակարարը ըլլալն է: Հաւատացեալ մարդը պէտք է կորսուած ամէն մարդու խօսի՝ Յիսուսի իրագործած ու պարգեւած փրկութեան մասին: Երբ առիթը կը բացուի խօսելու Յիսուսի փրկութեան մասին եւ մենք չենք խօսիր՝ Աստուծոյ հարստութիւնն է որ վատնած կ'ըլլանք, որովհետեւ փրկութիւնը Աստուծոյ կողմէ մեզի տրուած հարստութիւն մըն է որ պէտք է գանհիկա փոխանցենք ուրիշին:

5.- «Երբ տնտեսին մասին մարդիկ ամբաստանութիւն ըրին՝ ըսելով թէ իր տիրոջ հարստութիւնը կը վատնէ...»: Մեծահարուստ մարդիկ միշտ իրենց լրատունները կ'ունենան, որոնք զիրենք մնայուն կերպով տեղեակ կը պահեն անցուդարձէն: Սեռաւսիկ միշտ այս լրատու մարդիկն են որ եկան մեծահարուստին մօտ եւ ամբաստանութիւն ըրին տնտեսին մասին՝ «ըսելով թէ իր տիրոջ հարստութիւնը կը վատնէ...»:

Տնտեսին վատնածը նիւթականն էր: Այդ վատնումը կրնայ տեղի ունեցած ըլլալ գողութեամբ, յափշտակութեամբ կամ անհոգութեամբ ու ծուլութեամբ: Եթէ երբեք մեծահարուստ մարդը իսկապէս գտնուեցաւ տնտեսին նկատմամբ, իր նիւթական հարստութիւնը վատնած ըլլալուն համար, արդեօք Աստուած իսկապէս պիտի չգտնուի՞ մեզի հանդէպ երբ կը վատնենք իր կողմէ մեզի շնորհուած աննիւթական հարստութիւնները:

Մենք իրաւունք ունի՞նք վատնելու Աստուծոյ կողմէ եւ Աստուծոյ փառքին համար մեզի տրուածը: Աստուած ինչ որ տայ մեզի՝ կու տայ որպէսզի գանհիկա իր փառքին համար գործածենք, իսկ եթէ չենք գործածեր, կը նշանակէ թէ իր փառքին յափշտակիչներն ենք, իսկ եթէ իր փառքին յափշտակիչներն ենք, կը նշանակէ թէ դատապարտութեան ենթակայ ենք, քանի ի՛նք ըսաւ. «Իմ փառքս ուրիշին չեմ տար» (Ես 42.8):

6.- Մեծահարուստը ամբաստանութիւնը լսելէ ետք, քովը կանչել տուաւ իր տնտեսը եւ անոր ըսաւ. «Ի՞նչ են քու մասիդ այս ըսուածները: Քեզի յանձնուած բոլոր ստացուածքներուս հաշիւը տուր: Այլեւս իմ տնտեսս չես կրնար ըլլալ»: Մեծահարուստ մարդուն հարցումը ուղղուած տնտեսին, ցոյց կու տայ որ մարդը անձնական հետապնդումներով չէր որ հանդէս բերաւ իր տնտեսին

անիրաւութիւնները, այլ ուրիշներէն իմացաւ այդ բոլորին մասին: Աստուած սակայն չի նմանիր աշխարհի հարուստ մարդոց որոնք իրենց լրատու մարդոց ֆամբով իրագեկ կը դառնան ամէն բանի: Ան Ամենագետ Աստուած է: Ան գիտէ թէ ո՛վ կ'ընէ իր պարտականութիւնը եւ ո՛վ չ'ընէ: Ան գիտէ թէ ո՛վ յօժար սրտով կ'աշխատի եւ ո՛վ անյօժար սրտով:

7.- Աստուած երբ պարգեւներ ու շնորհքներ տայ մարդու մը՝ կը հետապնդէ անոնց օգտագործումն ու գործածութիւնը անոր կողմէ: Եւ ո՛չ միայն կը հետապնդէ, այլեւ՝ կը պահանջէ: Նոյնը չըրաւ եւ նոյն ձեւով չվերաբերեցաւ մեծահարուստ մարդը իր տնտեսին հետ: Ան յանձնած էր իր հարստութիւնը իր տնտեսին, բայց անձնապէս չէր հետապնդեր եւ չէր հսկեր անոր գործունէութեան եւ գործընթացին վրայ: Բայց Աստուած կը դիտէ մեր գործերը ու կը նայի մեր գործընթացին, հարկաւ ո՛չ թէ որպէսզի ամէն մէկ սխալին համար քննադատէ մեզ, այլ որպէսզի գորակցի մեզի եւ ուղղութիւն տայ:

8.- Ինչպէս աշխարհի հարուստները լուր չեն կենար եւ հաշիւ կը պահանջեն ոեւէ անձէ որ իրենց հարստութիւնը կը վատնէ, այնպէս ալ Աստուած առ յաւէտ լուր պիտի չկենայ, երբ տեսնէ որ իր կողմէ մարդուն տրուած բազմատեսակ շնորհքներն ու պարգեւները, կարողութիւններն ու ձիրքերը ի գործ չեն դրուիր, կամ կը վատնուին, կը չարաշահուին, կը շահագործուին: Ահա թէ ինչո՛ւ Պետրոս առաքեալ կը պատուիրէ ի գործ դնել Աստուծոյ կողմէ մեզի տրուած շնորհքները: Ան կ'ըսէ. «Ձեզմէ իւրաքանչիւրը իբրեւ Աստուծոյ բազմատեսակ պարգեւներուն իրաւ տնտես՝ իր ստացած շնորհքը ուրիշներուն թող մատակարարէ: Խօսելո՞ւ պարգեւը ունի. թող Աստուծոյ պատգամները մատակարարէ: Ծառայելո՞ւ պարգեւը ունի. թող ծառայէ՝ որքան որ Աստուած կարողութիւն կու տայ. որպէսզի ամէն ինչով Աստուած փառաւորուի, Յիսուս Քրիստոսի միջոցաւ» (Ա.Պտ 4.10-11):

9.- Աստուած իւրաքանչիւր մարդու համար նպատակ մը եւ ծրագիր մը ունի: Մարդը պարտի գիտնալ այն նպատակը որուն համար գոյութեան բերուած է, եւ այն ծրագիրը՝ որ ան կոչուած է իրագործել իր երկրաւոր կեանքի ընթացքին: Մարդուն կեանքի նպատակը ուրիշ բան պէտք չէ ըլլայ եթէ ոչ ապրիլ Աստուծոյ հետ եւ Աստուծոյ համար, գործել Աստուծոյ հետ եւ Աստուծոյ կամքը, մօտենալ ու մտերմանալ Աստուծոյ, եւ ուրիշներն ալ այդ մտերմութեան բերել: Հաշի՛ւ պիտի տանք Աստուծոյ եթէ չենք ըներ այս բոլորը: Հաշի՛ւ պիտի տանք եթէ այդպիսին չենք:

Ոեւէ մարդ որ չ'ապրիր այն նպատակին համար որուն համար ինք ստեղծուած է՝ իր Տիրոջ հարստութիւնը վատնող մը կը սեպուի: Ոեւէ մարդ որ Աստուծոյ կամքը չի կատարեք եւ անոր ծրագիրը չ'իրագործեք իր կեանքին մէջ՝ Աստուծոյ հարստութիւնը վատնող մըն է:

Ամէն մարդ որ գոյութեան կը բերուի Աստուծոյ կողմէ՝ կը բերուի, իր շրջապատին մէջ պակաս մը ամբողջացնելու, արցունք մը սրբելու, թշուառութեան մը վերջ դնելու, անուղղայ մը ուղղութեան բերելու: Եթէ ամէն մէկ մարդ կարենար միայն մէկ հոգի ազատել մեղքի սրտկութենէն, եթէ ամէն մէկ անձ կարենար միայն մէկ անօրէնութիւն արմատախիլ ընել իր շրջապատէն, եթէ իւրաքանչիւր մարդ իր գալովը այս աշխարհ՝ կարենար վերջ դնել միայն մէկ դժբախտութեան՝ աշխարհ կը վերածուէր դրախտի:

Առակին մէջ յիշուած տնտեսը այդպէս չըրաւ եւ այդպիսին չեղաւ: Ան իր տիրոջ հարստութիւնը առատացնելու ու բազմապատկելու փոխարէն՝ գայն վատնեց ու մսխեց: Ան իր պաշտօնին բերումով ուրիշին օգտակար դառնալու փոխարէն՝ ինքնիր օգուտն ու շահը միայն հետապնդեց: Այսօր մեր մէջ չկա՞ն մարդիկ որոնք կ'օգտագործեն իրենց ունեցած իշխանութիւնը, դիրքը, գահը, հանգամանքը, իրենց սեփական շահը հետապնդելու համար:

Մարդ պէտք է գիտնայ տնտեսել եւ մատակարարել իր ունեցածը: Աստուծոյ կողմէ պարգեւ ստացած մարդը, իր կարգին պէտք է պարգեւ դառնայ զինք շրջապատող մարդոց կեանքին մէջ: Աստուծոյ շնորհքը վայելող մարդը պէտք է շնորհալի ներկայութիւն դառնայ ամենուրեք: Աստուծոյ քաղցրութիւնը քաղուած անձը՝ թո՛ղ քաղցրութիւն ցուցաբերէ իր նմանին հանդէպ: Այս բոլորը չընելու եւ չըլլալու պարագային՝ Աստուծոյ հարստութիւնը վատնողներ կը սեպուինք:

10.- Տնտեսը հաշիւ ներկայացուց եւ ապա դատավճիռը լսեց. «Այլեւս իմ տնտեսս չես կրնար ըլլալ»: Նոյնը պիտի ըլլայ բոլոր մարդոց պարագան: Բարի թէ չար, արդար թէ անարդար մարդիկ, բոլորն ալ հաշիւ պիտի տան Աստուծոյ, եւ հաշիւ տալէ ետք, անկէ պիտի լսեն իրենց դատավճիռը: Աստուած անարդար չէ որ դատաստան ընէ առանց հաշիւ պահանջելու, կամ դատավճիռ արձակէ առանց պատճառը ըսելու: Յիշեցէ՛ք որ Աստուած Ադամին եւ Եւային վերաբերեալ դատաստան ընելէ առաջ՝ նախ լսեց զանոնք, հարց տուաւ թէ ի՛նչ ըրին, ինչո՛ւ ըրին (Մն 3.9-13):

Աշխարհի անգութ մարդիկ կրնան դատաստան ընել ու դատապարտել մեզ առանց լսելու մեզ կամ առանց պատճառը ըսելու, բայց Աստուած այդպիսի բան չ'ընէր: Փաստօրէն, տնտեսէն հաշիւ

պահանջուեցաւ եւ իրեն ըսուեցաւ որ կը դադրէր իր տնտեսութեան պաշտօնէն, եւ նաեւ ըսուեցաւ թէ ինչո՛ւ կը դադրէր իր պաշտօնէն:

Ինչպէս աշխարհին կապուած հարուստ մարդիկ իրենցմէ կը հեռացնեն ոեւէ մէկը որ կը վնասէ իրենց շահերուն, այնպէս ալ Աստուած, իր գաւակներուն հաւատարիմ բանակէն պիտի հեռացնէ ոեւէ մէկը որ Աստուծոյ կողմէ իրեն տրուածը չի գործածեր՝ Աստուծոյ փառքին ու մարդոց բարիքին համար:

Զգո՛յ՛: Տուեալ բացատրութեամբ, ըսել չենք ուզեր թէ տնտեսին իր պաշտօնէն հեռացումը կը նոյնացուի մարդուն Աստուծոյ գաւակներուն խումբէն դուրս դրուելուն հետ: Խորքին մէջ, տնտեսին իր պաշտօնէն հեռացումը՝ կը նոյնացուի Աստուծոյ տնտեսը ըլլալու կոչուած մարդուն այս կեանքէն հեռացումին հետ:

Այստեղ չորս կարեւոր ճշմարտութիւններ կան որոնց պէտք է անդրադառնալ.–

1.– Աշխարհի հարուստ մարդիկ երբ ամբաստանութիւն լսեն իրենց տնտեսներուն մասին կամ նկատեն անոնց անհաւատարիմ ըլլալը՝ անմիջապէս զանոնք կը հեռացնեն իրենց պաշտօնէն, առանց այլեւայլի: Աստուած սակայն այդպէս չ'ըներ: Երբ Աստուած տեսնէ որ մարդ արարածը ընհանրապէս, բայց իր ծառայութեան կանչուած մարդը մասնաւորաբար, չ'օգտագործեր իրեն տրուած պարգեւներն ու շնորհները, ձիրքերն ու կարողութիւնները, գիտութիւնն ու նիւթականը, եւ ամէն ինչ որ ունի իր տրամադրութեան ներքեւ՝ իր փառքին ու մարդոց բարիքին համար, անմիջապէս գայն կեանքի տնտեսութենէն չի հեռացներ, այլ նորանոր առիթներ ու պատեհութիւններ կ'ընծայէ անոր որպէսզի ինքզինքն ուղղէ, եւ մինչեւ մահ համբերատարութիւն կը ցուցաբերէ անոր նկատմամբ:

2.– Նկատողութեան արժանի է այն՝ որ աշխարհի տնտեսը նախ հաշիւ կու տայ եւ ե՛տքը կ'արձակուի իր պաշտօնէն, իսկ Աստուծոյ տնտեսը (մարդ արարածը), նախ կը մեռնի եւ ե՛տքը հաշիւ կու տայ: Մահէն ետք հաշտութեանութիւն կայ: Պօղոս առաքեալ կը հաստատէ թէ «մարդիկ մէկ անգամ կը մեռնին եւ Աստուծոյ դատաստանին կը յանձնուին» (Եբր 9.27): Մահէն ետք հոգեւոր դատաստան կայ: Հոգեւոր դատաստան ըսելով պէտք է հասկնալ հոգիներու դատաստան եւ ո՛չ ալ պէտք է հասկնալ «վերջին դատաստան»:

Հոգեւոր դատաստան ըսելով, կը հասկնանք որ երբ մարդ մարմնապէս մեռնի, անոր հոգին բնականօրէն կը գիտնայ թէ հետագային (Քրիստոսի երկրորդ գալուստէն եւ վերջին դատաստանէն ետք) ուր պիտի առնուի, դժո՞խք, թէ՛ արքայութիւն, եւ ըստ այնմ ալ,

կա՛մ դժոխային վիճակի կը մատնուի եւ կա՛մ՝ դրախտային վիճակի: Եթէ իր երկրաւոր կեանքի ընթացքին Աստուծոյ գաւակ չէ դարձած՝ ինքնաբերաբար կը մատնուի դժոխային կեանքի մը, իսկ եթէ Աստուծոյ գաւակ դարձած մէկն է, իսկոյն ինքզինք կը գտնէ դրախտին մէջ, այսինքն՝ Աստուծոյ ներկայութեան մէջ:

3.- Մահը պիտի գայ եւ իլէ մեր ձեռքերէն ամէն պարգեւ ու շնորհք, ամէն կարողութիւն եւ առաւելութիւն, բարիք գործելու ամէն առիթ եւ պատեհութիւն: Ինչ որ կրնանք ընել՝ հիմա՛ է որ պէտք է ընենք:

4.- Երբ տնտեսին ըսուեցաւ թէ իր անձին մասին ամբաստանութիւններ կան, տնտեսը չառարկեց կամ ինքզինք պաշտպանելու փորձ չըրաւ, որովհետեւ գիտէր թէ իր մասին ըսուածները շիտակ էին: Զուր տեղ չէ որ բնագիրը «ամբաստանութիւն» բառն է որ կը գործածէ եւ ո՛չ թէ բամբասանք բառը: Ամբաստանութիւն մը կրնայ շիտակ ըլլալ բայց բամբասանք մը կամ զրպարտութիւն մը չի կրնար շիտակ ըլլալ: Հետեւաբար, տնտեսին կը մնար լուռ մնալ եւ գլուխին նարին նայիլ:

Չորրորդ այս կէտէն կը սորվինք, որ մահէն ետք կամ դատաստանի օրը, Աստուծոյ հետ վիճելու կամ մեր անձերուն պաշտպանողականը ընելու առիթ պիտի չունենանք. ո՛չ միայն մենք զմեզ պաշտպանելու եւ արդարացնելու առիթ պիտի չունենանք, այլեւ պիտի չհամարձակինք մման քայլի դիմել, քաջ գիտնալով որ մենք բազմաթի՛ւ բազմաթիւ անգամներ վատնած ենք Աստուծոյ կողմէ մեզի տրուածը, եւ ասով հանդերձ, անգիղջ ու անապաշխար կերպով մեկնած ենք այս կեանքէն:

Երբ անիրաւ տնտեսը հաշուետուութեան կը կանչուի՝ պատասխան չի տար իր տիրոջ: Ասիկա մեզի պէտք է յիշեցնէ թէ մեղաւոր մարդը երբ դատաստանի ու հաշուետուութեան կանչուի՝ պիտի պապանձի Աստուծոյ ներկայութեան (Մտ 22.12): Յիշեցէք որ երբ Աստուած դատաստան ըրաւ Օսին, Եւային ու Ադամին վերաբերեալ, անոնք ո՛չ մէկ բառ ըսին, ինքնապաշտպանութեան ո՛չ մէկ ձեւի դիմեցին (Ծն 3.14-19):

«Ի՞նչ կրնամ ընել. ահա տէրս գիս տնտեսութեան պաշտօնէն կը գրկէ: Բանուորութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ'ամչնամ» (Ղկ 16.3): Քանի մը մատնանշումներ.-

1.- Երբ տնտեսին թելադրուեցաւ իր տրամադրութեան տակ դրուած ստացուածքներուն հաշիւը ներկայացնել, սկսաւ ինքնիրեն խորհիլ եւ ըսել. «Ի՞նչ կրնամ ընել»: Եթէ նախապէս տնտեսը իր ըրածներուն ուշադիր եղած ըլլար, ան հիմա պիտի չըսէր. «Ի՞նչ կրնամ ընել»: Այն ինչ որ հիմա պիտի ընէր՝ նախապէս ըրած պէտք էր ըլլար: Այն վիճակը որուն մատնուեցաւ տնտեսը, կը սորվեցնէ մեզի որ ամէն

ինչ իր ժամանակին պէտք է ընենք: Կրնայ ժամանակը անցնիլ եւ մեզի յաւելեալ ժամանակ չտրուիլ որպէսզի մեզի յանձնուած պարտականութիւնը ընենք:

2.- Վերեւ հաստատեցինք որ տնտեսին պաշտօնէն հեռացումը կը նոյնանայ մարդուն այս աշխարհէն բաժանումին հետ: Սակայն ուշադիր ըլլանք հետեւեալին: Տնտեսին հարցումը. «Ի՞նչ կրնամ ընել», յստակօրէն ցոյց կու տայ, որ ան տակաւին կարելութիւնը ունի բան մը ընելու եւ ինքզինք նեղ կացութենէն դուրս բերելու, քանի տակաւին աշխարհի մէջ է, ասիկա սակայն մեզ պէտք չէ մոլորեցնէ եւ մտածեցնել տայ, որ մեղաւոր եւ անապաշխար մարդիկ մահէն ետք կրնան բան մը ընել եւ իրենք զիրենք ազատագրել դժոխային վիճակէն:

Մահէն ետք մարդը ոչինչ կրնայ ընել: Ա՛յս է ինչ որ ցոյց կու տայ տնտեսին բերնին մէջ գտնուող բառերը. «Բանուորութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ'ամչնամ»: «Բանուորութիւն» եւ «մուրալ» բառերը իրարու ներհակ իմաստ եւ նշանակութիւն ունեցող բառեր են: Բանուորութիւնը աշխատանք, ջանք եւ քրտինք կ'ենթադրէ, իսկ մուրալը՝ առանց աշխատանքի բան մը ձեռք ձգել: Այս երկու երեսներն ալ մահէն ետք ո՛չ մէկ նշանակութիւն ունին:

Մահէն ետք մէկը չի կրնար բանուորութիւն ընել, այլ խօսքով, մէկը չի կրնար աշխատանք տանիլ ու քրտինք թափել Աստուծոյ արքայութիւնը շահելու համար: Աշխատանքի ատենը հիմա՛ է: Մահէն ետք վարձատրութիւնն է որ կը սպասէ մեզի: Մահէն ետք մուրալ ալ կարելի չէ: Մահէն ետք մուրալով, այսինքն՝ աղաչելով, խնդրելով ու ողբալով՝ Աստուծոյ գութը շարժել չենք կրնար: Աստուած չ'ուզեր որ իր զաւակները մուրացող մարդիկ ըլլան, այլ կ'ուզէ որ անոնք աշխատո՛ղ մարդիկ ըլլան, տփնո՛ղ մարդիկ ըլլան, երկնո՛ղ մարդիկ ըլլան:

Աստուծոյ արքայութիւնը բան մը չէ որ կրնանք ձեռք ձգել մուրալով: Արքայութիւնը հոգեւոր գորութիւն ունեցող եւ հոգեւոր պատերազմի պատրաստ եղող մարդոց համար է: Յիսուս ինքն իսկ ըսաւ թէ զօրաւորներն են որ արքայութիւնը ձեռք կը ձգեն (Մտ 11.12): Զարեհ Արքազանը խօսելով Տիրոջ այս բառերուն մասին՝ կ'ըսէ. «Յստակ է որ խօսքը հոգեւոր գորութեան մասին է, նկատի ունենալով մնայուն հալածանքները որոնք կը սպասեն արքայութեան աշակերտներուն»:

Աստուած իր արքայութիւնը չի տար անգործ նստած մուրացող մարդոց, այլ անոնց՝ որոնք Տէր Յիսուսի խաչը շալկած կը փորձեն անսայթափ քայլերով հետեւիլ Յիսուսի քայլերուն եւ յաղթականօրէն քայլել յաւիտենական կեանքի փշոտ ցանապարհէն:

3.- Վերադառնանք տնտեսին: Ճիշդ է որ տնտեսին առակը՝ առակ է, եւ հետեւաբար, իրողական գետնի վրայ ապրած անձ մը չէ եղած ան: Բայց իր նման եւ իր նկարագիրով մարդիկ միշտ ալ եղած են: Ուստի անհրաժեշտ է կարգ մը հարցադրումներ կատարել եւ հաստատումներ ընել:

Տնտեսը ինչո՞ւ չէր կրնար բանուորութիւն ընել: Արդե՞օք որովհետեւ ծեր էր, արդե՞օք որովհետեւ կաղ կամ անդամալոյծ էր, արդե՞օք որովհետեւ անկարող եւ անուշիմ մէկն էր: Բայց եթէ այդպիսին ըլլար՝ տէրը իր ստացուածքներուն տնտեսութեան կարելոր պաշտօնը պիտի յանձնէ՞ր իրեն:

Տնտեսը դիւրին միջոցներով իր կեանքի ապրուստը հոգալու վարժուած էր, ուստի բանուորութիւն ընելը իրեն համար տանջանք էր: Հետեւաբար, «Բանուորութիւն չեմ կրնար ընել» ըսելով, պէտք է հասկնալ՝ «չեմ ուզեր ընել»: Տնտեսը ֆիզիքական անկարութենէ չէր որ կը տառապէր, այլ՝ հոգեւոր անկարութենէ: Ան ո՛չ թէ կարողութիւն չունէր աշխատելու, այլ՝ պատրաստակամութիւն չունէր:

Պահ մը հեռացնենք մեր հայեացքները տնտեսէն եւ գանոնք կեդրոնացնենք մեր անձերուն վրայ: Մենք ալ արդեօք իրեն նման կ'ըսե՞նք «Բանուորութիւն չեմ կրնար ընել»: Մենք եւս տնտեսին նման դիւրին միջոցներով մեր կեանքի ապրուստը ձեռք առնու ետեւէ չե՞նք: Զրկանք մակաբոյծ մարդիկ, որոնք կ'ապրին ուրիշներուն ապրուստին ետեւէն:

Եթէ երբեք նիւթական հաց ուտել ուզող մարդը պէտք է անձնապէս աշխատի ու քրտինք թափէ, որքա՞ն անելի հոգեւոր Հացին ցանկացող մարդը՝ պէտք է անձնապէս աշխատի այդ Հացին ձեռք բերումին համար: Փրկութիւնը փոխանորդական չէ ու չի կրնար ըլլալ, այսինքն՝ ես չեմ կրնար փրկուիլ ուրիշի մը փոխարէն, ո՛չ ալ ուրիշը կրնայ փրկուիլ փոխարէնս: Օրինակ, եթէ մայրս հաւատացեալ մէկն է, այդ չի նշանակեր որ ես ալ պիտի փրկուիմ իրեն հետ: Փրկութիւնը անձնական է. անձնապէս պէտք է ընդունիլ փրկութիւնը:

4.- «Մուրալու կ'ամչնամ»: Բնական է որ մուրալու պիտի ամչնար, ի՛նք՝ որ երկար տարիներէ ի վեր փառքի մէջ կ'ապրէր եւ ամէն կողմէ հանգստութիւն կը վայելէր: Ան չէր ուզեր մուրալ որովհետեւ իր արժանապատուութիւնը վիրաւորուած կը զգար:

Կարելի է նաեւ «մուրալու կ'ամչնամ» բառերուն ետին տեսնել իր ինքնահաւանութիւնն ու հպարտութիւնը: Ինքնահաւան եւ հպարտ մարդը ո՛չ կը սիրէ մուրալ եւ ո՛չ ալ խնդրել, ո՛չ կ'ուզէ աղաչել եւ ո՛չ ալ հայցել: Եթէ այդպիսի տնտեսի մը հանդիպէի, պիտի ուզէի հարց տալ

իրեն.–«Տիրոջ ստացուածքը յափշտակելու կամ վատնելու չես ամչնար, հացդ մուրալո՞ւ կ'ամչնաս»:

«Մուրալու կ'ամչնամ»: Որո՞նք կը մուրան ընդհանրապէս: Կը մուրան անոնք՝ որոնք անկարութենէ մը, այլ խօսքով, մարմնական պակասութենէ մը կը տառապին: Եւ ասիկա կրնայ հասկնալի ըլլալ հասկնալի պատճառներով: Բայց մէկը որ կարելիութիւնը ունի աշխատելու եւ աշխատելու փոխարէն կը մուրայ՝ անընդունելի է թէ՛ Աստուծոյ եւ թէ՛ մարդոց հայեացքով:

Դիւրին է այս նշմարութիւնը հոգեւոր իմաստով առնել: Աստուած չ'ուզեր որ իր գաւակները մուրացող մարդիկ ըլլան, ինչպէս քիչ առաջ ըսի, այլ կ'ուզէ որ իրենց տրամադրութեան տակ դրուած կարելիութիւնները օգտագործող մարդիկ ըլլան: Անոնք որոնք կը խնդրեն Տիրոջմէն որ զիրենք ազատէ դժոխքէն բայց չեն յանձնուիր Տիրոջ՝ անոնք մուրացող մարդիկ են: Անոնք որոնք փրկուիլ կ'ուզեն բայց Փրկիչին յանձնուիլը կը ձգձգեն՝ անոնք մուրացող մարդիկ են:

Յիսուս չ'ուզեր որ փրկութիւն մուրանք իրմէ, այլ կ'ուզէ որ պահանջենք իրմէ, եւ իրաւունք կ'ունենանք պահանջելու միայն ա՛յն ատեն՝ երբ յանձնուած ու ապաւինած ենք իրեն, երբ իր կողմէ մեզի տրուած պարգեւները գործածած ենք մարդոց բարիքին ու փրկութեան համար: Յանձնուելէ ու վստահելէ ետք Տիրոջ, եւ Տիրոջ կողմէ մեզի տրուածը մարդոց բարիքին համար գործածելէ ետք՝ ալ պէտք չունինք մուրալու, որովհետեւ փրկութիւնը կը դառնայ «մեր իրաւունքը»: Իրաւունքը մուրալով չ'առնուիր, այլ՝ հետապնդելով ու պահանջելով:

«Ասկայն գիտեմ թէ ինչ պէտք է ընեմ, որ երբ տէրս գիս տնտեսութեան պաշտօնէն հեռացնէ, մարդիկ ընդունին գիս իրենց տուններէն ներս» (Ղկ 16.4):

Ճարպիկ տնտեսը միջոցի մը կը դիմէ որպէսզի կարենայ ապրիլ պաշտօնէն իր հեռացումէն ետք, եւ ասիկա ամենէն բնական երեւոյթն է: Աշխարհի մէջ ապրող ոեւէ մարդ երբ իրեն իմաց տրուի թէ պիտի հեռացուի իր պաշտօնէն, բնական է որ սկսի մտածել տարբեր պաշտօնի մը կամ աշխատանքի մը ձեռնարկելու մասին:

Տնտեսը առաջին անգամ իր ուշադրութիւնը կեդրոնացուց իր տիրոջ պարտապաններուն վրայ, որովհետեւ արդէն ծանօթ էր անոնց եւ հաւանաբար ալ որոշ մօտիկութիւն մը կար անոնց միջեւ: Ան աշխատեցաւ իր տիրոջ պարտապաններէն ոմանք իրեն բարեկամ դարձնել, անոնց պարտքերէն ոմանք շնորհելով իրենց, հաւանաբար այն յոյսով՝ որ իր պաշտօնէն զրկուելէ ետք պիտի կարենար անոնց մօտ գործ

մը գտնել (ինչ որ «իրենց տուներէն ներս» բառերը կը պարզեն) եւ կամ գոնէ պատառ մը հաց ուտել:

Ուշագրաւ է որ տնտեսը իր ապագային կարգադրութիւնը իր տնտեսութեան պաշտօնէն հեռացուելէ ետք չէ որ կատարեց, այլ՝ հեռացուելէ առաջ: Եւ ասիկա բնական է, որովհետեւ իր պաշտօնէն հեռացուելէ ետք, ան իրաւասութիւնը պիտի չունենար իր տիրոջ պարտապանները կանչելու եւ անոնց պարտքերը նուազեցնելու:

Հիմնական դասը որ հոսկէ կը սորվինք այն է՝ որ ինչպէս տնտեսին համար անօգուտ պիտի ըլլար տնտեսութեան իր պաշտօնէն արձակուելէ ետք փորձել իր տիրոջ պարտապանները սիրաշահիլ, այնպէս ալ Աստուծոյ տնտեսին համար, կամ ըսեմք՝ մեղաւոր մարդուն համար, ո՛չ մէկ օգուտ պիտի ունենայ, մահէն ետք փրկութիւն մուրալ, ներում հայցել, աղաչել, ողբալ ու կոծել:

Սիրելի՛ բարեկամ, հաստատեցինք թէ ցարպիկ տնտեսը մարդկային միջոցներու դիմեց որպէսզի կարենայ ապրիլ պաշտօնէն իր հեռացումէն ետք. հարց կու տամ, դուն ի՞նչ միջոցի կամ որո՞ւն կրնաս դիմել որպէսզի կարենաս շարունակել ապրիլ մահէն ետք: Եթէ Աստուած քեզի յայտնէ թէ քիչ առնենք այս կեանքէն պիտի հեռացուիս, ի՞նչ պիտի ըլլայ առաջին գործդ կամ ընելիքդ: Կեանքէն հեռացուելէ առաջ պիտի չփորձե՞ս հաշտուիլ Աստուծոյ եւ նմաններուդ հետ: Պիտի չզոյ՞ջա՞ս գործած մեղքերուդ համար եւ պիտի չապաշխարե՞ս:

Ապաշխարութեամբ Աստուծոյ յանձնուիլը ծերութեանդ տարիներուն մի՛ ձգեր, որովհետեւ չես գիտեր թէ պիտի հասնի՞ս այդ տարիներուն թէ ոչ: Աստուած կրնայ անակնկալ կերպով քեզ հեռացնել կեանքի տնտեսութենէն եւ դուն երկվայրկեան մը իսկ ժամանակ չունենաս բան մը ընելու: Մի՛ առարկեր որ տնտեսը առիթը ունէր բան մը ընելու: Տնտեսը առիթը ունէր, որովհետեւ իր պաշտօնն էր որ իր ձեռքէն կը խլուէր եւ ո՛չ թէ իր կեանքը: Բայց մեմք վերեւ բացատրեցինք, որ տնտեսին իր պաշտօնէն հեռացումը՝ կը նոյնացուի մարդուն այս կեանքէն հեռացումին հետ:

Ինչպէս տնտեսը իր պաշտօնէն հեռացուելէ առաջ մտածեց բան մը ընել որպէսզի հետագային մարդիկ գինք ընդունէին իրենց տուներէն ներս, այնպէս ալ դուն, ո՛վ սիրելի ընթերցող, մտածէ ընելիքիդ մասին երբ տակաւին չես հեռացուած կեանքի տնտեսութենէն, որպէսզի երբ հեռացուիս՝ ընդունուիս «յաւիտեանական յարկերու մէջ» (Ղկ 16.9):

«Ապա մէկ առ մէկ կանչեց իր տիրոջ պարտապանները եւ առաջինին հարցուց.– "Ո՞րքան պարտք ունիս տիրոջս": Անիկա պատասխանեց.– "Նրկու հարիւր թիթեղ ձէթ": Տնտեսը ըսաւ.–

"Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ եւ անմիջապէս գրէ՝ հարիւր": Յետոյ հարցուց միւսին.- "Դո՞ւն որքան պարտք ունիս": Անիկա պատասխանեց.- "Չորս հարիւր յիսուն պարկ ցորեն": Տնտեսը ըսաւ.- "Ահաւասիկ պարտամուրհակդ. նստէ եւ գրէ՝ երեք հարիւր յիսուն": Տէրը ասիկա լսելով՝ գովեց անիրաւ տնտեսը իր հնարամտութեան համար» (Ղկ 16.5-8): Քանի մը հաստատումներ.-

1.- Զարեհ Արք. Ազնաւորեան կ'ըսէ. «Տուեալ բաժնին մէջ մենք կը կարդանք տնտեսին հնարամտութեան, իր փրկութեան ելքին եւ իր տիրոջ գովասանքին մասին: Երբ կը տեսնէ որ իր պաշտօնէն պիտի զրկուի, տնտեսը կը խորհի տակաւին իր ձեռքը ունեցած պատեհութիւնը օգտագործել՝ բարեկամներ շինելու համար, որպէսզի հետագային անոնք զինք ընդունին եւ օգնեն իրեն: Եւ բարեկամ շահելու լաւագոյն ձեւը՝ անոնց հանդէպ ներողամիտ ու բարեացակամ վերաբերում ունենալն է. որ այս պարագային կ'արտայայտուի՝ մարդոց պարտքերը շնորհքներով թեթեւացնելու արարքով:

Աշխարհային հարստութեան վրայ կարգուած տնտեսի մը պարագային նման վերաբերում մը, այսինքն՝ իր տիրոջ հաշույն եւ անոր ի վնաս՝ ուրիշներուն պարտքերը նուազեցնելը, անշուշտ յաւելեալ անիրաւութիւն մը պիտի ըլլար ոեւէ տնտեսի համար որ արդէն իսկ պարտագանց գտնուած է: Ատոր համար ալ Յիսուս առակին մէջ «անիրաւ տնտես» կը կոչէ գայն: Բայց ի՞նչպէս կ'ըլլայ ուրեմն, որ տէրը կը գովէ անիրաւ տնտեսը՝ իր հնարամտութեան համար, գոր իմաստուն վարմունք կ'որակէ: Հոս է ամբողջ բանալին այս առակին հասկացողութեան:

Եթէ մենք այս աշխարհի մէջ նիւթական հարստութեան վրայ կարգուած աշխարհային տնտեսի մը համար ուզենք հասկնալ առակին սա խօսքը, թէ «տէրը գովեց անիրաւ տնտեսը, որովհետեւ իմաստուն վարուեցաւ», տարօրինակ եւ անհասկնալի պատկերի մը դիմաց կը գտնենք մենք մեզ: Իրականութիւնը այն է, սակայն, որ Քրիստոս աշխարհայինը նկատի չունի, այլ կը խօսի Աստուծոյ եւ Աստուծոյ շնորհքներու մատակարարման գործին կանչուած մարդուն մասին:

Քրիստոսի ուզածը եթէ ուզենք բանալ, հետեւեալը կ'ըլլայ.-

Աստուծոյ կանչուած ամէն մարդ անոր գործին մէջ տնտես մըն է, որմէ հաւատարմութիւն եւ պարտաճանաչութիւն կ'ակնկալուի, որպէսզի անեցնէ իրեն վստահուած հարստութիւնը: Սակայն մարդիկ առհասարակ, անփոյթ եւ անհաւատարիմ կը գտնուին. զանազան բերումներով՝ իրենց վրայ դրուած պարտքը կա՛մ չեն կատարեր եւ կամ կը կատարեն թերի, նուազագոյն ճիգով եւ աշխատանքով

բաւարարուելով, ինչ որ մեր Տիրոջ սպասած արդիւնքը չի տար: Այսպիսով անհկա ինքզինք կ'ենթարկէ դատաստանի ու դատապարտութեան:

Բայց այն պարագային, երբ մարդ Տիրոջ ազդարարութիւնը լսելով կ'արթննայ եւ կը սկսի այդ հարստութենէն շնորհել ուրիշներուն, ատով ո՛չ միայն ուրիշներ կը սիրաշահի, այլեւ կը շահի զԱստուած: Երկրաւոր տէր մը անելի պիտի գայրանար իր հարստութիւնը ուրիշներուն բաշխելու տնտեսի արարքին դիմաց, եւ արդարօրէն, որովհետեւ ուրիշին ինչքերը ցրուելն ու վատնելը անիրաւութիւն է: Բայց ինչ կը վերաբերի Աստուծոյ մեզի վստահած հարստութեան, այսինքն՝ սիրոյ, ներողամտութեան, իր խօսքին, իր շնորհքներուն եւ տուած կարողութիւններուն, նշմարտութիւնը նիշդ հակառակն է: Աշխարհի հարստութիւնները բաշխելով՝ կը ցրուին ու կը սպառին: Մինչդեռ երբ Աստուծոյ հարստութիւնը բաշխեմք՝ կը տարածուի, կ'անի ու կ'առատանայ անհկա: Նիւթական հարստութիւնը սպառողը՝ կը կորսնցնէ գայն. մինչդեռ Աստուծոյ հարստութիւնը սպառողը՝ անելի՛ն կը գանձէ ու կը դիզէ, թէ՛ երկրի վրայ եւ թէ՛ մանաւանդ երկինքի մէջ: Ճիշդ է որ այդ հարստութիւնները մերը չեն, Աստուծո՛յ կը պատկանին, բայց Աստուած զանոնք տուած է մեզի՛, եւ մեզի տուած է՝ որպէսզի զանոնք իմաստութեամբ յանձանանք, գործածենք եւ բաշխենք, եւ գործածելով ու բաշխելով՝ զանոնք կենդանի գանձի եւ անող հարստութեան վերածենք:

Որպէս ֆրիստոնեայ, մենք, կամայ թէ ակամայ, այդ տնտեսութիւնը իրագործելու կոչուած ենք: Սակայն իսկապէս երանելի կ'ըլլանք ա՛յն ատեն միայն, երբ Աստուծոյ եւ մեր կոչումին հաւատարիմ մօտեցումով, իմաստութեամբ եւ յօժարակամ կը կատարենք մեր այդ պարտականութիւնը, որովհետեւ այդ պարագային մենք մեզ վարձատրուած կը զգանք երկրաւոր մեր կեանքին մէջ, եւ այնուհետեւ երջանիկ սպասումը կ'ունենանք յաւիտեանական վարձատրութեան՝ արդարութեան պսակին, գոր Տէրը մեզի պիտի հատուցանէ այն օրը (Ա.Կր 9.17: Բ.Տմ 4.8)»:

2.- Խօսքիս սկիզբը բացատրեցի թէ սխալ է «երկու հարիւր թիթեղ ձէթ» եւ «չորս հարիւր յիսուն պարկ ցորեն» թիւերուն եւ տարրերուն ետին տեսնել խորհրդանիշներ կամ պատկերացումներ: Ճիշդ է որ անոնց ետին կանգնող պատգամը եւ անոնցմէ եկող հոգեւոր դասն է կարեւորը, բայց գոնէ կրնանք հարց տալ թէ արդեօք պատահականութի՞ւն է որ Յիսուս «ձէթ» եւ «ցորեն» տարրերը կ'ընտրէ: Յիսուսի խօսքերուն մէջ ո՛չ մէկ բառ կայ պատահականութեան արդիւնք: Յիշենք որ անցեալին

մարդիկ ձեռքին միջոցաւ էր որ լոյս կ'ունենային, իսկ ցորենին միջոցաւ՝ հաց: Ո՞վ չի գիտեր որ լոյսն ու հացը մարդուն կեանքին համար ամենէն կարեւոր երկու տարրերն են: Եթէ չմոռնանք այս ուղիւնքը, պարզ կը դառնայ, հետեւաբար, որ պարտապաններուն ձեռքի եւ ցորենի պարտքերը շնորհել, կը նշանակէ՝ զանոնք չգրկել կեանքի ամենէն անհրաժեշտ եւ ամենէն տարրական պէտքերէն:

3.- Աստուծոյ տնտեսը պարտի ձեռք ու ցորեն տալ, այլ խօսքով՝ Քրիստոսի լոյսն ու հացը տալ շուրջիմներուն, իր խնամքին յանձնուած հօտին, իսկ եթէ չի տար, ի՞նք պատճառ կը դառնայ որ մարդիկ պարտապան դառնան, այսինքն՝ մեղքով ծանրաբեռնուին:

Պարտապանները մեղքով ծանրաբեռնուած մարդիկն են: Քրիստոսի տնտեսը՝ Քրիստոսի փրկութիւնը մեղքով ծանրաբեռնուած մարդոց մատակարարելու կոչումը ունի: Եթէ տէր չկենայ իր կոչումին, պարտապանները միշտ է որ ենթակայ պիտի ըլլան դատաստանի, բայց շատ աւելի խիստ դատաստանի ենթակայ պիտի ըլլայ տնտեսը ինք:

Տնտեսին արարքը եւ վերաբերմունքը մեր դիմաց կը պարզէ քանի մը հոգեւոր պատգամներ.-

1.- Ինչպէս պարտապաններ իրենց տիրոջ ձեռք ու ցորեն պարտական էին եւ տնտեսը անոնց պարտքերը թէեւ չշնորհեց բայց նուազեցուց, այնպէս ալ ուրիշներ կրնան տարբեր բաներ պարտական ըլլալ մեզի. մեր կոչումն է շնորհել իրենց պարտքերը գէթ մասամբ, ինչպէս ըրաւ տնտեսը:

Տակաւին, եթէ ուզենք, մենք կրնանք ամբողջովին շնորհել մեր պարտապաններուն պարտքերը, որովհետեւ անոնք մեր պարտապաններն են եւ ո՛չ թէ մեր երկրաւոր տէրերուն պարտապանները: Տնտեսը եթէ ամբողջովին չներեց պարտապաններուն, չներեց անոր համար որ անոնք իր տիրոջ պարտապաններն էին, եւ ո՛չ թէ իր պարտապանները, ուստի ինք իրաւասութիւնը կամ իրաւունքը չունէր իր տիրոջ պարտապաններուն պարտքերը լիովին շնորհելու առանց իր տիրոջ գիտակցութեան ու կամքին:

2.- Տնտեսը մտածեց բան մը ընել, եւ առաջին անգամ մտածեց պարտքի բեռնն տակ գնշուած իր տիրոջ պարտապաններուն մասին. բնական է որ եթէ ասոնց օգնէր՝ պիտի սիրաշահէր զանոնք եւ անոնք ալ իրենց կարգին օգտակար պիտի դառնային իրեն երբ նեղութեան մէջ իյնար: Հոսկէ կը սորվինք, որ եթէ օգնենք նեղութեան եւ աղքատութեան միջանկերուն մէջ տանջուող մարդոց, պիտի վայելենք Աստուծոյ մեծամեծ օրհնութիւնները եւ պիտի ժառանգենք երկինքի անպատմելի ուրախութիւնը:

Ինչպէս տնտեսը պարտապաններուն պարտքերը նուազեցնելով յոյս ունէր անոնց տուներէն ներս առնուիլ, այնպէս ալ մենք, եթէ աղփատին շնորհեմք իր նիւթական պարտքերը՝ կրնանք արքայութենէն ներս առնուիլ: Լա՛ւ բան է օգնութեան փութալ տառապեալին, բայց պէտք չէ օգնել այն յոյսով որ անոնք ալ օր մը մեզի օգտակար պիտի դառնան, ինչպէս տնտեսը խորհեցաւ, յուսաց եւ ըրաւ:

Այս կէտին մէջ խօսեցայ նիւթական պարտքի բեռան տակ ցնշուած աղփատ մարդուն մասին եւ անոր օգնելու անհրաժեշտութեան մասին: Բայց նոյն այս կէտը հոգեւոր իմաստով մըն ալ պէտք է առնենք: Իբրեւ քրիստոնեաներ, մենք կոչուած ենք ազատագրելու մեղքի բեռան տակ ցնշուած մարդիկը՝ զանոնք Քրիստոսի բերելով:

3.- Լաւ կ'ընենք եթէ երբեք տնտեսին նման, պարտքի բեռան տակ հիւծած մարդոց պարտքերը շնորհեմք իրենց: Բայց զգո՛յշ պէտք է ըլլանք նման բան չընելու տնտեսին անձնասիրական ոգիով ու մօտեցումով: Տնտեսը իր սեփական շահերէն մղուած անոնց պարտքերը նուազեցուց եւ ո՛չ թէ գթութենէ կամ սէրէ մղուած: Անոր նպատակը եւ իրեն համար առաջնահերթը, իր պաշտօնէն արձակուելէ ետք պատսպարան մը գտնելն էր եւ ո՛չ թէ պարտապաններուն վիշտը մեղմելը:

Քալով մեզի՝ Աստուծոյ գործին տնտեսութեան կանչուածներուս, զգոյշ պէտք է ըլլանք չընելու ու չըլլալու տնտեսին նման: Այլ խօսքով՝ երբ կը ծառայեմք ուրիշին, կ'օգնեմք ուրիշին, ատիկա ընենք անկեղծ սրտով ու Յիսուսի սիրով եւ ո՛չ թէ անձնական շահերէն մղուած:

Տնտեսին արարքին ետին մարդասիրութիւնը չէր որ կը կանգնէր, այլ՝ անձնասիրութիւնը: Առանց սիրոյ կատարուած բարեգործութիւն մը ո՛չ մէկ օգուտ կը բերէ մեզի: Պօղոս առաքեալ կը հաստատէ որ եթէ երբեք մեր բոլոր ինչքերը աղփատներուն տանք բայց սէր չունենանք՝ ոչինչով կ'օգտուինք (Ա.Կր 13.3): Երբ շահադիտական նկատառումներէ մղուած կ'ողորմինք ուրիշին, ատիկա ողորմութիւն չ'ըլլար եւ մեզ վարձատրութեան չ'արժանացնէր, ընդհակառակը՝ կեղծաւորներուն հետ պատժուելու ենթակայ կը դարձնէ:

Նոյնն է հոգեւոր գետնի վրայ: Երբ հոգեւոր գետնի վրայ օգտակար կը դառնանք ուրիշին մեր խօսքով, քարոզով, յորդորով, խրատով, բայց մեր նպատակը մարդոց կողմէ փառաւորուիլն է եւ ո՛չ թէ զԱստուած փառաւորելը՝ ատիկա մեզ ո՛չ թէ վարձատրութեան, այլ՝ պատիժի ենթակայ կը դարձնէ:

4.- Տնտեսին ըրածը թէ՛ ճիշդ էր եւ թէ՛ սխալ: Ճիշդ էր՝ որովհետեւ պարտապան մարդոց պարտքերը նուազեցուց, իսկ սխալ էր՝ որովհետեւ

ան իր տիրոջ իրաւունքէն է որ խլեց: Ան իր գրպանէն ոչինչ տուաւ պարտապաններուն: Հետեւաբար, տնտեսը ողորմած անձ մը պէտք չէ նկատել: Եւ հետաքրքրականը այն է, որ թէեւ տնտեսը իր անհաւատարմութեան համար դուրս կը դրուէր գործէն, բայց տակաւին ան կը շարունակէր իր անհաւատարմութիւնը: Ան մինչեւ հիմա վատնած էր իր տիրոջ հարստութիւնը, եւ հիմա եւս, պարտապաններուն պարտքերը նուագեցնելով՝ կը շարունակէր վատնել: Այս կէտէն կը սորվինք երկու բան.–

ա.– Կը սորվինք որ ուրիշին պէտք է օգնել, այո՛, բայց պէտք է օգնել մե՛ր գրպանէն տալով եւ ո՛չ թէ ուրիշին գրպանէն, ինչպէս տնտեսը ըրաւ:

բ.– Երկրորդ մեր սորվելիքը՝ հոգեւոր երեսն է: Տնտեսը իր գրպանէն բան չդրաւ, այլ՝ իր տիրոջ հարստութենէն տուաւ: Սա ցոյց կու տայ որ Աստուծոյ տնտեսը՝ իր քովէն չէ որ կու տայ, այլ ինչ որ կու տայ՝ Աստուծմէ կ'առնէ եւ այդպէս կու տայ, միշտ ինչպէս երեք հացերով օգնող բարեկամին առակը ցոյց կու տայ (Ղկ 11.5-8): Հոն կը տեսնենք թէ ինչպէս երբ մարդ մը քամբորդ բարեկամ մը կ'ունենայ, անմիջապէս կը դիմէ իր մէկ մտերիմ բարեկամին եւ կ'ըսէ. «Բարեկա՛մ, ինծի երեք հաց փոխ տուր, որովհետեւ քամբորդ բարեկամ մը տունս իջեւանեցաւ եւ ես հրամցնելիք բան չունիմ»:

Ճամբորդը՝ հոգեւորապէս ծարաւ եղող մարդն է. մարդը որուն քով կ'իջնէ քամբորդը՝ հաւատացեալ մարդն է, որ կը խոստովանի ըսելով. «Հրամցնելիք բան չունիմ»: Իսկ անձը որուն քով կը դիմէ հաւատացեալ մարդը եւ հաց կը խնդրէ՝ Յիսուս ինքն է: Այստեղ Յիսուս կը սորվեցնէ իր հետեւորդներուն՝ խոստովանիլ թէ բան մը չունին, թէ բան մը չեն կրնար ընել, եւ թէ պէտք է իրեն դիմեն եւ իրմէ հաց խնդրեն, որպէսզի կարենան հոգեւորապէս անօթիին տալ: Ուստի, Տէրը, անուղղակիօրէն մեզի կը սորվեցնէ թէ մենք առանց իրեն չենք կրնար հոգիներ փրկել, չենք կրնար բան մը ընել, ինչպէս ինքն իսկ ըսաւ. «Առանց ինծի դուք ոչինչ կրնաք ընել» (Յհ 15.5):

Հետեւաբար, երբ մեր ունեցած շնորհները կը մատակարարենք մեր նմաններուն, պէտք չէ մտածենք որ ատոնք մե՛րն են, մեր սեփականութի՛ւնն են եւ մեր ազատ կամքով է որ կը մատակարարենք մեր շուրջիներուն: Աստուած ի՛նքն ատոնք մեզի տուած է, եւ տուած է, միշտ ուրի՛շը նկատի ունենալով, ուստի մենք պարտի՛նք մեր ստացածը փոխանցել ուրիշին եւ գործածել մարդոց բարօրութեան համար:

5.– Եթէ երբեք տնտեսը ձեթի ու ցորենի պարտքեր շնորհելով, կրցաւ իր տիրոջ պարտապաններուն բարեհաճութիւնը շահիլ, որքա՛ն

աւելի մեծ, պիտի կրնանք շահիլ Աստուծոյ բարեհաճութիւնն ու բարեկամութիւնը եթէ երբեք շնորհենք մեր նմաններուն մեղքի պարտքերը: Ներողամտութիւնը այնպիսի՝ պտուղ մըն է որուն արդիւնքը նախ մեծ կը վայելենք: Ներե՛նք ուրիշները եւ Աստուած մեզի պիտի ներէ: Շնորհենք ուրիշներուն պարտքերը եւ Աստուած պիտի շնորհէ մեր պարտքերը:

Ճիշդ է որ տնտեսը շնորհեց որոշ պարտապաններու որոշ պարտքեր, բայց կարելի չէ գայն ներողամիտ մէկը նկատել, որովհետեւ իր ըրածը ներողամտութեան ու մարդասիրութեան արդիւնք էր, այլ՝ եսասիրութեան արդիւնք: Ան երկու պարտապաններու պարտքեր շնորհեց ո՛չ թէ որովհետեւ ներողամիտ էր, այլ որպէսզի անոնց ներողամտութեան արժանանար հետագային, գործէ արձակուելէ ետք:

6.- Անցնելէ առաջ յաջորդ համարին, ուրիշ կէտ մը եւս կայ որուն կ'արժէ անդրադառնալ: «Նստէ եւ անմիջապէս...»: Այս բառերը ցոյց կու տան որ տնտեսը աճապարանօք էր: Ան ժամանակ չունէր կորսնցնելու: Վայրկեան առաջ պէտք էր իր ապագայ կեանքին ապահովութիւնը ձեռք ձգէր, երբ տակաւին իր պաշտօնէն չէր զրկուած: Դիւրին է հոգեւոր իմաստով մը հասկնալ այս երեւոյթը: Երբ Աստուած ձեռով մը յայտնէ կամ զգացնէ մեզի որ ժամանակը հասած է որ հեռանանք այս կեանքէն, իսկոյն պէտք է ապաշխարութեան դիմել, ժամանակ պէտք չէ կորսնցնել:

Զգո՛յշ ըլլանք: Ապաշխարութիւնը անյետաձգելի է: Պէտք չէ սպասել որ մեզի իմացուի թէ այս կեանքէն հեռանալու մեր օրերը հասած են որպէսզի ապաշխարենք ու դարձի գանք Քրիստոսի: Պէտք է դարձի գալ նո՛յն այն վայրկեանին երբ անդրադառնանք մեր մեղաւորութեան եւ գիտակցիմք թէ պէտք ունինք Փրկիչին: Ապաշխարութիւնը ծերութեան օրերուն պէտք չէ ըլլայ, այլ հիմա՛, այսօ՛ր: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Հիմա՛ է այդ յարմար ժամանակը. հիմա՛ է փրկութեան օրը» (Բ.Կր 6.2):

Այո՛, հիմա՛: Հիմա՛ որ այս տողերը կը կարդաս, յաջորդ հատուածին անցնելէ առաջ, կրնաս պահ մը կանգ առնել, խոստովանիլ մեղքերդ, ընդունիլ որ Յիսուս քեզի համար իր կեանքը գոհեց, ինքզինքդ իր ձեռքերուն մէջ դնել, եւ յայտարարել ու ճանչնալ զինք իբրեւ Տէրը կեանքիդ, Փրկիչը անձիդ, գահակալը սրտիդ, առաջնորդը յաւիտեանական կեանքի: Եթէ կը խորհիս թէ գործ մը ունիս կատարելիք եւ կը մտածես գայն վերջացնելէ ետք ապաշխարել, գիտցի՛ր, թէ կրնայ ըլլալ որ գործդ իր աւարտին չհասցուցած՝ աւանդես հոգիդ: Մահը կրնայ անակնկալ ձեռով գալ: Անակնկալ «բաներուն» մի՛ վստահիր:

Տնտեսին համար իր պաշտօնէն զրկուիլը անակնկալ էր: Ան նման բան չէր յուսար: Ան սակայն կրցաւ իր գլուխին ցարին նայիլ,

որովհետեւ ան տնտեսութեան պաշտօնէն էր որ պիտի գրկուէր եւ ո՛չ թէ կեանքէն: Իսկ ինչ պարագայ տարբեր է, որովհետեւ պաշտօնէ մը գրկուելու մասին չէ խօսքը, այլ՝ մահուամբ այս կեանքէն բաժնուելու մասին: Ուստի, մի՛ յետաձգել ապաշխարութեամբ Փրկիչին դառնալու աշխատանքը:

«Տէրը ասիկա լսելով՝ գովեց անիրաւ տնտեսը իր հնարամտութեան համար: Որովհետեւ այս աշխարհի մարդիկը իրարու հանդէպ իրենց վարմունքին մէջ անելի նարայիկ են քան լոյսի որդիները» (Ղկ 16.8): Քանի մը մատնանշումներ.–

1.– Այս համարը շատերուն համար առակին ամենէն խնդրայարոյց համարն է, որովհետեւ հարց կը տրուի, թէ մեծահարուստ մարդը ի՞նչպէս կամ ինչո՞ւ գովեց անիրաւ տնտեսը: Կ'ենթադրեմ որ համարին իմաստը շատ պարզ կը դառնայ, եթէ երբեք նկատի առնենք որ մեծահարուստ մարդը իր տնտեսը չէ որ գովեց ու գնահատեց, այլ իր տնտեսին հնարամտութիւնը:

Տնտեսը հնարամիտ ու նարայիկ մարդ էր: Ան խորհեցաւ իր անձին շահը: Ան մտածեց բարօր ապագայ ունենալու մասին: Ան իր մտածածը յաջողութեամբ կատարեց: Առիթը ներկայացաւ եւ ան առիթէն օգտուիլ գիտցաւ: Իսկ դո՛ւն, սիրելի հաւատացեալ եղբայր եւ քոյր, կ'օգտուի՞ս քեզի ներկայացող առիթներէն եւ զանոնք կ'օգտագործե՞ս անսասան ապագայ մը ունենալու համար երկինքի մէջ:

2.– Զգո՛յշ ըլլանք ըսելու որ ան գնահատեց կամ գովեց իր տնտեսին կատարած գործը: Ան տնտեսին կատարած գործը չէ որ գնահատեց այլ՝ իր գործը կատարելու համար՝ անոր ցուցաբերած նարայիկութիւնը: Տէրը գովեց իր տնտեսը ո՛չ թէ որովհետեւ կրցած էր խաբել զինք, այլ որովհետեւ կրցած էր իր անձին շահը մտածել, փնտռել եւ իրագործել:

Ինչպէս տնտեսին տէրը գովեց զինք իր անձին ապահովութեան համար կարգադրութիւններ ըրած ըլլալուն համար, այնպէս ալ Աստուծոյ հայեացքով, գնահատելի ու գովելի են բոլոր անոնք՝ որոնք իրենց անձերուն փրկութեան համար յատուկ նարայիկութեամբ կ'աշխատին: Աշխարհ դէպի կորուստ ու կործանում կ'արտորայ. նարայիկ եւ իմաստուն եղողները թող Յիսուսի գան՝ ազատելու համար կործանումէ եւ ապահովելու համար իրենց փրկութիւնը:

3.– Տնտեսը անհիշող միջոցներով կրցաւ հասնիլ իր նպատակին: Առակը սակայն, չ'ուսուցաներ մեզի թէ ի հարկին ֆրիստոնեայ մարդը կրնայ անարդար եւ անհիշող միջոցներու դիմել որպէսզի կարենայ իր նպատակներուն հասնիլ կամ իր ծրագիրները իրականացնել: Անարդար

միջոցներու դիմելով՝ չենք կրնար արդարանալ Աստուծոյ առջեւ: Անհաճոյ կերպեր որդեգրելով՝ չենք կրնար Աստուծոյ բարեհաճութիւնն ու բարեկամութիւնը շահիլ:

Յիսուսի սորվեցուցածը մեզի այն է՝ որ օրինակ առնենք տնտեսէն եւ ֆարպիկ ըլլանք ու գիտնանք մենք զմեզ կորուստի հովիտէն ու նեղ պահերէն դուրս բերել: Քրիստոս չ՛ուզեր որ իր զաւակները անխոհեմ ու անմիտ ըլլան եւ իրենց անմտութեան եւ անխոհեմութեան զոհը երթան: Քրիստոնեաներ կոչուած են իմաստութեամբ իրենց կեանքերը դեկավարելու: Սուրբ Հոգիին առաջնորդութիւնը վայելող մարդուն անմիտ ըլլալ չի վայելեր:

Քրիստոս չ՛ուզեր որ տնտեսին նման անիրաւ ըլլանք, բայց վստահաբար կ՛ուզէ որ տնտեսին նման իմաստուն եւ հնարամիտ ըլլանք: Տնտեսը «անիրաւ» կոչուեցաւ որովհետեւ անիրաւութեամբ վերաբերեցաւ իր տիրոջ հարստութեան հետ, բայց միւս կողմէ, ան կոչուեցաւ նաեւ «ֆարպիկ ու հնարամիտ», որովհետեւ ֆարպիկօրէն ու հնարամտօրէն կրցաւ դուրս գալ այն անել կացութենէն որուն մատնուած էր:

Մեր Եկեղեցւոյ մեկնիչներէն ու աստուածաբաններէն՝ Ստեփանոս Սիւնեցի, կ՛ըսէ. «Անիրաւ տնտեսը կը խորհրդանշէ բոլոր այն մեղաւորները որոնք կը ներեն իրենց պարտապաններուն պարտքերը եւ առատապէս կը բաշխեն իրենց ինչքերը: Անոնք ներելով ուրիշներուն պարտքերը՝ իրենք զիրենք սիրելի կը դարձնեն հրեշտակներուն ու արդարներուն»: Մեղաւորներ ողորմութիւն ընելով, Աստուծոյ եւ անոր հրեշտակներուն բարեկամութիւնն է որ ձեռք կը ձգեն:

4.- Զարեհ Արք. Ազնաւորեան կ՛ըսէ թէ «Լոյսի որդիները Աստուծոյ կապուած մարդիկն են»: Ի՞նչ իմաստով աշխարհի մարդիկը Աստուծոյ մարդոցմէն աւելի ֆարպիկ են: Ասիկա դժբախտ երեւոյթ մըն է որուն սակայն չենք կրնար չանդրադառնալ:

Նայի՛նք տնտեսին ըրածին: Ի՞նչ ըրաւ ան որ զինք աւելի՛ իմաստուն ու ֆարպիկ կ՛ընէ քան Լոյսի որդիները: Ան մտածեց իր ապագային մասին: Լոյսի որդիները միշտ չէ որ կը մտածեն իրենց ապագային, այլ խօսքով՝ իրենց յաւիտենականութեան մասին:

Աշխարհի մարդիկը հազար ու մէկ միջոցի կը դիմեն իրենք զիրենք իրագործելու եւ հանգստաւէտ կեանքի տիրանալու. գալով Աստուծոյ զաւակներուն, անոնք ամէն միջոցի կը դիմե՞ն եւ իրենց ամէն կարելին կ՛ընե՞ն հասնելու համար յաւերժական հանգիստին:

Ինչպէս տնտեսը մտածեց իր ապագային մասին, նոյնպէս ալ քրիստոնեայ մարդը կը մտածէ՞ իր յաւիտենականութեան մասին: Եւ

ինչպէս տնտեսը մտածեց պաշտօնագրկութենէն ետք իրեն պատահելիքին մասին, այնպէս ալ Բրիստոնեայ մարդը կը մտածէ՞ մահէն ետք իրեն պատահելիքին մասին:

Կամ, տնտեսը շատ լաւ գիտէր որ այնքան ատեն երբ իր պաշտօնին վրայ էր՝ կրնար կարգադրութիւն մը ընել իր ապագային համար, եւ նաեւ շատ լաւ գիտէր որ իր պաշտօնէն զրկուելէ ետք՝ ալ ոչինչ կրնար ընել, արդեօք լոյսի որդիները իրենք ալ միշտ կը յիշե՞ն թէ կրնան իրենց ապագայ յաւիտենականութիւնը ապահովել այնքան ատեն երբ մարմինի մէջ են, եւ կ'անդրադառնա՞ն որ իրենց մահէն ետք ո՛չ մէկ օգուտ պիտի ունենայ փրկութիւն մուրալ, քաւութիւն հայցել, ներում խնդրել:

Դժբախտաբար ո՛չ, եւ ահա թէ ինչո՛ւ Քրիստոս աշխարհի մարդիկը աւելի նարպիկ եւ աւելի իմաստուն կը կոչէ քան լոյսի որդիները:

Եւ տակաւին, տնտեսը ներեց պարտապաններուն մեղքերը, որպէսզի իր անձը ազատէր, իսկ մենք՝ լոյսի որդիներս, կը ներե՞նք իրարու մեղքերն ու յանցանքները երբ իրար վշտացնենք, որպէսզի մեր անձերը փրկենք: Շատ հաւատացեալներ կան որոնք իրարու հետ հարց ունին, որոնք քէնցած ու գժտուած են իրարու հետ, այս պարագայիս, տնտեսը իրենցմէ աւելի իմաստուն չի՞ համարուիր: Վստահաբար: Ահա թէ ինչո՛ւ Յիսուս հաստատեց որ «աշխարհի մարդիկը իրարու հանդէպ իրենց վարմունքին մէջ աւելի նարպիկ են քան լոյսի որդիները»:

Ուրիշ ցաւալի իրականութիւն մըն ալ կայ որ աշխարհի մարդիկը մեզմէ աւելի իմաստուն կը դարձնէ: Աշխարհի մարդոց միջեւ մենք թէպէտ չենք գտներ անկեղծութիւն եւ սէր, բայց կը գտնենք համագործակցութիւն: Աշխարհասէր մարդիկ իրենց շահին համար յաճախ իրարու կողմին կը կանգնին եւ կ'օգնեն իրարու: «Լոյսի որդիները», այսինքն՝ հոգեւոր կեանք ապրող աստուածասէր մարդիկը իրենք ալ կը համագործակցի՞ն իրարու հետ իրենց անձերու շինութեան եւ Քրիստոսի մարմինին՝ եկեղեցիին անման ու նորոգումին համար:

Յիսուս կ'ըսէ. «Եթէ ձեզմէ երկու հոգի երկրի վրայ միաբանին ոեւէ խնդրանքի համար... Հայրս պիտի կատարէ ատիկա» (Մտ 18.19): Զուր տեղ չէ որ Յիսուս այստեղ «միաբան» ըլլալու մասին կը խօսի: Մենք՝ հոգեւոր եղբայրներս եւ քոյրերս, ընդունինք որ մեր շատ մը խնդրանքներուն համար պատասխան չենք ստանար, որովհետեւ միաբանութիւն ու սէր, անկեղծութիւն ու մտերմութիւն չկայ մեր միջեւ: Ասոնց փոխարէն դժբախտաբար, մեր միջեւ կայ մրցակցութիւն, անհանդուրժողութիւն եւ երբեմն ալ զարմանալիօրէն՝ աններողամտութիւն, չըսելու համար՝ թաքցուած ատելութիւն:

5.- «Անիրաւ տնտեսը»: Առակին մէջ միայն այստեղ է որ տնտեսը կը կոչուի՝ անիրաւ: Խօսեցանք արդէն անոր կատարած անիրաւութիւններուն մասին: Բայց այստեղ կ'ուզեմ հետեւեալը հաստատել: Ոեւէ ֆրիստոնեայ որ Աստուծոյ կողմէ իրեն տրուած պարգեւները, շնորհիւները, ձիրքերն ու կարողութիւնները չի գործածեր իր նմաններուն բարիքին համար՝ Աստուծոյ հայեացքով անիրաւ մըն է ան:

Երբ սիրել կրնանք ու չենք սիրեր՝ անիրաւ ենք:

Երբ ներել կրնանք ու չենք ներեր՝ անիրաւ ենք:

Երբ օգնել կրնանք ու չենք օգներ՝ անիրաւ ենք:

Երբ բաշխել կրնանք ու չենք բաշխեր՝ անիրաւ ենք:

Երբ ինկածը կանգնեցնել կրնանք ու չենք կանգնեցնել՝ անիրաւ ենք:

Երբ մարդիկը Յիսուսի բերել կրնանք ու չենք բերեր՝ անիրաւ ենք:

Երբ տրտմածը կրնանք ուրախացնել ու չենք ուրախացնել՝ անիրաւ ենք: Մէկ խօսքով, դրական ռելե բան որ կրնանք ընել բայց կը զլանանք ընել՝ անիրաւ ենք:

«Եւ ես կ'ըսեմ ձեզի.- "Աշխարհիկ հարստութիւնը գործածեցէ՛ք այնպէս՝ որ Աստուծոյ բարեկամութիւնը շահի՛ք, որպէսզի երբ այս աշխարհէն ելլէ՛ք, ձեզ յաւիտեանական յարկերու մէջ ընդունին"» (Ղկ 16.9):

Այս բառերով Քրիստոս կ'եզրակացնէ առակը, եւ ըսել կ'ուզէ, թէ ինչպէս տնտեսը իր տրամադրութեան տակ դրուած հարստութիւնը գործածեց այնպիսի՝ ձեւով մը որ կարենար շահիլ մարդոց բարեկամութիւնը, այնպէս ալ մենք՝ ֆրիստոնեաներս, մեր ձեռքը եղած հարստութիւնը, առիթներն ու պատեհութիւնները, պարգեւներն ու շնորհիւները, ձիրքերն ու կարողութիւնները, գործածենք այնպիսի՝ ձեւով մը, «որ Աստուծոյ բարեկամութիւնը շահինք»:

Աստուծոյ կողմէ տրուած հարստութիւնը եթէ իմաստութեամբ գործածենք՝ ան մեր ֆայլերը կ'առաջնորդէ Աստուծոյ: Տուեալ համարով, Քրիստոս մեր ներկայ կեանքը իմաստութեամբ ապրելու կոչ մըն է որ կ'ուղղէ մեզի: Ան կը պատուիրէ մեզի ապրելու այնպէս՝ որ կարենանք երկրի ցամբով երկինքը ձեռք ձգել, աշխարհի միջոցաւ աշխարհի Ստեղծիչին հասնիլ:

Արդարեւ, յաւիտեանական կեանքը ձեռք կը ձգենք մեր ներկայ ժամանակաւոր կեանքի ընթացքին: Աշխարհը սիրող եւ աշխարհին կապուած մարդը՝ չի կրնար սիրել զԱստուած եւ անոր բարեկամութիւնը շահիլ: Աստուծոյ բարեկամութիւնը կը շահինք միայն այն ատեն՝ երբ աշխարհի հարստութիւնը կ'օգտագործենք Աստուծոյ փառքին համար,

Աստուծոյ եկեղեցիին բարգաւաճման համար, աղփատներուն կերակրման համար, որբերուն պատսպարման համար:

Ինչպէս տնտեսը պարտապան մարդոց օգնելով՝ անոնց հանութիւնը սիրաշահեցաւ, այնպէս ալ հաւատացեալ եղբայրներ եւ քոյրեր, երբ օգնեն պարտապաններուն (թէ՛ նիւթական պարտք ունեցողներուն եւ թէ՛ մեղքի պարտք ունեցողներուն) ձերբագատիլ իրենց պարտքերէն, Աստուծոյ հանութիւնը կը շահին:

Պարտապան մարդը նեղութեան մէջ եղող մարդն է: Տնտեսը իր տիրոջ պարտապաններուն պարտքերը նուազեցնելով՝ անոնց նեղութիւնն է որ նուազեցուցած եղաւ, եւ յետոյ իր ըրածին պտուղը վայելեց: Ոեւէ մէկը որ կ'օգնէ ուրիշին ձերբագատելու իր նեղութիւններէն՝ պիտի վայելէ Աստուծոյ առատ սէրն ու գուրգուրանքը:

Քրիստոս չ'ուզեր որ մենք տնտեսին ըրածին պէս ընենք, բայց կ'ուզէ որ տնտեսին պէս իմաստուն ըլլանք:

Տնտեսը գործեց երկրային բնակարանի մը համար, իսկ մենք պէտք է գործենք երկնային բնակարանին համար:

Ան նիւթական պարտքեր շնորհեց, իսկ մենք նիւթական պարտքերու կողմին, մեղքի պարտքեր ալ կրնանք շնորհել ոեւէ մէկուն որ ցաւցուցած է մեզ:

Ան օգնեց իր տիրոջ պարտապաններուն՝ անոնցմէ օգնութիւն գտնելու ակնկալութեամբ, իսկ մենք օգնենք ու բարին գործենք մեր մմաններուն՝ առանց անոնցմէ օգտուելու ակնկալութեան:

Ան իր տիրոջ իրաւունքէն տուաւ պարտապաններուն, իսկ մենք մեր իրաւունքէն, մեր ունեցածէն, մեր սրտէն ու հոգիէն, մեր ժամանակէն ու ուրախութենէն, մեր հանգիստէն ու երջանկութենէն տանք:

Հին թարգմանութեան մէջ դրամը կոչուած է «անիրաւ մամոնայ»: Կ'արժէ ասոր մասին երկու խօսք ըսել: «Անիրաւ մամոնայէն ձեզի բարեկամներ ըրէք»: Նոր թարգմանութիւնը յստակ կը դարձնէ թէ Յիսուս ի՛նչ ըսել կ'ուզէ այս բառերով: «Անիրաւ մամոնայէն ձեզի բարեկամներ ըրէք» խօսքով, Յիսուս ըսել չ'ուզեր թէ անիրաւ մամոնան (դրամը) մեզի բարեկամ ըրնենք: Բարեկամութիւնը մամոնայէն կամ մամոնային միջոցաւ պէտք է ըլլայ եւ ո՛չ թէ մամոնան:

Ինչո՞ւ դրամը կոչուած է «անիրաւ»: Մինչեւ հիմա տեսանք թէ տնտեսը կը կոչուի՝ անիրաւ, իսկ այստեղ, դրամն է որ կը կոչուի՝ անիրաւ: Ինչո՞ւ: Դրամը ինքնին անիրաւ բան չէ, բայց անիրաւ կը սեպուի երբ անիրաւ միջոցներով ձեռք կը բերուի, ինչպէս ըրաւ տնտեսը:

Դրամը անհրաւ կը համարուի երբ անհրաւ մարդուն ձեռքին մէջ իյնայ եւ անհրաւ բաներու համար գործածուի:

Դրամը անհրա՛ւ է երբ աշխարհասէր մարդու մը ձեռքին է, եւ իրաւո՛ւնք է երբ աստուածասէր մարդու մը ձեռքին է:

Դրամը անէ՛ծք է երբ դրամասէր մարդու մը ափին մէջն է, եւ օրհնութի՛ւն է երբ մարդասէր մարդու մը ափին մէջն է:

Դրամը մո՛ւր է երբ մեղքով մրոտած ձեռքով կը բռնուի, եւ մաքո՛ւր է երբ առաքինի մարդու մը ձեռքը կը դրուի:

Դրամը «անհրա՛ւ» է երբ մարդիկ գայն օգտագործեն իրենց իշխանութեան սահմանները ընդարձակելու համար, եւ երկնային պարգե՛ւ է երբ մարդիկ գայն օգտագործեն Աստուծոյ թագաւորութիւնը տարածելու համար:

Տակաւին, դրամը «անհրաւ» կը կոչուի որովհետեւ անիկա կը խաբէ մարդիկը: Դրամը մարդոց մտածել կու տայ որ եթէ երբեք զինք ունենան՝ անսասան պիտի ըլլան:

Դրամը ապահովութեան զգացում կու տայ իր տիրոջ, բայց երբ լուրջ վտանգ մը ներկայանայ՝ կը լքէ իր տէրը:

Դրամը «անհրաւ» է որովհետեւ միշտ յուսախաբ կ'ընէ իրեն յուսացողները:

«Անհրաւ» է որովհետեւ մինչեւ գերեզման կը հասցնէ եւ հոն կը լքէ. գերեզմանէն անդին չ'անցնիր եւ անցնելու ալ զօրութիւն չունի:

«Անհրաւ» է որովհետեւ կը թուի որ ապաւէն է մեզի, բայց դատաստանին օրը՝ անապաւէն եւ անպաշտպան կը թողու մեզ:

Տնտեսը կոչուեցաւ «անհրաւ» իր դրամասիրութեան համար. ուստի մի՛ սիրեր դրամը:

Ան ամբաստանուեցաւ իր անհաւատարմութեան համար, ուստի հեռո՛ւ փախիր անհաւատարմութենէն:

Ան իր պաշտօնէն զրկուեցաւ իր տիրոջ հարստութիւնը վատնելուն համար, ուստի զգո՛յշ եղիր Աստուծոյ կողմէ քեզի տրուած նիւթական եւ բարոյական պարգեւները վատնելէն: Քու կոչումդ քեզի տրուածը կրկնապատկուած Աստուծոյ դարձնելն է եւ ո՛չ թէ նուազեցուած եւ եղծուած:

Եղի՛ր լաւ տնտես Աստուծոյ: Աստուծոյ կողմէ քեզի տրուածը՝ Աստուծոյ փառքին համար գործածէ:

Երկինքէն տրուածը մի՛ սիրեր երկինքէն աւելի:

Թագաւորէն բաշխուածը Թագաւորութեան տարածման համար օգտագործէ:

Սիրտդ կապէ աշխարհի Ստեղծիչին եւ ո՛չ թէ աշխարհին:

Եղի՛ր իշխող աշխարհին վրայ եւ ո՛չ թէ իշխուած աշխարհին կողմէ:
Եղի՛ր տէրը ունեցածիդ եւ ո՛չ թէ ստրուկը անոր:

Կ'եզրակացնեմ Զարեհ Արք. Ազնաւորեանին խօսքով.–

«Այո՛, սիրելի եղբայրներ, Քրիստոս այսօր անգամ մը եւս մեզի կը յիշեցնէ, թէ իր առաքելութիւնը մե՛ր առաքելութիւնն է: Մեզ վերստին կը կոչէ՝

Առաքեա՛լ ըլլալու, եւ ո՛չ թէ պարզապէս պաշտօնեայ:

Հոգեւորակա՛ն ըլլալու եւ հոգիներո՛ւ մատակարար, եւ ո՛չ թէ պարզապէս եկեղեցական եւ նիւթական մատակարարութեամբ զբաղած տնտես:

Աւետարանի՛չ ըլլալու, եւ ո՛չ թէ միայն պարզ բեմբասաց ու հոնտոր:

Աւետաբե՛ր ըլլալու, եւ ո՛չ թէ միայն անխինդ եւ անլոյս խօսքի վանառական:

Պատգամախօ՛ս ըլլալու, եւ ո՛չ թէ միայն աստուածային տառին թութակաբար եւ անհոգի կրկնաբանող:

Ուսուցիչ հա՛յր ու հոգիներու դաստիարակ ծնո՛ղ ըլլալու, եւ ո՛չ թէ հայրութեան հոգիէն զուրկ լոկ վարձկան հովիւ:

Այո՛, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի օրինակով կոչուած ենք երկինքի դեսպան ըլլալու, փրկութեան միջնորդ եւ շնորհքի մատակարար: Եւ թող Աստուած անգամ մը եւս իր Սուրբ Հոգիին օծումը պարգեւէ մեզի, որպէսզի Աստուծոյ նոր առաքեալները ըլլանք մեր եկեղեցւոյ այսօրուան կեանքին մէջ»:

ԺԱՅՈՒԻ ՎՐԱՅ ՇԻՆԵԼ ՏՈՒՆԸ

«Ուրեմն, ով որ իմ այս խօսքերս կը լսէ եւ կը գործադրէ զանոնք, պիտի նմանի այն իմաստուն մարդուն, որ իր տունը ժայռի վրայ կը շինէ: Անձրեւները կու գան, գետերը կը յորդին, հովերը կը փչեն եւ կը զարնուին տան, բայց տունը չի կործանիր, որովհետեւ ժայռի վրայ հաստատուած է: Իսկ ով որ իմ այս խօսքերս կը լսէ բայց չի գործադրեր զանոնք, պիտի նմանի այն յիմար մարդուն, որ իր տունը աւազի վրայ կը շինէ: Անձրեւները կու գան, գետերը կը յորդին, հովերը կը փչեն եւ կը զարնուին տան, եւ տունը կը կործանի: Եւ ի՞նչ ահաւոր կ'ըլլայ այդ տան կործանումը» (Մտ 7.24-27):

Աւետարանական այս հատուածով Քրիստոս կ'աւարտէ լեբան քարոզը: Փորձենք իւրաքանչիւր նախադասութիւն առանձին առնել եւ խտացեալ կերպով մը անկէ դուրս բերել հոն գտնուող գեղեցիկ իմաստները:

«Ուրեմն, ով որ իմ այս խօսքերս կը լսէ եւ կը գործադրէ զանոնք, պիտի նմանի այն իմաստուն մարդուն, որ իր տունը ժայռի վրայ կը շինէ» (Մտ 7.24): Քանի մը հաստատումներ.–

1.– Աստուծոյ խօսքերը լսող ու գործադրող մարդը ժայռի նման ամո՛ւր կ'ըլլայ: Աստուծոյ խօսքը եւ մանաւանդ այդ խօսքին գործադրութիւնը մարդս ժայռացնելու, հզօրացնելու եւ գօտեպնդելու զօրութիւնը ունի: Ինչպէս եթէ կանոնաւոր կերպով նիւթական ուտելիք չուտենք՝ կրնանք տկարանալ եւ նոյնիսկ հիւանդանալ, այնպէս ալ, եթէ կանոնաւոր կերպով եւ ամէն օր չսնանինք Աստուծոյ կենդանարար եւ զօրացուցիչ խօսքով՝ կրնանք հոգեւորապէս աղքատ ու տկար մնալ, եւ ի վերջոյ մեռնիլ:

2.– Աստուծոյ խօսքերը գործադրող մարդը՝ անյողողող կը մնայ կեանքի դժուարութիւններուն դիմաց, եւ անխորտակելի՝ փորձութիւններու առջեւ: Աստուծոյ խօսքին կատարումը լո՛յս կը դարձնէ մեզ, ուստի՝ կեանքի մթին պահերը չեն կրնար մթագնել կեանքի մեր հորիզոնը: Աստուծոյ խօսքին գործադրութիւնը կեա՛նք կը դառնայ մարդու սրտին մէջ, ուստի՝ մահը չի կրնար յաղթել մարդու:

3.– Աստուծոյ խօսքերը գործադրող մարդը՝ իմաստուն մարդ է: Այո՛, իմաստուն մարդը, Աստուծոյ խօսքին կոթնո՛ղ եւ այդ խօսքով սնանո՛ղ մարդն է: Իմաստուն մարդը, Աստուծոյ Որդիին վստահո՛ղ ու

ապաւինո՞ղ մարդն է: Անմտութի՛ւն է ապրիլ կեանքը՝ առանց կեանքի Արարիչին:

4.- Ժայռին վրայ շինուած տունը՝ իր հաւատքին մէջ տոկուն մարդուն պատկերացումն է, դժուարութեանց դիմաց չնահանջող ու չընկրկող մարդուն պատկերն է:

5.- Ժայռը Քրիստոս ինքն է: Պօղոս առաքեալ կը վկայէ որ Աստուծոյ դրած միակ հիմը «Յիսուս Քրիստոս է» (Ա.Կր 3.11 Հմմտ Ա.Կր 10.4, Ա.Պտ 2.4): Քանի որ ժայռը Քրիստոսն է եւ Քրիստոս յաւիտենական է, ուրեմն, տունը շինել ժայռին վրայ, կը նշանակէ՝ երկինքի մէջ կառուցել ա՛յնպիսի տուն մը, մեր հաւատքով ու գործերով, որ յաւիտենական ըլլայ: Զարեհ Արք. Ազնաւորեան՝ կ'ըսէ. «Ով որ կ'ուզէ հաստատուն եւ մնայուն տուն շինել՝ ժայռի վրայ կը շինէ: Նոյնպէս ալ այն քրիստոնեան որ կ'ուզէ Աստուծոյ քով մնայուն տուն մը շինել՝ պէտք է իսկական վէմին՝ Քրիստոսի վրայ շինէ գայն»: Զմոռնանք նաեւ որ ժայռը յաւերժութեան նշանն է, ուստի տունը շինել ժայռին վրայ, կը նշանակէ, երկրի վրայ ապրիլ հաւատքի ա՛յնպիսի կեանք մը, որ մեզ արժանի կը դարձնէ յաւերժական կեանքի ժառանգութեան:

6.- «Շինել» բառը աշխատանք, նիգ ու ջանք կ'ենթադրէ: Հետեւաբար, ըսել ուզուածը այն է՝ որ պէտք է աշխատինք Աստուծոյ խօսքն ու կամքը կատարել, եւ մանաւանդ, պէտք է աշխատինք մեր անձերուն փրկութեան համար: «Աշխատանք» եւ «պարգեւ ու շնորհք» բառերը զիրար չեն հակասեր: Ճի՛շդ է որ առաքեալը կը հաստատէ թէ մենք Աստուծոյ շնորհքով փրկուեցանք, եւ թէ՛ փրկութիւնը մեր «արժանիքը չէ, այլ՝ Աստուծոյ պարգեւն է» (Եփ 2.8-9), բայց միւս կողմէ, նոյն առաքեալը կոչ կ'ուղղէ մեզի՝ ըսելով. «Երկիւղած բարեպաշտութեամբ ձեր փրկութեան համար աշխատեցէք» (Փլպ 2.12):

Զարեհ Արք. Ազնաւորեան՝ կ'ըսէ. «Տուն շինելու պատկերը փոխաբերական պատկեր մըն է, որ համագօր է փրկութեան, ինչպէս Ա.Կր 3.9-15ը ցոյց կու տայ: Հետեւաբար փրկութիւնը տեսակ մը շինարարական աշխատանք է, որ կը տարածուի մարդուս կեանքին բոլոր օրերուն վրայ: Բայց մեր շինածին ինչ ըլլալը (տանա՞ր թէ մեհեան) միայն դատաստանին օրը կը յայտնուի: Հարկաւ այս հաստատումը ուղիղ պէտք է հասկնալ, որովհետեւ գործերը առանձին՝ երբեք չեն կրնար փրկութեան հասցնել մարդը. "Եթէ Տէրը չշինէ տունը, գուր տեղ կ'աշխատին գայն շինողները" (Սղ 127.1): Առանց հաւատքի՝ հաւատքի գործ չի կրնար ըլլալ. բայց նաեւ, միւս կողմէ, կարելի չէ անտեսել գործերը, որոնք վկայութիւնն են հաւատքին. "Հաւատքը առանց գործերու մեռած է"» (Յկ 2.26):

«Անճրեւները կու գան, գետերը կը յորդին, հովերը կը փչեն եւ կը զարնուին տան, բայց տունը չի կործանիր, որովհետեւ ժայռի վրայ հաստատուած է» (Մտ 7.25): Քանի մը հաստատումներ .-

1.- Անճրեւներուն տեղալը, գետերուն յորդիլը եւ հովերուն փչելը, կարգ մը մեկնիչներու կողմէ նկատուած են որպէս կեանքին հրամցուցած նեղութիւններն ու փորձութիւնները, իսկ ուրիշ մեկնիչներ՝ գանոնք կը նկատեն վերջին դատաստանը պատկերացնող արտայայտութիւններ:

Զարեհ Արք. Ազնաւորեան խօսելով սոյն համարին մէջ յիշուած տունին կործանումին մասին՝ կ'ըսէ. «Անճրեւներուն տեղալը, գետերուն յորդիլը եւ հովերուն փչելը, այլ խօսքով՝ կործանումի խօսքը որ հոս կայ, դատաստանին պատկերացումն է որ կու տայ մեզի: Դատաստանի պատկերացման մէջ, սակայն, Քրիստոսի տուածը կրակի պատկերը չէ, այլ՝ ջրհեղեղի պատկերը: Յիշեցէք որ անցեալին Աստուծոյ դատաստանին իրագործումը ջրհեղեղով տեղի ունեցաւ: Հեղեղը ջրհեղեղին պատկերն է որ կը պարզէ: Հարկաւ դատաստանի օրը դարձեալ ջրհեղեղ պիտի չըլլայ, պարզապէս պատկերացումն է որ նոյնն է:

Յիսուս ջրհեղեղի պատկերացումը կը գործածէ, ըսելու համար, որ անոնք որոնք անօրէնութիւն կը գործեն՝ անոնց գործերը չեն կրնար դիմանալ դատաստանին, ընդհակառակը, անոնց բաժինը ահաւոր կործանումը պիտի ըլլայ: Իսկ անոնք որոնք Աստուծոյ պատուիրաններուն հնազանդութեան մէջ են եւ ըստ այնմ կը գործեն, անոնց գործերը Աստուծոյ առջեւ հանելի գործեր են: Այդպիսիները բնականօրէն Աստուծոյ կողմէ իրենց արժանի վարձատրութիւնը պիտի ստանան»:

Յովհաննէս Երզնկացի, Մատթէոսի իր մեկնութեան մէջ, անճրեւները, գետերը եւ հովերը կը նմանցնէ դեւերու եւ սատանաներու գունդերուն «որոնք կը պատերազմին արդարներուն հոգիներուն դէմ եւ կամ մարմնական պատերազմի միջոցաւ կը նեղեն գանոնք, որպէսզի կարենան կործանել անոնց առաքինութեան տունը... բայց չեն կրնար կործանել, թէպէտ կը զարնեն տունին, այսինքն՝ կը գայթակղեցնեն: Ինչո՞ւ դեւերը չեն կրնար կործանել արդար մարդիկը: Չեն կրնար որովհետեւ անոնք ժայռի վրայ հաստատուած են, այսինքն՝ իրենց ամբողջ յոյսը երկինքն է»:

2.- Իր երկրաւոր կեանքի ընթացքին Քրիստոսով ժայռացած, Քրիստոսի վստահած եւ իր հաւատքը Քրիստոս-ժայռին վրայ խարսխած մարդը, ապահով եւ անվտանգ պիտի ըլլայ դատաստանի օրը եւ

դատաստանի առջեւ: Դատաստանի օրը Քրիստոս ի՛նքն պիտի ըլլայ մեր դատաւորը: Դատաստանի օրը՝ Քրիստոսի՛ օրն է (Ա.Կր 1.14): Ատեանը՝ Քրիստոսի՛ ատեանն է (Բ.Կր 5.10): Դատաստանի օրը՝ դատաստանի փոթորիկը պիտի չհպի Քրիստոսի գաւակներուն:

3.- Առաջին կէտին մէջ, ըսինք, որ անձրեւներուն տեղալը, գետերուն յորդիլը եւ հովերուն փչելը, թէպէտ դատաստանին պատկերացումն են, եւ սակայն, անոնք մաքուր կրնան հասկցուիլ կամ պատկերացնել կեանքի հրամցուցած նեղութիւններն ու փորձութիւնները: Աշխարհային փորձութիւնները յաճախ «կը զարնուին» Աստուծոյ գաւակներուն հաւատքի տունին, բայց հաւատքի այդ «տունը չի կործանիր, որովհետեւ ժայռի վրայ հաստատուած է»:

Եթէ փորձութիւնները անձրեւներու նման տեղան, եթէ դժուարութիւնները գետերու նման յորդին, եթէ հարուածները հովերու նման փչեն, անոնք չեն կրնար իսկական քրիստոնեայ մարդը բաժնել Աստուծոյ սէրէն: Ո՛չ անձրեւները, ո՛չ գետերը, ո՛չ հովերը, «ո՛չ մահը եւ ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ չար ոգիներու իշխանութիւնները, ո՛չ ներկան եւ ո՛չ գալիքը, ո՛չ ալ ոեւէ զօրութիւն, ո՛չ վերին եւ ո՛չ ալ ներքին աշխարհները, ո՛չ ալ ուրիշ ստեղծագործութիւն մը կրնայ մեզ բաժնել Աստուծոյ սէրէն, որ մենք մանչցանք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ» (Հո 9.38-39):

4.- «Յորդիլ» ու «փչել» բառերը կարելի է հասկնալ նաեւ «հակադրութիւն» եւ «ընդդիմութիւն» իմաստով: Աշխարհ մի՛շտ պիտի հակադրուի եւ ընդդիմանայ Աստուծոյ գաւակներուն, հաւատքի կեանքի ապրողներուն, եւ սակայն, անկարող պիտի ըլլայ կործանել հաւատքի այն տունը որ անոնք կառուցած են Քրիստոս-ժայռին վրայ: Քրիստոս-ժայռին վրայ կառուցուած տուններուն պաշտպանութիւնը Քրիստոս ի՛նքն կ'ընէ: Աշխարհ որքան կ'ուզէ թող փորձէ կործանել Աստուծոյ գաւակներուն հաւատքի տունը, մենք գիտենք, որ Աստուած կ'ուզէ եւ կարող է մեզ կանգուն պահել (Հո 14.4):

5.- «Կը զարնուին տան»: Աշխարհը միշտ պիտի զարնէ՛ Աստուծոյ գաւակներուն հաւատքի տունին եւ պիտի փորձէ կործանել զանոնք: Աշխարհ չէ հետաքրքրուած երկնային տունով եւ ո՛չ ալ կ'ուզէ որ ուրիշներ հետաքրքրուին: Ան կը սպառնայ զարնել ոեւէ մէկուն որ չ'ենթարկուիր իր հոսանքին: Ան բաղիւմ կ'ունենայ ոեւէ անձի հետ որ չի համակերպիր իրեն եւ չի խոնարհիր իր ձեռքին տակ: Հետեւաբար, «զարնել» բառը ցոյց կու տայ, որ Աստուծոյ մարդուն եւ աշխարհի մարդուն միջեւ մնայուն բաղիւմ եւ հակադրութիւն, մնայուն

ընդհարում եւ սպառնալիք, մնայուն անհամաձայնութիւն եւ անհաշտութիւն պիտի ըլլայ:

«Իսկ ով որ իմ այս խօսքերս կը լսէ բայց չի գործադրեր զանոնք, պիտի նմանի այն յիմար մարդուն, որ իր տունը աւազի վրայ կը շինէ» (Մտ 7.26): Քանի մը հաստատումներ.–

1.– Եթէ ժայռը գՔրիստոս եւ Քրիստոսի խօսքն է որ կը ներկայացնէ, միւս կողմէ, աւազը կը ներկայացնէ աշխարհը եւ աշխարհային մտածողութիւնը: Աշխարհն ու աշխարհային մտածողութիւնները ժամանակաւոր են. անոնք ամպի նման կը ցնդին երբ փոթորիկ սկսի:

2.– Եթէ ժայռը ամուր հաւատքն է որ կը պատկերացնէ, միւս կողմէ, աւազը կը պատկերացնէ խախուտ եւ անհիմն հաւատք ունեցող մարդիկը: Զօրաւոր հաւատքն է որ կը տոկայ զօրաւոր փորձութիւններու առջեւ, եւ մանաւանդ, դատաստանի «փորձութեան» դիմաց:

3.– Եթէ ժայռը կը ներկայացնէ մեր վստահութիւնը հանդէպ Քրիստոսի, միւս կողմէ, աւազը կը ներկայացնէ մեր վստահութիւնը հանդէպ մեր անձերուն, մեր գործերուն, մեր մտածողութիւններուն: Զարեհ Ա.բ.Ֆ. Ազնաւորեան՝ կ'ըսէ. «Ով որ աւազի վրայ, այսինքն՝ մարդկային խորհողութեան եւ մտահոգութիւններուն վրայ կը փորձէ շինել հաւատքի իր տունը՝ կը ձախողի. իր շինածը ո՛չ այս աշխարհի փոթորիկներուն կը դիմանայ եւ ո՛չ ալ Աստուծոյ փորձին»:

4.– Աւազին վրայ շինուած տունը, կը ներկայացնէ նկարագիրէ ու անհատականութենէ զուրկ մարդիկը, տկար ու անզօր մարդիկը, դիրաւ նահանջող ու ընկրկող մարդիկը, դիրութեամբ ինկող ու գլորող մարդիկը:

5.– Ժայռերուն հասնելու համար, պէտք է փորել հողն ու աւազը, պէտք է խորը իջնել: Ուստի, աւազը կը ներկայացնէ Աստուծոյ հետ անխոր եւ անարմատ յարաբերութիւն ունեցող մարդիկը: Այսպիսի մարդիկ փորձութեանց ալիքներուն դիմաց իսկոյն կը ցրուին, գիշոյն այնպէս՝ ինչպէս ծովու ալիքներուն դիմաց ծովափին աւազները կը ցրուին:

6.– Աւազը խորհրդանիշ է ժամանակաւորութեան: Աւազին վրայ շինուած տունը ժամանակի ընթացքին անպայման որ փուլ պիտի գայ: Հոսկէ կը սորվինք, թէ ով որ Քրիստոս–ժայռին վրայ չէ հաստատուած, կը պատկանի ժամանակին ու ժամանակաւորին եւ ո՛չ թէ Յաւիտենականին ու յաւիտենականութեան: Եթէ ժայռը խորհրդանիշ է

յաւիտեանականութեան ու մնայունին, ապա միւս կողմէ, աւագը խորհրդանիշ է ժամանակաւորութեան ու գնայունին:

7.- Յիմարութիւն է միայն լսողը ըլլալ Աստուծոյ խօսքին: Ատիկա մեզ լուրջ պատասխանատուութեան տակ կը դնէ: Աստուծոյ խօսքը լսող բայց չգործադրող մարդը՝ աւագո՛ւտ մարդ է, ջուրէ գուրկ ա՛մպ է, անպտուղ ծա՛ն է, անբոյր վա՛րդ է, անմեղր փեթակ է, անհամ ա՛ղ է: Ինչպէս յիմարութիւն է անօթի մնալ երբ անդին, մեր կողքին սեղանին վրայ համադամ կերակուրներ դրուած են, այնպէս ալ, յիմարութիւն է գիտնալ Աստուծոյ խօսքն ու կամքը եւ սակայն չգործադրել զանոնք:

«Անճրեւները կու գան, գետերը կը յորդին, հովերը կը փչեն եւ կը զարնուին տան, եւ տունը կը կործանի: Եւ ի՛նչ ահաւոր կ'ըլլայ այդ տան կործանումը» (Մտ 7.27): Քանի մը հաստատումներ.–

1.– «Կը զարնուին»: Այս բառին հանդիպեցանք երբ կը խօսէինք իր տունը ժայռին վրայ շինած մարդուն մասին: Իսկ հոս խօսքը իր տունը աւագի վրայ շինած մարդուն մասին է: Կեանքի փոթորիկը բոլորին պիտի հանդիպի՝ հաւատացեալին եւ անհաւատին: Աշխարհը չի՛ գթար ու չի՛ խնայեր ո՛չ հաւատացեալին եւ ո՛չ ալ անհաւատին: Երկուքն ալ հաւասարապէս ենթակայ են փորձութիւններու: Տկար մարդը թող կարեկցութիւն չակնկալէ անկարեկից աշխարհէն: Անգոր մարդը թող չսպասէ որ աշխարհը գորակցի իրեն: Ընդհակառակը, աշխարհը կը խորտակէ ու կը ճգմէ տկար եւ անգոր մարդիկը:

2.– Հաւատացեալին ու անհաւատին համար գործածուած «զարնուիլ» բառը, ցոյց կու տայ որ երկուքն ալ պիտի կանգնին Աստուծոյ ատեանին դիմաց, իւրաքանչիւրը վարձատրուելու իր գործերուն համաձայն (Հո 2.6, Բ.Կր 5.10, Գղ 6.5): Առաքեալը կը հաստատէ թէ «իւրաքանչիւրին գործը դատաստանի օրը պիտի յայտնուի, եւ ատիկա կրակը պիտի յայտնէ, որովհետեւ իւրաքանչիւրին գործին որակը կրակով պիտի փորձուի: Եթէ մէկուն շինածը կրակին դիմանայ՝ ենթական պիտի վարձատրուի: Իսկ եթէ այրի՝ ենթական պիտի տուժէ...» (Ա.Կր 3.13-15):

3.– Հաւատքի տուն մը որպէսզի կարենայ տոկուն ու անսասան մնալ հիմա՛ ու դատաստանի օրը, պէտք է այդ հաւատքի տան հիմնադիրը Քրիստոս ի՛նք ըլլայ (Եբր 12.2), պէտք է այդ տան պահպանութիւնը Աստուծոյ վստահիմք եւ ո՛չ թէ մեր անձերուն: Սաղմոսագիրը նոյնը կը հաստատէ՝ ըսելով. «Եթէ Տէրը չշինէ տունը, գուր տեղ կ'աշխատին անոր շինողները: Եթէ Տէրը չպահպանէ քաղաքը, գուր տեղ կը հսկեն պահպանները» (Սղ 127.1):

4.- Քրիստոս-ժայռին վրայ չխարսխուած մարդուն համար չկայ փրկութիւն եւ ազատութիւն փոթորիկներուն դիմաց, ո՛չ հիմա եւ ո՛չ ալ դատաստանի օրը: Բայց զգո՛յժ: Շատեր կրնան իրենց հաւատփ տուները Քրիստոս-ժայռին վրայ «շինել», եւ սակայն, ծանր նեղութեան պահուն կամ դատաստանի օրը, կրնան իյնալ ու կործանիլ: Ասոնք ա՛յն մարդիկն են, որոնք միայն անունով քրիստոնեայ են, բայց իրականութեան մէջ մեռած են (Յլո 3.1): Ամէն մարդ որ Քրիստոսի անունը կը կրէ, արդե՞օք կը կրէ նաեւ Քրիստոսի հաւատքն ու սէրը: Ամէն մարդ որ կը հաղորդուի Քրիստոսի մարմինով եւ արիւնով, արդե՞օք ատիկա կը նշանակէ թէ հաղորդակցութեան մէջ է Աստուծոյ հետ: Ամէն մարդ որ տանար կու գայ, արդե՞օք դարձած է տանար Սուրբ Հոգիին:

Պօղոս առաքեալ շատ գեղեցիկ կերպով ցոյց կու տայ թէ ի՛նչպէս մարդ կրնայ Քրիստոս-ժայռին կամ Քրիստոս-հիմին վրայ շինել իր հաւատփ տունը, իր գործի տունը, եւ սակայն, սխալ բաներ շինել, փնացուելիք ու այրուելիք բաներ շինել: Զգուշութեամբ կարդանք թէ ի՛նչ կ'ըսէ. «Ամէն ոք զգոյժ պէտք է ըլլայ, սակայն, թէ ի՛նչպէս կը շինէ: Որովհետեւ ոեւէ մէկը չի կրնար ուրիշ հիմ դնել, քան Աստուծոյ դրած միակ հիմը, որ Յիսուս Քրիստոս է: Այդ հիմին վրայ շինուածը կրնայ ոսկի, արծաթ կամ թանկագին քար ըլլալ, եւ կամ կրնայ փայտ, խոտ կամ եղէգ ըլլալ: Իւրաքանչիւրին գործը դատաստանի օրը պիտի յայտնուի, եւ ատիկա կրակը պիտի յայտնէ, որովհետեւ իւրաքանչիւրին գործին որակը կրակով պիտի փորձուի: Եթէ մէկուն շինածը կրակին դիմանայ՝ ենթական պիտի վարձատրուի: Իսկ եթէ այրի՝ ենթական պիտի տուժէ...» (Ա.Կր 3.11-15):

Առաքեալը կոչ կ'ուղղէ զգուշանալու թէ ի՛նչպէս կը շինենք: Յստակ է որ կոչը ուղղուած է քրիստոնեայ անունը կրող մարդոց: Առաքեալը կ'ըսէ թէ շինողը պէտք է շինէ մէկ ու միակ հիմին՝ Քրիստոսի վրայ: Բայց ան բնա՛ւ չ'ըսեր թէ Քրիստոսի վեմին վրայ շինուածը միայն «ոսկի, արծաթ կամ թանկագին քար» պիտի ըլլայ, այլ նաեւ կ'ըսէ, թէ շինուածը «կրնայ փայտ, խոտ կամ եղէգ ըլլալ»: Ասիկա կը փաստէ վերեւ մեր ըսածը, թէ՛ շատեր որոնք կը կարծեն թէ իրենք Քրիստոս-ժայռին վրայ հաստատուած են, յուսախաբ պիտի ըլլան դատաստանի օրը եւ պիտի կործանին:

Մէկը կրնայ հարցնել թէ ի՞նչպէս կարելի է Քրիստոսի հիմին կամ ժայռին վրայ հաստատուիլ եւ «փայտ, խոտ կամ եղէգ ըլլալ» փոխանակ «ոսկի, արծաթ կամ թանկագին քար ըլլալու»: Գտնելու համար այս հարցումին ճշգրիտ պատասխանը, նախ պէտք է գիտնալ որ առաքեալը

«փայտ, խոտ, եղեգ» կամ «ոսկի, արծաթ եւ թանկագին ֆար» ըսելով, մարդուն հաւատփին մասին չէ որ կը խօսի, այլ՝ անոր գործերուն մասին:

Հաւատփի կողմանէ, բոլորն ալ կը հաւատան Քրիստոսի, բայց բոլորը նոյն ձեւով չէ որ կ'արտայայտեն իրենց հաւատքը: Բոլորը կը շինեն իրենց հաւատփի տունը, բայց բոլորին շինած տուները նոյն տոկունութիւնը չ'ունենար: Բոլորը կը գործեն, բայց բոլորին գործին որակը նոյնը չ'ըլլար. ոմանց գործը փայտ ու խոտ կ'ըլլայ, իսկ ուրիշներունը՝ երկաթ ու ոսկի: Ինչպէս փայտն ու խոտը չեն դիմանար կրակին դիմաց, այնպէս ալ Քրիստոսի պահանջած հաւատփի գործերը չկատարող քրիստոնեան, պիտի չկրնայ դատաստանի «կրակին» դիմաց դիմանալ:

Զարեհ Արք. Ազնաւորեան հակիրճ բացատրութիւն մը տալով առաքելին տուեալ խօսքին վերաբերեալ՝ կ'ըսէ. «Ոմանք՝ ոսկիով, արծաթով եւ թանկագին ֆարերով կը շինեն իրենց հաւատփի տունը, իսկ ոմանք ալ՝ փայտով, խոտով եւ եղեգով: Առաքելը դիտմամբ կ'առնէ մետաղներ եւ դիւրավառ նիւթեր, ըսելու համար, որ դատաստանի օրը կրակի պատկերացումը կայ. կրակը՝ թէ՛ իբրեւ դատապարտող եւ թէ՛ իբրեւ մաքրագործող իր գոյգ երեսներով:

Դատաստանի օրը իւրաքանչիւրին գործը կրակով պիտի փորձուի: Արդ, յստակ է որ երբ մետաղը կը դնենք կրակին մէջ, կրակը չի կրնար գանիկա փնացնել, ընդհակառակը, կը գտէ ու մաքրէ գանիկա: Հոն եղած բոլոր աղտերը կը մաքրէ, եւ մետաղը իր գտութեամբը կը մնայ: Մինչդեռ այն նիւթերը որոնք փայտ, խոտ եւ եղեգ են, անոնք կ'այրին ու կ'ոչնչանան: Առաքելը հոս երկու տեսակ գործերու մասին է որ կը խօսի:

Յիսուս Մտ 7.24–27ին մէջ միայն տունը շինելու մասին է որ կը խօսի, իսկ Պօղոս առաքել, կը խօսի նաեւ տունը շինելու համար գործածուող տարրերուն մասին, անոնք ըլլան մնայուն տարրեր, ըլլան փնացող տարրեր: Այլ խօսքով, կը խօսի անոնց մասին՝ որոնք հաւատփի իրենց տունը կը շինեն մնայուն գործերով, եւ անոնց մասին՝ որոնք հաւատփի իրենց տունը կը շինեն փնացող ու անարժէք գործերով»:

Այս առակին վերաբերեալ կ'աւարտեմ բացատրութիւնները, խօսքովը հաւատփի եւ աստուածահաճոյ գործերու մեծ մարդուն՝ Զարեհ Արք. Ազնաւորեանին՝ որ կ'ըսէ. «Միշտ ալ կարելիութիւնը կայ փորձութեան, անկումի եւ կորուստի, որովհետեւ Զարը միշտ գործի վրայ է: Այդ իմաստով՝ անձրեւը, գետերն ու փոթորիկը կը համեմատուին Նոյի օրով ջրհեղեղին հետ, որ Աստուծմէ եկաւ՝ չար

մարդկութիւնը կորուստի մատնելու համար: Ուստի հաւատացեալ մարդը զգոյշ պէտք է ըլլայ, որ չիյնայ դիւրակեաց կեանքի մը հեշտագին որոգայթին մէջ, բաւարարուելով միայն՝ Քրիստոսի խօսքերը լսելով ու կրկնելով, որովհետեւ հաւատարմութեան ապացոյցն ու վկայութիւնը գործն է, գործնականացած հաւատքը: Իսկ երբ չկայ հաւատքին արտայայտիչ պտուղը՝ գործը, մարդուն կը մնայ Աստուծոյ բարկութեան կորուսիչ ջրհեղեղը, որուն նախապատկերացումն էր անցեալինը»:

ՆՈՐ ԿԱՐԿՏԱՆԸ ՀԻՆ ՀԱԳՈՒՍՏԻՆ ՎՐԱՅ ԶԻ ԴՐՈՒԻՐ

«Ոչ ոք նոր հագուստ է մը կտոր մը առնելով՝ հինին համար կարկտան կ'ընէ. այդպիսով թէ՛ նոր հագուստը կը փնանայ եւ թէ՛ կարկտանը հինին չի յարմարիր» (Ղկ 5.36):

Մեր բացատրութիւնները ամփոփենք քանի մը կէտերու մէջ.–

1.– «Նոր հագուստ»ը կը խորհրդանշէ Քրիստոսի փրկարար շնորհքը, իսկ «հին հագուստ»ը խորհրդանշէ է Օրէնքին: Հետեւաբար, երբ Յիսուս կ'ըսէ. «ոչ ոք նոր հագուստ է մը կտոր մը առնելով՝ հինին համար կարկտան կ'ընէ», ըսել կ'ուզէ, թէ՛ մէկը չի կրնար Օրէնքն ու շնորհքը միացնել, բոլորովին բերել, կամ գանձնաբար իրարու հետ հաշտեցնել:

Այլ խօսքով, մէկը որ Քրիստոսով տիրացած ու ապաւինած է նոր հագուստին՝ Աստուծոյ շնորհքին, պէտք չէ միաժամանակ, ապաւինի հին հագուստին՝ Օրէնքին, եւ դառնայ անոր ստրուկը: Քրիստոս կը փորձէ սորվեցնել մեզի թէ մենք չենք կրնար թէ՛ Օրէնքի եւ թէ՛ շնորհքի զաւակներ ըլլալ: Փրկութիւնը արդիւնքն է Աստուծոյ շնորհքին ու հաւատքին եւ ո՛չ թէ մեր օրինապահութեան: Նոյնիսկ հաւատքը մեր կամքին արդիւնքն է, այլ արդիւնքն է Քրիստոսի խօսքերուն, քանի որ Պօղոս առաքեալ կը հաստատէ, թէ մեր ներսիդին հաւատք կ'արթնանայ երբ կը լսենք Քրիստոսի խօսքերուն քարոզութիւնը (Հո 10.17):

2.– Ան որ մէկ կողմէ կը հաւատայ թէ իր արդարացումն ու փրկութիւնը Աստուծոյ շնորհքին արդիւնքն է, իսկ միւս կողմէ կը փորձէ Օրէնքին (Հնգամատեանի օրէնքներուն) գործադրութեամբ արդարանալ ու փրկուիլ, կը փնացնէ իրեն տրուած «նոր հագուստ»ը, ինչպէս Յիսուս կ'ըսէ. «Այդպիսով թէ՛ նոր հագուստը կը փնանայ եւ թէ՛ կարկտանը հինին չի յարմարիր»: «Նոր հագուստ»ը փնացնել, կը նշանակէ կորսնցնել Աստուծոյ շնորհքը: Իսկ «չի յարմարիր» ըսելով, մեզի ցոյց կը տրուի թէ Օրէնքին ու շնորհքին քամբաները հիմնովին իրարմէ տարբեր են, եւ ճիշդ չէ ու յարմար չէ որ փորձենք գանձնաբար իրարու հետ հաշտեցնել:

Մատթէոսի մէջ «չի յարմարիր» բառերուն փոխարէն ունինք «աւելի մեծ կ'ըլլայ պատուածքը» բառերը: Հոն կը կարդանք. «Որովհետեւ նոր կտորը քաշուելով՝ հագուստը կը պատուէ, եւ աւելի

մեծ կ'ըլլայ պատճառաւոր» (Մտ 9.16): Ինչո՞ւ «աւելի մեծ կ'ըլլայ պատճառաւոր»: Յիշեցէ՛ք որ մենք կը խօսինք Օրէնքին եւ շնորհին մասին: Եթէ Օրէնքն ու Քրիստոսի շնորհքը իրարու հաւասար նկատենք՝ պատճառաւոր աւելի մեծ չ'ըլլար, այլ խօսքով՝ մեր վիճակը աւելի գէշ չ'ըլլար, մեր դատապարտութիւնը աւելի ծանր չ'ըլլար: Կարելի՞ քան է Աստուծոյ Օրէնքին տառը եւ Աստուծոյ Որդիին արիւնը իրարու հաւասար նկատել: Կարելի՞ քան է մէկ կողմէ մեր փրկութիւնը տեսնենք Օրէնքի՛ն մէջ, իսկ միւս կողմէ՛ Քրիստոսի արիւնի՛ն եւ այդ արեան միջոցաւ տրուած շնորհքի՛ն մէջ:

3.- Քրիստոսի փրկութեան շնորհքը կը կոչուի «նոր հագուստ», որովհետեւ իրեն հետ կը բերէ նորոգութիւն, նո՛ր կեանք: Բայց, Քրիստոսի շնորհքը կը կոչուի «նոր հագուստ», ո՛չ միայն որովհետեւ կը խորհրդանշէ այն նորոգութիւնը եւ նոր կեանքը որ Աստուծոյ շնորհքը կը բերէ, այլ որովհետեւ, անոնցմով Աստուած իրեն հետ յարաբերութիւն մշակելու նո՛ր քամբայ մըն է որ կը բանայ մարդկութեան առջեւ:

4.- «Նոր հագուստ»ը կը խորհրդանշէ Քրիստոսով մարդուն տրուած նո՛ր նկարագիրը, նո՛ր բնաւորութիւնը, նո՛ր ապրելակերպը, նո՛ր գործելակերպը, նո՛ր մտածելակերպը, նո՛ր ինքնութիւնը: Արդ, Քրիստոսի բերած «նոր հագուստ»ը, այսինքն՝ փրկարար ու ազատարար շնորհքը, իրաւա՛մբ կը փոխէ մարդուն կեանքը եւ զանիկա նո՛ր հունի մէջ կը դնէ, զանիկա բոլորովին նո՛ր մարդ կը դարձնէ՝ նո՛ր նկարագիրով, նո՛ր բնաւորութեամբ, նո՛ր կենցաղակերպով, եւ կեանքի նոր նպատակով:

5.- Դուկասու 5.36-ի զուգահեռ համարը Մատթէոսի մէջ հետեւեալն է. «Ոչ ոք չլուսցուած նոր կտոր մը կը գործածէ հին հագուստի մը համար կարկտան ընելու: Որովհետեւ նորը քաշուելով՝ հագուստը կը պատռտէ, եւ աւելի մեծ կ'ըլլայ պատճառաւոր» (Մտ 9.16): Սուրբ Յովհաննէս Երզնկացի երկու յաւելեալ բացատրութիւններ կ'առաջարկէ.-

ա.- Ան կ'ենթադրէ որ «հին հագուստ»ը որուն մասին կը խօսի Յիսուս, կրնայ ակնարկութիւն ըլլալ իր աշակերտներուն: Այս իմաստով, կարծէ՛ք Յիսուս ըսել կ'ուզէ, թէ իր աշակերտները «հին հագուստ»ի նման են, տակաւին չ'են նորոգուած, տակաւին իրենց անցեալի սովորութիւններէն, հաւատալիքներէն ու համոզումներէն չ'են ձեռքազատած, եւ ուստի, պէտք չէ զանոնք ծանրաբեռնել «նոր հագուստ»ով, այսինքն՝ նոր պատուիրաններով, նոր հրամաններով, այլապէս, «աւելի մեծ կ'ըլլայ պատճառաւոր», այսինքն՝ աւելի մեծ

կ'ըլլայ գայթակղութիւնը, աւելի ծանր կ'ըլլայ լուծը կրելը, աւելի դժուար կ'ըլլայ նոր առաքելութեան ձեռնարկելը:

բ.- Երզնկացիին դիտել կու տայ նաեւ որ «հին հագուստ»ը կրնայ ակնարկութիւն ըլլալ հրեայ ժողովուրդին, յատկապէս Փարիսեցիներուն, որոնք անհաւատութեամբ հինցած էին եւ որոնք Մովսիսական օրէնքներուն պատճառով «հին հագուստ»ի նման եղած էին, եւ ուստի, դարձած էին անկարող ընդունելու Քրիստոսի Աւետարանին բարի լուրը:

Երզնկացիին կը բացատրէ թէ տուեալ առակը նաեւ կը յիշեցնէ մեզի, թէ հին մարդը խաչին գօրութեամբ է որ պիտի նորոգուի, եւ հին տառը (Օրէնքը) Հոգիին միջոցաւ է որ պիտի լուծուի:

գ.- «Ոչ ոք չլուացուած նոր կտոր մը կը գործածէ հին հագուստի մը...»: Այս բառերով, Յիսուս մեր ուշադրութեան կը յանձնէ թէ ինչ որ ինք մեզի կը պարգեւէ՝ «չլուացուած» բան մը չէ, այլ՝ լուացուած բան մը, այլ խօսքով՝ մաքուր բան մը, ընտիր բան մը, գեղեցիկ բան մը, թանկագին բան մը, նշմարիտ բան մը: Քրիստոս անպէտք բան չի՝ տար մարդոց. խոտելի բան չի՝ պարգեւեր մարդոց. ան միշտ իր լաւագոյնը կու տայ, գեղեցկագոյնը կը շնորհէ:

Եթէ երբեք այդ «լուացուած նոր կտոր»ը կը ներկայացնէ Տիրոջ փրկարար շնորհքը, մեզմէ ո՞վ կրնայ ուրանալ թէ մեզի տրուած այդ շնորհքը ընտիր բան մըն է, գեղեցիկ բան մըն է, թանկագին է, նշմարիտ է, եւ ինչո՞ւ, որովհետեւ ատիկա (շնորհքը) մեզ Աստուծոյ կը մօտեցնէ ու կը մտերմացնէ, մեզ անմահութեան կ'առաջնորդէ, յաւերժ երջանկութեան կը տանի:

6.- Եկեղեցւոյ հայրերէն՝ Ամբրոսիոս, կը բացատրէ որ Տէրը «նոր հագուստ»ը մկրտութեան պահուն է որ կը շնորհէ մեզի: Եւ սակայն, այս «նոր հագուստ»ը կը պատռուի երբ մեր մէջ գլուխ ցցէ «հին հագուստ»ը, այսինքն՝ հի'ն մարդը, հի'ն բնութիւնը, այլ խօսքով՝ երբ ապրինք մեղքի կեանք մը: Ահա թէ ինչո՞ւ Յիսուս կը պատուիրէ մեզի, հեռու պահել իրարմէ «հին հագուստ»ն ու «նոր հագուստ»ը, այլ խօսքով՝ մեր հին բնութիւնն ու նոր բնութիւնը: Ան որ մկրտութեան պահուն կը մերկանայ իր «հին հագուստ»էն (հին բնութենէն) եւ կը հագնի «նոր հագուստ»ը (նոր բնութիւնը), պէտք չէ վերստին դառնայ իր հին բնութեան՝ մեղքի կեանքին:

7.- Ինչո՞ւ Յիսուս իր փրկարար շնորհքը կը նմանցնէ «նոր հագուստ»ի: Քանի մը պատճառներով.-

ա.- Մենք գիտենք որ նիւթական հագուստը մեր մերկութիւնը ծածկելու կը ծառայէ: Արդ, ինչպէս նիւթական հագուստը մեր մարմինի

մերկութիւնը կը ծածկէ, այնպէս ալ, աննիւթական հագուստը, այսինքն՝ Քրիստոսի շնորհքը, մեր հոգեւոր մերկութիւնն է որ կը ծածկէ: Ան որ իր մեղքերով կը հեռանայ Աստուծմէ՝ մե՛րկ կը սեպուի (Ծն 3-10):

բ.– Հագուստը նաեւ կը ծառայէ մեզ պաշտպանելու բնութեան դէմ, ինչպէս՝ պաղին, ցուրտին, տաքին, հովին, եւայլն: Արդ, Յիսուս իր շնորհքը կը նմանցնէ «նոր հագուստ»ի, որպէսզի ցոյց տալ մեզի, թէ ինչպէս հագուստը մեզ կը պաշտպանէ բնութեան դէմ, այնպէս ալ, իր փրկութեան եւ արդարութեան շնորհքը, մեզ կը պաշտպանէ Սատանային եւ անոր չար ոգիներուն յարձակումներուն դէմ:

գ.– Մենք գիտենք որ հագուստի մը համար կը գործածենք «նոր հագուստ» բացատրութիւնը երբ ատիկա բնաւ չէ հագցուած կամ չէ գործածուած: Արդ, Յիսուս իր շնորհքը կը նմանցնէ «նոր հագուստ»ի, որպէսզի յիշեցնէ մեզի, թէ ատիկա նո՛ր է, այլ խօսքով՝ նո՛ր է որ կը յայտնուի, անցեալին չէր բացայայտուած, «չէր գործածուած», չէր տրուած: «Այդ շնորհքը... մեզի յայտնուեցաւ երեւումովը մեր Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի» (Բ.Տմ 1.9-10):

դ.– Յստակ է որ հագուստ մը կը պատրաստուի՝ գործածուելու նպատակով: Արդ, երբ Յիսուս «նոր հագուստ»ի կը նմանցնէ իր սրբարար շնորհքը, ատիկա անուղղակի կոչ մըն է մեզի՝ մեր վրայ առնելու փրկարար շնորհքի «հագուստը» եւ գործածելու զանիկա Աստուծոյ փառքին համար:

Սիրելի՛ ընթերցող, դուն վրադ առա՞ծ ես Յիսուսի բերած «նոր հագուստ»ը, այլ խօսքով՝ նո՛ր կեանքը, նո՛ր բնութիւնը, նո՛ր նկարագիրը: Հագա՞ծ ես «նոր հագուստ»ը, այսինքն՝ արդարութեան ու սրբութեան հագուստը, թէ՛ տակաւին կը պտըտիս մեղքի եւ դէպի կորուստ առաջնորդող ցնցոտիներով:

Ինչո՞ւ կը պտըտիս մեղքի հին հագուստովդ, երբ Քրիստոս իր մահուամբ քեզի համար պատրաստած է «լաւագոյն պատմունեանը», որ սրբութեան պատմունեանն է, արդարութեան պատմունեանն է, աստուածնանաչողութեան պատմունեանն է:

Մի՛ փորձեր «նոր հագուստէ մը կտոր մը առնել» եւ «հինին համար կարկտան» ընել, այլ խօսքով՝ մի՛ փորձեր Քրիստոսով շնորհուած նո՛ր կեանքը՝ հաշտեցնել հին հագուստիդ, այսինքն՝ մեղքի նախկին կեանքիդ հետ: Եթէ փորձես՝ պիտի չյաջողիս, որովհետեւ «նոր հագուստ»ը արդարութեան ու սրբութեան հագուստն է, եւ դուն չե՛ս կրնար արդարութեան ու սրբութեան հասնիլ մեղքի կեանք մը ապրելով:

Եթէ հրեաներ չկրցան հասնիլ արդարութեան ու սրբութեան «հին հագուստ»ին, այսինքն՝ Օրէնքին միջոցաւ, մենք ի՞նչպէս կրնանք հասնիլ մեղքի կեանք ապրելով:

Ընթերցող բարեկամ, բեզ կը հրաւիրեմ որ հագնիս Քրիստոսի ձրիօրէն տուած «նոր հագուստ»ը, որպէսզի երբ Տէրը աշխարհ դառնայ, բեզի չըսէ. «Բարեկա՛մ, ի՞նչպէս հոս մտար առանց հարսանիքի հագուստ ունենալու» (Մտ 22.12):

ՆՈՐ ԳԻՆԻՆ ՀԻՆ ՏԻԿԵՐՈՒ ՄԷՋ ԶԻ ԴՐՈՒԻՐ

«Ոչ ոք նոր գինին հին տիկերու մէջ կը լեցնէ. այլապէս՝ նոր գինին կը պայթեցնէ հին տիկերը եւ պատճառ կ'ըլլայ որ թէ՛ գինին թափի եւ թէ՛ տիկերը փնանան: Ընդհակառակը, նոր գինին նոր տիկերու մէջ դրուելու է, որպէսզի երկուքն ալ չփնանան: Ո՛չ ոք հին գինին խմելէ ետք անմիջապէս նորը կ'ուզէ, քանի կ'ըսէ. "Հին գինին աւելի քաղցրահամ է"» (Ղկ 5.36-39):

Մեր բացատրութիւնները ամփոփենք քանի մը կէտերու մէջ.–

1.– «Նոր գինի»ն կը խորհրդանշէ Քրիստոսի փրկարար շնորհքը, իսկ «հին տիկ»ը խորհրդանշէ է Օրէնքին: Հետեւաբար, երբ Յիսուս կ'ըսէ. «Ոչ ոք նոր գինին հին տիկերու մէջ կը լեցնէ. այլապէս՝ նոր գինին կը պայթեցնէ հին տիկերը եւ պատճառ կ'ըլլայ որ թէ՛ գինին թափի եւ թէ՛ տիկերը փնանան», ըսել կ'ուզէ, որ եթէ մէկը փորձէ «նոր գինի»ն, այսինքն՝ Քրիստոսի շնորհքը, «հին տիկ»երու մէջ լեցնել, այսինքն՝ Մովսիսական Օրէնքին հետ միացնել, նոյնացնել կամ հաշտեցնել՝ պիտի ձախողի եւ կործանուի պիտի երթայ:

2.– Համաձայն Յովհաննէս Երզնկացիի, «հին տիկ»ը կը ներկայացնէ Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները, ինչպէս նաեւ այլ հերձուածները, իսկ «նոր գինի»ն կը ներկայացնէ հաւատքը եւ մկրտութեան աւագանին բերած նորոգութիւնը:

Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները իրենց ունեցած աւանդութիւններուն պատճառով, չէին կրցած հաւատքով ընդունիլ Քրիստոսի շնորհքին բերած նորոգութիւնը, եւ ասիկա պատճառ եղած էր «որ թէ՛ գինին թափի եւ թէ՛ տիկերը փնանան», այլ խօսքով՝ թէ՛ Քրիստոսի շնորհքը իրենց համար ո՛չ մէկ արժէք ունենայ եւ թէ՛ իրենք «փնանան», այսինքն՝ կորուստի մատուցում:

3.– Ուշագրաւ է որ գինիին համար կը գործածուի «թափի» բառը, իսկ տիկին համար՝ «փնանայ» բառը: Եւ ասիկա պարզ է. եթէ «նոր գինին» կը խորհրդանշէ Քրիստոսի շնորհքը՝ բնական է որ Քրիստոսի շնորհքը չի կրնար փնանալ, բայց անդին, «տիկ»ը՝ (Օրէնքը կամ օրինապահ մարդը) կրնայ փնանալ, եթէ շնորհքին չապաւինի: Շնորհքը չի փնանար, բայց կը «թափի», այսինքն՝ զուր կ'անցնի մեր կեանքին մէջ, ոչինչով կ'օգտուինք անկէ:

4.- Ըսինք, «նոր գինի»ն Քրիստոսի շնորհքն է, իսկ «հին տիկ»ը՝ Օրէնքը: Շատեր կան որոնք կը փորձեն «նոր գինին հին տիկերու մէջ» լեցնել, այսինքն՝ հաշուութեան կամ նոյնութեան եզր մը գտնել Աստուծոյ շնորհքին եւ Աստուծոյ Օրէնքին միջեւ: Աստուած Օրէնքը հաստատեց իր խօսքով, իսկ շնորհքը՝ իր Որդիին արիւնով: Ուստի, անոնք նոյն բանը չեն, համարժէք բաներ չեն եւ նոյն գորութիւնը չունին:

Օրէնքը մեզ Քրիստոսի կ'առաջնորդէ, «որպէսզի հաւատքով արդարանանք» (Գղ 3.24) բայց Օրէնքը չէ որ կ'արդարացնէ մեզ: Օրէնքը արդարութիւն կը պահանջէ բայց չ'արդարացներ իրեն ապաւինողը. Քրիստոս ի'նքն է որ կ'արդարացնէ: Օրէնքը սրբութիւն կը պահանջէ բայց Քրիստոս ի'նքն է որ կը սրբէ ու կը սրբացնէ: Ուստի, Օրէնքը չի հակասեր Քրիստոսի շնորհքին, բայց նաեւ չի նոյնանար անոր հետ:

5.- «Նոր գինին հին տիկերու մէջ» լեցնել փորձողները անոնք են՝ որոնք մէկ կողմէ կ'ընդունին Քրիստոսի փկարար շնորհքը, իսկ միւս կողմէ, երբեք չեն ուզեր հրաժարիլ օրէնքներու գործադրութեամբ փրկութիւն ձեռք ձգելու իրենց մտածումէն: Ես օրէնքներու գործադրութեան դէմ չէ որ կը խօսիմ, այլ օրէնքներու գործադրութեամբ փրկութիւն ձեռք ձգելու եւ արդարանալու կարելիութիւնն է որ կը մերժեմ: Մերժողը ես չեմ, այլ նոյնիմանքն Աստուածաշունչը: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Եթէ կարելի ըլլար Օրէնքին միջոցաւ արդարանալ, Քրիստոս զուր տեղ մեռած եղաւ» (Գղ 2.21): Քիչ մը վերեւ կը հաստատէ, թէ՛ «ոեւէ մարդ չ'արդարանար Օրէնքը գործադրելով, այլ միայն Յիսուս Քրիստոսի հաւատալով» (Գղ 2.16):

Օրէնքը պահելը անհրաժեշտ է, բայց ո՛չ թէ որպէսզի փրկուինք, այլ որպէսզի վարձատրուինք: Օրէնքներու գործադրութեամբ մենք կրնանք օրինակ դառնալ ուրիշին համար: Օրէնքներու գործադրութեան մէջ մենք կը տեսնենք վարձատրութիւն, երջանկութիւն, հոգեկան գոհունակութիւն, եւ մանաւանդ, հաւատքի վաւերացում, բայց չենք կրնար տեսնել փրկութիւն, արդարացում, կամ մեղքերու փառութիւն: Այս վերջինները արդիւնքն են Քրիստոսի շնորհքին՝ իսաչին վրայ անոր հեղած արեան միջոցաւ: Երկուքը՝ Օրէնքն ու շնորհքը, իրարմէ անբաժան են, բայց իրարու հաւասար չեն: Մեր պարտականութիւնը արթուն ըլլալն է, որպէսզի չփորձենք Օրէնքէն փաղել այն ինչ որ պէտք է շնորհքէն փաղել, եւ շնորհքէն փաղել այն ինչ որ պէտք է Օրէնքէն փաղել:

6.- Ինչո՞ւ արդեօք Քրիստոս սորվեցնելու համար Օրէնքին եւ շնորհքին տարբերութեան մասին, «նոր գինի»ի եւ «հին տիկ»ի պատկերները կը գործածէ: Յիսուս իր առակները միշտ մարդոց

կեանքն կ'առնէր: «Նոր գինի»ի եւ «հին տիկ»ի պատկերները հրեաներուն համար շատ հասկնալի էին, որովհետեւ անոնք սովորութիւն ունէին, տարին անգամ մը նոր գինի պատրաստելու եւ զայն լեցնելու ու պահելու նոր շինուած տիկերու մէջ (հմմտ Եր 13.12: Գրծ 2.13):

7.- Արդ, ի՞նչ է «տիկ»ը եւ ի՞նչ բան է կը պատրաստուէր ատիկա: Տիկը այծի կամ ոչխարի մորթով պատրաստուած տոպրակն էր կամ պարկն էր, որուն մէջ հրեաներ կը դնէին իրենց պատրաստած գինին կամ այլ հեղուկային նիւթեր: Մեկնիչներուն մեծամասնութիւնը կը հաստատէ որ տիկը որուն մասին Յիսուս կը խօսի այստեղ, այծի մորթէն շինուած տիկն է: Ինչո՞ւ կամ ի՞նչ տրամաբանութեամբ: Այծին մորթը աւելի տոկուն, աւելի դիմացկուն ու կարծր կ'ըլլայ քան ոչխարին մորթը: Եւ սակայն, որքան ալ ատիկա տոկուն ըլլայ, ժամանակը կը մաշեցնէ զայն:

Տուեալ օրինակով, հետեւաբար, Յիսուսի կ'ուզէր հրեաներուն սորվեցնել, թէ որքան ալ իրենց թուի թէ Օրէնքը տոկուն է, դիմացկուն է, սակայն ժամանակ պիտի գար երբ անիկա պիտի կորսնցնէր իր տոկունութիւնը, եւ այդ ժամանակը եկաւ երբ Քրիստոս ի՛նքն աշխարհ եկաւ:

8.- Եթէ երբեք «նոր գինի»ն Քրիստոսի շնորհքն է, ապա «նոր տիկ»ը՝ մեր անձերն են: Յիսուս կը պատուիրէ «նոր գինին նոր տիկերու մէջ» դնել. ըսել ուզուածը այն է՝ որ մենք, իբրեւ «նոր տիկ»եր, այսինքն՝ իբրեւ Աստուծոյ նոր ստեղծագործութիւնը, իբրեւ նոր Խարայէլը, իբրեւ նոր ու նորոգուած մարդիկ, պէտք է լեցուինք «նոր գինի»ով, այսինքն՝ Քրիստոսի փրկարար ու սրբարար շնորհքով:

9.- «Որպէսզի երկուքն ալ չփնանան»: Եթէ փորձենք «նոր գինի»ն, որ Քրիստոսի շնորհքն է, հաշտեցնել «հին տիկ»երու հետ, այսինքն՝ Մովսիսական Օրէնքին հետ՝ երկուքն ալ կը փնանան, այսինքն՝ իրենց իմաստը կը կորսնցնեն մեր կեանքին մէջ:

10.- Բացատրուեցաւ որ «հին տիկ»ը խորհրդանիշ է Օրէնքին, բայց հարկաւ նաեւ խորհրդանիշ է մարդուն հին բնութեան, նախկին մեղաւոր կեանքին ու կենցաղակերպին: Եթէ մենք փափաք չունենանք հրաժարելու «հին տիկ»էն, այսինքն՝ մեր հին բնութենէն, չե՛նք կրնար մեր մէջ առնել «նոր գինի»ն՝ Քրիստոսի շնորհքը: Եթէ փորձենք մէկ կողմէ ապրիլ մեղքի կեանք մը, իսկ միւս կողմէ՝ յայտարարել թէ մենք հետեւորդներն ենք Քրիստոսի շնորհքին՝ կը կորսնցնենք թէ՛ շնորհքը եւ թէ՛ մեր անձերը:

11.- Ինչպես նոր գինիին համար նոր տիկ պետք է, այնպես ալ Քրիստոսի պարգեւած փրկարար շնորհքին համար նոր կեանք ապրիլ ուզող մարդիկ պետք են: Եթէ փորձենք նոր գինին՝ Քրիստոսի շնորհքը, լեցնել հին տիկերու մէջ, «նոր գինին կը պայթեցնէ հին տիկերը եւ պատճառ կ'ըլլայ որ թէ՛ գինին թափի եւ թէ՛ տիկերը փնանան»: Այո՛, «նոր գինին կը պայթեցնէ հին տիկերը», որովհետեւ Քրիստոսի շնորհքը չի կրնար լեզու գտնել Օրէնքին հետ:

Պէտք է պատրաստակամութիւնն ու քաջութիւնը ունենալ հրաժարելու հին տիկէն՝ Օրէնքէն, որպէսզի կարենանք բացուիլ նոր գինիին՝ աստուածային շնորհքին, եւ ատով դառնալ նոր տիկեր, այսինքն՝ նոր ու նորոգուած մարդիկ: Օրէնքը որքան ալ կատարեալ ըլլայ, չի կրնար նորոգութեան առաջնորդել, նոր կեանք պարգեւել, նոր մարդ դարձնել: Նորոգութիւնը Աստուծոյ շնորհքն է որ կ'իրագործէ:

12.- Ինչպէս նոր գինին երբ տիկի մէջ դրուի կը փրփրի եւ փրփրելով իր մէջ գտնուող աղտը դուրս կը թափէ, այնպէս ալ, երբ ոեւէ մարդ իր մէջ ընդունի նոր գինին, այսինքն՝ Քրիստոսի շնորհքը, իր սիրտն ու հոգին կը փրփրին եւ իրենց մէջ գտնուող մեղքի աղտերը դուրս կը թափեն: Իսկ եթէ Քրիստոսի շնորհքը ընդունելէ ետք, մարդ չփորձէ իր մէջ գտնուող մեղքի աղտերը դուրս թափել, թէ՛ ինք կը կորսուի եւ թէ՛ Քրիստոսի շնորհքը գուր անցած կ'ըլլայ: (Գաղափարը առնուած է Երզնկացիէն):

13.- «Ո՛չ ոք հին գինին խմելէ ետք անմիջապէս նորը կ'ուզէ, քանի կ'ըսէ. "Հին գինին աւելի քաղցրահամ է"»: «Հին տիկ»ին նման «հին գինի»ն եւս խորհրդանիշ է Օրէնքին: Եթէ երբեք «հին գինի»ն խորհրդանիշ է Օրէնքին, եւ «նոր գինի»ն խորհրդանիշ է շնորհքին, այդ պարագային ի՞նչպէս պետք է բացատրել Յիսուսի խօսքը. «Ո՛չ ոք հին գինին խմելէ ետք անմիջապէս նորը կ'ուզէ»: Ըսել ուզուածը շատ պարզ է: Հոս Յիսուս կը սորվեցնէր թէ ոեւէ հրայ մարդ, որ զօրեղապէս եւ ներքնապէս կապուած էր հին գինիին՝ Օրէնքին, եւ համոզուած՝ թէ անով կրնայ փրկուիլ ու արդարանալ, իրեն համար երբեք դիւրին պիտի չըլլար անմիջապէս ընդունիլ Քրիստոսով տրուած նոր գինին՝ աստուածային շնորհքը. ան նոյնիսկ կրնար ըսել. «Հին գինին աւելի քաղցրահամ է»:

Մարդուն բնաւորութեան մէջ միշտ կայ հինին կառչելու եւ հինէն բաժնուիլ չուզելու կամ վախճալու նկարագրային գիծը: Հինէն բաժնուիլը միշտ ալ դիւրին չէ: Ատիկա երբեմն գոհողութիւն կը պահանջէ: Յիսուս տուեալ երկու օրինակներով, կոչ ուղղեց հրեաներուն, յատկապէս Օրէնքի ուսուցիչներուն եւ Փարիսեցիներուն քաջութիւնը ունենալ հրաժարելու իրենց կեանքի բոլոր «հին

հագուստներէն», «հին տիկերէն» եւ «հին գինիներէն», այսինքն՝ փրկութեան ու արդարութեան հասնելու բոլոր հին կերպերէն (օրէնքի գործադրում, ծիսական արարողութիւններ, գոհերու մատուցում), եւ բացուի նորին ու նորագոյին՝ Քրիստոսի շնորհքին:

Ընթերցող՝ եղբայր եւ քույր, ունի՞ս կեանքիդ մէջ «հին տիկեր» եւ «հին գինիներ», որոնցմէ կը վախնաս հրաժարիլ: Այլ խօսքով, կա՞ն կեանքիդ մէջ բաներ որոնց մէջ կը տեսնեն փրկութիւնդ եւ ապահովութիւնդ եւ չես կրնար անոնցմէ ձերբազատիլ: Անոնցմէ ձերբազատիլը կրնայ չկրնալու հարց չէ, այլ ուզել կամ չուզելու հարց է: Եթէ իսկապէս կը փափաքես անոնցմէ ազատիլ՝ յայտնէ՛ փափաքդ Տիրոջ եւ խնդրէ իրմէ որ ազատէ քեզ կեանքիդ բոլոր «հին տիկերէն» ու «հին գինիներէն», այլ խօսքով՝ սովորութիւններէն ու բնաւորութիւններէն, համոզումներէն ու հաւատալիքներէն, որոնք քեզ կապանքի ու շղթայի տակ կ'առնեն, եւ վստահ եղիր որ ան պիտի կատարէ սրտիդ խնդրանքը:

14.- Ինչո՞ւ Յիսուս իր շնորհքը կը նմանցնէ «գինի»ի: Քանի մը պատճառներով.-

ա.- Հին Կտակարանի մէջ գինին խորհրդանիշ նկատուած է՝ Յիսուսի արեան: Ծննդոց գիրքին 49.11-ին մէջ կը կարդանք. «Իր պատմութեանը գինիով պիտի լուայ»: Որո՞ւ մասին է որ կը խօսի բնագիրը: 10-րդ համարէն յստակ կ'երեւի որ Քրիստոսի՝ մասին է խօսքը: Քրիստոս ի՞նքն էր որ իր գինիով, այլ խօսքով՝ արիւնով պիտի լուար իր պատմութեանը, եւ այդ ձեւով նոր գինին, այսինքն՝ իր փրկութեան շնորհքը պիտի պարգեւէր մարդոց:

բ.- Գինին Աստուծոյ կողմէ տրուած օրհնութեան ու հատուցումի պատկերացումը կը բերէ մեզի (Առ 3.9-10: Բ.Օր 7.13): Յիսուս իր շնորհքը գինիի նմանցնելով, ցոյց տուած չ'ըլլար որ իր փրկարար շնորհքին ապաւինողները ձեռք պիտի ձգեն Աստուծոյ մեծամեծ օրհնութիւնները եւ հատուցման արժանի պիտի ըլլան:

գ.- Հին Կտակարանի մէջ գինին խորհրդանիշ է սիրոյ եւ մտերմութեան (Երգ 1.1, 4.10): Յիսուս իր շնորհքը իբրեւ գինի կը ներկայացնէ, որպէսզի ցոյց տայ մեզի թէ ի՞նքն է որ մեզ նշմարիտ, մաքուր ու յաւիտեանական սիրով սիրող Աստուածը:

դ.- Տակաւին, գինին նաեւ խորհրդանիշ նկատուած է երջանկութեան եւ ուրախութեան (Ժդ 9.7: Եր 51.39: Սղ 4.7: Զբ 10.7): Ուստի, Յիսուս իր շնորհքը կը նմանցնէ գինիի, որպէսզի ցոյց տայ մեզի թէ իր փրկարար շնորհքն է որ իսկական ուրախութիւնն ու երջանկութիւնը կը բերէ մեզի: Այս նշմարտութիւնը մենք ծածուկ կերպով արձանագրուած կը գտնենք Կանայի հարսանիքին դրուագին

մէջ: Հոն կը կարդանք. «Երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը իրեն ըսաւ.– Գինի չունին» (Յե 2.3): Մեծն Կիրեղ կը հաստատէ որ «գինի չունին» իսո՞ւքը հարսնետոբներուն չի վերաբերիր, այլ կը վերաբերի ամբողջ Իսրայէլի ժողովուրդին: Նկատի առնելով որ Հին Կտակարանի մէջ գինին ուրախութեան եւ երջանկութեան խորհրդանիշ է, ուրեմն, երբ Մարիամ կ'ըսէ. «Գինի չունին», խորքին մէջ ըսել կ'ուզէ՝ «Ուրախութի՛ւն չունին, երջանկութի՛ւն չունին», ինչպէս մեկնիչներ դիտել կու տան: Ահա այդ ուրախութի՛ւնն է, փրկարար շնորհքին բերած ու ներշնչած ուրախութի՛ւնն է որ Քրիստոս մարդուն ընծայեց իսաչին վրայ իր գոհագործական մահուամբ:

ՃՐԱԳԸ ԳՐՈՒԱՆԻ¹ ՏԱԿ

«Դուք էք աշխարհի լոյսը: Լեբան վրայ շինուած ֆաղաֆ մը չի կրնար պահուրտիլ: Ոչ ոք նրա գր կը վառէ եւ կը պահէ կաթսայի տակ. ընդհակառակը, գայն աշտանակի վրայ կը դնէ, որպէսզի տունին մէջ գտնուողներուն լոյս տայ: Նոյնպէս ալ, ձեր լոյսը թող այնպէս շողայ մարդոց առջեւ, որ անոնք ձեր բարի գործերը տեսնեն եւ փառաւորեն ձեր Հայրը, որ երկինքի մէջ է» (Մտ 5.14-16):

Նկատի ունենալով որ ամբողջ այս հատուածը լոյսի եւ լոյսի «պաշտօնին» մասին է, հաւանաբար լաւ պիտի ըլլար գայն կոչել՝ «Լոյսի առակը»:

«Դուք էք աշխարհի լոյսը: Լեբան վրայ շինուած ֆաղաֆ մը չի կրնար պահուրտիլ» (Մտ 5.14): Քանի մը հաստատումներ .-

Ի՞նչ հասկացողութեամբ կամ ի՞նչ իմաստով ֆրիստոնեայ մարդը աշխարհի լոյսն է: Երեք իմաստներով .-

ա.- Այն ֆրիստոնեան որ լուսաւորուած է Աստուծոյ խօսքով, այսինքն՝ Աւետարանին բերած փրկարար լոյսով, անիկա աշխարհի լոյսն է: Այսպիսի մարդ մը, կոչումը ունի Աւետարանին լոյսը տարածելու ամենուրեք: Եթէ չտարածէ՝ կաթսայի տակ դրուող լոյսին նման կ'ըլլայ: Կաթսային տակ դրուող լոյսը չի դադրիր լոյս ըլլալէ, բայց ուրիշին օգուտ մը չ'ունենար: Ուրիշներուն օգտակար դառնալը՝ վերածնեալ ֆրիստոնեայ մարդուն կոչումն է:

բ.- Իրաւ ֆրիստոնեայ մարդը կոչուած է լոյսը աշխարհի, ի հակադրութիւն մեղքի խաւարին մէջ բնակող այն մարդոց՝ որոնք իրենց մեղսալից եւ մեղսասէր ներկայութեամբ, աշխարհը կը լեցնեն խաւարով: Տէր Յիսուսի հետեւորդները՝ լոյսի որդիներ են (Ա.Թս 5.5), իսկ Սատանայի հետեւորդները՝ խաւարի որդիներ (Գրծ 26.18), ահա թէ ինչո՛ւ անոնք աշխարհի մէջ մնայուն բաղխումի եւ մնայուն հակադրութեան մէջ են:

գ.- Իսկական ֆրիստոնեան լոյսն է աշխարհին, որովհետեւ հալածիչն է աշխարհի խաւարին: 8-րդ դարու մեկնաբան եւ

¹ Աւետարանական հատուածը աւելի հասկնալի դարձնելու համար, աշխարհաբար նոր թարգմանութեան մէջ «գրուան» բառը փոխարինուած է «կաթսայ» բառով: Զարեհ Արք. Ազնաւորեան կը բացատրէ որ «գրուանը ցորենը եւ հացահատիկները չափելու յատուկ փայտեայ խորունկ աման մըն էր, շուրջ 20 կամ 40 ֆիլօ տարողութեամբ»:

աստուածաբան՝ Ստեփանոս Սիւնեցի՝ կ'ըսէ. «Լոյսը խաւարին հակադրուող եւ խաւարը հալածող տարրն է: Ինչպէս երբ լուսատուները ծագին՝ խաւարը կը հալածուի եւ լոյսը կը սփռուի, այնպէս ալ, երբ սուրբ առաքեալներուն ֆարոգութեամբ՝ իմանալի լոյսը ծագեցաւ, մարդոց խաւարած հոգիները որ կորստեան անդունդին մէջ կը գտնուէին՝ ազատեցան անդունդին խաւարէն եւ Քրիստոսի ոգւարիտ լոյսին եկան»:

2.- «Լեռան վրայ շինուած ֆաղափ մը չի կրնար պահուրտիլ»: Ստեփանոս Սիւնեցի բացատրելով այս համարը՝ կ'ըսէ. «Լեռը Քրիստոս ի՛նքն է, ինչպէս Սաղմոսագիրն ալ կը վկայէ՝ "Աչքերս դէպի լեռները պիտի վերցնեմ, ուրկէ իմ օգնութիւնս պիտի գայ" (Սղ 121.1): Իսկ բնագիրին մէջ յիշուած ֆաղափը առաքեալներն են, որոնք որդիներն են Վերին Երուսաղէմի: Այս իմաստով, Յիսուս կարծէ՛ք ըսել կ'ուզէ, թէ՛ "Առաքեալները որպէս ֆաղափ՝ շինուած Ի՛մ լեռան վրայ եւ Ի՛մ վեմիս վրայ, չեն կրնար ծածկուիլ կամ պահուրտիլ": Արդարեւ, առաքեալները որոնք շինուած էին Քրիստոսի՛ լեռան եւ Քրիստոսի՛ վեմին վրայ, չպահեցին իրենց (վարդապետութիւնն ու) ֆարոգութիւնը մարդոցմէ, այլ, ինչպէս Սաղմոսագիրը կը վկայէ՝ "Ամբողջ աշխարհ իմացաւ անոնց ձայնը, մինչեւ աշխարհի ծայրերը հասաւ անոնց պատգամը (Սղ 19.4: Հո 10.18)"»: Ստեփանոս Սիւնեցիին նման, Զարեհ Արք. Ազնաւորեան ինք եւս կը հաստատէ որ ֆաղափը կը պատկերացնէ կամ կը ներկայացնէ Քրիստոսի աշակերտները եւ բոլոր հետեւորդները:

3.- Գալով «լեռ» բառին բացատրութեան, տեսանք որ Ստեփանոս Սիւնեցիին կը հաստատէ թէ լեռը Քրիստոս ի՛նքն է, Աստուած ի՛նքն է, իսկ Զարեհ Սրբազանը, կը կարծեմ որ անկէ տարբեր բան չէ որ կը հաստատէ երբ կ'ըսէ թէ լեռը Աստուծոյ թագաւորութիւնն է: Քրիստոսն ու Քրիստոսի թագաւորութիւնը կարելի չէ գատել կամ գանազանել իրարմէ: Երբ կը խօսինք Քրիստոսի թագաւորութեան մասին, ուրիշ բանի մասին խօսած չենք ըլլար եթէ ոչ Քրիստոս-թագաւորին մասին: Արքայութիւնը Արքան ի՛նքն է: Թագաւորութիւնը Թագաւորը ի՛նքն է: Առանց Թագաւորին՝ չկա՛յ թագաւորութիւն: Ուստի, ըսել՝ լեռը Քրիստոսն է, կամ՝ Քրիստոսի թագաւորութիւնն է, հակասութիւն չկայ:

4.- Զարեհ Սրբազանը, ինչպէս ըսի, կը բացատրէ որ «հոս յիշուած լեռը՝ կը ներկայացնէ կամ կը խորհրդանշէ Աստուծոյ թագաւորութիւնը: Ինչպէս լեռան մը վրայ շինուած ֆաղափը չի կրնար ծածկուիլ, այնպէս ալ, ան որ մաս կը կազմէ Աստուծոյ թագաւորութեան, պէտք է յայտնի ըլլայ այդ մէկը իր ապրած կեանքով՝ հաւատքի՛ կեանքով: Եթէ ընդգրկած ենք հաւատքը մեր սիրտերուն մէջ, մեր կեանքերուն մէջ պէտք է երեւի՛

ասիկա: Մարդիկ պետք է մեր կեանքին մէջ տեսնեն մեր հաւատքի նառագայթները:

Կարելի չէ երեւակայել որ մէկը անբրիստոնէավայել կեանք մը ապրի եւ յայտարարէ թէ ինք քրիստոնեայ է...: Ոեւէ մէկը որ հետեւորդ մըն է Քրիստոսի, ոեւէ մէկը որ ինքզինք անդամ կը նկատէ Աստուծոյ թագաւորութեան, ո՛չ միայն պետք է հաւատքի կեանք մը ապրի, այլեւ՝ պետք է այդ հաւատքը ուրիշին ալ փոխանցէ: Քաղաքին համար գործածուած «չի կրնար պահուրտիլ» բառերը միշտ ա՛յդ է որ ցոյց կու տան: Տոյց կու տան՝ որ Քրիստոսի հետեւորդ մարդը, եւ ինքզինք Աստուծոյ արքայութեան հարագատ անդամ նկատող մարդը, կոչուած է փոխանցել ուրիշին եւ տարածել ամէն տեղ Աստուծոյ արքայութեան պատգամը, Աւետարանի պատգամը, փրկութեան աւետիսը, Քրիստոսի վարդապետութիւնն ու ուսուցումները...:

Այս բոլորը չեն կրնար կաթսայի տակ դրուիլ: Այս բոլորը բարձր աշտանակի մը վրայ պետք է դրուին նառագայթող նրագի մը նման: Եւ Քրիստոս ինքն իսկ առիթով մը, հասկցուց եւ պատուիրեց իր աշակերտներուն որ իր խօսքերը պետք է բարձրադասակ յայտարարեն ու հոչակեն, երբ անոնց ըսաւ. "Ինչ որ մութին մէջ կ'ըսեմ ձեզի՝ օր ցերեկով յայտարարեցէք, եւ ինչ որ ձեզի առանձնութեան մէջ կ'ըսեմ՝ տանիքներէն բարձրաձայն ֆարօգեցէք"» (Մտ 10.27):

5.- Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետ, խօսելով «լերան վրայ շինուած ֆաղաք մը չի կրնար պահուրտիլ» հաստատումին մասին, նոյն մեկնութիւնը կու տայ յաւելեալ հետաքրքրական մանրամասնութիւններով: Ան կ'ըսէ. «Լեռը Քրիստոս ինքն է իր անդրդուելի գօրութեան համար...: Լերան վրայ շինուած ֆաղաքը՝ եկեղեցին է: Քաղաքին հիմը՝ առաքեալներն ու մարգարէներն են, իսկ ֆաղաքին շինուածքը՝ արդարներու դասերն են, ինչպէս նաեւ անոր բոլոր բնակիչները: Այս ֆաղաքը (եկեղեցին) որ հաստատուած է երկնային լերան վրայ՝ չի կրնար թափչիլ, եւ դժոխքին դռները գայն յաղթահարել չեն կրնար»:

«Ոչ ոք նրագը կը վառէ եւ կը պահէ կաթսայի տակ. ընդհակառակը, գայն աշտանակի վրայ կը դնէ, որպէսզի տունին մէջ գտնուողներուն լոյս տայ» (Մտ 5.15): Քանի մը հաստատումներ.–

1.- Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետ սոյն տողը մեկնելով՝ կ'ըսէ. «Ճրագը՝ առաքեալներն են, ինչպէս էր Յովհաննէս Մկրտիչ: Լոյսը՝ Սուրբ Հոգին շնորհներն են, իսկ լոյսը վառողը՝ Քրիստոս, որ փչեց առաքեալներուն վրայ Սուրբ Հոգին, եւ հրամայեց որ իրենց տրուածը կամ իրենց ստացածը՝ չդնեն հեշտութեան եւ երկշտութեան

կաթսային տակ, այլ դնեն փաշուքեան եւ ունեան անտանակին վրայ...: Տունը՝ աշխարհն է, իսկ տունին մէջ եղողները՝ մարդոց սերունդներն են: Կարելի է նաեւ ըսել, որ տունը՝ մարմինն է, տունին բնակիչը՝ հոգին, իսկ լոյսը՝ առաքեալներուն փարոզութիւնը, որով լուսաւորուեցան մարդոց որդիները՝ Տիրոջ գիտութեամբ»:

2.- Շնորհալի Հայրապետն տարբեր բան հաստատած չ'ըլլար Ջարեհ Արք. Ազնաւորան երբ կը բացատրէ, թէ «նրազը Աստուծոյ արքայութեան հետեւորդներն են, Քրիստոսի վրայ հաստատուած եւ Քրիստոսի վարդապետութեամբ պատրաստուած եւ լուսաւորուած մարդիկն են, որոնց կոչումը բոլորին լոյս տալն է»: Այս իմաստով, երբ Քրիստոս կը հաստատէ, թէ «ոչ ոք նրազը կը վառէ եւ կը պահէ կաթսայի տակ», ըսել կ'ուզէ, թէ ո'չ ոք արքայութեան գաւակ դառնալէ ետք՝ պէտք է վախնայ գանձիկայ յայտարարելու: Ո'չ ոք Քրիստոսի հետեւորդ ըլլալէ ետք՝ պէտք է ամչնայ ուրիշները այդ հետեւորդութեան բերելու: Ո'չ ոք Քրիստոսով լուսաւորուելէ ետք՝ այդ լոյսը ինքնիր անձին համար պահելու իրաւունք ունի:

3.- Իսկ թէ ի՞նչ է կաթսան, Ստեփանոս Սիւնեցիին կը բացատրէ, թէ՛ կաթսան Սատանան ի՞նքն է, որ կը փորձէ Քրիստոսի վարդապետութեամբ եւ գիտութեամբ զինուածները կաթսայի տակ առնել, այսինքն՝ խաբել գանձոնք, եւ ստիպել որ չ'փարոզեն ուրիշներուն, այլ ընդհակառակը, կաթսայել, այսինքն՝ ծածկել ունեանքիւնը: Եւ այս ծածկելը կամ ունեանքիւնը չ'փարոզելը՝ յաճախ վախի կամ ծովութեան ու անհոգութեան պատճառով կ'ըլլայ: Ահա թէ ինչո՞ւ Ներսէս Շնորհալի Հայրապետ, ինչպէս քիչ մը վերեւ յիշեցի, կ'ըսէ թէ Քրիստոս «փչեց առաքեալներուն վրայ Սուրբ Հոգին, եւ հրամայեց որ իրենց տրուածը կամ իրենց ստացածը՝ չ'դնեն հեշտութեան եւ երկչոտութեան կաթսային տակ, այլ դնեն փաշուքեան եւ ունեան անտանակին վրայ...»:

Մեր կեանքին մէջ շատ կաթսաներ կան, այսինքն՝ արգելքներ, Քրիստոսի Աւետարանը փարոզելու եւ փրկութեան աւետիսը տարածելու: Շատերուն համար ամչնալը կաթսայ մըն է: Անոնք որոնք կ'ամչնան Տէր Յիսուսի համար վկայելու մարդոց առջեւ՝ անոնք ունեանքիւնը նրազը կաթսայի տակ դնող մարդիկ են, անոնք Յիսուսը ուրացող մարդիկ են: Այսպիսիներու համար է որ Յիսուս ըսաւ. «Ով որ զիս ուրանայ մարդոց առջեւ, նոյնպէս ալ ես զինք պիտի ուրանամ Հօրս դիմաց, որ երկինքի մէջ է» (Մտ 10.33):

Ուրիշներուն համար կաթսան իրենց դիրքն ու գահն է: Այսպիսի մարդիկ կամաւորապէս կը մերժեն յայտարարել թէ իրենք Քրիստոսի

հետևորդներն են, թե իրենի՞ Բրիստոսով լուսաւորուած՝ նոր կեանք կ'ապրին, եւ չեն ուզեր կոչ ուղղել ուրիշներուն՝ ընդգրկելու այդ լոյսն ու յոյսը, այդ հաւատքն ու փրկութիւնը: Չեն ուզեր՝ որովհետեւ կը վախնան որ կրնան կորսնցնել իրենց դիրքերն ու գահերը: Կ'արժէ՞ երկրաւոր գահի մը համար կորսնցնել Բրիստոսի գահակից ըլլալու փառքն ու պատիւը:

Ուրիշներուն համար կաթսան վախն է: Շատեր կան որոնք թէպէտ Բրիստոսի շնորհով նրազի վերածուած են, բայց կը վախնան խօսելու Բրիստոսի մասին եւ վկայելու անոր համար: Կը վախնան՝ որովհետեւ մտահոգ են որ կրնան անարգուի կամ ծաղրուի մարդոց կողմէ: Կը վախնան որ կրնան իրենց գործը կորսնցնել: Կը վախնան իրենց վրայ իշխանութիւն եւ իրաւասութիւն ունեցող մարդոց անգթութենէն: Կը վախնան զիրենի՞ շրջապատող ծայրայեղ հեթանոսներէն: Կը վախնան որ կրնան բարեկամ մը կորսնցնել: Վախի հագար ու մէկ պատճառ կարելի է յիշել: Նման վախ Սատանան ի՛նքն է որ կը դնէ հաւատացեալ մարդուն մէջ, զինք հեռու պահելու համար հաւատքի ու վկայութեան կեանքէն: Վախը կը ջլատէ մեր գօրութիւնը եւ կ'անդամալուծէ Բրիստոսի փառքին համար աշխատելու մեր խանդն ու եռանդը:

Պէտք է հեռու կենանք ոեւէ բանէ որ կրնայ կաթսայի դերը առնել մեր կեանքին մէջ, այսինքն՝ խափանել Աստուծոյ գործը: Զգո՛յ՛ջ ըլլանք վախի իբրեւ հետեւանք կաթսայելու, այսինքն՝ թափցնելու նշմարտութիւնը: Զգո՛յ՛ջ ըլլանք մարդկային հաշիւներէ մղուած կաթսայելու Աւետարանին լոյսը: Զգո՛յ՛ջ ըլլանք մեր սրտին մէջ գերեզմանելու յարուցեալ Փրկիչին գեղեցկութիւնը:

Ինչպէս արեւէն լոյս առնող լուսինին պարտականութիւնն է՝ լո՛յս տալ գիշերուան մութին մէջ եղող մարդոց, այնպէս ալ, անոնք որոնք աշխարհին լոյսը եղող Բրիստոսով կը լուսաւորուին, ո՛չ միայն կոչուած են, այլեւ պարտաւոր են լո՛յս տալու մեղքի խաւարին մէջ խարխափող մարդոց:

4.- Բրիստոս կ'ըսէ թէ նրազը վառելէ ետք՝ զայն պէտք է աշտանակի վրայ դնել: Ի՞նչն է աշտանակը կամ ի՞նչ բան կը ներկայացնէ: Զարեհ Արք. Ազնաւորեան պատասխանելով այս հարցումին՝ կ'ըսէ. «Աշտանակը կա՛մ Բրիստոս ինքն է, կա՛մ Բրիստոսի վարդապետութիւնն է, եւ կա՛մ Բրիստոսի արքայութիւնն է: Յամենայնդէպս, բոլորին ալ մէջ Բրիստոս ինքն է որ ներկայ է: Հոս շեշտուածը ոչ միայն Բրիստոսով լոյս ըլլալն է, այլեւ Բրիստոս-աշտանակին վրայ հաստատուելով, այսինքն՝ Բրիստոսի վստահելով՝ այդ լոյսը տարածելն է տան բոլոր անդամներուն վրայ:

Տուն հասկացողութեան վերաբերեալ, անհրաժեշտ է գիտնալ, որ անցեալին մարդիկ առ հասարակ մէկ սենեակի մէջ կ'ապրէին եւ բոլորն ալ նոյն նրագով կը լուսաւորուէին, որովհետեւ այսօրուան պէս առանձնասենեակներ չկային...: Թէ՛ տնեցիները եւ թէ՛ դուրսէն եկող օտար հիւրերը նոյն նրագով կը լուսաւորուէին:

Քրիստոս պատկերաւոր այս բացատրութեամբ, մեզի կը սորվեցնէ այն՝ որ քրիստոնէական մեր կեանքը թէ՛ տնեցիներուն, այսինքն՝ մեր հաւատքի հարազատներուն եւ թէ՛ նաեւ ուրիշներուն ծանօթ պէտք է ըլլան: Բոլորը պէտք է տեսնեն մեր ապրած հաւատքի կեանքը, լոյսի կեանքը, որպէսզի փառաւորեն մեր երկնաւոր Հայրը որ երկինքի մէջ է: Հետեւաբար, մեր հաւատքի կեանքին նպատակը ուրիշ բան չէ եթէ ոչ զԱստուած փառաւորելը եւ ուրիշներն ալ Աստուծոյ փառքը հիւսելու մղելը: Մեր կեանքերը որպէս լոյս՝ Աստուծոյ լոյսին փառաբանութիւնը պէտք է դառնան»:

5.- Ինչպէս լեռան վրայ գտնուող քաղաքը չի կրնար ծածկուիլ մարդոց աչքէն, այնպէս ալ աշտանակի վրայ հաստատուող նրագը՝ չի կրնար լոյս չսփռել: Եթէ մենք բարձրացած ու մագլցած ենք հաւատքի այն լեռը ուր Աստուծոյ փառքն է հանգչած, չենք կրնար չհանդիսանալ նառագայթումը աստուածային այդ փառքին: Եթէ մենք նրագացած ու արեւացած ենք աշխարհի լոյսով՝ Քրիստոսով, չենք կրնար լուռ մնալ ու չվկայել մեր Տիրոջ սիրոյն ու փրկութեան մասին:

Լեռ եւ աշտանակ: Լեռը բարձր կ'ըլլայ, նոյնպէս եւ աշտանակը: Իսկական քրիստոնեայ մարդը, բարձր լեռան վրայ հաստատուող քաղաք՝ եւ աշտանակին վրայ բարձրացող նրագ պէտք է ըլլայ:

Լեռ եւ աշտանակ բառերով, Յիսուս ըսել կ'ուզէ՝ որ քրիստոնեայ մարդը բարձր ու վեր պէտք է մնայ աշխարհէն ու աշխարհայինէն: Աստուծոյ գաւակը աշխարհի ու մեղքի տիղմին մէջ պէտք է թաւալի, այլ պէտք է վեր ելլէ այդ տիղմէն, ելլէ դէպի լեռան գագաթը, ելլէ դէպի աշտանակին գլուխը:

Սուրբ Ներսէս Շնորհալի Մատթէոսի իր մեկնութեան մէջ կ'ըսէ. «Ինչպէս բարձր տեղ դրուող նրագը կը լուսաւորէ իրեն մօտիկ եղողները, եւ բոլորին աչքերը անոր կը նային, այնպէս ալ դուք, ապրեցէ՛ք այնպիսի՝ ուղիղ վարժով՝ որ մարդիկ ձեզի նային եւ ձեզմէ բարի օրինակ առնեն»:

Արդարեւ, ինչպէս բարձր տեղ դրուող նրագը աչքառու կ'ըլլայ, այնպէս ալ, քրիստոնեայ մարդուն կեանքը աչքառու եւ ուշագրաւ կեանք մը պէտք է ըլլայ: Աշխարհի մարդիկ մեր կեանքը դիտելով, պէտք է գիտնան որ մենք տարբեր ենք իրենցմէ. տարբեր՝ մեր մտածողութեան

եւ մտածողութեան կերպին մէջ. տարբեր՝ մեր կատարած գործերով եւ գործելակերպով. տարբեր՝ մեր աշխատանքներուն եւ աշխատելաձեւին մէջ. տարբեր՝ մեր խօսակցութիւններուն եւ խօսելակերպին մէջ:

«Նոյնպէս ալ, ձեր լոյսը թող այնպէս շողայ մարդոց առջեւ, որ անոնք ձեր բարի գործերը տեսնեն եւ փառաւորեն ձեր Հայրը, որ երկինքի մէջ է» (Մտ 5.16):

Քրիստոնեայ մարդը պէտք է լոյսի պէս փայլի մութին մէջ, նիշդ այնպէս՝ ինչպէս նրազը կը փայլի մութին մէջ: Քրիստոնեայ մարդուն կեանքին մէջ հաւատքի կեանքը ա՛յնքան բացայայտ պէտք է ըլլայ, որքան բացայայտ է լերան գագաթին հանգչած քաղաք մը: Ինչպէս կաթսային տակ ծածկուող նրազը օգուտ մը չ՛ունենար ուրիշին, այնպէս ալ, ինքնիր հաւատքը ծածկող մարդը՝ չի կրնար օրինակ եւ օգտակար դառնալ ուրիշին: Ահա թէ ինչո՛ւ, Յիսուս խօսելէ ետք լերան գագաթին երեւցող քաղաքին եւ աշտանակին գլուխէն նառագայթող նրագին մասին, անմիջապէս կ՛աւելցնէ՝ ըսելով. «Նոյնպէս ալ, ձեր լոյսը թող այնպէս շողայ մարդոց առջեւ, որ անոնք ձեր բարի գործերը տեսնեն եւ փառաւորեն ձեր Հայրը, որ երկինքի մէջ է»:

Մեզմէ որո՞ւն հետ չէ պատահած, տեսնելէ ետք արեւն ու անոր սիրուն նառագայթները՝ փառք չտայ Աստուծոյ, պայծառ օր մը ունենալուն համար: Աշխարհ պէտք է տեսնէ մեր հաւատքին նառագայթները եւ այդ նառագայթներուն արդիւնքը եղող մեր բարի գործերը՝ որպէսզի փառաւորէ զԱստուած:

Տուեալ համարին մէջ, Յիսուս անանջատաբար կը ներկայացնէ լոյսի շողումն ու բարի գործերը: Այս երկուքը անկարելի է բաժնել իրարմէ: Երկրորդը առաջինին արդիւնքն է: Եթէ կա՛յ լոյս մեր կեանքին մէջ՝ այդ լոյսին գործերն ալ պէտք է ըլլան: Ի՞նչ են լոյսին գործերը: Լոյսին գործերն են՝ խաւարը փարատել, մութը խափանել, ծածկուածը բացայայտել, մոլորածին ուղղութիւն տալ, յոյս ներշնչել, խարխափողը առաջնորդել, եւ այլն: Անոնք որոնք Քրիստոսով լոյս դարձած են՝ կոչուած են այս բոլորը ընելու:

Մարդիկ թող տեսնեն՝ ձեր բարի գործերը: Ասիկա Տէրունական հրահանգ է: Մարդիկ տեսանելի ու շօշափելի բան կ՛ուզեն տեսնել: Չի բաւեր լոյսին գեղեցկութիւնը գովերգել, այլ պէտք է լոյսի գործեր կատարել: Չի բաւեր ամպի նման սպիտակ ըլլալ, այլ պէտք է ջուր ունեցո՛ղ ամպ ըլլալ: Չի բաւեր ծառի նմանիլ, այլ պէտք է պտղաբեր ծառի նմանիլ: Միթէ չկա՞ն ծառեր որոնք անպտղաբեր ըլլան, եւ ուստի, անէժփի արժանի (հմմտ Մտ 21.19), կամ չկա՞ն մարդիկ որոնք «անանձրեւ ամպերու եւ հովի պէս» ըլլան (Առ 25.14):

Ինչպէս ամէն հող՝ հող է, բայց ամէն հող՝ բերրի չէ, այնպէս ալ, ամէն ֆրիստոնեայ մարդ՝ մարդ է, բայց ամէն մարդ՝ ֆրիստոնեայ չէ: Քրիստոսի գաւակը պէտք է ըլլայ ա՛յնպիսի հող մը, որ կարող ըլլայ իրմէ բուսցնել բուրեան վարդեր ու ծաղիկներ, պտղալից ծառեր ու բոյսեր, այլ խօսքով՝ կատարել ամէն տեսակ բարի գործեր եւ իր անձին վրայ յայտնաբերել բազմազան առաքինութիւններ:

Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետը կ'ըսէ. «Ինչպէս ո՛չ ոք կրնայ ծածկել լոյսը, այնպէս ալ, ո՛չ ոք կրնայ ծածկել իր առաքինութիւնները»: Եւ ինչպէս երեւցող լոյսն է որ օգտակար է եւ ո՛չ թէ կաթսային տակ դրուող լոյսը, կամ ամպերուն ետին ծածկուող արեւը, այնպէս ալ, տեսանելի առաքինութիւններն ու բարի գործերն են որ մեզ մարդոց բարի եւ տիպար օրինակ կը դարձնեն:

Հարկաւ երբ Յիսուս կը պատուիրէ այնպէս ընել՝ որ մարդիկ մեր «բարի գործերը տեսնեն», ըսել չ'ուզեր որ փնտոնեմ մեզ դիտող աչքեր եւ անոնց դիմաց կատարեմք մեր բարի գործերը: Եթէ մէկը աղքատի մը ողորմութիւն պիտի տայ, ոչինչով կ'օգտուի եւ ոչինչով օգտակար կը դառնայ, եթէ այդ մէկը ընէ մարդոց աչքին դիմաց՝ անոնց կողմէ փառք ստանալու եւ գովասանք լսելու նպատակով:

Բարեգործութիւններ կան որոնք չ'ըլլար մարդոց աչքին առջեւ ընենք: Օրինակ՝ աղքատի մը ողորմութիւն տալը: Ահա թէ ինչո՛ւ երբ Յիսուս պատուիրեց ողորմութիւն ընել՝ ըսաւ. «Փող ու թմբուկով մի՛ ըներ՝ մարդոց ուշադրութիւնը գրաւելու համար, ինչպէս կեղծաւորները կ'ընեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու վրայ՝ մարդոցմէ փառաւորելու ակնկալութեամբ» (Մտ 6.2):

Ոնեւ բարեգործութիւն որուն նպատակը մարդոց կողմէ տեսանելի ըլլալն է՝ կը կորսնցնէ իր արժէքը: Ոնեւ բարեգործութիւն որ մեզ կը փառաւորէ փոխանակ զԱստուած՝ ո՛չ միայն մեզի օգուտ մը չ'ունենար, այլեւ, մեզ պատիժի կ'ենթարկէ, որովհետեւ, փառքը՝ փառքի Աստուծոյն միայն կը պատկանի: Փառքն ու փառաւորուիլը՝ Աստուծոյ իրաւունքն է: Փառաւորուիլ սիրող մարդը՝ Աստուծոյ իրաւունքին յափշտակիչն է: Իսկ Աստուած ի տես իր փառքի յափշտակութեան՝ լուռ պիտի չմնայ, քանի ան իր փառքը ուրիշին տալ մերժող Աստուած է (Յս 42.8, 48.11):

Բարեգործութեան գլխաւոր նպատակը՝ մարդիկը Աստուծոյ փառաբանութեան առաջնորդելը պէտք է ըլլայ: Յիսուս չ'ըսեր. «Անոնք ձեր բարի գործերը (թող) տեսնեն եւ ձեզ փառաւորեն», այլ՝ կ'ըսէ. «Անոնք ձեր բարի գործերը (թող) տեսնեն եւ փառաւորեն ձեր Հայրը»: Այո՛, փառաւորուողը մեր երկնաւոր Հայրը պէտք է ըլլայ եւ ո՛չ թէ մենք:

Փառք փնտոող մարդը՝ թշնամի է Աստուծոյ: Փառք փնտոող մարդը՝ ենթակայ է ինքնասատանայացումի, որովհետեւ Սատանան ինք եւս փառք ու փառաւորուիլ փնտոեց՝ եւ ասիկա պատճառ եղաւ իր սատանայացումին: Բայց մենք, իբրեւ Աստուծոյ գաւակներ, նախանձախնդիր ըլլանք մեր կեանքով միայն ու միայն Աստուծոյ փառք բերելու:

ԱՐԹՈՒՆ ԾԱՌԱՆԵՐ

«Պատրաստ եղե՛ք, ձեր գօտիները ձեր մէջքին ամրացուցած եւ նրագները՝ վառած, նման այն ծառաներուն, որոնք կը սպասեն որ իրենց տէրը հարսանիքէն վերադառնայ, որպէսզի երբ տէրը գայ եւ դուռը զարնէ՝ իրենք անմիջապէս բանան դուռը: Երանի՛ր այն ծառաներուն, որոնց տէրը երբ կու գայ՝ արթուն կը գտնէ զիրենք: Կ'ըսեմ ձեզի, թէ ինք իր մէջքին գօտի պիտի կապէ, պիտի նստեցնէ զիրենք եւ ինք պիտի սպասարկէ անոնց: Երանելի են այն ծառաները, որոնց տէրը զիրենք արթուն կը գտնէ, երբ կէս գիշերին կամ աւելի ուշ տուն դառնայ: Բայց այս ալ գիտցե՛ք, որ եթէ տանտէրը գիտնար թէ գողը ո՛ր ժամուն պիտի գայ, արթուն կը մնար եւ թոյլ չէր տար որ գողը պատը քանդելով տունը մտնէ: Ուրեմն, դուք ալ պատրաստ եղե՛ք, որովհետեւ Մարդու Որդին ձեր չակնկալած ժամուն կրնայ գալ» (Ղկ 12.35-40):

«Պատրաստ եղե՛ք» (Ղկ 12.35):

Առաջին այս երկու բառերը կը կազմեն ամբողջ հատուածին կարեւորագոյն եւ առանցքային բաժինը, որոնց մէջ է որ կը խտացուի ամբողջ հատուածին պատգամն ու նպատակը: Բառեր՝ որոնք կը յիշեցնեն մեզի Տիրոջ երկրորդ գալուստին պատրաստ ըլլալու բացարձակ անհրաժեշտութիւնը: Ի՞նչ ձեռով կամ ի՞նչպէս պէտք է պատրաստուիլ Տիրոջ երկրորդ գալուստին:

Երբ կը խօսինք պատրաստ ըլլալու կամ պատրաստուելու մասին, պէտք է գիտնանք որ այդ պատրաստութիւնը մեր սեփական նիւթին ու ջանքին հետեւանք չէ եւ չի կրնար ըլլալ: Մեզ պատրաստողը Աստուած ի՛նքն է, այս պարագայիս՝ Սուրբ Հոգին: Նոյնը կը հաստատէ Պօղոս առաքեալ՝ ըսելով. «Մենք բոլորս ալ, որ բաց երեսով Տիրոջ փառքը կ'արտացոլացնենք հայելիի մը պէս, նոյն այդ պատկերով կը փոխակերպուինք՝ հետզհետէ անող փառքով մը: Եւ այդ փոխակերպումը Տիրոջ Հոգին է որ կ'իրագործէ» (Բ.Կր 3.18):

Փոխակերպումը զոր Տիրոջ Հոգին կ'իրագործէ՝ նոյնիման մեր անձերուն պատրաստութիւնն է: Բայց որպէսզի Սուրբ Հոգին մեր անձերը պատրաստելու աշխատանքին ձեռնարկէ, պէտք է յանձնուիլ Տէր Յիսուս Քրիստոսի: Քրիստոսի չյանձնուողը՝ չի վայելեր ներգործութիւնն ու առաջնորդութիւնը Սուրբ Հոգիին, իսկ Սուրբ Հոգիին ներգործութիւնն ու առաջնորդութիւնը չվայելող մարդը՝ ինքզինք անպատրաստ պիտի գտնէ Տիրոջ գալստեան ժամանակ:

Ի՞նչ կը նշանակէ յանձնուիլ Տիրոջ: Ամենէն պարզ բաներով, Տիրոջ յանձնուիլ, կը նշանակէ գիտակցիլ մեր մեղաւորութեան, ընդունիլ որ արժանի ենք դատապարտութեան, ընդունիլ որ Յիսուս մեռաւ իսպառ յարա՛յ՝ մեզ ազատագրելու համար յաւիտենական դատապարտութենէն, եւ յարութիւն առաւ մեզ արդարացնելու եւ իբրեւ արդար մարդիկ կանգնեցնելու մեր երկնաւոր Հօր դիմաց: Այս բոլորը գիտնալէ եւ ընդունելէ ետք, յանձնուիլ իրեն, գիրկը նետուիլ, հոչակել իր տիրութիւնը մեր կեանքերուն մէջ, մեր կեանքին դեկը իրեն յանձնել, այնուհետեւ ինդրել իր առաջնորդութիւնը, Սուրբ Հոգիին ներգործութիւնը եւ մեր երկնաւոր Հօր հովանաւորութիւնը: Այս բոլոր կարելի է ամփոփել երեք հակիրճ տողերու մէջ.–

Ընդունիլ մեր մեղաւորութիւնը:

Ընդունիլ որ Յիսուս մեղաւորներու համար մեռաւ: Եւ

Ընդունիլ զայն մեր սիրտերուն մէջ:

Այս երեք նշմարտութիւնները մարմնացնելէ ետք մեր կեանքերուն մէջ, Տիրոջ Հոգին կը սկսի մեր անձերը պատրաստելու աշխատանքին:

Ի՞նչ է մեր բաժինը մեր անձերու պատրաստութեան աշխատանքին մէջ: Ընելիք ունի՞մք, թէ ամէն ինչ Սուրբ Հոգիին պէտք է ձգենք: Պօղոս առաքեալ կը հաստատէ թէ «մենք... Աստուծոյ գործակիցներ ենք» (Ա.Կր 3.9): Ի՞նչ կը նշանակէ Աստուծոյ գործակից ըլլալ: Աստուծոյ գործակից ըլլալ՝ չի նշանակեր զինք առանձին թողուլ իր գործին մէջ: Աստուծոյ գործակիցը՝ Աստուծոյ հետ գործող մարդն է: Բայց հարկաւ ի մտի պէտք է ունենանք որ գործին հիմնական եւ կարեւորագոյն բաժինը Աստուած է որ կ'ընէ եւ ո'չ թէ մենք: Օրինակ, առնենք փրկութեան պարագան: Փրկութեան կարեւորագոյն բաժինը Աստուած ինք ըրաւ, աշխարհ զրկելով իր Որդին որպէսզի մեռնի մեր մեղքերուն համար, բայց մենք ալ ունինք մեր բաժինը որ ուրիշ բան չէ եթէ ոչ ընդառաջել փրկութեան կոչին:

Ինչպէս ըսի, մենք ունինք մեր բաժինը եւ Սուրբ Հոգին ունի իր բաժինը: Օրինակ, մեր բաժինը՝ Քրիստոսի յանձնուիլն է, իսկ Սուրբ Հոգիին բաժինը՝ մեր մեղաւորութեան մեզ համոզելն է՝ մեզ առաջնորդելու համար Յիսուսի: Սուրբ Հոգին չէ մեզ Քրիստոսի յանձնողը, բայց Սուրբ Հոգին ինքն է մեզ ինքնայանձնումի առաջնորդողը:

Քրիստոսի յանձնուելէ ետք՝ մեր դիմաց կայ փոխակերպուելու աշխատանքը: Այդ աշխատանքին մէջ ալ մենք ունինք մեր բաժինը եւ Սուրբ Հոգին՝ իր բաժինը: Նախ, ի՞նչ կը նշանակէ փոխակերպում: Փոխակերպում ըսելով, առաջին հերթին կը հասկնանք՝ հրաժարիլ աշխարհի մարդոց վարմունքը ընդօրինակելէ եւ նորոգուած միտքերով

նոր մարդ ըլլալ, այլ խօսքով՝ ապրիլ մտքի նորոգութիւն (Հո 12.2: Եփ 4.23–24): Սուրբ Հոգին բռնի ուժով չի փոխեր մեզ: Սուրբ Հոգին կ'օգնէ մեզի աշխարհի մարդոց վարմունքը մէկդի դնելու, բայց բնա՛ւ երբեք չ'ստիպեր որ գայն մէկդի դնենք:

Մեր բաժինը՝ փոխուելու պատրաստակամութիւն յայտնելն է եւ փոխուելու պատրաստ ըլլալն է, անկէ անդին Սուրբ Հոգիին գործն է: Ի՛նքն է որ պիտի փոխէ ու փոխակերպէ: Հարկաւ պատրաստակամ կամ պատրաստ ըլլալ, չի նշանակեր կրաւորական կամ չէզոք դիրք բռնել եւ սպասել որ Սուրբ Հոգին բան մը ընէ: Օրինակ, եթէ մէկը սուտ խօսելու բնաւորութիւն ունի, եւ պատրաստ է ու կ'ուզէ փոխուիլ եւ իր այս վատ բնաւորութենէն ձերբազատիլ, Սուրբ Հոգին կրնայ օգնել իրեն՝ մնայուն կերպով յիշեցնելով իրեն որ ճշմարտութիւնը խօսի, բայց չի պարտադրեր անոր ճշմարտութիւնը խօսիլ: Սուրբ Հոգին կրնայ խղճի խայթ տալ իրեն՝ որպէսզի մնայուն կերպով զինք զգաստ վիճակի մէջ պահէ եւ հեռու մնայ սուտէն, բայց դարձեալ, սուտէն հեռու մնալը՝ մարդուն ձեռքն է: Բայց հարկաւ սուտը միայն լեզուով սուտ խօսիլը չէ: Մէկը կրնայ լեզուով սուտ չխօսիլ, բայց իր ամբողջ կեանքը կրնայ ստուրբան կեանքը ըլլալ, կրնայ սուտ ըլլալ իր վերաբերմունքին մէջ, սուտ ըլլալ ժպիտին մէջ, սուտ ըլլալ իր կատարած բարի մաղթանքներուն մէջ:

«Զեր գօտիները ձեր մէջքին ամրացուցած եւ նրագները՝ վառած...»

(Ղկ 12.35):

Այս համարին վերաբերեալ, յատկապէս առաջին տողին վերաբերեալ, քանի մը մեկնութիւններ կարելի է առաջարկել, թէպէտ ներկայացուած մեկնութիւններէն ոեւէ մէկը միւսին չի հակասեր. –

1.– Գօտին մէջքին ամրացնելը՝ պատրաստ ըլլալու վիճակն է որ կը պատկերացնէ: Ճրագը մարդուն հաւատքն է, իսկ նրագին «վառածութիւնը», այլ խօսքով, կրակը կամ լոյսը՝ հաւատքին արտայայտութիւնը եղող գործերն են: Այս իմաստով, գօտին մէջքին ամրացնելը եւ նրագը վառ պահելը, պարզապէս կը նշանակեն՝ ըլլալ հաւատքի՛ մարդ, գործի՛ մարդ, պատրա՛ստ մարդ: Հաւա՛տք ու գործ ունեցող մարդը բնականօրէն պատրաստ մարդ կը սեպուի:

2.– Գօտին՝ սանձն է, իսկ մէջքը՝ մարդուն մարմինը, այլ բացատրութեամբ՝ մարդուն աշխարհային ցանկութիւններն ու փափաքները: Հետեւաբար, գօտին մէջքին կապել կամ ամրացնել, կ'ըսէ Սուրբ Օգոստինոս. «Կը նշանակէ սանձել մեր մարմինին աշխարհաբոյր ցանկութիւններն ու կիրքերը... , իսկ մեր նրագը վառել՝ կը նշանակէ մեր նրագը արդար գործերով բռնկեցնել»:

3.- Մեկնիչ մը ըսած է. «Գօտիով մէջքը ամրացնել, կը նշանակէ մարդուն մարմինը պահել զգաստ եւ կիրթ: Վառուած նրագը՝ Աստուծոյ Հոգիով վառուած հոգիներն են: Իսկ իրենց տիրոջ վերադարձին սպասող ծառաները՝ կը պատկերացնեն մեր կարողութիւնները, զգացումները, սրտի փափաքը, որոնք պատրաստ վիճակի մէջ պէտք է ըլլան եւ սպասեն Տիրոջ գալուստին»:

4.- Սուրբ Յովհաննէս Կասեան ուրիշ հետաքրքրական մեկնութիւն մը կ'առաջադրէ. «Գօտին մեռած կենդանիի մորթով կը շինուէր անցեալին, ուստի մարմինը կամ մէջքը կապել գօտիով, կը նշանակէ մահացնել մեր մարմինին այն անդամները որոնք կը պարունակեն վատ ցանկութիւններ: Նոյնը Պօղոս առաքեալ կ'ըսէ. "Մեռցուցէ՛ք ձեր մէջ երկրաւոր ցանկութիւնները, այսինքն՝ ձեզմէ դուրս վանեցէ՛ք պոռնկութիւնը, պղծութիւնը, կիրքը, չար ցանկութիւնը..." (Կղ 3.5)»:

5.- Դարձեալ, համաձայն Սուրբ Օգոստինոսին, «Գօտին մէջքին կապել, կը նշանակէ հեռանալ չարիքէն, իսկ նրագը վառել՝ կը նշանակէ բարին գործել: Գօտին մէջքին կապելը՝ կուսութեան կեանքը ընտրելն է, իսկ վառուած նրագը՝ բարեգործութիւններն են»:

6.- Մեծն Կիւրեղ խօսելով մէջքին ամրացուած գօտիին եւ վառուած նրագին մասին՝ կ'ըսէ. «Այս երկուքը մատնանիշ կ'ընեն այն հաղորդակցութիւնը որ մարմինը ունի հոգիին հետ, սուրբ կեանքի մէջ: Գօտիով կապուած եւ ամրացուած մէջքը կը պատկերացնէ այն մարմինը զոր հաւատացեալ մարդը կապեց եւ ստրկացուց ո՛չ թէ որպէսզի կործանէ զանիկա, այլ որպէսզի ապրեցնէ զանիկա Սուրբ Հոգիով, եւ այս ձեւով, մարմինը ապրի Տիրոջ համար. իսկ վառուած նրագը մարդուն հոգին է որ իր բոլոր կարողականութեամբ կը լուսաւորէ մարմինին մէջ, որպէսզի մարդը Սուրբ Հոգիին առաջնորդութեան ներքեւ ապրի միութեան եւ համերաշխութեան մէջ՝ լոյսի թագաւորութեան ի խնդիր...»:

7.- Վերջապէս, գօտին մէջքին կապելը կամ ամրացնելը, Տիրոջ ծառայելու եւ անոր սուրբ կամքը կատարելու պատրաստ ըլլալն է:

«Նման այն ծառաներուն, որոնք կը սպասեն որ իրենց տէրը հարսանիքէն վերադառնայ, որպէսզի երբ տէրը գայ եւ դուրը գարնէ՛ իրենք անմիջապէս բանան դուրը» (Ղկ 12.36): Քանի մը հաստատումներ.-

1.- Որո՞նք են յիշեալ ծառաները: Ծառաները հաւատացեալները իրենք են, իսկ տէրը՝ Տէրը ի՛նքն է, Քրիստոս ի՛նքն է: Ինչո՞ւ հաւատացեալ մարդը կը կոչուի ծառայ եւ ի՞նչպիսին կ'ըլլայ ծառայ մարդը.-

ա.- Ծառայ մարդը գուրկ է իր սեփական կամքը ունենալէ, եւ ուստի, միշտ իր տիրոջ կամքը կատարելու պատրաստ եղող մարդն է: Հետեւաբար, հաւատացեալ մարդը կը կոչուի ծառայ, որովհետեւ այն օրը որ ինքզինքն Քրիստոսի յանձնեց, իր սեփական կամքը դրած եղաւ անոր տրամադրութեան ներքեւ: Աստուծոյ մարդը իր սեփական կամքը չէ որ պէտք է փնտռէ, այլ կամքը Անոր՝ որ զինքն հրաւիրեց փրկութեան: Որքան հաւատացեալ մարդը խորանայ իր հաւատքի կեանքին մէջ, ա՛յնքան աւելի իր կամքը կը նոյնանայ իր Տիրոջ կամքին հետ: Կը սկսի կամենալ միայն այն՝ ինչ որ Տէրը ի՛նքն կը կամենայ: Սիրել այն՝ ինչ որ Տէրը ի՛նքն կը սիրէ:

բ.- Հաւատացեալ մարդուն ծառայ կոչուիլը ցոյց կու տայ անոր որոշ ծառայութեան մը կամ աշխատանքի մը կանչուած ըլլալը, եւ այդ ծառայութիւնը առաջին հերթին Աստուծոյ թագաւորութեան տարածումն է երկրի վրայ: Հաւատացեալ մը որ Աստուծոյ թագաւորութիւնը չի տարածեր երկրի վրայ՝ չի կրնար Աստուծոյ ծառան սեպուիլ: Աստուծոյ թագաւորութիւնը տարածելը երեք ձեւով կ'ըլլայ.-- 1) Անձնապէս ապրելով այդ թագաւորութիւնը՝ Քրիստոսի կամքը կատարելով: 2) Աւետարանը տարածել՝ թէ՛ իբրեւ փրկութեան պատգամ եւ թէ՛ իբրեւ գիր, վկայելով որ Յիսուս ի՛նքն է աշխարհի Փրկիչը եւ չկա՛յ ուրիշ Փրկիչ: 3) վկայել եւ խօսել գատ, նաեւ աշխատանք տանիլ Յիսուսէ հետո՛ւ եղող մարդիկը Յիսուսի մօտեցնել:

գ.- Ծառայ բացատրութիւնը մատնացոյց կ'ընէ հաւատացեալ մարդուն պարտականութիւնը իր նմաններուն, իր եղբայրներուն եւ քոյրերուն նկատմամբ: Քրիստոսի ծառան պէտք է ծառայէ մարդոց այնպէս ինչպէս Քրիստոս ի՛նքն ծառայեց: Պէտք է հոգատար ըլլայ աղատին եւ մոռցուածին հանդէպ այնպէս ինչպէս Քրիստոս ի՛նքն եղաւ:

2.- Ծառաները «կը սպասեն որ իրենց տէրը հարսանիքէն վերադառնայ»: Ըսինքն, որ յիշեալ տէրը՝ Քրիստոս ի՛նքն է: Այս իմաստով, հաւատացեալները «կը սպասեն... որ (Քրիստոս) հարսանիքէն վերադառնայ»: Ի՞նչ է հարսանիքը: Հարսանիքը՝ արքայութիւնն է, արքայութեան ուրախութիւնն է, երջանկութիւնն է, երանութիւնն է, փառքն է, փառաւորութիւնն է:

Քրիստոս առաջին անգամ կամաւորապէս ձգեց երկինքի ամբողջ ուրախութիւնը, ամբողջ փառքը, եւ աշխարհ եկաւ մեռնելու եւ իր մահուամբ մարդիկը փրկութեան հրաւիրելու, բայց երկրորդ անգամ պիտի գայ իր ամբողջ փառքով ու փառաւորութեամբ, պիտի գայ «հարսանիքէն», պիտի գայ իբրեւ Փեսայ՝ արքայութեան հարսանիքին

առաջնորդելու իր Հարսը՝ Եկեղեցին, սպասող եկեղեցին, աղօթող եկեղեցին, յուսացող եկեղեցին:

Քրիստոսի մարմինը՝ եկեղեցին, պետք է սպասողը ըլլայ Փեսայի յայտնութեան: Բնագիրին մէջ տեղ գտած «կը սպասեն» բառերը, որոշապէս կը պարզեն որ հաւատացեալ մարդը պետք է սպասող մարդ ըլլայ, յուսացող մարդ ըլլայ, ակնկալող մարդ ըլլայ: Սպասող մարդը վա՛ն պետք է պահէ իր հաւատքի նրագը, լուսաւորուի՛ եւ գօտեպնդուի՛ այդ նրագով՝ որպէսզի հեռո՛ւ մնայ մեղքի խաւարէն, աշխարհի մութէն:

Ճրագ մը որ շիջած է, ալ անոր տէրը չ՛սպասեր, այլ կը ննջէ, մութին մէջ կը խարխափէ, կը մոլորի, կը գլորի, կը սայթափի: Մո՛ւթ է աշխարհը առանց հաւատքի նրագին: Խաւա՛ր է մարդուն կեանքը առանց հաւատքի նրագին: Ահա թէ ինչո՛ւ, վա՛ն պետք է պահել հաւատքի մեր նրագը, որպէսզի չխարխափենք մեղքի խաւարին մէջ, չգլորինք ու չսայթափինք:

3.- «Կը սպասեն որ իրենց տէրը հարսանիքէն վերադառնայ»: Քրիստոս պատահական տեղէ մը չէ որ պիտի վերադառնայ, այլ՝ արքայութեան հարսանիքէն: Յիսուս կը շեշտէ այս նշմարտութիւնը, որովհետեւ կ՛ուզէ որ հաւատացեալ մարդը իր ուշադրութիւնը կեդրոնացնէ արքայութեան վրայ, ինչպէս Պօղոս առաքեալ կ՛ըսէ. «Քանի որ յարութիւն առիք Քրիստոսի հետ, այսուհետեւ ձեր ուշադրութիւնը երկինք դարձուցէք» (Կղ 3.1): Այո՛, մեր ուշադրութիւնը պետք է երկինք դարձնենք, երկինքի հարսնարանի՛ն ուղղենք: Հոնկէ՛ պիտի գայ մեր Փրկիչը, մեր Աստուածը:

4.- Վերջին բան մըն ալ կարելի է ըսել «հարսանիք» բառին վերաբերեալ: Քրիստոս երկինքը կամ երկինքի արքայութիւնը կը նմանցնէ հարսանիքի, ցոյց տալու եւ յիշեցնելու համար մեզի, որ երկինքի մէջ չկա՛յ եւ պիտի չըլլայ թախիծ ու ցաւ, տրտմութիւն ու վիշտ: Իւրաքանչիւր տառապող հաւատացեալ՝ հոն հանգիստ պիտի գտնէ՝ յաւիտեական հագիստ: Մեծն Կիրեոյ կը հաստատէ. «Յիսուս պիտի գայ այնպէս ինչպէս մէկը իրախնամէ մը կու գայ: Հարսանիք բառը ցոյց կու տայ որ Աստուած տօնախմբութեան, գուարնութեան եւ ուրախութեան մէջ կը բնակի: Բարձունքներուն մէջ բնա՛ւ չկայ տրտմութիւն: Երբեք չկայ բան մը որ կրնայ տրտմեցնել այն բնութիւնը կամ ազդել այն բնութեան վրայ որ վեր է հովերէն (տեսանելի երկինքներէն)»:

5.- «Որպէսզի երբ տէրը գայ եւ դուրը զարնէ՛ իրենք անմիջապէս բանան դուրը»: Ի՞նչն է այն դուրը որուն մասին կը խօսի բնագիրը: Երկու դռներ կան որ պետք է բացուին: Մէկը միւսով պայմանաւորուած

է: Առաջին դուռը եթէ չբացուի՝ երկրորդ դուռը անկարելի է որ բացուի: Ո՞րն է առաջին դուռը: Առաջին դուռը մարդուն սրտին դուռն է զոր մարդ անհատը պէտք է բանայ Յիսուսի դիմաց իր երկրաւոր կեանքի ընթացքին: Իսկ երկրորդ դուռը երկինքի դուռն է, փրկութեան դուռն է, Աստուծոյ ներկայութեան առաջնորդող դուռն է: Ան որ առաջին դուռը, այլ խօսքով՝ իր սրտին դուռը չբանայ Տէր Յիսուսի դիմաց՝ պիտի չբացուի իր դիմաց երկրորդ դուռը՝ երկինքի դուռը, երբ Տէրը յայտնուի, եւ ստիպուած պիտի ըլլայ աղաղակելու. «Տէ՛ր, Տէ՛ր, դուռը բա՛ց մեզի» (Մտ 25.11):

Դուռը որուն մասին կը խօսի բնագիրը երկրորդ դուռն է, այլ խօսքով՝ փրկութեան դուռը, երկինքի դուռը: Բնագիրին մէջ դուռը զարնողը Տէրը ինքն է, իսկ դուռը բացողները՝ հաւատացեալներն են: Մէկը կրնայ մտածել.՝ Ի՞նչպէս դուռը՝ երկինքի դուռն է, եւ Տէրը ի՞նքն է որ կը բաղիտ այդ դուռը, եւ ո՛չ թէ հաւատացեալները: Հարցումը տեղին է եւ ունի քանի մը պատասխաններ.՝

ա.՝ Երբ կ'ըսենք որ Տէրը ի՛նքն է որ երկինքի դուռը պիտի բաղիտ, ասիկա պարզապէս կը նշանակէ, որ Տէրը ի՛նքն է որ երկինքի դուռը պիտի բանայ հաւատացեալ մարդուն դիմաց: Այստեղ դուռը զարնելը՝ դուռը բանալ կը նշանակէ:

բ.՝ Տէրը ի՛նքն անձամբ կը զարնէ դուռը, ցոյց տալու համար մեզի որ մեր դուռը զարնելը բաւարար չէ, այլ Տէրը մեզի հետ պէտք է զարնէ: Երկինքի դուռին բացուիլը արդիւնքն է մեր միայնակ բաղիտումներուն, այլ արդիւնքն է Տիրոջ մեզի բաղիտակից ըլլալուն, մեզի հետ գործակցելուն:

գ.՝ Չմոռնամք որ դուռին բաղիտումով եւ բացուելով է որ Տիրոջ երկրորդ գալուստը տեղի պիտի ունենայ: Ահա թէ ինչո՛ւ դուռը բաղիտողը Տէրը ի՛նքն պիտի ըլլայ, որովհետեւ Տէրը ի՛նքն պիտի որոշէ թէ ե՛րբ տեղի պիտի ունենայ դուռին բաղիտումն ու բացումը, այլ խօսքով՝ իր երկրորդ գալուստը:

դ.՝ Տիրոջ դուռը զարնելը ցոյց կու տայ մեր փրկութեան համար Յիսուսի միջնորդական հանգամանքը:

ե.՝ Վերջապէս, դուռը զարնելը կը յիշեցնէ մեզի որ եթէ Յիսուս ինք մեզ չառաջնորդէ փրկութեան եւ արքայութեան՝ մենք չենք կրնար փրկուիլ ու արքայութիւն մտնել: Առանց Արքային շնորհին՝ ո՛չ ոք արքայութիւն պիտի մտնէ:

6.՝ «Դուռը զարնէ»: Այս բառերուն մէջ Մեծն Կիւրեղ ուրիշ հետաքրքրական բացատրութիւն մը կը տեսնէ: Ըստ իրեն, Տիրոջ կողմէ դուռը զարնելը՝ մեռելներու յարութեան հրաման արձակել կը նշանակէ:

Կարծէ՛ք գերեզմաններուն դուռն է որ կը զարնուի եւ հոն գտնուող հաւատացեալներուն մարմինները յարութիւն կ'առնեն վերստին միանալու համար իրենց հոգիներուն (հմմտ Յհ 5.28):

7.- «Իրենք անմիջապէս բանան դուռը»: Երբ Քրիստոս դուռը զարնէ, այսինքն՝ նամբայ ելլէ աշխարհ գալու երկրորդ անգամ ըլլալով, հաւատացեալները պատրաստ պէտք է ըլլան բանալու դուռը, այսինքն՝ դիմաւորելու Տէրը: Այստեղ հաւատացեալներուն կողմէ դուռին բացուիլը քանի մը նշմարտութիւններ կը պարզէ.՝

ա.- Դուռը բանալը՝ Տիրոջ երկրորդ գալուստին պատրաստ ըլլալ կը նշանակէ:

բ.- Դուռը բանալը՝ Տիրոջ ընդառաջ երթալ եւ գայն դիմաւորել կը նշանակէ:

գ.- Դուռը բանալը՝ հաւատացեալ մարդուն արժայութեան կարօտով տոչորիլը ցոյց կու տայ:

դ.- Դուռը բանալը՝ Տէր Յիսուսի գրկին ջերմութեան մէջ նետուելու փափաքին պատկերացումն է:

ե.- Դուռը բանալը՝ ցոյց կու տայ հաւատացեալ մարդուն Յիսուսի ձայնին ծանօթ եւ անոր մտերիմ ըլլալը:

Տ.- «Անմիջապէս բանան դուռը»: Դուռին բացուիլը դանդաղօքէն չէ որ տեղի պիտի ունենայ, այլ՝ «անմիջապէս»: Ի՞նչ ցոյց կու տայ «անմիջապէս» բացատրութիւնը: Քանի մը բան.՝

ա.- «Անմիջապէս», կը նշանակէ՝ արագօրէն, խանդավառութեամբ, ուրախութեամբ, սիրով, կարօտով եւ հաւատով:

բ.- «Անմիջապէս» բառը բացորոշ կերպով ցոյց կու տայ, որ իսկական հաւատացեալ մարդը վայրկեան առաջ Տիրոջ երկրորդ գալուստը իրականացած կ'ուզէ տեսնել:

գ.- «Անմիջապէս» բառը կը բացայայտէ Քրիստոսի հետեւորդներուն զօրաւոր փափաքը՝ օր առաջ Տիրոջ միանալու, Տիրոջ հետ ըլլալու, Տիրոջ քաղց ներկայութեան մէջ առնուելու:

դ.- Վերջապէս, «անմիջապէս» բառը կը պարզէ որ նշմարիտ հաւատացեալը մնայուն ակնկալողն ու ակնդէտ սպասողն է Քրիստոսի վերադարձին, ճիշդ ինչպէս իրաւ ու հաւատարիմ ծառան, աշխատասէր ու պարկեշտ ծառան, աչքը նամբան կ'ըլլայ եւ ամբողջ հոգիով ու սրտով կը սպասէ իր տիրոջ վերադարձին:

«Երանի՛ր այն ծառաներուն, որոնց տէրը երբ կու գայ՝ արթուն կը գտնէ զիրենք: Կ'ըսեմ ձեզի, թէ ինք իր մէջքին գօտի պիտի կապէ, պիտի նստեցնէ զիրենք եւ ինք պիտի սպասարկէ անոնց» (Ղկ 12.37): Քանի մը մատնանշումներ.՝

1.-- Յիսուս երանի կու տայ այն հաւատացեալներուն որոնք արթուն վիճակի մէջ կը սպասեն իր երկրորդ գալուստին: Յստակ է որ մարմնաւոր արթնութեան մասին չէ խօսքը, որովհետեւ Աստուած գիտէ որ մենք իբրեւ մարմին ունեցող մարդիկ, պէտք է ունինք բունի եւ հանգիստի:

Արդ, ի՞նչ կը նշանակէ արթուն ըլլալ: Արթուն մարդը՝ հոգեւորապէս արթուն մարդն է, իսկ հոգեւորապէս արթուն մարդը՝ հոգեւոր արթնութիւն ապրած մարդն է: Հոգեւոր արթնութիւնը Սուրբ Հոգին ի՛նքն է որ կու տայ, եւ կու տայ միայն անոնց՝ որոնք կ'ընդունին ու կը հաւատան Յիսուսի:

Սուրբ Հոգիին միջոցաւ արթնութիւն ու նորոգութիւն ապրած մարդուն հոգին անբուն կը հսկէ, սպասելով իր Տիրոջ վերադարձին: Սիրտ մը որուն մէջ Սուրբ Հոգին կը բնակի՝ մի՛շտ արթուն եւ զգաստ կ'ըլլայ: Հոգի մը որուն մէջ Սուրբ Հոգիին օծութիւնը մնայուն ներկայութիւն է՝ բնա՛ւ չի՛ փնանար, չի՛ մրափեր, չի՛ թմրիր, ընդհակառակը, մի՛շտ կ'աղօթէ, մի՛շտ կը սպասէ, մի՛շտ կը հսկէ, մի՛շտ կը յուսա: Այդպիսի սիրտ մը կամ հոգի մը, արթուն պիտի գտնուի երբ անոր Տանտէրը վերադառնայ երկինքէն:

2.-- Ի՞նչ պիտի ընէ Քրիստոս իր գալստեան օրը արթուն եղողներուն համար: Ան «իր մէջքին գօտի պիտի կապէ, պիտի նստեցնէ զիրենք եւ ինք պիտի սպասարկէ անոնց»: Նախ խօսինք «պիտի նստեցնէ զիրենք» բառերուն մասին:

Նստեցնելը հարկաւ մարմնաւոր հասկացողութիւն չունի: Ծանօթ իրողութիւն է որ Աստուածաշունչ մատեանին մէջ նստիլը կամ նստելով ուսուցանելը իշխանութեան պատկերացում կամ նշան է: Օրինակ, Մատթէոսի Աւետարանին մէջ կը կարդանք. «Մովսէսի աթոռը **նստան** Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները: Իրենց ըսածներուն հնազանդեցէք եւ կատարեցէք զանոնք...» (Մտ 23.2-3): Օրէնքի ուսուցիչներուն եւ Փարիսեցիներուն համար աթոռի վրայ նստելով ուսուցանելը՝ իշխանութեան հարց էր: Յաճախ Քրիստոս ինք եւս նստելով կ'ուսուցանէր: Մատթէոս կ'ըսէ. «Յիսուս բազմութիւնը տեսնելով լեռ ելաւ եւ հոն **նստաւ**: Իր աշակերտները հաւաքուեցան իր շուրջ, եւ ինք սկսաւ անոնց սորվեցնել» (Մտ 5.1-2): Աւետարանիչը կը յիշէ որ Յիսուս սերմնացանին առակը պատմած տեսն **նստած** էր (Մտ 13.1), հաւանաբար երբեմն նոյնիսկ բժշկութիւններ **նստած** վիճակի մէջ ըրաւ (Մտ 15.29):

Հետեւաբար, «պիտի նստեցնէ զիրենք» ըսելով, ըսել կ'ուզէ թէ իշխանութիւն պիտի տայ իրենց: Թէ ի՛նչ իշխանութիւն կամ

իշխանութիւններ պիտի տրուի հաւատացեալ մարդուն արքայութեան մէջ՝ ո՛չ ոք գիտէ եւ ո՛չ ոք կրնայ ըսել: Այս ուղղութեամբ որոշ ենթադրութիւններ եղած են՝ որոնց վերաբերեալ սակայն ո՛չ մէկ ակնարկութիւն պիտի ընեմ, որովհետեւ Աստուածաշունչը բացարձակ կերպով լուռ է այս մասին:

3.- «Իշխանութիւն» հասկացողութեան ուրիշ մէկ կարեւոր երեսին պէտք է անդրադառնալ, որ մեզի համար՝ ներկայիս՝ մեր երկրաւոր պայմաններուն մէջ, մեծ կարեւորութիւն կը ներկայացնէ: Քրիստոս իր երկրորդ գալուստէն ետք չէ որ իշխանութիւն կամ իրաւասութիւն պիտի տայ մեզի. ան որոշ իշխանութիւններ եւ իրաւասութիւններ տուաւ մեզի իր առաջին գալուստին իսկ, որ սակայն դժբախտաբար չենք գործածեր զանոնք: Այսպէս օրինակ.-

ա.- Ան «Զինք ընդունողներուն եւ իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու» (Յհ 1.12): Ան որ կ'ընդունի Աստուծոյ Որդին՝ կը դառնայ Աստուծոյ որդի: Ան որ կ'ընդունի խաղաղութեան Իշխանը՝ կը դառնայ խաղաղութիւն անտող Աստուծոյ իշխանագուն գաւակը: Ինչպէս իշխանագուն մարդու մը գաւակը՝ իշխանագուն գաւակ կ'ըլլայ, այնպէս ալ իշխանատէր Քրիստոսը ընդունողն ու իրեն հաւատացողը՝ իշխանատէր մարդ կ'ըլլայ:

Սիրելի՛ հաւատակից, եթէ դուն ընդունած ես Յիսուսը ու հաւատացած ես անոր ամբողջ սրտովդ՝ գիտցի՛ր որ իշխանութեան տէր մարդ ես, գիտցի՛ր որ Աստուծոյ գաւակ ես: Գիտնալը սակայն չի բաւեր: Օգտագործէ՛ քեզի տրուած աստուածորդիութեան իշխանութիւնը: Ապրէ՛ ու գործէ՛ իբրեւ Աստուծոյ գաւակ: Վկայէ՛ ու խօսէ՛ իբրեւ իշխանութիւն ունեցող մարդ: Դուն կոչուած ու կանչուած ես Աստուծոյ որդին ըլլալու իշխանութիւնը ունենալու, ուստի, թոյլ մի՛ տար որ Զարը քեզ իր իշխանութեան ենթարկելով՝ քեզ դարձնէ Զարի գաւակ: Երկինքի որդի ըլլալու կանչուածդ՝ մի՛ դառնար աշխարհի որդի: Անմահութեան կեանքը ապրելու իշխանաւորդ՝ մի՛ ընտրեր մահուան քամբան, դժոխքի քամբան:

բ.- Ան «Իշխանութիւն (տուաւ մեզի) կոխկոտելու օճերն ու կարիքները, ինչպէս նաեւ յաղթահարելու թշնամիին գօրութիւնը» (Ղկ 10.19): Հոս յիշուած օճերն ու կարիքները՝ չար ոգիներն ու դեւերն են, իսկ թշնամին՝ նոյնիման Սատանան՝ Արուսեակը (Ես 14.12): Յիսուս հաւատացեալ մարդուն իշխանութիւն տուած է ոտքի տակ առնելու ու քրտնելու գլուխը չար ոգիներուն ու պիղծ դեւերուն, ինչպէս նաեւ յաղթանակ տանելու Սատանային վրայ:

Եթէ դուն հաւատացեալ ես՝ ունի՛ս այդ իշխանութիւնը: Իսկ եթէ չես՝ ոչինչ եւ ոչ ոք կրնայ քեզ պաշտպանել Սատանային եւ անոր արքանեակներուն յարակումներուն դիմաց: Սեփական ոյժովդ չես կրնար դէմ դնել Սատանային եւ յաղթել անոր: Զայն յաղթելու համար՝ պէտք է ընդունիս Յիսուսը կեանքիդ մէջ:

Յիսուս ի՛նք յաղթեց Սատանային եւ անոր չար ոգիներուն խաչին վրայ իր մահուամբ եւ յարութեամբ: Ուստի, մենք կրնանք յաղթել անոր մի՛այն Քրիստոսի միջոցաւ եւ միայն անո՛ր ընդմէջէն: Երբ Քրիստոսի միանանք՝ այն յաղթանակը գոր Քրիստոս տարաւ՝ պիտի դառնայ մեր սեփականութիւնը:

4.- Վերջին բան մը եւս աւելցնեմ «պիտի նստեցնէ գիրենք» բառերուն կապակցաբար: Յունարէն բնագիրին մէջ «նստեցնէ» բառին համար գործածուած է («ΑΝΑΚΛΙΝΕΙ» անակլինի) բառը որ բառացիօրէն կը նշանակէ՝ «կոթնեցնէ»: Ասիկա գիտնալը կարելոր է, որովհետեւ նոր եւ հետաքրքրական երկու իմաստներ կը բանայ մեր մտքին դիմաց.-

ա.- Քրիստոս հաւատացեալները ի՞նչ բանի «պիտի կոթնեցնէ» երկինքի արքայութեան մէջ: Խորքին մէջ հաւատացեալները բանի մը կոթնեցնելու հարց չկայ: Հոս «պիտի կոթնեցնէ», կը նշանակէ իրենց պիտի տայ բան մը՝ որուն «կոթնին» հաւատացեալները եւ այդ բանը նոյնիման արքայութիւնն է: «Պիտի կոթնեցնէ» նաեւ կը նշանակէ իրենց պիտի շնորհէ անձ մը՝ որուն պիտի «կոթնին», եւ որ նեցուկ պիտի կանգնի հաւատացեալներուն, եւ այդ անձը՝ Քրիստոս ի՛նքն է: Հետեւաբար «պիտի կոթնեցնէ» բառերը կը պարզեն որ հաւատացեալները Աստուծոյ արքայութեան մէջ «պիտի կոթնին» Քրիստոսի, այլ խօսքով, զԱստուած պիտի ունենան իբրեւ նեցուկ, իբրեւ ապաւէն, իբրեւ պաշտպան:

բ.- Կոթնիլը նաեւ հանգիստ ընելու իմաստը կ'ընդգրկէ: Հետեւաբար, հաւատացեալը «կոթնեցնել», կը նշանակէ հանգիստ պարգեւել անոր: Մեծն Կիւրեղ կ'ըսէ. «Հաւատացեալները կոթնեցնել, կը նշանակէ անոնց ցաւերը փարատել, հոգեւոր հանոյժներ շնորհել անոնց եւ առատ պարգեւներով լեցուն սեղան բանալ անոնց դիմաց»:

Իսկ համաձայն Դիոնիսիոս Արիսպագացիի, «կոթնիլը՝ յոգնեցուցիչ կեանքէն՝ հանգիստի եւ մտահոգութիւններէ զերծ կեանքի մը անցնիլ կը նշանակէ...: Քրիստոս կը «կոթնեցնէ» իր հետեւորդները որպէսզի յաւիտենական հանգիստ շնորհէ անոնց, եւ որպէսզի, անհաշիւ օրհնութիւններ բաշխէ անոնց»:

5.- «Իր մէջքին գօտի պիտի կապէ... եւ ինք պիտի սպասարկէ անոնց»: Նախապէս հաւատացեալ մարդը գօտին մէջքին կապած կը

ծառայել Զիսուսի, իսկ հիմա Զիսուս ինձ, գօտին մէջքին կապած կը ծառայէ իր ծառաներուն եւ իրեն ծառայողներուն: Զիսուս բնա՛ւ պիտի չմոռնայ մեր մատուցած ծառայութիւնները, եւ անպայման անոնց փոխարէն պիտի հատուցանէ մեզի:

Մեծն Կիւրեղ կ'ըսէ. «Ի՞նչ զարմանք, Փեսան գօտին մէջքին կապած կը պատրաստուի պատուելու իր Հարսը՝ եկեղեցին, եւ ծառայելու ու սպասարկելու անոր անձամբ: Ան պիտի ծառայէ անոնց՝ որոնք իրենց երկրաւոր կեանքի ընթացքին ծառայեցին իրենց նմաններուն՝ իր անուան համար»:

6.- «Ինձ պիտի սպասարկէ անոնց»: Ի՞նչ կը հասկնամք երբ կ'ըսենք որ Քրիստոս պիտի ծառայէ կամ սպասարկէ իր հաւատացեալներուն: Արքայութեան մէջ արդեօք Քրիստոս պիտի դադրի՞ Տէր ըլլալէ եւ մենք պիտի դադրի՞նք իր ծառաները ըլլալէ: Հարցումը ուրիշ ձեւով դնենք. արդեօք Քրիստոս ծառա՞յ պիտի ըլլայ եւ մենք Տէ՞ր: Անշուշտ ոչ: Քրիստոս արքայութեան մէջ պիտի չըլլայ մեր ծառան, եւ մենք պիտի չըլլանք իր տէրը:

Եթէ մենք պիտի մնանք իր որդիները, կամ ըսենք՝ իր ծառաները եւ ինձ՝ մեր Տէրը, այդ պարագային, ի՞նչպէս պէտք է հասկնալ իր ծառայելը կամ սպասարկելը մեզի: Ծառայութիւն մատուցանելը ուրիշ բան է, ծառայ ըլլալը՝ ուրիշ բան: Ամէն մարդ որ մեզի ծառայութիւն կը մատուցանէ, պայման չէ որ մեր ծառան ըլլայ եւ մենք իր տէրը: Քրիստոս ծառայութիւն պիտի մատուցանէ, կամ պիտի սպասարկէ մեզի, բայց բնա՛ւ մեր ծառան պիտի չըլլայ:

Ի՞նչ պիտի ըլլայ այն ծառայութիւնը զոր Քրիստոս պիտի մատուցանէ արքայութեան գաւակներուն: Քրիստոս աշխարհէն եկած տառապած հոգիներուն յաւիտեանական հանգիստ պիտի մատուցանէ: Ան կոտրած սիրտերուն կատարեալ բժշկութիւն պիտի պարգեւէ, սգաւոր հոգիներուն կատարեալ մխիթարութիւն պիտի շնորհէ:

Քրիստոս սպասարկո՞ղ կը կոչուի, որովհետեւ երկինքի ունեւորներուն ներքին ծառայութեան մատակարարը պիտի հանդիսանայ:

Քրիստոս սպասարկո՞ղ կը կոչուի, որովհետեւ Սուրբ Հոգիին լեցունութիւնը շնորհողը պիտի ըլլայ:

Ան սպասարկո՞ղ կը կոչուի, որովհետեւ ի՞նք պիտի ըլլայ մեզ կշտացնողը, գոհացնողը, լիացնողը, հոգացողը: Ինչպէս սպասարկող անձին պարտականութիւնն է, սեղանին շուրջ բոլորուած մարդոց լիացնելն ու գոհացնելը, այնպէս ալ Քրիստոս ի՞նք պիտի ըլլայ լիացնողը երկինքի արքայութեան սեղանին շուրջ բոլորուած իր հետեւորդներուն հոգիները:

«Երանելի են այն ծառաները, որոնց տէրը գիրենք արթուն կը գտնէ, երբ կէս գիշերին կամ աւելի ուշ տուն դառնայ» (Ղկ 12.38): Քանի մը նշումներ.–

1.– Քրիստոս երանի կու տայ այն հաւատացեալներուն որոնք իրենց հոգեւոր արթնութիւնը կը պահեն մինչեւ իր երկրորդ գալուստը: Նախորդ համարին մասին խօսած ատեն բացատրեցինք թէ ի՞նչ կը նշանակէ «արթուն» ըլլալ: Ընդհանրապէս Նոր Կտակարանեան հասկացողութեամբ եւ յատկապէս այս ու նախորդ համարին մէջ, «արթուն» բացատրութեամբ կը հասկնանք մէկը՝ որ Սուրբ Հոգիին միջոցաւ ապրած է հոգեւոր նորոգութիւն, եւ ուստի՝ արթնութիւն:

Արթուն մարդը՝ Քրիստոսով մեղքի ստրկութենէն ազատագրուած մարդն է: Իր մեղքերէն չազատագրուած մարդը՝ Սատանային կողմէ թմրեցուած, եւ ուստի՝ պտոկած մարդ է: Արթուն մարդը՝ Տէր Յիսուսի անունով մեղքի տիղմէն դուրս ելած ու ոտքի՝ կանգնած մարդն է:

Մարդիկ որքան ալ դրամ ունենան՝ պտոկած կը սեպուին, եթէ երբեք Քրիստոսը չունին: Մարդիկ որքան ալ ուսում ունենան՝ տգիտութեան ովկիանոսին մէջ ֆնացած կը նկատուին, եթէ երբեք Սուրբ Հոգիին միջոցաւ Աստուծոյ գիտութեան չեն հասած:

Արթուն մարդը՝ Սուրբ Հոգիին ձայնը լսող մարդն է: Արթուն մարդը՝ Սատանային լարած ծուղակները տեսնող եւ անոնցմէ հեռու փախչող մարդն է: Արթուն մարդը՝ Աստուծոյ կամքը գիտցող ու կատարող մարդն է:

Ահաւասիկ այսպիսի արթուն մարդոց է որ Յիսուս երանի կու տայ եւ զանոնք երանելի կը սեպէ: Անոնք երանելի են, որովհետեւ երանելի Աստուծոյ փառքին ժառանգորդները պիտի ըլլան Տիրոջ երկրորդ գալուստին: Երանելի են, որովհետեւ պիտի ըլլան ժառանգորդները յաւիտեանականութեան մը որ լեցուն պիտի ըլլայ երանութեամբ, երջանկութեամբ, ինդութեամբ, բարութեամբ, սիրով եւ սրբութեամբ:

Երանելի են, մանաւանդ անոր համար որ Աստուծոյ հետ եւ անոր կողքին պիտի ըլլան ամբողջ յաւիտեանականութեան ընթացքին: Երանելի բան չէ՞ Քրիստոսի հետ ապրիլ եւ անոր ներկայութեամբ համակուիլ յաւերժապէս: Երանելի բան չէ՞ Սուրբ Հոգիով լեցուն ըլլալ եւ անդադար ու անխոնջ կերպով փառաբանական օրհներգութիւններ աղբերել մեր սրտի ու հոգիի ակունքներէն: Երանելի բան չէ՞ մեր երկնաւոր Հօր տաճակ շունչով արբենալ եւ անոր ֆաղցր ներկայութեամբ պարուրուիլ:

Որո՞նք են այս երանելիները: Անոնք այնպիսի մարդիկ են «որոնց տէրը գիրենք արթուն կը գտնէ, երբ կէս գիշերին կամ աւելի ուշ տուն դառնայ»:

2.- «Կէս գիշերին կամ աւելի ուշ», բառացիօրէն՝ «գիշերուան երկրորդ պահուն... կամ երրորդ պահուն»: «Գիշերուան երկրորդ պահ»ը՝ ժամը 10-2ը կը նկատուէր, իսկ «գիշերուան երրորդ պահ»ը՝ ժամը 2-6²:

«Կէս գիշեր» եւ «աւելի ուշ» բառերը մեր ուշադրութեան կը յանձնեն երեք բան.-

ա.- «Կէս գիշեր» եւ «աւելի ուշ» բառերը ցոյց կու տան, որ Քրիստոսի երկրորդ գալուստը կրնայ ուշանալ, թէպէտ անոր պատահումը անխուսափելի է: Տասը կոյսերուն առակն ալ ցոյց կու տայ որ Տիրոջ գալուստը կրնայ ուշանալ: Այս իրողութիւնը յստակօրէն կը պարզուի Մտ 25.5-ին մէջ որ կ'ըսէ. «Երբ փեսան ուշացաւ գալու, բոլորն ալ թմրեցան ու քնացան»: Հարկաւ «ուշանալ» բառը յարաբերական իմաստ ունի: Մեզի համար Քրիստոսի երկրորդ գալուստը կրնայ ուշացած նկատուիլ, սակայն Աստուծոյ համար երբեք ալ այդպէս չէ:

Հակառակ աշխարհի չարագործութեան, Քրիստոսի երկրորդ գալուստին տեղի չունենալը՝ ուշացումի արդիւնք չէ, այլ՝ համբերութեան արտայայտութիւն: Պետրոս առաքեալ խօսելով Տիրոջ երկրորդ գալուստին մասին՝ կը հաստատէ որ «Տէրը չ'ուշացներ իր խոստումին կատարումը, այնպէս՝ ինչպէս ոմանք կը հասկնան ուշացումը: Տէրը պարզապէս համբերատարութիւն ցոյց կու տայ ձեզի հանդէպ, որովհետեւ չ'ուզեր որ ոեւէ մէկը կորսուի, այլ՝ կ'ուզէ որ բոլորն ալ ապաշխարելու առիթ ունենան» (Բ.Պտ 3.9):

բ.- «Կէս գիշեր» եւ «աւելի ուշ» բառերը միաժամանակ կը բացայայտեն որ Քրիստոսի երկրորդ գալուստը մեր չակնկալած եւ չսպասած պահուն տեղի պիտի ունենայ: Ընդհանրապէս մարդիկ կէս գիշերէն ետք կամ անկէ աւելի ուշ ժամանակին, հիւրի մը գալուստին չեն սպասեր: Հետեւաբար, «կէս գիշերին» բացատրութիւնը որոշապէս

² Եբրայեցիները գիշերն ու ցերեկը հաշուելու յատուկ ձեւ մը ունէին: Զարեհ Արք. Ազնաւորեան կ'ըսէ. «Եբրայեցիներու **«Գիշեր»**ը կը սկսէր երեկոյեան ժամը 6-ին եւ կ'երկարէր մինչեւ առաւօտեան ժամը 6-ը, իսկ **«Ցերեկ»**ը կը սկսէր առաւօտեան ժամը 6-ին եւ կ'երկարէր մինչեւ երեկոյեան ժամը 6: Բայց ցերեկուան ու գիշերուան ժամերը տարբեր ձեւերով կը հաշուէին: **Ցերեկի** ժամերը կը հաշուէին առանձին-առանձին. ուստի **«առաջին ժամ»**ը կ'ըլլար առաւօտեան ժամը 7, **«երրորդ ժամ»**ը՝ առաւօտեան ժամը 9-ը, **«վեցերորդ ժամ»**ը՝ կէսօրը, **«իններորդ ժամ»**ը՝ կէսօրէ ետք ժամը 3-ը, եւլն: Միւս կողմէ, **Գիշերը** բաժնուած էր երեք **«պահ»**երու.- Առաջին պահը՝ երեկոյեան ժամը 6-10, երկրորդ պահը՝ ժամը 10-2, իսկ երրորդ պահը՝ գիշերուան ժամը 2-6: Նոր Կտակարանին մէջ ունինք նաեւ գիշերը հաշուելու Հռոմէական կերպը, որ գիշերը կը բաժնէր չորս պահերու.- **«Իրիկուն»** (երեկոյեան 6-9), **«Կէս գիշեր»** (գիշերուան 9-12), **«Հաւախօս»** (գիշերուան 12-3), եւ **«Առաւօտ»** (առտուան 3-6) (տե՛ս Մր 13.35): (Զարեհ Արք. Ազնաւորեան, **«Աստուածաշունչին վերաբերեալ ուսումնասիրութիւններ»**, էջ 183):

կը պարզէ որ Տիրոջ երկրորդ գալուստը անյայտ մէկ պահուն եւ չսպասուած մէկ ժամուն պիտի ըլլայ: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Ինչպէս գողը չսպասուած ժամուն կու գայ, այնպէս ալ Տիրոջ Օրը չսպասուած ժամուն պիտի գայ: Երբ որ մարդիկ ըսեն՝ «Հանգիստ ենք եւ ապահով», միշտ այն ատեն՝ յանկարծակի վրայ պիտի հասնի կործանումը, ինչպէս երկունքը յանկարծ կը բռնէ յի կինը, եւ ազատում պիտի չունենան» (Ա.ԹԿ 5.2-3):

գ.- Ի վերջոյ, «կէս գիշեր» եւ «աւելի ուշ» բառերը կոչ մըն են քրիստոնեայ հաւատացեալին արթուն հսկելու իր անձին փրկութեան համար: Տիրոջ երկրորդ գալուստը կրնայ «ուշանայ», կրնայ մեր չակնկալած ժամուն տեղի ունենալ, բայց իսկական հաւատացեալին համար, կարեւորը Տիրոջ գալստեան ժամն ու ժամանակը գիտնալը չէ, այլ՝ այդ գալուստին պատրաստուիլն է: Ինչպէս հարսը ինքզինք կը պատրաստէ փեսային համար, միշտ այնպէս ալ, Քրիստոսի հարսը՝ եկեղեցին, ինքզինք պէտք է պատրաստէ իր Տիրոջ գալստեան համար:

3.- «Երբ կէս գիշերին կամ աւելի ուշ տուն դառնայ»: Այս տողին մէջ բառ մը եւս կայ որուն պէտք է անդրադառնալ: Նոր թարգմանութեան մէջ գործածուած «տուն» բառը բնագիրին մէջ չկայ, թէպէտ յաջորդ՝ 39-րդ համարին մէջ մենք կը հանդիպինք «տուն» (ΟΙΚΟΝ) բառին: «Տուն» հասկացողութեան անդրադառնալը կարեւոր է, որովհետեւ ատիկա կը յիշեցնէ մեզի թէ Աստուծոյ վերջնական եւ վախճանական ծրագիրը՝ ամբողջ աշխարհը իր տան վերածելն է, այլ խօսքով, ամբողջ աշխարհը կոչուած է Աստուծոյ տունը, Աստուծոյ ընտանիքը ըլլալու: Հետեւաբար, հոս յիշուած «տուն»ը մարդուն սեփական տունին չ'ակնարկեր, այլ՝ աշխարհին:

Տուն մը տուն կը նկատուի երբ իր բնակիչները կ'ունենայ, եւ աշխարհ որպէս Աստուծոյ տունը՝ ունի իր բնակիչները որ մարդիկը իրենք են: Աստուած չստեղծեց աշխարհը որպէսզի գանհկա անբնակ թողու կամ որպէսզի օր մը գանհկա վերջնականօրէն կործանէ: Աստուծոյ ծրագիրին մաս կը կազմէ որ այս աշխարհը Տիրոջ երկրորդ գալուստէն ետք դառնայ բնակարան արդար մարդկութեան: Ասիկա ենթադրութիւն մը չէ, այլ՝ Աստուծոյ խոստումը. «Այսպէս կ'ըսէ երկինքը ստեղծող Տէրը, այն Աստուածը, որ երկիրը կազմեց, գանհկա շինեց եւ հաստատեց, գանհկա պարապ տեղ չստեղծեց, այլ բնակութեան համար կազմեց» (Ես 45.18): Այս հաստատումը յստակօրէն կը պարզէ որ Աստուծոյ ծրագիրն է աշխարհը տալ իր գաւակներուն իբրեւ յաւիտենական ժառանգութիւն:

Հարկաւ միայն այս աշխարհը չէ որ բնակարան պիտի դառնայ արդար մարդկութեան, այլեւ՝ երկինքը: Աշխարհը եւ երկինքը իրենց այս ներկայ վիճակով չէ որ պիտի ժառանգուին, այլ անոնք ամբողջութեամբ պիտի նորոգուին, այնքան՝ որ անոնք պիտի դառնան «նոր երկինք եւ նոր երկիր»: Աստուած խոստացաւ նոր՝ երկինք մը եւ նոր՝ երկիր մը ստեղծել (Բ.Պտ 3.10, 13): Այս խոստումին մասին կը կարդանք Հին Կտակարանին մէջ նաեւ. «Նոր երկինք ու նոր երկիր պիտի ստեղծեմ ու առաջուանները պիտի չյիշուին ու մարդուս միտքը պիտի չգան» (Ես 65.17): Եթէ երկինքի հետ միասին, աշխարհը նաեւ իբրեւ բնակութեան տեղ պիտի չտրուէր մարդուն, այդ պարագային ինչո՞ւ Աստուած նոր երկիր մը ստեղծելու մասին կը խօսի³:

«Բայց այս ալ գիտցէք, որ եթէ տանտէրը գիտնար թէ գողը ո՞ր ժամուն պիտի գայ, արթուն կը մնար եւ թոյլ չէր տար որ գողը պատը քանդելով տունը մտնէ» (Ղկ 12.39): Քանի մը նշումներ.–

1.– Կը տեսնենք որ մարդը կը կոչուի տանտէր: Վերել ըսինք որ «տուն»ը մարդուն սեփական տունը չէ, այլ՝ աշխարհը իր ընդհանրութեանը մէջ: Այս իմաստով, մարդը կոչուած է ըլլալու տանտէրը աշխարհին: Ի՞նչ կը նշանակէ ըլլալ տանտէրը աշխարհին: Աշխարհին տանտէրը ըլլալ, կը նշանակէ թոյլ չտալ որ աշխարհն ու աշխարհայինը տիրեն մեր վրայ, ընդհակառակը, մենք տիրենք ու տիրապետենք աշխարհին ու աշխարհայինին վրայ: Աշխարհին չյաղթող մարդը՝ չի կրնար տիրել աշխարհին վրայ: Քրիստոս տիրեց՝ որովհետեւ յաղթեց աշխարհին (Յհ 16.33): Մենք եթէ միանանք Քրիստոսի՝ մենք եւս կրնանք յաղթել աշխարհին: Առանց Քրիստոսի՝ չկա՛յ յաղթանակ:

Մարդը կոչուած է դառնալու տանտէրը աշխարհին: Սակայն առանց Քրիստոսի մարդը չի կրնար դառնալ տանտէրը աշխարհին: Ո՞վ է տանտէրը: Տանտէրը ղեկավարող մարդն է, որոշում առնող մարդն է, իր կամքը կատարող մարդն է, իր ազատութիւնը ունեցող մարդն է, իրաւասութիւն եւ իշխանութիւն ունեցող մարդն է, իրաւունք եւ ըսելիք ունեցող մարդն է: Ահա այսպիսին պէտք է ըլլայ քրիստոնեայ մարդը այս աշխարհին մէջ:

Ճշմարիտ քրիստոնեայ մարդը ի՛նքն է որ պէտք է ղեկավարէ աշխարհը եւ ո՛չ թէ աշխարհը գինք ղեկավարէ: Քրիստոնեայ մարդը ի՛նքն է որ պէտք է գծէ իր կեանքի ուղին Աստուծոյ առաջնորդութեամբ եւ ո՛չ թէ աշխարհը ինք գծէ իր ուղին: Քրիստոնեայ մարդը իբրեւ

³ Թէ ո՞ւր պիտի ըլլայ Աստուծոյ թագաւորութիւնը՝ երկինքի՞ մէջ, երկրի՞ վրայ, թէ՛ ամէն տեղ, այս մասին յաւելեալ մանրամասնութեան համար, տե՛ս մեր առաջին հատորը հարցում-պատասխանի, 60-րդ հարցում:

տանտերը աշխարհին, ի՛նքն է որ պետք է իշխանութիւն բանեցնէ, իրաւասութիւն ու իրաւունք ունենայ աշխարհին վրայ եւ ո՛չ թէ աշխարհը իր վրայ: Քրիստոնեայ մարդը Քրիստոսի գորութիւնը ունեցող մարդն է, իսկ Քրիստոսի գորութիւնը ունեցող մարդը՝ կարող պետք է ըլլայ Քրիստոսապարգեւ գորութեամբ աշխարհը իրեն ենթակայ դարձնելու:

2.- «Գողը ո՛ր ժամուն պիտի գայ»: Եթէ երբեք Քրիստոս իր երկրորդ գալուստին մասին կը խօսի՝ ինչո՞ւ իր գալուստը գողի մը գալուստին կը նմանցնէ (հմմտ Ա.Թս 5.2): Քրիստոս կ'ուզէ հիմնական քանի մը բաներ սորվեցնել մեզի: 1) Գողը չսպասուած ժամուն եկող մարդն է: Ինչպէս գողը չսպասուած ու չակնկալուած ժամուն կու գայ, այնպէս ալ Քրիստոս պիտի գայ մարդոց չակնկալած մէկ պահուն կամ ժամուն: 2) Գողը կու գայ երբ անպաշտպան նկատէ այն տունը կամ այն անձը որուն վրայ կը ծրագրէ յարձակիլ: Հոս Յիսուս կ'ուզէ սորվեցնել եւ յիշեցնել մեզի, որ աշխարհի մարդը ինքզինք անպաշտպան պիտի զգայ իր երկրորդ գալուստեան ժամանակ: Ան միաժամանակ անուղղակիօրէն կոչ կ'ուղղէ իր հետեւորդներուն ըլլալու պատրաստ եւ պաշտպանուած վիճակի մէջ մնալուն կերպով: 3) Գողը կու գայ առնելու մարդուն ձեռքէն այն ինչ որ մարդուն սեփականութիւնն է: Ինչպէս գողը կը յափշտակէ այն ինչ որ մարդուն սեփականութիւնն է, այնպէս ալ Քրիստոս պիտի գայ եւ պիտի յափշտակէ ու իլէ աշխարհի մարդուն ձեռքէն այն ինչ որ կը կարծէր թէ իրը պիտի մնայ յաւիտեանապէս: Աշխարհի մարդը ինքզինք ախարհին տէրը կը կարծէ, բայց երբ գայ աշխարհի իսկական Տէրը, մէկ ու միակ Տէրը, պիտի իլէ իր ձեռքէն ամէն ինչ, ամէն բան, եւ զինք կատարելապէս մերկ ու անպատսպար պիտի թողու:

3.- «Արթուն կը մնար եւ թոյլ չէր տար որ գողը պատը քանդելով տունը մտնէ»: Ասկէ առաջ երկու առիթներով բացատրեցինք թէ արթուն մարդը հոգեւոր արթնութիւն ու նորոգութիւն ապրած մարդն է:

Իսկ «պատը քանդելով տունը» մտնելը՝ անարթունը, այսինքն՝ անհաւատը կործանել կը նշանակէ, ինչպէս նաեւ անոր ձեռքէն իլել ամէն ինչ որ Աստուծոյ պարգեւն էր իրեն: Աշխարհ ամբողջ Աստուծոյ պարգեւն է մարդուն տրուած, եւ տրուած է իբրեւ տուն մը: Աշխարհը սակայն միշտ պիտի չմնայ անհաւատ մարդուն ձեռքը: Ժամանակներու աւարտին Աստուած պիտի իլէ զանիկա անոր ձեռքէն եւ պիտի տայ իր հաւատարիմ հետեւորդներուն:

Թէպէտ Յունարէն բնագիրին մէջ «պատ» բառը չկայ, բայց կ'արժէ ըսել, թէ պատ մը գոյութիւն ունի Աստուծոյ եւ բոլոր այն մարդոց

միջեւ՝ որոնք իրենց մեղքերէն ձերբազատելով դարձի չեն եկած: Մեղքը պատ մըն է որ կը կառուցուի մարդուն կողմէ՝ իր եւ իր Արարիչին միջեւ: Այդ պատը միայն Տէր Յիսուսի արիւնով կրնայ փուլ գալ:

Մեղաւոր ու ամբարիշտ մարդուն կողմէ կառուցուած մեղքի պատը առ յաւէտ ցցուած պիտի չմնայ Աստուծոյ սուրբ աչքերուն դիմաց: Աստուած իր Որդիին հրաշափառ գալստեան օրը, պիտի կործանէ այդ պատը եւ այդ պատը շինողները:

«Ուրեմն, դուք ալ պատրաստ եղէք, որովհետեւ Մարդու Որդին ձեր չակնկալած ժամուն կրնայ գալ» (Ղկ 12.40): Քանի մը նշումներ .-

1.- Ուշագրաւ է որ յաճախ երբ Քրիստոսի երկրորդ գալուստին մասին կը խօսուի՝ անոր կ'ընկերանայ պատրաստ եւ արթուն ըլլալու կոչ մը, քանի որ այդ գալուստը անակնկալ կերպով տեղի պիտի ունենայ:

Քրիստոսի երկրորդ գալուստը բոլոր մարդոց համար անխտիր անակնկալ մը պիտի ըլլայ: Այդ անակնկալը ոմանց համար յաւիտենական կործանում պիտի բերէ, իսկ ուրիշներուն համար՝ յաւիտենական ազատագրութիւն եւ փրկութիւն:

2.- «Պատրաստ եղէք»: Անպատրաստ մարդիկ արժայութիւնը պիտի չժառանգեն: Արժայութիւնը պատրաստուած է պատրա՛ստ եղող մարդոց համար: Մտ 25.10-ին մէջ կը կարդանք. «Փեսան եկաւ եւ պատրաստ եղողները փեսային հետ հարսանիքի մտան, եւ դուռը գոցուեցաւ»:

Իսկ թէ ի՛նչպէս պէտք է պատրաստուիլ Տիրոջ գալուստին, մենք ասկէ առաջ բացատրեցինք թէ մեզ պատրաստողը Սուրբ Հոգին ինքն է: Անգամ մը որ Սուրբ Հոգիին միջոցաւ Քրիստոսի յանձնուինք եւ մեղքերու քաւութիւն գտնենք, Սուրբ Հոգին կը սկսի գործել ու ներգործել մեր ներսիդին՝ մեզ վերածելու համար սուրբ տաղաւարի մը՝ ամենասուրբ Երրորդութեան բնակութեան համար յարդարուած:

Ինքնապատրաստութեան մեր աշխատանքին մէջ Սուրբ Հոգին ունի իր բաժինը եւ մենք՝ մեր բաժինը: Սուրբ Հոգին մեզ չի պատրաստեր եթէ մենք չուզենք պատրաստուիլ: Չի տաշեր եթէ մենք ուզենք անտաշ մնալ: Չի սրբացներ եթէ մենք սրբանալու փափաք չունինք: Սուրբ Հոգին կը գործէ՝ Աստուծոյ փառքին համար գործող մարդոց սրտին մէջ:

Յարատեւ աղօթական կեանք ապրիլը շատ կարեւոր է: Սուրբ Հոգին գորեղապէս կը գործէ մնայուն կերպով աղօթող մարդոց կեանքին մէջ: Չաղօթող մարդը չի պատրաստուիր Սուրբ Հոգիին կողմէ: Աղօթքը հրաւեր մըն է մեր կողմէ Սուրբ Հոգիին ուղղուած՝ գալու եւ մեզ պատրաստելու Տիրոջ երկրորդ գալուստին եւ այդ գալուստով բացուող յաւիտենական արժայավայել կեանքին:

3.- «Մարդու Որդին ձեր չակնկալած ժամուն կրնայ գալ»: Տարբեր առակներ բացատրած ատեն, ցոյց տուինք թէ ինչպէս Յիսուս ամէն անգամ երբ իր երկրորդ գալուստին մասին պիտի խօսէր, ինքզինք կոչեց «Մարդու Որդին», եւ ըսինք, որ հիմնական նպատակը մեզի ցոյց տալն է թէ իր յայտնութիւնը մարդկօրէն, այլ խօսքով՝ երեւելի՝ ձեռով տեղի պիտի ունենայ: Այսօր այս մասին:

4.- «Ձեր չակնկալած ժամուն կրնայ գալ»: Արդէն բացատրեցինք թէ Տիրոջ գալուստը անակնկալ կերպով տեղի պիտի ունենայ: Հիմա հարցին մօտենանք ուրիշ անկիւնէ մը: Շատ մը ադանդաւորներու կողմէ, յատկապէս Եհովայի Վկաներուն կողմէ, փորձեր եղած են գիտնալու Քրիստոսի երկրորդ գալստեան ժամանակը: Յիսուս սակայն կը շեշտէ որ կարելորդ իր գալստեան ժամանակը գիտնալը չէ, այլ իր գալուստին պատրաստ ըլլալն է: Իր գալուստին ժամանակը գիտցողը չէ որ պիտի փրկուի, այլ՝ իր գալուստին պատրաստուողը:

Եթէ իր գալստեան ժամանակը գիտնալը մեզ փրկութեան պիտի առաջնորդէր՝ ես կը հաւատամ որ Քրիստոս անպայման իր գալստեան ժամանակը պիտի յայտնէր մեզի: Նման յայտնութիւն մը սակայն մարդոց ի նպաստ պիտի չըլլար: Եթէ մենք գիտնայինք որ Տիրոջ երկրորդ գալուստը երեք տարի ետք տեղի պիտի ունենայ, մեր բոլոր գործերը կիսատ ձգելով աղօթական կեանքի պիտի չնուիրուէինք. վստահաբար: Բայց Աստուած չ'ուզեր որ մենք մեր գործերը կիսատ թողունք, այլ կ'ուզէ որ հաւատարմութեամբ կատարենք մեր կեանքին մաս կազմող եւ մեր կեանքը հարստացնող գործերը: Կեանքը կրնայ իր բնականոն ընթացքը կորսնցնել եթէ մարդիկ գիտնան Քրիստոսի գալստեան ժամանակը: Աստուած սակայն կ'ուզէ որ ամէն ինչ իր բնական բայց շիտակ ընթացքին մէջ մնայ մինչեւ իր Որդիին գալուստը, ահա թէ ինչո՞ւ չ'յայտնեց իր Որդիին գալստեան ժամկէտը:

Սիրելի՛ ընթերցողներ, հարց տուէ՛ք դուք ձեզի՛ թէ ո՞ր խումբին մաս կը կազմէք: Հոգեւորապէս արթուն եւ պատրաստ մարդոց խումբին, թէ՛ հոգեւորապէս ֆնացած եւ անպատրաստ մարդոց խումբին:

Մշտարթուն Աստուծոյ մը գաւակները՝ հոգեպէս մշտարթուն պէտք է ըլլան: Սատանան միշտ արթուն է եւ միշտ արթուն կը մնայ՝ որպէսզի միշտ ֆնացած վիճակի մէջ պահէ մարդիկը: Մենք չենք կրնար պայքարիլ մշտարթուն Սատանայի մը դէմ եթէ երբեք հոգեպէս մշտարթուն չենք: Հետեւաբար, յարատեւ աղօթքով մշտարթուն վիճակի մէջ պահենք մեր հոգիները եւ պատրաստ ըլլանք Մարդու Որդիին գալուստին, որովհետեւ ան մեր «չակնկալած ժամուն կրնայ գալ»:

ՀԱՒԱՏԱՐԻՄ ԵՒ ԱՆՀԱՒԱՏԱՐԻՄ ԾԱՌԱՆ

«Ո՞վ է հաւատարիմ եւ իմաստուն տնտեսը: Անիկա է, որ տէրը իր ծառաններուն վրայ վերակացու կը կարգէ, որպէսզի նիշդ ատենին անոնց կերակուրի բաժինը տայ: Երանի՛ այն ծառային, որուն տէրը երբ կու գայ, գին՛ կը գտնէ իր պաշտօնը լաւապէս կատարած: Իրապէս կ'ըսեմ ձեզի, որ տէրը այդ ծառան իր բոլոր ստացուածքներուն վրայ վերակացու պիտի կարգէ: Սակայն եթէ ծառան ինքնիրեն ըսէ՝ «Տէրս կ'ուշանայ գալու», եւ սկսի միւս ծառաներն ու սպասուհիները ձեծել, ուտէ, խմէ, եւ գինովնայ, յանկարծ իր չակնկալած ատենին եւ չսպասած ժամուն տէրը պիտի գայ եւ գայն խստութեամբ պիտի պատժէ եւ անհաւատներուն կարգին դասէ» (Ղկ 12.42-46):

Այս առակը խորքին մէջ շարունակութիւնն է նախորդ առակին, որովհետեւ երբ Յիսուս իր խօսքը եզրափակեց կոչ ուղղելով իր ունկնդիրներուն արթուն եւ պատրաստ ըլլալու, որովհետեւ Մարդու Որդին անակնկալ ժամու մը պիտի գայ, Պետրոս առաքեալ անմիջապէս հարց տուաւ անոր ըսելով. «Տէ՛ր, այս օրինակը մեզի՞ համար ըսիր, թէ բոլորին» (Ղկ 12.41): Եւ Քրիստոս առիթէն օգտուելով պատմեց տուեալ առակը:

«Ո՞վ է հաւատարիմ եւ իմաստուն տնտեսը: Անիկա է, որ տէրը իր ծառաններուն վրայ վերակացու կը կարգէ, որպէսզի նիշդ ատենին անոնց կերակուրի բաժինը տայ» (Ղկ 12.42): Քանի մը մատնանշումներ. –

1.– Այստեղ «տնտես» ըսելով, որո՞ւ կ'ակնարկէ Քրիստոս: Երեք բացատրութիւններ կան. –

ա.– Կարգ մը մեկնիչներ հոս յիշուած «տնտես»ը ակնարկութիւն կը նկատեն իւրաքանչիւր քրիստոնեայ հաւատացեալի, որ կոչումը ունի նիշդ ատենին անհրաժեշտ եղած հոգեւոր կերակուրը տալու իր նմաններուն, իր շուրջիներուն: Իսկ թէ ի՞նչ է տրուելիք հոգեւոր կերակուրը. ատիկա նոյնինքն Աստուծոյ կենդանի խօսքն է: Քրիստոսի հաւատքը ընդգրկած ոեւէ անձ՝ կոչումը ունի Աստուծոյ խօսքին միջոցաւ ուրիշներն ալ Քրիստոսի հաւատքին բերելու:

բ.– Ուրիշ մեկնիչներ, ինչպէս օրինակ Յովհան Ոսկեբերան, հոս յիշուած «տնտես»ը ակնարկութիւն կը նկատեն եկեղեցւոյ պաշտօնեային (եկեղեցականին), որ դարձեալ, պարտականութիւնը ունի Աստուծոյ

խօսքով սնուցանելու, անեցնելու եւ կշտացնելու եկեղեցի յաճախող հաւատացեալներուն հոգիները:

Գ.- Հոս յիշուած «տնտես»ը նաեւ կրնայ ակնարկութիւն ըլլալ իշխանութեան գլուխը եղող անձերուն, որովհետեւ անիկա իր տիրոջ կողմէ ծառաներուն վրայ վերակացու կը կարգուի: Վերակացութեան պաշտօն յանձնելը արդէն իշխանութիւն եւ իրաւասութիւն տալ կը նշանակէ: Այս կէտին մասին հետագային քիչ մը աւելի ընդարձակօրէն պիտի խօսինք:

2.- Ով ալ ըլլայ «տնտես»ը, պէտք է անիկա ըլլայ «հաւատարիմ» (πιστος) եւ «իմաստուն» (φρονιμος) տնտես մը, ինչպէս բնագիրն իսկ ցոյց կու տայ: Քրիստոս այս բառերը՝ «հաւատարիմ» եւ «իմաստուն», պատահականօրէն չ'ընտրեք: Քրիստոսի խօսքերուն եւ գործերուն մէջ բնա՛ւ չէ եղած եւ չկա՛յ պատահականութիւն: Քրիստոս գիտէ որ տնտեսի մը ամենէն կարեւոր յատկանիշները հաւատարմութիւնն ու իմաստութիւնն են:

Արդ, ինչո՞ւ տնտեսը պէտք է ըլլայ «հաւատարիմ» եւ «իմաստուն»: Մեր Տէրը շատ լաւ գիտէ որ շատեր կրնան սկսիլ հաւատքի կեանքի մը եւ ապա ետ դարձ կատարել կամ նահանջ արձանագրել, ինչպէս օրինակ ըրին Դեմաս (Բ.Տմ 4.10), Յուդա Իսկարիոտացի եւ ուրիշներ: Յիսուս հաւատարմութիւն կը պահանջէ, որովհետեւ հաւատարիմ մարդը գործ մը ստանցնող եւ զայն իր աւարտին հասցնող մարդն է:

Աւետարանչութեան ցամբուն վրայ անպայմանօրէն դժուարութիւններու պիտի բաղխինք եւ արգելքներու պիտի հանդիպինք, բայց Քրիստոս կ'ուզէ որ հաւատարիմ մնանք մեր կոչումին եւ մեր առաքելութեան մէջ. ահա թէ ինչո՞ւ ան խօսեցաւ հաւատարիմ ըլլալու անհրաժեշտութեան մասին: Հաւատարիմ մարդը ետ դարձ կամ նահանջ չի ցանցնար փորձութեան եւ դժուարութեան դիմաց:

Հաւատարմութեան կողքին իմաստուն ըլլալն ալ անհրաժեշտ է: Քրիստոս կը պահանջէ իր բոլոր հետեւորդներէն, հաւատացեալներէն, եկեղեցւոյ սպասաւորներէն, իր խօսքի տարածիչներէն, իմաստուն ըլլալ եւ իրենց կեանքերը իմաստութեամբ ապրիլ:

Ինչո՞ւ անհրաժեշտ է իմաստուն ըլլալը: Անհրաժեշտ է, նախ որպէսզի չիյնանք աշխարհի եւ Սատանային լարած ծուղակներուն մէջ: Երկրորդ, որպէսզի գիտնանք թէ ի՞նչպէս պիտի խօսինք Աստուծոյ մասին եւ մարդիկը հրաւիրենք Քրիստոսի: Երրորդ, որպէսզի կարենանք կարդալ ժամանակները, ցանցնալ դէպքերն ու մարդիկը, եւ

գիտնալ թէ որո՛ւ հետ՝ ի՛նչպէս պէտք է խօսինք եւ ի՛նչպէս պէտք է վերաբերինք:

Բայց այս բոլորէն անդին, իմաստութիւնը որուն մասին կը խօսի Քրիստոս, բնականօրէն մարդկային կամ աշխարհի իմաստութիւնը չէ, այլ՝ Սուրբ Հոգիին կողմէ շնորհուած իմաստութիւնն է: Երբ Սուրբ Հոգիին կողմէ տրուած իմաստութեամբ կը խօսինք՝ մեր խօսքը կը դառնայ գորեղ, ազդու, այլակերպիչ եւ համոզիչ:

Հետեւաբար, կարելոր է հաւատարիմ ըլլալը, որպէսզի կարենանք մեզի յանձնուած գործը իր աւարտին հասցնել, եւ կարելոր է Սուրբ Հոգիին իմաստութեամբ լեցուած ըլլալը, որպէսզի կարենանք մարդիկը համոզելով՝ Քրիստոսի բերել:

Աստուածաշունչը բազմաթիւ անգամներ եւ բազմաթիւ կերպերով կը գովէ իմաստութիւնը եւ իմաստուն մարդը, մնայուն կերպով շեշտելով թէ իմաստուն մարդը Աստուծոյ օրէնքը պահող մարդն է (Սղ 119.34), զԱստուած փնտոող մարդն է (Սղ 14.2), փառք ժառանգող մարդն է (Առ 3.35), բուժիչ լեզու ունեցող մարդն է (Առ 12.18), հոգիներ վաստկող, այլ խօսքով՝ մարդիկը Աստուծոյ բերող մարդն է (Առ 11.30), չարութենէ հեռու փախչող մարդն է (Առ 14.16): Այս բոլորը ընողը՝ կրնայ Աստուծոյ հաւատարիմ եւ իմաստուն տնտեսը նկատուիլ եւ գործածուիլ Աստուծոյ կողմէ:

Երբեմն պատրաստակամութիւն կը յայտնենք Տիրոջ կողմէ մեզի յանձնուած գործը կատարելու, բայց արգելք դուրսէն չի գար, այլ նոյնիմօք մեր անձերէն, մեր անփորձառութենէն, մեր անիմաստուն վերաբերմունքէն, եւ ատով իսկ կը խափանենք Աստուծոյ գործը:

3.- Իմաստուն մարդը, ճիշդ բանը՝ ճիշդ ատենին ընող մարդն է, ճիշդ խօսքը՝ ճիշդ ատենին ըսող մարդն է: Քրիստոս ի՛նք եւս նոյն բանը կ'ըսէ: Ան երբ կը խօսի իմաստուն տնտեսին մասին՝ կ'ըսէ. «Տէրը իր ծառաներուն վրայ վերակացու կը կարգէ, որպէսզի **ճիշդ ատենին** անոնց կերակուրի բաժինը տայ»: Ընդգծուած բառերը յստակօրէն ցոյց կու տան, որ իմաստուն տնտեսը ճիշդ բանը՝ ճիշդ ատենին ընող մարդն է եւ ճիշդ խօսքը՝ ճիշդ ատենին ըսող մարդն է, ինչպէս ըսի:

Դժբախտութիւն պիտի ըլլար յարմար խօսքը՝ անյարմար ատեն ըսելը: Անյարմար ատեն ըսուած՝ յարմար խօսքը, կը նմանի ժայռին վրայ նետուած կամ փուշերուն մէջ նետուած սերմին: Աստուածաշունչը կը հաստատէ թէ «ամէն բանի ատենը կայ» (Առ 3.1): Հետեւաբար, «իմաստուն» բառին գործածութեամբ, Քրիստոս կ'ուզէ եւ կը պահանջէ, որ իր խօսքին տարածիչները հարկ եղած իմաստութիւնը ունենան,

գիտնալու համար թէ ե՛րբ պէտք է խօսին եւ ե՛րբ պէտք է լռեն, ե՛րբ եւ որո՛ւ դիմաց պէտք է վկայեն եւ ե՛րբ ու որո՛ւ դիմաց պէտք չէ վկայեն:

Եկեղեցւոյ սպասաւոր քահանան պէտք է լաւ քանչնայ իր հօտը՝ որպէսզի կարենայ յարմար խօսքը՝ յարմար ձեւով փոխանանել անոնց: Ձե՛նք կրնար սգաւոր մարդուն հետ խօսիլ այնպէս ինչպէս պիտի խօսէինք ուրախ գուարթ մարդու մը հետ: Ձե՛նք կրնար նոյն պատգամը ուղղել խոնարհ եւ գոռոզ մարդուն: Ձե՛նք կրնար նոյն ձեւով եւ նոյն բառերով վկայել Յիսուսի մասին՝ ոչմարտութիւնը փնտոող եւ ոչմարտութեան հանդէպ ծաղրածու վերաբերմունք ունեցող մարդոց:

Մեծն Կիւրեղ խօսելով այս կէտին մասին՝ կ'ըսէ. «Քրիստոս իր առաքեալներուն պատուիրեց արտօնուած «կերակուրը» տալ հաւատացեալներուն, ո՛չ թէ պատահականօրէն կամ առանց խտրութեան, այլ՝ ճիշդ ատենին: Իւրաքանչիւր անձի յարմար հոգեւոր ուտելիք եւ զինք կշտացնող հոգեւոր ուտելիք պէտք է տրուի: Կարելի չէ խօսիլ ամէն տեսակ ոչմարտութիւններու մասին ամէն մակարդակի հաւատացեալներուն: Առակագիրը կ'ըսէ. «Քու ոչխարներուդ վիճակը աղէկ գիտցիր եւ քու հօտերուդ աղէկ նայէ» (Ս.Ո 27.23):

Երբ նորադարձ մարդու մը կը խօսինք՝ պարզ ու հասկնալի ձեւով պէտք է խօսինք, որպէսզի կարող ըլլայ հասկնալ ամէն ինչ եւ իրեն համար անհասկնալի բան չմնայ: Բնականօրէն տարբեր պէտք է խօսինք անոնց հետ՝ որոնք հաւատքի իրենց կեանքին մէջ խորացած ու հաստատուած են, եւ որոնք կարողութիւնը ունին հասկնալու խորութիւնը, բարձրութիւնը, լայնութիւնն ու երկարութիւնը աստուածաբանական իրականութեանց, նոյն բանին է որ կ'ակնարկէ Պօղոս առաքեալ երբ կ'ըսէ.՝ "Մինչդեռ կարծր կերակուրը չափահասներուն համար է, որոնք վարժութեան քամբով կրթած են չարն ու բարին զանազանելու իրենց զգայարանքը"» (Եբր 5.14):

«Որպէսզի ճիշդ ատենին անոնց կերակուրի բաժինը տայ»: Երբեմն կը կարծենք որ մեր խօսքով, լաւ քարոզով մը, քարտասանական քառով մը, կրնանք մեր ունկնդիրներուն «անոնց կերակուրի բաժինը» տալ, այլ խօսքով՝ լեցնել անոնց անօթի հոգիները: Եւ սակայն, պէտք է գիտնանք որ հաւատացեալներուն հոգիները կշտացնելը Սուրբ Հոգիին գործն է եւ ո՛չ թէ մեր գործը:

Ճիշդ հո՛ւս է որ պէտք է խնդրենք Սուրբ Հոգիէն, որ օգնէ մեզի՝ գիտնալու թէ ե՛րբ, ի՛նչպէս եւ ի՛նչ պէտք է խօսինք: Երբ Սուրբ Հոգին ըլլայ խօսողը մեր ընդմէջէն՝ ունկնդիրներէն իւրաքանչիւրը կ'առնէ իրեն պէտք եղածը միայն: «Մեր» խօսքը կը դպնայ մարդոց սրտին եւ կը փոխէ

զանոնք, երբ ատիկա Սուրբ Հոգիով պատրաստուած եւ Սուրբ Հոգիով փոխանցուած խօսք մը ըլլայ:

4.- «Անոնց կերակուրի բաժինը տայ»: Հոգեւոր վերակացութեան պաշտօնին կանչուած ռեւէ անձ, պարտաւոր է իր հօտի անդամներուն «անոնց կերակուրի բաժինը» տալու: Այո՛ պարտաւոր է: Աստուծոյ կենսատու խօսքին մատակարարումը իր ազատ կամքին ձգուած հարց մը չէ:

Այդ «կերակուրը» սակայն միայն Աստուծոյ խօսքը չէ, այլեւ՝ Աստուծոյ սէրն ու ներումը, Աստուծոյ գթութիւնն ու փաղցրութիւնը: Աստուծոյ զաւակ դարձած ռեւէ անձ՝ կոչուած է Աստուծոյ սէրն ու ներումը մատակարարելու ուրիշներուն, կոչուած է Աստուծոյ գթութիւնն ու փաղցրութիւնը հրապարակելու ամէն առիթով:

«Երանի՛ այն ծառային, որուն տէրը երբ կու գայ, զինք կը գտնէ իր պաշտօնը լաւապէս կատարած: Իրապէս կ'ըսեմ ձեզի, որ տէրը այդ ծառան իր բոլոր ստացուածքներուն վրայ վերակացու պիտի կարգէ» (Ղկ 12.43-44): Քանի մը նշումներ.-

1.- «Երանի՛»: Տէրը երանի կու տայ իր պաշտօնը լաւապէս կատարած ծառային, եւ ինչո՞ւ. որովհետեւ ան զանիկա «իր բոլոր ստացուածքներուն վրայ վերակացու պիտի կարգէ»: Մեծն Կիրեայ կ'ըսէ. «Այն մարդը որ իր ծառաներուն իմաստութեամբ եւ նիշդ ատենին կերակուրը կու տայ, երանելի կը նկատուի Փրկիչին հայեացքով, եւ արժանի կը դառնայ աւելի մեծ բաներու, եւ վարձատրութիւն կը ստանայ իր հաւատարմութեան համար... ա՛յս է որ մեր Տէրը սորվեցուց մեզի, երբ գնահատեց աշխատող «բարի եւ հաւատարիմ» ծառան, ըսելով. "Ապրի՛ս, բարի եւ հաւատարի՛մ ծառայ, քանի այդ փոքրիկ գումարը շահարկելու մէջ հաւատարիմ գտնուեցար, քեզ աւելի մեծ գործերու պատասխանատու պիտի կարգեմ, եկուր եւ մասնակից եղիր տիրոջ ուրախութեան"» (Մտ 25.21):

2.- Ո՞վ է հոս յիշուած ծառան: Ան պարզ ծառայ մը չէ, գուրկ իրաւասութենէ եւ իշխանութենէ: Յաջորդ համարը (45), կը պարզէ որ խօսքը որոշ իրաւասութիւն եւ իշխանութիւն ունեցող ծառայի մասին է, որովհետեւ համարը կ'ըսէ. «Յէ՛ ծառան... սկսի միւս ծառաներն ու սպասուհիները ձեծել, ուտէ, խմէ, եւ գինովնայ...»: Հոս յիշուած բառերը՝ ձեծել, ուտել, խմել եւ գինովնայ, ցոյց կու տան որ այս ծառան իր տիրոջ կողմէ վերակացու նշանակուած անձ մըն է: Քրիստոս կը պահանջէ որ տէրեր ու ծառաներ, վերակացուներ եւ անոնց ենթակայ եղողներ, բոլորն ալ հաւասարապէս, աշխատող ըլլան, գործո՛ղ ըլլան:

3.- «Երանի՛ այն ծառային, որուն տէրը երբ կու գայ, զինք կը գտնէ իր պաշտօնը լաւապէս կատարած»: Այս համարը ցոյց կու տայ որ երբ Տէրը յայտնուի, հաշիւ պիտի պահանջէ մեզմէ՝ մեզի յանձնուած պաշտօններուն եւ գործերուն համար: Աշխարհի մէջ ապրող բոլոր մարդիկը Աստուծոյ ծառաներն են: Երբ կ'ըսեմ՝ «Աստուծոյ ծառաներն են», ըսել կ'ուզեմ թէ անոնք ծառայութեան կանչուած են: Իւրաքանչիւր մարդ ընելիք ունի իր շրջապատին մէջ, ամէն մարդ պաշտօն մը ունի կատարելիք մարդկային այս մեծ ընտանիքին մէջ: Մարդ չկա՛յ որ ընելիք չունի: Մարդ չկա՛յ որ գործ չունի: Մարդ չկա՛յ որ ամէն տեսակ ծառայութիւններ մատուցանելու կարողութենէն զրկուած ըլլայ:

4.- Նախորդ համարին մասին խօսած ատեն, բացատրեցինք որ յիշուած կերակուրը՝ Աստուծոյ խօսքն է, Աստուծոյ խօսքին քարոզութիւնն է, որուն մատակարարման կանչուած մարդիկ՝ պէտք է գայն փոխանցեն իրենց տրամադրութեան կամ իրենց իշխանութեան տակ եղող ծարաւ հոգիներուն: Այս լոյսին տակ, կարելի է ըսել որ այն ծառան որուն մասին կը խօսի Յիսուս հոս, եւ որուն երանի կու տայ «իր պաշտօնը լաւապէս կատարած» ըլլալուն համար, միշտ է որ կրնայ ակնարկութիւն ըլլալ ոեւէ մարդու, բայց մանաւանդ ակնարկութիւն է անոնց՝ որոնք Աստուծոյ խօսքով մարդիկը սնուցանելու պաշտօնը ունին, եւ որոնք հոգեւոր ծառայութիւններ մատուցանելու պարտականութիւնը ունին:

5.- «Երանի՛ այն ծառային, որուն տէրը երբ կու գայ, զինք կը գտնէ իր պաշտօնը լաւապէս կատարած»: Այս բառերուն վերաբերեալ քանի մը արագ ակնարկներ. –

ա.– Տուեալ բառերով Յիսուս կոչ կ'ուղղէ իր ծառաներուն որ շարունակեն իրենց գործը կատարել մինչեւ Տիրոջ յայտնուիլը, եւ երբեք կանգ չառնեն դժուարութեանց դիմաց:

բ.– Այս բառերը կը պարզեն որ Քրիստոս աշխատո՛ղ մարդիկը կը սիրէ ու կը գնահատէ եւ ո՛չ թէ խօսող մարդիկը: Յիշեցէք որ երբ ան աշակերտներ պիտի ընտրէր, գնաց եւ գործի վրայ եղող մարդիկը կանչել տուաւ: Օրինակ, Պետրոս եւ Անդրէաս աշակերտները ձկնորսութիւն կ'ընէին երբ Տէրը կանչեց զանոնք (Մտ 4.18-19): Յովհաննէս եւ Յակոբոս աշակերտները «իրենց ուղկանները կարգի կը դնէին» երբ կանչուեցան (Մտ 4.21-22): Մատթէոս «մաքս գանձելու նստած էր» երբ Յիսուս գայն կանչեց (Մտ 9.9): Եւ այլն:

գ.– Տուեալ բառերով նաեւ Յիսուս մեզ կը հրաւիրէ որ ի կատար ածենք եւ ամբողջացնենք մեզի յանձնուած գործը. գայն կիսատ չձգենք:

դ.– Տուեալ բառերով նաեւ Յիսուս կը յիշեցնէ մեզի թէ իր գալստեան օրը պիտի գտնէ հաւատարիմ եւ ժրագնօրէն աշխատող մարդիկ, որոնք իրենց «պաշտօնը լաւապէս կատարած» պիտի ըլլան, բայց նաեւ պիտի գտնէ այնպիսիներ՝ որոնք լքած պիտի ըլլան իրենց յանձնուած գործը եւ իրենց վստահուած հօտը, եւ ուստի՝ իրենց հաւատքը:

Ե.– «Պաշտօնը լաւապէս կատարած»: Ուշադրութիւն դարձնենք «լաւապէս» բացատրութեան: «Լաւապէս» բառը կը պարզէ որ Տէրը կ'ակնկալէ մեզմէ որ մեր պաշտօնը չընենք պարզապէս ընելու սիրոյն, այլ լաւապէս ընենք, եռանդագի՛ն ընենք, սիրո՛վ ընենք. եւ «պաշտօն» բառը երբեք պատճառ չըլլայ որ մենք զմեզ ըմբռնենք աշխարհի պաշտօնեաներուն նման պաշտօնեայ իբրեւ, պարպուած Յիսուսի առաքեալներուն կրակոտ կրակէն: Ասկէ առաջ յիշեցի, եւ դարձեալ, տեղին է յիշել Զարեհ Արք. Ազնաւորեանին սրտայոյզ ու դիպուկ խօսքը.–

«Սիրելի եղբայրներ, Քրիստոս այսօր անգամ մը եւս մեզի կը յիշեցնէ, թէ իր առաքելութիւնը մե՛ր առաքելութիւնն է: Մեզ վերստին կը կոչէ՝

Առաքեալ ըլլալու, եւ ո՛չ թէ պարզապէս պաշտօնեայ:

Հոգեւորակա՛ն ըլլալու եւ հոգիներո՛ւ մատակարար, եւ ո՛չ թէ պարզապէս եկեղեցական եւ նիւթական մատակարարութեամբ զբաղած տնտես:

Աւետարանի՛չ ըլլալու, եւ ո՛չ թէ միայն պարզ բեմբասաց ու հոնտոր:

Աւետաբե՛ր ըլլալու, եւ ո՛չ թէ միայն անխինդ եւ անլոյս խօսքի վաճառական:

Պատգամախօ՛ս ըլլալու, եւ ո՛չ թէ միայն աստուածային տառին թութակաբար եւ անհոգի կրկնաբանող:

Ուսուցիչ հա՛յր ու հոգիներու դաստիարակ ծնո՛ղ ըլլալու, եւ ո՛չ թէ հայրութեան հոգիէն գուրկ լոկ վարձկան հովիւ:

Այո՛, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի օրինակով կոչուած ենք երկինքի դեսպան ըլլալու, փրկութեան միջնորդ եւ շնորհքի մատակարար»:

6.– «Իրապէս կ'ըսեմ ձեզի, որ տէրը այդ ծառան իր բոլոր ստացուածքներուն վրայ վերակացու պիտի կարգէ»: Ի՞նչ ստացուածքի մասին է խօսքը՝ ոեւէ մէկը չէ ըսած եւ ոեւէ մէկը չի կրնար ըսել: Ենթադրութիւններ եղած են բայց ատոնց մասին չեմ ուզեր խօսիլ: Ինչ ալ ըլլայ այդ ստացուածքը, մէկ բան վստահ գիտենք, որ ատիկա

նիւթական հասկացողութիւն չունի: Ստացուածքի վրայ վերակացու դնելը՝ կրնայ նաեւ վարձատրութեան պատկերացումը ըլլալ: Աստուած կը խոստանայ վարձատրել իր հաւատարիմ գինուորները:

Ի՞նչ վարձատրութիւն կը սպասէ հաւատացեալ ու հաւատարիմ մարդուն: «Մնասներու» եւ «Քանգարներու» առակներուն մասին խօսած ատեն, եւ այլ առիթներով, մանրամասն բացատրած ենք թէ ի՞նչ պիտի ըլլայ հաւատացեալին տրուելիք վարձատրութիւնը: Այստեղ կը բաւարարուիմ հաստատելով որ իսկական եւ ամենէն ցանկալի ու ամենէն թանկագին վարձատրութիւնը որ կրնայ հաւատացեալի մը տրուիլ՝ նոյնինքն Քրիստոսի ներկայութիւնն է: Հետեւաբար, հաւատացեալ մարդը իր սիրտը պէտք է կապէ Տուողին եւ ո՛չ թէ տրուածին, Բարերարին եւ ո՛չ թէ բարերարութեան, երկինքի Փառաւորին եւ ո՛չ թէ փառքին, Արքային եւ ո՛չ թէ արքայութեան հանգիստին:

Ս. Գրիգոր Նարեկացին կ'ըսէ. «Ո՛չ թէ տուրքին՝ այլ Տուողին կարօտն ունիմ. փառքը չէ՛ որ անձկալի է ինծի, այլ՝ Փառաւորածը համբուրելի. ո՛չ թէ կեանքին փափաքովը՝ այլ Կենարարին յիշատակովն է որ կը նեններիմ միշտ. ո՛չ թէ վայելքին տարփանքովը կը հեծեմ, այլ Պատրաստողին տենչանքովը երկամունքիս խորէն կը ճուամ. հանգիստը չէ որ կը փնտոնեմ, այլ Հանգչեցնողին երեսը կ'աղաչեմ. ո՛չ թէ հարսնարանին խնոյքով՝ այլ Փեսային անձնկութեամբը կը մաշիմ» (Բան ԺԲ):

«Սակայն եթէ ծառան ինքնիրեն ըսէ՝ «Տէրս կ'ուշանայ գալու», եւ սկսի միւս ծառաներն ու սպասուհիները ծեծել, ուտէ, խմէ, եւ գինովնայ, յանկարծ իր չակնկալած ատենին եւ չսպասած ժամուն տէրը պիտի գայ եւ գայն խստութեամբ պիտի պատժէ եւ անհաւատներուն կարգին դասէ» (Ղկ 12.45-46): Քանի մը ամփոփ մատնանշումներ. –

1.– Տուեալ բառերով, Քրիստոս կը սորվեցնէ մեզի որ անհաւատարմութիւնը, յատկապէս Աստուծոյ կողմէ մեզի տրուած գործին կամ առաքելութեան նկատմամբ, մեզ խիստ պատիժի ենթակայ պիտի դարձնէ:

2.– «Եթէ ծառան ինքնիրեն ըսէ՝ «Տէրս կ'ուշանայ գալու», եւ սկսի միւս ծառաներն ու սպասուհիները ծեծել, ուտէ, խմէ, եւ գինովնայ...»: Հոս կարելոր մշմարտութիւն մը կայ որ պէտք չէ մեր հայեացքէն վրիպի: Ծառային մտածումը, թէ՛ կրնայ իր տէրը ուշանալ, գինք կ'առաջնորդէ ապրելու անօրէն կեանք մը: Այսօր որո՞նք են անօրէն կեանք ապրող բրիստոնեաները: Անոնք չե՞ն որոնք կը խորհին թէ Քրիստոսի երկրորդ գալուստը պիտի ուշանայ կամ կրնայ ուշանալ:

Ծառան եթէ գիտնար որ նոյն գիշերը կամ յաջորդ օրը իր տէրը պիտի դառնար՝ իր ձեռքին տակ գտնուող ծառաներուն եւ սպասուհիներուն հետ այդպէս պիտի վերաբերէ՞ր, ինքզինք գինովութեան եւ անառակութեան պիտի տա՞ր: Վստահաբար ո՛չ: Իսկ այսօր, եթէ մարդիկ գիտնային որ վաղը կամ երկու օր ետք տեղի պիտի ունենար Քրիստոսի երկրորդ գալուստը՝ ի՞նչպիսի կեանք մը կ'ապրէին: Իրենց կոիւնքը կը շարունակէի՞ն, թէ՛ շուտով իրարու հետ հաշտուելու կը նայէին: Իրարու աչքերէն արցունք կը հոսեցնէի՞ն, թէ՛ իրենք իրենց աչքերէն: Եթէ նման բան գիտնային, չէ՞ին ապաշխարեք, դառն արցունք չէ՞ին թափեր, իրենց կեանքի ընթացքի չէ՞ին փոխեր, տրամալից հոգիով Տիրոջ ողորմութիւնն ու գթութիւնը չէ՞ին հայցեր:

Այս երկրորդ կէտէն մեր սորվելիքը այն է, հետեւաբար, որ չմտածենք թէ մեր Տիրոջ երկրորդ գալուստը եւ աշխարհի կատարածը շա՛տ շա՛տ հեռու է, որովհետեւ նման մտածում մեզ անտարբեր կ'ընէ Աստուծոյ եւ մեր նմաններուն նկատմամբ, միշտ ինչպէս ըրաւ ծառային: Մտածել թէ գալուստը կրնայ ուշանալ՝ ո՛չ միայն կրնայ պատճառ ըլլալ որ չհրաժարինք մեր չարագործութիւններէն, այլ հակառակը, մեզ կը մղէ նոր չարագործութիւններ ընելու:

Յետոյ ուրիշ կարեւոր բան մը: Այո՛, կրնայ Տիրոջ գալուստը ուշանալ, բայց մեր երթալը Տիրոջ քով պիտի չուշանայ: Տէրը կրնայ հազար տարի ետք գալ, բայց ատոր մասին չմտածենք, այլ մտածենք մեր երթալուն մասին դէպի Տէրը: Մենք հազար տարի ե՞տք պիտի մեռնինք, կամ հինգ հարիւր տարի ե՞տք պիտի մեռնինք, կամ հարիւր տարի ե՞տք պիտի մեռնինք, կամ յիսուն կամ երսուն կամ քսան տարի ե՞տք:

Արեւի՛ բարեկամ, Տիրոջ ահաւոր ներկայութեան կանգնիլը՝ Տիրոջ երկրորդ գալուստէն ետք միայն պիտի չըլլայ, այլ նաեւ մեր մահէն ետք: Հետեւաբար, մտածենք մեր մահուան մօտիկ ըլլալուն մասին, փոխանակ մտածենք Քրիստոսի գալուստին հեռու ըլլալուն մասին:

3.- «Եւ սկսի միւս ծառաներն ու սպասուհիները ծեծել, ուտէ, խմէ, եւ գինովնայ»: Որո՞նք են հոս յիշուած ծառաներն ու սպասուհիները որոնք ծեծի կ'ենթարկուին: Շատ հաւանաբար անոնք կը ներկայացնեն հաւատացեալները, կամ ըսենք, ընդհանուր կերպով մը, այն մարդիկը՝ որոնք ծեծի, այլ խօսքով՝ անիրաւութեան կ'ենթարկուին, իրենց վրայ իշխանութիւն ունեցող մարդոց կողմէ:

Ասիկա մեր կեանքին ամենէն ցաւալի երեսներէն մէկն է: Իշխանութեան գլուխ եղող մարդիկ կը մոռնան որ իրենք Աստուծոյ թոյլտուութեամբ եւ Աստուծոյ կամքը կատարելու համար է որ իշխանութեան գլուխ հասան: Երբ կը մոռնան այս նշմարտութիւնը,

կ'ընեն միշտ այն ինչ որ հոս յիշուած ծառան ըրաւ՝ ծեծել ուրիշը, անիրաւել աղֆատը, եւ ուտել, խմել ու գինովնալ:

Այս ծառային օրինակէն, կը սորվինք թէ իշխանութեան տէր մարդիկ՝ Աստուծոյ առջեւ պիտի կանգնին եւ պատասխան պիտի տան իրենց ըրածին համար: Իշխանութեան տէր մարդիկ, պէտք է ջանան իրենց ենթակայ եղող մարդոց աչքերուն արցունքը սրբել եւ ո՛չ թէ իրենք ըլլան այդ աչքերէն արցունք հոսեցնողները: Անոնք պէտք է տէր կենան աղֆատներուն եւ ո՛չ թէ ըլլան հարստահարիչները աղֆատներուն:

Յիշեալ տողին մէջ չորս բառեր կան որոնց վերաբերեալ հակիրճ կերպով պէտք է անդրադառնալ՝ ծեծել, ուտել, խմել եւ գինովնալ:

ա.- Ծեծել: «Ծեծել»ը Աստուծոյ կամֆին ընդդիմանալ ու հակառակիլ է: «Ծեծել»ը բարիին դէմ դնել կը նշանակէ: Օրինակ, եթէ վերակացու նշանակուած այս մարդուն իշխանութեան ներքեւ ըլլան բարի եւ աստուածասէր մարդիկ, եւ վերակացուն հակառակի անոնց, այդ հակառակութիւնը կը թարգմանուի իբրեւ՝ ծեծել: Այսօր չկա՞ն իշխանութեան գուր ինչ մարդիկ, որոնք կ'ընդդիմանան եւ կը հակառակին իրենց իշխանութեան ներքեւ գտնուող բարի մարդոց, Գրիստոսասէր մարդոց, հաւատքի մարդոց, փոխանակ ֆառալերելու անոնց հաւատքի կեանքը:

բ.- եւ գ.- Ուտել եւ խմել: Ուտելն ու խմելը, մէկ կողմէ, մեզի յանձնուած պաշտօնին եւ պատասխանատուութեան նկատմամբ անտարբերութեան եւ անհոգութեան պատկերացումն է, իսկ միւս կողմէ, ատիկա աշխարհին կապուած ըլլալու եւ աշխարհի կեանքը ապրելու պատկերն է որ կը ներկայացնէ մեզի:

դ.- Գինովնալ: Հոս յիշուած գինովութիւնը անկասկած որ մեղքի գինովութիւնն է: Ինչպէս օղիին կամ գինիին մնայուն եւ առատ գործածութիւնը, մեր զգացումները կը բթացնէ եւ մեզ անզգայ կը դարձնէ, այնպէս ալ, յարատեւօրէն եւ կամովին մեղք գործելը՝ կը ցամփեցնէ մեր ներսիդին ամէն բարի, գեղեցիկ եւ ազնիւ զգացում:

Եթէ երբեք գինին մեզ անառակութեան կը տանի, ո՛րքան աւելի անառակ որդիներ կը դառնանք եթէ սիրենք մեղքի գինին, այսինքն՝ մեղքի կեանքը: Մտաբերենք հետեւաբար առաքեալին խօսքը. «Գերին մի՛ դառնաք գինիին, որ անառակութեան կը տանի. այլ մասնաւորաբար Սուրբ Հոգիով լեցուեցէք» (Եփ 5.18):

4.- «Յանկարծ իր չակնկալած ատենին եւ չսպասած ժամուն տէրը պիտի գայ»: Նախորդ առակին մեկնութեան մէջ խօսեցանք Տիրոջ անակնկալ գալուստին մասին: Ո՛չ անհաւատը թող մտածէ որ Տէրը կրնայ ուշանալ գալու եւ ո՛չ ալ հաւատացեալը թող խորհի որ Տէրը պէտք

եղածէն աւելի ուշացաւ: Մտածել որ Տէրը կրնայ ուշանալ գալու՝ չարագործ մարդը առաւել չարիքի կը մղէ, իսկ մտածել որ Տիրոջ համբերութիւնը վերջ պիտի չգտնէ՝ կրնայ մեզ յուսահատութեան տանիլ:

«Չակնկալած» եւ «չսպասած»: Այս երկու բառերը մէկ բան կը պարզեն, որ Տիրոջ երկրորդ գալուստին ժամանակը գիտնալը կամ գուշակելը՝ մարդկային մտքի կարողութենէն եւ հասողութենէն վեր է: Տիրոջ գալուստը կրնայ այս տողերը կարդացած ատենդ տեղի ունենալ: Կարելորդ սակայն գալստեան ժամանակը գիտնալը չէ: Կարելորդ այդ գալստեան պատրաստ ըլլալն է, ինչպէս ասկէ առաջ ըսինք:

Թէ՛ հաւատացեալ եւ թէ՛ անհաւատ մարդուն համար Տիրոջ գալուստը անակնկալ եւ չսպասուած ատեն պիտի ըլլայ, բայց անհաւատ մարդուն համար այդ անակնկալը կործանում պիտի բերէ, մինչդեռ հաւատացեալ մարդուն համար՝ փրկութիւն:

5.- «Ձայն իստութեամբ պիտի պատժէ»: Բոլոր անգիղջ մեղաւորներուն պատիժը վստահաբար իսիստ պիտի ըլլայ, բայց շատ աւելի իսիստ պիտի ըլլայ պատիժը իշխանութեան գլուխ եղող մարդոց, նիշդ ինչպէս հոս յիշուած ծառային պատկերը ցոյց կու տայ:

6.- «Ձայն իստութեամբ պիտի պատժէ եւ անհաւատներուն կարգին դասէ»: Պատիժ եւ անհաւատներուն կարգին դասուիլ: Այս բառերը ցոյց կու տան որ մեծ պատիժ մըն է իշխանութեան գլուխ եղող մարդուն համար անհաւատներուն կարգին դասուիլը: Եւ ալ այդպէս է:

Ինչո՞ւ Քրիստոս կը շեշտէ թէ այդպիսի մարդիկ, այլ իսուֆով, պաշտօն ու հանգամանք, իրաւասութիւն եւ իշխանութիւն ունեցող անիրաւ մարդիկ անհաւատներուն կարգին պիտի դասուին: Պատասխանը շատ պարզ է: Ի՞նչ է տարբերութիւնը անաստուածի մը որ Աստուծոյ գոյութեան չի հաւատար, եւ քրիստոնեայի մը որ իր սրտին մէջ Քրիստոս չունի: Տարբերութիւնը այն է՝ որ անաստուածը աւելի լաւ է քան անուանապէս քրիստոնեան, որովհետեւ անաստուածը չի հաւատար Աստուծոյ գոյութեան որպէսզի կարենայ հաւատալ Աստուծոյ, մինչդեռ անուանապէս քրիստոնեան կը հաւատայ Քրիստոսի գոյութեան, եւ սակայն, գայն չունի իր կեանքին մէջ:

Աւելի լաւ է Աստուծոյ գոյութեան չհաւատալ, քան հաւատալ եւ սակայն մեր գործերով ուրանալ գայն:

ՀԱՐՍԱՆԻՔԻ ՀՐԱԻՐԵԱԼՆԵՐՈՒՆ ԱՌԱԿԸ

«Երկինքի արքայութիւնը կը նմանի հետեւեալին.– Թագաւոր մը իր որդիին համար հարսանիք սարքեց: Անիկա իր ծառաները դրկեց, որպէսզի հրաւիրեալները հարսանիքի կանչեն, սակայն հրաւիրեալները մերժեցին գալ: Դարձեալ ուրիշ ծառաներ ալ դրկեց՝ անոնց պատուիրելով.– "Ըսէ՛ք հրաւիրեալներուն.– Ճաշկերոյթը պատրաստ է, գուարակներս եւ պարարտ կենդանիները մորթուած են, ու ամէն ինչ կազմ ու պատրաստ է. հրամմեցէ՛ք հարսանիքի":

Բայց հրաւիրեալները կարեւորութիւն չտուին. մէկը իր ագարակը գնաց, միւսը իր առետուրին, իսկ ուրիշներ ալ ծառաները բռնեցին ծեծեցին եւ սպաննեցին: Թագաւորը երբ ասիկա լսեց, բարկացաւ եւ իր զինուորները դրկեց, որոնք ոնրագործները սպաննեցին եւ անոնց քաղաքէն ալ ալքեցին:

Յետոյ թագաւորը ըսաւ իր ծառաներուն.– "Հարսանիքը պատրաստ է, բայց հրաւիրեալները արժանի չէին: Հիմա հրապարակ գացէ՛ք եւ ո՛վ որ գտնէ՛ք հրաւիրեցէ՛ք հարսանիքի": Ծառաները նամբաները ելլելով՝ հաւաքեցին բոլոր անոնք որ գտան, թէ՛ չարերը եւ թէ՛ բարիները, եւ հարսանիքի սրահը լեցունեցաւ հրաւիրեալներով:

Երբ թագաւորը ներս մտաւ դիտելու համար հրաւիրեալները, տեսաւ մէկը որ հարսանիքի պատշաճ հագուստ չէր հագած ու ըսաւ անոր.– "Բարեկա՛մ, ի՞նչպէս հոս մտար առանց հարսանիքի հագուստ ունենալու": Մարդը պապանձեցաւ: Այն ատեն թագաւորը սպասաւորներուն ըսաւ.– "Կապեցէ՛ք անոր ոտքերն ու ձեռքերը եւ դուրսը խաւարին մէջ նետեցէ՛ք. հոն անիկա թող լայ եւ ակոսները կրնտէ": Որովհետեւ կանչուածները շատ են, բայց ընտրուածները՝ քիչ» (Մտ 22.2-14):

«Թագաւոր մը իր որդիին համար հարսանիք սարքեց» (Մտ 22.2):

Քանի մը նշումներ.–

1.– Հոս յիշուած թագաւորը մեր երկնաւոր Հայրն է, որդին՝ Քրիստոս ինքն է, իսկ հարսանիքը՝ կը պատկերացնէ երկինքի արքայութիւնը: Ինչո՞ւ համար արքայութիւնը կը պատկերացուի իբրեւ հարսանիք մը: Այդպէս կը պատկերացուի՝ բացայայտելու համար այն անպատմելի ուրախութիւնը եւ անբացատրելի երջանկութիւնը որ գոյութիւն ունի Աստուծոյ ներկայութեան մէջ, ինչպէս Դաւիթ

մարգարէն խօսքը Աստուծոյ ուղղելով՝ կ'ըսէ. «Երեսիդ առջեւ լեցուն ուրախութիւն կայ, բու աչ կողմդ միշտ հանութիւններ կան» (Սղ 16.11):

2.- Մեծն Գրիգորիոս կ'ըսէ. «Կրնանք յատկօրէն եւ վստահութեամբ ըսել, թէ մեր երկնաւոր Հայրը իր թագաւոր Որդիին համար հարսանիքը պատրաստեց մարդեղութեան խորհուրդին ընդմէջէն, որուն միջոցաւ էր որ սուրբ եկեղեցին միացաւ Որդիին, եւ սուրբ Կոյսին արգանդն էր այդ հարսնետունը...: Ճիշդ ատոր համար ալ Սաղմոսագիրը կ'ըսէ.– Արեւին համար վրան մը կանգնեց. անկա իր առագաստէն ելած փեսայի պէս է (Սղ 19.5): Քրիստոս ինքն է արեւը, իսկ վրանը եւ առագաստը սուրբ Կոյս Մարիամն է: Ինչպէս փեսան դուրս կու գայ իր առագաստէն, այնպէս ալ Քրիստոս դուրս եկաւ անառատ սուրբ Կոյսին արգանդէն որպէսզի միանայ եկեղեցիին»:

3.- «Իր որդիին համար հարսանիք սարքեց»: Այս բառերը կը պարզեն որ Որդին ինքն պիտի ըլլայ մեր ուրախութեան գլխաւոր աղբիւրը երկինքի արքայութեան մէջ: Ճիշդ է որ արքայութիւնը տուողը Քրիստոս ինքն պիտի ըլլայ, բայց տրուած արքայութիւնը Քրիստոսի անձէն տարբեր բան մը պիտի չըլլայ: Քրիստոս ինքզինքն է որ պիտի շնորհէ իր հետեւորդներուն իր գալստեան օրը, ինքզինքով մեզ կշտացնելու, լիացնելու եւ գգլիսելու համար:

«Իր որդիին համար» բառերը հետեւաբար, մեզ կը հրաւիրեն որ մեր ուշադրութիւնը կեդրոնացնենք Տէր Յիսուսի վրայ եւ ո՛չ թէ Տէր Յիսուսի կողմէ մեզի տրուելիքին վրայ:

Ան իր յայտնութեամբը մեզի յաւիտենական կեանք պիտի տայ այն՝, բայց մենք զինքն պէտք է նկատենք մեր յաւիտենական կեանքը եւ այդ կեանքով հրնուինք, ինչպէս Սուրբ Գրիգոր Նարեկացին կ'ըսէ. «Ո՛չ թէ կեանքին փափաքովը, այլ Կենարարին յիշատակովն է որ կը մեններիմ միշտ»:

Ան իր յայտնութեամբը մեզ իր աստուածային փառքով պիտի զարթարէ այն՝, բայց մենք այդ փառքին չէ որ պէտք է ուղղենք մեր հայեացքը, այլ՝ Փառաւորուածին, դարձեալ, ինչպէս Նարեկացին կ'ըսէ. «Փառքը չէ՛ որ անձկալի է ինծի, այլ Փառաւորուածը՝ համբուրելի»:

Ան իր յայտնութեամբը յաւերժ հանգիստ պիտի շնորհէ «յոզնածներուս» այն՝, բայց մենք սպասենք Հանգչեցնողին եւ ո՛չ թէ հանգիստին, դարձեալ ինչպէս Գրիգոր Նարեկացին կ'ըսէ. «Հանգիստը չէ որ կը փնտոնեմ, այլ Հանգչեցնողին երեսը կ'աղաչեմ»:

«Անկա իր ծառաները դրկեց, որպէսզի հրաւիրեալները հարսանիքի կանչեն, սակայն հրաւիրեալները մերժեցին գալ» (Մտ 22.3): Քանի մը արագ նշումներ.–

1.- Առակին մէջ երեք անգամներ ծառաներ կը դրուին (տե՛ս 3, 4 եւ 8 համարներ): Հոս (3-րդ համարին մէջ) յիշուած ծառաները մարգարէներն են: Հին Կտակարանեան ժամանակաշրջանին, Աստուած իր փրկութեան պատգամը մարգարէներուն միջոցաւ կը դրկէր իր ժողովուրդին: Պէտք չէ մոռնալ որ Հին Կտակարանի մէջ, մարգարէն միայն ապագային մասին յայտնութիւններ ընող անձը չէր, այլ նաեւ ու յատկապէս, ան Աստուծոյ խօսքը, կամքը եւ պատգամը ժողովուրդին փոխանցողն էր, յայտնողն էր:

2.- «Որպէսզի հրաւիրեալները հարսանիքի կանչեն»: Հարսանիքի հրաւիրեալները՝ հրեաներն են, յատկապէս անոնց ղեկավարները, բայց ատիկա նաեւ կրնայ ակնարկութիւն ըլլալ իւրաքանչիւր մարդ անհատի որ կը մերժէ ընդառաջել Արքային կոչին, մասնակցելու համար արքայութեան հարսանեկան ուրախութեան:

3.- «Սակայն հրաւիրեալները մերժեցին գալ»: Հին Կտակարանի պատմութիւնը ցոյց կու տայ որ հրեայ ժողովուրդը միշտ մերժողական վերաբերմունք ցուցաբերած է Աստուծոյ հանդէպ:

«Դարձեալ ուրիշ ծառաներ ալ դրկեց՝ անոնց պատուիրելով.- "Ըսէ՛ք հրաւիրեալներուն.- Հաշկերոյթը պատրաստ է, գուարակներս եւ պարարտ կենդանիները մորթուած են, ու ամէն ինչ կազմ ու պատրաստ է. հրամանեցէ՛ք հարսանիքի"» (Մտ 22.4): Քանի մը մատնանշումներ.-

1.- Բնագիրին մէջ գործածուած «ուրիշ ծառաներ» (Յունարէն՝ αλλοις δούλοις) բառերը ցոյց կու տան, որ հոս յիշուած ծառաները տարբեր են 3-րդ համարին մէջ յիշուած ծառաներէն: Առաջին անգամ դրկուած ծառաները մարգարէներն են, ըսինք, իսկ հոս յիշուած ծառաները՝ Քրիստոսի առաքեալներն են:

Հին Կտակարանի մէջ հրեայ ժողովուրդին մեծ մասը մերժեց ականջ տալ մարգարէներուն միջոցաւ յայտնուած ու յայտարարուած աստուածային պատգամներուն, յորդորներուն եւ պատուէրներուն: Մեր երկնաւոր Հօր սէրը մարդկութեան հանդէպ սակայն ա՛յնքան մեծ էր, որ ան չբաւարարուեցաւ մարգարէներուն միջոցաւ միայն խօսելու մարդկային սերունդին, այլեւ՝ խօսեցաւ իր Որդիին միջոցաւ: Նոյնը Պօղոս առաքեալ կը հաստատէ. «Անցեալին բազմաթիւ անգամներ եւ բազմաթիւ կերպերով Աստուած մեր հայրերուն խօսեցաւ մարգարէներուն միջոցաւ, իսկ այս վերջին օրերուն մեզի խօսեցաւ իր Որդիին միջոցաւ» (Եբր 1.1):

2.- «Ըսէ՛ք հրաւիրեալներուն»: Այս հրաւիրեալները դարձեալ հրեաներն են: Քրիստոս իր երկրաւոր կեանքի ընթացքին, առաջին հերթին փրկութեան պատգամը ուղղեց հրեաներուն: Եւ նոյնիսկ երբ

տասներկու առաքելները առաջին անգամ առաքելութեան դրկեց՝ անոնց ըսաւ. «Մի՛ երթա՛ք հեթանոսներուն շրջանները եւ Սամարացիներուն ֆաղափները մի՛ մտնէ՛ք, այլ մասնաւորաբար գացէ՛ք Իսրայէլի կորսուած ոչխարներուն» (Մտ 10.5-6): Իսրայէլի «կորսուած ոչխարները» սակայն մերժեցին ընդառաջել փրկութեան հրաւերին եւ միւղի մը նման կտրուեցան (Հո 11.20):

3.- «Ճաշկերոյթը (Յունարէն՝ *αριστον*) պատրաստ է»: Հոս գործածուած «նաշկերոյթ» բառը պատահական ձեւով չէ գործածուած: Ատիկա կը պատկերացնէ այն հոգեւոր գոհացումը, բաւարարութիւնը եւ լիութիւնը, որ հաւատացեալներ պիտի վայելեն Քրիստոսի թագաւորութեան մէջ: Քրիստոս ի՛նք պիտի ըլլայ «նաշը», այլ խօսքով այն հացը՝ որով հաւատացեալներուն հոգիները պիտի կշտանան: Յիշեմք որ Յիսուս ինքն իսկ յայտարարեց. «Ես եմ կեանքի հացը: Ան որ ինծի կու գայ՝ բնաւ պիտի չանօթե՛նայ եւ ան որ ինծի կը հաւատայ՝ երբեք պիտի չծարաւնայ» (Յհ 6.35): Արքայութեան հացը Արքան ի՛նք պիտի ըլլայ: Արքայագուններուն կերակուրը Արքային սէրը ի՛նք պիտի ըլլայ:

4.- Յիշեմք որ հին թարգմանութիւնը, ինչպէս նաեւ Յունարէն բնագիրը «նաշկերոյթը պատրաստ է» բառերուն փոխարէն ունի՝ «նաշկերոյթս պատրաստեցի» (*αριστον μου ητοιμακα*): Երբ մեկնութիւն է որ կ'ընենք, երբեմն-երբեմն պէտք է Յունարէն բնագիրին դառնանք, քանի նոր թարգմանութիւնը՝ իմաստային թարգմանութիւն է: Արդ, ի՞նչ ցոյց կու տայ «նաշկերոյթս պատրաստեցի» խօսքը: Յստակ է որ ցոյց կու տայ թէ «նաշկերոյթ»ը՝ Աստուծո՛յ նաշկերոյթն է, պատրաստողն ալ՝ Աստուած ի՛նքն է: Հետեւաբար, մեր երկնաւոր Հայրը ինքն է որ պատրաստած է մեզի համար արքայութեան նաշկերոյթը, այլ խօսքով՝ ուրախութիւնը: Ե՞րբ պատրաստած է զանիկա: Զանիկա պատրաստած է «աշխարհի սկիզբէն» (Մտ 25.34):

5.- «Զուարակներս եւ պարարտ կենդանիները մորթուած են»: Այստեղ արձանագրուած «մորթուած» (Յունարէն՝ *τεθυσμενα*) բառը կարեւոր ճշմարտութիւն մը կը բերէ մեզի որ մեր ուշադրութենէն պէտք չէ վրիպի: Արքայութեան դուռը մորթուածութեամբ, այլ խօսքով՝ արիւնով բացուեցաւ: «Զուարակներն ու պարարտ կենդանիները» ակնարկութիւն են Քրիստոսի գոհագործման:

Առակին սկիզբը տեսանք որ առաջին անգամ երբ թագաւորը (մեր երկնաւոր Հայրը) իր ծառաները դրկեց մարդիկը իրեն բերելու, խօսք չկար «զուարակներ եւ պարարտ կենդանիներ» մորթելու մասին. ինչո՞ւ արդեօք. որովհետեւ «ցուլերու եւ նոխազներու արիւնը բնաւ չի կրնար

մեղքերը ջնջել» (Եբր 10.4): Բայց երկրորդ անգամ երբ տարբեր ծառաներ դրկեց մարդիկը հրաւիրելու երկնային հարսանիքի, Աստուծոյ Գառնուկը՝ Քրիստոս արդէն «մորթուած» էր:

6.- Որոգիներ կը հաստատէ թէ «պատրաստուած աստուածային այս սեղանը՝ նոյնիման Աստուծոյ խօսքն է, մորթուած զուարակները՝ Աստուծոյ հրաշալի բարիքներն են, որոնք պատրաստուած են մեզի համար իբրեւ հոգեւոր ուտելիք, պարարտ կենդանիները՝ իր մահուր, հանելի եւ ախորժաբեր խօսքերն են: Քրիստոս իր մարդեղացումով եւ խաչ բարձրացումով՝ մեզ առաջնորդեց Աստուծոյ խօսքին խորհուրդին, որպէսզի յայտնաբերենք անոր մեծութիւնն ու պարարտութիւնը»:

7.- Սուրբ Հիլարի Եպիսկոպոսը «զուարակներ»ը խորհրդանիշ կը նկատէ նահատակներուն որոնք իրենց կեանքը ընծայեցին իբրեւ անուշահոտ պատարագ, իսկ «պարարտ կենդանիները» խորհրդանիշ կը նկատէ հոգեւորներուն որոնք կը լիցֆաւորուին եւ կը պարարտանան երկնային հացով եւ որոնք կը թռչին երթալ կշտացնելու համար այլ անօթի հոգիներ իրենց պարարտութեամբ...:

8.- «Ամէն ինչ կազմ ու պատրաստ է»: Վերջին երկու բառերը՝ «պատրաստ է» (Յունարէն՝ ετοιμα), կը յիշեցնեն մեզի կարեւոր բան մը: Մենք չէ որ արքայութիւնը կամ արքայութեան ուրախութիւնը պիտի պատրաստենք: Ատիկա Քրիստոս ինք պատրաստեց արդէն, եւ զանիկա պատրաստեց իր արիւնով: Մենք մեր հաւատքի կեանքով արքայութիւնը չենք պատրաստեր, այլ պատրաստուած արքայութեան համար կը պատրաստուինք: Յիշեմք որ Քրիստոս առիթով մը յայտարարեց թէ «արքայութիւնը... աշխարհի սկիզբէն պատրաստուած է» (Մտ 25.34): Մեր պարտականութիւնը պատրաստելը չէ հետեւաբար, այլ՝ պատրաստուածին համար պատրաստուիլը:

9.- «Հրամանեցէ՛ք հարսանիքի»: Այս հաստատումը, ինչպէս նաեւ ամբողջ առակը, կը պարզէ որ արքայութեան հրաւերին ընդառաջելը կամ չընդառաջելը՝ ձգուած է մարդուն ազատ կամֆին: Աստուած երբեք չի պարտադրեր մարդուն արքայութիւն մտնել: Մեր երկնաւոր Հայրը չի ստիպեր որ մեղաւոր մարդիկ ընդունին Քրիստոսի փրկութիւնը: Ան ազատ կամֆ տուած է մեզի եւ կը սպասէ որ մեր ազատ կամֆով զինք ընտրենք:

Յիսուսի ուսուցումներուն մէջ երբեք պարտադիր բան չենք գտներ: Ան միշտ յարգեց եւ կը յարգէ մարդուն աստուածատուր ազատ կամֆի պարգեւը: Ազատ կամֆը Աստուծոյ գեղեցկագոյն պարգեւներէն մէկն է տրուած մարդուն: Եթէ Յիսուս մարդուն կամֆին հակառակ փրկէ

մարդը՝ ինքնիր տուած ազատ կամֆի պարգեւն է որ անարգած պիտի ըլլայ:

Ան մեծահարուստ երիտասարդին ըսաւ. «Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ...» (Մտ 19.21): «Եթէ մէկը իմ ձայնս լսէ եւ դուռը բանայ...» (Յյտ 3.20): «Ինձի եկողը պիտի չմերժեմ» (Յհ 6.37): Այս եւ նման արտայայտութիւններ ցոյց կու տան, որ Քրիստոս բնաւ բռնի ուժով չի գրաւեր մարդոց սիրտերը: Ան մեր սրտին դուռին դիմաց կանգնած կը թակէ եւ կը սպասէ: Ան մեր սրտին դուռը խորտակելով ներս չի մտներ:

Մէկը որ կամովին ընտրած է դժոխֆի նամբան՝ Քրիստոս չի պարտադրեր անոր ընտրել արքայութեան նամբան: Քրիստոս մեր կամֆէն անկախ մեզ չի փրկեր: Սուրբ Օգոստինոս կ'ըսէ. «Աստուած քեզ ստեղծեց առանց կամֆիդ, բայց առանց կամֆիդ քեզ չի փրկեր»:

Մենք չիսնդրեցինք Յիսուսէն որ իր արիւնը թափէ մեր մեղքերու ֆաւութեան համար, բայց վստահաբար մե՛նք է որ պիտի խնդրենք իրմէ որ ֆաւէ մեր մեղքերը իր արիւնով:

«Բայց հրաւիրեալները կարեւորութիւն չտուին. մէկը իր ազարակը գնաց, միւսը իր առեւտուրին, իսկ ուրիշներ ալ ծառաները բռնեցին ձեռքերն եւ սպաննեցին» (Մտ 22.5-6): Քանի հպանցիկ նշումներ. –

1.– «Բայց հրաւիրեալները կարեւորութիւն չտուին»: Այս բառերը կը պարգեն մարդ արարածին անտարբերութիւնը իր անձին փրկութեան նկատմամբ: Աշխարհի ամենէն կարեւոր բանը մարդոց փրկութիւնն է, իսկ մարդիկ, դժբախտաբար, այդ ամենէն կարեւոր բանին մասին մտածած անգամ չունին: Մարդիկ այնպէս կ'ապրին, կարծէք միայն այս կեանքին համար ստեղծուած են եւ բնա՛ւ պիտի չհեռանան այս կեանքէն, ինչպէս գրիչ մը ըսած է. «Մարդիկ կան որոնք այնպէս կ'ապրին որպէս թէ բնաւ պիտի չմեռնին, եւ կը մեռնին այնպէս մը՝ որպէս թէ բնաւ ապրած չըլլան»:

Յիշենք որ բնագիրը «կարեւորութիւն չտուին» բառերուն փոխարէն ունի՝ «անհոգութիւն ըրին»: Երկու բացատրութիւններն ալ ի վերջոյ նոյն իմաստին կը յանգին: Երբ մարդ արարածը իր անձի փրկութեան կարեւորութիւն չ'ընծայեր, բնականօրէն անհոգ ու անտարբեր կեանք մը կ'ապրի:

2.– «Մէկը իր ազարակը գնաց»: Կարգ մը մեկնիչներ կը հաստատեն թէ ազարակը կը ներկայացնէ աշխարհը: Յովհաննէս Երզնկացիին կ'ըսէ թէ ազարակը կը ներկայացնէ երկրասէրներն ու ագահները: Տուեալ երկու բացատրութիւնները զիրար չեն հակասեր: Ոեւէ մարդ որ կ'ապրի լոկ այս աշխարհին համար, բնականօրէն կը նկատուի երկրասէր եւ ագահ մէկը, եւ երբեք կարեւորութիւն եւ արժէք

չի տար Աւետարանի պատգամներուն, ահա թէ ինչո՛ւ Յիսուս կ'ըսէ.
«Հրաւիրեալները կարեւորութիւն չտուին»:

3.- «Միւսը իր առեւտուրին (գնաց)»: Յովհաննէս Երզնկացիին կը բացատրէ թէ առեւտուրի գացող մարդը կը ներկայացնէ՝ վաճառականներն ու խաբեբաները, որոնք կը գրկեն ուրիշը եւ անոնց իրաւունքը կը յափշտակեն: Այլ մեկնիչներ կը հաստատեն թէ առեւտուրի գացող մարդը կը պատկերացնէ աշխարհին կապուած եւ աշխարհով հարստանալու աշխատող մարդիկը: Տրուած երկու բացատրութեանց միջեւ հակասութիւն չկայ: Առեւտուրի գացող մարդը ըլլա՛յ խաբեբայ վաճառականը կամ ըլլա՛յ աշխարհին կապուած մարդը, երկու պարագաներուն ալ, անիկա մէկն է որ աշխարհը կը սիրէ իր նմանէն աւելի, եւ ուստի, պատրաստ է խաբելու, կեղեքելու, հարստահարելու, կողոպտելու իր նմանը իր անձի շահին համար:

4.- «Իսկ ուրիշներ ալ ծառաները բռնեցին ծեծեցին եւ սպաննեցին»: Ծառաները բռնող, ծեծող եւ սպաննող մարդոց մեղքը շատ աւելի ծանր է քան իրենց ագարակը կամ առեւտուրին գացող մարդոց մեղքը: Ինչո՞ւ: Ըսինք, որ ագարակ երթալը կամ առեւտուրի երթալը աշխարհին կապուած վիճակ մը ցոյց կու տայ, մինչդեռ ծառաները ծեծելն ու սպաննելը՝ Աստուծոյ եւ աստուածայիւնին նկատմամբ ցուցաբերուած ընդդիմութեան արտայայտութիւն է, ինչպէս կ'ըսէ Զարեհ Արք. Ազնաւորեան:

Ծեծելը՝ Աստուծոյ կամֆին հակառակիլ է, Աստուծոյ խօսքը ծաղրել է: Սպաննելը՝ Քրիստոսի Աւետարանին դէմ պայքարիլ է: Իրենց ագարակը կամ առեւտուրին գացող մարդոց մեղքը համեմատաբար նուազ ծանր է, քանի որ անոնք աշխարհին կապուած մարդիկն են, եւ անտարբեր ու անհոգ Աստուծոյ եւ աստուածայիւնին հանդէպ: Անոնք մասնաւոր հակառակութիւն չունին կամ ընդդիմութիւն չեն ցուցաբերեր Քրիստոսի Աւետարանին նկատմամբ: Մինչդեռ ծեծող ու սպաննող մարդիկը, Աստուծոյ սուրբ կամֆին ընդդիմադիր մարդիկն են, զանիկա բուն կերպով մերժողներն են:

Տուեալ բոլոր իմաստներուն կողմին, «սպաննեցին» բացատրութիւնը կրնանք նաեւ բառացիօրէն հասկնալ, որովհետեւ գիտենք որ հրեաներ իրե՛նք պատճառ եղան որ Յիսուսի աշակերտներէն շատեր սպաննուին:

«Թագաւորը երբ ասիկա լսեց, բարկացաւ եւ իր զինուորները դրկեց, որոնք ոճրագործները սպաննեցին եւ անոնց փաղափն ալ այրեցին» (Մտ 22.7): Քանի մը մատնանշումներ.–

1.- Այս համարը բնականօրէն ակնարկութիւն չի կրնար ըլլալ ժամանակներու կատարածին, որովհետեւ անկէ ետք եւս թագաւորը այլ ծառաներ կը դրկէ մարդիկը արքայութեան հարսանիքին հրաւիրելու: Ընդհանրապէս մեկնիչներ «ճաղաքն ալ այրեցին» բացատրութիւնը ակնարկութիւն կը նկատեն Երուսաղէմի վերջնական կործանումին եւ տաճարի հրկիզումին որ տեղի ունեցաւ Ք.Ն. 70 թուականին Հռոմայեցիներուն ձեռքով: Խորքին մէջ, Քրիստոս այս առակը պատմելով, կ'ուզէր ցոյց տալ հրեաներուն, եւ յատկապէս Փարիսեցիներուն, թէ իրենց յամառ մերժումը արքայութեան հրաւերին, զիրենք կործանումի պիտի առաջնորդէր:

2.- «Թագաւորը երբ սահկա լսեց, բարկացաւ եւ իր զինուորները դրկեց...»: Ոեւէ նշմարիտ թագաւոր, իր զինուորներէն մէկուն եղած նախատինքն՝ իրե՛ն եղած նախատինքն կը սեպէ, եւ վրէժ լուծելու կ'ելլէ: Ահա նոյնպէս, մեր երկնաւոր Հայրը, իր Որդիին զինուորներուն (աշակերտներուն) եղած նախատինքն՝ իրե՛ն եղած նախատինքն կը սեպէ, եւ անպատիժ չի թողուր նախատողները:

3.- «Թագաւորը... բարկացաւ եւ իր զինուորները դրկեց»: Հոս յիշուած զինուորները հռոմայեցի զինուորներն են, ինչպէս ըսի անուղղակիօրէն: Ինչպէս Աստուած կը տիրէ երկնային բոլոր գործերուն վրայ եւ անոնք իր կամքը կը կատարեն, այնպէս ալ, ան կը տիրէ աշխարհի գործերուն վրայ եւ յանախ անոնց միջոցաւ իր սուրբ կամքը կը կատարէ: Աշխարհի բոլոր գործերն ալ Աստուծոյ տրամադրութեան ներքեւ են, եւ Աստուած յանախ գանձնէ կ'օգտագործէ աշխարհի մէջ իր կամքը կատարելու եւ իր ծրագիրը իրագործելու համար: Վստահաբար հռոմայեցիները չաւերեցին Երուսաղէմը Աստուծոյ կամքը կատարած ըլլալու նպատակով, բայց Աստուած իր նախախնամութեամբ, պատմութեան անիւր այնպէս մը կը դարձնէ եւ դէպքերուն ուղղութիւնը այնպէս մը կը շտկէ՝ որ անոնք ինքնաբերաբար իր կամքը կը կատարեն եւ իր ծրագիրը կ'իրականացնեն, թէպէտ անգիտակցաբար:

4.- «Որոնք ոճրագործները սպաննեցին»: Ի՞նչ ցոյց կու տայ «ոճրագործ» բացատրութիւնը: Տոյց կու տայ երեք բան.-

ա.- Ամէն բանէ առաջ, ցոյց կու տայ թէ Քրիստոսի փրկութեան Աւետարանը տարածողներուն ընդդիմանալը՝ ոճի՛ր է: Եթէ ոճի՛ր է փրկութեան Աւետարանը տարածողներուն ընդդիմանալը, հապա որքա՛ն աւելի մեծ ոճի՛ր է գանձնէ սպաննելը, եւ հրեաներ այս մեծ ոճիրը եւս գործեցին, ինչպէս ըսինք:

բ.- «Ոճրագործ» բառը նաեւ ցոյց կու տայ որ փրկութեան հրաւերին չընդառաջելը՝ ոճի՛ր է, որովհետեւ ատիկա անձնասպանու-

թիւն է: Ոնրագործ մարդը միայն ուրիշը սպաննող մարդը չէ, այլեւ՝ ինքզինք սպաննողն է: Իսկ անձնասպանութիւնը կամ մարդասպանութիւնը միայն գէնեով չ'ըլլար: Իր եւ ուրիշներու փրկութեան հանդէպ անտարբեր եղող մարդը նաեւ մարդասպան կը սեպուի: Աստուածաշունչի հայեացքով, իր նմանը ատողը եւս մարդասպան է, ինչպէս Յովհաննէս առաքեալ կ'ըսէ. «Ով որ իր եղբայրը կ'ատէ՝ մարդասպան մըն է» (Ա.Յհ 3.15):

գ.- Քրիստոս Արքայութեան դուռը իր արիւնով բացաւ, ուստի մերժել արքայութիւնը՝ կը նշանակէ Քրիստոսը սպաննողներուն շարքին դասուիլ, եւ ուստի՝ ոնրագործ նկատուիլ:

5.- «Եւ անոնց ֆաղաֆն ալ այրեցին»: Արդէն ըսինք որ «ֆաղաֆն ալ այրեցին» բացատրութեամբ, Քրիստոս Երուսաղէմ ֆաղաֆին կործանումն էր որ կը նախատեսէր եւ կը նախապատկերացնէր: Բայց հոս ուրիշ նշմարտութիւն մըն ալ կայ զոր պէտք է տեսնել: «Քաղաֆն ալ այրեցին» խօսքը ազդարարութիւն մըն է բոլոր անոնց՝ որոնք կապուած են այս աշխարհին եւ կը մերժեն ընդառաջել արքայութեան հրաւերին: Այդպիսիները պէտք է յիշեն որ այս աշխարհը իրենցը չէ եւ իրենցը պիտի չմնայ: Ժամանակ պիտի գայ երբ Քրիստոս իր զինուորները, այլ խօսքով՝ իր հրեշտակները պիտի դրկէ հրկիզելու համար այս աշխարհը իր ամբողջ բովանդակութեամբ եւ «երկիրը իր ամբողջ բովանդակութեամբ պիտի անհետանայ» (Բ.Պտ 3.10), իսկ այն ատեն, երկրասէր ու աշխարհասէր մարդիկը պիտի դատապարտուին յաւիտեանական մահուան, գեհեմի ծծումբին եւ կրակէ լինին: Հետեւաբար, «ֆաղաֆն ալ այրեցին» բացատրութեամբ, Քրիստոս անուղղակիօրէն աշխարհի ակերումին եւ հրկիզումին մասին է որ կը խօսի, բան մը՝ որ տեղի պիտի ունենայ ժամանակներու աւարտին, իր երկրորդ գալուստին:

«Յետոյ թագաւորը ըսաւ իր ծառաներուն.- Հարսանիքը պատրաստ է, բայց հրաւիրեալները արժանի չէին: Հիմա հրապարակ գացէ՛ք եւ ո՛վ որ գտնէ՛ք՝ հրաւիրեցէ՛ք հարսանիքի» (Մտ 22.8-9): Քանի մը արագ հաստատումներ.-

1.- «Յետոյ թագաւորը ըսաւ իր ծառաներուն...»: Որո՞նք են այստեղ յիշուած ծառաները: Մեր Եկեղեցւոյ հայրերէն՝ Յովհաննէս Երզնկացի, ինչպէս նաեւ Ընդհանրական Եկեղեցւոյ հայրերէն եւ 4-րդ դարու հեղինակ՝ Որոգինէս, եւ ուրիշներ, կը բացատրեն որ այստեղ յիշուած ծառաները դարձեալ առաքեալներն են:

2.- «Հարսանիքը պատրաստ է»: Ասիկա երրորդ անգամն է որ կը հանդիպինք «պատրաստ» բառին: Բառ մը՝ որ կը յիշեցնէ մեզի թէ

Աստուծոյ արքայութիւնը, այլ խօսքով՝ փրկութիւնը, Աստուծոյ պարգե՛ւն է մեզի տրուած. պարգեւ մը՝ որ Աստուած ի՛նք մեզի ընծայեց իր ազատ կամքով եւ ո՛չ թէ մեր կատարած գործերուն համար:

3.- «Բայց հրաւիրեալները արժանի չէին»: Այո՛, հրաւիրեալները, որ առաջին հերթին հրեաները իրենք էին՝ արժանի չէին Աստուծոյ թագաւորութիւնը ժառանգելու, քանի անոնք երկրաւոր ու Դաւիթեան թագաւորութիւն մը կը փնտռէին եւ ո՛չ թէ երկնաւոր եւ աստուածային թագաւորութիւն մը: Քննե՛նք մեր անձերը: Գուցէ մենք եւս Քրիստոսի ժամանակակից հրեաներուն նման երկրաւոր թագաւորութիւն հաստատելու հետամուտ ենք փոխանակ Աստուծոյ թագաւորութիւնը ընդգրկելու: Ոեւէ մարդ որ կապուած է աշխարհին աւելի քան աշխարհի Ստեղծիչին՝ արժանի պիտի չըլլայ ժառանգելու Աստուծոյ արքայութիւնը:

4.- Հիմա հրապարակ գացէ՛ք եւ ո՛վ որ գտնէ՛ք՝ հրաւիրեցէ՛ք հարսանիքի»: Ասիկա երրորդ անգամն է որ թագաւորը ծառաներ կը դրկէ մարդիկը հրաւիրելու իր որդիին հարսանիքին: Երեք անգամ դրկելը, ցոյց կու տայ որ Քրիստոս մնայուն կերպով եւ անդուօրէն կը հետապնդէ մարդոց փրկութիւնը: Ան բնա՛ւ չի դադրիր մարդոց սրտին դուռը թակելէ (Յտ 3.20): Երբե՛ք չի դադրեցներ իր հովիւի սրինգին ձայնին հնչումը, որպէսզի կորսուած ոչխարները լսեն անոր ձայնը եւ դարձի գան:

5.- Երկու անգամ հրաւեր գնաց եւ հրաւիրեալները մերժեցին ընդառաջել: Ասիկա երրորդ հրաւերն է որ կը դրկուի: Ինչպէս ասկէ առաջ ըսինք, առաջին հրաւերը ուղղուած էր հրեաներուն՝ մարգարէներուն միջոցաւ, երկրորդ հրաւերը դարձեալ ուղղուած էր հրեաներուն՝ այս անգամ առաքեալներուն միջոցաւ: Բայց երբ առաջին եւ երկրորդ հրաւերները մերժեցին հրեաները, երրորդ այս հրաւերը դարձաւ սեփականութիւնը ամբողջ մարդկութեան, բան մը որ հարկաւ տեղի ունեցաւ Քրիստոսի համբարձումէն եւ Հոգեգալուստէն ետք միայն:

Նոր Կտակարանին մէջ բազմաթիւ են այն վկայութիւնները որոնք ցոյց կու տան թէ Աւետարանին քարոզութիւնը սեփականութիւնը եղաւ համայն մարդկային սերունդին: Յիշենք անոնցմէ քանի մը հատը միայն.-- Երբ Քրիստոս իր առաքեալները վերջնական առաքելութեան պիտի դրկէր՝ անոնց պատուիրեց «բոլոր ժողովուրդները» իրեն աշակերտ դարձնել (Մտ 28.19): Համբարձումէն անմիջապէս առաջ թելադրեց իր աշակերտներուն սպասել մինչեւ որ Սուրբ Հոգին ստանան, անկէ ետք երթալու եւ Աւետարանը քարոզելու «մինչեւ աշխարհի

ծայրամասերը» (Գրծ 1.8): Պօղոս առաքեալ կը յիշէ որ Քրիստոս իրեն առաքեալ ըլլալու շնորհքը տուաւ, որպէսզի իր անունին հաւատալու եւ հնազանդելու հրաւիրէ «բոլոր ազգերը» (Հո 1.5) եւայլն:

6.- «Հիմա հրապարակ գացէ՛ք»: Ի՞նչ պէտք է հասկնալ «հրապարակ» ըսելով: Երուսաղէմի հրապարակը այն բաժինն էր ուր միայն հրեաները չէ որ կը հաւաքուէին, այլ աշխարհի բոլոր անկիւններէն Երուսաղէմ եկող հեթանոսները, յատկապէս տօնական օրերու առիթով, վաճառականութիւն եւ առուծախ ընելու համար: Ծառաներուն հրապարակ դրկուիլը ցոյց կու տայ կամ կը պարզէ այն ինչ որ նախորդ կէտին մէջ յիշեցինք, թէ՛ Աւետարանը բոլոր ազգերուն ուղղուած իրականութիւն մը դարձաւ, քանի հրապարակը բոլոր ազգերուն տեղն էր, բոլոր ազգերէն ալ մարդիկ կային հոն: Որոգիներէս, ինք եւս կը բացատրէ որ հոս դրկուող ծառաները առաքեալներն են, որոնք դրկուեցան հրապարակ, այսինքն՝ հեթանոս աշխարհին:

7.- Այլ մեկնիչներ «հրապարակ» բացատրութեան ետին ուրիշ հետաքրքրական իմաստներ կը տեսնեն: Անոնք հրապարակը կը ներկայացնեն իբրեւ այն տեղը՝ ուր կ'ապրին անուս, տգէտ, անգրագէտ եւ պարզ ու հասարակ խաւին պատկանող մարդիկը: Այլ խօսքով, անոնք չեն պատկանիր սինակոկներուն, հրէական ժողովարաններուն, տանարներուն, այս կամ այն դպրոցին: Անոնք իրենց օրուան ապրուստին ետեւէն ինկած մարդիկ են, պարզամիտ ու պարզ մարդիկ: Եւ Աւետարանը ցիշդ այդպիսիներուն է որ կ'ուղղուի: Եւ այդպիսիները աւելի արագօրէն եւ աւելի դիւրութեամբ ականջ կու տան մշմարտութեան ձայնին եւ կ'ընդառաջեն փրկութեան կոչին: Բոլորս ալ գիտենք որ երկրի վրայ հարստութիւն չդիզած մարդիկ, այլ խօսքով՝ աշխարհին չկապուած մարդիկ, աւելի շուտ եւ աւելի արմատականօրէն կ'ընդառաջեն փրկութեան հրաւերին քան աշխարհին կապուած մարդիկը իրենք:

8.- «Ո՛վ որ գտնէ՛ք հրաւիրեցէ՛ք հարսանիքի»: Երկու նշումներ. --

ա.- Ուշագրաւ են «ո՛վ որ գտնէ՛ք» բառերը: Բառեր՝ որոնք ցոյց կու տան թէ փրկութեան հրաւերը ուղղուած է բոլոր մարդոց անխտիր (Ա.Տմ 2.3-4): Բառեր՝ որոնք կը փաստեն թէ Աստուած չէ սահմանած որ ոմանք կորսուին եւ ոմանք փրկուին, ինչպէս կարգ մը աղանդաւորներ կը կարծեն:

բ.- «Ո՛վ որ գտնէ՛ք հրաւիրեցէ՛ք հարսանիքի»: Տուեալ բառերով, կարծէք Յիսուս ըսել կ'ուզէ. «Ո՛վ որ գտնէ՛ք փրկութեան փափաքով լեցուն՝ բերէ՛ք փրկութեան: Ո՛վ որ գտնէ՛ք հոգեկան հանգիստ գտնելու յոյսով լեցուն՝ բերէ՛ք հանգիստի: Գացէ՛ք ու փնտոնեցէ՛ք: Եթէ գտնէ՛ք

մարդիկ որոնք խաղաղութիւն կը ցանկան՝ բերե՛ք զանոնք խաղաղութեան Իշխանին: Եթէ գտնէք մարդիկ մեղքէն ազատագրուիլ կ’ուզեն՝ բերե՛ք զանոնք Ազատարարին»:

«Ծառաները ցամբաները ելլելով՝ հաւաքեցին բոլոր անոնք որ գտան, թէ՛ չարերը եւ թէ՛ բարիները, եւ հարսանիքի սրահը լեցուեցաւ հրաւիրեալներով» (Մտ 22.10): Քանի մը կէտեր.–

1.– «Ծառաները ցամբաները ելլելով»: Որո՞նք են ցամբաները եղող մարդիկը: Ճամբաները եղող մարդիկը իրենց առաջնորդներուն կամ հովիւներուն կողմէ անտեսուած, մոռցուած եւ լքուած մարդիկն են: Ամենատեսք չ’անտեսեր անտեսուածը, չի՛ մոռնար մոռցուածը եւ չի՛ լքեր արդէն իսկ լքուածը: Աստուած բոլորին Աստուածն է, բայց թոյլ տուէ՛ք որ ըսեմ, Աստուած մանաւանդ Աստուածն է անտեսուածին, մոռցուածին, լքուածին, երեսի վրայ ձգուածին, անօթիին, ծարաւ, տառապեալ ու հիւանդ մարդուն: Արքայութեան հրաւերը ուղղուած է բոլորին, բայց մանաւանդ ասոնց, ցամբաները եղող մարդոց, եւ ասո՛նք են որ աւելի շուտով ու հաւատով կ’ընդառաջեն փրկութեան կոչին, որովհետեւ արդէն յոգնած են եւ փրկութեան ելք մը կը փնտոնեն:

2.– «Թէ՛ չարերը եւ թէ՛ բարիները»: Այս բառերը կը պարզեն եւ կը բացայայտեն որ փրկութեան հրաւերը ուղղուած է բոլոր մարդոց, բոլոր դասակարգերուն, անոնք ըլլան հարուստ թէ աղքատ, հասարակ մարդ թէ բարձր պաշտօն ու հանգամանք ունեցող մարդ, մեղաւոր թէ «անմեղ», հաւատացեալ թէ անհաւատ, եւ այլն: Պօղոս առաքեալ կը վկայէ որ «Աստուած... կ’ուզէ որ բոլոր մարդիկը փրկուին» (Ա.Տմ 2.4):

3.– «Հաւաքեցին... թէ՛ չարերը եւ թէ՛ բարիները, եւ հարսանիքի սրահը լեցուեցաւ հրաւիրեալներով»: Եթէ երբեք հոս յիշուած հարսանիքի սրահը արքայութիւնն է որ կը պատկերացնէ, այդ պարագային, հարց կը ծագի թէ ի՞նչպէս բարիներուն հետ չարերը իրենք՝ եւս կը յաջողին մուտք գործել արքայութիւն: Գիտնալու եւ գտնելու համար այս հարցումին պատասխանը, անհրաժեշտ է հետեւեալ երկու կէտերը նկատի առնել.–

ա.– Արքայութիւն ըսելով մենք չենք հասկնար միայն Քրիստոսի երկրորդ գալուստով հաստատուելիք աստուածային յաւիտեանական թագաւորութիւնը: Արքայութիւնը քանի մը իմաստներ ունի, որոնցմէ երեքը միայն այստեղ պիտի յիշեմ առանց բացատրութիւն տալու, որպէսզի նիւթիս ծիրէն չհեռանամ: Առաջին, արքայութիւն ըսելով կը հասկնանք նոյնիման Արքան՝ Քրիստոսը: Երկրորդ, արքայութիւնը նաեւ Քրիստոսի Եկեղեցին ի՛նքն է: Եւ երրորդ, արքայութիւնը Տիրոջ երկրորդ գալուստէն ետք սկիզբ առնող Աստուածալիր յաւիտեանականութիւնն է:

բ.– Հիմա պետք է նշել Մտ 22.10-ին մէջ յիշուած «հարսանիքի սրահը» որ արքայութեան պատկերացումն է, ո՞ր բաժնին մէջ կ'իյնայ. առաջի՞ն, երկրո՞րդ, թէ՛ երրորդ: Նախ ըսեմ որ մեր քննած առակին մէջ տեղ գտած են արքայութեան յիշեալ երեք երեսներն ալ:

Հաստատեցինք որ արքայութիւնը նոյնիման Արքան է՝ Քրիստոս, եւ ամբողջ առակին մէջ Քրիստոս ներկայ է, որովհետեւ արքայութեան հարսանիքը ի պատիւ իրեն է որ կը պատրաստուի, եւ ի մտի պետք է ունենալ որ 22.11-ին մէջ յիշուած Արքան կամ Թագաւորը Քրիստոս ի՛նքն է: Պէտք է գիտնալ նաեւ որ մեր ուսումնասիրած առակին 2–10 համարները կը խօսին արքայութեան (եկեղեցւոյ) ներկայ վիճակին մասին, իսկ 11–14 համարները՝ արքայութեան (եկեղեցւոյ) ապագայ վիճակին մասին: Ապագայ ըսելով կը հասկնամ Քրիստոսի երկրորդ գալուստէն եւ վերջին դատաստանէն ետք բացուող նոր ու յաւիտենական ժամանակաշրջանը:

Վերոյիշեալ խօսքը՝ «Հաւաքեցին... թէ՛ չարերը եւ թէ՛ բարիները, եւ հարսանիքի սրահը լեցուեցաւ հրաւիրեալներով» կը պատկանի եկեղեցւոյ ներկայ վիճակին եւ կը պատկերացնէ Քրիստոսի Եկեղեցիին ներկայ կացութիւնը: Ներկայիս, բոլորս ալ գիտենք որ Քրիստոսի Եկեղեցիին մէջ ինչ–ինչ կան, միասին կան, միատեղ կան, «թէ՛ չարերը եւ թէ՛ բարիները», թէ՛ հաւատացեալը եւ թէ՛ ամբարիշտը, թէ՛ հոգեւորը եւ թէ՛ ոչ–հոգեւորը: Նո՛յն այս նշմարութիւնը արտացոլացուած կը գտնենք որոմի առակին մէջ: Հոն եւս որոմն ու ցորենը միասին ու միատեղ կ'անին, եւ այդպէս ալ պիտի մնան մինչեւ Տիրոջ երկրորդ գալուստը, երբ «Մարդու Որդին իր հրեշտակները պիտի դրկէ, որոնք իր արքայութենէն պիտի հաւաքեն բոլոր անոնք որ գայթակղութեան պատճառ կ'ըլլան եւ չարիք կը գործեն» (Մտ 13.41):

«Նքք թագաւորը ներս մտաւ դիտելու համար հրաւիրեալները, տեսաւ մէկը որ հարսանիքի պատշաճ հագուստ չէր հագած» (Մտ 22.11): Քանի մը մատնանշումներ.–

1.– Այս համարէն սկսեալ Տիրոջ երկրորդ գալուստին մասին է որ կը խօսուի: Առակին սկիզբը (22.2) յիշուած թագաւորը ակնարկութիւն է մեր երկնաւոր Հօր, իսկ առակին աւարտին (22.11) յիշուած թագաւորը ակնարկութիւն է Քրիստոսի, որովհետեւ ատիկա ցոյց կու տայ թէ ինչպէս Քրիստոս դատաստան է որ կը կատարէ, եւ մենք գիտենք որ «Հայրը ոեւէ մէկը չի դատեր, այլ դատելու իշխանութիւնը ամբողջութեամբ յանձնած է Որդիին» (Յհ 5.22):

2.– «Ներս մտաւ դիտելու համար հրաւիրեալները»: Մեր երկնաւոր Հայրը ուզեց մարդկութիւնը հաշտեցնել իր անձին հետ եւ ատիկա

իրականացնելու համար գոհեց իր Որդին: Ժամանակներու աւարտին, Որդիին բացարձակ իրաւունքը պիտի ըլլայ աշխարհ գալ եւ տեսնել թէ որո՞նք ընդունեցին իր միջոցաւ շնորհուած հաշտութիւնը եւ որո՞նք չընդունեցին: Հետեւաբար, «Քաճաւորը ներս մտաւ» բացատրութիւնը, ակնարկութիւն է Տիրոջ երկրորդ գալուստին: Տէրը պիտի գայ իբրեւ թաճաւոր եւ մուտք պիտի գործէ իր Եկեղեցին, եւ հարկաւ ամբողջ աշխարհ:

3.- «Ներս մտաւ դիտելու»: Գիտնալէ ետք «ներս մտաւ» բառերուն իմաստը, հարց կու տանք թէ ի՞նչպէս պէտք է հասկնալ «դիտել» բացատրութիւնը: «Դիտել»ը՝ դատաստան ընել կը նշանակէ, ինչպէս կ'ըսէ Զարեհ Արք. Ազնաւորեան: Հարկաւ երբ կ'ըսեմք թէ Քրիստոս պիտի գայ եւ իր Եկեղեցին պիտի մտնէ, նիւթական Եկեղեցիին մասին չէ որ կը խօսիմ: Քրիստոս պարզապէս կ'ուզէ ցոյց տալ մեզի թէ ինք երբ աշխարհ գայ, իր դատաստանը իր Եկեղեցիէն, այլ խօսքով՝ իր հաւատացեալներէն եւ իր հաւատացեալներուն շարքին սպրդած կեղծ հաւատացեալներէն պիտի սկսի: Պետրոս առաքեալ ի՞նք եւս կը հաստատէ թէ դատաստանը Աստուծոյ տունէն պիտի սկսի. «Ժամանակն է որ դատաստանը սկսի, եւ սկսի Աստուծոյ տունէն» (Ա.Պտ 4.17):

4.- Ըսինք որ «դիտել»ը՝ դատաստան ընել կը նշանակէ: Հոս «դիտել» նաեւ կը նշանակէ քննել: Տէրը ի՞նքն է որ սիրտերը գիտէ ու կը քննէ եւ ո՛չ ոք կրնայ զինք խաբել: Հոս եկեղեցի յանախողներ կրնան զիրար խաբել, կրնան բարի ու հաւատացեալ ձեւանալ, բայց երբ Տէրը գայ «դիտելու», մէկը պիտի չկրնայ զինք խաբել՝ իր իսկական ինքնութիւնը ծածկելով:

5.- «Տեսաւ մէկը որ հարսանիքի պատշաճ հագուստ չէր հագած»: Այս տողին մէջ երեք կէտեր կան որոնք լոյսի տակ պէտք է բերել.–

ա.– «Տեսաւ մէկը»: Ի՞նչ կը բացայայտէ «տեսաւ» բառը: Կը բացայայտէ թէ Յիսուս ամէն ինչ պարզ ու յստակ կը տեսնէ, ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Զկայ արարած մը որ Աստուծոյ տեսողութենէն վրիպի: Անիկա պարզ ու յստակ կը տեսնէ ամէն ինչ, իրենց ամբողջ մերկութեամբ: Եւ անոր է որ հաշիւ պիտի տանք» (Եբր 4.13): Այո՛, Յիսուս կը տեսնէ մարդոց սրտին ու մտքին ամենէն խորունկ մտածումները եւ տեղեակ է անոնց կեանքի բոլոր մանրամասնութիւններէն:

Քրիստոսի ամենատեսութիւնը մեզ սարսափով ու մտահոգութեամբ պէտք չէ լեցնէ, ընդհակառակը, պէտք է մեզ վստահութեան շունչով եւ ապահովութեան զգացումներով լեցնէ: Հաւատացեալ մարդը երբ գիտնայ որ իր վրայ հսկող աստուածային

մշտարթուն աչք մը կայ՝ ատիկա գինք աւելի՛ ապահով ու խաղաղ կը պահէ, որովհետեւ գիտէ թէ աստուածային այդ աչքը իր կեանքին մէջ սխալներ փնտռող աչքը չէ, այլ՝ սիրող հօր մը աչքն է, մեր փրկութեան համար անժուան հսկող ֆաղցր եղբօր մը աչքն է:

բ.- «Տեսաւ մէկը»: "Մէկ" բացատրութիւնը պէտք է մտածել տայ մեզի: Արդե՞օք Քրիստոս ըսել կ'ուզէ թէ շատ քիչ մարդիկ միայն պիտի կորսուին: Նոյն այս առակին վերջին համարը կ'ըսէ. «Կանչուածները շատ են, բայց ընտրուածները՝ քիչ» (22.14): Այս համարը յստակօրէն ցոյց կու տայ, որ կորսուողներուն թիւը աւելի՛ պիտի ըլլայ քան փրկուողներուն թիւը: Եթէ ա՛յս է իրողութիւնը, այդ պարագային հարց կու տանք թէ ինչո՛ւ Քրիստոս կորսուողներուն կամ հարսանիքի հագուստ չհագուողներուն թիւը «մէկ» իբրեւ կը ներկայացնէ: Այս հարցումին պատասխանը գտնելը կարեւոր է:

Զարեհ Արք. Ազնաւորեան կը բացատրէ. «Եթէ ժամանակը նեղ կամ անբաւարար ըլլար, միայն «մէկ» հոգի չէր որ անպատրաստ պիտի ըլլար, այլ բազմաթիւ մարդիկ, բայց եթէ երբեք Քրիստոս անպատրաստ մարդոց թիւը «մէկ» իբրեւ կը ներկայացնէ, այդպէս կ'ընէ սորվեցնելու համար մեզի որ մարդիկ լայն ժամանակ ունին իրենք գիրենք պատրաստելու արժայութեան հարսանիքին, այլապէս պատկերը հակառակը պիտի ըլլար, այսինքն՝ պատրաստուող մարդոց թիւը պիտի ըլլար՝ մէկ, իսկ անպատրաստ մարդոց թիւը՝ անհաշիւ: Եթէ երբեք պատրաստուող մարդոց թիւը «մէկ» իբրեւ ներկայանար եւ միւս բոլորը անպատրաստ վիճակի մէջ ըլլային, այն ատեն իրաւունք պիտի ունենայինք մտածելու թէ ժամանակը խիտ է եւ մարդիկ անկարող են իրենք գիրենք պատրաստելու արժայութեան: Իսկ թէ ինչո՞ւ բոլորը ժամանակ ունեցան պատրաստուելու, բացի այս մէկ մարդէն, պատասխանը շատ պարզ է: Ան իր անտարբերութեան եւ անհաւատութեան զոհը գնաց»:

գ.- «Հարսանիքի պատշաճ հագուստ»: Ի՞նչ հագուստի մասին է խօսքը: Քրիստոսի արիւնով ներմկեցուած արդարութեան պատմութեան մասին է խօսքը: Յայտնութեան գիրքի 19-րդ գլուխին մէջ կը կարդանք ձիւնորի մը մասին, որ «կը կոչուի Հաւատարիմ եւ Ճշմարիտ... հագած էր պատմութեան մը որ արիւնով ներկուած էր. իր անունն է՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ: Երկինքի գօրքերը ներմակ ձիւնով իրեն կը հետեւէին՝ սպիտակ եւ մաքուր բեհեզներ հագած» (Յյտ 19.11, 13): Յստակ է որ հոս յիշուած «Հաւատարիմ եւ Ճշմարիտ» ձիւնորը Քրիստոս ինքն է, որուն անունն է՝ «ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԸ», իսկ «երկինքի գօրքերը»՝ Քրիստոսի հետեւորդներն են, որոնք «ներմակ ձիւնով իրեն կը հետեւէին՝ սպիտակ

եւ մաքուր բեհեզներ հագած»: «Պատշան հագուստը», հետեւաբար, Քրիստոսի կողմէ տրուած արդարութեան, այսինքն՝ արդարացած ըլլալու ապացոյցը եղող հագուստն է: Այս ներմակ հագուստը գոր արքայութեան հարսանիքին մասնակցիլ ուզողները պէտք է հագնին, պիտի տրուի միայն անոնց՝ որոնք յաղթանակ կ'արձանագրեն մեղքի դէմ իրենց մղած պայքարին մէջ (Յտ 3.5):

6.- Յովհան Ոսկեբերան խօսելով հարսանիքի պատշան հագուստ չհագած անձին մասին, կը բացատրէ թէ այս անձը կը ներկայացնէ այն մարդիկը՝ որոնք հոգ կը տանին իրենց արտաքինին, եւ սակայն, իրենց ներքին աշխարհը լեցուն է մեղքի ցնցոտիներով: Այսպիսիները կը նմանին ոսկեպատ պալատի մէջ բնակող այն անձին՝ որ թէպէտ ոսկեպատ պալատի մէջ է, բայց ինք մերկ նստած է անոր մէջ: Հարսանիքի հագուստը ներքին սրբութեան կեանքն է, որ ինքզինք պէտք է արտացոլացնէ գործերով: Անոնք որոնք պիղծ հագուստներով կը մտնեն հարսնետուն՝ աւելի՛ չար են քան այն մարդիկը որ հրաւեր ստացան եւ մերժեցին, որովհետեւ հրաւերը մերժողները՝ իրենց մերժողական կեցուածքով է որ հրաւիրող տէրը կ'անարգեն, մինչդեռ պիղծ հագուստներով հարսնետուն մտնողները՝ իրենց ներկայութեամբ է որ կ'անարգեն զանիկա, որ աւելի գէշ է, կ'եզրակացնէ Ոսկեբերան:

7.- Տարբեր-տարբեր ձեւերով հաստատեցինք որ հարսնետունը կը ներկայացնէ Քրիստոսի Եկեղեցիին ներկայ վիճակը: Այսօր ի՞նչպէս կը պատկերանայ Քրիստոսի Եկեղեցին: Քրիստոսի Եկեղեցիին մէջ չկա՞ն հարսանիքի թէ՛ պատշան հագուստ հագնողներ եւ թէ՛ անպատշան հագուստ հագնողներ, այլ խօսքով՝ եկեղեցի եկող բոլոր մարդիկը իրենց վրայ առած են փրկութեան պատմութեանը, բոլորը Քրիստոսի արիւնով սպիտակացած պատմութեանները զգեցած են: Նոյնիման առակը, յատկապէս 11-12 համարները ցոյց կու տան որ եկեղեցի յանախող ամէն մարդ փրկութեան ցամբուն մէջ չէ: Անոնց մէջ կան թէ՛ կորսուածներ եւ թէ՛ փրկուածներ, թէ՛ ներքնապէս ներմակ հագածներ, այսինքն՝ սրբուածներ եւ թէ՛ ներքնապէս մեղքի ցեխով ցեխոտածներ:

Պէտք է մեր ուշադրութենէն վրիպի որ առակը անուղղակիօրէն մեզի կը սորվեցնէ, որ աւելի լաւ է եկեղեցի չմտնել քան մտնել եւ զանիկա սրբապղծել: Եկեղեցւոյ մէջ պիղծ ու ամբարիշտ մարդոց ներկայութիւնն է որ թոյլ չի տար որ ներկայ հաւատացեալները վայելեն Աստուծոյ օրհնութիւնները: Անգիղջ, անապաշխար եւ աններողամտ մարդոց ներկայութիւնը կը խափանէ Աստուծոյ օրհնութիւնները, եւ արգելք կը հանդիսանայ որ Սուրբ Հոգիին կրակն ու օրհնութիւնը առատօրէն իջնէ ներկայ հաւատացեալներուն վրայ:

«Ու քսաւ անոր.– Բարեկա՛մ, ի՞նչպէս հոս մտար առանց հարսանիքի հագուստ ունենալու: Մարդը պապանձեցաւ» (Մտ 22.12): Մէկ-երկու նշումներ.–

1.– Ինչո՞ւ Քրիստոս խօսքը ուղղելով հարսանիքի պատշաճ հագուստ չհագած անձին, իր հարցումը կը սկսի գայն կոչելով՝ «բարեկամ»: Ցոյց տալու համար երկու բան.–

ա.– Ցոյց տալու համար որ Յիսուսի սրտի ցանկութիւնն է բոլորը իրեն բարեկամ դարձնել, բայց մարդիկ իրե՛նք է որ կը մերժեն բարեկամ ըլլալ Մե՛ծ Բարեկամին, իրական Բարեկամին՝ Յիսուսի:

բ.– Հարսանիքի հագուստ չհագած մարդուն համար «բարեկամ» բառին գործածութիւնը, ցոյց կու տայ նաեւ որ ոմանք իրենք զիրենք բարեկամ եւ Յիսուսի աշակերտ կը ձեւացնեն, ինչպէս ըրաւ Յուդա Իսկարիոտացին Յիսուսը «Վարդապետ» կոչելով (Մտ 26.49), բայց խորքին մէջ անոնք Տիրադաւ (Տէրը դաւանանող) եւ հաւատուրաց մարդիկ են:

2.– «Մարդը պապանձեցաւ»: Ահա ա՛յս պիտի ըլլայ բաժինը Տիրադաւ եւ հաւատուրաց մարդոց: Բնագիրին մէջ «պապանձիլ» բառին համար գործածուած εφίμωθη բառը ցոյց կու տայ խօսելու անկարող բացարձակ վիճակ մը:

Բոլոր անոնք որոնք եկեղեցի կը յաճախեն, որոնք կը լսեն Աստուծոյ խօսքին բարոգութիւնը, որոնք կը հաղորդուին Տիրոջ մարմինով եւ արիւնով, եւ սակայն առանց հարսանիքի հագուստի են, այլ խօսքով, փրկութեան պատմուհանը չեն առած իրենց վրայ, այնպիսիները բառ կամ խօսք պիտի չունենան որով կարենան իրենք զիրենք պաշտպանել դատաստանի օրը:

«Այն ատեն թագաւորը սպասաւորներուն քսաւ.– Կապեցէ՛ք անոր ոտքերն ու ձեռքերը եւ դուրսը խաւարին մէջ նետեցէ՛ք. հոն անիկա թող լայ եւ ակռաները կրնտէ» (Մտ 22.13): Հպանցիկ քանի մը հաստատումներ.–

1.– Հոս յիշուած սպասաւորները հրեշտակներն են, որոնք անդադար կը սպասաւորեն Քրիստոսի, եւ որոնց պարտականութիւն պիտի տրուի դատաստանի օրը չար մարդիկը գատելու արդար մարդոցմէն եւ զանոնք նետելու «բոցավառ հնոցի մէջ» (Մտ 13.50, տե՛ս նաեւ 41-42 համարները):

2.– «Կապեցէ՛ք»: Առաջին բառը զոր թագաւորը (Քրիստոս) կ'ըսէ իր սպասաւորներուն (հրեշտակներուն), «կապեցէ՛ք» բառն է: Ի՞նչ պէտք է հասկնալ «կապել» բացատրութեամբ: Քանի մը բան.–

ա.- Այստեղ կապելը բնականօրէն բառացիօրէն չենք հասկնար: Հոս «կապել» կը նշանակէ իսկ մեղաւորին ձեռքէն այն ազատութիւնը գոր Աստուած պարգեւած էր իրեն իր երկրաւոր կեանքի ընթացքին:

բ.- Կապելը նաեւ, մարդը անշարժութեան դատապարտել կը նշանակէ: Արդարեւ, գեհե՛ն նետուած մարդը՝ չի կրնար տեղէն շարժիլ, իրեն սահմանուած տանջանքի վայրէն դուրս գալ:

գ.- Քրիստոսի շնորհքն է որ կ'օգնէ մեզի որ քաղցինք, շարժինք, աշխատինք, իրագործենք: Մեղաւորը կապել, կը նշանակէ իսկ անկէ Քրիստոսի շնորհքը, եւ ուստի, գրկել զինք քաղելու, շարժելու, աշխատելու եւ իրագործելու կարողութենէն:

դ.- Վերջապէս, կապելը՝ մեղքի կապանքին տակ առնել կը նշանակէ: Անոնք որոնք չեն խոստովանած իրենց մեղքերը եւ չեն գղջացած ու չեն ապաշխարած անոնց համար, իրենց մահէն ետք, իրենց մեղքերուն կապանքներով է որ պիտի կապուին եւ նետուին յաւիտեանական գեհե՛նին մէջ:

3.- «Անոր ոտքերն ու ձեռքերը»: Քանի մը նշումներ.-

ա.- Յովհաննէս Երզնկացիին կը բացատրէ թէ «ոտքերն ու ձեռքերը» կապելը՝ գործելու կամ բարեգործելու ժամանակին վերջացած ըլլալը ցոյց կու տայ, ինչպէս քարայիկ տնտեսին առակին մէջ կ'ըսուի. «Բանուորութիւն չեմ կրնար ընել, մուրալու կ'ամչնամ» (Ղկ 16.3):

բ.- Երզնկացիին նաեւ կը բացատրէ թէ «ոտքերն ու ձեռքերը» կապելը՝ մարդուն տրուած շնորհքներն ու աստուածային պատկերը վերջնականապէս անոր ձեռքէն առնել կը նշանակէ:

գ.- Այն ոտքերը գոր սխալ քամբանքէ գացին՝ պիտի կաշկանդուին եւ դժոխքի քամբան պիտի բռնեն: Այն ձեռքերը որոնք գրկեցին ու անիրաւեցին, որոնք ցաւցուցին եւ մեղքով իրենց Տէրը գամեցին՝ այն ձեռքերը պիտի գամուին ու կապուին, պիտի այրին ու մրոտին:

4.- «Եւ դուրսը խաւարին մէջ նետեցէք»: «Դուրսը»: Այո՛, դուրսը: Արքայութենէն դուրս պիտի մնան բոլոր անոնք՝ որոնք դրսեցի եղած են եւ երբեք չեն սիրած անդամ դառնալ Քրիստոսի Մարմինին: Դու՛րս պիտի շարտուին, հեռո՛ւ արքայութենէն, հեռո՛ւ Արքայէն, հեռո՛ւ Արքային արքայագուն գաւակներէն:

5.- «Խաւարին մէջ նետեցէք»: Դուրս հանուելէ ետք՝ խաւարին մէջ պիտի նետուին: Աստուած յաւիտեանական լոյս է ու լոյսի արարիչ: Հեռացուիլ Աստուծմէ, կը նշանակէ լոյսէն հեռացուիլ, եւ ուստի, դատապարտուիլ յաւիտեանական խաւարի: Հոն ուր Աստուած չի թագաւորեր՝ խաւա՛ր է հոն, Չա՛րն է հոն: Ահա թէ ինչո՛ւ դժոխքը յաւիտեանական խաւար պիտի ըլլայ, թանձր ու յաւիտեանական մո՛լթը

պիտի պատէ գանիկա, որովհետեւ ասիկա Սատանային տեղը պիտի ըլլայ:

6.- «Նետեցէ՛ք»: Մեր երկնաւոր Հայրը Քրիստոսով փրկութեան պարգեւը տուաւ բոլոր մարդոց, բայց մարդոցմէ շատեր այդ պարգեւը վերստին Աստուծոյ երեսին նետեցին: Սիրելի՛ բարեկամ, ի՞նչ պիտի ընէիր կամ ի՞նչ պիտի գգայիր եթէ սիրոյ իբրեւ արտայայտութիւն պարգեւ մը տայիր անձի մը եւ այդ անձը տուած պարգեւդ երեսիդ նետէր: Անգիղջ մեղաւորները պէտք է գիտնան որ եթէ երբեք փրկութեան պարգեւը չեն ընդունած իրենց կեանքին մէջ՝ անոնք այդ պարգեւը Աստուծոյ երեսին նետող մարդիկ են: Եւ Աստուած իրենց ըրածին համար լուռ պիտի չմնայ, այլ ժամանակ պիտի գայ, երբ ինքն ալ իր կարգին հրաման պիտի տայ իր հրեշտակներուն նետելու անգիղջներն ու ամբարիշտները գեհեմի բոցին մէջ:

7.- «Հոն անիկա թող լայ»: Լալը յաւիտեանական սուգի ու ողբի պատկերացումն է, երկրի վրայ ապրուած մեղաւոր ու սխալ կեանքի մը համար ապրուած յաւերժական գոշումի արտայայտութիւն է:

8.- «Եւ ակոսները կրնտէ»: Ակոսները կրնտելը՝ ներքին խղճահարութեան պատճառած խիստ ցաւի մը արտայայտութիւն է: Անոնք որոնք չեն անսար իրենց խղճի ձայնին եւ որոնք կը լոնցնեն իրենց խղճի ձայնը, պէտք է գիտնան որ ժամանակ պիտի գայ երբ իրենց խղճի ձայնը ինք պիտի լոնցնէ գիրենք եւ լոնցնէ ու պապանձեցնէ յաւիտեանապէս: Խիղճը պիտի չխղճայ մեզի եթէ չխղճանք իրեն: Եթէ մենք անտարբեր ըլլանք մեր խղճին նկատմամբ՝ լաւ գիտնանք որ մեր խիղճը ինք ո՛չ միայն անտարբեր պիտի ըլլայ մեզի հանդէպ, այլ պիտի տանջէ ու տառապեցնէ մեզ, պիտի կսկծեցնէ ու չարչարէ մեզ:

«Որովհետեւ կանչուածները շատ են, բայց ընտրուածները՝ քիչ»
(Մտ 22.14):

Այս խօսքը բացարձակ շիտակ է: Այսօր երբ կը նայինք աշխարհի մէջ գոյութիւն ունեցող բոլոր եկեղեցիներուն, կը տեսնենք եւ գիտենք, որ եկեղեցի յաճախող մարդոց մեծ տոկոսը կապ չունի Աստուծոյ հետ, ո՛չ ապաշխարած է, ո՛չ ալ Սուրբ Հոգիով նորոգուած ու կենդանացած, ո՛չ սրտի խաղաղութիւն ունի եւ ո՛չ ալ մտքի նորոգութիւն:

Եկեղեցիէն աւելի ես կը ցաւիմ «հոգեւոր եղբայրակցութիւն» կոչուած «խմբակներուն» համար: Կը ցաւիմ, որովհետեւ միշտ սիրած ու պաշտպանած եմ գիրենք, եւ պիտի շարունակեմ սիրել: Բայց սէրը չի կուրցնէր զիս եւ ճշմարտութիւնները տեսնելու անկարող չի դարձներ: Այսօր «հոգեւոր եղբայրակցութիւն»ները նահանջի մէջ են հոգեւորապէս: Խօսքս հարկաւ բոլորին մասին չէ: Անոնցմէ ոմանք լաւ

ընթացքի մէջ են, ուրիշներ սխալ ընթացքի մէջ են, ուրիշներ գաղջ են, եւ տակաւին ուրիշներ՝ բոլորովին անհոգ ու անհոգի դարձած: Կան «Հոգեւոր եղբայրակցութիւն»ներ յամախող բազմահարիւր անձեր որոնք անհունօրէն հեռու են նշմարտութենէն, որոնք բնա՛ւ կապ չունին Աստուծոյ հետ, որոնք երբե՛ք չեն առաջնորդուիր Սուրբ Հոգիով, եւ որոնք անակնկալի պիտի գան երբ տէրերու Տէրը Քրիստոս յայտնուի:

Երբ Յիսուս վերադառնայ աշխարհ դատաստանի համար, շատեր որոնք կը կարծեն թէ փրկուած են՝ պիտի տեսնեն որ կորսուած են: Շատեր որոնք կը խորհին թէ իրենք նշմարտութեան ցամաքուն մէջ են՝ հանդէս պիտի գայ որ ստութեան ցամաքուն մէջ են: Շատեր որոնք ձեռքեր կը բարձրացնեն եւ Տէրը կը փառաբանեն՝ պիտի զարմանան երբ տեսնեն որ իրենց ձեռքերը կապուեցան եւ դժոխք նետուեցան: Ասոնցմէ շատեր գիտեն որ սխալ ընթացքի մէջ են եւ կը յամառին սխալ ընթացքի մէջ մնալ: Իսկ ուրիշներ կը ձեռացնեն թէ իրենք իսկական քրիստոնեաներ են, բայց իսկութեան մէջ չեն: Տակաւին ուրիշներ խաբուած են Սատանային կողմէ. Սատանան համոզած է զիրենք որ իրենք փրկուած են:

Աստուած վկայ՝ է որ ինչ որ ըսի «հոգեւոր եղբայրակցութիւն»ներուն մասին՝ սիրոյ հոգիով ըսի, որովհետեւ իսկապէ՛ս կը սիրեմ զիրենք, եւ որովհետեւ կը սիրեմ, կ'ուզեմ, կը փափաքիմ եւ կ'աղօթեմ որ բոլորն ալ ապրին Սուրբ Հոգիին նորոգութիւնն ու լեցունութիւնը, բոլորն ալ ապրին Սուրբ Հոգիին մկրտութիւնը եւ վայելեն անոր օծութիւնն ու օրհնութիւնը: Քանի որ «հոգեւոր» կը կոչուին՝ թող ապրի՛ն այդ հոգեւորութիւնը: Քանի որ «եղբայրակցութիւն» կ'անուանուին՝ թող իրակա՛ն եղբայր ըլլան իրարու: Եւ աղօթե՛ն, Սուրբ Հոգիի կրակո՛վ աղօթեն, քաջ գիտնալով որ Քրիստոսի մարմինը՝ եկեղեցին, իրենց աղօթքո՛վ է որ պիտի զօրանայ ու նորոգուի:

Սիրելի՛ հոգեւոր եղբայրներ եւ բոյրեր, քննե՛նք մեր անձերը եւ տեսնե՛նք թէ իսկապէս շիտա՞կ ցամաքուն մէջ ենք, կ'ապրի՞նք Աստուծոյ ներկայութեան մէջ, լեցո՞ւն ենք Սուրբ Հոգիով, կ'առաջնորդուի՞նք Սուրբ Հոգիով, իսկ եթէ կը հաստատենք թէ ունինք Սուրբ Հոգիին լեցունութիւնն ու առաջնորդութիւնը՝ ինչո՞վ կրնանք փաստել ատիկա: Ամէն ինչ իր փաստը ունի: Սուրբ Հոգիով լեցուած եւ առաջնորդուած ըլլալն ալ իր փաստն ու ապացոյցը պէտք է ունենայ: Փաստը կամ ապացոյցը որ Սուրբ Հոգիով լեցուած ենք եւ Սուրբ Հոգիով կ'առաջնորդուինք՝ ունենալն է մեր կեանքերուն մէջ անոր արդիւնքները: Իսկ ի՞նչ են անոր արդիւնքները: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Սուրբ Հոգիին արդիւնքներն են՝ սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, համբերատարութիւն, ազնուութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեղութիւն,

ժուժկալութիւն» (Գղ 5.22-23): Սուրբ Հոգիով լեցուած եւ առաջնորդուող մարդը, Սատանային եւ անոր չար արքանեակներուն վրայ իշխանութիւն ունեցող մարդն է նաեւ (տե՛ս Մր 16.17: Ղկ 10.18-20):

«Որովհետեւ կանչուածները շատ են, բայց ընտրուածները՝ քիչ»: Այս խօսքին վերաբերեալ երեք կակիրն հաստատումներ եւս.–

1.–Քրիստոս այս խօսքը չ'ըսեր որպէսզի ցոյց տայ մարդոց թէ շատ դժուար է արքայութիւն մտնել, եւ ուստի՝ յուսահատութեան մատնէ մարդիկը, ընդհակառակը, իր այս խօսքով, Յիսուս կ'ուզէ մարդիկը մղել աշխատանքի ու պայքարի, նգնելու ու տփնելու, աղօթելու ու հսկելու: Յիսուս կը հաստատէ որ ընտրուածները քիչ են, որպէսզի մենք ջանամք ընտրեալներուն շարքին ըլլալ, մանաւանդ, որպէսզի զգո՛յշ ըլլանք եւ ֆննենք մեր անձերը, տեսնելու համար թէ իսկապէս հաւատքի կեանք կ'ապրի՞նք, թէ պարզապէս փրկուած ըլլալու խաբկանքը կ'ապրինք:

2.– «Կանչուածները շատ են»: Խորքին մէջ, բոլոր մարդիկը կանչուած են փրկութեան: «Աստուած... կ'ուզէ որ բոլոր մարդիկը փրկուին» (Ա.Տմ 2.3-4): Յիսուսի խօսքը. «Ինձի՛ եկէ՛ք...» (Մտ 11.28) միայն ոմանց չի պատկանիր, այլ՝ բոլորին: Թէ ինչո՛ւ բոլորը կը կանչուին բայց միայն քիչերը կ'ընտրուին, պատճառը այն է՝ որ «դէպի կեանք տանող դուռը նեղ է եւ նամբան դժուարին» (Մտ 7.14), եւ մարդիկ չեն սիրեր նեղ դռներու ու դժուարին նամբաներու հանդիպիլ, չեն ուզեր արգելքներու եւ խոչընդոտներու հանդիպիլ. մարդիկ հակամէտ են միշտ դիւրինը ընտրելու, հանելին ընտրելու: Ահա թէ ինչո՛ւ քիչ պիտի ըլլայ ընտրեալներուն թիւը: Արքայութիւնը հոգեւորապէս պայքարող մարդոց տեղն է եւ ո՛չ թէ պայքարէն փախչող մարդոց տեղը:

3.– Հարկաւ երբ Յիսուս կը հաստատէ թէ ընտրեալներուն թիւը քիչ պիտի ըլլայ, խօսքը բառացիօրէն պէտք չէ հասկնալ: Ան ըսել չ'ուզեր թէ փրկուածները քանի մը հազար կամ քանի մը միլիոն հոգի պիտի ըլլան: Փրկուածներուն թիւը անհաշիւ պիտի ըլլայ: Բայց անոնք «քիչ» կը կոչուին կամ «քիչ» կը նկատուին համեմատաբար կորսուածներուն, որոնց թիւը շատ աւելի պիտի ըլլայ քան փրկուածներուն թիւը:

Ուստի, դուք ջանացէ՛ք ընտրեալներուն շարքին ըլլալ: Եթէ ընտրէ՛ք Տէրը՝ Տէրն ալ ձեզ պիտի ընտրէ: Սոյն համարին մէջ տեղ գտած «ընտրեալ» բառին եւ անոր հասկացողութեան մասին ընդարձակօրէն խօսած եմ Ղուկաս 18.7-ը բացատրած ատեն:

ՉԱՐ ՄՇԱԿՆԵՐՈՒՆ ԱՌԱԿԸ

«Կալուածատէր մարդ մը կար, որ այգի մը տնկեց, չորս կողմէն ցանկապատեց, հնձանի համար փոսը փորեց, աշտարակ մըն ալ շինեց եւ գայն վարձու տուաւ մշակներու, իսկ ինք ուրիշ երկիր մեկնեցաւ: Երբ այգեկութի ժամանակը եկաւ, իր ծառաները դրկեց մշակներուն մօտ՝ բերքէն իր բաժինը առնելու համար: Մշակները ծառաները բռնեցին, մէկը ծեծեցին, միւսը սպաննեցին, ուրիշ մըն ալ քարկոծեցին: Այգիի տէրը դարձեալ ծառաներ դրկեց, նախկինէն շատ աւելի թիւով, բայց ասոնց ալ նոյնը ըրին: Ամենէն վերջը իր որդին դրկեց անոնց՝ մտածելով. «Թերեւս իմ որդիէս պատկառին»: Բայց մշակները երբ տեսան որդին՝ իրենք իրենց ըսին. «Ասիկա է ծառանգորդը, եկէք սպաննենք գայն, որպէսզի անոր ծառանգութեան տիրանանք»: Ուստի այգիէն դուրս հանեցին գայն եւ սպաննեցին:

Եւ Յիսուս հարցուց.

– Արդ, երբ այգիին տէրը գայ, ի՞նչ պիտի ընէ այդ մշակներուն:

Անոնք պատասխանեցին.

– Վատահաբար այդ չար մարդիկը չարաչար պիտի սպաննէ եւ այգին վարձու տայ ուրիշ մշակներու, որոնք բերքի իր բաժինը ժամանակին պիտի տան իրեն:

Ապա Յիսուս ըսաւ.

– Սուրբ գիրքերուն մէջ չէ՞ք կարդացած.–

«Այն քարը որ շինողները մերժեցին գործածել,

ինք անկիւնաքարը եղաւ:

Ասիկա Տէրը կատարեց,

ու մեր աչքերուն սփանչելի է»:

Ով որ այդ քարին զարնուի՝ պիտի խորտակուի, եւ որուն վրայ որ անկա իյնայ՝ պիտի ճգմէ գայն: Ասոր համար կ'ըսեմ ձեզի, թէ Աստուծոյ արքայութիւնը ձեզմէ պիտի առնուի եւ տրուի ժողովուրդի մը, որ պտղաբեր կը դարձնէ գայն» (Մտ 21.33-44):

«Կալուածատէր մարդ մը կար, որ այգի մը տնկեց, չորս կողմէն ցանկապատեց, հնձանի համար փոսը փորեց, աշտարակ մըն ալ շինեց եւ գայն վարձու տուաւ մշակներու, իսկ ինք ուրիշ երկիր մեկնեցաւ»
(Մտ 21.33): Քանի մը հակիրճ հաստատումներ.–

1.– Յովհաննէս Երզնկացի կը հաստատէ թէ հոս յիշուած կալուածատէրը մեր երկնաւոր Հայրը ինքն է:

2.- Յունարէն բնագիրին մէջ «կալուածատէր» բառին համար գործածուած է («ΟΙΚΟΔΕΣΠΟΤΗΣ» իֆօտէսփոթիս) բառը, որ չի նշանակեր «կալուածատէր», այլ՝ «տանտէր»: Գրաբարի մէջ եւս «տանտէր» բառն է որ գործածուած է: Որ բառն ալ նկատի առնենք, «կալուած», թէ՛ «տուն», յստակ է որ ատիկա կը ներկայացնէ աշխարհը: Աստուած ի՛նքն է տէրը այս աշխարհին: Աշխարհ մարդուն կալուածը չէ, մարդուն սեփականութիւնը չէ: Ատիկա Աստուծոյ կալուածն է՝ տրուած Աստուծոյ կողմէ մարդուն: Աշխարհը մարդուն տրուեցաւ իբրեւ տուն, բայց այդ տունին տէրը Աստուած ի՛նքն է եւ ո՛չ թէ մարդը, միշտ անոր համար ալ Աստուած տանտէր կը կոչուի բնագիրին մէջ:

3.- «Այգի մը տնկեց»: Տնկողը Աստուած է (Սղ 80.15), իսկ տնկուած այգին՝ Իսրայէլի ժողովուրդն է. ատոր ապացոյցը նոյնինքն Աստուածաշունչը կու տայ: Սաղմոսագիրը կ'ըսէ. «Եգիպտոսէն որթատունկ մը փոխադրեցիր, հեթանոսները վոնտեցիր ու զանիկա տնկեցիր» (Սղ 80.8): Եգիպտոսէն փոխադրուած որթատունկը որուն մասին կը խօսի բնագիրը՝ Իսրայէլի ժողովուրդն է: «Հեթանոսները վոնտեցիր ու զանիկա տնկեցիր»: Բոլորս ալ գիտենք այն հեթանոս ազգերուն, ցեղերուն եւ ժողովուրդներուն մասին, որոնք վոնտուեցան Իսրայէլացիներուն ներկայութենէն Աստուծոյ միջամտութեամբ, եւ որոնց փոխարէն Աստուած Իսրայէլի ժողովուրդը տնկեց, այլ խօսքով՝ հաստատեց Քանաանու երկրին մէջ:

4.- Ինչո՞ւ Իսրայէլի ժողովուրդը այգիի կը նմանցուի եւ ոչ պարզ ծառի մը: Այգին խորհրդանիշ նկատուած է Աստուծոյ թագաւորութեան: Քրիստոս ինքզինք կը կոչէ «նշմարիտ որթատունկը» (Յհ 15.1): Եթէ այգին նկատուած է խորհրդանիշ Աստուծոյ թագաւորութեան եւ եթէ Քրիստոս ինքն է որթատունկը այդ այգիին, ուրեմն, երբ Քրիստոս Իսրայէլի ժողովուրդը այգի կը կոչէր, խորհիմ մէջ, կ'ուզէր ցոյց տալ իրենց, որ անոնք կոչուած էին Աստուծոյ այգին, այսինքն՝ թագաւորութիւնը կազմելու, այնպիսի թագաւորութիւն մը՝ որուն որթատունկը, այսինքն՝ թագաւորը Քրիստոս ինք պէտք էր ըլլար: Արդարեւ, հրեաներ պէտք էր նանչնային Քրիստոսի թագաւոր ըլլալը՝ բայց չնանչցան:

5.- «Չորս կողմէն ցանկապատեց»: Ըսինք, այգին կը ներկայացնէ Իսրայէլի ժողովուրդը: Ի՞նչ պէտք է հասկնալ «չորս կողմէն ցանկապատեց» Իսրայէլի ժողովուրդը խօսքով: Երկու կէտ.–

ա.– «Չորս կողմէն ցանկապատել» Իսրայէլի ժողովուրդը, կը նշանակէ ամէն իմաստով պաշտպանութիւն եւ պահպանութիւն շնորհել անոր, յատկապէս թշնամիներու յարձակումներուն դիմաց:

բ.– «Չորս կողմէն ցանկապատել» Իսրայէլի ժողովուրդը, կը նշանակէ նաեւ բաժնել կամ գատել գանձնի հեթանոս աշխարհէն, վերածելու համար գանձնի միաստուածեան ազգի մը, անոնց միջոցաւ միաստուածութեան հաւատքը տարածելու ամենուրեք:

Փորձենք տուեալ երկու (ա) եւ (բ) կէտերը հոգեւոր իմաստով մը հասկնալ եւ գանձնի կապել մեր այսօրուան կեանքին: Ներկայ հասկացողութեամբ, Իսրայէլի ժողովուրդը՝ քրիստոնեաները իրենք են, կամ աւելի նշգրիտ ըլլալու համար՝ Քրիստոսի Եկեղեցին է: Այո՛, այգի կը ներկայացնէ Քրիստոսի Եկեղեցին: Եւ մեր երկնաւոր Հայրը, «չորս կողմէն ցանկապատած» է իր Որդիին Եկեղեցին, այսինքն՝ պաշտպանած ու պահպանած է գայն ընդդէմ մեղքին եւ մեղքի ծնունդ տուողին՝ Սատանային, ընդդէմ աշխարհին եւ աշխարհային հոսանքներուն:

Քրիստոսի Եկեղեցին պէտք է իր դուռը լայն բանայ աշխարհի դիմաց եւ բոլոր մարդիկը իր գիրկը հրաւիրէ: Եկեղեցին դուռը բանալ աշխարհին դիմաց, չի նշանակեր եկեղեցիին դուռը բանալ աշխարհային հոսանքներու դիմաց: Եթէ եկեղեցին իր դուռը կը բանայ աշխարհային հոսանքներու դիմաց՝ ատիկա եկեղեցիին սխալն է եւ ո՛չ թէ Աստուծոյ, եւ եկեղեցին հաշուետու պիտի ըլլայ Աստուծոյ, միշտ ինչպէս առակը ցոյց կու տայ:

Առակը կը պարզէ որ Իսրայէլի ժողովուրդը ինքզինք կործանումի առաջնորդեց այգիի գործին հանդէպ իր ցուցաբերած անպատասխանատու վերաբերմունքին համար (21.34–36), ինչպէս նաեւ, այգիին տիրոջ՝ Աստուծոյ Որդիին հանդէպ իր անգուր Վերաբերմունքին պատճառով (21.37–39): Եկեղեցին ինք եւս, ինքզինք կործանումի կ'առաջնորդէ երբ չ'ըներ կամ կը թերանայ աստուածատուր իր պարտականութեան եւ առաքելութեան կատարմանը մէջ, եւ մանաւանդ, երբ իր ակնջները կը փակէ Քրիստոսի կոչին եւ խօսքին դիմաց:

6.– «Հնձանի համար փոսը փորեց, աշտարակ մըն ալ շինեց»: Երբ Աստուած Իսրայէլի ժողովուրդը հաստատեց իբրեւ այգի մը, գանիկա չհաստատեց անպատրաստ եւ անգործածելի վիճակով մը: Աստուած անոր մէջ հնձանի տեղ պատրաստեց, ինչպէս նաեւ աշտարակ մը շինեց: Այս երկու բացատրութիւններով, նախ ըսել ուզուածը այն է՝ որ Աստուած Իսրայէլին գործելու ամէն կարելիութիւն տուաւ: Հոսկէ կը սորվինք, որ Աստուած գործ մը չի յանձնէր մեզի, առանց այդ գործը կատարելու ամէն կարելիութիւն եւ ամէն կարողութիւն շնորհելու: Աստուած ո՛չ միայն գործը կու տայ, այլ նաեւ գործին հետ՝ գործը կատարելու գորութիւն ու կարողութիւն ալ կու տայ:

Աստուած նեցուկ կը կանգնի մեզի երբ ինքն է մեզ գործի դրկողը: Իսկ ինքնագուխօրէն ինքզինք Աստուծոյ գործունէութեան դաշտը նետող մարդը՝ երբեք չի վայելեր Աստուծոյ զօրակցութիւնն ու օգնականութիւնը: Իսկ երբ հանդիպի դժուարութիւններու՝ առանձին է այդ դժուարութիւններուն դիմաց. իսկ եթէ առանձին է՝ շուտով ընկրկում եւ նահանջ կ'արձանագրէ:

7.- Ինչո՞ւ առակը կը խօսի հնձանի մասին եւ ի՞նչ է հնձանը: Հնձանը այգիներու մէջ այն տեղն է կամ այն փոսն է, ուր կը դրուի խաղողը ոտքով քնկելու համար գայն: Հետեւաբար, երբ Յիսուս կը հաստատէ թէ այգիին տէրը (Աստուած) «Հնձանի համար փոսը փորեց», յստակօրէն ցոյց կու տայ, որ Աստուած Իսրայէլի ժողովուրդին գործեր եւ պարտականութիւններ յանձնած էր անցեալին, գորս Իսրայէլացիները պէտք էր կատարէին, որ սակայն չըրին:

Նման հնձաններու մէջ, անցեալին ընդհանրապէս գինի կը պատրաստուէր եւ գինին երկու բաներու խորհրդանիշ կը ներկայանայ Հին Կտակարանի մէջ, որոնց մասին կարելու է գիտնալ, որովհետեւ կապ ունին առակին հետ եւ անոր ծածուկ ու հարուստ մեկնութիւնը կը կազմեն.–

ա.– Գինին Հին Կտակարանի մէջ կը նախապատկերացնէ Քրիստոսի արիւնը, եւ մանաւանդ, անոր գոհագործական մահը: Ծննդոց գիրքին 49.10-ին մէջ կը կարդանք Սելովին մասին: Ո՞վ է Սելովը եւ ի՞նչ կը նշանակէ Սելով: Սելովը Քրիստոս ինքն է, եւ Սելով կը նշանակէ՝ Խաղողը: Սելովին համար կ'ըսուի թէ «ժողովուրդները անոր պիտի հնազանդին. իր աւանակը որթատունկին պիտի կապէ...», իր պատմութեանը գինիով պիտի լուսայ եւ իր հանդերձը խաղողի արիւնով» (Ծն 49.11-12): «Հանդերձը խաղողի արիւնով» լուսալ բացատրութիւնը յստակ որ Քրիստոսի գոհագործական մահուան կ'ակնարկէ:

Հին Կտակարանեան ժամանակներուն, Իսրայէլի ղեկավարները պարտաւոր էին իրենց ժողովուրդի գաւակներուն խօսելու գալիք Մեսային մասին եւ պատրաստելու զիրենք անոր գալուստին, բայց չըրին, այլ խօսքով, անոնք չգործածեցին այն հնձանը որ Աստուած դրած էր իրենց կեանքին մէջ: Ո՞չ ալ Քրիստոսի ժամանակակից հրեայ ղեկավարները այդ գործը ըրին, միշտ անոր համար, Յիսուս խօսեցաւ իրենց այս առակը, ցոյց տալու համար իրենց՝ իրենց անտարբերութիւնը Աստուծոյ կողմէ իրենց յանձնուած հնձանին հանդէպ, այսինքն՝ խոստացեալ Մեսայի աւետիսը տարածելու եւ ծանուցելու իրենց պարտականութեան հանդէպ: Անոնք պէտք էր հնձանը կոխէին, այսինքն՝ յատուկ աշխատանք տանէին ժողովուրդը

պատրաստելու որ ընդունին Փրկիչ Քրիստոսը, բայց չըրին, եւ ատիկա իրենց հասկցնելու համար էր որ Յիսուս պատմեց այս առակը:

բ.– Գինին Հին Կտակարանի մէջ ուրախութեան նշանակ է (Յս 25.6: Ժդ 9.7 եւլն), ուստի անոր վերջանալը՝ սուգի կը մատնէ մարդիկը (Յվլ 1.5): Բայց իսոսքը պատահական կամ աշխարհային ուրախութեան մասին չէ, այլ՝ Աստուծոյ ներկայութեան ներշնչած ուրախութեան մասին: Աստուծոյ ներկայութիւնը արբեցնող գինիի նման է: Մնայուն կերպով Աստուծոյ ներկայութիւնը փնտոող, այդ ներկայութեան ձգտող եւ այդ ներկայութեան մէջ ապրող մարդը՝ կը լեցուի եւ կ'արբենայ Աստուծոյ սիրով, Աստուծոյ Հոգիով, Աստուծոյ շունչով:

Իսրայէլի դեկավար դէմքերը ճիգ չթափեցին ժողովուրդին տալու Աստուծոյ ներկայութեան գինին, որ պէտք էր պատրաստուէր Աստուծոյ իսկ կողմէ հաստատուած «հնձանին» մէջ: Կարգ մը մեկնիչներ հնձանը կը նկատեն խորհրդանիշ Վկայութեան Խորանին: Յիշեմք որ Աստուած իր Վկայութեան Խորանը հաստատեց ժողովուրդին մէջ, եւ ատիկա ցոյց կու տայ Աստուծոյ փափաքը իր ժողովուրդին հետ, իր ժողովուրդին մէջ եւ միջեւ ապրելու եւ բնակելու:

Աստուած կ'ուզէր որ Իսրայէլացիները ապրէին իր գինովցնող ներկայութեան մէջ, փնտոէին իր արբեցուցիչ ներկայութիւնը եւ համակուէին իր քաղցր ներկայութեամբ, բայց անոնց դեկավարները պատրաստ չէին Աստուածադիր հնձանին մէջ խաղող կոխելու եւ զանիկա գինիի վերածելու, այլ իսոսքով, պատրաստ չէին ժողովուրդը առաջնորդելու Աստուծոյ ներկայութեան, սորվեցնելու ժողովուրդին փնտոելու ու ցանկալ Աստուծոյ ներկայութիւնը:

8.– «Աշտարակ մըն ալ շինեց»: Ի՞նչ է աշտարակը: Աշտարակները սովորաբար քառակուսի կամ բոլորակաձեւ բարձր շէնքեր կ'ըլլան որոնք կրնան գործածուիլ զանազան նպատակներու համար. անոնք կը գործածուին յատկապէս սահմանապահ զինուորներու կողմէ փող հնչեցնելու եթէ քաղաքին մօտեցողներ կան, կամ ահագանգ հնչեցնելու եթէ վտանգ մը կայ. այս պարագայիս անոնք (աշտարակները) աւելի դիտարան կամ դիտանոց կը կոչուին:

Ի՞նչ կարելի է եզրակացնել «աշտարակ» բառին վերաբերեալ տրուած բացատրութենէն: Քանի մը բան.–

ա.– Աշտարակը հոս հոգեւոր իմաստ մը ունի. այգիին մէջ, այլ իսոսքով՝ Իսրայէլի ժողովուրդին կեանքին մէջ աշտարակին ներկայութիւնը, ցոյց կու տայ որ Աստուած անպաշտպան չէր ձգած Իսրայէլացիները: Ինչպէս աշտարակ բարձրացող զինուորը երբ քաղաքին մօտեցող վտանգ տեսնէր՝ անմիջապէս ահագանգ կը հնչեցնէր

եւ պահակագունդ գինուորները օգնութեան կը հասնէին, այնպէս ալ, (աշտարակ բառին գործածութեամբ Քրիստոս կ'ուզէ հասկցնել հրեաներուն թէ) երբ Աստուած նշմարէր Իսրայէլացիներուն մօտեցող եւ սպառնացող վտանգ մը՝ իսկոյն օգնութեան կը փութար, բայց Իսրայէլացիները իրենք անհաւատարիմ գտնուեցաւ Աստուծոյ հանդէպ, եւ ատոր իբրեւ հետեւանք, չվայելեցին Աստուծոյ պաշտպանութիւնը:

բ.- Իսրայէլացիները, կամ աւելի միշտ անոնց պատասխանատուները, երբեք չբարձրացան Աստուծոյ կողմէ իրենց այգիին (կեանքին) մէջ հաստատուած աշտարակին վրայ եւ զԱստուած օգնութեան չկանչեցին, չապաւինեցան Աստուծոյ, չվստահեցան Աստուծոյ: Աշտարակ չբարձրանալը՝ Աստուծոյ չապաւինիլ կը նշանակէ: Աշտարակ չբարձրանալը՝ զԱստուած օգնութեան չկանչել կը նշանակէ:

գ.- Իսրայէլացիները չօգտագործեցին այդ աշտարակը դիտելու ու տեսնելու իրենց հոգեւոր թշնամին՝ Սատանան, որ կուրցուց զիրենք եւ անկարող դարձուց Քրիստոսի անձին մէջ խոստացեալ ազատարար Մեսիային ներկայութիւնը տեսնելու:

դ.- Ըսինք, աշտարակը այն շէնքն է ուր պահակ գինուորը կը բարձրանայ նախագգուշացնելու համար իր ֆաղափ բնակիչները մերձեցող վտանգէն: «Աշտարակ» բառով հետեւաբար, կարծէք Յիսուս ուզեց ցոյց տալ աւագ ֆահանաներուն, Օրէնքի ուսուցիչներուն եւ Փարիսեցիներուն (Մտ 21.45), որ իրենք իրենց պաշտպանարար պարտականութիւնը չըրին ժողովուրդին հանդէպ, չզգուշացուցին ժողովուրդը: Անոնք պարտաւորութիւնը ունէին իրենց ազգի զաւակները սպառնալիցնելու մեղքին ու Չարին դէմ, բայց չըրին:

9.- «Զայն վարձու տուաւ մշակներու, իսկ ինք ուրիշ երկիր մեկնեցաւ»: Ամփոփ ֆանի մը նշումներ.-

ա.- «Զայն վարձու տուաւ»: Այս խօսքը ցոյց կու տայ որ Աստուած գործ եւ պարտականութիւն յանձնած էր Իսրայէլի ղեկավարներուն՝ Օրէնքի ուսուցիչներուն եւ ֆահանաներուն: Այդ պարտականութիւնն էր՝ աշխատիլ Աստուծոյ այգիին մէջ, այլ խօսքով՝ Իսրայէլի ժողովուրդին կեանքին մէջ եւ անոնց ֆայլերը ուղղել Աստուծոյ:

բ.- «Վարձու» բառը կը պարզէ նաեւ որ անոնց յանձնուած գործին տէրերը կամ գործին իշխանները իրենք չէին. իրենք պարզապէս «վարձուած» մարդիկ էին՝ որոշ գործ մը կատարելու համար:

գ.- «Վարձու տուաւ» բառերը ուրիշ կարեւոր իրողութիւն մը եւս կը բացայայտեն: Բան մը որպէսզի վարձու տրուի՝ պէտք է պատրաստ վիճակի մէջ ըլլայ, այլ խօսքով՝ գործածուելու ի վիճակի ըլլայ: Ըսել ուզածս այն է՝ որ Աստուած անպատրաստ այգի մը, խոպան եւ փշալից

այգի մը չտուաւ Իսրայէլի ժողովուրդին, այլ ի՛նք կատարեց գործին մեծ ու դժուարին բաժինը, այգի տնկեց, զանիկա ցանկապատեց, հնձան հաստատեց եւ աշտարակ շինեց: Ամէն ինչ կազմ ու պատրաստ յանձնեց Իսրայէլի ղեկավարներուն՝ բայց դարձեալ անոնք թերացան իրենց գործին մէջ:

դ.– Յովհաննէս Երզնկացի «ուրիշ երկիր մեկնեցաւ» բացատրութիւնը ակնարկութիւն կը նկատէ համբերատարութեան, գոր Աստուած ցուցաբերեց անցեալին Իսրայէլի հանդէպ:

ե.– «Ուրիշ երկիր մեկնեցաւ» խօսքին մէջ կարելի է ուրիշ իմաստ մը եւս տեսնել: Խօսքը կրնայ ցոյց տալ որ Աստուած գործ մը յանձնեց եւ վստահեցաւ քահանաներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն եւ ինք «ուրիշ երկիր մեկնեցաւ», այսինքն՝ ազատութիւն տուաւ անոնց գործելու հանգիստ կերպով. բռնակալ թագաւորի մը նման չկեցաւ անոնց գլխուն վրայ. կարելի է այստեղէն հոգեւոր կարեւոր դաս մը քաղել, որ հետեւեալն է.–

Երբ դարձի զանք Աստուծոյ եւ Աստուած նոր կեանք մը տայ մեզի, նոր գործ ու առաքելութիւն տայ մեզի, մեր տէրն ու թագաւորը ըլլայ, բնա՛ւ չի ստրկացնէր մեզ, չի՛ բռնանար մեր վրայ, այլ «ուրիշ երկիր կը մեկնի», այսինքն՝ ազատութիւն կու տայ, կը ձգէ որ մեր հաւատքի կեանքը ապրինք առանց կաշկանդումներու: Մարդիկ ընդհանրապէս այդպէս չեն ընէր: Երբ մարդոց իշխանութեան ենթակայ ըլլանք՝ անոնք ստրուկի պէս կ'ուզեն մեզ աշխատցնել, եւ բնա՛ւ «ուրիշ երկիր չեն երթար», այսինքն՝ հանգիստ եւ գործելու ազատութիւն չեն տար մեզի:

«Երբ այգեկութի ժամանակը եկաւ, իր ծառաները դրկեց մշակներուն մօտ՝ բերքէն իր բաժինը առնելու համար» (Մտ 21.34): Քանի մը հաստատումներ.–

1.– Աստուած իր ծառաները չդրկեց մշակներուն մօտ երբ տակաւին որթատունկերը նոր տնկուած էին, այլ դրկեց այգեկութի ժամանակ, երբ արդէն պտուղները հասունցած էին. ի՞նչ բանի մասին է խօսքը: Աստուած Իսրայէլի ժողովուրդը Եգիպտոսէն դուրս բերելէ ետք՝ անմիջապէս արդիւնք չսպասեց իրենցմէ: Պտուղ չպահանջեց իրենցմէ երբ տակաւին անապատին մէջ էին եւ անպտուղ վիճակի մէջ: Նախ մարգեց գիրենք անապատին մէջ: Սորվեցուց անոնց վստահիլ իրեն: Ո՛չ միայն ֆիզիքապէս կերակրեց գիրենք, այլեւ՝ հոգեպէս: Օրէնքներ տուաւ անոնց Մովսէսի միջոցաւ եւ դաստիարակեց գիրենք այդ օրէնքներով: Պատուիրեց հեռու մնալ կռապաշտներէն ու կռապաշտութենէն եւ սորվեցուց անոնց նշմարիտ աստուածաշտութեան նամբան: Առաջնորդեց գիրենք խոստացեալ Քանանու երկիրը: Վտարեց անոնց

անջեւէն Քանանացի եօթը ազգերը եւ անոնց մեծ բաժինը շարդել տուաւ: Ապա օգնեց անոնց որ ամբողջութեամբ գրաւեն Քանանը: Գրաւելէ ետք՝ Քանանը բաժնեց 12 ցեղերուն միջեւ: Հիմա որ այլեւս հաստատուած էին խոստացուած երկրին մէջ՝ Աստուծոյ բացարձակ իրաւունքը կը դառնար արդիւնք սպասելու իրենցմէ: Հիմա այլեւս պէտք էր հնազանդէին Աստուծոյ եւ Աստուծոյ սուրբ կամքը կատարելը՝ իրենց միակ նպատակը պէտք էր դարձնէին: Եւ Աստուած գիտէր այս մէկը: Ահա թէ ինչու «իր ծառաները զրկեց մշակներուն մօտ՝ բերքէն իր բաժինը առնելու համար»: Հոս յիշուած ծառաները մարգարէները իրենք են, մշակները՝ քահանաներն են, իսկ բերքը՝ հաւատքն ու հաւատքի գործերն են: Այս իմաստով, Աստուած մարգարէները զրկեց քահանաներուն մօտ, որոնք կոչուած էին Աստուծոյ խօսքին ու կամքին մշակները ըլլալու Աստուծոյ այգիին (Իսրայէլի ժողովուրդին կեանքին) մէջ, որպէսզի անոնցմէ հաւատք եւ հաւատքի գործեր պահանջէին: Թէ ինչո՞ւ մարգարէները ծառայ կը կոչուին, իսկ քահանաները՝ մշակ, Յովհաննէս Երզնկացի կը բացատրէ, թէ մարգարէները ծառայ կը կոչուին՝ որովհետեւ իրենց նպատակը Աստուծոյ սուրբ կամքը կատարելն ու հետապնդելն էր, եւ ատիկա կ'ընէին առանց վարձատրութիւն ակնկալելու, իսկ քահանաները մշակ կը կոչուին՝ որովհետեւ տասանորդ կը ստանային ժողովուրդին կեանքին մէջ իրենց կատարած գործին փոխարէն: Տասանորդ ստանալը՝ մշակի գործ է:

2.- «Երբ այգեկութի ժամանակը եկաւ»: Աստուած իր ծառաները չորկեց մշակներուն մօտ այգեկութէն առաջ: Հոսկէ կը սորվինք թէ երբ Աստուած գործ մը յանձնէ մեզի՝ չ'աճապարել արդիւնք տեսնելու, այլ ժամանակ կու տայ, կը սպասէ, կը համբերէ:

3.- «Իր ծառաները զրկեց մշակներուն մօտ՝ բերքէն իր բաժինը առնելու համար»: Այսօր եւս Աստուած իր ծառաներուն՝ մարգարէներուն եւ առաքեալներուն միջոցաւ մեզմէ՝ եկեղեցականաց դասէն կը պահանջէ պտուղ, արդիւնք, բերք, այլ խօսքով՝ հաւատք եւ հաւատքի կեանք, սիրոյ եւ կարեկցութեան գործեր, հաւատարմութիւն եւ հնազանդութիւն Աստուծոյ եւ Աստուծոյ կողմէ մեզի տրուած կոչումին ու պարտականութեան հանդէպ:

4.- «Բերքէն իր բաժինը առնելու համար»: Ինչպէս Աստուած հին Իսրայէլի հանդէպ լիովին իր պարտականութիւնը ընելէ ետք՝ իր մարգարէներուն միջոցաւ անոնցմէ հաւատքի բերքն ու հաւատարմութեան պտուղը պահանջեց, այնպէս ալ, Քրիստոսէ ետք եկող մարդկութեան հանդէպ իր պարտականութիւնը ընելէ ետք, այլ խօսքով, իր Որդին մարդկութեան փրկութեան համար զոհելէ ետք՝ հիմա

իր բացարձակ իրաւունքն է մարդկութենէն պահանջելու հաւատք հանդէպ իր Որդիին գոհագործական մահուան եւ հնազանդութիւն անոր սուրբ կամփին ու խօսքին:

5.- «Իր բաժինը»: Այս բառերը ցոյց կու տան որ Աստուծոյ բաժինն է, այլ խօսքով՝ իրաւունքն է որ մենք հաւատանք իրեն: Իր իրաւունքն է սիրուիլ ու պաշտուիլ մարդոց կողմէ: Իր իրաւունքն է փառաբանուիլ եւ մեծարուիլ մարդոց կողմէ: Իր իրաւունքն է երկրպագուիլ եւ երգաբանուիլ մարդոց կողմէ, եւ մարդիկ պէտք է այդ բոլորը ընեն, միշտ ինչպէս երկինքի հրեշտակները իրենք կ'ընեն, որովհետեւ մարդիկ իրենք եւս կոչուած են օր մը երկինքի հրեշտակներուն նման ըլլալու (Մտ 22.30):

«Մշակները ծառաները բռնեցին, մէկը ծեծեցին, միւսը սպաննեցին, ուրիշ մըն ալ ֆարկոծեցին» (Մտ 21.35): Քանի մը հաստատումներ.–

1.- Յովհաննէս Երզնկացի կ'ըսէ. «Տեսէ՛ք մշակներուն չարութիւնը. անոնք ո՛չ միայն պտուղ չտուին, հակառակ որ այնքան խնամք վայելեցին, այլեւ դժկամակութեամբ եւ բռնութեամբ վերաբերեցան դրկուած ծառաներուն հետ: Իրենք ա՛յնպիսի մարդիկ էին որոնցմէ վրէժ պէտք էր լուծուէր, բայց իրե՛նք վրէժ լուծեցին ծառաներէն»: Եթէ նայինք այսօրուան մեր իրականութեան, կը տեսնենք որ նոյն բանն է որ կը պատահի: Այսօր ալ մարդիկ կան մեր չորս կողմը, որոնք ո՛չ միայն չեն աշխատիր, ո՛չ միայն իրենց յանձնուած պարտականութիւնները չեն ընել, այլեւ նեղութիւն կու տան աշխատողներուն, իրենց պարտականութիւնները ընողներուն, եւ կը հալածեն ու խօսքի ֆարկոծ կը ֆարկոծեն գանոնք:

2.- Տուեալ համարին մէջ ունինք չորս բառեր կամ բայեր՝ «բռնեցին, ծեծեցին, սպաննեցին, ֆարկոծեցին»: Ըսինք, որ դրկուած ծառաները մարգարէներն են: Արդարեւ, թէ՛ Աստուածաշունչէն եւ թէ՛ արտաքին պատմութենէն գիտենք, որ մարգարէներէն ոմանք ենթարկուեցան ծեծի, հալածանքի եւ սպանութեան: Օրինակ, անոնք ծեծեցին Երեմիա մարգարէն (Եր 20.1-2, 26.11), սպաննեցին Նսայի մարգարէն, ֆարկոծեցին Զաֆարիա մարգարէն տաճարին մէջ: Յիշենք նաեւ Ա.ֆառք թագաւորին յարուցած հալածանքը Եղիա մարգարէին դէմ: Ընդհանուր կերպով, կրնանք ըսել որ ֆահանաները, եւ անոնց կողքին թագաւորները իրե՛նք եւս, բոլոր մարգարէներուն հանդէպ ալ մերժողական եւ հալածողական վերաբերմունք ցուցաբերեցին:

3.- Զարեհ Արք. Ազնաւորեան կը բացատրէ որ «ծեծել», «սպաննել» եւ «ֆարկոծել» բառերը, որոշապէս կը յայտնեն

ֆահանաներուն ընդդիմութիւնը եւ հակառակամարտութիւնը մարգարէներուն եւ անոնց միջոցաւ յայտնուած աստուածային պատգամներուն: Հետեւաբար, տուեալ երեք բառերը՝ «ծեծել», «սպաննել» եւ «ֆարկոծել», պարզապէս մարգարէներուն պատգամները մերժել կամ անոնց չանսալ չեն նշանակեր, այլ՝ անոնց դէմ դնել ու հակառակի կը նշանակէ: Երրորդ այս կէտէն կը սորվինք, որ անոնք որոնք կը մերժեն ականջ տալ Աստուածաշունչի նշմարտութիւններուն եւ այդ նշմարտութիւնները նշգրտօրէն ֆարոգողներուն՝ անոնք կը դասուին եւ պէտք է դասուին ծեծող, սպաննող եւ ֆարկոծող մարդոց շարքին:

4.- Մարգարէները Աստուծոյ անունով եւ Աստուծոյ խօսքը կը խօսէին, բայց աշխարհին կապուածները մերժեցին ականջ տալ անոնց խօսքերուն եւ հալածեցին զանոնք: Նոյնը այսօր կը պատահի: Այսօր ալ աշխարհը կը հալածէ Աստուծոյ անունով եւ Աստուծոյ խօսքը խօսող մարդիկը: Ոեւէ մէկը որ չէ հետաքրքրուած երկինքով եւ անոր սուրբ Գահակալով եւ կը սիրէ այս աշխարհը, բնա՛ւ երբե՛ք պիտի չուզէ լսել երկինքի մասին, Քրիստոսի երկրորդ գալուստին եւ յարութեան մասին, դատաստանի եւ պատիժի մասին, արքայութեան եւ դժոխքի մասին: Ինչպէս եթէ դուն կապուած ես բանի մը, կամ եթէ ունիս հսկայ գեղեցիկ տուն մը կամ ինքնաշարժ մը, պիտի չուզէիր որ մէկը գար եւ քեզի խօսէր այդ բոլորին կորսուելուն ու փնանալուն մասին, այնպէս ալ, այս աշխարհին կապուած եւ այս աշխարհին մէջ հարստութիւններ դիզած մարդիկ՝ երբե՛ք չեն ուզեր լսել այս աշխարհի կատարածին, այսինքն՝ կործանումին մասին, ժամանակներու աւարտին:

5.- Քահանաները որոնք կոչուած էին Աստուծոյ խօսքն ու կամքը յայտնելու ժողովուրդին, եւ որոնք կոչուած էին մարգարէներուն հետ միասին գործելու ժողովուրդի փրկութեան համար, ամենէն ոխերիմ թշնամիները եղան մարգարէներուն եւ անոնց միջոցաւ յայտնուած ու յայտարարուած փրկութեան ու ազատութեան: Բան չէ փոխուած պատմութենէն: Նոյն ֆահանաները չե՞ն որոնք այսօր ոխերիմ թշնամիներու նման դէմ կը դնեն նշմարտութեան ֆարոգիչներուն, եւ փոխանակ ժողովուրդի փրկութեան համար աշխատելու, կարծէք իրենց ամէն կարելին կ'ընեն՝ ժողովուրդն ալ իրենց հետ միասին դժոխք տանելու:

«Այգիին տէրը դարձեալ ծառաներ դրկեց, նախկինէն շատ աւելի թիւով, քայց ասոնց ալ նոյնը ըրին» (Մտ 21.36):

34-րդ համարին մէջ յիշուած ծառաներուն վերաբերեալ ըսինք որ անոնք մարգարէներն են: Իսկ այստեղ յիշուած ծառաները, մեկնիչներ

ակնարկութիւն կը նկատեն Յովհաննէս Մկրտիչին, Քրիստոսի 12 աշակերտներուն եւ 72 աշակերտներուն, որոնց հանդէպ նաեւ հրեայ ժողովուրդին դեկավարները մերժողական եւ հալածողական վերաբերմունք գուցաբերեցին: Ասո՛նց պարտականութիւնն էր պատրաստել ժողովուրդը Մեսիան ֆանչնալու եւ ընդունելու, բան մը որ չըրին: Երկու արագ նշումներ եւս.–

ա.– «Դարձեալ ծառաներ դրկեց»: Այս բառերը կը պարզեն որ Աստուած երբեք տեղի չի տար մարդոց ցուցաբերած յամառութեան, կամակորութեան ու մերժումին դիմաց, այլ միշտ ու մնայուն կերպով իր ծառաները կը դրկէ անոնց՝ դարձի բերելու համար զանոնք:

բ.– «Նախկինէն շատ աւելի թիւով»: Արդարեւ, Յիսուսի աշակերտներուն ու հետեւորդներուն թիւը աւելի էր քան մարգարէներուն թիւը, բայց խօսքը միայն թիւի մը կամ թուանշանի մը մասին չէ, այլ՝ բերուած պատգամի տարբերութեան մասին: Ըսել կ'ուզեմք, թէ երկրորդ անգամ դրկուած ծառաները (Յիսուսի աշակերտները), ո՛չ միայն թիւով աւելի՛ էին, այլ նաեւ իրենց բերած պատգամով, անոնք աւելի՛ն կը նկատուէին, նախամեծար ու նախապատիւ կը սեպուէին:

«Ամենէն վերջը իր որդին դրկեց անոնց՝ մտածելով.– "Թերեւս իմ որդիէս պատկառիմ": Բայց մշակները երբ տեսան որդին՝ իրենք իրենց ըսին.– "Ասիկա է ժառանգորդը, եկէ՛ք սպաննենք զայն, որպէսզի անոր ժառանգութեան տիրանանք": Ուստի այգիէն դուրս հանեցին զայն եւ սպաննեցին» (Մտ 21.37–39): Քանի մը հաստատումներ.–

1.– «Ամենէն վերջը իր որդին դրկեց»: Յատկ է որ որդին Յիսուս Քրիստոս ինք է: Ինչո՞ւ մեր երկնաւոր Հայրը սկիզբէն չդրկեց իր Որդին, այլ «ամենէն վերջը»: Հայրն Աստուած շատ լաւ գիտէր որ ֆահանաները իրե՛նք պիտի ըլլային իր Որդիին մահը կարգադրողներն ու պահանջողները: Ահա թէ ինչո՛ւ, Աստուած սկիզբէն մարգարէներուն, Յովհաննէս Մկրտիչին եւ առաքեալներուն միջոցաւ խօսեցաւ իր Որդիին մասին եւ ֆանչցուց զանիկա աւագ ֆահանաներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն, որպէսզի անոնք ոեւէ արդարացում չունենան Աստուծոյ դիմաց (Որդիին մահը պահանջած ըլլալուն համար), եւ որպէսզի չհամարձակին ըսել Աստուծոյ թէ չէին գիտեր որ Յիսուս ինքն էր խոստացեալ Մեսիան:

2.– «Թերեւս իմ որդիէս պատկառիմ»: Խոստացեալ Մեսիային մասին խօսող մարգարէները սպաննող ֆահանաները՝ Խոստացեալ Մեսիան ալ կը սպաննեն: Ան որ Աստուծմէ չի վախնար՝ մարդոցմէ բնա՛ւ չ'ամչնար եւ բնա՛ւ անոնց արժէ՛ք չի տար: Առաջին բառը՝ «թերեւս»,

հարկաւ ցոյց չի տար որ Աստուած չէր գիտեր որ իր Որդին պիտի խաչէին: Եթէ երբեք նկատի առնենք որ Յիսուս այս առակը խօսեցաւ Փարիսեցիներուն, աւագ քահանաներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն ներկայութեան, պարզ կը դառնայ, որ «թերեւ» բառով Յիսուս կ'ուզէր անոնց գիտակցութիւնը արթնցնել, անոնց խիղճը շարժել, բայց մանաւանդ, անոնց աչքերը բանալ, որպէսզի զինք տեսնեն եւ ցանցնան իբրեւ Խոստացեալ Մեսիան:

3.- «Բայց մշակները երբ տեսան որդին՝ իրենք իրենց ըսին...»: Մշակները, այլ խօսքով՝ քահանաները, երբ տեսան Աստուծոյ Որդին եւ անոր կատարած հրաշքները, փոխանակ ընդունելու գայն իբրեւ խոստացեալ Փրկիչը, ընդհակառակը, մտածեցին սպաննել գայն: Ի՞նչ ցոյց կու տայ «տեսան» բառը: «Տեսան» բառը ցոյց կու տայ որ Յիսուս ծածուկ կերպով չգործեց ու չխօսեցաւ, այլ բացայայտօրէն, հրապարակային կերպով: «Տեսան» բառը, հետեւաբար, կը պարզէ որ քահանաները եւ հրեայ միւս ղեկավարները ականատես եղան Յիսուսի կատարած գործերուն, լսեցին անոր խօսքերն ու պատգամները, բայց կամովին եւ գիտակցօրէն մերժեցին հաւատալ անոր:

4.- «Ասիկա է ժառանգորդը, եկէք սպաննենք գայն, որպէսզի անոր ժառանգութեան տիրանանք»: Ի՞նչ ունէր Յիսուս իբրեւ ժառանգութիւն, որ Փարիսեցիները, աւագ քահանաներն ու Օրէնքի ուսուցիչները ուզեցին զինք սպաննել՝ գայն յափշտակելու համար իրմէ: Օ՛հ, ան շատ բան ունէր: Ան յաջողած էր ժառանգել, այլ խօսքով՝ գրաւել ու առիւնքնել սիրտը ժողովուրդին: Ան կը վայելէր ժողովուրդին սէրն ու յարգանքը: Ժողովուրդին շատ մեծ բաժինը իրեն կը հետեւէր (Յհ 12.19): Ան սկսած էր իբրեւ նշանաւոր բաբբի ցանցուի: Հասարակ ժողովուրդը սկսած էր անոր մէջ Խոստացեալ Մեսիային ներկայութիւնը տեսնել: Ոմանք զինք մեծ մարգարէ մը կարծեցին (Յհ 6.14: Մտ 21.46): Տակաւին, ուրիշներ նոյնիսկ զինք թագաւոր ընելու փորձեր ըրին (Յհ 6.15): Այս բոլորը ուրիշ բան չէին նշանակել եթէ ոչ յափշտակել Փարիսեցիներուն, աւագ քահանաներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն տրուելիք փառքը, պատիւը, ժառանգութիւնը, դիրքը, գահը, եւլն: Ուստի, անոնք եկան այն եզրակացութեան, որ պէտք էր սպաննել բուն ԺԱՌԱՆԳՈՐԴԸ, որպէսզի մարդոց կողմէ Յիսուսի յայտնուելէն առաջ իրենց տրուած պատիւը վերստին իրենց տրուէր, իրենց դառնար:

5.- «Ուստի այգիէն դուրս հանեցին գայն եւ սպաննեցին»: Առակին սկիզբը բացատրեցինք որ այգին կը ներկայացնէ Իսրայէլի ժողովուրդը: Ուստի, «այգիէն դուրս հանեցին գայն եւ սպաննեցին» խօսքը, ցոյց կու

տայ Քրիստոսի մերժուիլը ամբողջ Իսրայելի ժողովուրդին կողմէ, Քրիստոսի դուրս դրուիլը անոնց կեանքէն:

6.- Աւագ ֆահանաները, Փարիսեցիները եւ Օրէնքի ուսուցիչները կարծեցին որ եթէ սպաննեն Յիսուսը, պիտի կարենան տէր դառնալ անոր ժառանգութեան: Սիսալած էին անոնք սակայն: Անոնք կը մոռնային, որ այո՛, կարելի էր սպաննել Քրիստոսը, բայց կարելի չէր սպաննել Քրիստոսի Եկեղեցին: Ընդունուած իրողութիւն եւ իրականութիւն է, որ առաքեալներ, գլուխներ, առաջնորդներ, աւետարանիչներ կրնան սպաննուիլ, բայց անոնց ֆարձուքիւնը, անոնց հաւատքը երբեք չ'ըսպաննուիր, չի գերեզմանուիր. միշտ ալ մարդիկ պիտի ըլլան անոնց հաւատքի գնացքը շարունակող:

7.- Եթէ ամբողջ Իսրայելի ժողովուրդը «այգի» նկատուած կամ կոչուած է, պէտք է յիշել որ այդ այգիին սիրտը՝ թագաւորանիստ Երուսաղէմ ֆաղաքը կը հանդիսանար, ուստի «այգիէն դուրս դնել» Յիսուսը, կը նշանակէր գայն դուրս դնել թագաւորանիստ Երուսաղէմ ֆաղաքէն, այլ խօսքով, մերժել գայն մանչնալ իբրեւ թագաւոր, մերժել անոր թագաւորութիւնը, եւ հետաքրքրական է յիշել որ Յիսուս Երուսաղէմ «ֆաղաքէն դուրս տարուելով չարչարուեցաւ, որպէսզի իր արիւնով սրբէ ժողովուրդին մեղքերը» (Եբր 13.12):

«Եւ Յիսուս հարցուց.

– Արդ, երբ այգիին տէրը գայ, ի՞նչ պիտի ընէ այդ մշակներուն:

Անոնք պատասխանեցին.

– Վստահաբար այդ չար մարդիկը չարաչար պիտի սպաննէ եւ այգիին վարձու տայ ուրիշ մշակներու, որոնք բերքի իր բաժինը ժամանակին պիտի տան իրեն» (Մտ 21.40-41): Քանի մը մատնանշումներ.–

1.– Յիսուս հարցումը ուղղեց եւ ուզեց պատասխանը ֆաղել աւագ ֆահանաներուն, Օրէնքի ուսուցիչներուն եւ Փարիսեցիներուն բերնէն, որպէսզի իրենց խօսքով գիրենք դատապարտած ըլլար, ինչպէս Դուկասի 19.22-ին մէջ կը կարդանք.– «Չա՛ր ծառայ, քու խօսքովդ քեզ պիտի դատեմ»: Հոսկէ կը սորվինք թէ մեր խօսածին ու գիտցածին, մեր ֆարձածին ու պատգամածին համաձայն պիտի դատուինք:

2.– Սկզբնական հանգրուանին, աւագ ֆահանաները, Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները չանդրադարձան որ Յիսուս այս առակը իրենց համար կը խօսէր (թէպէտ յետոյ անդրադարձան 21.45), անոր համար ալ համարձակօրէն անոր ըսին թէ այգիին տէրը երբ գայ «այդ չար մարդիկը չարաչար պիտի սպաննէ»: Յիսուսի առակը իրենց ուղղուած էր, բայց իրենք կարծեցին որ ուրիշին ուղղուած էր: Այսօր

մեր մէջ շատ մարդիկ կան որոնք երբ կը լսեն Աստուածաշունչի այսինչ կամ այնինչ խօսքը՝ գայն այսինչ կամ այնինչ անձին ուղղուած կը տեսնեն կամ կ'ուզեն տեսնել, եւ երբեք չեն մտածեր որ նոյնը այդ խօսքը նաեւ իրենց ուղղուած է:

3.- Աւագ քահանաները, Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները «չար մարդիկ» կոչեցին մշակները եւ զանոնք ծանր պատիժի արժանի տեսան, եւ կը մոռնային որ իրենք եւս չար մարդիկ էին եւ պատիժի արժանի: Քննե՛նք մեր անձերը: Զըլլայ որ մենք եւս ուրիշը ծանր պատիժի արժանի կը տեսնենք, եւ կը մոռնանք մեր այն մեղքերը՝ որոնց համար մենք ալ մեր կարգին պատժուելու արժանի ենք:

4.- «Երբ այգիին տէրը գայ»: Աստուած ինքն է այգիին տէրը: Աւագ քահանաները, Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները մոռցած էին այս իրողութիւնը: Անոնք մոռցած էին որ Աստուած ինքն էր որ իր «հզօր բազուկով» եւ մեծամեծ նշաններով Իսրայէլի ժողովուրդը դուրս բերած էր Եգիպտոսէն, անոնց ոտքերուն դիմաց ծովեր նեղած էր, հացով ու միսով կերակրած էր զանոնք անապատներուն մէջ, Երիֆովի պատերը փուլ բերած էր անոնց աչքերուն դիմաց: Անոնք մոռցած էին այս բոլորը եւ կը կարծէին որ իրենք են տէրերը Աստուծոյ այգիին (Իսրայէլի ժողովուրդին), բայց Յիսուս «այգիին տէրը» եւ «մշակ» բռտերով, եկաւ յիշեցնելու իրենց որ իրենք այգիին տէրերը չէին, այլ պարզապէս մշակներ այդ այգիին մէջ:

Այս կէտէն շատ կարեւոր դաս մը կը սորվինք: Մենք՝ եկեղեցականներս, Աստուծոյ այգիին՝ եկեղեցիին մէջ, մշակներ ենք եւ ո՛չ թէ տէրեր: Եթէ մոռնանք այս իրողութիւնը, պիտի դադրինք հոգեւոր մշակի մեր պարտականութիւնները ընելէ, այլ խօսքով՝ պիտի դադրինք ժողովուրդին հոգիին փրկութեան համար աղօթել եւ աշխատել, եւ պիտի սկսինք տիրութիւն ընել, պարզապէս հեղինակութիւն բանեցնել, միշդ ինչպէս աւագ քահանաները, Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները կ'ընէին: Յիշե՛նք որ Աստուած հաշիւ պիտի պահանջէ եւ դատի պիտի կանչէ մեզ՝ եկեղեցականներս, որպէսզի պատասխան տանք մեզի յանձնուած գործին համար, ինչ որ առակը ցոյց կու տայ:

5.- «Այդ չար մարդիկը չարաչար պիտի սպաննէ»: Այս համարը կը պարզէ որ կործանում եւ մահ պիտի ըլլայ բաժինը անոնց՝ որոնք կը մերժեն մարդոց միջոցաւ քարոզուած աստուածային նշմարտութիւնները եւ իրենց սիրտերը կը փակեն Քրիստոսի դիմաց: Երբեմն Աստուած մարդոց միջոցաւ կը պատժէ իր կամքին ընդդիմացողները: Օրինակ, գիտենք որ այս առակը խօսելէն շուրջ 40 տարի ետք, 70 թուականին, Աստուած պատժեց ո՛չ միայն աւագ

փահանաները, Օրենքի ուսուցիչներն ու Փարիսեցիները, այլեւ՝ ամբողջ ժողովուրդը, երբ Հոռոմի բանակները Տիտոս գորավարին առաջնորդութեամբ յարձակեցան Երուսաղէմի վրայ եւ կործանեցին տաճարը: Բայց բնականօրէն երկրի վրայ տրուած պատիժները՝ յաւիտեանական պատիժէ գերծ չեն պահեր անհնագանդները: Մարդիկ իրենց չարութեան համար կրնան հոս պատժուիլ եւ նոյնիսկ չարաչար սպաննուիլ, բայց մահէն յետոյ նաեւ կը շարունակեն չարչարուիլ դժոխքի մէջ, մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը, երբ դատաստան պիտի ըլլայ եւ դատաստանէն ետք գեհեմի կրակին մէջ պիտի նետուին յաւերժապէս չարաչարելու համար:

6.- «Այգին վարձու տայ ուրիշ մշակներու»: Մինչեւ Քրիստոսի ծնունդը, Իսրայէլի եկեղեցին (ժողովուրդը) ինք կը նկատուէր «Աստուծոյ այգին», բայց երբ հրեաներ մերժեցին Քրիստոսը ընդունիլ իբրեւ Մեսիա եւ Փրկիչ, անոնք դադրեցան «Աստուծոյ այգին» ըլլալէ եւ Քրիստոսը ընդունողները իրենք դարձան «Աստուծոյ այգին»: Հետեւաբար, «այգին վարձու տալ ուրիշին» խօսքը, պարզապէս ցոյց կու տայ որ Աստուած հեթանոս ազգերէն իրեն համար նո՛ր այգի մը, այլ խօսքով՝ նո՛ր եկեղեցի մը, նո՛ր ժողովուրդ մը ընտրեց եւ զանոնք դարձուց իր նոր «ընտրեալ ազգ»ը, եւ այդ ձեւով, հրեաներ դադրեցան Աստուծոյ «ընտրեալ ազգը» ըլլալէ:

7.- «Վարձու տայ»: Այս բառերը կը պարզեն որ մենք՝ Քրիստոսի հաւատացողներս, կոչումն ու առաքելութիւնը ունինք աշխատելու Աստուծոյ այգիին մէջ, եւ այդ այգիին մէջ Քրիստոսի հաւատքին սերմերը սերմանելու ամենուրեք: Ոեւէ մէկը երբ բան մը վարձու կ'առնէ, պէտք է իր առած այդ բանը գործածէ, այլապէս վնաս կը կրէ: Նոյնպէս, ան որ «կը վարձուի» աշխատելու Աստուծոյ այգիին մէջ եւ Քրիստոսի փրկութիւնն ու հաւատքը տարածելու մարդոց եւ սակայն չ'ընեն՝ պիտի դատապարտուի եւ պատժուի ահաւոր դատաստանի օրը:

8.- «Որոնք բերքի իր բաժինը ժամանակին պիտի տան իրեն»: Եթէ Աստուած նկատի ունի իր հետեւորդները իբրեւ այգի՝ ուրեմն ան իրաւունք ունի բերք ակնկալելու ու պահանջելու անոնցմէ: Ի՞նչ է այն բերքը զոր մենք՝ Աստուծոյ այգիին մէջ աշխատողներս պէտք է տանք Աստուծոյ: Ատիկա «մարդիկը Յիսուսի բերելու» եւ «Յիսուսը մարդոց տանելու» մեր առաքելութիւնն է: Ան որ ուրիշը Յիսուսի չի բերեր եւ Յիսուսը ուրիշին չի տանիր՝ կը նշանակէ թէ կը թերանայ իր առաքելութեան մէջ: Քրիստոսի Աւետարանը տարածելը նոյնիման Քրիստոսի կողմէ մեզի յանձնուած առաքելութիւն է. «Գացէք եւ բոլոր

ժողովուրդները ինձի աշակերտ դարձուցէ՛ք» (Մտ 28.19: Տե՛ս նաեւ Գրծ 1.8):

Ապա Յիսուս քսաւ.

- Սուրբ գիրքերուն մէջ չէ՞ք կարդացած.-

«Այն քարը որ շինողները մերժեցին գործածել,

ինքն անկիւնաքարը եղաւ:

Ասիկա Տէրը կատարեց,

ու մեր աչքերուն սքանչելի է» (Մտ 21.42): Քանի մը հաստատումներ.-

1.- «Սուրբ գիրքերուն մէջ չէ՞ք կարդացած»: «Սուրբ գիրքեր» ըսելով պէտք է հասկնալ Հին Կտակարանի գիրքերը: Յիսուս աւագ քահանաներուն, Օրէնքի ուսուցիչներուն եւ Փարիսեցիներուն ուղղած իր այս հարցումով ուզեց ցոյց տալ անոնց, թէ ամբողջ Հին Կտակարանը իր անձին մասին է որ կը խօսի ու վկայութիւն կու տայ:

2.- «Այն քարը որ շինողները մերժեցին գործածել, ինք անկիւնաքարը եղաւ»: Անկիւնաքարը Քրիստոս ինքն է, շինողները՝ աւագ քահանաները, Օրէնքի ուսուցիչները եւ Փարիսեցիներն են: Ի՞նչ պէտք էր շինէին աւագ քահանաները, Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները, որոնք սակայն «մերժեցին» շինել: Անոնք պարտաւոր էին քանչնալ Քրիստոսը եւ քանչնել զայն իբրեւ անկիւնաքարը փրկութեան, բայց մերժեցին քանչնալ եւ արգելք եղան անոնց՝ որոնք կ'ուզէին քանչնալ:

«Շինողները»: Այս բառը կարելու իմաստ մը կ'ընդգրկէ զոր մեր ուշադրութենէն պէտք չէ վրիպի: Ան որ շինելու կոչումը ունի եւ սակայն չի շիներ՝ կործանարար մարդ է: Ան որ Քրիստոսի հետ չի հաւաքեր՝ ցրուող մարդ է (Մտ 12.30): Աւագ քահանաները, Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները կոչումը ունէին «շինելու», այլ խօսքով, անոնք կոչուած էին ժողովուրդին կեանքին մէջ շինարար ու փրկարար դեր ունենալու, անոնք կոչուած էին ժողովուրդին հոգեւոր կեանքը զարգացնելու եւ հարստացնելու, անոնք կոչուած էին ժողովուրդին հաւատքի կեանքը կառուցելու Քրիստոս-ժայռին վրայ եւ սակայն չկառուցեցին: Անոնք մերժեցին տէր կենալ իրենց կոչումին: Մերժեցին Քրիստոսը յայտարարելու հիմնաքարը փրկութեան, անկիւնաքարը ազատագրութեան: Բայց «այն քարը որ շինողները մերժեցին գործածել, ինք անկիւնաքարը եղաւ»: Այո՛, այն ՔԱՐԸ՝ Յիսուս Քրիստոս, զոր աւագ քահանաները, Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները մերժեցին քանչնալ ու գործածել՝ դարձաւ փրկութեան անկիւնաքարը համայն մարդկութեան:

3.- «Անկիւնաֆար» բառը կարելուք իմաստ մը ունի իր մէջ: Գիտենք որ իւրաքանչիւր շէնք իր անկիւնաֆարերը ունի. եթէ անկիւնաֆարերը վերցուին՝ շէնքը փուլ կու գայ: Ինչպէս եթէ շէնքի մը անկիւնաֆարերը վերցուին՝ շէնքը կը փլի, այնպէս ալ, եթէ Քրիստոս-անկիւնաֆարը վերցնենք մեր կեանքէն՝ մեր փրկութեան շէնքը կը կործանի, այլ խօսքով, մեր փրկութեան յոյսը կը կորսնցնենք:

Քրիստոս «անկիւնաֆար» կը կոչուի, ցոյց տալու համար մեզի որ առանց իրեն չկայ՝ եւ չունինք փրկութիւն: Բայց ուրիշ կարելուք բան մըն ալ կայ գոր պէտք է նկատի առնել: Քիչ մը վերել ըսի, որ իւրաքանչիւր շէնք իր անկիւնաֆարերը ունի: Շէնք մը մէկ անկիւնաֆար չունենար, այլ՝ մէկէ աւելի: Բայց մեր բնագիրին մէջ «անկիւնաֆար» բառը եզակիով յիշուած է, սորվեցնելու եւ յիշեցնելու մեզի, որ փրկութեան մէկ ու մի՛ակ հիմնաֆարը, աղբիւրը, միջոցը, նամբան, դուռը Քրիստոս ի՛նքն է: Փրկութեան բազմաթիւ անկիւնաֆարեր չունինք, այլ՝ մէկ անկիւնաֆար:

Յովհաննէս Երզնկացի կը բացատրէ թէ Յիսուս «անկիւնաֆար» կոչուած է.-

ա.- Որպէսզի ցոյց տրուի իր անխորտակելիութիւնը:

բ.- Որպէսզի ցոյց տրուի իր կուսածին ըլլալը, ինչպէս Դանիէլ տեսաւ՝ ՎէՄ՝ մը առանց մարդկային ձեռքի միջամտութեան երկրի վրայ կ'իյնայ:

գ.- Որպէսզի ցոյց տրուի մեզի անշարժութիւնը Քրիստոսի:

դ.- Որպէսզի ցոյց տրուի մեզի մշտնջենաւորութիւնը Քրիստոսի:

ե.- Որպէսզի ցոյց տրուի մեզի թէ ինքն էր այն իսկական Վեմը որ կը ֆալեր Իսրայէլացիներուն հետ անապատին մէջ (Ա.Կր 10.4): Անապատին մէջ ջուր բղխեցնող եւ ժողովուրդին ծարաւը յագեցնող այդ վեմը, կը նախապատկերացներ Քրիստոս-վեմը՝ որ պիտի գար իր բերնէն բղխեցնելու Աստուածահրաշ եւ կենսատու վարդապետութիւնը՝ յագեցնելու համար ծարաւ հոգիները:

զ.- Վերջապէս, «անկիւնաֆար» կը կոչուի որպէսզի ցոյց տրուի թէ իրմո՛վ էր որ միացան հին եւ նոր օրէնքները, այլ խօսքով՝ Հին եւ Նոր Ուխտերը:

4.- «Ասիկա Տէրը կատարեց, ու մեր աչքերուն սփանջելի է»: «Տէրը կատարեց» բառերը ցոյց կու տան որ մեր երկնաւոր Հօր սկզբնական ու յաւիտենական կամքն ու ծրագիրն էր, որ իր Որդին՝ Յիսուս, դառնար Փրկի՛չը աշխարհին, յո՛յսը աշխարհին, անկիւնաֆա՛րը աշխարհին: Աստուծոյ ծրագիրն էր աշխարհը իրեն հետ հաշտեցնել իր Որդիին միջոցաւ (Բ.Կր 5.18):

Առանց Աստուծոյ ԶԱԻԿԻՆ՝ ո՛չ ոք կրնայ զաւակ դառնալ Աստուծոյ: Առանց Աստուծոյ ՈՐԴԻՒՆ՝ ո՛չ ոք կրնար որդեգրուիլ Աստուծոյ: Առանց երկինքի ՃԱՄԲԱՅԻՆ՝ ո՛չ ոք կրնար ցամբայ գտնել դէպի երկինք: Մեր երկնաւոր Հօրը կամքն է՛ր եւ է՛ եւ պիտի՛ մնայ՝ իր Որդիին միջոցաւ գա՛լ իրեն, հաշտուի՛լ իրեն հետ, խօսի՛լ իրեն հետ, քաղցի՛ն անո՛ք ձգել, փրկութեա՛ն տիրանալ, եւ ասիկա «մեր աչքերուն սփանչելի է», հիանալի ու անբացատրելի է, մեծարելի ու փառաբանելի է, որովհետեւ մարդկութիւնը կորսուած վիճակի մէջ էր՝ եւ Քրիստոսով փրկութեան նաւահանգիստը հասաւ:

Ասիկա «մեր աչքերուն սփանչելի է», որովհետեւ մեր աչքերը տեսան Փրկիչը եւ ըմբռնեցին փրկութիւնը: Սփանչելի բան չէ՞ Սատանային ձեռքէն ազատիլն ու Աստուծոյ ձեռքին մէջ դրուիլը: Սփանչելի բան չէ՞ դժոխքէն դուրս բերուիլն ու արքայութեան երանատեղին առնուիլը: Սփանչելի բան չէ՞ մեղքի բոցերէն ազատագրուիլն ու մեր երկնաւոր Հօր գիրկը հանգչեցուիլը: Սփանչելի բան չէ՞ որդերուն կերակուր ըլլալէն ազատիլն ու կեանքի Հացով կերակրուիլը: Մեզմէ որո՞ւն աչքերուն սփանչելի չէ ասիկա: Մեզմէ որո՞ւն համար սփանչելի գործ չէ ասիկա: Սփանչելի է սփանչելագործ Աստուծոյ պարգեւած փրկութիւնը իր Որդիին միջոցաւ:

Ըսենք նաեւ որ որոշ մեկնիչներ «ասիկա Տէրը կատարեց» խօսքին մէջ, կը տեսնեն Աստուծոյ ծրագիրը որ հրեաներ մերժէին Քրիստոսը, որպէսզի Քրիստոս դառնար սեփականութիւնը ամբողջ մարդկութեան, հեթանոս աշխարհին (հմմտ Հո 11.15):

«Ով որ այդ քարին գարնուի՝ պիտի խորտակուի, եւ որուն վրայ որ անիկա իյնայ՝ պիտի ճզմէ զայն» (Մտ 21.43): Երկու հաստատումներ.–

1.– «Ով որ այդ քարին գարնուի՝ պիտի խորտակուի», այլ խօսքով, ով որ փորձէ դէմ դնել Քրիստոսի՝ իր վերջը կործանում է, խորտակում է: Քրիստոս ի՛նքն է այն քարը որուն կարելի չէ զարնել կամ գարնուիլ եւ անվնաս մնալ: Աւագ քահանաները, Փարիսեցիները եւ Օրէնքի ուսուցիչները եղան այնպիսի մարդիկ որոնք գարնուեցան Քրիստոս-քարին եւ փշրուեցան:

2.– «Որուն վրայ որ անիկա իյնայ՝ պիտի ճզմէ զայն»: Ո՛չ եթէ Քրիստոսի գարնուիմք կրնանք ողջ ու անվնաս մնալ եւ ո՛չ ալ եթէ Քրիստոս ինք մեզի գարնուի կրնանք անվնաս մնալ: Զարեհ Արք. Ազնաւորեան խօսելով այս տողին մասին՝ կ'ըսէ. «Քրիստոս ի՛նքն է փրկութեան այն քարը կամ անկիւնաքարը որ մեր երկնաւոր Հայրը հաստատեց: Ով որ զայն կ'ընդունի՝ անով փրկութիւն կ'ունենայ, իսկ ով որ զայն չ'ընդունի՝ անիկա իրեն համար կը դառնայ գայթակղութեան,

այսինքն՝ գլորումի քար մը, որ զինք դատապարտութեան ենթակայ դարձնելու կը ծառայէ: ԶՔրիստոս իբրեւ իր հաւատքի անկիւնաքարը չընդունող մարդը՝ ինքնաբերաբար ինքզինք կործանած պիտի ըլլայ նոյն այդ Քարով: Հետեւաբար, Քարը կրկնակ նշանակութիւն ունի. ատիկա մէկ կողմէ փրկութեան նշան է, իսկ միւս կողմէ՝ դատապարտութեան»:

Դասը գոր կը սորվինք տուեալ համարէն, հետեւեալն է.– Նոյն Քրիստոս-քարն է որ թէ՛ կը փրկէ եւ թէ՛ կը կորսնցնէ: Կը փրկէ՝ եթէ փրկութեան ծարաւ ունինք, եւ կը կորսնցնէ՝ եթէ մեղքի մէջ կորսուած ենք: Յովհաննէս Աւետարանիչը կ'ըսէ. «Ով որ կը հաւատայ անոր (Յիսուսի)՝ չի դատապարտուիր. իսկ ով որ չի հաւատար անոր՝ արդէն իսկ դատապարտուած է» (Յհ 3.18): Այս համարը ամենայն յստակութեամբ կը պարզէ որ Յիսուս թէ՛ փրկութեան քարն է եւ թէ՛ գլորումի քար: Փրկութեան քարն է՝ եթէ վրան հաստատուինք, եւ գլորումի քարն է՝ եթէ մերժենք զայն: Նոյնն է, օրինակ, Աստուծոյ խօսքին պարագան: Աստուծոյ խօսքը փրկարար գորութիւն ունի, բայց մեզմէ ո՞վ չի գիտեր որ նաեւ «կործանարար է» անիկա: Իր սիրտը Աստուծոյ խօսքին դիմաց բացողը՝ ինքնիր հոգին կը փրկէ (Յկ 1.21), իսկ իր սիրտը փակողը՝ նոյն այդ խօսքին միջոցաւ է որ ինքնիր կորստեան պատճառ կ'ըլլայ:

«Ասոր համար կ'ըսեմ ձեզի, թէ Աստուծոյ արքայութիւնը ձեզմէ պիտի առնուի եւ տրուի ժողովուրդի մը, որ պտղաբեր կը դարձնէ զայն» (Մտ 21.44):

Աւագ քահանաները, Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները, ինչպէս նաեւ ամբողջ հրեայ ժողովուրդը, իրենք զիրենք Աստուծոյ արքայութեան միակ եւ արժանաւոր ժառանգորդները կը սեպէին. բայց մարդիկ որոնք մերժեցին արքայութեան Արքան՝ ալ չէին կրնար արքայութեան մէջ մնալ. ահա թէ ինչու Յիսուս անոնց ըսաւ. «Աստուծոյ արքայութիւնը ձեզմէ պիտի առնուի եւ տրուի ժողովուրդի մը, որ պտղաբեր կը դարձնէ զայն»:

Աստուծոյ արքայութեան հաւատացողը՝ պէտք է աշխատի զայն «պտղաբեր դարձնել», այլ խօսքով՝ պէտք է աշխատանք տանի զայն տարածել մարդոց կեանքին մէջ: Բայց ի՞նչպէս աւագ քահանաները պիտի տարածէին Աստուծոյ արքայութիւնը՝ երբ իրենք զիրենք բաժնեցին այդ արքայութենէն՝ իրենց անհաւատութեան պատճառով: Ի՞նչպէս Փարիսեցիները Յիսուսի աւանդած սիրոյն ու հաւատքին ջահակիրները պիտի ըլլային՝ երբ դարձած էին ջահակիրները իրենց հայրերու աւանդութեան: Ի՞նչպէս Օրէնքի ուսուցիչները պիտի կարենային Քրիստոսի փրկարար ճիշտ շնորհքին փարոզիչները ըլլալ՝ երբ

իրենք չէին դարձած շնորհի գաւակներ, երբ շնորհի լոյսը տակաւին չէր ծագած իրենց հոգիներուն մէջ, եւ երբ տակաւին կը մնային ստրուկները Մովսիսական Օրէնքին:

Աստուծոյ արքայութիւնը այնպիսի բան մը չէ որ առնենք եւ մենք մեզի համար պահենք: Աւագ քահանաները, Փարիսեցիները եւ Օրէնքի ուսուցիչները Աստուծոյ արքայութիւնը պահած էին իրենց համար: Քրիստոս սակայն կ'ուզէր այդ արքայութիւնը տարածուած տեսնել: Մանանեթի հատիկին եւ Թթիմորին օրինակներով (Մտ 13) Յիսուս յստակօրէն ցոյց տուաւ որ իր կամքն ու նպատակն էր որ Աստուծոյ արքայութիւնը տարածուի գտնէր եւ գտնէ ամբողջ աշխարհի մէջ:

Եթէ դուն Աստուծոյ արքայութիւնը պտղաբեր դարձնող մէկը չես, այլ խօսքով՝ եթէ կեանքովդ եւ խօսքովդ տարածողը չես այդ արքայութեան՝ վստահ եղիր որ ատիկա քեզմէ պիտի իլուի եւ տրուի այնպիսի մարդոց՝ որոնց սիրտը վառած ըլլայ Արքայ Յիսուսին սիրով, որպէսզի գանիկա տարածեն ամենուրեք:

**ԱՇՏԱՐԱԿ ՇԻՆՈՂԻՆ ԵՒ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՈՂ
ԹԱԳԱԻՈՐԻՆ ԱՌԱԿՆԵՐԸ**

«Բազմաթիւ ժողովուրդ Յիսուսի հետ կ'երթար: Յիսուս անոնց դառնալով՝ ըսաւ.-- Ով որ ինծի կու գայ եւ զիս անելի չի սիրեր քան իր հայրն ու մայրը, կիճն ու զաւակները, եղբայրներն ու քոյրերը, ինչպէս նաեւ իր իսկ անձը, չի կրնար ինծի աշակերտ ըլլալ: Որովհետեւ ով որ իր խաչը չ'առնէր եւ ինծի չի հետեւիր, ինծի աշակերտ չի կրնար ըլլալ: Եթէ ձեր մէջէն մէկը ուզէ աշտարակ մը շինել, նախ չի՞ նստիր եւ ծախսերը չի հաշուեր, տեսնելու համար թէ գործը վերջացնելու չափ դրամ ունի՞: Այլապէս, երբ հիմը նետելէ ետք՝ չկարենայ աշտարակը աւարտել, բոլոր տեսնողները պիտի սկսին ծիծաղիլ իր վրայ, ըսելով.-- «Այս մարդը շինել սկսաւ, բայց չկրցաւ աւարտել»: Կամ, եթէ թագաւոր մը տասը հազար հոգինոց բանակով մը ուզէ պատերազմի ելլել քան հազար հաշուող բանակով մը իր դէմ եկող թագաւորի մը դէմ, նախ չի նստիր եւ չի՞ մտածեր, թէ արդեօք պիտի կարենայ յաղթել անոր: Այլապէս, տակաւին հեռուէն, պատգամաւոր պիտի դրկէ՝ հաշտութիւն խնդրելու համար անկէ: Նմանապէս, ձեր մէջէն անոնք որոնք չեն կրնար հրաժարիլ իրենց ամբողջ ունեցածէն, չեն կրնար ինծի աշակերտ ըլլալ» (Ղկ 14.25-33):

«Բազմաթիւ ժողովուրդ Յիսուսի հետ կ'երթար: Յիսուս անոնց դառնալով՝ ըսաւ.-- Ով որ ինծի կու գայ եւ զիս անելի չի սիրեր քան իր հայրն ու մայրը, կիճն ու զաւակները, եղբայրներն ու քոյրերը, ինչպէս նաեւ իր իսկ անձը, չի կրնար ինծի աշակերտ ըլլալ» (Ղկ 14.25-26):
Քանի մը հաստատումներ.--

1.-- Յիսուս տեսնելով որ մեծ բազմութիւն իրեն կը հետեւէր՝ իր տուեալ խօսքով յիշեցուց անոնց թէ իրեն հետեւիլը իր պայմանները ունի: Առաջին պայմանը՝ գՔրիստոս ամէն բանէ եւ ամէն անձէ անելի սիրելն է: «Ով որ ինծի կու գայ եւ զիս անելի չի սիրեր քան իր հայրն ու մայրը...»: Այս տողը հին թարգմանութեան մէջ տարբեր ձեւով կը ներկայանայ որ խորքին մէջ անելի մօտիկ է բնագիրին, նկատի ունենալով որ նոր թարգմանութիւնը անելի իմաստային թարգմանութիւն է որ կ'ընէ քան բառացի թարգմանութիւն: Հոն կը կարդանք. «Եթէ մէկը ինծի գայ բայց չատէ իր հայրը եւ մայրը...»: «Չատէ» բառին համար բնագիրին մէջ գործածուած է («ΟΥ ΜΙΣΕΙ» ո՛ւ

միսի՝) բառը, որ Յունարեն լեզուի մէջ չի նշանակեր «ատել», այլ՝ «նուազ սիրել», ինչպէս Զարեհ Արք. Ազնաւորեան կ'ըսէ: Ուստի, Քրիստոս իր վերոյիշեալ խօսքով, կու գայ հասկցնելու իր հետեւորդներուն, որ պէտք է սիրեն իրենց հարազատները իրմէ աւելի: Արդարեւ, չենք կրնար հաւասար սէր ունենալ Աստուծոյ եւ մեր նմաններուն հանդէպ: Մեր սէրը Աստուծոյ հանդէպ միշտ աւելի՛ն պէտք է ըլլայ: Պէտք է սիրենք մեր նմանները, բայց ո՛չ Աստուծմէ աւելի: Որոշ մեկնիչներ կ'ըսեն որ Յիսուս «ատել» բառը կը գործածէ, սորվեցնելու համար մեզի, որ մեր սիրելիներուն հանդէպ մեր սէրը, համեմատաբար Քրիստոսի հանդէպ մեր սիրոյն՝ ատելութիւն պէտք է թուի: Ուստի, ա՛յնքան մեծ եւ ա՛յնքան խոր պէտք է ըլլայ մեր սէրը Յիսուսի հանդէպ, որուն հետ համեմատաբար, այլ սէրեր ատելութիւն նկատուին:

2.- Քրիստոս պատահական անձեր չի յիշեր, այլ ամենէն մօտիկ պարագաները կը յիշէ՝ հայր ու մայր, կին ու զաւակներ, եղբայրներ եւ քոյրեր, սորվեցնելու եւ յիշեցնելու համար մեզի, որ իրեն հետեւիլ ուզող մարդը պատրաստ պէտք է ըլլայ, ի պահանջել հարկին, հրաժարելու իր ամենէն մօտիկներէն, իր ամենէն մտերիմներէն, իր ամենէն սիրելիներէն եւ իր ամենէն սիրած բաներէն: Օրինակ, եթէ մէկը անհունօրէն կը սիրէ իր մայրը եւ չի կրնար բաժնուիլ անկէ, եւ եթէ Տէրը ուզէ զինք յատուկ առաքելութեան մը դրկել որոշ երկիր մը՝ ան պէտք է պատրա՛ստ ըլլայ բաժնուելու իր մայրէն՝ երթալ կատարելու համար Տիրոջ կամքը: Պէտք է բաժնուիլ ոեւէ բանէ որ արգելի կը հանդիսանայ որ կատարենք Աստուծոյ կամքը: Պէտք է հեռանալ ոեւէ բանէ կամ ոեւէ անձէ որ մեզ կը հեռացնէ Աստուծմէ: Երբ մեր սիրելիներէն մին մեզմէ կը պահանջէ բան մը, եւ Աստուած՝ ուրիշ բան, պէտք է փառութիւնը ունենալ մէկդի ձգելու մեր սիրելին եւ Աստուծոյ պահանջածը կատարել: Այլ խօսքով, երբ աստուածային եւ մարդկային կամքերու բաղիտում կ'ըլլայ, մենք Աստուծոյ կամքին ընտրութիւնն է որ պէտք է կատարենք:

3.- Քրիստոս պատուիրել է սոքա որ պէտք է զինք սիրենք մեր հայրերէն ու մայրերէն, մեր կիներէն ու զաւակներէն, մեր եղբայրներէն ու քոյրերէն աւելի՝ կը պատուիրէ նաեւ որ զինք սիրենք նոյնիսկ մեր անձերէն աւելի: Այս վերջինը հաւանաբար աւելի դժուար է քան առաջինները: Եւ ինչո՞ւ: Որովհետեւ անգութ մարդիկ կրնան լքել իրենց ծնողները, անսիրտ մարդիկ կրնան մոռնալ իրենց կիներն ու զաւակները, անձնասէր մարդիկ կրնան հեռանալ իրենց եղբայրներէն եւ քոյրերէն անձնական շահի համար, բայց այսպիսի մարդիկ՝ անգութ, անսիրտ եւ անձնասէր մարդիկ, բնա՛ւ չեն մոռնար եւ չեն անտեսեր իրենց ես-ը: Այսպիսիներ անձնասէր եւ եսակեդրոն կ'ըլլան:

4.- Երբ Յիսուս իրեն հետեւելու համար պայման կը դնէ զինք մեր անձերէն աւելի սիրելու, խորքին մէջ, ցոյց տուած կ'ըլլայ մեզի, որ եսասէր կամ անձնասէր մարդը չի կրնար իր հետեւորդը ըլլալ: Ո՛չ միայն պատրաստ պէտք է ըլլալ հրաժարելու մեր հարազատներէն ու սիրելիներէն երբ անոնք պատճառ են որ մենք չկարենանք հետեւիլ Յիսուսի, այլեւ պատրաստ պէտք է ըլլալ մեր ես-ը անգամ ուրանալու երբ ատկկա (մեր ես-ը) Քրիստոսի կամֆին հակառակ բան կը պահանջէ մեզմէ:

«Որովհետեւ ով որ իր խաչը չ'առնէր եւ ինձի չի հետեւիր, ինձի աշակերտ չի կրնար ըլլալ» (Ղկ 14.27): Քանի մը հաստատումներ.–

1.- Բացատրեցինք որ Յիսուսի հետեւելու համար պայման է որ զինք սիրենք մեր հարազատներէն ու սիրելիներէն եւ նոյնիսկ մեր անձերէն աւելի, բայց խաչը առնելով Յիսուսի հետեւիլը՝ պայման-ի հարց չէ, այլ զին-ի հարց է: Խաչ առնել եւ Յիսուսի հետեւիլ՝ զին վնարել կը նշանակէ, մանաւանդ, այսօրուան անհաւատ եւ Քրիստոսահալած աշխարհին մէջ: Քրիստոսամերժ այս աշխարհին մէջ Քրիստոսադաւան ըլլալը՝ խաչը առնելով Յիսուսի հետեւիլ չի՞ նշանակեր: Ճշմարտութեան չհանդուրժող մարդոց մէջ ճշմարտութեան վկան ըլլալը՝ խաչը առնելով Յիսուսի հետեւիլ չի՞ նշանակեր:

2.- Խաչ առնել եւ Յիսուսի հետեւիլ՝ **մնայուն** վկայութեան կեանք ապրիլ կը նշանակէ: Ընդգծեցի «մնայուն» բառը, ըսելու համար որ Յիսուսի հետեւող մարդը՝ մի՛շտ պէտք է հետեւի եւ ո՛չ թէ երբեմն-երբեմն: Ինչպէս մնայուն կերպով իր ծնողներուն չհնազանդող զաւակը կարելի չէ հաւատարիմ զաւակ սեպել, այնպէս ալ, մնայուն կերպով Քրիստոսի չհետեւող հաւատացեալը՝ Աստուծոյ հաւատարիմ զաւակը չի նկատուիր:

Մի՛շտ պէտք է հետեւիլ Քրիստոսի եւ հաւատարիմ մնալ իրեն, բայց մանաւանդ դժուարին օրերուն: Դիւրին է հետեւիլ Քրիստոսի երբ կ'առաջնորդուինք հեզասահ եւ վարդաձածկ ցամբաներէ, բայց Քրիստոս կը սպասէ մեզմէ որ հետեւինք եւ հաւատարիմ մնանք իրեն մանաւանդ սեւ օրերուն, դժուարին օրերուն:

Խաղաղութեան օրերուն, շատ հաւատացեալներ կը յայտարարեն թէ կը վստահին Յիսուսի, բայց երբ խոռվութեան ու փորձութեան օրերը վրայ հասնին՝ անոնցմէ շատեր Աստուծմէ աւելի իրենց իմաստութեան եւ իրենց անձերուն կարողութեան կը վստահին: Փորձութեան օրերն են որ հանդէս կը բերեն մեր հաւատքը: Փորձութեան օրերուն Աստուծոյ չապաւինիլը՝ Աստուծոյ հանդէպ անվստահութեան արտայայտութիւն է: Երբ կը թուի որ ամէն դուռ փակուած է եւ ամէն յոյս չ'ապագա՝ ցիշղ ա՛յն

ատեն է որ պէտք է վստահինք Քրիստոսի, եւ ասիկա խորքին մէջ ուրիշ բան չէ եթէ ոչ մեր խաչը առնելով Յիսուսի հետեւիլ:

3.- Խաչ առնել եւ Յիսուսի հետեւիլ՝ գոհողութեան կեանք ապրիլ կը նշանակէ: Զոհողութիւնը միայն ուրիշին համար որոշ գոհողութիւններ յանձն առնելը չէ: Զոհողութիւն է մանաւանդ, երբ անձնապէս վնասներ կը կրենք Քրիստոսի հետեւորդներ ըլլալնու համար: Մարդիկ կան որոնք Քրիստոսի հետեւորդութեան համար իրենց պաշտօններէն կը զրկուին, իրենց դիրքերէն ու հանգամանքներէն կը հեռացուին:

Երբեմն մեզի մօտիկ ու մտերիմ մարդիկ կը հեռանան մեզմէ, երբ մենք մօտենանք Քրիստոսի: Ասիկա գոհողութիւն չէ՞, խաչ չէ՞: Երբ յանձն կ'առնենք գործ ու գործընկեր կորսնցնել Յիսուսի սիրոյն համար՝ ասիկա խաչ առնել եւ Յիսուսի հետեւիլ չի՞ նշանակեր: Երբ կ'ընդունինք պաշտօնէն ու դիրքէն զրկուիլ Յիսուսի սիրոյն համար՝ ասիկա խաչ առնել եւ Յիսուսի հետեւիլ չի՞ նշանակեր:

4.- «Ով որ իք խաչը չ'առնէր եւ ինծի չի հետեւիր...»: «Իր» բառը կը պարզէ որ ամէն հաւատացեալ իրեն յատուկ տառապանքի բաժակ մը ունի գոր պէտք է անխուսափելիօրէն ըմպէ: Ժողովուրդը կ'ըսէ. «Ամէն մարդ իր խաչը ունի»: Եւ ասիկա շիտակ է: Առանց տառապանքի եւ նեղութեան չենք կրնար հասնիլ Աստուծոյ արքայութեան՝ ուր չկայ տառապանք եւ նեղութիւն: Տառապանքի ցամբով է որ կը հասնինք խոստացուած անտառապանք կեանքին:

5.- Մեր խաչը առնել եւ Յիսուսի հետեւիլ, նաեւ ցոյց կու տայ որ իբրեւ քրիստոնեաներ, կոչուած ենք ամենօրեայ խաչելութեան կեանք ապրելու: Այդ խաչը կրնայ ուրիշին կողմէ պարտադրուիլ մեզի, կրնայ պայմաններու բերումով ըլլալ, կրնայ Աստուծոյ օրհնեալ աշին թոյլտուութեամբ ըլլալ, եւ կրնայ նաեւ մեր անձնական կամքով ու ճիգով ըլլալ. օրինակ, երբ ես-ս կ'ուզէ երեւիլ, ես պէտք է ես-իս սորվեցնեմ քաջուիլ հրապարակէն եւ թոյլ տալ որ Տէրը ինք երեւի (հմմտ Յե 3.30): Ամէն անգամ երբ մեր ներսիդին եսասիրութիւնը գլուխ ցցէ՝ պէտք է խոնարհութեան ու հեզութեան մուրհով ճզմենք այդ ցցուած գլուխը, եւ այս ընելը ուրիշ բան չէ եթէ ոչ մեր խաչը առնել եւ Յիսուսի հետեւիլ, որովհետեւ ամենէն դժուարին ու ծանր պայքարը գոր կոչուած ենք մղելու՝ մեր ես-ին դէմ ուղղուած պայքարն է:

6.- «Ով որ իր խաչը չ'առնէր եւ ինծի չի հետեւիր...»: Քրիստոս այս բառերով կոչ մըն է որ կ'ուղղէ իր հետեւորդներուն՝ տառապանքի խաչը իրենց ուսին առած՝ յօժարակամ եւ սիրայօժար իքեմ հետեւելու: Ինչո՞ւ շեշտեցի «իրեն» բառը: Որովհետեւ ամէն մարդ կը տառապի, բայց ամէն մարդ Քրիստոսի համար չէ որ կը տառապի: Կարելորդ՝ Քրիստոսի

համար տառապիլն է: Քրիստոսի՝ համար տառապողն է որ Քրիստոսի արքայութիւնը պիտի մտնէ եւ ոչ թէ ուրիշ բանի համար: Յիսուս երանի չի տար բոլոր անոնց որոնք կը հալածուին, այլ միայն անոնց՝ որոնք իրե՛ն համար եւ իր հետեւորդները ըլլալնուն համար կը հալածուին (Մտ 5.11):

Նախատինքնը հետը ուրախութիւն եւ վարձատրութիւն չի բերեր եթէ ասիկա Քրիստոսի համար չէ որ կը կրենք: Եթէ Քրիստոսի հետեւորդներն ենք եւ Սուրբ Հոգիով է որ կ'առաջնորդուինք՝ անպայման ուրախութեամբ կը լեցուինք երբ նախատուինք Քրիստոսի համար, միշտ ինչպէս առաքեալները իրենք, ուրախացան երբ «Տիրոջ անունին համար անարգանքի արժանացան» (Գրծ 5.41): Նախատինքնի դիմաց այդ ուրախութիւնը չենք կրնար ապրիլ եթէ երբեք չենք ներբնակուած Սուրբ Հոգիով, բայց Յիսուսի համար նախատուիլը ինքնին Սուրբ Հոգիին ներկայութեան ապացոյցն է մեր ներսիդին, ահա թէ ինչու, Պետրոս առաքեալ կ'ըսէ. «Եթէ Քրիստոսի անունին համար նախատուիք՝ երանելի էք՝ որովհետեւ կը նշանակէ՝ թէ Աստուծոյ փառաւորիչ Հոգին ձեր վրայ հանգչած է» (Ա.Պտ 4.14):

7.- Մեր խաչը առնել եւ Յիսուսի հետեւիլ, նաեւ կը նշանակէ պատրաստ ըլլալ դիմակալելու ամէն տառապանք մեր առաքելութեան նամբուն վրայ: Դէպի Քրիստոս մեր գնացին մէջ անկասկած որ պիտի հանդիպինք արգելքներու եւ խոչընդոտներու, բայց երբ սորվինք մեր խաչը առած Քրիստոսի հետեւիլ, այլ խօսքով՝ մեր հայեացքը կեդրոնացնել Քրիստոսի վրայ եւ մեր ոտքերը ամուր պահել անոր նամբուն մէջ՝ այն ատեն, ամէն արգելք պիտի վերցուի եւ ամէն խոչընդոտ պիտի յաղթահարուի:

8.- «Ով որ իր խաչը չ'առնէր եւ ինծի չի հետեւիր, ինծի աշակերտ չի կրնար ըլլալ»: Յիսուս չ'ըսեր. «Խաչդ առ եւ քեզի յատուկ նամբայ մը ընտրէ», այլ կը պատուիրէ մեր խաչը առնել եւ իրե՛ն հետեւիլ: Կարելոր է նկատի առնել որ Յիսուս մեզ կը հրաւիրէ իրեն հետեւելու: Սա ցոյց կու տայ որ արքայութեան հասնիլ ուզող մարդը՝ պարտի Քրիստոսի՝ նամբան ընտրել, Քրիստոսի՝ նամբէն քալել, անո՛ր ոտնահետքերուն հետեւիլ, եւ ո՛չ թէ իրեն յատուկ նամբայ մը «ստեղծէ»:

Շատ մարդիկ կան որոնք կ'ուզեն երկինք հասնիլ, բայց չեն ուզեր Քրիստոսի բացած նամբէն ընթանալ. աւելի դիւրին եւ հանելի նամբաներ կը փնտոեն եւ կ'որդեգրեն, որովհետեւ կը վախճան կեանքի փուշերէն: Կեանքի փուշերէն վախցողները՝ չեն կրնար տիրանալ արքայութեան վարդերուն: Իր երկնաւոր Ուսուցիչին նամբէն չ'ալող

մարդը՝ Քրիստոսի «աշակերտ չի կրնար ըլլալ»: Իսկական հաւատացեալը իր Ուսուցիչին հետեւող մարդն է:

«Եթէ ձեր մէջէն մէկը ուզէ աշտարակ մը շինել, նախ չի՞ նստիր եւ ծախսերը չի հաշուեր, տեսնելու համար թէ գործը վերջացնելու չափ դրամ ունի՞: Այլապէս, երբ հիմը նետելէ ետք՝ չկարենայ աշտարակը աւարտել, բոլոր տեսնողները պիտի սկսին ծիծաղիլ իր վրայ, ըսելով.՝ Այս մարդը շինել սկսաւ, բայց չկրցաւ աւարտել» (Ղկ 14.28-30):

Ինչո՞ւ Յիսուս խօսելէ ետք մեր խաչը առնելու եւ իրեն հետեւելու մասին՝ անմիջապէս կը խօսի աշտարակ շինելու մասին: Ի՞նչ կապ կայ խաչը առած Յիսուսի հետեւելու եւ աշտարակաշինութեան միջեւ: Շատ սերտ կապ կայ.՝

1.- Ղկ 14.28-ին մէջ մենք ունինք «ծախսերը» բառը որուն Յունարէնը (δραστηριον - տափանիւն) բառն է: «Ծախս» բառը կարելորդ իմաստ մը կ'ընդգրկէ որ մեր ուշադրութենէն պէտք չէ վրիպի: Աշտարակ կառուցելը, մանաւանդ անցեալին, շատ ծախսալից էր, եւ ո՛չ միայն ծախսալից, այլեւ յոգնեցուցիչ եւ մեծ գոհողութիւններ պահանջող գործ մըն էր: Հետեւաբար, Յիսուսի ըսել ուզածը հետեւեալն է.՝ Ինչպէս աշտարակ կառուցել ուզող մարդը կը նստէր եւ կը մտածէր իր ընելիք ծախսերուն եւ քաշելիք տառապանքին մասին, այնպէս ալ, ոեւէ մարդ որ ուզէ խաչը շակած հետեւիլ Քրիստոսի, պէտք է հարց տայ ինքնիրեն թէ արդեօք պատրաստ է ամէն ծախս ընելու, այլ խօսքով՝ ամէն գոհողութիւն յանձն առնելու: Ծախս ընելը՝ գոհողութիւն ընել կը նշանակէ, եւ ճիշդ այս է որ Քրիստոս կը պահանջէ իր հետեւորդներէն: Զոհողութենէն վախճողը չի կրնար աշակերտիլ Փրկիչին:

2.- Ինչպէս աշտարակ շինել մտածող մարդը նախ կը նստի եւ կը հաշուէ աշտարակաշինութեան ծախսերը, որպէսզի չըլլայ որ գործի սկսելէ յետոյ՝ ստիպուած ըլլայ գործը կիսատ ձգելու, այնպէս ալ, Քրիստոսի հետեւիլ ուզող մարդը՝ պէտք է նախ նստի եւ մտածէ, «տեսնելու համար թէ գործը վերջացնելու չափ դրամ ունի՞» արդեօք, այլ խօսքով՝ անհրաժեշտ եղած հաւատքի քարիւղն ու գորաւոր կամքը ունի՞, անհրաժեշտ եղած կարողութիւնը ունի՞, ամէն դժուարութիւն անտեսելով մնայուն կերպով Քրիստոսի հետեւելու պատրաստակամութիւն ունի՞:

«Գործը վերջացնելու չափ դրամ ունի՞»: Այս հարցունքը ամէն մէկուն ուղղուած է: Մենք գործը վերջացնելու չափ դրամ ունի՞նք, այլ խօսքով՝ մեր հաւատքի ընթացքը յաղթականօրէն իր աւարտին հասցնելու անհրաժեշտ հաստատամտութիւնն ու հաստատակամութիւնը ունի՞նք: Պիտի կարենա՞նք մեր կեանքի վերջալոյսին ըսել այն ինչ

որ Պողոս առաքեալ ըսաւ. «Բարի պատերազմը մղեցի, կեանքիս ընթացքը աւարտեցի, հաւատքը պահեցի: Ասկէ ետք ինձի կը մնայ միայն սպասել արդարութեան պսակին, որ Տէրը արդար Դատաւորը, իբրեւ հատուցում՝ ինձի պիտի տայ դատաստանի օրը» (Բ.Տմ 4.7-8):

3.- Զուր տեղ չէ որ Քրիստոս աշտարակի օրինակը կու տայ, խօսելու համար անոնց մասին՝ որոնք իրենց խաչը կը շալկեն եւ իրեն կը հետեւին: Եթէ գիտնանք թէ ի՞նչ է աշտարակը եւ թէ ի՞նչ բանի համար կը գործածուէր ատիկա անցեալին, կարելոք բան մը յայտնաբերած կ'ըլլանք: Աշտարակը այն բոլորակաձեւ նեղ եւ բարձր կառուցուածքն էր, որ ընդհանրապէս կը գործածուէր սահմանապահ զինուորներու դիտարան իբրեւ: Զինուորներ աշտարակին գագաթին վրայ կը կանգնէին, որպէսզի տեսնէին թշնամիին գալը եւ անմիջապէս ազդարարութեան փողը հնչեցնէին:

Իր խաչը շալկող եւ Քրիստոսի հետեւիլ ուզող մարդուն պարագան միշտ նոյնն է: Ինչպէս աշտարակին վրայ եղողը յստակ կը տեսնէր թշնամիին գալը, այնպէս ալ Քրիստոսի նամբուն վրայ եղող հաւատացեալը՝ յստակ կը տեսնէ իր հոգիի թշնամիին՝ Սատանայի մերձեանալը իրեն: Աշտարակը պատերազմի խորհրդանիշ է հետեւաբար, կամ աւելի միշտ՝ պատերազմի պատրաստ ըլլալու խորհրդանիշ: Ուստի, աշտարակ շինող մարդուն օրինակը տալով, Քրիստոս կոչ կ'ուղղէ իր հետեւորդներուն պատրաստ ըլլալու հոգեւոր պատերազմի ընդդէմ Զարին ու մեղքին:

Արդարեւ, Պողոս առաքեալ կը յիշէ որ մենք պատերազմի մէջ ենք «երկինքի տակ գտնուող չար ոգիներուն, իշխանութիւններուն եւ պետութիւններուն, այս խաւար աշխարհի տիրակալներուն դէմ» (Եփ 6.12): Ինչպէս աշտարակ բառը «պատերազմ» կը յուշէ եւ ցոյց կու տայ որ հաւատացեալ մարդը պատերազմի մէջ է Զարին դէմ, ուրիշ բաներ եւս կան գործածուած Պողոս առաքեալին կողմէ, ինչպէս օրինակ՝ զրահ, վահան, սաղաւարտ, սուր (Եփ 6.14-17), որոնք, դարձեալ, կը յիշեցնեն մեզի որ մենք պատերազմի մէջ ենք մը հոգիներու թշնամիին՝ Սատանային դէմ:

4.- Արդէն ըսի, թէ աշտարակը այն տեղն է ուր զինուորը կը կենայ տեսնելու համար թշնամիին գալը: Ես կը հաւատամ որ Յիսուս այս օրինակը տալով, ուզեց սորվեցնել մեզի, թէ իսկական հաւատացեալը կարող է տեսնել եւ պէտք է տեսնէ թէ ի՞նչպէս Սատանան եւ անոր պիղծ դեւերը կը մօտեանան իրեն՝ յարձակում գործելու համար անոր վրայ:

Սուրբ Հոգիով առաջնորդուող հաւատացեալը՝ հոգեւոր եւ յստակ հայեացք եւ տեսողութիւն կ'ունենայ, որուն ուշադրութենէն չի կրնար

վրիպիլ Սատանան եւ անոր մերձեցման կերպը: Կարելի է ըսել որ աշտարակը խորհրդանիշ է խաչին. ինչպէս աշտարակը կ'օգնէ զինուորին որ յստակ տեսնէ թշնամիին գալը, այնպէս ալ, Քրիստոսի խաչին լոյսը կ'օգնէ Քրիստոսի զինուորին յստակ եւ երեւելի ձեւով տեսնելու աներեւելի թշնամին:

5.- Աշտարակը բարձր կ'ըլլայ, ուստի, անիկա կը պատկերացնէ դէպի երկնային բարձունքները ձգտող հոգին: Միւս կողմէ, աշտարակը կամ աշտարակին բարձրութիւնը կը յիշեցնէ մեզի, որ Քրիստոսի հետեւորդներուն կեանքը մնայուն «աշտարակաշինութեան», այլ խօսքով՝ մնայուն եւ յարանուն վերելքի կեանք մը պէտք է ըլլայ:

6.- Աշտարակը նեղ կ'ըլլայ, ուստի, անիկա կը խորհրդանշէ դէպի երկինք եւ դէպի կեանք տանող նեղ դուռն ու դժուարին ցամաքն:

7.- Աշտարակին գագաթը բարձրացող զինուորը թէւ առաջին անձը կ'ըլլայ որ կը տեսնէ թշնամին, բայց կրնայ նաեւ առաջին անձը ըլլալ որ թշնամիին թիրախը դառնայ: Առաջին կապարը ուտողը կրնայ ինք ըլլալ: Քրիստոսի հետեւող մարդը ինք եւս պէտք է նկատի առնէ, որ կրնայ «կապարուիլ», այլ խօսքով՝ խոցոտուիլ ու հալածուիլ, նախատուիլ ու անարգուիլ հոգեւոր կեանքի թշնամիներուն կողմէ:

8.- «Երբ հիմը նետելէ ետք՝ չկարենայ աշտարակը աւարտել...»: Որքա՛ն որքա՛ն մարդիկ հաւատքի հիմը նետելէ ետք՝ չեն կրցած յաղթականօրէն աւարտել իրենց հաւատքի կեանքը: Որքա՛ն մարդիկ խանդավառութեամբ սկսած են շինել իրենց հաւատքի աշտարակը եւ կիսատ ձգած են: Որքա՛ն մարդիկ իրենց խաչը առնելու եւ Քրիստոսի հետեւելու խոստումներ կատարած են եւ սակայն պարտուած ինկած են այդ խաչի ցամաքին վրայ:

Նախընտրելի է բնա՛ւ չխոստանալ հետեւիլ Քրիստոսի, քան խոստանալ եւ ապա խոստումը դրժել: Աւելի լաւ է երբե՛ք ցամաքայ չելլել, քան ելլել եւ կէս ցամաքուն ետ դառնալ: Պետրոս առաքեալ խօսելով Քրիստոսի հաւատքը ընդգրկած եւ այդ հաւատքէն դարձեալ հեռացած մարդոց մասին՝ կ'ըսէ. «Աւելի լաւ կ'ըլլար՝ որ անոնք բնաւ ցանչցած չըլլային արդարութեան ցամաքն, քան թէ ցանչնալէ ետք՝ հեռանային իրենց աւանդուած սուրբ պատուիրանէն» (Բ.Պտ 2.21):

9.- Որո՞նք են աշտարակ շինողները: Աշտարակ շինելու ձեռնարկողները անոնք են՝ որոնք կը յայտարարեն թէ իրենք Քրիստոսի հետեւորդներն են: Իւրաքանչիւր հաւատացեալ աշտարակ շինող անձ մը պէտք է ըլլայ: Այդ աշտարակին հիմերը խոր եւ անսասան ժայռերու վրայ հաստատուած պէտք է ըլլայ, որպէսզի կեանքի փոթորիկները չկարենան տապալել գայն:

10.- Ինչպէս աշտարակի վրայ բարձրացողին պարտականութիւնն է ոչ միայն տեսնել թշնամիին գալը եւ անձնապէս պաշտպանուիլ, այլեւ ուրիշն ալ տեղեակ պահել թշնամիին գալուն վերաբերեալ: Ասիկա պարտականութիւնն է Քրիստոսի բոլոր հետեւորդներուն:

«Կամ, եթէ թագաւոր մը տասը հազար հոգինոց բանակով մը ուզէ պատերազմի ելլել իսկն հազար հաշուող բանակով մը իր դէմ եկող թագաւորի մը դէմ, նախ չի նստիր եւ չի՞ մտածեր, թէ արդեօք պիտի կարենա՞յ յարթել անոր: Այլապէս, տակաւին հեռուէն, պատգամաւոր պիտի դրկէ՝ հաշտութիւն խնդրելու համար անկէ» (Ղկ 14.31-32): Քանի մը նշումներ.-

1.- Պատերազմի գացող մարդուն օրինակը տարբեր է աշտարակ շինող մարդուն օրինակէն, եւ անոր հակառակ իմաստը կ'ընդգրկէ: Բացատրեցինք որ աշտարակ շինող մարդը Սատանային դէմ է որ կը պայքարի, մինչդեռ պատերազմի գացող թագաւորը, որ կը ներկայացնէ մարդ արարածը՝ Քրիստոսի դէմ է որ կը պայքարի:

2.- Ինչո՞ւ մարդը կը կոչուի «թագաւոր»: Թագաւոր կը կոչուի երկու պատճառով.-

ա) Տոյց տալու համար որ մարդ արարածը կոչուած է թագաւոր ըլլալու եւ Աստուծոյ թագաւորութեան ժառանգորդ դառնալու: Քրիստոս պարզ թագաւոր մը չէ, այլ թագաւորներուն Թագաւորն է (Յյտ 19.16): Երբ Քրիստոս «թագաւորներու Թագաւոր» կը կոչուի, յստակ է որ ըսել ուզուածը այն է՝ որ ան կը թագաւորէ թագաւորներու վրայ: Իսկ որո՞նք են այն թագաւորները որոնց վրայ կը թագաւորէ Քրիստոս: Անոնք աշխարհի թագաւորները չեն: Անոնք նոյնիման Աստուծոյ հաւատարիմ գաւակներն են, որոնք արքայութիւնը պիտի ժառանգեն: Այս իմաստով, Քրիստոս կը թագաւորէ թագաւոր ըլլալու կոչուած թագաւորներու վրայ:

բ) Ուրիշ մեկնութիւն մըն ալ կայ «թագաւոր» բառին վերաբերեալ: Մարդ արարածը կը ներկայացուի Աստուծոյ դէմ պատերազմի գացող թագաւոր իբրեւ, ցոյց տալու համար, թէ երբ մարդիկ մոռնան իրենց արարիչը, սիրեն մեղքի կեանքը, իրենք զիրենք՝ իրենց կեանքներուն տէրն ու թագաւորը կարծեն, եւ փորձեն Աստուծմէ անկախ թագաւորութիւն մը ստեղծել, անոնք պատերազմ յայտարարած կ'ըլլան Աստուծոյ դէմ:

3.- Ըսինք որ պատերազմի գացող թագաւորը կը ներկայացնէ մարդ արարածը: Իսկ ի՞նչ բան կը ներկայացնէ «տասը հազար հոգինոց բանակը» գոր մարդը իրեն հետ կ'առնէ: «Տասը հազար հոգինոց բանակը» կը ներկայացնէ կամ կը պատկերացնէ մարդուն ամբողջ

կարողութիւնները, ատակութիւնները, գորութիւնը, ֆարտարութիւնն ու ֆարպիկութիւնը: Ըսել ուզուածը, հետեւաբար, այն է՝ որ մարդ արարածը չի կրնար պատերազմիլ Աստուծոյ դէմ, նոյնիսկ եթէ իր ամբողջ կարողութիւնը, գորութիւնը եւ ֆարպիկութիւնը ի գործ դնէ: Այդ պատերազմէն մարդը պարտուած դուրս պիտի գայ:

4.- Մարդը որքան ալ իր մեղքերով պատերազմի Աստուծոյ դէմ՝ ի վերջոյ պիտի պարտուի, եւ ո՛չ միայն պիտի պարտուի, այլեւ պիտի յանձնուի, եւ ճիշդ ասոր է որ կ'ակնարկէ Քրիստոս երբ կ'ըսէ. «Տակաւին հեռուէն, պատգամաւոր պիտի դրկէ՝ հաշտութիւն խնդրելու համար անկէ»:

5.- Ուշագրաւ է որ մարդ արարածը ինքն է որ պատերազմի կ'երթայ Աստուծոյ դէմ եւ ո՛չ թէ Աստուած է որ պատերազմի կու գայ իրեն դէմ: Նախայարձակը կարծէ՛ք մարդը ինքն է: Պատերազմի առաջին փայլը նետողը մարդը ինքն է: Բայց բնականօրէն Աստուած լուռ եւ անտարբեր չի մնար երբ մարդը իր մեղքերով պատերազմ կը յայտարարէ իրեն դէմ, այլ ինքն ալ՝ իր կարգին, «դէմ կը դնէ» մարդուն, այլ խօսքով՝ թոյլ չի տար որ մարդը իր գործած մեղքերով եւ իր մեղքի կեանքով յաջողակ ու յաղթական պատերազմ մը մղէ իրեն դէմ:

6.- Երբ Աստուծոյ համար կ'ըսուի թէ դէմ կ'ելլէ իրեն դէմ պատերազմի եկող մարդուն դէմ, ըսել կ'ուզուի, թէ ան կ'ընդդիմանայ մարդուն չար ծրագիրներուն եւ թոյլ չի տար որ իրականացնէ զանոնք, մանաւանդ եթէ անոնք կը հակասեն իր փրկութեան ծրագիրին եւ կը խանգարեն զայն:

7.- Երբ կ'ըսենք թէ Աստուած դէմ կը դնէ մեղքով իրեն դէմ պայքարողին, ասիկա ինքնին ցոյց կու տայ Աստուծոյ զգուանքը հանդէպ մեղքին. այո՛՛ մեղքին, եւ ո՛չ թէ մեղաւորին: Աստուած մեղաւորին դէմ չէ որ կը պայքարի, այլ մեղաւորին մէջ բոյն դրած մեղքին դէմ: Ան մեղքն է որ կ'ուզէ փնացնել եւ ո՛չ թէ մեղաւորը: Մեղքն է որ կ'ուզէ արմատախիլ ընել եւ ո՛չ թէ մեղաւորը: Աստուած պատրաստ է հաշտութեան ձեռք երկարելու ոեւէ մեղաւոր մարդու որ կը գղջայ, կ'ապաշխարէ եւ հաշտութիւն կը խնդրէ. ասիկա՛ է որ ցոյց կու տայ Յիսուսի խօսքը. «Այլապէս, տակաւին հեռուէն, պատգամաւոր պիտի դրկէ՝ հաշտութիւն խնդրելու համար անկէ»:

8.- «Տակաւին հեռուէն, պատգամաւոր պիտի դրկէ...»: Ի՞նչ ցոյց կու տայ Քրիստոսի համար գործածուած «հեռու» բացատրութիւնը: Յոյց կու տայ որ Քրիստոս տակաւին «հեռու» է, այլ խօսքով՝ տակաւին անոր երկրորդ գալուստը տեղի չէ ունեցած: Մեղաւոր մարդիկ ժամանակն ու առիթը ունին դարձի գալու եւ անկեղծ

ապաշխարութեամբ իրեն յանձնուելու: Այդ առիթն ու ժամանակը պէտք է կորսնցնեն, քանի ամէն մէկ օրը որ կ'անցնի՝ մեզ օրով մը կը մօտեցնէ Փրկիչին երկրորդ գալուստին:

Անցնելէ առաջ վերջին համարի բացատրութեան, կ'ուզեմ հետեւեալ կարեւոր ընդգծումը ընել. -- «Պատերազմ» բառը ցոյց կու տայ որ մեղքի կեանք ապրող մարդը՝ Աստուծոյ դէմ մարտնչող, Սուրբ Հոգիին ընդդիմացող, Քրիստոսի հակառակող մարդ է: Դժբախտութիւն չէ՞ որ մարդը իր մեղքերով կոուի իր Արարիչին դէմ, իր Փրկիչին դէմ: Ի՞նչ է կոչումը մարդուն: Աստուծո՞յ դէմ կոուիլ, թէ՛ Սատանային ու մեղքին: Ի՞նչ կ'ըսէ Պօղոս առաքեալ այս մասին: Ան կը հաստատէ թէ մենք պատերազմի մէջ ենք՝ «երկինքի տակ գտնուող չար ոգիներուն, իշխանութիւններուն եւ պետութիւններուն, այս խաւար աշխարհի տիրակալներուն դէմ» (Եփ 6.12):

Ամօթ չէ՞ որ մարդը իր թշնամիին՝ Սատանային դէմ պայքարելու փոխարէն, իր բարեբար ու բարի Փրկիչին դէմ պայքարի: Յիսուս աշխարհ գալով՝ մարդո՞ւն դէմ էր որ պայքարեցաւ, թէ՛ Սատանային դէմ: Յիսուս իր արիւնով մարդի՞կը պարտութեան մատնեց, թէ՛ Չարը: Ուստի, քննենք մեր անձերը եւ տեսնենք թէ որո՞ւ դէմ է որ կը պայքարինք: Նստինք եւ լրջօրէն մտածենք այս հարցին մասին. Յիսուս ինքն է որ կը թելադրէ որ նստինք եւ մտածենք՝ «նախ չի նստիր եւ չի՞ մտածեր»: Առանց մտածելու բան չընենք: Խենթութիւն է կոուիլ Աստուծոյ դէմ, մեր միակ յոյսին դէմ, մեր միակ Փրկիչին դէմ, մեր միակ միսիթարութեան դէմ: Եթէ մենք պիտի տրամեցնենք մեր Միսիթարիչը՝ հապա ո՞վ մեզ պիտի միսիթարէ: Եթէ մեր Ապաւէնին դէմ պիտի ելլենք՝ հապա ո՞վ մեզի ապաւէն պիտի կենայ:

«Նմանապէս, ձեր մէջէն անոնք որոնք չեն կրնար հրաժարիլ իրենց ամբողջ ունեցածէն, չեն կրնար ինձի աշակերտ ըլլալ» (Ղկ 14.33): Քանի մը նշումներ. --

1.-- «Հրաժարիլ»: Կարելոր է այս բառը: Քրիստոսի հետեւիլ ուզող մարդը՝ պատրաստ պէտք է ըլլայ հրաժարելու ոնէ է բանէ որ արգելք կը հանդիսանայ իր հաւատարիմ հետեւորդութեան: Օրինակ, եթէ արգելքը դրամն է՝ պէտք է դրամէն հրաժարիլ: Եթէ արգելքը մեր հարազատներէն մէկն է՝ պէտք է հեռանալ անկէ: Եթէ արգելքը մեր ես-ն է՝ պէտք է կամաւոր ինքնախոնարհեցումի ճամբով փնացնենք զանիկա մեր ներսիդին: Եթէ արգելքը մեր միջավայրն է՝ պէտք է տեղափոխուինք այլուր:

Քրիստոսի մեր հետեւորդութեան արգելք կրնայ հանդիսանալ նաեւ ոնէ է գէշ բնաւորութիւն մը կամ վատ սովորութիւն մը որ մեզ

գերեվարած է: Օրինակ, եթե մէկը բարկացոս բնաւորութիւն ունի՝ պէտք է խաղաղութեան Իշխանէն խաղաղ բնաւորութիւն մը խնդրէ: Եթէ մէկը սուտ խօսելու սովորութիւն ունի՝ պէտք է աղաչէ ֆշմարտութեան Հոգիին որ զինք ազատագրէ այդ սովորութենէն: Եթէ մէկը բամբասելու վատ բնաւորութիւն ունի՝ պէտք է խնդրէ Աստուծմէ որ բարեխօս լեզու պարգեւէ իրեն: Արգելքները կրնան բազմատեսակ եւ այլազան ըլլալ, այդ բոլորին մասին խօսիլ պէտք չկայ, հիմնական ֆշմարտութիւնը որ մեր մտքին մէջ ունենալու ենք, այն է՝ որ պէտք է մեր կապը խզենք ոեւէ բանի հետ որ մեզ կը հեռացնէ Քրիստոսի քամբէն:

2.- Երբ Քրիստոս կը հաստատէ թէ «անոնք որոնք չեն կրնար հրաժարիլ իրենց ամբողջ ունեցածէն, չեն կրնար ինծի աշակերտ ըլլալ», երբեք ըսել չ'ուզեր թէ ամէն ինչ պէտք է ձգել եւ իրեն հետեւիլ: Յիսուս մեզմէ կը պահանջէ որ հրաժարինք միայն այն բաներէն՝ որոնք արգելք են որ իրեն հետեւինք: Օրինակ, դրամ ունենալը սխալ չէ, բայց եթէ դրամը արգելք մըն է որ աշակերտինք Տիրոջ՝ այդ պարագային պէտք է հրաժարիլ դրամէն: Յիշեցէք որ Յիսուս մեծահարուստէն պահանջեց որ ծախէ իր ունեցածը եւ աղքատներուն տայ, իսկ Ջակֆէռուէն նման բան չպահանջեց: Ինչո՞ւ արդեօք: Ան մեծահարուստէն պահանջեց հրաժարիլ իր հարստութենէն՝ որովհետեւ հարստասիրութեան ախտը տեսաւ անոր մօտ: Անկէ պահանջեց օգնել աղքատներուն՝ որովհետեւ աղքատներուն հանդէպ անտարբերութիւն տեսաւ անոր մօտ: Մինչդեռ Ջակֆէռուէն չպահանջեց իր հարստութենէն հրաժարիլ՝ որովհետեւ անօր մօտ հարստասիրութիւն չտեսաւ, ընդհակառակը՝ մարդասիրութիւն տեսաւ:

3.- «Հրաժարիլ... ամբողջ ունեցածէն» խօսքին մէջ ուրիշ կարեւոր բան մըն ալ կարելի է տեսնել: Պէտք է մարդը հրաժարի ինքզինք բան մը կարծելու ախտէն ու հպարտութենէն, եթէ երբեք կ'ուզէ աշակերտիլ Քրիստոսի: Որքան մարդիկ կան, նոյնիսկ հոգեւոր կեանք ապրողներուն մէջ, որոնք իրենք զիրենք բան մը կը կարծեն, որոնք ինքնահաւան են, որոնք յանձնապաստան են, որոնք կը կարծեն որ իրենք են որ ուրիշին օրհնութիւն կու տան, իրենք են որ ուրիշը կը բժշկեն, իրենք են որ ուրիշները փրկութեան կը բերեն: Այսպիսի մարդոց մէջ Սուրբ Հոգին չի գործեր, այսպիսիներուն հետ Յիսուս չի գործակցիր:

Սիրելի՛ հաւատացեալ, հրաժարի՛ր այն մտածումէն թէ դուն ես որ մարդիկը կը փրկես: Հրաժարի՛ր այն մտածումէն թէ Աստուած պէտք ունի քեզի իր փրկութեան աւետարանը տարածելու համար: Հրաժարի՛ր այն համոզումէն թէ Աստուած պէտք ունի ձեռքբերուղ որպէսզի գործէ քու միջոցաւ եւ իրագործէ իր ծրագիրը: Ո՛չ, Աստուած պէտք չունի քեզի եւ ո՛չ ալ ինծի: Մե՛նք է որ պէտք ունինք Աստուծոյ որպէսզի

կարենանք մարդիկը փրկութեան բերել եւ ո՛չ թէ Աստուած՝ մեզի: Մե՛նք է որ կարիքը ունինք Աստուծոյ գործակցութեան եւ ո՛չ թէ Աստուած՝ մեր:

Պարապ ձեռքերով եկուր Յիսուսի եթէ երբեք կ'ուզես որ գանոնք լեցնէ: Օրհնութեան կարօտ հոգիով եկուր Աստուծոյ եթէ կ'ուզես օրհնութիւն ձեռք ձգել: Դուն քեզ օրհնութիւն մի՛ կարծեր, այլ՝ օրհնութեան կարօտ մարդ: Դուն վկան ես մարդկութեան Լուսաւորիչին եւ ո՛չ թէ լոյսը մարդկութեան:

ՊԱՐՏԱՏԵՐՆ ՈՒ ԵՐԿՈՒ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԸ

«Փարիսեցիներեն մէկը Յիսուսէն կը խնդրէր որ միասին ֆաշեն: Յիսուս գնաց անոր տունը եւ նստաւ ուտելու: Քաղաքին մէջ պոռնիկ կին մը կար, որ երբ լսեց թէ Յիսուս Փարիսեցիին տունն է, անուշահոտ ազնիւ իւղի շիշ մը առնելով՝ Փարիսեցիին տունը եկաւ. ետեւի կողմէն Յիսուսի ոտներուն մօտ կեցած՝ կու լար, արցունքներով անոր ոտները կը թրջէր եւ մագերով կը սրբէր, կը համբուրէր ոտները եւ իւղով կ'օծէր զանոնք:

Փարիսեցիին որ հրաւիրած էր Յիսուսը, ասիկա տեսնելով՝ ինքնհրեմ կ'ըսէր.

– Եթէ այս մարդը մարգարէ ըլլար պէտք է գիտնար թէ ո՛վ է իրեն մօտեցող այս կինը, եւ թէ ի՛նչպիսի մեղաւոր կեանք մը կ'ապրի ան:

Յիսուս Փարիսեցիին ըսաւ.

– Սիմոն, քեզի ըսելիք մը ունիմ:

– Ըսէ՛, Վարդապետ, – ըսաւ ան:

Յիսուս ըսաւ.

– Երկու հոգիներ փոխատուի մը դրամ պարտական էին. մէկը հինգ հարիւր արծաթ դրամ, միւսը՝ յիսուն: Երբ անոնք չկրցան դրամը վերադարձնել, պարտատէրը երկուքին ալ պարտքը ջնջեց: Հիմա դո՛ւն ըսէ, այս երկու պարտատէրներէն ո՞ր մէկը աւելի պիտի սիրէ զայն:

Սիմոն պատասխանեց.

– Ինծի այնպէս կը թուի թէ ան՝ որուն աւելի շատ շնորհեց:

– Ճի՛շդ դատեցիր, – ըսաւ Յիսուս:

«Ապա դառնալով դէպի կինը շարունակեց.

– Սիմոն, կը տեսնե՞ս այս կինը: Տունդ մտայ, բայց ոտներս լուսալու համար ջուր չտուիր, մինչ ասիկա իր արցունքներով ոտներս թրջեց եւ մագերովը սրբեց: Դուն բարի գալուստի համբոյր մը չտուիր ինծի, մինչ ասիկա տունդ մտնելէս ի վեր չդադրեցաւ ոտներս համբուրելէ: Դուն գլուխս իւղով չօծեցիր, մինչ ասիկա ոտներս օծեց անուշահոտ իւղով: Ուստի կ'ըսեմ քեզի, քանի զիս շատ սիրեց՝ ներուած եմ անոր բազմաթիւ մեղքերը: Որովհետեւ, անոր որ աւելի կը ներուի՝ անիկա աւելի սէր ցոյց կու տայ, իսկ անոր որ քիչ կը ներուի՝ աւելի քիչ կը սիրէ:

Ապա կնոջ դառնալով՝ ըսաւ.

– Մեղքերդ ներուած են:

Անոնք որոնք միասին նստած էին, սկսան իրենք իրենց ըսել.

- Ո՞վ է այս մարդը, որ նույնիսկ մեղքերը կը ներէ:
- Իսկ Յիսուս կնոջ ըսաւ.
- Հաւատե՛ղ քեզ փրկեց. խաղաղութեամբ գնա» (Ղկ 7.36-50):

Առակը 41-43 համարներն են միայն, բայց չենք կրնար գայն գտնել իր շրջագիծէն, այլապէս շատ բան պիտի վրիպի մեր ուշադրութենէն եւ անկարող պիտի ըլլանք թափանցելու առակին նշգրիտ իմաստին ու նպատակին: Ուստի, վերոյիշեալ հատուածը նկատի կ'ունենանք իր ամբողջութեանը մէջ:

«Փարիսեցիներէն մէկը Յիսուսէն կը խնդրէր որ միասին քաշեն: Յիսուս գնաց անոր տունը եւ նստաւ ուտելու» (Ղկ 7.36): Քանի մը մատնանշումներ.-

1.- Ճիշդ չենք գիտեր թէ ինչո՞ւ Սիմոն Փարիսեցիին Յիսուսը իր տունը հրաւիրեց քաշի: Արդեօք անկէ սորվելու Աստուծոյ թագաւորութեան նշգրիտ հասկացողութի՞ւնը. որոշ լուսաբանութիւններ՝ քաղելու անկէ. կամ Քրիստոսի Վարդապետի հանգամանքը օգտագործելով՝ իր համբա՞ւր տարածել եւ մարդոց խօսակցութեան առարկա՞ն դառնալ. յստակ չէ: Բայց մէկ բան յստակ է, որ Սիմոն Փարիսեցիին տարբեր էր միւս Փարիսեցիներէն, որոնց մէկ եւ միակ նպատակը Յիսուսի կեանքին եւ վարդապետութեան մէջ սխալներ գտնելն էր, Մովսէսի Օրէնքին եւ իրենց հայրերու աւանդութեանց հակասող տարբեր փնտտելն էր: Սիմոնի մօտ այդպիսի նպատակ կամ միտում չենք գտներ:

2.- Յիսուսի ընդառաջումը Սիմոն Փարիսեցիին խնդրանքին եւ անոր տուն քաշի երթալը, կը սորվեցնէ մեզի, թէ երբ Յիսուս հրաւեր առնէ մեղաւոր մարդէն գալու եւ իր սրտին մէջ բնակելու՝ իսկոյն կ'ընդառաջէ անոր խնդրանքին:

3.- Ճաշի հրաւիրողը Փարիսեցի մըն էր: Մենք գիտենք որ Փարիսեցիները ընդհանրապէս հակառակորդներն էին Քրիստոսի: Հակառակ այս իրողութեան, Քրիստոս այցելեց իրեն, եւ ինչո՞ւ. որպէսզի սորվեցնէր իրեն եւ մեզի, թէ Քրիստոս ի՞նչ երբեք հակառակորդի աչքով չէր նայեր եւ չի նայիր ոեւէ մարդու: Ոեւէ մէկը որ զինք կը հրաւիրէ իր սրտին մէջ՝ Յիսուս իսկոյն կ'ընդառաջէ հրաւերին: Մարդիկ կրնան հակառակ ըլլալ Յիսուսի, բայց Յիսուս ինք հակառակ չէ ոեւէ մէկուն: Ահա թէ ինչո՞ւ ան կ'ընդառաջէ նույնիսկ իր հակառակորդներուն կողմէ ուղղուած հրաւերներուն:

«Քաղաքին մէջ պոռնիկ կին մը կար, որ երբ լսեց թէ Յիսուս Փարիսեցիին տունն է, անուշահոտ ազնիւ իւղի շիշ մը առնելով՝ Փարիսեցիին տունը եկաւ» (Ղկ 7.37): Քանի մը մատնանշումներ.–

1.– «Պոռնիկ կին մը»: Ո՞վ էր այս պոռնիկ կինը: Աւետարանները այս մասին ո՛չ մէկ ակնարկութիւն կ'ընեն: Որոշ անհատներ կ'ենթադրեն որ անիկա նոյնինքն Մարիամ Մագդաղենացին էր, որմէ եօթը չար ոգիներ հանած էր Յիսուս (Ղկ 8.2): Այս ենթադրութիւնը Աստուածաշնչական ոեւէ հիմք չունի, ուստի՝ ատիկա կը մնայ ենթադրութիւն, եւ բոլորովին հեռու նշմարութենէն:

2.– Շատ հաւանական է որ այս պոռնիկ կինը նախապէս լսած էր Յիսուսի քարոզութիւնը, որ դպած էր իր սրտին, եւ որոշած էր գալ Տիրոջ, միայն թէ յարմար առիթին կը սպասէր: Եւ հիմա առիթը ներկայացած էր եւ կինը չէր ուզեր այս ոսկեայ առիթը փախցնել: Մեղքերը զինք կը տանջէին եւ կ'ուզէր գալ եւ զանոնք Յիսուսի ոտներուն առջեւ դնել: Հոսկէ կը սորվինք, թէ երբ ականջ տանք Քրիստոսի խօսքին, անոնք անպայման մեզ պիտի համոզեն մեր մեղաւորութեան եւ ծունկի բերեն խաչին առջեւ: Իր ականջը Քրիստոսի խօսքին բացողը՝ ուշ կամ կանուխ անպայման իր սիրտն ալ պիտի բանայ:

3.– Ինչո՞ւ այս պոռնիկ կինը եկաւ Յիսուսի: Մարմնական հիւանդութի՞նն մը ունէր արդեօք: Իգնատիոս Շնորհալի Վարդապետ, կը հաստատէ թէ այս մեղաւոր կինը չեկաւ Յիսուսի որովհետեւ մարմնական ցաւ մը կամ հիւանդութիւն մը ունէր, այլ՝ եկաւ իր մեղքերէն ձերբազատելու: Արդարեւ, անոր փնտոածը հոգեւոր բժշկութիւնն էր եւ ո՛չ թէ մարմնաւոր: Շատե՛ր կը փնտոէին Յիսուսը մարմնաւոր բժշկութիւն ձեռք ձգելու համար: Ուրիշներ գայն կը փնտոէին նիւթական ուտելիքի համար (Յհ 6.26): Բայց այս կինը չէր փնտոեր Յիսուսը այդ բոլորին համար: Անոր փնտոածը սրտի խաղաղութիւնն էր, հոգիի բժշկութիւնն էր, մտքի անդորրութիւնն էր, մեղքերուն ննշիչ ազդեցութենէն ձերբազատիլն էր: Իր այս վերաբերմունքով, այս մեղաւոր կինը, կը սորվեցնէ մեզի չփնտոել Տիրոջ ներկայութիւնը միայն մարմնաւոր հանգիստ ու բժշկութիւն ձեռք ձգելու համար, այլ գայն փնտոել մեղքերու փառութիւն, սրտի նորոգութիւն եւ հոգեւոր բժշկութիւն ձեռք ձգելու համար: Բայց այս բոլորէն աւելի, գայն փնտոել նոյնինքն՝ իրե՛ն համար, իր հետ ըլլալու համար, զինք ըմբռնելու համար, իրմով կշտանալու համար:

4.– «Երբ լսեց թէ Յիսուս Փարիսեցիին տունն է, անուշահոտ ազնիւ իւղի շիշ մը առնելով՝ Փարիսեցիին տունը եկաւ»: «Երբ լսեց... եկաւ»:

Այս երեք բառերը ցոյց կու տան որ այս մեղաւոր կինը ո՛չ միայն լսող ականջ ունէր, այլեւ՝ ընդառաջող սիրտ: Այսօր մարդիկ չե՞ն լսեր Քրիստոսի մասին: Ո՞ւր են Քրիստոսի եկողները: Չե՞ն լսեր ապաշխարութեան կոչեր՝ ո՞ւր են ընդառաջողները: Ի՞նչ կը սորվեցնէ մեզի այս կինը իր վերաբերմունքով: Կը սորվեցնէ մեզի միայն լսող չըլլալ, միայն ունկնդիր չըլլալ, միայն հանդիսատես չըլլալ, այլ ընդառաջող ըլլալ, մասնակցող ըլլալ, յանձնուող ըլլալ:

5.- Կինը ձեռքը պարապ չեկաւ Սիմոնին տունը: Եկաւ հետը բերելով «անուշահոտ ազնիւ իւղի շիշ մը»: Անուշահոտ իւղին հարմար երեք ամփոփ կէտեր.-

ա.- Աւետարանը մեզի չ'ըսեր թէ կինը իւղը գնեց Յիսուսի համար: Հաւանական է որ ատիկա գնուած ըլլար ուրիշ նպատակի մը համար գործածուելու: Ի՞նչ էր այդ նպատակը: Անցեալին պոռնիկներ իրենք զիրենք անուշահոտ իւղի տեսակներով կ'անուշահոտեցնէին, որպէսզի անոնց առիւթները եւ հրապուրիչ ըլլային: Ուրեմն, կինը տուեալ անուշահոտ իւղը գնած էր ինքն իր համար, բայց հիմա որ դարձի եկաւ՝ զայն յատկացուց Տիրոջ: Եւ ասով իսկ, մեզի սորվեցուց տալ Տիրոջ այն ինչ որ պատրաստած ենք մեզի համար:

բ.- Ուշագրաւ է որ կինը ջուրով չլուաց Յիսուսի ոտները, այլ՝ անուշահոտ իւղով: Ինչո՞ւ: Գիտենք, որ անցեալին արեւելեան երկիրներու մէջ սովորութիւն մը կար: Երբ մէկը հիւր մը ունենար, տանտէրը իր բով եկող հիւրերը յարգած ըլլալու համար՝ կը հրամայէր իր ծառային որ անոնց ոտները ջուրով լուար, բայց եթէ ուզէր ոնէ մէկը գերազանց յարգանքի եւ պատիւի արժանացնել՝ անոր գլուխը իւղով կ'օծէր: Այստեղ, կինը ջուր գործածելու փոխարէն՝ իւղ կը գործածէ, եւ գլուխը օծելու փոխարէն՝ ոտները կ'օծէ, ատով իսկ ցոյց տուած կ'ըլլայ թէ ինք բացառիկ յարգանք, բացառիկ սէր եւ բացառիկ ակնածանք ունէր հանդէպ Յիսուսին:

գ).- Կինը հասարակ բան չբերաւ, այլ՝ թանկագին բան: Հոսկէ կը սորվինք, թէ երբ նուիրատուութիւն մը, ողորմութիւն մը, բարերարութիւն մը կամ ոնէ բան պիտի տանք կամ ընենք Յիսուսի փառքին համար, ատիկա պէտք չէ հասարակ ու խոտելի բան ըլլայ: Պէտք է տանք թանկագինը՝ ինչպէս այս կինը ըրաւ:

«Նսեւի կողմէն Յիսուսի ոտներուն մօտ կեցած՝ կու լար, արցունքներով անոր ոտները կը թրջէր եւ մազերով կը սրբէր, կը համբուրէր ոտները եւ իւղով կ'օծէր զանոնք» (Ղկ 7.38): Քանի մը կէտեր.-

1.- «Նսեւի կողմէն Յիսուսի ոտքերուն մօտ կեցած»: Զարեհ Ա.բ. Ազնաւորեան կ'ըսէ. «Այս բացատրութիւնը հասկնալու համար պէտք է յիշել, որ անցեալին ճաշի կամ ընթրիքի հրաւիրեալները սեղանի մը շուրջ ընկողմանած կը բազմէին, գլուխները դէպի սեղանը եւ ոտքերը դէպի ետ»:

2.- «Կու լար, արցունքներով անոր ոտքերը կը թրջէր»: Մեղաւոր մարդը չի կրնար Յիսուսի գիրկը առնուիլ եթէ նախ չիտնարհի Յիսուսի ոտքերուն առջեւ: Զի կրնար երկինքի ուրախութիւնը ձեռք ձգել եթէ նախ չարտասուէ իր գործած մեղքերուն համար: Ահաւասիկ այս մեղաւոր կինը, գիտակից իր մեղքերուն, եկած էր իր Արարիչին ոտքերուն դիմաց խոնարհելու, զանոնք իր արցունքներով թրջելու: Իր այս ըրածին մէջ, մենք միայն մեղքէն ձերբազատելու ճիգ մը չէ որ կը գտնենք, այլ նաեւ ու մանաւանդ, Յիսուսը սիրելու, Յիսուսի հետ ըլլալու եւ Յիսուսի յաւիտեանական եղբայրը ըլլալու վառ փափակ մը: Մենք ունի՞նք այդպիսի փափակ մեր ներսիդին: Մեղաւոր այս կնոջ նման պատրաստ ենք խոնարհելու Յիսուսի ոտքերուն առջեւ եւ զանոնք մեր արցունքներով թրջելու: Թրջելու՝ ո՛չ անպայման մեզի համար, այլ նաեւ ուրիշին համար: Մեր կոչումը չէ՞ մարդիկը արցունքով Յիսուսի բերելը: Կրնա՞նք ընել կնոջ ըրածը: Կրնա՞նք խոնարհիլ Յիսուսի ոտքերուն դիմաց եւ համբուրել զանոնք, թէ՛ կը քաշուինք մեր Փրկիչին ոտքը համբուրելու:

3.- Խոնարհ էր այս կինը, շա՛տ խոնարհ: Ան գալով Տիրոջ գիրկը չնետուեցաւ. ո՛չ ալ անոր ձեռքը բռնեց եւ համբուրեց: Ան յարմարագոյն տեղը նկատեց Տիրոջ ոտքերուն ճակ ըլլալ: Զփնտոեց աւելին, չցանկացաւ աւելին: Նոյնը չըրա՞ւ Մարթայի բոլոր Մարիամ: Ինք եւս գալով Տիրոջ ոտքերուն ճակ չնստա՞ւ (Ղկ 10.39): Մեղաւոր կինը խոնարհեցաւ եւ Տէրը զինք բարձրացուց: Յիշեցէ՛ք Պետրոս առաքեալին խօսքը. «Աստուծոյ հօգոր ձեռքին տակ խոնարհեցէ՛ք, որպէսզի երբ յարմար ժամանակը գայ՝ ձեզ բարձրացնէ» (Ա.Պտ 5.6): Եթէ մեղաւոր կինը չիտնարհէր մինչեւ ոտքերը մեր սուրբ Տիրոջ, ան այսօր երկինքի մէջ պիտի չըլլար, մեր Տիրոջ կողմին: Յատա՛կ է պատգամը այս կէտին՝ այսօրուան մարդուն: Խոնարհ ըլլալ: Խոնարհիլ Աստուծոյ դիմաց: Աստուած կը գթայ խոնարհ մարդոց թէպէտ անոնք մեղաւոր ըլլան: Կը ներէ անոնց թէպէտ անոնք յանցապարտ ըլլան: Եթէ հպարտութիւնը երկինքէն դուրս դրաւ անմեղ Արուսեակ քերովքէն, շատ աւելի դիւրին կերպով արգելք պիտի չհանդիսանա՞յ որ մեղաւոր մարդը երկինք մտնէ: Եթէ հպարտութիւնը անմեղ հրեշտակը մեղաւոր դարձուց, ապա խոնարհութիւնը՝ մեղաւոր մարդիկը անմեղ հրեշտակներու կը վերածէ:

4.- «Մագերով կը սրբէր»: Ո՞վ գիտէ թէ անցեալին այս մեղաւոր կինը որքա՞ն կը պարծենար իր մագերով, որքա՞ն կը յոխորտար անոնցմով: Եւ ահա այս պահուս, իր պարծանքի ու յոխորտանքի առարկան՝ մագերը, կը նուիրէր Տիրոջ. անոնցմով Ամենասուրբին ոտքերը կը սրբէր: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Կնոջ համար երկար մագերը փառք են» (Ա.Կր 11.15): Ահա այս կինը, իր փառքը եղող իր մագերը կը դնէր Յիսուսի ոտքերուն տակ. իր փառքը եղող իր մագերով Սրբողին ոտքերը կը սրբէր: Ո՞ւր են անոնք որոնք պատրաստ են այս մեղաւոր կնոջ նման իրենց փառքը դնելու Տիրոջ ոտքերուն տակ: Ո՞ւր են անոնք որոնք հետեւելով այս կնոջ ֆայլերուն՝ իրենց պարծանքի ու յոխորտանքի առարկաները կը գետեղեն Փրկիչին ոտքերուն առջեւ:

5.- «Կը համբուրէր»: Ահա մեղաւոր մարդը գԱստուած կը համբուրէ եւ ֆաւութիւն կը հայցէ: Ահա մաքուր սրտէ բղխած համբոյր մը որ մնլած էր սիրտը Յիսուսի: Ան նախապէս իր համբոյրները ուրիշ անձերու համար գործածած էր, բայց յագեցում չէր գտած. անոր փնտռածը յագեցումն էր: Հոգեւոր ծարաւը զինք կը տանջէր: Սրտի դատարկութիւնը զինք կը չարչրկէր: Յագեցում կը փնտռէր, գոհացում կ'որոնէր: Եւ Աստուծոյ ձայնը իր խղճին միջոցաւ զինք առաջնորդեց կենսատու Փրկիչին՝ կեանքի Հացին՝ մշտապէս Աղբիւրին՝ Յիսուսի, ու համբուրեց անոր ոտքերը, եւ համբուրելով կշտացաւ, գոհացաւ եւ ուրախացաւ. ալ գտած էր ոչմարիտ Սէրը, իր իսկական Սիրահարը:

Տիրոջ տրուած ամէն համբոյր՝ համբոյր չէ: Յուդա Իսկարիոտացին ինք եւս համբուրեց Տէրը, բայց չհամբուրեց որպէսզի յագենար անով, այլ համբուրեց՝ որպէսզի յագեցնէր իր եսասիրութիւնը, իր դրամասիրութիւնը: Այսօր մեր կեանքին մէջ այս երկու տեսակ համբուրողներն ալ կան: Անոնք որոնք բարի-բարի կը խօսին բայց իրենք բարի չեն՝ Յուդա Իսկարիոտացիի խումբին կը պատկանին, իսկ անոնք որոնք կը խօսին եւ իրենց խօսածը կ'ապրին՝ թէպէտ մեղաւոր, բայց փրկուած կնոջ խումբին կը պատկանին: Անոնք որոնք Յիսուսի անունով կը խօսին եւ սիրել կը պատուիրեն բայց իրենք չեն սիրեր՝ անոնք Յուդա՛ են, Յուդա՛. իսկ անոնք որոնք սիրոյ մասին կը խօսին եւ իրենց սէրը գործնապէս կ'արտայայտեն, ճիշդ ինչպէս մեղաւոր կինը ըրաւ, անոնք յիշեալ մեղաւոր կնոջ նման անմեղ կը յայտարարուին Յիսուսի կողմէ:

6.- «Եւ իւզով կ'օծէր զանոնք»: Կինը իւզով Յիսուսի ոտքերը օծելով՝ անուղղակիօրէն ցանցած ու յայտարարած եղաւ անոր ՕՄԵԱԼ ԹԱԳԱԻՈՐ ըլլալը, այլ խօսքով՝ անոր Խոստացեալ Մեսիան ըլլալը: Եթէ կինը Յիսուսի անձին մէջ Խոստացեալ Մեսիային ու Փրկիչին ներկայութիւնը չտեսներ՝ անկարելի էր որ մօտենար իրեն եւ ոտքերը

թրջեր, համբուրեր ու օժեր: Հին Կտակարանի մէջ ոեւէ մեղաւոր անձ ման բան չէ ըրած ոեւէ մարգարէի: Հետեւաբար, շատ յստակ է որ կինը Յիսուսի անձին մէջ Մեսիային ներկայութիւնը տեսաւ:

«Փարիսեցիներն որ հրաւիրած էր Յիսուսը, ասիկա տեսնելով՝ ինքնիրեն կ'ըսէր.

Եթէ այս մարդը մարգարէ ըլլար պէտք է գիտնար թէ ո՛վ է իրեն մօտեցող այս կինը, եւ թէ ի՛նչպիսի մեղաւոր կեանք մը կ'ապրի ան» (Ղկ 7.39): Քանի մը կէտեր.---

1.- Մեր Եկեղեցւոյ մեկնիչ հայրերէն՝ Իգնատիոս Շնորհալի Վարդապետ, կը հաստատէ թէ Սիմոն Փարիսեցիներն որոշ բան գիտէր մշմարտութեան մասին, բայց յստակ բան չէր գիտեր: Եւ իսկապէս ալ այդպէս էր: Օրինակ, ան գիտէր որ Յիսուս մարգարէ մըն էր, թէպէտ յետոյ կարծէր խախտեցաւ իր համոզումը այդ ուղղութեամբ, երբ տեսաւ որ Յիսուս բան չըսաւ իր ոտները համբուրող պոռնիկ կնոջ: Այս կէտը սերտ կապ ունի մեր այսօրուան կեանքին հետ: Որքա՛ն որքա՛ն մարդիկ կան, որոնք Քրիստոսի անձին վերաբերեալ դրական եւ հաստատ համոզումներ գոյացուցած են, որոնք սակայն կը խախտին Քրիստոսի հանդէպ իրենց հաւատքին մէջ, երբ կը տեսնեն որ Քրիստոս լուր է ի տես որոշ անարդարութիւններու եւ դժբախտութիւններու:

2.- Սիմոն Փարիսեցիներն այն համոզումը ունէր որ Աստուծոյ մարգարէն պէտք էր կարող ըլլար գիտնալու թէ ո՛վ էր որ իրեն կը մերձենար, այլ խօսքով, պէտք էր կարողութիւնը ունենար ճանչնալու մարդուն ինքնութիւնը, մարդուն ներքին աշխարհը, մարդուն սիրտն ու հոգին: Եւ որովհետեւ այս համոզումը ունէր՝ գայթակղեցաւ երբ տեսաւ որ Յիսուս թոյլ տուաւ որ «վատահամբաւ» ու «բազմամեղ» այս կինը մօտենայ իրեն, դպչի իրեն եւ համբուրէ իր ոտները: Միշտ ալ եղած են եւ պիտի ըլլան այնպիսի մարդիկ՝ որոնք գայթակղին Տիրոջ վերաբերմունքէն, մանաւանդ երբ տեսնեն որ Տէրը անողորմին կ'ողորմի, դարձի եկող անգութ մարդուն հանդէպ գթութիւն կը ցուցաբերէ, մեզի համար աններելի եղողներուն ներում կը շնորհէ: Յիսուս իր վերաբերմունքով սորվեցուց մեզի որ երբեք պէտք չէ անտարբեր ըլլանք մեղաւորներուն նկատմամբ. պէտք է միշտ պատրաստ ըլլանք գրկաբաց գիրենք ընդունելու երբ դարձի գան, ցիշդ ինչպէս ինք ըրաւ այս մեղաւոր կնոջ:

3.- Տակաւին, Սիմոն կը հաւատար որ Աստուծոյ մարդը երբեք կապ պէտք չէ ունենայ մեղաւոր մարդուն հետ. բնաւ յարաբերութիւն պէտք չէ ըլլայ հաւատացեալ եւ անհաւատ մարդոց միջեւ: Հաւանաբար եթէ կինը Սիմոնին մօտենար, Սիմոն շատ կոշտ կերպով վտարէր զինք,

բայց մեր Տէրը այդպիսի բան չըրաւ: Ան փաղցրութիւն ցուցաբերեց այս տառապեալ հոգիին հանդէպ, իր այս ձեռագործին նկատմամբ: Իր ձեռքին գործն էր այս կինը, եւ ահա իր ձեռքին դարձաւ: Սիմոնի համար այս կինը մէկն էր որ դատապարտութեան ու քարկոծումի արժանի էր, իսկ Յիսուսի համար՝ գթութեան ու կարեկցութեան:

4.- Սիմոն չէր կրցած Յիսուսի անձին մէջ նոյնիսկ մարգարէ մը տեսնել, մինչդեռ մեղաւոր կինը, անոր մէջ տեսած էր ո՛չ թէ մարգարէ մը միայն, այլ ազատարար Փրկիչին եւ խոստացեալ Մեսիային ներկայութիւնը: Իսկ դուն, ընթերցող բարեկամ, ի՞նչ կը տեսնես Յիսուսի մէջ: Կը տեսնե՞ս անոր մէջ կարեկցող եղբօր մը ներկայութիւնը: Կը տեսնե՞ս անոր մէջ գորովագութ Փրկիչին ներկայութիւնը: Կը տեսնե՞ս անոր մէջ քեզի հանդէպ զօրաւոր սէր եւ անհուն հետաքրքրութիւն ունեցող անձի մը ներկայութիւնը: Կը տեսնե՞ս անոր մէջ փրկութիւնդ, զօրութիւնդ, սրբութիւնդ, օրհնութիւնդ, ազատագրութիւնդ, ուրախութիւնդ, երջանկութիւնդ, արքայութիւնդ:

«Յիսուս Փարիսեցիին ըսաւ.

- Սիմոն, քեզի ըսելիք մը ունիմ:

- Ըսէ՛, Վարդապետ,- ըսաւ ան» (Ղկ 7.40): Քանի մը կէտեր.-

1.- Բան մը տեղի ունեցած էր մեղաւոր կնոջ եւ Յիսուսի միջեւ, եւ Սիմոն չէր կրցած հասկնալ: Ան կարիքը ունէր որ մէկը բացատրէր իրեն պատահածը: Եւ Յիսուս ինք եղաւ այդ մէկը. «Սիմոն, քեզի ըսելիք մը ունիմ»: Շատ բան կրնայ պատահիլ մեր կեանքին մէջ որ մենք կրնանք չհասկնալ, եթէ լաւ բանանք մեր հոգեւոր ականջները, պիտի լսենք Տիրոջ ձայնը որ կ'ըսէ մեզի. «Քեզի ըսելիք մը ունիմ»: Այո՛, եթէ լսող ականջ ունինք, պիտի տեսնենք որ Տէրը ըսելիք ունի մեզի. ըսելիք՝ ի՛ր անձին մասին, մե՛ր անձերուն մասին, եւ ուրիշներո՛ւ մասին. ըսելիք՝ մեզի համար իր ունեցած ծրագիրին ու նպատակին մասին:

2.- Ինչպէս Սիմոնին համար անհասկնալի էր մեղաւոր կնոջ խոնարհիլը Յիսուսի ոտներուն առջեւ, այնպէս ալ, Պետրոս առաքեալին համար անհասկնալի էր Յիսուսի խոնարհիլը աշակերտներուն եւ մանաւանդ իր ոտներուն առջեւ, անոր համար ալ երբ Յիսուս իրեն մօտեցաւ ոտները լուալու համար՝ թոյլ չտուաւ, եւ Յիսուս անոր ըսաւ. «Ինչ որ կ'ընեմ՝ դուն հիմա չես հասկնար, բայց յետոյ պիտի հասկնաս» (Յհ 13.7): Կը սիրե՛մ Տիրոջս այս բառերը: Այո՛, ան ինչ որ հիմա կ'ընէ՛ մենք չենք հասկնար եւ չենք կրնար հասկնալ, բայց ժամանակ պիտի գայ երբ ինք պիտի գայ եւ մենք ամէն ինչ պիտի հասկնանք:

3.- Յիսուս կը սիրէ բոլոր մարդիկը, կը սիրէր մեղաւոր կինը, կը սիրէր նաեւ Սիմոն Փարիսեցին: Եւ որովհետեւ կը սիրէր՝ չէր կրնար լուռ մնալ, քանի սխալ մտածողութիւն մը կը տեսնէր Սիմոնի մէջ եւ կ'ուզէր սրբագրել այդ սխալը: Ահա թէ ինչու ըսաւ. «Սիմոն, քեզի ըսելիք մը ունիմ»: Տէրը ըսելիք մը ունէր Սիմոնին: Սրբագրելիք մը ունէր անոր սրտին մէջ: Յիսուսէն ստրվիմք խօսիլ մարդոց նշմարտութեան մասին, միայն թէ սիրոյ հոգիով եւ քաղցրութեամբ: Պէտք է սկզբունք ընենք հետեւեալը.– Պէտք չէ սրբագրենք մէկը որ մեզի հանդէպ սէր չունի կամ մենք իրեն հանդէպ սէր չունինք: Երբ կատարուած սրբագրութիւնը սիրոյ արտայայտութիւն եւ արդիւնք չէ՝ ո՛չ միայն պիտի մերժուի, այլեւ՝ ընդդիմութեան պիտի հանդիպի:

4.- «Ըսէ՛, Վարդապետ,– ըսաւ ան»: Այստեղ յատկանշական երկու երեսներ կան.–

ա.– Սիմոնը Յիսուսը կը կոչէ՝ Վարդապետ: Պէտք է նկատի առնել որ թէպէտ Սիմոն Յիսուսը «Վարդապետ» (ուսուցիչ, ուսուցանող) կոչեց, բայց չցուցաբերեց անոր հանդէպ այն յարգանքը զորս աշակերտ մը պարտէր ցուցաբերել իր ուսուցիչին հանդէպ, կամ ծառայ մը՝ իր տիրոջ հանդէպ, ինչ որ ցոյց կու տան մեզի 44-46 համարները: Մեր կեանքին մէջ ո՞րքան մարդիկ կան որ «Տէր» ու «Վարդապետ», «Փրկիչ» ու «Թագաւոր» կը կոչեն Յիսուսը, բայց ո՛չ յարգանք եւ ո՛չ ալ սէր կը ցուցաբերեն անոր հանդէպ: Շատե՛ր «Թագաւոր» կը կոչեն Յիսուսը բայց անոր հետ կը վերաբերին ինչպէս ծառայի մը հետ պիտի վերաբերէին: Աստուած Մաղափիա մարգարէին միջոցաւ կ'ըսէ. «Եթէ ես Հայր եմ, իմ պատիւս ո՞ւր է. եթէ Տէր եմ, իմ վախս ո՞ւր է» (Մդ 1.6): Քրիստոսը իբրեւ հայր դաւանողները՝ կը սիրե՞ն զինք այնպէս ինչպէս զաւակ մը իր հայրը պիտի սիրէր: Կամ զայն իբրեւ Տէր քանջողները՝ անոր կամքը կը կատարե՞ն այնպէս ինչպէս ծառայ մը իր տիրոջ կամքը պիտի կատարէր:

բ.– Երկրորդ կարեւոր կէտը կը կայանայ Սիմոնի ըսած «Ըսէ՛» բառին մէջ: Սիմոն թէպէտ չճանչցաւ զՔրիստոս իբրեւ Աստուած, կամ իբրեւ Խոստացեալ Մեսիան, կամ իբրեւ իրական Մարգարէ, բայց պատրաստակամութիւն յայտնեց լսելու զինք՝ երբ տեսաւ ըսելիք ունի: Այնքան ատեն որ Սիմոնի նման չըսենք. «Ըսէ՛, Վարդապետ», Յիսուս բնաւ բան պիտի չըսէ: Լսելու պատրաստակամութիւն չունեցող մարդուն՝ Տէրը երբեք չի խօսիր: Հասկնալու եւ լուսաբանուելու պատրաստ չեղող մարդուն՝ Աստուած բնաւ չի՛ բացատրեր, չի՛ հասկցնէր, չի՛ լուսաբանէր:

«Երկու հոգիներ փոխատուի մը դրամ պարտական էին. մէկը հինգ հարիւր արծաթ դրամ, միւսը՝ յիսուն» (Ղկ 7.41): Այստեղ կը սկսի առակին պատումը, որուն վերաբերեալ քանի մը հաստատումներ.–

1.– 39-րդ համարին մասին խօսած ատեն, բացատրեցինք որ Սիմոն կը հաւատար կամ համոզուած էր որ Յիսուս մարգարէ մըն էր, եւ ըսինք, որ իր այս համոզումին մէջ խախտեցաւ երբ տեսաւ որ պոռնիկ կինը կը համբուրէր Յիսուսի ոտերը իսկ Յիսուս բան չէր ըսեր: Առակին պատումով Յիսուս հասկցուց Սիմոնին թէ ինք կարող էր իր (Սիմոնին) միտքը կարգաւ, եւ ուստի՝ քանչնայ իր ներքին աշխարհը, հետեւաբար չէր կրնար մարգարէ եւ մարգարէէ աւելի բան մը չըլլալ, եւ իբր այդպիսին, բնականօրէն կը քանչնար նաեւ իրեն մօտեցող կնոջ սիրտը: Իգնատիոս Շնորհալի Վարդապետը կ'ըսէ. «Յիսուս... որ կը քննէ մարդոց սիրտերը, ցոյց տուաւ Սիմոնին, թէ ինք ո՛չ միայն կնոջ բացայայտ գործերը գիտէ, այլեւ անոր (Սիմոնին) մտքին ծածուկ մտածումները»:

2.– Տուեալ համարին մէջ Յիսուս կը խօսի երեք կէտերու մասին գոր պէտք է յստակացուին.–

ա) Կը խօսի փոխատուի մը մասին, որ Քրիստոս ինքն է:

բ) Կը խօսի երկու պարտապաններու մասին, որոնք կը ներկայացնեն մարդիկը:

գ) Եւ կը խօսի պարտապաններուն տրուած արծաթ դրամին մասին, որ կը խորհրդանշէ Աստուծոյ Օրէնքը:

Հիմա քիչ մը աւելի մանրամասնեմք մեր բացատրութիւնը.–

Իգնատիոս Շնորհալի Վարդապետ, Ղուկասի Աւետարանին իր մեկնութեան մէջ, կը բացատրէ թէ Աստուած ինքն է որ Հին Կտակարանի մէջ Օրէնքը տուաւ մարդուն, եւ գայն տուաւ իբրեւ փոխ: Անոնք որ մեղք գործեցին եւ Օրէնքի դիմաց յանցաւոր գտնուեցան՝ պարտական եղան Աստուծոյ որ տուիչն է այդ Օրէնքին: Աստուած ինքն է որ հաստատեց Օրէնքը եւ պահանջեց գայն գործադրել: Բայց որովհետեւ չկար մէկը որ կարենար Աստուծոյ կողմէ փոխ տրուածը վերադարձնել Աստուծոյ, այլ խօսքով, քանի որ չկար մէկը որ Աստուծոյ կողմէ տրուած Օրէնքը կարենար պահել ու պահպանել, Աստուած ինք աշխարհ եկաւ, եւ մարդոց այդ պարտքը՝ շնորհեց մարդոց իր ողորմութեամբ:

3.– Մեզի կ'ըսուի թէ մէկ պարտապանը հինգ հարիւր արծաթ դրամ պարտական էր փոխատուին, իսկ միւս պարտապանը՝ յիսուն: Եթէ երբեք փոխ տրուած արծաթ դրամը կը ներկայացնէ Աստուծոյ Օրէնքը, արդ, ի՞նչպէս պէտք է բացատրել մէկ պարտապանին հինգ հարիւր արծաթ դրամ պարտական ըլլալը, իսկ միւս պարտապանին՝ յիսուն արծաթ

դրամ պարտական ըլլալը: Հարցումին ճշգրիտ պատասխանը գտած ըլլալու համար, նախ ուրիշ հարցում մը կայ որուն պէտք է պատասխանել: Ո՞վ է պարտապանը եւ ի՞նչ է անոր պարտքը: Պարտապանը, ըսինք, որ մարդ արարածն է, իսկ մարդուն պարտքը՝ մարդուն մեղքերն են, Աստուծոյ Օրէնքին դէմ գործուած մեղքերն են: Ասիկա գիտնալէ ետք, պարզ կը դառնայ թէ ինչո՞ւ մէկ պարտապանը հինգ հարիւր արծաթ դրամ պարտական էր, իսկ միւսը՝ յիսուն: Ըսել ուզուածը այն է, որ բոլոր մարդիկ նոյն չափով մեղք չգործեցին Աստուծոյ Օրէնքին դէմ, թէպէտ բոլոր մարդիկն ալ պարտապան են, որովհետեւ բոլոր մարդիկն ալ մեղաւոր են, բոլոր մարդիկն ալ մեղք գործեցին Աստուծոյ Օրէնքին դէմ, եւ ուստի՝ բոլոր մարդիկն ալ պարտական են Աստուծոյ: Պարզութեան համար ըսենք, մէկուն պարտքին «հինգ հարիւր արծաթ դրամ» ըլլալը, իսկ միւսին պարտքին «յիսուն արծաթ դրամ» ըլլալը, պարզապէս ցոյց կու տայ թէ ոմանց մեղքերը շատ կ'ըլլան, ուրիշներունը՝ քիչ, բայց բոլորը մեղքի մէջ կ'ըլլան:

4.-- Չորրորդ այս կէտով յիշենք որ կարգ մը մեկնիչներ կ'ենթադրեն որ «հինգ հարիւր արծաթ դրամ» պարտք ունեցողը կը ներկայացնէ մեղաւոր կինը, իսկ «յիսուն արծաթ դրամ» պարտք ունեցողը՝ Սիմոն Փարիսեցին, որ համեմատաբար նուազ մեղք գործած էր Աստուծոյ օրէնքին հանդէպ: Այս մեկնութիւնը սակայն չի կրնար շիտակ ըլլալ, որովհետեւ առակը մեզի կ'ըսէ թէ փոխատուն երկու պարտապաններուն ալ ներեց: Եթէ փոխատուն Յիսուս ինքն է, ինչպէս բացատրուեցաւ, մենք գիտենք որ Յիսուս Սիմոնին չներեց, այլ միայն կնոջ. ուստի, «յիսուն արծաթ դրամ» պարտք ունեցողը չի կրնար Սիմոն Փարիսեցին ըլլալ:

«Երբ անոնք չկրցան դրամը վերադարձնել, պարտատէրը երկուքին ալ պարտքը ջնջեց» (Ղկ 7.42): Քանի մը մատնանշումներ. --

1.-- Առաջին կէտը որ այս համարը մեր ուշադրութեան կը յանձնէ, այն է, որ Յիսուս ջնջեց պարտքը թէ՛ շատ եւ թէ՛ քիչ պարտք ունեցողներուն: Սա ցոյց կու տայ թէ Յիսուս բոլորին մեղքերը հաւասարապէս ներեց, եւ թէ Քրիստոս կրնայ եւ պատրաստ է ներելու ոեւէ անձ որ կու գայ իրեն, որքան ալ անոր մեղքերը շատ ըլլան: Ան բնա՛ւ չէ մերժած եւ չի մերժեր իրեն եկողը (Յհ 6.37):

2.-- Այս համարը նաեւ կը սորվեցնէ մեզի թէ բոլոր մարդիկը անխտիր Աստուծոյ Օրէնքը խախտած են, եւ ուստի, մեղք գործած են Աստուծոյ դէմ, եւ բոլորն ալ հաւասարապէս Աստուծոյ փրկարար շնորհքին կարիքը ունին:

3.- Երբ կը հաստատուի թէ «անոնք չկրցան դրամը վերադարձնել», յստակօրէն մեզի ցոյց կը տրուի երկու բան. նախ այն՝ թէ մարդ արարածը իր սեփական միգով չի կրնար իր մեղքերուն պարտքը վնարել: Եւ երկրորդ, այն՝ թէ մարդ արարածը չի կրնար Աստուծոյ արդարութեան պահանջին գոհացում տալ: Ի՞նչ էր Աստուծոյ արդարութեան պահանջը: Աստուծոյ արդարութիւնը կը պահանջէր այն՝ թէ ով որ մեղք գործէր՝ պէտք է մեռնէր (Եզ 18:20: Հո 6:23): Բայց որովհետեւ Աստուած մարդը չէր ստեղծած մահուան համար, այլ՝ անմահութեան, միշտ անոր համար ալ Աստուծոյ Որդին մարդեղացաւ, որպէսզի իր մարդեղացումով մարդը յաղթող դարձնէ ընդդէմ մեղքին ու մահուան:

4.- Յիսուս կը ներէ թէ՛ մեծ գումար պարտական եղողին եւ թէ՛ չնչին գումար պարտական եղողին, սորվեցնելու համար մեզի, թէ ամենէն արդար մարդը եւ ամենէն մեղաւոր մարդը հաւասարապէս կարիք ունին իր ֆաւորութեան ու ներումին, իր գթութեան ու ողորմութեան: Մէկը չի կրնար այնքան մեղաւոր ըլլալ որ Յիսուս չկարենայ ներել անոր, եւ ո՛չ ալ մէկը կրնայ այնքան արդար ըլլալ որ կարիք չունենայ Յիսուսի ֆաւորարար արիւնին:

5.- Ուրիշ կարեւոր կէտ մը կայ այստեղ որ մեր ուշադրութենէն պէտք չէ վրիպի: Ասկէ առաջ ըսինք, որ Սիմոն Փարիսեցին տեսնելով Յիսուսի վերաբերմունքը կնոջ հանդէպ՝ սկսաւ կասկածիլ Յիսուսի մարգարէ ըլլալուն վերաբերեալ: Սիմոն ա՛լ աւելի գայթակղեցաւ երբ տեսաւ որ Յիսուս ներեց մեղաւոր կնոջ մեղքերը (Ղկ 7:47-49): Յիսուս, սակայն, կնոջ մեղքերը ներելով, փաստեց Սիմոնին թէ ինք ո՛չ միայն մարգարէ է, այլ մարգարէէ մը շա՛տ աւելի մեծ, քանի մարգարէները մեղքեր ներել չեն կրնար, մինչդեռ Յիսուս՝ կրնայ: Մեղքերը միայն Աստուած կը ներէ (Մր 2:7): Եթէ մեղքերը միայն Աստուած կը ներէ, եւ եթէ Յիսուս ներեց մեղքերը, ուրեմն՝ Յիսուս Աստուած է:

«Հիմա դո՛ւն ըսէ, այս երկու պարտատէրներէն ո՞ր մէկը աւելի պիտի սիրէ գայն»:

Սիմոն Փարիսեցին պատասխանեց.

– Ինծի այնպէս կը թուի թէ ան՝ որուն աւելի շատ շնորհեց:

Ճիշդ դատեցիր, – ըսաւ Յիսուս» (Ղկ 7:42-43): Քանի մը կէտեր.–

1.– «Երկու պարտատէրներէն ո՞ր մէկը աւելի պիտի սիրէ գայն»:
Ի՞նչ կը բացայայտեն այս տողին վերջին բառերը՝ «պիտի սիրէ գայն»:
Կը բացայայտեն թէ մեղաւոր կինը չեկաւ Յիսուսի պարգապէս ներում ձեռք ձգելու համար, այլ նաեւ ու մանաւանդ, եկաւ որովհետեւ կը սիրէր գայն, շատ կը սիրէր: Ա՛յս է որ ցոյց կու տայ 47-րդ համարը որ կ'ըսէ.

«Քանի զիս շատ սիրեց՝ ներուած են անոր բազմաթիւ մեղքերը»: Այս մեղաւոր կինը գտած էր իր նշմարիտ սիրահարը Յիսուսի անձին մէջ, եւ փարած էր անոր սուրբ ոտքերուն եւ ալ բնաւ չէր ուզեր բաժնուիլ անկէ: Եւ Յիսուս ընդունած էր զայն: Այո՛, ընդունած էր, որովհետեւ Յիսուս չէր կրնար մերժել մէկը որ զինք կը սիրէր, եւ կը սիրէր իր ամբողջ սրտով: Շատ յստակ է պատգամը այս կէտին: Ան որ կը սիրէ Յիսուսը՝ պէտք է գայ Յիսուսին, եւ ով որ կու գայ՝ Տէրը զայն պիտի ընդունի:

2.- Յիսուսի հարցումին՝ «Երկու պարտատէրներէն ո՞ր մէկը աւելի պիտի սիրէ զայն», Սիմոն պատասխանեց ըսելով. «Ինծի այնպէս կը թուի թէ ան՝ որուն աւելի շատ շնորհեց»: Կնոջ մեղքերը շատ էին եւ բոլորը ներուեցան, ահա թէ ինչո՛ւ ան շատ սէր ցոյց տուաւ հանդէպ Յիսուսի: Իր անցեալի կեանքի ընթացքին այս կինը շատ վիշտ պատճառած էր Տիրոջ, իսկ հիմա շատ սէր կը յայտնաբերէր անոր հանդէպ: Կինը աւելի սիրեց, ո՛չ միայն որովհետեւ իր մեղքերը շատ էին եւ ներուեցան, այլ նաեւ որովհետեւ Յիսուս ի՛նքն ալ անոր հանդէպ մեծ սէր ցոյց տուաւ: Անոնց սէրը, հետեւաբար, փոխադարձ սէր էր:

3.- Յիսուսի եւ Սիմոնին մտածողութիւնը այս մեղաւոր կնոջ հանդէպ՝ հիմնովին իրարմէ կը տարբերին: Սիմոնի համար, կինը մեծ մեղաւոր մըն էր, իսկ Յիսուսի համար՝ մեծ սէր ունեցող մը: Սիմոնի համար, կինը դատապարտութեա՛ն արժանի էր, իսկ Յիսուսի համար՝ փառութեան ու կարեկցութեան: Այս իրականութիւնը ցոյց կու տայ մեզի թէ Աստուծոյ եւ աշխարհի մարդուն հայեացքը իրարմէ տարբեր են: Բայց քրիստոնեայ մարդուն հայեացքը՝ Քրիստոսի հայեացքէն տարբեր պէտք չէ ըլլայ: Այն ինչ որ Քրիստոս փրկութեան արժանի կը սեպէ, մենք զայն կորստեան արժանի չսեպենք: Չմամնի՛նք Սիմոնին: Չմտածե՛նք իրեն նման: Մարդիկը դատապարտութեան արժանի մեղաւորներ չնկատենք, ինչպէս Սիմոն ըրաւ, այլ փորձենք կարեկցութիւն, սէր եւ գուրջ ցուցաբերել ինկածին ու տկարին հանդէպ, ատո՛վ միայն կրնանք Քրիստոսի նմանիլ:

4.- Յիսուս անուղղակիօրէն Սիմոնին կը սորվեցնէր թէ պէտք է սէր ունենայ այսպիսի մեղաւորներու հանդէպ, եթէ երբեք կ'ուզէր օգնել անոնց փոխելու իրենց կեանքի ընթացքը: Անկասկած որ Սիմոն որոշ սէր մը կամ հետաքրքրութիւն մը ունէր Յիսուսի հանդէպ, այլապէս զայն ճաշի պիտի չհրաւիրէր: Իր այդ սէրը սակայն, հաւանաբար արդիւնք էր, ընկերութեան մէջ Յիսուսի վայելած հանգամանքին եւ անոր ունեցած իշխանական խօսքի զօրութեան, եւ ինք ուզած էր այդ բոլորէն օգտուիլ: Բայց Յիսուս իր վերաբերմունքովը մեղաւոր կնոջ հանդէպ, Սիմոնին կը սորվեցնէր, թէ չի՛ բաւեր սիրել նշանաւորները, չի՛ բաւեր ճաշի

հրաւիրել հանգամանք ունեցողները, չի՛ բաւեր ընդունիլ իշխանութեան տէր մարդիկը, այլ պէտք է սիրել եւ ընդունիլ տկարները, տառապածները, թշուառները:

«Ապա դառնալով դէպի կինը շարունակեց.

- Սիմոն, կը տեսնե՞ս այս կինը: Տունդ մտայ, բայց ոտքերս լուալու համար ջուր չտուիր, մինչ ասիկա իր արցունքներով ոտքերս քրչեց եւ մագերովը սրբեց» (Ղկ 7.44): Քանի մը հաստատումներ. -

1.- 37-րդ համարը բացատրած ատեն, ըսինք, որ անցեալին, արեւելեան բոլոր երկիրներուն մէջ, ինչպէս նաեւ Պաղեստինի մէջ, ընդունուած սովորութիւն էր հիւրին ոտքերը լուալը: Յիշեցէ՛ք օրինակ Աբրահամ լուաց իւր եկող երեք մարդոց ոտքերը (Ծն 18.4): Ան որ հիւրին ոտքերը կը լուար՝ ո՛չ միայն յարգանք մատուցած կ'ըլլար անոր, այլեւ՝ որոշ հասկացողութեամբ մը ազատութիւն տուած կ'ըլլար անոր իր տան մէջ. հետեւաբար, ոտքերը լուացուելէ ետք, կարծէ՛ք կը դադրէր հիւր մը ըլլալէ եւ կը դառնար տունին անդամներէն մէկուն պէս: Այս իմաստով, մեղաւոր կինը Յիսուսի ոտքերը լուալով՝ բացայայտած կ'ըլլայ թէ Յիսուս իրեն համար լոկ հիւր մը չէ, անձանօթ մը չէ, օտարական մը չէ, այլ՝ իր տունին, այլ խօսքով՝ իր սրտին տէրը:

2.- «Տունդ մտայ, բայց ոտքերս լուալու համար ջուր չտուիր»: Յանդամնութիւն էր ասիկա Սիմոնին: Եթէ հիւրի մը ոտքերը լուալը՝ գայն յարգել ու պատուել կը նշանակէր, Սիմոն չլուաց Յիսուսի ոտքերը, եւ ուստի՝ պէտք եղած յարգանքն ու պատիւը չընծայեց անոր: Ասո՞ր համար էր որ Յիսուս անուղղակիօրէն յանդիմանեց գայն: Ո՛չ: Յիսուս չյանդիմանեց Սիմոնը իր ոտքերը լուացած չըլլալուն համար, այլ՝ որովհետեւ Սիմոն վերաբերած էր իրեն հետ ինչպէս պիտի վերաբերէր հասարակ հիւրի մը հետ: Հասարակ հիւրերուն ոտքերը լուալու սովորութիւն չկար, եւ եթէ Յիսուսի ոտքերը չլուացուեցան, կարծէ՛ք Յիսուս հասարակ մարդոց շարքին էր որ կը դասուէր Սիմոնին կողմէ, եւ նիշդ անոր համար ալ պահարակուեցաւ Տիրոջ կողմէ:

3.- «Տունդ մտայ, բայց ոտքերս լուալու համար ջուր չտուիր»: Եթէ երբեք հոգեւոր հայեացքով մօտենանք այս հաստատումին՝ ի՞նչ դաս կրնանք քաղել անկէ: Սիմոն Յիսուսը իր տունը հրաւիրեց, բայց պէտք եղած յարգանքը չմատուցանեց անոր, պէտք եղած սէրը չցուցաբերեց անոր հանդէպ: Իսկ այսօր, մենք, երբ կը հրաւիրենք Յիսուսը մեր կեանքներուն մէջ, կը պատուե՞նք ու կը սիրե՞նք զինք այնպէս ինչպէս որ պէտք է: Շուրջ երկու հազար տարի առաջ, Յիսուս Սիմոնին ըսաւ. «Տունդ մտայ, բայց ոտքերս լուալու համար ջուր չտուիր», իսկ այսօր, երկու հազար տարի ետք, բանանք մեր հոգիի ականջները, եւ պիտի

լսենք որ Յիսուս մեզմէ շատերուս կ'ըսէ. «Զիս հրաւիրեցիր քու կեանքէդ ներս եւ ես եկայ, բայց դուն պէտք եղած պատիւը չըրիր ինծի: Զիս հրաւիրեցիր սրտիդ մէջ եւ ես ընդառաջեցի, բայց դուն պէտք եղած սէրը չցուցաբերեցիր ինծի հանդէպ»:

Երբ կ'ընդունինք Յիսուսը մեր կեանքին մէջ իբրեւ Տէր ու Թագաւոր, պէտք է իբր այդպիսին հետը վերաբերինք: Ովսէա մարգարէն կ'ըսէ. «Բարձրեալին կը հրաւիրուին, սակայն ոեւէ մէկը գանձիկա չի բարձրացներ» (Ովս 11.7): Այսօր երբ կը հրաւիրուինք Բարձրեալին տունը՝ եկեղեցի, պէտք է գանձիկ եւ գալէ ետք միայն Զի'նք բարձրացնենք ու մեծարենք, միայն Զի'նք պատուենք ու պաշտենք: Այս իմաստով, մե'նք հրաւիրենք Բարձրեալը մեր տունը, թէ Բարձրեալը ի'նք մեզ հրաւիրէ իր տունը՝ երկու պարագաներուն ալ, պէտք է իրեն հանդէպ ո՛չ միայն պատիւ ու յարգանք ցուցաբերենք, այլ մանաւանդ՝ սէր: Յիսուս միայն Տէր մը չէ որուն պէտք է պատուել, այլ նաեւ հայր մըն է որուն պէտք է սիրել:

4.- «Մինչ ասկա իր արցունքներով ոտներս թրջեց եւ մազերովը սրբեց»: Այս տողին մասին առակին սկիզբը խօսեցանք արդէն: Յաւելեալ մէկ-երկու բան: Հոս կը տեսնենք որ կինը սովորականէ դուրս բաներ կ'ընէ.

ա) Յիսուսի ոտները կը թրջէ ո՛չ թէ ջուրով, այլ՝ իր արցունքներով: Զուրով հիւրին ոտները լուալը՝ պարտականութիւն էր: Եւ այդ պարտականութիւնը կնոջ պարտականութիւնը չէր Յիսուսի հանդէպ, այլ՝ Սիմոնի: Կնոջ ըրածը պարտականութիւն չէր, այլ՝ սէր, մե'ծ սէր, վսեմ սէր, մաքուր սէր: Արցունքը մարդուն սրտին սիրոյն արտայայտութիւնն է. այս կինը իր արցունքներով թրջելով Յիսուսի ոտները, փաստեց որ ինք ո՛չ միայն կը յարգէր Յիսուսը, այլեւ՝ կը սիրէր զայն: Սիրելի'ս, մշմարիտ ապաշխարութիւն ապրա՞ծ ես, այլ խօսքով, արցունք թափա՞ծ ես Տիրոջ ոտներուն վրայ՝ անկէ քաւութիւն ձեռք ձգելու համար քու բոլոր մեղքերուդ համար: Եթէ մեղքերուդ համար լացող մը չես եղած, գիտցի՛ր որ Տէրդ լացող մը եղած ես: Յիսուսի աչքերը թրջուած են քեզի համար: Միայն արցունքներովդ կրնաս զանոնք ցամփեցնել: Դուն լայ մեղքերուդ համար, որպէսզի Տէրը դադրի քեզի համար լալէ:

բ) Յիսուսի ոտները սրբեց ո՛չ թէ անձերոցով, այլ՝ իր մազերով: Ասկէ առաջ յիշեցինք որ Պօղոս առաքեալ կ'ըսէ թէ «կնոջ համար երկար մազերը փառք են» (Ա.Կր 11.15): Այս մեղաւոր կնոջ համար ալ մազերը փառք էին, բայց ան հրաժարեցաւ իր փառքէն. ան եկաւ եւ իր փառքը

Յիսուսի ոտքերուն տակ դրաւ, եւ Յիսուս ներեց իրեն: Անոնք որոնք պատրաստ չեն

իրենց փառքն ու փառասիրութիւնը,
իրենց փափաքն ու փափաքածները,
մեծութիւնն ու մեծարանքները,
հոգերն ու հոգիները,
սիրտն ու սէրերը,
յոյսերն ու յոյգերը,
կամքն ու կասկածները,
երազներն ու երջանկութիւնը,
կարիքներն ու կարողութիւնները,
տենչանքներն ու տանջանքները,
ցաւերն ու ցանկութիւնները,

դնելու Տէր Յիսուսի ոտքերուն դիմաց, անոնք անկարող պիտի ըլլան լսելու Յիսուսի խօսքը զոր մեղաւոր կիներ լսեց. «Հաւատդ քեզ փրկեց. խաղաղութեամբ գնա»:

«Դուն բարի գալուստի համբոյր մը չտուիր ինձի, մինչ ասիկա տունդ մտնելէս ի վեր չդադրեցաւ ոտքերս համբուրել» (Ղկ 7.45):

Ասիկա եւս սովորականէ դուրս բան մըն է: Կիներ կը համբուրէ Յիսուսի ոտքերը, ո՛չ թէ մէկ, երկու կամ երեք անգամ, այլ բազմաթիւ անգամներ: Այո, սովորականէ դուրս էր մէկու մը ոտքը համբուրել, որքան ալ մեծ մարգարէ ըլլար անիկա: Նման բանի չենք հանդիպիր Հին Կտակարանի մէջ: Բայց մեղաւոր կիներ, իր վերաբերմունքով, ցոյց տուաւ թէ ինք Յիսուսը կ'ընդունէր ո՛չ թէ իբրեւ մարգարէ, այլ՝ իբրեւ Տէր ու Փրկիչ, իբրեւ Ազատարար ու Քաւիչ:

Մինչ Փարիսեցիներն սովորական սէր անգամ ցոյց չտուաւ Յիսուսի հանդէպ, անդին մեղաւոր կիներ արտասովոր սէր ցուցաբերեց Տիրոջ հանդէպ: Այո՛, ինչ որ կիներ ըրաւ՝ սիրոյ արտայայտութիւն էր: Եւ ասիկա Յիսուս ինք հաստատեց երբ ըսաւ. «Քանի զիս շատ սիրեց՝ ներուած են անոր բազմաթիւ մեղքերը (Ղկ 7.47):

«Դուն գլուխս իւղով չօծեցիր, մինչ ասիկա ոտքերս օծեց անուշահոտ իւղով» (Ղկ 7.46):

Ասիկա եւս սովորական բան չէր: Ո՛չ մէկ մարգարէի ոտքը իւղով օծուած կը գտնենք Հին Կտակարանի մէջ: Յիսուսի ժամանակ ալ հիւրերուն ոտքերը իւղով օծելու սովորութիւն չկար երբեք: Եթէ շատ պատուական հիւր մը ըլլար, կարելի էր օծել, բայց ո՛չ ոտքերը, այլ միայն գլուխը: Բայց հոս, մեղաւոր կիներ Յիսուսի ոտքերը օծելով, նախ ցոյց կու տայ որ Յիսուս իրեն համար չափէն աւելի պատուական ու

սիրելի անձ մըն էր, եւ երկրորդ, ցոյց կու տայ թէ ինք կրցած էր Յիսուսի մէջ տեսնել խոստացեալ Մեսիային ներկայութիւնը, այլ խօսքով, Աստուծոյ Օծեալին ներկայութիւնը. այն Օծեալին՝ որմէ պիտի գար ամէն օծութիւն ու օրհնութիւն:

Ինչպէս կիներ իր անուշահոտ իւղը բերաւ եւ գայն Յիսուսի ոտներուն վրայ պարպեց, այնպէս ալ մենք, բերե՛նք մեր կեանքի անուշահոտ ու անոյշ բաները, թանկագին ու թանկարժէք բաները, եւ գետեղենք զանոնք Յիսուսի ոտներուն առջեւ:

«Ուստի կ'ըսեմ ձեզի, քանի զիս շատ սիրեց՝ ներուած են անոր քաղմաթիւ մեղքերը: Որովհետեւ, անոր որ անկի կը ներուի՝ անկաւ անկի սէր ցոյց կու տայ, իսկ անոր որ քիչ կը ներուի՝ անկի քիչ կը սիրէ» (Ղկ 7.47): Քանի մը հաստատումներ.---

1.-- Շատ զգայուն կէտ մը եւ ճշմարտութեան լպրծուն երես մը կայ այստեղ որուն պէտք է անդրադառնալ: Կիներ շատ սիրե՞ց ըսելով մեղքերը ներուեցան, թէ՛ ներուեցան ըսելով շատ սիրեց: Կամ տարբեր ձեւով մը դնենք հարցը. Կիներ սիրեց Տէրը՝ անո՞ր համար ներուեցաւ, թէ՛ Տէրը ներեց իրեն՝ անոր համար կիներ սիրեց Զինք: Այլ խօսքով, ո՞ր մէկը առաջ եկաւ կամ ո՞ր մէկը առաջ պէտք է դնել: Կնոջ սէ՞րը, թէ՛ Յիսուսի ներումը: Համարին վրայ հիմնուելով դժուար է այս հարցումին պատասխանելը, որովհետեւ համարը հարցը երկու կողմէն ալ կը դիտէ:

Ես կը հաւատամ որ եթէ երբեք կիներ կրցաւ սիրել Տէրը, կրցաւ՝ որովհետեւ նախ Տէրը ի՛նք անոր հանդէպ սէր, ներողամտութիւն եւ կարեկցութիւն յայտնաբերած էր: Եւ կարելոր չէ որ ատիկա եղած ըլլայ Սիմոնին տանը մէջ. կասկած չկայ որ կիներ նախապէս լսած էր Յիսուսի հրաւերը. «Ինձի՛ եկէք դուք բոլորդ, յոգնածներ եւ բեռնաւորուածներ, եւ ես հանգիստ պիտի տամ ձեզի» (Մտ 11.28): Կիներ յոգնած էր մեղք գործելէն եւ հանգիստ կը փնտռէր: Ան երբեք չէր մոռցած Յիսուսի այս կոչը: Ան այս կոչը յատուկ կերպով իրեն ուղղուած համարած էր: Կ'ուզէր ընդառաջել այս կոչին եւ գալ Տիրոջ: Առիթը չէր ներկայացած: Բայց հիմա որ առիթը ներկայացած էր, կիներ վստահելով Յիսուսի սիրոյն եւ ներողամտութեան, համարձակութիւնը ունեցած էր Փարիսեցիի մը տունը մտնել եւ Տիրոջ ոտներուն փաթթուիլ. այո՛, Փարիսեցիի մը՝ որ կրնար իր մահուան պատճառ դառնալ եթէ երբեք Յիսուս այդտեղ չըլլար: Կիներ անտեսեց ամէն վտանգ եւ հաւանական ամէն անարգանք, քանի ունէր մէկ եւ միակ նպատակ մը, եւ այդ նպատակը Յիսուսին հասնիլն էր, եւ Յիսուսով փառութիւն, խաղաղութիւն եւ ազատութիւն ձեռք ձգելն էր:

Առաջին այս կետն մենք կը սորվինք հետեւեալը.-- Ինչպէս Կինը դարձի եկաւ որովհետեւ նախապէս վայելած էր Յիսուսի սէրն ու կարեկցութիւնը, այնպէս ալ մենք, եթէ երբեք կրնանք դարձի գալ, կրնանք՝ որովհետեւ Յիսուս ի՛նք նախապէս սիրեց մեզ եւ իր կեանքը տուաւ մեզի համար: Հետեւաբար, մենք փրկուեցանք ըսելով դարձի կու գանք եւ ո՛չ թէ դարձի կու գանք որպէսզի փրկուինք: Երբ Յիսուս իր արիւնը խաչին վրայ թափեց՝ դարձի գալու եւ փրկութիւն ձեռք ձգելու կարելիութիւնը բացաւ բոլորիս դիմաց: Բայց այդ կարելիութիւնը պիտի չբացուէր՝ եթէ Յիսուս իր արիւնը չթափէր:

Փրկութեան նախաձեռնութիւնը Աստուած ի՛նք կատարեց եւ ո՛չ թէ մենք: Եսայի մարգարէութեան մէջ կը կարդանք. «Քու յանցանքներդ՝ մէզի պէս ու քու մեղքերդ ամպի պէս ջնջեցի: Ինձի՛ դարձիր, քանզի քեզ փրկեցի» (Ես 44.22-23): Աստուած չ'ըսեր. «Ինձի՛ դարձիր, որպէսզի քեզ փրկեմ», այլ՝ «Ինձի՛ դարձիր, քանզի քեզ փրկեցի»: Աստուած փրկած է մեզ իր Որդիին արիւնով. մեզի կը մնայ դարձի գալ եւ ընդունիլ Քրիստոսով իրագործուած փրկութիւնը: Ճիշդ է որ մեզ փրկած է իր արիւնով, բայց եթէ երբեք դարձի չգանք, այդ փրկութիւնը մեր սեփականութիւնը չի դառնար երբեք:

2.- «Աւելի կը ներուի..., քիչ կը ներուի...»: Այս բացատրութիւնը սխալ պէտք չէ հասկնալ, մտածելով որ ոմանց մեղքերուն մէկ մասը միայն պիտի ներուի, իսկ ուրիշներուն՝ բոլոր մեղքերը: Այսպիսի բան հակառակ է Աստուածաշունչի առողջ ուսուցման: Որո՞նք են շատ ներուողները, եւ որո՞նք՝ քիչ ներուողները: Շատ ներուողները՝ շատ մեղք ունեցողներն են, իսկ քիչ ներուողները՝ քիչ մեղք ունեցողները: Կինը շատ սիրեց, որովհետեւ շատ էին իր մեղքերը եւ անոնք բոլորը ներուեցան:

3.- «Անոր որ աւելի կը ներուի...»: Այս խօսքը բացարձակ կերպով շիտակ է, որովհետեւ կինը շատ աւելի մեղքեր գործած էր քան Սիմոնը եւ ուրիշները, եւ ուստի, շատ աւելի ներումի կարիքը ունէր քան ուրիշը: Կինը շատ տխուր անցեալ մը ունեցած էր. ան եղած էր նշանաւոր պոռնիկ մը: Դուկաս կ'ըսէ. «Քաղաքին մէջ պոռնիկ կին մը կար» (Ղկ 3.37): Յիշեալ քաղաքը Կափառնաում քաղաքն էր: «Քաղաքին մէջ» բառերը ցոյց կու տան որ կինը ամբողջ Կափառնաումի մէջ նշանաւոր էր:

4.- «Աւելի կը ներուի»: Այս բառերը նաեւ ուրիշ կարեւոր բան մը կը սորվեցնեն մեզի որ մեր ուշադրութենէն պէտք չէ վրիպի: Յիսուս որո՞ւ կը ներէ աւելի: Կը ներէ շատ մեղք ունեցողին: Այստեղ, Յիսուս կ'ուզէ սորվեցնել մեզի, թէ՛ անոնք որոնք շա՛տ ինկած են, շա՛տ տկար

են, շա՛տ մեղաւոր են, ցիշո՞ւ անո՛նք են որ կարիքը ունին առա՛տ սիրոյ, առա՛տ գթութեան եւ առա՛տ կարեկցութեան:

5.- «Անոր որ աւելի կը ներուի՝ անիկա աւելի սէր ցոյց կու տայ»: Ներուած էին կնոջ բազմաթիւ մեղքերը եւ անոր համար ալ մեծ սէր ցոյց տուած էր Յիսուսի հանդէպ: Այս կինէն սորվինք, ո՛վ մեղաւորներ, սէր ցոյց տալ Յիսուսի հանդէպ, սիրե՛լ Տէրը եւ սիրել մեր ամբողջ սրտով: Շատ էին մեր մեղքերը, եւ Տէրը ներեց այդ բոլորը, որովհետեւ մեզ շատ սիրեց: Ա՛յնքան սիրեց որ մեռաւ մեզի համար: Եթէ հիւանդ ըլլայի՞նք եւ արիւնի կարիքը ունենայի՞նք եւ մէկը մեզի իր արիւնէն տար՝ շնորհակալ պիտի չըլլայի՞նք անոր, երախտապարտ պիտի չըլլայի՞նք, գայն պիտի չսիրելի՞նք: Յիշեցէք, որ մենք ո՛չ թէ արիւնի կարքի ունէինք, այլ կեանքի՛ կարիքը ունէինք, որովհետեւ դատապարտուած էինք մահուան, եւ Քրիստոս ի՛նք իր կեանքը տուաւ մեզի համար, մեր փոխարէն եւ մեր սիրոյն: Պէտք չէ՞ սիրենք Տէրը որ մեռաւ մեր սիրոյն եւ մեզ սիրելուն համար: Պէտք չէ՞ մեծարենք Տէրը որ թողուց երկնային ամէն մեծարանք եւ աշխարհ եկաւ մեր մեղքերուն անարգանքը իր վրայ կրելու:

«Ապա կնոջ դառնալով՝ ըսաւ .

– Մեղքերդ ներուած են» (Ղկ 7.48): Երեք կէտեր.–

1.– Յիսուս չ՛ըսեր. «Կը ներեմ մեղքերդ», այլ՝ «Մեղքերդ ներուած են», իսկ այս վերջինը անցեալ կատարեալ է: Ինչո՞ւ Յիսուս չ՛ըսեր՝ «Կը ներեմ մեղքերդ», կամ՝ «Պիտի ներեմ մեղքերդ», այլ կ՛ըսէ՝ «Մեղքերդ ներուած են»: Ինչո՞ւ իօսւք անցեալ կատարեալ եղանակով կը ներկայանայ: Պատասխանը շատ պարզ է. որովհետեւ կնոջ մեղքերը այլեւս անցեալին կը պատկանէին, եւ որովհետեւ կինը ապրած էր ճշմարիտ դարձ ու իսկական ապաշխարութիւն: Ան միանգամընդմիշտ եւ յաւիտենապէս դարձած էր Աստուծոյ: Տէրը շատ լաւ գիտէր որ անոր դարձը արմատական ու յաւերժական դարձ էր. ալ պիտի չդառնար իր նախկին կեանքին: Ուստի Յիսուս իրեն համար համարձակօրէն կրնար ըսել. «Մեղքերդ ներուած են»:

2.– Ի՞նչպէս Յիսուս կ՛ըսէ «Մեղքերդ ներուած են» երբ տակաւին իր արիւնը չէր թափած: Մեղքերու թողութիւնը իր արիւնը թափելով չէ՞ր որ պիտի սկսէր: Այո՛, մեղքերու թողութիւնը Յիսուսի արիւնով պիտի սկսէր, բայց մենք չենք կրնար գատել Յիսուսը իր արիւնէն: Ո՞վ էր մեղքերը ներողը. Յիսու՞ս, թէ՛ Յիսուսի արիւնը: Ներողը Յիսուսի արիւնը չէ, այլ Յիսուսը ի՛նք, բայց կը ներէ իր արիւնին միջոցաւ, թէպէտ այդ արիւնը կրնայ տակաւին իսաչին վրայ հեղուած չըլլալ, բայց Յիսուս գանիկա արդէն իսկ հեղուած կը տեսնէ, եւ ըստ այնմ ալ կը ներէր մարդոց մեղքերը իր արիւնը թափելէ առաջ: Աստուծոյ յատուկ է,

բան մը տակաւին չեղած՝ գայն ներկայացնել իբրեւ եղած վերջացած, որովհետեւ Աստուած սկիզբէն կը տեսնէ ամէն բանի կատարումը: Օրինակ, Սաղմոսաց գիրքին մէջ կը կարդանք.

«Տէրը ինծի ըսաւ.

– Դուն իմ Որդիս ես,

ես այսօր քեզ ծնայ» (Սղ 2.7): Այս խօսքը Քրիստոսէ շուրջ հազար տարի առաջ ըսուեցաւ, բայց մենք գիտենք որ Յիսուս հազար տարի ետք պիտի ծնէր: Յիսուս չծնած, արդէն իրեն համար կ'ըսուի. «Ես այսօր քեզ ծնայ»: Ուրիշ օրինակ մը: «Քու յանցանքներդ՝ մեզի պէս ու քու մեղքերդ ամպի պէս ջնջեցի: Ինծի՛ դարձիր, քանզի քեզ փրկեցի» (Ես 44.22–23): Հոս արձանագրուած բառերը՝ «ջնջեցի» եւ «փրկեցի», ցոյց կու տան, որ մեր երկնաւոր Հայրը սկիզբէն կը տեսնէր իր Որդիին միջոցաւ իրագործուելիք փրկութիւնը. իրագործուելիքը՝ արդէն իսկ իրագործուած կը տեսնէր, եւ անոր համար կոչ ուղղելով երկինքին՝ կ'ըսէր. «Ուրախ եղէք, ո՛վ երկինք, քանզի Տէրը ըրաւ ասիկա» (Ես 44.23): Այո՛, «ըրաւ» եւ ո՛չ թէ պիտի ընէ: Ահա ճիշդ նոյն ձեւով Յիսուս կրնար կնոջ ըսել. «Մեղքերդ ներուած են», որովհետեւ իր թափելիք արիւնով արդէն իսկ ներուած ու քաղուած կը տեսնէր անոր մեղքերը:

3.– «Ապա կնոջ դառնալով...»: Յիսուս իր ուշադրութիւնը Սիմոնէն դէպի այս մեղաւոր կինը դարձուց, սորվեցնելու համար մեզի որ Աստուած իր ուշադրութեան եւ հոգածութեան առարկան կը դարձնէ բոլոր այն մարդիկը՝ որոնք կը գոջան եւ կ'ապաշխարեն իրենց գործած մեղքերուն համար: Աստուած դարձի եկող մարդիկը չէ որ կ'անտեսէ, այլ՝ անոնց մեղքերը: Մարդիկ սակայն ճիշդ հակառակը կ'ընեն: Մարդիկ իրենց նմանները կ'անտեսեն, բայց անոնց մեղքերը երբեք չեն անտեսեր, այլ զանոնք խոշորացոյցով կը դիտեն: Սիմոն Փարիսեցիին մեղաւոր կինն էր որ կ'անտեսէր եւ ո՛չ թէ անոր մեղքերը: Յիսուսէն սորվինք մեր ուշադրութիւնը կեդրոնացնել մեղաւորներուն վրայ եւ ո՛չ թէ անոնց մեղքերուն վրայ:

«Անոնք որոնք միասին նստած էին, սկսան իրենք իրենց ըսել.

– Ո՞վ է այս մարդը, որ նոյնիսկ մեղքերը կը ներէ» (Ղկ 7.49): Քանի մը արագ հաստատումներ.–

1.– Մինչեւ այստեղ, տեսանք եւ այն տպաւորութիւնը ունեցանք որ Սիմոն Փարիսեցիին տան մէջ միայն երեք հոգիներ կային՝ Յիսուս, մեղաւոր կինը, եւ Սիմոն ինք: Եւ սակայն տուեալ համարին առաջին բառերը՝ «Անոնք որոնք միասին նստած էին», եկան բացայայտելու որ Սիմոն Յիսուսի կողքին ուրիշներ եւս ճաշի հրաւիրած էր: Թէ որո՞նք էին այս ուրիշները՝ բնագիրը մեզի բան մը չ'ըսէր, բայց նկատի

ունենալով անոնց ֆրժմնջումն ու տոտոցը, կրնանք ապահովութեամբ հաստատել որ անոնք Փարիսեցիներ էին: Այն ատենուայ ամենէն բնական երեւոյթներէն մէկն էր, որ Փարիսեցի մը ուրիշ Փարիսեցիներ քաշի հրաւիրէր: Անոնք աղփատներն ու տառապեալ դասակարգի մարդիկ քաշի չէին հրաւիրէր: Ճիշդ անոր համար ալ, Յիսուս առիթով մը խօսքը ուղղելով Փարիսեցիի մը որուն տունը գացած էր քաշ ուտելու (Ղկ 14.1), անոր ըսաւ. «Երբ քաշկերոյթ կու տաս, կանչէ աղփատներն ու խեղանդամները, կաղերն ու կոյրերը եւ այն ատեն երանելի պիտի ըլլաս, որովհետեւ անոնք փոխարէնը քեզի հատուցանելիք ոչինչ ունին: Եւ գիտցած եղիր, որ բու հատուցումդ պիտի ստանաս արդարներու յարութեան ժամանակ» (Ղկ 14.13-14):

2.- Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները, որոնց պարտականութիւնն էր մեղաւոր եւ գղջացեալ մարդիկը բերել Աստուծոյ, որպէսզի իրենց մեղքերուն համար ներում ստանան, կը դժգոհէին Տիրոջ դէմ ամէն անգամ երբ Տէրը ներում շնորհէր մէկու մը մեղքերուն: Ա՛յս անգամ եւս, երբ անոնք կը տեսնեն որ Յիսուս ներում կը շնորհէ մեղաւոր կնոջ, «հաւատարմօրէն» կը կատարեն իրենց դժգոհութեան պարտականութիւնը՝ ըսելով. «Ո՞վ է այս մարդը, որ նոյնիսկ մեղքերը կը ներէ»: Անհանգիստ եղան Փարիսեցիները տեսնելով Տէրը հանգիստ կու տար տառապեալ հոգիի մը: Գրգռուեցան երբ տեսան որ Յիսուս սանձեց մեղքի գրգռոները կնոջ մէջ: Անոնք չուրախացան երբ տեսան սուգի հովիտին մէջ ինկած անձ մը դուրս կը բերուէր այդ հովիտէն:

Ամենէն ցաւալի երեւոյթն է ասիկա զոր այսօր ալ կը գտնենք մեր կեանքին մէջ: Մարդիկ որոնք իրենց անցեալի կեանքին մէջ մեղաւոր կեանք կ'ապրէին, յանկարծ կ'որոշեն Տիրոջ դառնալ, եւ կը դառնան ու մեղքերու քաւութիւն կը ստանան, բայց ուրիշներ որոնք կը քանչքան գիրենք, որոնք հաւանաբար վիրաւորուած են անոնց կողմէ անցեալին, չեն ուզեր ներել անոնց, չեն ուզեր հաւատալ որ անոնք դարձի եկած են, չեն ուզեր հաւատալ որ անոնք նորոգուած կեանք կ'ապրին, եւ որովհետեւ չեն ուզեր հաւատալ այս բոլորին, կ'ուզեն ու կը սիրեն շարունակել իրենց թշնամանքը անոնց հանդէպ, եւ այդ ձեւով, կը դառնան գործակիցներն ու գործակալները Սատանային, որ կ'աշխատի Քրիստոսի դարձածները՝ դարձեալ մեղքի կեանքին վերադարձնել:

3.- Ի՞նչ կ'ուզէին Փարիսեցիները: Կ'ուզէին որ կինը իր պոռնկութեան կեանքը շարունակէր: Եթէ չէին ուզեր որ կինը իր մեղքի կեանքը շարունակէր, հապա ինչո՞ւ կը դժգոհէին Յիսուսի դէմ որ օգնած էր կնոջ որ փոխէ իր կեանքը: Այսօր, անոնք որոնք կը մերժեն ներել

իրենց նմանին որ դարձի եկած է Քրիստոսի, հարց կու տամ իրենց, ի՞նչ է իրենց ուզածը: Կ'ուզեն որ Քրիստոսի դարձած մարդը դարձեալ հեռանայ Քրիստոսէ եւ թշնամի՞ դառնայ իրենց: Ո՛վ Աստուծոյ դարձած մարդոց թշնամին, աւելի լաւ չէ՞ որ ձգես Աստուծոյ դարձած մարդը՝ Աստուծոյ դարձած մնայ, գոնէ մէկ թշնամի նուազ կ'ունենաս:

4.- «Ո՞վ է այս մարդը, որ նոյնիսկ մեղքերը կը ներէ»: Այս Մարդը՝ Փրկիչն է մարդկութեան, Ընկերն է մարդկութեան, Բարեկամն է մարդկութեան, Քաւիչն է մարդկութեան, Ազատարարն է մարդկութեան:

Այս Մարդը ո՛չ միայն մեղքերը կը ներէ, այլ նաեւ նո՛ր կեանք կու տայ, ինչպէս այս մեղաւոր կնոջ ըրաւ: Այս Մարդը ո՛չ միայն մեր երկրաւոր կեանքը կը նորոգէ, այլ նաեւ երկնաւոր կեանքի խոստումը կու տայ: Ո՛չ միայն մեր անհաւատութիւնը կը ներէ, այլ նաեւ հաւատք կը ներշնչէ:

«Իսկ Յիսուս կնոջ ըրաւ.

– Հաւատքդ քեզ փրկեց. խաղաղութեամբ գնա» (Ղկ 7.50): Քանի մը հաստատումներ.–

1.— Կի՛նը ազատագրուելու հաւատքով եկաւ եւ ազատագրուեցաւ: Ազատագրուեցաւ ո՛չ միայն իր անցեալի մեղքերէն, այլեւ՝ իր անցեալէն, իր ներկայէն, իր գալիքէն: Եթէ մէկը փրկուելու հաւատքով կու գայ Տիրոջ՝ կը փրկուի: Ան որ Յիսուսի կու գայ առանց փրկութիւն ու նորոգութիւն ձեռք ձգելու ակնկալութեամբ՝ ձեռնունայն եւ յուսախաբ պիտի վերադառնայ:

2.– Ուրիշ կարեւոր գշտարտութիւն մը կայ որ պէտք չէ մեր ուշադրութենէն վրիպի: Երբ կ'ըսեն թէ՛ կի՛նը հաւատաց: Ի՞նչ բանի հաւատաց: Կի՛նը ո՛չ միայն հաւատաց որ Յիսուս կարող էր զինք ազատել ու ներել, այլ նաեւ ու մանաւանդ, հաւատաց որ Յիսուս կ'ուզէր եւ կը սիրէր զինք ազատել ու ներել: Այո՛, Յիսուս ո՛չ միայն կրնայ ազատել մեզ, այլեւ՝ կ'ուզէ՛ ազատել մեզ: Կը սիրէ՛ ազատել մեզ: Կը փափաքի՛ ազատել մեզ:

3.– «Հաւատքդ քեզ փրկեց»: Ասկէ առաջ տեսնեմք որ այս կի՛նը անհունօրէն սիրեց Յիսուսը, իսկ այստեղ մեզի կ'ըսուի որ կի՛նը հաւատաց Յիսուսի: ՀԱՒԱՏՔ եւ ՍԷՐ, երկու առաջինութիւններ՝ որոնք չեն բաժնուիր իրարմէ: Աստուծոյ սիրելը բնականօրէն աւելի կարեւոր է քան անոր հաւատալը, եւ ինչո՞ւ, որովհետեւ դեւերն ալ կը հաւատան Աստուծոյ (Յկ 2.19), բայց չեն սիրեր զայն: Երբ կը սիրենք զԱստուծո՞՛ւ ատիկա փաստ մըն է որ կը հաւատանք անոր, իսկ երբ կը հաւատանք՝ ատիկա փաստ մը չէ որ կը սիրենք զԱստուծո՞՛ւ: Ահա թէ ինչո՛ւ սերը

առաջնահերթ է, բայց ինչպես ըսի, անոնք չեն բաժնուիր իրարմէ, որովհետեւ ի՞նչպէս կրնանք սիրել զԱստուած երբ չենք հաւատար անոր:

4.- «Խաղաղութեամբ գնա»: Ըսինք, թէ ան որ հաւատով կու գայ Տիրոջ՝ կը ստանայ մեղքերու քաւութիւն. մեղքերու քաւութեան բնական արդիւնքն է խաղաղութիւնը: Փորձառութիւնը ունեցող մարդիկ, գիտեն, թէ այն օրը որ ապրած են ճշմարիտ դարձել ստացած մեղքերու քաւութիւն՝ լեցուած են անբացատրելի խաղաղութեամբ: Անկարելի է որ մէկը ապրած ըլլայ ճշմարիտ դարձել եւ իր սրտին մէջ խաղաղութիւն չունենայ:

5.- «Գնա»: Այս բառը մեզի կը յիշեցնէ որ Քրիստոսի եկող եւ Քրիստոսով փրկութիւն ձեռք գող մարդը, պարտականութիւնն ու առաքելութիւնը ունի երթալու եւ վկայելու Քրիստոսի մասին: Մեղաւոր կինը, մեղքերու քաւութիւն ստացած, խաղաղութեամբ լեցուած, Յիսուսի սիրովը վառուած, հիմա կրնար երթալ եւ իրեն պէս մեղաւորներուն խօսիլ ու պատմել իսկական ՍԻՐՈՅ մասին, Յիսուսի սիրոյն մասին:

ՄԵԾ ԽՆՃՈՅՔԻՆ ԱՌԱԿԸ

«Մարդ մը կար, որ մեծ ընթրիք մը սարքեց եւ շատեր հրաւիրեց: Ընթրիքի ժամուն իր ծառան դրկեց, որպէսզի հրաւիրեալներուն ըսէ. "Եկէ՛ք, ամէն ինչ պատրաստ է արդէն": Հրաւիրեալները սկսան մէկ առ մէկ հրաժարիլ: Առաջինը ըսաւ. "Արտ մը գնեցի, պէտք է երթամ եւ տեսնեմ գայն, հետեւաբար կը ինդրեմ որ ներողամիտ գտնուի": Միւսը ըսաւ. "Հինգ գոյգ եզ գնեցի, պէտք է երթամ փորձեմ գանձնք, հետեւաբար կը ինդրեմ որ ներողամիտ գտնուի": Ուրիշ մը ըսաւ. "Տակաւին նոր ամուսնացայ, հետեւաբար չեմ կրնար գալ": Ծառան վերադարձաւ եւ իր տիրոջ պատմեց անոնց ըսածները: Այն ատեն տանտէրը վրդոված՝ ըսաւ ծառային. "Անմիջապէս քաղաք գնա եւ հրապարակներուն ու փողոցներուն մէջ որքան որ աղփատ, խեղանդամ, կաղ եւ կոյր տեսնես՝ բոլորն ալ հոս բեր": Քիչ ետք ծառան վերադառնալով իր տիրոջ ըսաւ. "Տէ՛ր, հրամանդ կատարեցի, բայց տակաւին տեղ կայ": Տէրը ծառային հրամայեց. "Քաղաքէն դուրս գնա եւ քամրաններուն վրայ ու դաշտերուն մէջ ո՛վ որ գտնես՝ ստիպէ որ գայ, որպէսզի տունս լեցուի: Կ'ըսեմ ձեզի, որ առաջին հրաւիրեալներէն ո՛չ մէկը իմ ընթրիքէս պիտի քաշակէ"» (Ղկ 14.16-24):

Նախքան առակի բացատրութեան սկսիլը, նախ տեսնենք թէ ի՛նչ բան պատճառ եղաւ որ Յիսուս այս առակը պատմէ: Ղուկաս մեզի կ'ըսէ թէ «Շաբաթ օր մը Յիսուս մտաւ Փարիսեցիներու իշխանաւորներէն մէկուն տունը՝ քաշելու համար:... Տեսնելով թէ ինչպէս հրաւիրեալները պատուոյ տեղերը կը փնտռէին...տանտիրոջ ըսաւ. "Երբ քաշի կամ ընթրիքի հրաւեր կու տաս, մի՛ կանչեր բարեկամներդ կամ եղբայրներդ, ազգականներդ եւ հարուստ դրացիներդ, որպէսզի չըլլայ որ անոնք ալ բու հրաւերիդ փոխարէն քեզ հրաւիրեն, եւ այս ձեռով քեզի հատուցում կատարած ըլլան: Ընդհակառակը երբ քաշկերոյթ կու տաս, կանչէ աղփատներն ու խեղանդամները, կաղերն ու կոյրերը եւ այն ատեն երանելի պիտի ըլլաս, որովհետեւ անոնք փոխարէնը քեզի հատուցանելիք ոչինչ ունին: Եւ գիտցած եղիր, որ բու հատուցումդ պիտի ստանաս արդարներու յարութեան ժամանակ"»: Սեղանակիցներէն մէկը Յիսուսի այս խօսքերը լսելով՝ ըսաւ. «Երանի՛ անոր որ Աստուծոյ արքայութեան մէջ քաշ պիտի ուտէ» (Ղկ 14.1,7,12-14): Իր այս խօսքին վրայ՝ Յիսուս տունեալ առակը պատմեց:

Ուշագրաւ է որ Յիսուս Փարիսեցի իշխանաւորին կը թելադրէ «աղփատներն ու խեղանդամները, կաղերն ու կոյրերը» կանչել (13-րդ համար), առակին մէջ եւս կը տեսնենք որ տէրը իր ծառային կ'ըսէ. «Անմիջապէս քաղաքէն դուրս ել հրապարակներուն ու փողոցներուն մէջ որքան որ աղփատ, խեղանդամ, կաղ եւ կոյր տեսնես՝ բոլորն ալ հոս բեր» (21-րդ համար): Տուեալ համեմատութիւնը յստակօրէն կը պարզէ թէ այն ինչ որ Քրիստոս պատուիրեց Փարիսեցիին ընել, նախ ինք ըրաւ եւ կ'ընէ եւ պիտի շարունակէ ընել: Քրիստոս աղփատաւոր էր, եւ ուզեց որ Փարիսեցիին ինք եւս նոյնը ըլլայ: Քրիստոս կողմնակից էր կաղին ու կոյրին, եւ ուզեց որ Փարիսեցիին եւ ամէն մարդ նոյնը ըլլայ եւ նոյնը ընէ:

Նախքան անմիջապէս առակին մեկնութեան ձեռնարկելը, հաւանաբար պէտք է յիշել որ Յիսուսի սեղանակիցին խօսքը. «Երանի՛ անոր որ Աստուծոյ արքայութեան մէջ մաշ պիտի ուտէ», բառացիօրէն պէտք է հասկնալ եւ ո՛չ թէ հոգեւոր իմաստով: Զմոռնանք որ այս խօսքը ըսողը Փարիսեցի մըն էր, եւ չմոռնանք որ Փարիսեցիներուն պատկերացումը Աստուծոյ արքայութեան մասին նիւթական էր: Անոնք կը հաւատային որ Աստուծոյ արքայութիւնը, կամ ըսենք թագաւորութիւնը, նիւթական թագաւորութիւն պիտի ըլլար եւ իրենք «իբրեւ Աստուծոյ խօսքին տառացի գործադրողները» եւ «մեծ պաշտպանները», այդ թագաւորութեան մէջ յատուկ տեղ եւ յատուկ դեր պիտի ունենային, վայելելով ամէն պատիւ ու յարգանք: Փարիսեցիին համար Աստուծոյ արքայութիւնը նիւթական պատկերացում ունենալով, բնականօրէն հոն մաշ ուտելը եւս նիւթական կամ բառացի հասկացողութիւն ունի իրենց համար:

«Մարդ մը կար, որ մեծ ընթրիք մը սարքեց եւ շատեր հրաւիրեց» (Ղկ 14.16): Քանի մը հաստատումներ. –

1.– Որոշ սուրբգրագէտներ Մատթէոսի 22-րդ գլուխին մէջ յիշուած «Հարսանիքի հրաւիրեալներուն առակը» նոյնը կը նկատեն այս առակին հետ, եւ պիտի չփորձեն սակայն տուեալ առակը մեկնել գայն համեմատելով Մատթէոսի 22-րդ գլուխին մէջ յիշուած առակին հետ, որովհետեւ շահեկան չենք համարեր այդ ընելը, եւ մեզ կրնայ մեր նիւթի սահմանէն անհունօրէն հեռացնել: Բայց միակ հաստատումը որ կ'ուզեմ ընել եւ գոր կարեւոր կը նկատեմ, հետեւեալն է. –

Հարսանիքի հրաւիրեալներուն առակին մէջ մենք տեսնուք որ «թագաւոր մը իր որդիին համար հարսանիք» կը սարքէ (Մտ 22.2), եւ ըսինք, որ թագաւորը կը ներկայացնէ մեր երկնաւոր Հայրը, իսկ որդին՝ Տէր Յիսուս Քրիստոսը, իսկ այս մեր ուսումնասիրած առակին մէջ, նախ հարսանիք սարքելու հարց չկայ, այլ սարքուածը պարզապէս ընթրիք

մըն է, եւ երկրորդ, ընթրիք սարժողը «մարդ մը»ն է եւ ո՛չ թէ Թագաւոր մը, այլ խօսքով՝ Որդին ինքն է եւ ո՛չ թէ Հայրը:

Աւելի պարզ բառերով, Մատթէոսի 22-րդ գլուխին յիշած հարսանիքի հրաւիրեալներուն առակին մէջ սարժուածը հարսանիք մըն է, իսկ սարժողը՝ թագաւորը (Հայրը), որ կը սարքէ իր որդիին (Յիսուսի) համար, իսկ Ղուկասի 14-րդ գլուխին յիշած առակին մէջ սարժուածը ընթրիք մըն է, իսկ սարժողը՝ «մարդ մը», որ Որդին ինքն է: Այս երկու տարբերութիւնները երկու տարբեր եւ իրար հակասող հաստատումներ չեն, այլ միեւնոյն նշմարտութեան տարբեր երկու երեսները կը ներկայացնեն պարզապէս: Մէկ առակը կը գործածէ «հարսանիք» բառը, իսկ միւս առակը՝ «ընթրիք»: Բնականօրէն կարելի չէ երեւակայել հարսանիք մը առանց ընթրիքի, իսկ միւս կողմէ նաեւ, կարելի չէ երեւակայել Տիրոջ ներկայութեան եւ Տիրոջ հետ կատարուած «ընթրիք» մը որ հարսանիքի նման չըլլայ:

Գալով երկրորդ երեւութական տարբերութեան. մեր երկնաւոր Հայրը ինք պատրաստած ըլլայ «ընթրիքը» իր Որդիին համար, թէ Որդին ինք պատրաստած ըլլայ, ի՛նչ տարբերութիւն կ'ընէ: Երկու պարագաներուն ալ «ընթրիքը» Որդիին համար պատրաստուած է: Բայց կարելոր է գիտնալ, որ երբ մէկ առակը կը հաստատէ թէ ընթրիքը պատրաստողը Հայրն է, իսկ միւսը առակը՝ Որդին, ասիկա ինքնին ցոյց կու տայ, որ Ամենասուրբ Երրորդութիւնը մէկ թագաւորութիւն է, մէկ իշխանութիւն, մէկ կամք. եւ իբր այդպիսին, բնականօրէն Երրորդութեան անձերէն մէկուն ըրածը կը վերագրուի նաեւ Երրորդութեան միւս երկու անձերուն:

Կը մնայ մեզի ըսել թէ ինչո՛ւ շեշտը առաւելաբար կը դրուի Որդիին վրայ, եւ թէ ի՛նչ է հաւատացեալին համար պատրաստուած ընթրիքը:

Թէ ինչո՛ւ շեշտը առաւելաբար կը դրուի Որդիին վրայ՝ պատասխանը շատ պարզ է. Քրիստոս ի՛նք է որ մեռաւ մարդոց փրկութեան համար եւ ո՛չ թէ Հայրը կամ Սուրբ Հոգին: Եւ բնականօրէն, երբ մարդիկ պիտի ուզեն փրկութեան գալ՝ նախ Քրիստոսի պէտք է գան: Քրիստոսի գալէ յետոյ է որ Սուրբ Հոգիին նորոգութիւնը կը ստանան: Ոեւէ մարդ Քրիստոսի գալէ առաջ չէ ստացած եւ չի կրնար ստանալ Սուրբ Հոգիին նորոգութիւնը:

Իսկ թէ ի՛նչ է հաւատացեալին համար պատրաստուած ընթրիքը, երկու բացատրութիւններ կան որոնք գիրար կ'ամբողջացնեն.–

ա.– Կարգ մը մեկնիչներ կ'ըսեն թէ «ընթրիքը» պիտի ըլլայ Քրիստոս ի՛նք, որ յայտարարեց. «Ե՛ս եմ կեանքի հացը» (Յհ 6.35, 48): Քրիստոս ի՛նք պիտի ըլլայ հաւատացեալներուն կերակուրը Աստուծոյ

արքայութեան մէջ: Բայց հարկաւ բնագիրը Աստուծոյ արքայութեան մէջ ըլլալիք «ընթրիֆին» մասին չէ որ կը խօսի, այլ՝ այս աշխարհին մէջ հաւատացեալներուն ունեցած «ընթրիֆին» մասին: Ի՞նչ է հաւատացեալներուն «ընթրիֆը» այս աշխարհին մէջ: Այդ ընթրիֆը նոյնիման Աստուծոյ ներկայութիւնն է: Աստուած ի՞նքն է որ իր ներկայութեամբ կը լեցնէ ու կը լիացնէ իր գաւակները: Սիրտ մը որ իր մէջ չունի Քրիստոսը՝ դատա՛րկ է այդ սիրտը: Հոգի մը որ իր մէջ չունի Սուրբ Հոգին՝ պարա՛պ է այդ հոգին: Անձ մը որ իր մէջ չունի մեր երկնաւոր Հօր տա՛մուկ շունչը՝ անշունչ անձ է անիկա:

բ.– Այլ մեկնիչներ կ'ըսեն թէ «ընթրիֆը» Քրիստոսի Աւետարանն է, Աստուծոյ կենսատու խօսքը: Քրիստոս իր խօսքով կշտացուց մարդոց էութեան մէջ գոյութիւն ունեցող Աստուածադիր ծարաւը: Ինչպէս ըսի, տուեալ երկու բացատրութիւնները զիրար կ'ամբողջացնեն, որովհետեւ կարելի չէ գատել իրարմէ Քրիստոսը եւ Քրիստոսի Աւետարանը, կամ՝ Աստուծոյ ԽՕՄԲԸ՝ Աստուծոյ խօսքէն:

2.– «Մեծ ընթրիֆ»: Արդէն ըսինք թէ ի՞նչ է ընթրիֆը, հիմա տեսնենք թէ ինչո՛ւ այդ ընթրիֆը կը կոչուի՝ «մեծ»: Յունարէն բնագիրին մէջ մենք ունինք «μεγα – մեկա» բառը որ պարզապէս «մեծ» բառով չի թարգմանուիր: Յունարէնի մէջ «μεγα» բառը ընդհանրապէս կը գործածուի ոեւէ բանի համար որ հսկայ արժէք, անչափ կարեւորութիւն եւ փառաւոր հանգամանք ունի: Հայերէն լեզուի մէջ չունինք յատուկ բառ մը որ «μεγα» բառին ամբողջ իմաստն ու նշանակութիւնը կ'արտայայտէ, բայց եթէ նայինք տարբեր լեզուներու, կը գտնենք այդ բառը: Օրինակ, Անգլերէն լեզուի մէջ ունինք երկու բառեր՝ «great» եւ «big»: Կ'ենթադրեմ որ պարզ է այս երկու բառերուն տարբերութիւնը, ուստի, կարիքը չունիմ բացատրելու: Հայերէնի մէջ «great» եւ «big» բառերը միակ բառով մը կը թարգմանուին՝ «մեծ» բառով: Յունարէն «μεγα» բառը խորփին մէջ չի նշանակեր «big», այլ՝ «great»:

Եթէ յիշենք որ վերեւ ըսինք թէ Յունարէն «μεγα» բառը մատնացոյց կ'ընէ հսկայ արժէք, անչափ կարեւորութիւն եւ փառաւոր հանգամանք ունեցող իրականութիւն մը, պարզ կը դառնայ թէ ինչո՛ւ «ընթրիֆը» կոչուած է «μεγα»: «Ընթրիֆը կոչուած է «μεγα – great – "փառաւոր"», որովհետեւ «ընթրիֆը» նոյնիման Քրիստոսի անձն է, ներկայութիւնն է: Արդարեւ, «մեծ ընթրիֆ» բացատրութեամբ, ըսել ուզուածը այն է՝ որ Քրիստոս ի՞նքն է իսկական կերակուրը, նշմարիտ հացը, որ կրնայ կշտացնել մարդուն սիրտն ու հոգին:

3.- «Շատեր հրաւիրեց»: Փրկիչին գալու եւ փրկութիւնը ընդգրկելու հրաւերը ուղղուած չէ մարդոց որոշ դասակարգին միայն, այլ՝ անխտիր բոլորին: Բազմաթիւ են Աստուածաշնչական այն վկայութիւնները որոնք կը պարզեն որ Աստուած բոլոր մարդոց փրկութիւնը կ'ուզէ: Թուեմ անոնցմէ մէկ-երկուքը: Պօղոս առաքեալ կը հաստատէ. «Այդ է բարին եւ այդ կը փափաքի Աստուած, մեր Փրկիչը, որ կ'ուզէ որ բոլոր մարդիկը փրկուին եւ հասնին նշմարտութեան փառանքին, թէ՛ մէկ Աստուած կայ միայն, եւ Աստուծոյ ու մարդոց միջեւ միակ միջնորդ մը՝ Յիսուս Քրիստոս մարդը, որ ինքզինքը իբրեւ փրկագին տուաւ բոլոր մարդոց համար» (Ա.Տմ 2.3-6): «Բոլոր մարդիկը» եւ «բոլոր մարդոց համար» բացատրութիւնները որոշապէս ցոյց կու տան որ Աստուծոյ կամքն է «որ բոլոր մարդիկը փրկուին»: Պետրոս առաքեալ կը վկայէ որ Աստուած «չ'ուզեր որ ոեւէ մէկը կորսուի, այլ՝ կ'ուզէ որ բոլորն ալ ապաշխարելու առիթ ունենան» (Ա.Պտ 3.9):

Մէկը կրնայ մտածել որ «շատեր» բառը (Յունարէն՝ πολλους), չ'ընդգկեր «բոլորը» նշանակութիւնը, այլ խօսքով, ցոյց չի տար որ բոլոր մարդիկը հրաւիրուեցան փրկութեան: Առարկութիւնը տեղին է եւ շիտակ: Բայց կարելոր է գիտնալ որ մենք հոս ունինք «շատեր» բառը եւ ո՛չ թէ «բոլորը» բառը, որովհետեւ Քրիստոս իր երկրաւոր կեանքի ընթացքին, իր փրկութիւնը առաջին հերթին ուղղեց միայն հրեաներուն եւ ո՛չ թէ աշխարհի բոլոր ժողովուրդներուն, եւ նոյնիսկ երբ իր աշակերտները առաքելութեան պիտի դրկէր, անոնց պատուիրեց չմտնել հեթանոսներուն շրջանները եւ Սամարացիներուն քաղաքները, այլ մասնաւորաբար երթալ Իսրայէլի կորսուած ոչխարներուն (Մտ 10.5-6): Բայց իր յարութենէն ետք, Յիսուս պատուիրեց իր փրկութիւնը տարածել բոլոր ժողովուրդներուն մէջ, ինչ որ առակն իսկ ցոյց կու տայ իր 22-23 համարներուն մէջ, որուն մասին քիչ մը անդին պիտի խօսինք:

«Ընթրիքի ժամուն իր ծառան դրկեց, որպէսզի հրաւիրեալներուն ըսէ. "Եկէք, ամէն ինչ պատրաստ է արդէն"» (Ղկ 14.17): Քանի մը հաստատումներ.–

1.– «Ընթրիքի» ժամուն»: Նախորդ համարին մասին խօսած ատեն, բացատրեցինք թէ ի՞նչ է «ընթրիք»ը, եւ ըսինք, թէ ատիկա Քրիստոսի Աւետարանն է, կամ՝ նոյնիման Քրիստոսը: Հիմա տեսնենք թէ ինչո՞ւ մեր հոգեւոր կերակուրը կոչուած է «ընթրիք»: Երեք բացատրութիւններ.–

ա.– Ընթրիքը օրուան աւարտին տեղի կ'ունենայ: Ինչպէս օրուան ծանր աշխատանքին կը յաջորդէ ընթրիք եւ հանգիստ, այնպէս ալ, երբ մեր երկրաւոր կեանքի հաւատքի ու աշխատանքի օրերը իրենց

աւարտին հասնին՝ մենք գմեզ դէմ յանդիման պիտի գտնենք Տիրոջ պարգեւած ընթրիքին ու հանգիստին:

բ.- Մեծն Կիւրեղ կը բացատրէ թէ Քրիստոսի կողմէ տրուածը «ընթրիք» կոչուած է, որովհետեւ ընթրիքը երեկոյեան եւ գիշերուան միջեւ տեղի կ'ունենայ, եւ որովհետեւ մեր իսկական «ընթրիքը»՝ Քրիստոս, ինք եւս երեկոյեան եւ գիշերուան միջեւ ընծայուեցաւ խաչին վրայ:

գ.- Բոլորս ալ գիտենք որ մեզի համար պատուական եւ սիրելի հիւրերը ընթրիքի՝ կը կանչենք եւ ո՛չ թէ նախաճաշի կամ ճաշի: Եւ ինչո՞ւ: Որպէսզի կարենանք իրենց հետ աւելի երկար նստիլ, եւ սիրալիր յարաբերութիւն ու խօսակցութիւն ունենալ: Ասիկա նոյնքան ճշմարիտ է Քրիստոսի պարագային: Քրիստոս ինք եւս մեզի հանդէպ իր ունեցած մեծ սիրոյն համար եւ մեզ պատուելու համար՝ մեզ ընթրիքի կը կանչէ եւ ո՛չ թէ նախաճաշի կամ ճաշի: Ընդհանրապէս նախաճաշի կամ ճաշի եկողը որոշ ժամանակ մնալէ ետք կը մեկնի, բայց ընթրիքի եկողը՝ երկա՛ր կը մնայ, եւ նոյնիսկ կրնայ իր եղած տունին մէջ գիշերել, միշտ ինչպէս Յիսուս ինք գիշերեց Ջակֆէոսի տունը, ընթրելէ ետք անոր տան մէջ (Ղկ 19.5): «Ընթրիք» բացատրութեամբ ըսել ուզուածը, հետեւաբար, այն է՝ որ Յիսուս մեզ կը հրաւիրէ որ մեր երկրաւոր կեանքի օրերը հետը անցնենք, բոլոր գիշերենք՝ մնանք, մինչեւ որ ժամանակը գայ եւ հրաւիրուինք ամբողջ յաւիտենականութեան ընթացքին հետը մնալու, եւ իրեն հետ սիրալիր ժամանակ անցնելու:

2.- «Ընթրիքի "ժամուն"»: Ի՞նչ ցոյց կու տայ «ժամուն» բառը: Այս բառը կրնանք հասկնալ երկու իմաստով.-

ա.- «ժամուն» բառը կրնայ ակնարկութիւն ըլլալ այն ժամանակներու աւարտին՝ երբ ալ Աստուած յարմար սեպեց իր Որդին աշխարհ զրկելու՝ աշխարհի փրկութեան համար: Ասոր վերաբերեալ Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհ զրկեց իր Որդին...» (Գղ 4.4):

բ.- Կրնայ նաեւ ակնարկութիւն ըլլալ ոեւէ «ժամի» մը երբ ապաշխարելու եւ փրկութեան գալու կոչ կ'ուղղուի մարդ անհատին: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Հիմա՛ է այդ յարմար ժամանակը, հիմա՛ է փրկութեան օրը» (Բ.Կր 6.2): Ընթրիքով խորհրդանշուած փրկութեան գալու հրաւերն է որ Յիսուս կ'ուղղէ Իսրայէլի ժողովուրդին՝ 16-21 համարներուն մէջ, եւ ամբողջ աշխարհին՝ 22-23 համարներուն մէջ:

3.- «Իր ծառան զրկեց»: Ըստ կարգ մը մեկնիչներու, ընթրիք սարքող մարդը կը ներկայացնէ մեր երկնաւոր Հայրը, իսկ մարդուն կողմէ զրկուող ծառան՝ Քրիստոսը, բայց հաւանական չի թուիր որ հոս

յիշուող ծառան ըլլայ Քրիստոսը ինք: Մենք վերեւ բացատրեցինք որ ընթրիք սարքողը Քրիստոս ինքն է, այլ խօսքով, Քրիստոս ինքն է որ փրկութեան հրաւերը ուղղեց հրեայ ժողովուրդին, եւ իր խաչելութենէն ու յարութենէն ետք, շարունակեց այդ հրաւերը ուղղել անոնց, այս անգամ սակայն իր աշակերտներուն միջոցաւ: Հետեւաբար, հոս յիշուող ծառան կը ներկայացնէ առաքելներուն ամբողջ գունդը: Թէ ինչո՞ւ այստեղ յոգնակիով՝ «ծառաներ» ըսելու փոխարէն, կ'ըսուի՝ «ծառան», պարզապէս անոր համար, որ Քրիստոսի հայեացքով առաքելները մէկ ամբողջութիւն են, մէկ գունդ են, մէկ եւ միա՛կ նպատակի մը կանչուած: Զմոռնանք որ հոս եզակիով յիշուած՝ «ծառայ» բառը, Մտ 22.3-ին մէջ յոգնակիով յիշուած է՝ «ծառաներ»: Այս իրողութիւնը կը պարզէ որ Քրիստոսի համար առաքելներու բազմութիւնը մէկ է, բայց մէկ ըլլալով հանդերձ անոնք առանձին-առանձին անհատներ են, իւրաքանչիւրը կոչուած գործելու եւ աշխատելու Քրիստոսի միեւնոյն դաշտին մէջ՝ միեւնոյն նպատակին համար, եւ այդ նպատակը մարդիկը Իրեն բերելն է:

4.- Առակը մեզի ցոյց կու տայ որ ծառան երեք անգամ կը դրկուի հրաւիրեալները ընթրիքի կանչելու (17, 21 եւ 23 համարներ): Հարսանիքի հրաւիրեալներուն առակին մէջ եւս կը տեսնենք որ ծառաները երեք անգամ կը դրկուին (Մտ 22.3, 4, 8-9): Արդ, Յիսուս իսկապէ՞ս իր աշակերտներուն միջոցաւ երեք անգամ փրկութեան հրաւեր ուղղեց հրեաներուն: Այո՛: Առաջին անգամ անոնց դրկեց իր 12 աշակերտները (Ղկ 9.1-6), երկրորդ անգամ անոնց դրկեց իր 72 աշակերտները (Ղկ 10.1), իսկ երրորդ անգամ դարձեալ անոնց դրկեց իր 12 աշակերտները իր յարութենէն ետք (Մտ 28.18-20), որ սակայն անմիջապէս հակառակութեան հանդիպելով՝ պիտի դառնային ու բացուէին ամբողջ աշխարհին, ինչ որ մեզի ցոյց կու տայ Գրծ 1.8-ը ուր կը կարդանք. «Երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ, զօրութեամբ պիտի լեցուիք եւ իմ վկաներս պիտի ըլլաք՝ Երուսաղէմի, ամբողջ Հրէաստանի եւ Սամարիայի մէջ, եւ մինչեւ աշխարհի ծայրամասերը»: Արդարեւ, բոլորս ալ գիտենք, որ Հոգեգալուստէն ետք, աշակերտները ուղղակիօրէն հեթանոսներուն չգացին, այլ իրենց առաքելութիւնը նախ սկսան Երուսաղէմէն, ապա տարածուեցան «ամբողջ Հրէաստանի եւ Սամարիայի մէջ», հուսկ ապա երթալու համար «մինչեւ աշխարհի ծայրամասերը»:

5.- «Ղրկեց, որպէսզի հրաւիրեալներուն ըսէ...»: Մեր ուշադրութիւնը կեդրոնացնենք «ղրկեց» բառին վրայ: Շա՛տ կարեւոր է այս բառը: Այս բառէն կախեալ է յաջողութիւնը մեր առաքելութեան: Այս բառով

պայմանաւորուած է մեր գործին ու աշխատանքին արդիւնաբեր ըլլալը: Եթէ առանց Քրիստոսի կողմէ զրկուած ըլլալու իջնեմի առաքելութեան դաշտ՝ մեր առաքելութիւնը դատապարտուած է ձախողութեան: Խի՛ստ կարեւոր է ընտրուիլ եւ զրկուիլ Քրիստոսի կողմէ: Մե՛նք ո՛չ թէ չենք կրնար, այլ նոյնիսկ իրաւունք չունինք գործելու Քրիստոսի դաշտին մէջ, եթէ երբեք մեզ զրկողը Քրիստոս ինք չէ:

Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Ի՞նչպէս պիտի փարոզէին զայն, առանց Աստուծոյ կողմէ զրկուած ըլլալու» (Հռ 10.15): Առաքեալին հարցադրողական բնոյթ ունեցող այս հաստատումը ամենայն յստակութեամբ ցոյց կու տայ թէ Քրիստոսը փարոզող մարդը անհրաժեշտօրէն պէտք է Աստուծոյ կողմէ զրկուած ըլլայ: Խօսիլ Աստուծոյ Որդիին մասին առանց Աստուծոյ կողմէ զրկուած ըլլալու՝ մեզ ո՛չ թէ վարձատրութեան արժանի կը դարձնէ, այլ՝ դատապարտութեան:

Երբեմն մարդիկ կ'ըսեն. «Կը փափաքիմ փարոզիչ ըլլալ», կամ՝ «Կը փափաքիմ աւետարանչութիւն ընել»: Եւ սակայն, Քրիստոսը փարոզելը կամ աւետարանչութիւն ընելը անձնական փափաքի հարց չէ, այլ՝ Աստուծոյ կողմէ կանչուած, ընտրուած ու զրկուած ըլլալու հարց է: Յիսուս աշակերտներուն ըսաւ. «Դուք չէ որ զիս ընտրեցիք, այլ ե՛ս ձեզ ընտրեցի եւ նշանակեցի ձեզ՝ որ երթաք եւ պտղաբեր ըլլաք եւ ձեր պտուղը մնայուն ըլլայ» (Յհ 15.16): Մեր Տէրը Յիսուս, շատ յստակօրէն ցոյց կու տայ մեզի, որ մե՛նք չէ որ պէտք է որոշեմք աշխատիլ ու գործել իր դաշտին մէջ, այլ ի՛նքն է որ պէտք է որոշէ. ա՛յս է որ կը պարզէ «Դուք չէ որ զիս ընտրեցիք, այլ ե՛ս ձեզ ընտրեցի» հաստատումը: Այո՛, ի՛նք պէտք է մեզ ընտրէ եւ ո՛չ թէ մե՛նք զի՛նք: Սոյն համարը նաեւ որոշապէս կը բացայայտէ որ եթէ մե՛նք Քրիստոսի կողմէ զրկուած ըլլանք՝ պիտի ունենանք յաջող եւ պտղաբեր առաքելութիւն: Ա՛յս է որ ցոյց կու տայ «երթաք եւ պտղաբեր ըլլաք» բառերը: Մարդիկ կրնան գործել Քրիստոսի անունով եւ որոշ արդիւնք ձեռք ձգել, բայց եթէ անոնք Քրիստոսի կողմէ չեն զրկուած եւ Քրիստոսի զօրակցութիւնը չեն վայելեր՝ անոնց արդիւնքը կ'ըլլայ ժամանակաւոր: Յիսուսի բացատրութիւնը «ձեր պտուղը մնայուն ըլլայ», ցոյց կու տայ, որ Քրիստոսի կողմէ ընտրուած ու զրկուած մարդուն պտուղը միայն մնայուն կ'ըլլայ: Յիսուսի կողմէ չորկուած մարդը ուշ կամ կանուխ պիտի յոգնի եւ կա՛մ նահանջ պիտի արձանագրէ եւ կա՛մ պարտուած պիտի իյնայ առաքելութեան նամբուն վրայ:

Տարբեր առիթներով խօսած եմ Աստուածաշնչական բազմաթիւ անձերու մասին եւ ցոյց տուած եմ թէ ինչպէս անոնք Աստուծոյ կողմէ

կանչուած ու զրկուած են, ուստի զանց կ'ընեմ այս ուղղութեամբ յաւելեալ մանրամասնութիւններ յիշելէ:

6.- «Եկե՛ք»: Ամբողջ Աստուածաշունչը ուղղակի թէ անուղղակի կոչ մըն է գալու Աստուծոյ եւ ընդգրկելու անոր փրկութիւնը: Տարբեր առիթով մը դարձեալ Յիսուս ըսաւ. «Ինձի՛ եկե՛ք» (Մտ 11.28): Յիսուս մեզ չի հրաւիրեր իրեն գալու, որովհետեւ մեր կարիքը ունի, ընդհակառակը, մեզ կը հրաւիրէ իրեն գալու, որովհետեւ գիտէ որ մե՛նք է որ իր կարիքը ունինք:

Առանց իրեն մենք չենք կրնար ապրիլ, որովհետեւ ի՛նքն է կեանքը:

Առանց իրեն մենք աղքատ ենք, որովհետեւ ի՛նքն է Հարուստը:

Առանց իրեն մենք վիրաւոր ենք, որովհետեւ ի՛նքն է Բժիշկը:

Առանց իրեն մենք թշուառ ու դժբախտ ենք, որովհետեւ ի՛նքն է Երջանկութիւնը:

Առանց իրեն մենք սգաւոր ենք, որովհետեւ ի՛նքն է Միփարութիւնը:

Առանց իրեն մենք խաւար ենք, որովհետեւ ի՛նքն է Լոյսը:

Ինչպէս կը մթննայ երկինքը առանց արեւին, լուսինին եւ աստղերուն, այնպէս ալ, կը մթննայ մեր մէջ եղող երկինքը՝ առանց մշմարտութեան ու արդարութեան արեգակին՝ Յիսուսի:

Հրեաներ չէին անդրադառնար որ այս առակին ընդմէջէն, իրենց սպասած ու խոստացուած Փրկիչն էր որ կոչ կ'ուղղէր իրենց. «Եկե՛ք»: Իրենք կը սպասէին որ Փրկիչը տարբեր ձեւով մը յայտնուէր. յայտնուէր նիւթական զօրութեամբ՝ նիւթական ազատագրութիւնը բերելու իրենց: Անոնք կ'ուզէին մէկը որ գիրենք ազատագրէր Հռոմէական տիրապետութենէն եւ ո՛չ թէ Սատանային տիրապետութենէն: Անոնք կը սպասէին մէկը որ պիտի գար վերականգնելու Դաւիթի թագաւորութիւնը եւ ո՛չ թէ Աստուծոյ թագաւորութեան ներկայութիւնը իրենց կեանքին մէջ:

7.- «Եկե՛ք, ամէն ինչ պատրաստ է արդէն»: Ի՞նչ ցոյց կու տայ «պատրաստ է» բացատրութիւնը: Տոյց կու տայ քանի մը բաներ. –

ա.– Տոյց կու տայ որ Յիսուս իր փրկութիւնը մարդոց տուաւ ձրիօրէն եւ առանց պայմանի:

բ.– Տոյց կու տայ որ Յիսուս ինք անձնապէս պատրաստեց մեր փրկութիւնը՝ առանց մեր մասնակցութեան:

գ.– Տոյց կու տայ որ Յիսուս ինք կամովին մեզ փրկեց: Մենք չխնդրեցինք իրմէ որ իր արիւնը թափէ եւ մեզ փրկէ: Ատիկա ի՛նք ըրաւ յօժարակամ:

դ.– Յոյց կու տայ որ մենք չէ որ մեր փրկութիւնը պիտի կերտենք կամ իրագործենք, ասիկա արդէն «պատրաստ է», եւ կը շնորհուի բոլոր անոնց՝ որոնք կ'ընդառաջեն Յիսուսի կոչին. «Եկէ՛ք»: Մեր կոչումը, մեր փրկութիւնը կերտելը կամ իրագործելը չէ, այլ Յիսուսով արդէն իսկ կերտուած եւ իրագործուած փրկութիւնը ընդունիլն է եւ ընդունելէ ետք՝ անոր տէր կանգնիլը:

Յունարէն բնագիրին մէջ «պատրաստ» բառին համար գործածուած բառին եթէ ուզենք անդրադառնալ, հաւանաբար մեր դիմաց պարզէ ուրիշ հետաքրքրական իմաստ մը եւս: Հոն ունինք «ΕΤΟΙΜΑ – էդիմա» բառը, որ համաձայն մասնագիտական բառարաններու, կը նշանակէ՝ «բաները պատրաստուած են»: Ի՞նչ «բաներ»ու մասին է խօսքը: Խօսքը առաջին հերթին բնականօրէն, ինչպէս ըսի, Քրիստոսով իրագործուած փրկութեան մասին է, բայց նաեւ կը վերաբերի այդ փրկութեան յաջորդող Սուրբ Հոգիի ներգործութեան, ներբնականութեան, լեցունութեան, անոր շնորհիքներուն, պարգեւներուն ու կարողութեանց: Ըսել ուզուածը այն է՝ որ ոեւէ անձ որ Քրիստոսի կու գայ եւ կ'ընդունի փրկութիւնը, փրկութեան կողմին կ'ընդունի նաեւ Սուրբ Հոգիին զօրութիւնն ու զօրակցութիւնը, որպէսզի կարող ըլլայ ապրելու անհրաժեշտ քրիստոնէական կեանքը:

Մեծն Կիւրեղ խօսելով «ամէն ինչ պատրաստ է» բառերուն մասին՝ կ'ըսէ. «Մեր երկնաւոր Հայրը ի՛նքն է որ աշխարհի բնակիչներուն համար կը պատրաստէ այն շնորհիքները որ իր Որդիով կը տրուին աշխարհին, անոնք ըլլան մեղքերու քաղցրութիւն, պղծութեանց լուսացում, Սուրբ Հոգիին հաղորդակցութիւնը, որդեգրութիւնը, եւ երկինքի արքայութիւնը: Քրիստոս ոեւէ ազգէ առաջ Իսրայէլը հրաւիրեց այս օրհնութիւններուն իր Աւետարանին միջոցաւ...»:

«Հրաւիրեալները սկսան մէկ առ մէկ հրաժարիլ: Առաջինը ըսաւ. "Արտ մը գնեցի, պէտք է երթամ եւ տեսնեմ գայն, հետեւաբար կը խնդրեմ որ ներողամիտ գտնուի"» (Ղկ 14.18): Քանի մը հաստատումներ.–

1.– 18–20 համարներուն մէջ կը տեսնենք երեք անձեր որոնք երեք տարբեր պատճառաբանութիւններ կը ներկայացնեն չընդառաջելու համար հրաւերին: Առաջինը կ'ըսէ. «Արտ մը գնեցի, պէտք է երթամ եւ տեսնեմ գայն»: Ո՞վ կը ներկայացնէ յիշեալ անձը: «Արտը» խորհրդանիշ է աշխարհին, ուստի արտ գնողը կը ներկայացնէ աշխարհին կապուած մարդիկը, որոնք չեն կրնար ընդառաջել Աւետարանի հրաւերին: Ասկէ առաջ բացատրեցինք որ հրեաներուն ակնկալութիւնը աշխարհային

թագաւորութիւն մըն էր, ուստի, անոնք աշխարհին կապուած ժողովուրդ էին:

Համաձայն Սուրբ Օգոստինոսի, արտ գնող մարդը կը ներկայացնէ այն մարդիկը՝ որոնք աշխարհի մէջ իշխանութիւն ունին յատուկ կամ որոշ բաժնի մը վրայ, եւ ուստի, կը խորհրդանշէ՝ մեծամտութիւն:

Իսկ համաձայն Սուրբ Ամբրոսիոսի, արտ գնող մարդը կը ներկայացնէ այն մարդիկը՝ որոնք երկրային բաներով կը զբաղին եւ երկրային տուներ ունենալ կը ցանկան եւ ատիկա զիրենք կը հեռացնէ Աստուծոյ արքայութենէն:

2.- Երբ լուրջ ընտրութեան մը դէմ յանդիման կը գտնուինք, եթէ սխալ ընտրութիւն ընենք՝ ոեւէ ձեռով ներելի չէ ատիկա Աստուծոյ մօտ: Իրեայ ժողովուրդը այդպիսի լուրջ ընտրութեան մը դիմաց գտնուեցաւ, կա՛մ ընդառաջել Քրիստոսի կոչին եւ հետեւիլ Աստուծոյ արքայութեան, եւ կա՛մ՝ կառչած մնալ արտին, այսինքն՝ այս աշխարհին, եւ զրկուիլ Աստուծոյ խոստացեալ թագաւորութենէն: Աշխարհի մէջ ապրող ամէն մարդ արարած միեւնոյն ընտրութեան դիմաց կը գտնուի, եւ կոչուած է որոշելու թէ ի՛նչ բանի պէտք է հետեւի, աշխարհի Ստեղծիչի՞ն, թէ՛ աշխարհին, երկինքի՞ն, թէ՛ երկրին:

3.- «Պէտք է երթամ եւ տեսնեմ գայն»: Այստեղ երկու բայեր կան որոնք Յունարէն բնագիրին մէջ եւս կան՝ «երթամ» եւ «տեսնեմ»: Երկու բառերն ալ ցոյց կու տան գործողութիւն, եւ կը պատկերացնեն այն մարդիկը՝ որոնք կը գործեն աշխարհին ու աշխարհայինին համար, որոնք ոչինչ կը տեսնեն աշխարհէն անդին, որոնք բոլորովին կուրցած են հոգեւոր ճշմարտութեանց: Անոնք որոնք կ'ըսեն՝ «երթամ», այսինքն, կը մտածեն անգամ մը երթալ դէպի աշխարհ, փորձելու համար գայն, կ'երթան եւ ալ ետ չեն դառնար. եւ անոնք որոնք կ'ըսեն՝ «տեսնեմ», այսինքն, կը փափաքին նայիլ աշխարհին, վստահ աշխարհը զիրենք պիտի հրապուրէ ու առնինք:

«Միւսը ըսաւ. "Հինգ գոյգ եզ գնեցի, պէտք է երթամ փորձել գանոնք, հետեւաբար կը խնդրեմ որ ներողամիտ գտնուի"» (Ղկ 14.19): Քանի մը մատնանշումներ.–

1.- Սարքուած ընթրիքին ներկայ չըլլալու համար, առաջին երկու անձերուն ներկայացուցած պատճառաբանութիւնները իրարու հետ առնչութիւն ունին: Առաջինին մէջ կը խօսուի «արտի» մասին, իսկ այստեղ կը խօսուի «հինգ գոյգ եզի» մասին: Անոնք իրարու հետ առնչութիւն ունին, այն իմաստով՝ որ եզը արտին մէջ աշխատցուող կենդանին է: Երկու հարցում կայ որոնց պէտք է պատասխանել.–

ա.- Որո՞նց կը ներկայացնէ «հինգ գոյգ եզ» գնող մարդը: Եթէ արտ գնողը կը ներկայացնէ աշխարհին կապուած մարդիկը, ինչպէս վերեւ ըսինք, ապա «հինգ գոյգ եզ» գնող մարդը կը ներկայացնէ աշխարհային ցանկութիւններով, մտահոգութիւններով եւ գործերով բոնուած մարդիկը:

բ.- Ի՞նչ կը խորհրդանշէ եզը: Եզը կը խորհրդանշէ աշխարհային գործերը, մտահոգութիւնները, ցանկութիւնները, փափաքները, եւայլն: Զմոռնանք որ եզերը կը գործածուին արօրի միջոցաւ արտերուն մէջ ակօսներ բանալու կամ զանոնք հերկելու: Իսկ արտերը հերկելէ ետք՝ անոնց մէջ սերմեր կը ցանուին: Ուստի, «հինգ գոյգ եզ» գնող եւ զանոնք փորձելու գացող մարդը կը ներկայացնէ աշխարհի համար գործող, քրտնող, աշխատող, սերմանող, ցանող ու երկնող մարդիկը:

2.- Սուրբ Օգոստինոս հետաքրքրական բացատրութիւն մը կու տայ: Ան կ'ըսէ թէ «հինգ գոյգ եզ»երը կը ներկայացնեն մարդ արարածին հինգ զգայարանները, որոնք են՝ տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, նաշակելիք եւ շօշափելիք, եւ ուստի, «հինգ գոյգ եզ» գնող մարդը բնականօրէն կը ներկայացնէ այն մարդիկը՝ որոնք դարձած են ստրուկներն ու կամակատարները իրենց զգայարաններուն: Ոեւէ մարդ որ կ'ապրի միայն իր մարմինին համար, որուն մտածողութիւնը մարմնական է, եւ որ մարմնականէն անդին բան չի տեսներ, կը նկատուի ստրուկը իր հինգ զգայարաններուն:

3.- Ուրիշ բացատրութիւն մը եւս կայ «հինգ գոյգ» բառերուն վերաբերեալ որ հաւանական չի թուիր, բայց կարելի է գայն մեր մտքին մէջ ունենալ իբրեւ գիտութիւն: 4-րդ դարու հեղինակ՝ սուրբ Ամբրոսիոս, «հինգ» բառին մէջ կը կարգայ կամ կը տեսնէ ներկայութիւնը Մովսէսի առաջին հինգ գիրքերուն, այլ խօսքով՝ Հնգամատեանին: Ամբրոսիոս կը բացատրէ որ եզերը հինգ հատ չեն, այլ՝ «հինգ գոյգ» են, որ կը նշանակէ տասը հատ են, իսկ 10 թիւը կը խորհրդանշէ 10 պատուիրանները: Հետեւաբար, խօսքը կրնայ ըլլալ անոնց մասին՝ որոնք իրենց փրկութիւնը վստահած են Մովսէսի միջոցաւ տրուած օրէքներու եւ յատկապէս տասնաբանայ պատուիրաններու գործադրութեան:

«Ուրիշ մը ըսաւ. "Տակաւին նոր ամուսնացայ, հետեւաբար չեմ կրնար գալ"» (Ղկ 14.20): Քանի մը մատնանշումներ.-

1.- Երրորդ այս անձը որ կը մերժէ հրաւերին ընդառաջել, մերժող առաջին երկու անձերէն տարբեր խօսելաո՞ն մը ունի: Առաջին երկուքը ըսին. «Կը խնդրեմ որ ներողամիտ գտնուի»: Իսկ այս անձը ըսաւ. «Զեմ կրնար գալ» (Յունարէն՝ ου δυνάμαι ελθειν- ու տիւսմէ էլթիին):

Խորքին մէջ, ո՛չ թէ «չէր կրնար» երթալ, այլ՝ «չէր ուզեր» երթալ: Այս նշողումը ընելը շատ կարեւոր է, որովհետեւ ասիկա ցոյց կու տայ, որ ոեւէ մարդ չի կրնար ըսել թէ «չի կրնար» ընդառաջել արքայութեան հրաւերին: Ամէն մարդ կարող է ընդառաջել: Յիսուսի գիրկը բաց է բոլոր մարդոց առջեւ: Բայց մարդիկ իրենք է որ «չեն ուզեր» ընդառաջել, այո՛, «չեն ուզեր» եւ ո՛չ թէ չեն կրնար:

Եթէ ըսենք, մարդիկ «չեն կրնար» ընդառաջել արքայութեան հրաւերին, մեղադրելին եւ հաշուետուն Աստուած ի՛նք կ'ըլլայ, իսկ եթէ ըսենք, մարդիկ «չեն ուզեր» ընդառաջել արքայութեան հրաւերին, մեղադրելին եւ հաշուետուն մարդիկ իրե՛նք կ'ըլլան:

2.- «Ձեմ կրնար գալ»: Այս բառերը ինձի կը յիշեցնեն ուրիշ կարեւոր կէտ մը: Յանախ երբ մարդոց կոչ կ'ուղղենք Քրիստոսի գալու, կը պատասխանեն մեզի ըսելով. «Նորայր դժուար է քրիստոնէական կեանք ապրիլը: Ձեմ կրնար ապրիլ: Ո՞վ կրնայ այս դարուն մէջ քրիստոնէական կեանք ապրիլ»: Նոյն կէտին կու գանք: Այսպէս ըսողները ո՛չ թէ չեն կրնար Քրիստոսի գալ եւ քրիստոնէական կեանք ապրիլ, այլ՝ չեն ուզե՛ր գալ եւ չեն ուզե՛ր ապրիլ:

3.- Որո՞նց կը ներկայացէ ամուսնացող մարդը: Օգոստինոս կ'ըսէ թէ այս ամուսնացող մարդը կը ներկայացնէ այն մարդիկը՝ որոնք մարմնական հանոյքները կը փոխանակեն սրբութիւններուն հետ:

Իսկ համաձայն Ամբրոսիոսի, ամուսնացող մարդը կը ներկայացնէ այն մարդիկը՝ որոնք երկրաւոր հոգեր կ'ունենան, ջանալով իրենց կնոջ կամքը կատարել (Ա.Կր 7.33):

4.- Եթէ ամուսնութիւնը կը ներկայացուի իբրեւ արգելք Քրիստոսի հրաւերին ընդառաջելու, անշուշտ պէտք է մեզի համար յստակ ըլլայ որ ամուսնութիւնը ինք արգելք մը չէ, որովհետեւ անիկա նոյնիմէն Աստուծո՛յ կողմէ օրհնուած, արտօնուած ու պատուիրուած է: Բայց նշմարութիւնը որ այստեղէն կը ստրվինք, այն է՝ որ երբեմն ընտանեկան պարագաներ, հարագատներ, ազգականներ կրնան արգելք հանդիսանալ որ մենք հետեւինք Աստուծոյ:

5.- Այստեղ ամուսնութիւնը կրնայ հասկցուիլ նաեւ աշխարհի հետ ամուսնութիւն, այլ խօսքով՝ միութիւն, յարաբերութիւն: Եւ բնականօրէն, ոեւէ մէկը որ մէկ միութիւն դարձած է աշխարհին հետ եւ խոր յարաբերութեան մէջ է անոր հետ՝ չի կրնար ընդառաջել Աւետարանի փրկարար հրաւերին:

«Ծառան վերադարձաւ եւ իր տիրոջ պատմեց անոնց ըսածները: Այն ատեն տանտէրը վրդոված՝ ըսաւ ծառային. "Անմիջապէս քաղաքէն գնա եւ հրապարակներուն ու փողոցներուն մէջ որքան որ աղֆատ,

խեղանդամ, կաղ եւ կոյր տեսնես՝ բոլորն ալ հոս բեր"» (Ղկ 14.21): Քանի մը մատնանշումներ.–

1.– «Ծառան վերադարձաւ եւ իր տիրոջ պատմեց անոնց ըսածները»։ Ի՞նչ բան ցոյց կու տայ կամ կը սորվեցնէ մեզի ծառային վերադարձը իր տիրոջ եւ հրաւիրեալներուն ըսածները անոր պատմելը։ Երեւի հոգեւոր նշմարտութիւններ կը պարզէ.–

ա.– Հոգեւոր առաքելութիւն ունեցող եւ պատասխանատուութեան կանչուած ամէն անձ, պէտք է իր կատարած գործին մասին զեկոյց տայ այն առաջնորդներուն որոնց իշխանութեան ներքեւ կը գործէ։

բ.– Ծառային վերադարձը իր տիրոջ եւ պատահածը անոր պատմելը, նաեւ կը սորվեցնէ որ իրենց հօտին հոգ տանելու կանչուած հովիւները պէտք է միշտ դառնան իրենց Տիրոջ՝ Յիսուսի, եւ պատմեն անոր ըսուածին, խօսուածին, պատահածին, բոլոր տեսակ խնդիրներու ու դժուարութիւններու մասին։ Ըսել կ'ուզեմ այն՝ թէ հոգեւոր հովիւներ իրենց հօտին բոլոր հարցերը պէտք է աղօթքով ներկայացնեն Տիրոջ եւ խնդրեն իր միջամտութիւնը։

գ.– Վերջապէս, ծառային վերադարձը իր տիրոջ, կը յիշեցնէ մեզի որ հոգեւոր առաքելութեան կանչուած ամէն անհատ, օր մը պիտի կանգնի Քրիստոսի ատեանին մէջ՝ Քրիստոսի դիմաց, իր ըրածին ու չըրածին, իր խօսածին ու չխօսածին համար հաշիւ տալու։

2.– Ծառային տէրը վրդովեցաւ երբ իմացաւ հրաւիրեալներուն մերժումին մասին։ Բացատրեցինք որ հոս յիշուած «տէր»ը Քրիստոս ի՛նքն է։ Բնականօրէն Քրիստոս վրդովեցաւ ու տրտմեցաւ երբ հրեաները մերժեցին ընդառաջել փրկութեան կոչին։ Այսօր եւս Քրիստոս կը վրդովի ու կը ցաւի երբ կը տեսնէ որ մարդիկ կը մերժեն փրկութեան հրաւերը, կը նախընտրեն իրենց գնած աշխարհային արտերուն մէջ աշխատիլ քան Յիսուսի տուած արքայութեան դաշտին մէջ, կը նախընտրեն «ամուսնանալ» այս աշխարհին հետ քան դառնալ հարսը Յիսուսի, իրենց ունեցած «հինգ գոյգ եզր» կը գերադասեն քան Աստուծոյ արքայութիւնը։

Ենթադրեցէք պահ մը որ հսկայ գումար ծախսած էք եւ ընթրիք պատրաստած որոշ անձերու համար։ Եթէ լուր դրկէիք որ գան, անհանգիստ պիտի չըլլայի՞ք եթէ անոնցմէ մէկը ձեզի ըսէր. «Արտ պիտի երթամ աշխատելու, ուստի չեմ կրնար գալ»։ ուրիշ մը ըսէր՝ «Կով գնած եմ, պէտք է երթամ հոգ տանիմ անոր»։ երրորդ մը ըսէր՝ «Նոր ամուսնացած եմ, հետեւաբար չեմ ուզեր գալ»։ Ներկայացուած պատճառները ոեւէ ձեռով չեն կրնար արդարացնել անոնց մերժումը։ Եւ ասկա շատ աւելի իրական է երբ կը խօսինք Աստուծոյ արքայութեան

մասին: Հրեաները ի՞նչ պատճառ կրնային ներկայացնել արդարացնելու համար իրենց մերժումը Աստուծոյ արքայութեան հրաւերին: Կամ մենք, եթէ ուզենք մերժել արքայութեան ընթրիքի հրաւերին ընդառաջել, ի՞նչ պատճառ կրնանք ներկայացնել: Ե՞զ գնած ենք: Մեզի համար եզր աւելի ՞ կարելոք է քան Աստուծոյ Գառնուկը՝ Յիսուս, որ զոհուեցաւ մեզի համար: Արտե՞ր կամ տունե՞ր գնած ենք: Մեզի համար երկրաւոր հողերը կամ տուները աւելի՞ կարելոք են քան երկնաւոր տունը՝ Աստուծոյ արքայութիւնը, յաւիտենական Երուսաղէմը: Նոր գո՞րծ մարած ենք: Մեզի համար նոր գործը աւելի՞ անհրաժեշտ է քան Աստուծոյ գործը, Աստուծոյ գործակից ըլլալը, Աստուծոյ գործակցութիւնը վայելելը:

3.- «Անմիջապէս քաղաք գնա եւ հրապարակներուն ու փողոցներուն մէջ որքան որ աղփատ, խեղանդամ, կաղ եւ կոյր տեսնես՝ բոլորն ալ հոս բեր»: Քաղաքը որուն մասին բնագիրը կը խօսի կը պատկերացնէ Երուսաղէմ քաղաքը: Փրկութեան հրաւերի ձայնը առաջին անգամ հո՛ն էր որ պիտի հնչուէր, հոնկէ տարածուելու համար քաղաքին հրապարակներն ու փողոցները, ապա հոնկէ եւս դուրս գալու եւ դառնալու սեփականութիւնը ամբողջ Հրէաստանին, Սամարիային եւ աշխարհին: Ասոր վկայութիւնը մենք կը գտնենք Գործք Առաքելոց գիրքին 1.8-ին մէջ որ կ'ըսէ. «Երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ, զօրութեամբ պիտի լեցուիք եւ իմ վկաներս պիտի ըլլաք՝ Երուսաղէմի, ամբողջ Հրէաստանի եւ Սամարիայի մէջ, եւ մինչեւ աշխարհի ծայրամասերը»:

4.- Հրապարակ, փողոց, աղփատ, խեղանդամ, կաղ, եւ կոյր: Այս բոլոր բառերը կը պարզեն հիմնական մէկ բան, այն՝ որ հասարակ խաւին, այլ խօսքով, աղփատ եւ անուս խաւին պատկանող հրեաներուն որոշ մէկ մասը ընդառաջեց արքայութեան հրաւերին: Որո՞նք եղան արքայութեան հրաւերը մերժողները եւ այդ հրաւերին ընդդիմացողները.-

ա.- Մերժողները եղան ընդհանրապէս ուսեալ ու հարուստ, դիրք ու հանգամանք ունեցող մարդիկը, եւ առաջին հերթին Փարիսեցիները իրենք, որոնք «արտեր ունէին» այլ խօսքով՝ որոնք կապուած էին այս աշխարհին իրենց մտայնութեամբ, եւ որոնք խոստացեալ Փրկիչէն երկրաւոր թագաւորութիւն ակնկալող ու հետապնդող մարդիկ էին:

բ.- Տիրոջ հրաւերը մերժեցին նաեւ Օրէնքի ուսուցիչները, որոնք ապաւինած էին «հինգ գոյգ եզերուն», այսինքն՝ Մովսէսի հինգ գիրքերուն եւ այդ գիրքերուն մէջ տեղ գտած տասը պատուիրաններուն, որոնց մէջ կը տեսնուին իրենց ազատագրութիւնն ու փրկութիւնը:

Սուրբ Մեծն Կիրեղ խօսելով այս իրողութեան մասին՝ կ'ըսէ. «Անոնք որոնք բարձր դիրք ունէին հասարակ ժողովուրդին մէջ՝ չ'ենթարկուեցան Յիսուսի երբ անոնց ըսաւ. "Ձեր վրայ առէք իմ լուծս"» (Մտ 11.29), ընդհակառակը, մերժեցին հրաւերը, չ'ընդունեցին հաւատքը եւ հեռու մնացին փառաւոր ընթրիքէն. իրենց յամառ կամակորութեամբ անարգեցին Տիրոջ ընթրիքը: Յիշեցէ՛ք Քրիստոսի խօսքը ուղղուած Օրէնքի ուսուցիչներուն եւ Փարիսեցիներուն. «Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, Օրէնքի ուսուցիչներ եւ Փարիսեցիներ, որ երկինքի արքայութիւնը կը փակէք մարդոց առջեւ, դուք չէք մտնել եւ թոյլ չէք տար նաեւ անոնց՝ որ կ'ուզեն մտնել» (Մտ 23.13): Այս խօսքը ինքնին ցոյց կու տայ, որ Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչները ո՛չ միայն մերժեցին Տիրոջ փրկութեան հրաւերին ընդառաջել, այլեւ դէմ դրին բոլոր անոնց՝ որոնք կ'ուզէին ընդառաջել Յիսուսի հրաւերին: Ճիշդ անոր համար ալ, Յիսուս իր փրկութեան կոչը ուղղեց քաղաքի հրապարակներուն ու փողոցներուն մէջ եղող «աղփատ, խեղանդամ, կաղ եւ կոյր» մարդոց, այլ խօսքով՝ խոնարհ ու անտեսուած դասակարգին պատկանող մարդոց, որոնք հիւանդ, անկարող ու տկար էին մտապէս, եւ որոնք կը նկատուէին կոյր եւ կաղ հոգեպէս, որոնք սակայն Քրիստոսով դարձան զօրաւոր, առողջ, ստրվեցան ուղիղ փալել եւ ընդգրկեցին աստուածային լոյսը իրենց մտքին մէջ...»:

5.- Ինչո՞ւ ծառային տէրը (Յիսուս) կը հրամայէ իր ծառային (աշակերտներուն) քաղաք երթալ եւ «հրապարակներուն» ու «փողոցներուն» մէջ հանդիպիլ աղփատ, խեղանդամ, կաղ եւ կոյր մարդոց եւ զանոնք արքայութեան ընթրիքին բերել: Պատասխանը շատ պարզ է: Քանի մը պատմառոններով.–

ա.– Նախ ցոյց տալու որ փրկութեան հրաւերը միայն Մովսիսական օրէնքները գիտցող ու գործադրող անհատներուն ուղղուած չէ, միայն ժողովարաններ յանախողներուն ուղղուած չէ, միայն տաճարի ծիսական ու պաշտամունքային կեանքին մասնակցողներուն ուղղուած չէ, այլ ուղղուած է բոլորին՝ Մովսէսի օրէնքները չգիտցողներուն նաեւ, ժողովարաններէն հեռու եղողներուն նաեւ, անուսին, աղփատին, եւայլն:

բ.– Որո՞նք կ'ըլլային «հրապարակներուն ու փողոցներուն մէջ»: Այդտեղերը կ'ըլլային կամ կը բնակէին, ինչպէս բնագիրն իսկ կ'ըսէ, աղփատ, խեղանդամ, կաղ եւ կոյր մարդիկը, որոնք, խորհրդանշական իմաստով մը, կը ներկայացնեն հեթանոս աշխարհը, որ կոյր էր հոգիով: Քահանաները, Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները պարտականութիւնը ունէին Աստուծոյ ձայնը այս դասակարգի մարդոց եւս լսելի դարձնելու, ասո՛նց եւս Աստուծոյ արքայութեան աւետիսը

տալու, բայց անոնք բնա՛լ չէին ըներ ու չըրին իրենց այս պարտականութիւնը: Անոնք բնա՛լ չէին հետաքրքրուեր անուս ու աղֆատ, անտեսուած ու մոռցուած որք ու տնագուրկ մարդոցմով: Ճիշդ ա՛յս է որ կը պարզէ ծառային դրկուիլը ֆաղափին հրապարակներն ու փողոցները. կը պարզէ որ անոնք բնաւ հետաքրքրութիւն եւ կարեկցութիւն չէին ցուցաբերեր հասարակ, գրկեալ, տառապող ու հիւանդ մարդոց դասակարգին հանդէպ: Եւ ո՛չ միայն չէին գթար հիւանդին, այլեւ գանհկա իր գործած մեղքերուն համար Աստուծոյ կողմէ գարնուած ու պատժուած կը սեպէին:

գ.– Հետաքրքրական նշմարել է որ երբ տէրը իր ծառան դրկեց առաջին հրաւիրեալները ընթրիփի կանչելու, անոնց պատուիրեց հրաւիրեալներուն ըսել. «Եկէ՛ք, ամէն ինչ պատրաստ է արդէն» (17-րդ համար), իսկ երբ գայն Երուսաղէմ ֆաղափին հրապարակներուն ու փողոցներուն մէջ ապրող աղֆատներուն, խեղանդամներուն, կաղերուն եւ կոյրերուն պիտի դրկէր, պատուիրեց անոր ըսելով. «Բոլորն ալ հոս բեր»: Ինչո՞ւ արտ, եգ եւ կին ունեցողներուն վերաբերեալ, ծառային չ՛ըսուիր որ առնէ գանոնք եւ ընթրիփի բերէ, այլ պարզապէս կը թելադրուի անոր որ յիշեցնէ անոնց որ ժամանակն է եւ պէտք է ընթրիփի գան. եւ ինչո՞ւ միայն աղֆատներուն, խեղանդամներուն, կաղերուն եւ կոյրերուն մասին խօսած ատեն, կը պատուիրէ իր ծառային առնել գանոնք եւ ընթրիփի բերել: Այս հարցումին պատասխանը կրնանք տալ երկու կէտերով.–

ա.– Աղֆատ, տառապած, հալածուած ու վշտահար մարդիկ շուտով կ'ընդառաջեն արֆայութեան հրաւերին: Այսպիսի մարդիկ սովորաբար կապուած չեն ըլլար աշխարհին, նիւթականին: Իրենց համար դիւրին կ'ըլլայ բաժնուիլը կամ հրաժարիլը այս աշխարհէն եւ Քրիստոսի կառչիլը: Ուստի, անոնք յատուկ հրաւեր չեն ուզեր, այլ խօսքով, գանոնք Քրիստոսի բերելը մեծ նիւզ չի պահանջեր: Յոգնած եւ ուստի հանգիստ փնտրող մարդոց երբ թելադրուի որ Քրիստոսի գան եւ հանգիստ գտնեն՝ շուտով կ'ընդառաջեն: Ագատութիւն փնտրող մարդոց երբ խօսուի Ագատարար Փրկիչին մասին՝ իսկոյն կ'ընդգրկեն գայն:

Բայց նոյնը չ'ըլլար վերաբերմունքն ու հակազդեցութիւնը Փարիսեցիներուն նման հարուստ ու ուսեալ դասակարգի մարդոց երբ փրկութեան կոչ ուղղուի անոնց: Ահա թէ ինչո՛ւ, անոնք կարծէք յատուկ հրաւեր կ'ուզեն, այսինքն՝ յատուկ աշխատանք ու նիւզ պէտք է թափել գանոնք բերելու համար Յիսուսի: Այսպիսի մարդիկ դիւրին կերպով ու շուտով արֆայութիւն չեն գար: Չենք կրնար երթալ եւ գանոնք հաւաքել

ու արժայութիւն բերել, ինչպէս պիտի ընէինք աղփատ ու վշտահար դասակարգի մարդոց:

«Քիչ ետք ծառան վերադառնալով իր տիրոջ ըսաւ. "Տէ՛ր, հրամանդ կատարեցի, բայց տակաւին տեղ կայ": Տէրը ծառային հրամայեց. "Քաղաքէն դուրս գնա եւ նամբաներուն վրայ ու դաշտերուն մէջ ո՛վ որ գտնես՝ ստիպէ որ գայ, որպէսզի տունս լեցուի» (Ղկ 14.22-23): Քանի մը մատնանշումներ.–

1.– «Հրամանդ կատարեցի»: Այս երկու բառերը մեզի կը յիշեցնեն որ մենք՝ Քրիստոսի աշակերտներս, պէտք է կատարենք հրամաններն ու հրահանգները մեր Տիրոջ: Ծառան կատարեց եւ անոր համար ալ համարձակութեամբ դարձաւ եւ իր տիրոջ պատմեց թէ ի՛նչպէս գնաց քաղաքէն հրապարակներն ու փողոցները եւ հոն գտնուող մարդիկը բերաւ ընթրիֆի: Սա ցոյց կու տայ որ երբ կատարենք մեզի յանձնուած պարտականութիւնները՝ կրնանք համարձակութեամբ գալ Տիրոջ, դիմել Տիրոջ եւ խնդրել Տիրոջմէն: Իր պարտականութիւնը չըրած մշակը՝ չի կրնար համարձակութեամբ կանգնիլ Յիսուսի ներկայութեան ո՛չ հոս՝ երկրի վրայ, եւ ո՛չ ալ դատաստանի օրը:

2.– «Բայց տակաւին տեղ կայ»: Այս բառերը կը պարզեն որ արժայութեան «սեղանին» շուրջ տեղ կայ եւ տեղ պիտի ըլլայ ամէն մարդու համար: Աստուած ամենուրեք է, այսինքն՝ ամէն տեղ: Ամենուրեք Աստուծոյ թագաւորութիւնը՝ ամենուրեք թագաւորութիւն կ'ըլլայ: Ուստի, տեղի հարց չի կրնար ծագիլ: Նոյնիսկ եթէ աշխարհի մէջ ապրած, ապրող ու ապրելիք ունէ մարդ չկորսուի, բոլորն ալ փրկուին, դարձնալ, տեղի հարց չի կրնար ծագիլ: Յիշեցէք մեր Տիրոջ ու Փրկիչին խօսքը այս մասին. «Հօրս տան մէջ շատ տեղ կայ» (Յն 14.2): Սիրելի՛ ընթերցող, քեզի՛ համար ալ տեղ կայ արժայութեան սեղանին շուրջ: Դուն քեզ մի՛ գրկեր արժայութեան ուրախութենէն եւ դուն քեզ արժայութիւնը ժառանգելու անարժան մի՛ սեպեր: Վստահի՛ր Յիսուսի փրկարար արիւնին: Տիրոջ արիւնը կրայ քեզ մաքրել ու սրբել բոլոր տեսակի մեղքերէդ եւ քեզ արժայորդի ու արժայադուստր դարձնել:

3.– «Քաղաքէն դուրս գնա»: Ասիկա երրորդ անգամն է որ տէրը իր ծառան կը դրկէ, եւ ուր որ կը դրկէ գայն՝ անիկա կ'երթայ: Ի՞նչ կը յիշեցնէ մեզի այս իրականութիւնը: Կը յիշեցնէ, թէ Քրիստոսի հետեւող մարդը, պէտք է պատրաստ ըլլայ ունէ ատեն՝ ունէ տեղ դրկուելու: Մենք չէ որ պիտի որոշենք ուր կ'ուզենք երթալ եւ ուր չենք ուզեր երթալ: Տէրը ի՛նք պիտի որոշէ այդ մէկը: Երբեմն մշակներ կրնան որոշ քաղաքներու կամ երկիրներու վերաբերեալ նախասիրութիւններ ունենալ, ասիկա

սխալ չէ, բայց սխալ կը դառնայ երբ անհնազանդիմբ Աստուծոյ եւ չերթանք հոն ուր մեզ կը դրկէ իր Սուրբ Հոգին:

4.- «Քաղաքէն դուրս գնա եւ ճամբաներուն վրայ ու դաշտերուն մէջ ո՛վ որ գտնես՝ ստիպէ որ գայ, որպէսզի տունս լեցուի»: 21-րդ համարին մէջ տեսնուի որ ծառան կը դրկուի քաղաքէն՝ երթալու անոր հրապարակներն ու փողոցները, եւ հոն գտնուողները բերելու տիրոջ պատրաստած ընթրիքին: Իսկ այստեղ, 23-րդ համարին մէջ, կը տեսնենք որ ծառան կը դրկուի «քաղաքէն դուրս»: Ի՞նչ ցոյց կու տայ ասիկա: Ցոյց կու տայ որ Քրիստոս չեկաւ միայն հրեաները փրկութեան կանչելու, չեկաւ միայն Երուսաղէմ քաղաքին կամ Պաղեստինին մէջ փրկութեան շեփոքը հնչեցնելու, այլ՝ եկաւ ամբողջ աշխարհի փրկութեան համար:

Հետեւաբար, «քաղաքէն դուրս գնա» խօսքը, որոշապէս կը պարզէ որ Քրիստոսի կամքն է որ իր հետեւորդները Աւետարանին լոյսը տարածեն ամէն տեղ, հասցնեն ամէն մարդու, եւ անով լուսաւորեն ամէն մարդ: Աստուծոյ իսկական Աւետարանը Քրիստոս ի՛նքն է եւ Քրիստոս բոլորին համար է: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Ամօք չեմ համարեր Աւետարանը: Ընդհակառակը, անիկա Աստուծոյ գորութիւնն է՝ որ կը փրկէ ամէն հաւատացող, նախ Հրեան, ապա նաեւ ոչ-Հրեան» (Հո 1.16): Առաքեալին վերջին բառերը՝ «նախ Հրեան, ապա նաեւ ոչ-Հրեան» յստակօրէն ցոյց կու տան որ փրկութիւնը սկսաւ հրեաներէն, նախ անոնց քարոզուեցաւ, յետո՛յ տարածուեցաւ ամենուրեք: Բազմաթիւ են այն համարները որոնք ցոյց կու տայ որ Քրիստոսի փրկութիւնը բոլորին համար է, որ բոլոր ազգերը կանչուած են փրկութեան (Մտ 28.19-20: Հո 1.5, 15.9-12, 16, 16.26: Ա.Տմ 2.3-4): Եւ այլն:

5.- «Ճամբաներուն վրայ ու դաշտերուն մէջ ո՛վ որ գտնես...»: Հոս յիշուած յատկանշական երկու բառեր կան՝ «ճամբաներ» (ὁδοὺς – ըրմաս) եւ «դաշտեր» (ὄρη – փլադիաս): Ի՞նչ կը պարզեն կամ ի՞նչ կը բացայայտեն այս երկու բառերը: Նախ յիշենք որ խօսքը քաղաքէն, այլ խօսքով՝ Երուսաղէմէն, ինչպէս նաեւ Պաղեստինէն դուրս գտնուող «ճամբաներուն» ու «դաշտերուն» մասին է, եւ ուստի՝ կը վերաբերի հեթանոս աշխարհին, ինչպէս կ'ըսէ Մեծն Կիւրեղ:

Որո՞նք են «ճամբաներուն վրայ ու դաշտերուն մէջ» ապրող մարդիկը եւ ինչո՞ւ անոնք կը ներկայացուին «ճամբաներուն վրայ ու դաշտերուն մէջ» ապրող մարդիկ իբրեւ: Անոնք հոգիով անտաշ ու կոպիտ մարդիկն են: Բոլորս ալ գիտենք որ ճամբաներուն վրայ եւ դաշտերուն մէջ ապրող մարդիկը ընդհանրապէս զգայուն չեն ըլլար, այլ

պայմաններու բերումով կը կոպտանան, ըլլայ իբրեւ մարմին, ըլլայ իբրեւ հոգեկան: Հետեւաբար, «նամբաներուն վրայ ու դաշտերուն մէջ» ապրող մարդիկը կը ներկայացնեն այն հեթանոսները՝ որոնք կորսնցուցած են մեղքի հանդէպ ամէն զգայնութիւն, եւ իրենց հոգեկանով դարձած են բիրտ ու կոպիտ մարդիկ:

6.- «Ստիպէ որ գայ, որպէսզի տունս լեցուի»: Մեր ուշադրութիւնը կը գրաւէ առաջին բառը՝ «ստիպէ», եւ բնականօրէն կը տարուինք մտածելու որ Աստուած երբեք կը ստիպէ՞ մարդիկը արքայութիւն մտնելու եթէ անոնք չկամենան: Ո՛չ: Աստուած ամէն բան կ'ընէ մարդիկը փրկելու բայց բնաւ չ'ըստիպեր զանոնք ընդգրկելու փրկութիւնը: «Փրկութիւնը... Աստուծոյ պարգեւն է» (Եփ 2.8): Պարգեւ մը բռնի կերպով չի կրնար մարդու մը տրուիլ, այլապէս, կը դադրի պարգեւ ըլլալէ: Արդ, ի՞նչպէս պէտք է հասկնալ «ստիպէ» բացատրութիւնը: Յունարէն բնագիրին մէջ «ստիպէ» բառին համար գործածուած է (ΑΝΑΓΚΑΣΘΟΝ – անակֆասոն) որ բառացիօրէն «ստիպէ» չի նշանակեր, այլ կը նշանակէ ամէն միջոցի դիմել եւ ամէն բան ընել համոզելու ենթական տուեալ հարցի մը վերաբերեալ, այս պարագայիս, համոզելու զինք որ ընթրիքի գայ:

7.- «Որպէսզի տունս լեցուի»: Այս բառերը մեզի կը յիշեցնեն երկու բան.–

ա.– «Լեցուի»: Նախ կը յիշեցնեն որ Աստուած կ'ուզէ ու կը փափաքի իր տունը, այլ խօսքով՝ արքայութիւնը լեցուած տեսնել: Լեցուած ի՞նչ բանով: Մարդոցմով: Սա Աստուծոյ սիրոյ արտայայտութիւնն է մարդոց հանդէպ: Կարծէք Աստուած ըսել կ'ուզէ որ մարդիկ իրենք են որ արքայութիւնը կը լեցնեն. առանց մարդուն կարծէք դատարկ է արքայութիւնը: Բնականօրէն արքայութիւնը դատարկ չէ, որովհետեւ արքայութեան լեցունութիւնը Արքան ինքն է, բայց «լեցուի» բացատրութիւնը պարզապէս ցոյց կու տայ Քրիստոսի զօրաւոր փափաքը մարդիկը իր կողմին եւ իրեն հետ տեսնելու արքայութեան մէջ, յաւիտենականութեան մէջ:

բ.– «Տունս», (Յունարէն՝ ΟΙΚΟΣ – իֆօս): Այս բառը կը յիշեցնէ մեզի որ արքայութիւնը ընտանեկան շերմութեան պատկերը պիտի ունենայ: Եւ եթէ այդպէս է, բնականօրէն արքայութեան ժառանգորդները Աստուծոյ հետ հայր եւ որդիի յարաբերութեան մէջ պիտի ըլլան: Աստուած իր արքայութեան կամ իր թագաւորութեան մէջ մեզի հետ պիտի չվերաբերի ինչպէս երկրաւոր կոշտ թագաւոր մը պիտի վերաբերէր իր զինուորներուն կամ ծառաներուն կամ իրեն ենթակայ եղող մարդոց հետ: Այսօր Աստուած կոշտ կերպով չի վերաբերիր իր

սուրբ հրեշտակներուն հետ, ընդհակառակը գանոնք կը կոչէ իր որդիները (Յոր 1.6, 38.7): Եթէ երբեք Աստուած կոշտ կերպով չի վերաբերիր իր սուրբ հրեշտակներուն հետ որոնք բնաւ մեղքով չեն վիրաւորուած, եւ ուստի՝ հանգիստի պէտք չունին, արդե՞օք կոշտ կերպով պիտի վերաբերի իր գաւակներուն հետ որոնք վիրաւորուած են մեղքի դէմ մղած իրենց պայքարին մէջ եւ կարիքը ունին հանգիստի:

«Կ'ըսեմ ձեզի, որ առաջին հրաւիրեալներէն ո՛չ մէկը իմ ընթրիքէս պիտի մաշակէ"» (Ղկ 14.24): Քանի մը մատնանշումներ.–

1.– Ուշադրութիւն պէտք է դարձնել որ այստեղ իսօսքը ընդհանուր կերպով հրեայ ժողովուրդին մասին չէ, այլ՝ «առաջին հրաւիրեալներուն» մասին, իսկ որո՞նք են առաջին հրաւիրեալները: Ասկէ առաջ բացատրեցինք որ անոնք Փարիսեցիներն ու Օրէնքի ուսուցիչներն են: Առաջին անգամ անոնք էր որ պէտք էր դարձի գային, մանաւանդ որ ուսեալ էին եւ լաւապէս ծանօթ Մովսիսական օրէնքներուն եւ Մեսիային վերաբերող մարգարեական կանխասացութիւններուն: Անոնք ունէին այնպիսի առաւելութիւններ որոնցմէ զրկուած էր անուս դասակարգը, բայց անոնք փոխանակ օգտագործէին իրենց ունեցած առաւելութիւնները եւ Յիսուսի գային, ընդհակառակը, իրենց գիտութիւնը օգտագործեցին ընդդիմանալու գիտութեան Աստուծոյն՝ Քրիստոսի:

2.– «Ո՛չ մէկը իմ ընթրիքէս պիտի մաշակէ»: Փարիսեցիներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն համար ըսուած այս իսօսքը չենք կրնար հասկնալ իր բացարձակ իմաստով, որովհետեւ եղան Փարիսեցիներ որոնք հաւատացին Յիսուսի ինչպէս օրինակ Նիկողեմոս (Յհ 3.1-4, 7.50-51, 19.39), Պօղոս առաքեալ (Փիլ 3.5), եւ ուրիշներ: Ղուկաս կը հաստատէ թէ «նոյնիսկ քահանաներէն շատ-շատեր հաւատքը կ'ընդունէին» (Գրծ 6.7):

ԱՅԳԻԻ ՄՇԱԿՆԵՐՈՒՆ ՎԱՐՁՔԸ

«Արդարեւ, երկինքի արքայութիւնը կը նմանի հետեւեալին.–

Կալուածատէր մարդ մը կար, որ առաւօտ կանուխ գնաց մշակներ վարձելու՝ որպէսզի իր այգիին մէջ աշխատին: Եւ մշակներուն հետ օրական մէկ արծաթ դահեկանի համաձայնելէ ետք, գանձնաբեր զրկեց իր այգին: Ժամը իննի ատենները դարձեալ գնաց եւ հրապարակի վրայ ուրիշներ ալ տեսաւ, որոնք անգործ կեցած էին: Ասոնց ալ ըսաւ. «Դուք ալ այգիս գացէք եւ ինչ որ է ձեր իրաւունքը պիտի տամ ձեզի»: Անոնք ալ գացին: Յետոյ կէսօրուան դէմ եւ կէսօրէ ետք ժամը երեքի ատենները կրկին գնաց եւ նոյնը ըրաւ: Ժամը հինգի ատենները երբ հրապարակ գնաց, դարձեալ պարապ կեցած մշակներ տեսաւ: Ասոնց հարցուց. «Ինչո՞ւ ամբողջ օրը պարապ կեցեր էք հոս»: Անոնք պատասխանեցին. «Որովհետեւ մէկը չվարձեց մեզ»: Անոնց ըսաւ. «Դուք ալ այգի գացէք եւ ինչ որ է ձեր իրաւունքը՝ պիտի ստանաք»: Երբ իրիկուն եղաւ, այգիին տէրը գործավարին ըսաւ. «Կանչէ մշակները եւ իրենց օրականը տուր, վերջին եկողներէն սկսելով մինչեւ առաջինները»: Անոնք որոնք ժամը հինգի ատենները վարձուած էին, մէկական արծաթ դահեկան ստացան: Առաւօտեան վարձուածներուն կարգը որ եկաւ, կը կարծէին թէ աւելի պիտի ստանան բայց անոնք ալ մէկական արծաթ դահեկան ստացան: Երբ օրականը առին, սկսան տիրոջ դէմ տրտնջալ, ըսելով. «Վերջին եկողները միայն մէկ ժամ աշխատեցան, մինչ մենք ամբողջ օրը արեւուն տակ աշխատեցանք. հակառակ ասոր, դուն մեզ անոնց հաւասար նկատեցիր»: Կալուածատէրը անոնցմէ մէկուն պատասխանեց, ըսելով. «Բարեկամ, ես քեզ չգրկեցի, դուն մէկ արծաթ դահեկանով չհամաձայնեցա՞ր ինձի հետ. ա՛ն օրականդ ու գնա՛: Ես վերջին եկողներուն ալ քու առածիդ չափ կ'ուզեմ տալ. ես իրաւունք չունի՞մ դրամս ուզածիս պէս գործածելու. կամ կը նախանձի՞ս որ ես այդպէս առատաձեռն եմ»:

Եւ Յիսուս եզրակացուց.

«Այսպէս ալ, անոնք որոնք հիմա վերջին են՝ առաջին պիտի ըլլան, եւ առաջին եղողները՝ վերջին: Որովհետեւ կանչուածները շատ են, բայց ընտրուածները՝ քիչ» (Մտ 20.1-16):

Այս առակին հիմնական նպատակը այն է՝ ցոյց տալ մեզի թէ Քրիստոս իր փրկութիւնը հաւասար կերպով պիտի տայ բոլոր հաւատացեալներուն, անոնք ըլլան սկիզբէն դարձի եկած մարդիկ, ըլլան

իրենց կեանքի կիսուն դարձի եկած մարդիկ, կամ ըլլան իրենց կեանքի աւարտին դարձի եկած մարդիկ:

Սուրբ Որոգիներէ կ'ըսէ թէ առակին մէջ յիշուած «մէկ արծաթ դահեկան»ը փրկութիւնն է որ կը պատկերացնէ: Իսկ սուրբ Օգոստինոս կը հաստատէ թէ «մէկ արծաթ դահեկան»ը յաւիտենական կեանքն է: Խորքին մէջ փրկութիւնը եւ յաւիտենական կեանքը նոյն բաներն են:

Տարբեր-տարբեր ժամերուն (առաւօտ կանուխ, ժամը իննի ատենները, կէսօրուան դէմ, կէսօրէ ետք ժամը երեքի ատենները, եւ ժամը հինգի ատենները վարձուած բոլոր մարդոց) «մէկ արծաթ դահեկան» կը տրուի, այլ խօսքով՝ մէկ եւ նոյն փրկութիւնը կը տրուի, մէկ եւ նոյն յաւիտենական կեանքը կը շնորհուի:

Բայց հարկաւ երբ կը խօսինք փրկութեան մասին՝ վարձատրութեան մասին չէ որ խօսած կ'ըլլանք: Փրկութիւն եւ վարձատրութիւն նոյն բաները չեն: Առակը մեզի ուղղակիօրէն ցոյց կու տայ որ բոլոր հաւատացեալները նոյն փրկութիւնը պիտի ստանան, եւ անուղղակիօրէն՝ թէ անոնք նոյն վարձատրութիւնը պիտի չստանան:

Արդ, ի՞նչ է տարբերութիւնը փրկութեան եւ վարձատրութեան: Հարցը տարբեր ձեւով մը դնենք.՝ Ի՞նչ պիտի ըլլայ այն փրկութիւնը որ հաւատացեալին պիտի շնորհուի, եւ ի՞նչ պիտի ըլլայ անոր տրուելիք վարձատրութիւնը:

Փրկութիւնը նոյնիմէն Փրկիչն է, իսկ վարձատրութիւնը՝ Փրկիչին ներկայութիւնը, եւ անոր ներկայութեան ներշնչած ուրախութիւնը, ինչպէս նաեւ այն փառքը որ Քրիստոս պիտի տայ ամէն մէկ հաւատացեալի:

Յստակացումի համար, երկու հարցում.՝

1.՝ Բոլոր հաւատացեալները պիտի փրկուի՞ն, այլ խօսքով՝ բոլորը Քրիստոսը պիտի ունենա՞ն: Այո՛: Արքայութեան բոլոր ժառանգորդները Քրիստոսի ներկայութիւնը պիտի վայելեն:

2.՝ Փրկուած բոլոր մարդիկը նոյն վարձատրութիւնը պիտի ստանա՞ն, այլ խօսքով՝ բոլորը նոյն փառքը պիտի ունենա՞ն, բոլորը նոյնքան շքեղ ու փառաւոր պիտի ըլլա՞ն, բոլորը նոյնքան պայծառ եւ լուսաւոր պիտի ըլլա՞ն, բոլորը նոյնքան պիտի վայելե՞ն Քրիստոսի արբեցուցիչ ներկայութիւնը, բոլորը նոյնքան ուրախ պիտի ըլլա՞ն: Բոլորը նոյնքան մտերիմ ու մօտիկ պիտի ըլլա՞ն Յիսուսի: Ո՛չ:

Արքայութեան բոլոր ժառանգորդները պիտի վայելեն Արքան, բայց ո՛չ նոյնչափ: Բոլորը փառաւոր պիտի ըլլան, բայց ո՛չ նոյնքան: Բոլորը պայծառ եւ լուսաւոր պիտի ըլլան, բայց ո՛չ նոյնքան եւ նոյնպէս: Բոլորը

ուրախ պիտի ըլլան, բայց ոչ նոյնքան եւ նոյնչափ: Ոմանք ուրիշներէն աւելի՛ ուրախ պիտի ըլլան: Մէկը միւսէն աւելի՛ փառաւոր պիտի ըլլան:

Ճիշդ այս իրողութեան է որ կ'ակնարկէ Պօղոս առաքեալ երբ կ'ըսէ. «Անշուշտ ամէն մարմին նոյնը չէ...: Ուրիշ է երկնաւոր մարմիններու շփոթութիւնը, եւ ուրիշ՝ երկրաւոր մարմիններու շփոթութիւնը: Ուրիշ է արեւուն շփոթութիւնը, ուրիշ՝ լուսինին շփոթութիւնը, եւ դեռ ուրիշ՝ աստղերուն շփոթութիւնը: Եւ նոյնիսկ աստղերէն ոմանք աւելի շփոթ են քան միւսները» (Ա.Կր 15.39-41):

Առաքեալը կը հաստատէ որ երկրաւոր մարմինները իրենց շփոթութեամբ ու փառաւորութեամբ տարբեր են կամ տարբեր պիտի ըլլան երկնաւոր մարմիններէն: Որո՞նք են երկրաւոր մարմինները եւ որո՞նք են երկնաւոր մարմինները: Երկրաւոր մարմինները այն հաւատացեալներն են որոնք պիտի ժառանգեն փրկութիւնը, իսկ երկնաւոր մարմինները հրեշտակներն են: Արքայութիւնը ժառանգող հաւատացեալները «երկինքի հրեշտակներուն նման պիտի ըլլան», բայց հրեշտակ պիտի չըլլան (Մտ 22.30): Հրեշտակները իրենց յատուկ մարմիններ եւ մարմինի ձեւեր ունին. հաւատացեալներն ալ իրենց յատուկ մարմիններ եւ մարմինի ձեւեր պիտի ունենան:

Առաքեալը կը խօսի նաեւ արեւուն, լուսինին եւ աստղերուն մասին եւ կը բացատրէ որ անոնց շփոթութիւնը տարբեր պիտի ըլլան իրարմէ: Հաւատացեալներ պիտի ըլլան որոնք արեւի նման պիտի ըլլան, ինչպէս օրինակ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, Սուրբ Գրիգոր Նարեկացի, Սուրբ Անտոն Անապատական, Մովսէս, Եղիա եւ այլ նման մեծ սուրբեր: Ասոնց փառքն ու շփոթութիւնը շատ մեծ պիտի ըլլայ արքայութեան մէջ:

Կան այլ հաւատքի մարդիկ որոնք դարձեալ սուրբ կեանք ապրած են, որոնք սակայն արեւի փառքը պիտի չունենան, այլ լուսինի փառքն ու փայլքը պիտի ունենան: Եւ տակաւին, կան պարզ հաւատացեալները, եւ պարզ հաւատացեալներուն մէջ հաւատքի տարբեր-տարբեր մակարդակներ ունեցողները, որոնք թէպէտ ամբողջովին սուրբ կեանք չեն ապրած, բայց եղած են հաւատքի մարդիկ, ասոնք ալ աստղերու նման պիտի ըլլան. ասոնց փառքը արեւի ու լուսինի փառքէն նուազ պիտի ըլլայ բնականօրէն:

Պարզ հաւատացեալներն ալ մէկը միւսէն աւելի շփոթ ու փառաւոր պիտի ըլլան, նայած թէ ով որքան մօտիկ եղած է Յիսուսի երկրի վրայ եղած ժամանակ, ասոր է որ կ'ակնարկէ առաքեալը երբ կ'ըսէ. «Նոյնիսկ աստղերէն ոմանք աւելի շփոթ են քան միւսները»:

Մէկ բան յստակ պէտք է ըլլայ, որ արքայութեան մէջ անարգ կամ փառքէ ու շփոթութենէ զուրկ մարդ պիտի չըլլայ:

Երկրի վրայ որքան մօտիկ ու մտերիմ եղած ենք Տէր Յիսուսի, որքան ժամանակ անցուցած ենք աղօթքով, եւ որքան անած ու լեցուած ենք Սուրբ Հոգիով՝ մեր փառքն ու շքեղութիւնը ա՛յնքան աւելի զօրաւոր պիտի ըլլայ արքայութեան մէջ, եւ մենք ա՛յնքան աւելի մօտիկ պիտի ըլլանք Յիսուսի, եւ այս մօտիկութիւնն է հաւատացեալին վարձատրութիւնը: Սուրբ Յերոնիմոս կ'ըսէ. «Վարձատրութիւնը Տէր Յիսուսի ներկայութիւնը վայելելն է»:

Ասիկա գիտնալէ ետք, ջանանք կարելի եղածին չափ աղօթքով ժամանակ անցնել Տիրոջ հետ, որովհետեւ աղօթքէն զատ չկա՛յ ուրիշ միջոց մեզ Յիսուսի մօտեցնող ու մտերմացնող:

Երկինքի մէջ բոլորս ալ մօտիկ ու մտերիմ պիտի ըլլանք Յիսուսի բայց ո՛չ նոյնքան: Ոմանք շատ, եւ ասիկա շատ վարձատրուիլ կը նշանակէ. եւ ոմանք ալ քիչ, եւ ասիկա քիչ վարձատրուիլ կը նշանակէ:

**«Արդարեւ, երկինքի արքայութիւնը կը նմանի հետեւեալին.–
Կալուածատէր մարդ մը կար, որ առաւօտ կանուխ գնաց մշակներ
վարձելու՝ որպէսզի իր այգիին մէջ աշխատին»** (Մտ 20.1):

- Ի՞նչ է կալուածը: Կալուածը՝ աշխարհն է:
- Ո՞վ է կալուածատէրը: Կալուածատէրը՝ Քրիստո՛ս է:
- Որո՞նք են մշակները: Մշակները՝ արդար մարդիկն են:
- Ի՞նչն է այգին: Այգին՝ Քրիստոսի ժողովուրդն է:

Քանի մը հաստատումներ.–

1.– «Կալուածատէր» բառին փոխարէն, բնագիրը ունի «տանտէր» (Յունարէն՝ ΟΙΚΟΔΕΣΠΟΤΗ – իփօտէսփօդի) բացատրութիւնը: Յովհաննէս Երզնկացի, Մատթէոսի Աւետարանի իր մեկնութեան մէջ, կ'ըսէ, թէ տունը աշխարհն է, իսկ տէրը՝ Արարիչը աշխարհին, այլ խօսքով՝ Աստուած:

«Տանտէր» բացատրութիւնը ցոյց կու տայ որ Քրիստոս ի՛նքն է տէրը ամէն բանի: Աստուած աշխարհին միայն ստեղծիչը չէ, այլեւ՝ տէրն ու տիրականը: Ան այս աշխարհը ստեղծեց, գայն օր մը մարդոց յաւիտենական բնակարանը կամ յաւիտենական արքայութիւնը դարձնելու համար: Եսայի մարգարէն խօսելով այս մասին՝ կ'ըսէ. «Այսպէս կ'ըսէ երկինքը ստեղծող Տէրը, այն Աստուածը, որ երկիրը կազմեց, զանիկա շինեց եւ հաստատեց, զանիկա պարապ տեղ չստեղծեց, այլ բնակութեան համար կազմեց» (Ես 45.18): Յիսուս կը հաստատէ թէ հեզերը պիտի ժառանգեն երկիրը (Մտ 5.5): Նոյնը կ'ըսէ Դաւիթ մարգարէն (Սղ 37.11) եւ շատ մը ուրիշներ:

Հիմնուելով տուեալ համարներուն վրայ, յստակ կը դառնայ որ Աստուծոյ արքայութիւնը պիտի ընդգրկէ ամբողջ երկինքն ու երկիրը կամ աշխարհը, եւ որովհետեւ այդպէս է, բնականօրէն մարդը ընելիք ունի արքայութիւն ըլլալու կոչուած այս աշխարհին մէջ: Անոր ընելիքը ուրիշ բան չէ եթէ ոչ տարածել Աստուծոյ արքայութիւնը: Առակին հիմնական կէտերէն մէկն ալ՝ ասիկա մեզի ցոյց տալն է:

2.- «Տանտէր» բառը ուրիշ կարեւոր բան մըն ալ կը յուշէ մեզի: Զմոռնանք որ մենք «տուն» բացատրութիւնը կը գործածենք ընտանիքի համար: Եթէ տունը աշխարհն է, եւ եթէ աշխարհ կոչուած է Աստուծոյ արքայութիւնը ըլլալու, ուրեմն, Աստուծոյ արքայութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուծոյ մեծ ընտանիքը: Այս իմաստով, հաւատացեալները կոչուած են Աստուծոյ ընտանիքին մաս կազմելու:

3.- «Առաւօտ կանուխ»: Որո՞նք են «առաւօտ կանուխ» վարձուած մշակները եւ ի՞նչ պէտք է հասկնալ «առաւօտ կանուխ» բացատրութեամբ: Առաւօտ կանուխ վարձուածները հրեաները իրենք են, գոյգ իմաստներով.- Նախ որովհետեւ իրե՛նք եղան առաջին ժողովուրդը որ ընտրուեցան Աստուծոյ կողմէ, դառնալով Աստուծոյ «ընտրեալ ժողովուրդը», եւ երկրորդ, այն իմաստով որ Աւետարանին եւ Աստուծոյ արքայութեան պատգամը առաջին հերթին եւ ամենէն առաջ իրե՛նց ուղղուեցաւ (Մտ 10.5-6): Հետագայ ժամերուն վարձուած մշակները՝ կը ներկայացնեն տարբեր-տարբեր ժամանակներու ընթացքին դարձի եկող հեթանոսները:

Յովհաննէս Երզնկացի, կը բացատրէ որ «առաւօտ կանուխ» բառերը կրնան նաեւ ակնարկութիւն ըլլալ արարչութեան սկզբնական հանգրուանին, որ երբ իր աւարտին հասաւ, Ադամը «վարձուեցաւ» հոգ տանելու համար դրախտին, կրնան նաեւ ակնարկութիւն ըլլալ Ադամէն մինչեւ Նոյ երկարող ժամանակաշրջանին որ ձեւով մը ամբողջ աշխարհին առաւօտը, այլ խօսքով՝ սկիզբը կը ներկայացնէ, եւ կամ, կրնան ակնարկութիւն ըլլալ Քրիստոսի առաջին գալուստին, որուն գալուստը առաւօտեան լոյսին նման բացուեցաւ ամբողջ աշխարհին դիմաց: Եւ չմոռնանք որ Քրիստոսի ծնունդը ո՛չ միայն արեւելի մէջ տեղի ունեցաւ, այլեւ՝ արեւելի նմանցուած է: Արդ, Քրիստոս ինքն էր այն ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԱՐԵԳԱԿԸ որ ծագեցաւ ամբողջ աշխարհին վրայ, եւ արեգակին ծագումը բնականօրէն «առաւօտ կանուխ» է որ տեղի կ'ունենայ:

4.- «Առաւօտ կանուխ գնաց մշակներ վարձելու»: Մշակները մարդիկը իրենք են՝ արդար մարդիկը, որոնք առաջնորդ եղան ու կ'ըլլան ժողովուրդին, կ'ըսէ Յովհաննէս Երզնկացի:

Մարդուն համար գործածուած «մշակ» բառը ցոյց կու տայ որ մարդը կոչուած է աշխատելու: Արդարեւ արքայութեան հրաւեր ստացած մարդուն կեանքը՝ քրտնելու, տփնելու, աշխատելու, երկնելու, արցունք թափելու կեանք մըն է: Եւ այս իրավիճակը պէտք է շարունակուի մինչեւ մեր կանչուիլը մեր յաւիտենական տունը եւ կամ մինչեւ մեր հօր Տիրոջ երկրորդ գալուստը: Հետաքրքրական է որ Քրիստոս խօսելէ ետք իր երկրորդ գալուստը կանխող նշաններուն մասին՝ կ'ըսէ. «Եւ երբ ասոնք սկսին պատահիլ, շտկուեցէք եւ ձեր գլուխները բարձրացուցէք, որովհետեւ ձեր փրկութիւնը մօտ է» (Ղկ 21.28):

Ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ հետեւեալ տողին վրայ՝ «Շտկուեցէք եւ ձեր գլուխները բարձրացուցէք»: Զմոռնաք, որ կ'ըսէիմք թէ արքայութեան հրաւեր ստացած մարդը՝ պէտք է աշխատող ու տփնող մարդ ըլլայ մինչեւ իր Փրկիչին գալուստը: «Շտկուեցէք» բառը ցոյց կու տայ աշխատանքի մէջ ըլլալու վիճակ մը: Հաւատացեալներ կարծէք իրենց գլուխը վար հակած՝ Աստուծոյ արքայութեան արտին մէջ կ'աշխատին, կը սերմանեն, կը տփնին, կը քրտնեն, կը ջրեն, եւայլն: Բայց երբ Տէրը յայտնուի, աշխատանքի ժամանակը փակուած պիտի յայտարարէ, եւ Տէրը դառնալով իր հետեւորդներուն՝ պիտի ըսէ. «Շտկուեցէք եւ ձեր գլուխները բարձրացուցէք»: Շտկուեցէք, դուք որ ինծի համար ծոած էիք աշխատանքի բեռան տակ: Ձեր գլուխները բարձրացուցէք դուք որ խոնարհութեան ու հեզութեան նամբան ընտրած էիք:

5.- «Մշակներ վարձելու»: Խօսեցանք «մշակ» հասկացողութեան մասին, երկու խօսք ըսեմք «վարձելու» (Յունարէն՝ *μισθωσασθαι* – միսթիսասթիէ) բառին մասին: Այս բառը կը գործածուի անձի մը համար որ կատարելիք աշխատանք ունի եւ անոր փոխարէն առնելիք վարձատրութիւն ունի: Եւ վարձուորը ինք միշտ այդ մարդն է: Ան կ'աշխատի վարձատրութիւն ձեռք ձգելու յոյսով: Այս կէտը կը յիշեցնէ բոլոր հաւատացեալներուս, որ բոլոր անոնք որոնք կ'աշխատին Քրիստոսի այգիին համար, Քրիստոսի Եկեղեցիին համար, Քրիստոսի ժողովուրդին համար, Քրիստոսի թագաւորութեան համար, անոնք իրենց արժանի վարձատրութիւնն ու հատուցումը պիտի ստանան Տիրոջմէն «Ֆանգի Տէրը հատուցանող Աստուած ըլլալուն՝ անշուշտ հատուցում պիտի ընէ» (Եր 51.56):

6.- Այստեղ կարելոր բան մը կայ որուն պէտք է ուշադրութիւն դարձնել: Այգիին տէրը ինքն է որ կ'երթայ մշակներ վարձելու, եւ ո՛չ թէ մշակները իրենք կու գան աշխատանք փնտռելու կամ գործ խնդրելու:

Ի՞նչ ցոյց կու տայ այս ուղիները: Յոյց կու տայ, որ Քրիստոս ի՛նքն է կամ ի՛նքն պէտք է ըլլայ մարդիկը առաքելութեան կանչողը: Մարդիկ չեն կրնար Աստուծոյ արքայութեան անդաստանէն ներս աշխատելու առաքելութեան կանչել իրենք գիրենք եթէ Տէրը ի՛նքն չկանչէ գիրենք:

Յիսուս խօսքը ուղղելով աշակերտներուն՝ ըսաւ. «Դուք չէ որ գիտ ընտրեցիք, այլ ե՛ս ձեզ ընտրեցի եւ նշանակեցի ձեզ՝ որ երթաք եւ պտղաբեր ըլլաք եւ ձեր պտուղը մնայուն ըլլայ...» (Յհ 15.16): Այս համարը շատ յստակօրէն կը հաստատէ վերեւ մեր ըսածը: Յիսուս ի՛նքն է որ մարդիկը իր գործին կատարման պէտք է կանչէ եւ ո՛չ թէ մարդիկ իրենք: Տուեալ համարին համաձայն, Յիսուս ի՛նքն է, ընտրողը, ի՛նքն է նշանակողը, եւ ի՛նքն է դրկողը: Երբ Յիսուս ի՛նքն է ընտրողը, նշանակողը եւ դրկողը՝ միայն ա՛յն ատեն մեր գործը պտղաբեր կ'ըլլայ եւ մեր պտուղը մնայուն կ'ըլլայ:

7.- «Որպէսզի իր այգիին մէջ աշխատին»: Քրիստոսի մշակները՝ Աստուծոյ այգիին մէջ պէտք է աշխատին: Ի՞նչն է այգին եւ ինչո՞ւ ատիկա կը կոչուի «այգի»: Նախ ուշադրութիւն պէտք է ընել որ առակի այս առաջին համարին մէջ մենք կը կարդանք «տուն»ի եւ «այգի»ի մասին. զանոնք պէտք է շփոթել իրարու հետ: «Կալուած»ը կամ «տուն»ը՝ աշխարհն է, իսկ «այգի»ն՝ Քրիստոսի ժողովուրդն է, Քրիստոսի եկեղեցին է, ինչպէս վերեւ ըսինք:

Հին Կտակարանի մէջ, Իսրայէլի ժողովուրդը կոչուած է՝ այգի (Յս 5.1-4): Եթէ երբեք Հին Կտակարանի մէջ Աստուծոյ այգին՝ Իսրայէլի ժողովուրդն էր, Նոր Կտակարանի մէջ Աստուծոյ այգին՝ Քրիստոսի ժողովուրդն է, այլ բացատրութեամբ՝ Քրիստոսի հետեւորդներն են: Կրնանք ըսել, հետեւաբար, որ առակին մէջ յիշուած այգին նոր Իսրայէլն է՝ ուղիղօրէն ֆրիստոնեաները իրենք, որոնք տարածուած են ամբողջ աշխարհի մէջ:

8.- «Իր այգիին»: Վերջապէս, «իր» ստացականը կը պարզէ որ այգին Քրիստոսի՝ այգին է. եկեղեցին Քրիստոսի՝ մարմինն է. Քրիստոս ի՛նքն է գլուխը եկեղեցիին (Յփ 5.23): Այդ «իր»ը միաժամանակ ցոյց կու տայ որ Յիսուս եկեղեցին իր արիւնն՝ ձեռք ձգեց, իր արիւնն՝ սեփականացուց, ահա թէ ինչո՞ւ զայն «իր»ը կը կոչէ:

«Եւ մշակներուն հետ օրական մէկ արծաթ դահեկանի համաձայնելէ ետք, զանոնք դրկեց իր այգին» (Մտ 20.2): Երեք հաստատումներ.–

1.- «Օրական»: Այս բառը կը պարզէ որ Քրիստոսի համար իւրաքանչիւր օր յատուկ արժէք մը կը ներկայացնէ, եւ այդ օրուան

ընթացքին կատարուած ամէն մէկ գործ՝ Քրիստոս բնաւ չի մոռնար: Այո՛, ան բնաւ չի մոռնար իր այգիին մէջ մեր տարած աշխատանքներէն եւ ո՛չ մէկը: Ան կը յիշէ մեր ամենէն պոտիկ ծառայութիւններն անգամ:

2.- «Օրական» բացատրութիւնը, նաեւ կը յիշեցնէ մեզի որ հաւատացեալ մարդը օրական պէտք է գործէ: Իւրաքանչիւր օր՝ նո՛ր ընելիք մը պէտք է ունենայ, նո՛ր նուաճելիք բարձունք մը: Ան չ'ըլլար տասը օր կ'ենայ եւ երկու օր աշխատի: Ամէ՛ն օր պէտք է աշխատի: Ճիշդ ա՛յդ է որ կը պարզէ «օրական» բացատրութիւնը:

3.- Վերջապէս, «օրական» բառը կը յիշեցնէ մեզի որ մեր երկրաւոր կեանքը մէկ օր կը նկատուի որքան ալ երկար ըլլայ անիկա: Այստեղ գեղեցիկ հոգեւոր խորհրդածութեան դուռ մը կը բացուի մեր առջեւ: Մեր երկրաւոր կեանքը մէկ օր է, այլ խօսքով՝ աշխատանքի ու քրտինքի ժամանակաշրջանը մէկ օր է միայն, բայց անդին ունինք ամբողջ յաւիտենականութիւն մը որ մեզի կը սպասէ:

Քի՛չ են աշխատանքի մեր օրերը, բայց յաւիտենական է մեր հանգիստը: Կարծէ՛ք Յիսուս ըսել կ'ուզէ, որ ի՛նչ մը դիմանանք, տոկանք, աշխատինք, եւ ահա մենք արժանի պիտի դառնանք անհուն վարձատրութեան: Եւ ասիկա գիտնալը միտքարական է, որովհետեւ ոյժ կու տայ մեզի տոկալու կեանքի փորձութիւններուն դիմաց: Մեզմէ՛ն ո՞վ համբերութեամբ չի տանիր դժուարութիւնները երբ գիտնայ որ այդ դժուարութիւններէն պիտի ծնի յաւիտենական հանգիստն ու ուրախութիւնը:

4.- «Մշակներուն հետ օրական մէկ արծաթ դահեկանի համաձայնել էտք...»: Հոս տեղ գտած «համաձայնիլ» բառը կը պարզէ որ Քրիստոս համաձայնութիւն մը կնքած է իր հետեւորդներուն հետ: Եւ համաձայնութիւնը այն է՝ թէ ով որ կ'աշխատի իր այգիին մէջ, այլ խօսքով՝ իր ժողովուրդին համար, իր եկեղեցիին տարածման համար՝ վարձատրութիւն պիտի ստանայ: «Համաձայնիլ» բացատրութիւնը, ձեռով մը կը յիշեցնէ մեզի Քրիստոսի խոստումը, թէ ինք վարձահատոյց պիտի ըլլայ իր բոլոր զաւակներուն:

5.- «Օրական մէկ արծաթ դահեկանի»: Մեր խօսքին սկիզբը ըսինք որ համաձայն Որոգիներէսի «մէկ արծաթ դահեկան»ը փրկութիւնն է որ կը պատկերացնէ, իսկ համաձայն Օգոստինոսի՝ յաւիտենական կեանքն է որ կը պատկերացնէ, եւ ըսինք որ անոնք նոյն բաներն են: Այստեղ կ'աւելցնեմ ուրիշ ուշագրաւ բացատրութիւն մը որ կը ներկայացուի սուրբ Յերոնիմոսի կողմէ: Յերոնիմոս կը բացատրէ որ «մէկ արծաթ դահեկան»ը Քրիստոսի պատկերն ու նմանութիւնն է որ կը պատկերացնէ: Այս իմաստով, «մէկ արծաթ դահեկան» տալ

փրկուածներուն, կը նշանակէ զանոնք դարձնել Քրիստոսի հարազատ պատկերն ու նմանութիւնը: Մտաբերեցէ՛ք որ Յովհաննէս առաքեալ ինք եւս կը վկայէ որ «երբ Քրիստոս յայտնուի՝ իրեն նման պիտի ըլլանք» (Ա.Յե 3.2):

6.- «Զանոնք դրկեց իր այգին»: Այո՛, ի՛ր այգին զանոնք դրկեց եւ ո՛չ թէ ուրիշին այգին: Փրկութեան եւ վարձատրութեան արժանանալու համար անհրաժեշտ է Քրիստոսի՝ այգիին մէջ աշխատիլ: Աշխարհ շատ այգիներ դրած է մեր դիմաց: Անոնց մէջ աշխատիլը մեզ փրկութեան չ՛առաջնորդեր եւ վարձատրութեան չ՛արժանացներ:

Իւրաքանչիւր մարդ կրնայ իրեն յատուկ այգի մը ունենալ եւ անոր մէջ աշխատիլ: Օրինակ, երբ մէկը իր կեանքին նպատակը դարձուցած է դրամ դիզել, կամ բարձր դիրքերու հասնիլ, կամ համբաւ ունեցող անձնաւորութիւն մը ըլլալ, կը նշանակէ թէ անիկա արդէն ունի իր այգին, որ տարբեր է Քրիստոսի այգիէն:

«Ժամը իննի ատենները դարձեալ գնաց եւ հրապարակի վրայ ուրիշներ ալ տեսաւ, որոնք անգործ կեցած էին: Ասոնց ալ ըսաւ.- "Ռուք ալ այգիս գացէ՛ք եւ ինչ որ է ձեր իրաւունքը պիտի տամ ձեզի": Անոնք ալ գացին: Յետոյ կէսօրուան դէմ եւ կէսօրէ ետք ժամը երեքի ատենները կրկին գնաց եւ նոյնը ըրաւ» (Մտ 20.3-5): Քանի մը մատնանշումներ.-

1.- «Ժամը իննի⁴ ատենները»: Ոեւէ մէկ շփոթի առաջքը առած ըլլալու համար, երբ առակին մէջ յիշուած ժամերուն մասին պիտի խօսինք՝ նկատի պէտք է առնենք հին թարգմանութիւնը, որ Յունարէն թարգմանութեան հետ բառացիօրէն նոյնն է:

Առակը մեզի հինգ տարբեր ժամեր կը յիշէ.-

1.- Առտուն կանուխ (մեր ժամով՝ առաւօտեան ժամը 6-ը):

2.- Ժամը երեք (մեր ժամով՝ առաւօտեան ժամը 9-ը):

3.- Ժամը վեց (մեր ժամով՝ կէսօրուայ 12-ը):

4.- Ժամը իննը (մեր ժամով՝ կէսօրէ ետք 3-ը):

5.- Ժամը տասներմէկ (մեր ժամով՝ երեկոյեան 5-ը):

Գրիչ մը ըսած է.- «Այս հինգ ժամերը կը նշեն մարդ արարածին կեանքին հինգ ժամանակահատուածները.-

1.- «Առտուն կանուխ»ը կը նշէ մանկութեան ժամանակը:

2.- «Ժամը երեք»ը կը նշէ պատանութեան ժամանակը:

3.- «Ժամը վեց»ը կը նշէ երիտասարդութեան ժամանակը:

4.- «Ժամը ինն»ը կը նշէ չափահասութեան ժամանակը:

5.- «Ժամը տասներմէկ»ը կը նշէ ծերութեան ժամանակը»:

⁴ Եբրայեցիներ գիշերն ու ցերեկը հաշուելու յատուկ ձեւ մը ունէին գորս ասկէ առաջ յիշեցիմք: Տե՛ս էջ 190, ծանօթագրութեան բաժին:

Խ^օնչ ցոյց կու տայ այս համեմատութիւնը: Չմոռնանք որ կալուածատէրը որ իր այգիին համար մշակներ կը փնտոէ՝ Քրիստոս ինքն է: Քրիստոս յիշեալ տարբեր հինգ ժամանակներուն մշակներ փնտոելով, ցոյց կու տայ, թէ իր կամքն է որ մարդիկ իրենց մանկութենէն սկսեալ մինչեւ իրենց խոր ծերութիւնը աշխատին իր այգիին մէջ: Այլ խօսքով, Քրիստոս կ'ուզէ որ մեր ամբողջ կեանքը ապրինք իրե՛ն համար, գործենք իրե՛ն համար, աշխատինք իրե՛ն համար:

2.- Քրիստոսի կոչը ուղղուած մարդուն՝ յիշեալ հինգ ժամանակներուն, ցոյց կու տայ, որ Քրիստոս միշտ եւ մնայուն կերպով կը հետապնդէ մարդուն փրկութիւնը: Քրիստոս կը սկսի թակել մարդուն սրտին դուռը անոր մանկութենէն սկսեալ մինչեւ անոր խոր ծերութիւնը, մինչեւ ժամը տասնըմէկը, այլ խօսքով՝ մինչեւ անոր կեանքին վերջալոյսը: Այո՛, Քրիստոս մինչեւ մեր կեանքին վերջին շունչը փրկութեան գալու կոչ կ'ուղղէ մեզի:

Նախքան երրորդ կէտին անցնիլս, պէտք է ըսել որ առակին մէջ յիշուած հինգ տարբեր ժամերուն վերաբերեալ ընդարձակ ուրիշ բացատրութիւններ կան, զորս պիտի ուզեմ շատ հակիրճ եւ շատ ամփոփուած կերպով յիշել.–

Մեկնիչ մը կը բացատրէ, թէ «ստտուն կանուխ»ը կ'ակնարկէ Ադամի ստեղծագործութեան հանգրուանին զոր կը ներկայցնէր ամբողջ մարդկութեան եւ ստեղծագործութեան «ստաւօտը», երբ Աստուած իջաւ Ադամի բով եւ պարտականութիւն յանձնեց անոր աշխատելու եղեմի պարտեզին մէջ եւ մշակելու ու պահելու գայն (Մն 2.15):

«Ժամը երեք»ը կ'ակնարկէ յետ-ջրհեղեղեան ժամանակաշրջանին, որ յատկանշուած էր Նոյ նահապետով: Աստուած ջրհեղեղէն ետք, դարձեալ փնտոեց մարդիկ որպէսզի աշխատին իր այգիին մէջ, այլ խօսքով՝ իր ժողովուրդին համար, եւ առաջին մարդը զոր գտաւ եղաւ Նոյը ինք, որուն հետ ուխտ մը կնքեց:

«Ժամը վեց»ը կ'ակնարկէ Աբրահամ նահապետի ժամանակաշրջանին, ուր մարդկութիւնը կեանքի նո՛ր փանապարհի մը դիմաց գտաւ ինքզինք, շնորհիւ այն նոր ուխտին որ Աստուած կնքեց Աբրահամին հետ, զինք դարձնելով հայրը բազում ժողովուրդներու (Մն 17.4-8):

«Ժամը ինն»ը կ'ակնարկէ այն ժամանակահատուածին երբ Իսրայէլի ժողովուրդը Աստուծոյ օրէնքները պիտի ստանար Սինայի լեռան վրայ Մովսէսի ձեռքով. հո՛ւս եւս Աստուած եկաւ մշակներ փնտոելու որոնք մարգարէները իրենք պիտի ըլլային՝ որպէսզի աշխատէին իր թագաւորութեան համար:

Վերջապէս, «Ժամը տասնըմէկ»ը որ օրուան վերջին ժամն է, կ'ակնարկէ ժամանակներու աւարտին երբ տեղի ունեցաւ Աստուծոյ Որդիին ծնունդը, ուր իջաւ Աստուծոյ Որդին եւ մարդեղացաւ հաւաքելու համար մեզ՝ որ ամբողջ օրը անգործ կեցած էինք, եւ պատուէր տուաւ երթալու եւ իր այգիին մէջ աշխատելու:

Սուրբ Որոգիներէ շատ աւելի հետաքրքրական բացատրութիւն մը կու տայ առակին մէջ յիշուած հինգ ժամերուն, կամ ըսենք՝ հինգ հանգրուաններուն վերաբերեալ:

Ան կը բացատրէ որ յիշուած հինգ ժամերը կամ հանգրուանները կը ներկայացնեն մարդուն հինգ զգայարանները՝ տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, նաշակելիք, շօշափելիք:

Առաջին հանգրուանը կը ներկայացնէ Ադամի ժամանակը որ ինկաւ **շօշափելով** արգիլեալ ծառին պտուղը: Ան դպաւ արգիլեալ ծառին պտուղին եւ ինկաւ, իսկ անոնք որ դպնան Կենաց Ծառին՝ Քրիստոսի, պիտի բուժուին ու կեանք ունենան, նիշդ ինչպէս արիւնահոսութենէ տառապող կինը դպաւ Յիսուսի եւ բուժուեցաւ (Ղկ 8.46-47):

Երկրորդ հանգրուանը կը ներկայացնէ Նոյի ժամանակը: Նոյ ջրհեղեղէն ետք գոհ մատուցանեց Աստուծոյ եւ Աստուած անոր «անոյշ հոտը **հոտուրտաց**» (Մն 8.21): Ճիշդ նոյն ձեւով ալ, մեր երկնաւոր Հայրը ինք, Քրիստոս-գոհին անոյշ հոտը կը հոտուրտայ, իսկ մենք Քրիստոս-գոհին ընդմէջէն անոր անսահման սիրոյն հոտն է որ կը հոտուրտանք:

Երրորդ հանգրուանը կը ներկայացնէ Աբրահամի ժամանակը որ հիւրասիրեց զԱստուած երկու հրեշտակներու հետ միասին եւ այդ ձեւով զգայարաններէն՝ **նաշակելիք**-ը սրբեց ու մաքրեց:

Չորրորդ հանգրուանը կը ներկայացնէ Մովսէս մարգարէի ժամանակը, որ բարձրացաւ Սինայի լեռը, հոն **լսելու** ձայնը Աստուծոյ որ պիտի հնչէր բարձունքներուն մէջ՝ իր օրէքները տալու համար Մովսէսին, եւ այդ ձեւով զգայարաններէն՝ **լսելիք**-ը պիտի սրբուէր ու սրբացուէր:

Հինգերորդ հանգրուանը կը ներկայացնէ Աստուծոյ Որդիին մարդեղացումը եւ աշխարհ գալուն ժամանակը, երբ մարդիկ **տեսան** զինք (Ա.Յհ 1.1), եւ այդ ձեւով զգայարաններէն՝ **տեսանելիք**-ը պիտի սրբուէր ու սրբացուէր:

3.- «Դարձեալ գնաց եւ հրապարակի վրայ ուրիշներ ալ տեսաւ»: «Դարձեալ» բառը ցոյց կու տայ որ Յիսուս մնայուն կերպով կը հետապնդէ մարդոց փրկութիւնը: Ան մէկ անգամ մարդիկը փրկութեան կանչելով չի գոհանար: Նոյնը պէտք է ըլլանք մենք եւս: Մարդիկը մէկ

անգամ Քրիստոսի հրաւիրելով չգոհանանք, այլ շարունակենք այդ հրաւերը ուղղել, մինչեւ որ մարդիկ ընդառաջեն:

Ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ նաեւ «հրապարակ» բառին վրայ: Ի՞նչպիսի տեղ մըն է հրապարակը: Որո՞նք կ'ապրին հոն: Եւ ինչո՞ւ Յիսուս ինքզինք կը ներկայացնէ իբրեւ մէկը որ հրապարակ կ'երթայ՝ մշակներ գտնելու իր այգիին համար:

Հրապարակը այն տեղն է ուր առուծախ կ'ըլլայ: Հո՞ն է որ առեւտրականները կը վիտան: Հո՞ն է որ վաճառականները կը թափին: Հո՞ն է որ դրամասերները կը յայտնուին: Հետեւաբար, «հրապարակը» խորհրդանիշ է աշխարհին ու աշխարհասիրութեան, խորհրդանիշ է նիւթականին եւ նիւթականասերներուն: Ասիկա նկատի ունենալով մեր դիմաց կը պարզուին երեք ճշմարտութիւններ.–

ա.– Տանտէրը՝ Յիսուս, հրապարակ երթալով, սորվեցուցած կ'ըլլայ մեզի, որ ապաշխարութեան եւ փրկութեան կոչը պէտք է բոլորին ուղղել՝ հարուստին ու աղքատին հաւասարապէս, պարզ խանութպանին ու մեծ վաճառականին հաւասարապէս, համեստ դասակարգի մարդոց եւ երեսելի դասակարգի մարդոց հաւասարապէս:

բ.– «Հրապարակ» բացատրութեամբ, Յիսուս մէկ կողմէ կ'ուզէ յիշեցնել մեզի որ փրկութեան կոչը պէտք է հասցնել ամէն տեղ եւ ամէն մարդու, նոյնիսկ ամենէն նիւթականացած հոգիներուն, ամենէն աշխարհացած սիրտերուն, իսկ միւս կողմէ, կ'ուզէ ցոյց տալ մեզի, որ նիւթականին կապուած հոգիները չեն կրնար ընդառաջել փրկութեան իր հրաւերին:

գ.– Հրապարակը այն տեղն է որ միշտ մարդոցմով խնդրուած կ'ըլլայ: Այս ճշմարտութիւնը մէկ կողմէ ցոյց կու տայ որ խնդրուած եւ բազմազբաղ մարդիկ չեն կրնար լսել Աւետարանին ձայնը եւ ականջ տալ փրկութեան կոչին, իսկ միւս կողմէ, ցոյց կու տայ որ Յիսուս կ'ականկալէ իր հետեւորդներէն որ փրկութեան կոչը հնչեցնեն ամենէն խնդրուած վայրերն անգամ, ամենէն բազմազբաղ կեանքներուն մէջ անգամ:

դ.– Վերջապէս, մարդիկը հրապարակէն այգի դրկելու երեւոյթը յիշեցում մըն է նաեւ մեզի, որ հեռո՞ւ մնանք խնդրուածութենէն եւ բազմազբաղուածութենէն, հեռո՞ւ մնանք նիւթապաշտութենէն եւ աշխարհասիրութենէն, որովհետեւ անոնք պատճառ կ'ըլլան որ մենք չկարենանք յստակօրէն լսել մեր երկնաւոր Հովիւին ձայնը:

4.– «Որոնք անգործ կեցած էին»: Շատ հետաքրքրական են այս բառերը: Չմոռնանք որ ըսինք թէ հրապարակը ամենէն խնդրուած, ամենէն գործունեայ եւ ամենէն շատ վաճառականութեամբ յատկանշուած տեղն է: Ի՞նչպէս այսպիսի տեղի մը մէջ մարդիկ «անգործ

կեցած էին»: Ի՞նչ կը պարզէ այս իրողութիւնը եւ ի՞նչ կը սորվեցնէ մեզի: Տէրը կ'ուզէ սորվեցնել մեզի, որ մարդիկ որքան ալ բազմազարդ ըլլան, որքան ալ եռուզեռի մէջ ըլլան, որքան ալ գործերով բերնաւորուած ըլլան, եթէ չեն ընդառաջած փրկութեան կոչին՝ Աստուծոյ հայեացքով անոնք «անգործ կեցած» են, ծոյլ են, չեն աշխատիր: «Աշխատող» անունը պէտք չէ տալ այն մարդուն որ ոչինչ ունի ըրած Քրիստոսի այգիին համար: «Գործունեայ» պէտք չէ կոչել այն անձը որ բնաւ չի գործեր Փրկիչին այգիին մէջ, անոր եկեղեցիին ու հաւատքին տարածման ի խնդիր:

Աստուած իւրաքանչիւր մարդ ստեղծած է յատուկ նպատակով մը եւ յատուկ գործի մը համար գործ մարդը պէտք է կատարէ այս աշխարհին մէջ: Եթէ մարդը չփորձէ փնտռել ու գիտնալ թէ ինք ինչո՞ւ ստեղծուած է եւ թէ Աստուած ի՞նչ կը պահանջէ իրմէ, կը նկատուի մէկը որ անգործ է, որքան ալ գործունեայ անձ մը ըլլայ աշխարհի հայեացքով:

5.- «Ինչ որ է ձեր իրաւունքը պիտի տամ ձեզի»: Այստեղ հանդէս կու գայ Քրիստոսի բացարձակ արդարութիւնը եւ արդար դատաւոր ըլլալու իրողութիւնը: Ան երբեք չէ զրկած ու չի զրկեր մարդը իր իրաւունքէն: Մարդիկ կրնան մեզ աշխատեցնել եւ մեր վարձքը կամ մեր իրաւունքը չտալ, բայց Աստուած այդպիսի բան չ'ընէր: Աստուած իւրաքանչիւրին իր ըրածին համաձայն հատուցում պիտի ընէ:

6.- «Անոնք ալ գացին»: Ուշագրաւ է մշակներուն արագ ընդառաջումը: Վերեւ, ըսինք որ Քրիստոս կը հետապնդէ մեր փրկութիւնը մեր մանկութենէն սկսեալ մինչեւ մեր կեանքին վերջին շունչը, բայց ասկէ խաբուելով, չմտածեմք որ կրնանք ժամը տասըմէկին, այլ խօսքով՝ մեր կեանքի վերջալոյսին դարձի գալ: Ո՞վ գիտէ եթէ երբեք ծերութեան տարիքը պիտի հասնինք: Այս գիրքի ընթերցումը իր աւարտին չհասած՝ կրնայ մեր կեանքը իր աւարտին հասնիլ:

Ահա թէ ինչու, մարդիկ պէտք չէ յետաձգեն իրենց ապաշխարութիւնը, պէտք չէ յետաձգեն Քրիստոսի դառնալու եւ Քրիստոսի այգիին մէջ աշխատելու գործը: Բնագիրը մեզի կ'ըսէ որ երբ մշակները հրաւեր ստացան երթալու եւ Քրիստոսի այգիին մէջ աշխատելու՝ անմիջապէս գացին: Անոնք չառարկեցին որ տակաւին առաւօտեան ժամը ինն է եւ գործի երթալու համար շատ կանուխ է:

Սուրբ Օգոստինոս խօսելով այս մասին՝ կ'ըսէ. «Երբ այգիին տէրը մշակներուն եկաւ ժամը երեքին զանոնք վարձելու համար՝ անոնք չըսին իրեն. «Տակաւին կանուխ է, սպասեմք մինչեւ ժամը 6-ը. յետո՛յ

կ'երթանք": Ո՛չ ալ երբ մշակներուն եկաւ ժամը վեցին, անոնք ըսին.– "Սպասեմք մինչեւ ժամը 9-ը. յետո՛յ կ'երթանք": Երբ անոնց ըսուեցաւ որ այգի երթան աշխատելու, անոնք չըսին.– "Քանի բոլորս հաւասար կերպով պիտի վնարուինք՝ ինչո՞ւ կանուխ երթանք եւ մեմք գմեզ պէտք եղածէն աւելի յոգնեցնենք": Եթէ մշակները այգի չերթային աշխատելու՝ տէրը անոնց վարձքը պիտի չտար, այլ անոնց պիտի ըսէր.– "Դուք որ չէք գիտեր եթէ երբեք ծերութեան տարիքը պիտի հասնիք կամ ոչ, չէ՞ք ուզեր այգի երթալ եւ աշխատիլ": Տէրը քեզի խոստացաւ որ նոյնիսկ եթէ ժամը 11-ին գաս՝ մէկ արծաթ դահեկան պիտի ստանաս, բայց չխոստացաւ քեզի որ պիտի ապրիս մինչեւ ժամը 11-ը, այսինքն՝ մինչեւ ծերութիւն: Ուստի, մի՛ յետաձգեր ապաշխարութեան աշխատանքը, որովհետեւ թէպէտ Տէրը քեզի խոստացաւ վարձատրութիւն, բայց չխոստացաւ երկարակեցութիւն»:

«Անոնք ալ գացին» բառերը միաժամանակ կը պարզեն որ երբ փրկութեան հրաւեր ուղղուի մեզի՝ անմիջապէս պէտք է ընդառաջեմք, եւ նամբայ ելլեմք եւ Քրիստոսի այգին երթանք:

7.– «Յետոյ կէսօրուան դէմ եւ կէսօրէ ետք ժամը երեքի ատենները կրկին գնաց եւ նոյնը ըրաւ»: Արդէն վերեւ բացատրեցինք որ «կէսօրուան դէմ եւ կէսօրէ ետք» բացատրութիւնը պարզապէս կը բացայայտէ թէ Քրիստոս կը փնտռէ մարդիկը՝ իրենց կեանքի բոլոր օրերուն եւ բոլոր տարիքներուն:

«Նոյնը ըրաւ»: Այս վերջին երկու բառերը կը պարզեն որ Աստուծոյ Որդին մէկ եւ նոյն փրկութեան հրաւերն է որ ուղղած է եւ կ'ուղղէ բոլոր ժամանակներու բոլոր մարդոց:

«Ժամը հինգի ատենները երբ հրապարակ գնաց, դարձեալ պարապ կեցած մշակներ տեսաւ: Ասոնց հարցուց.– "Ինչո՞ւ ամբողջ օրը պարապ կեցեր էք հոս": Անոնք պատասխանեցին.– "Որովհետեւ մէկը չվարձեց մեզ": Անոնց ըսաւ.– "Դուք ալ այգի գացէք եւ ինչ որ է ձեր իրաւունքը՝ պիտի ստանաք"» (Մտ 20.6-7): Քանի մը մատնանշումներ.–

1.– «Ժամը հինգի ատենները», բառացիօրէն՝ «Ժամը տասներմէկի ատենները», որ մեր ժամով կ'ըլլայ երեկոյեան 5-ը:

Ասկէ առաջ յիշեցինք որ Եբրայեցիներուն «Գիշեր»ը կը սկսէր երեկոյեան ժամը 6-ին եւ կ'երկարէր մինչեւ առաւօտեան ժամը 6-ը, իսկ «Ցերեկ»ը կը սկսէր առաւօտեան ժամը 6-ին եւ կ'երկարէր մինչեւ երեկոյեան ժամը 6:

Առակին մէջ յիշուած ժամերը ցերեկուան ժամերը կը ներկայացնեն եւ ո՛չ թէ գիշերուան ժամերը:

Այս իմաստով, ժամը 11-ը, որ մեր ժամով՝ երեկոյեան 5-ը կ'ընէ, կը ներկայացնէ Երրայեցիներուն «Ցերեկ»ին վերջին ժամը, որ 5-էն 6-ի միջեւ եղող ժամն է: Ժամը 6-ին ցերեկը իր աւարտին կը հասնի, եւ կը սկսի գիշերը: Ինչո՞ւ այս մէկը նշեցի: Այստեղ շատ կարեւոր բան մը կայ որ մեր ուշադրութենէն պէտք չէ վրիպի: Ժամը 6-էն յետոյ, երբ այլեւս ցերեկը վերջացած է եւ գիշերը սկսած՝ ալ մարդ չի կրնար գործել:

Այստեղ խորքին մէջ ըսել ուզուածը այն է՝ որ մարդ արարածը այնքան ատեն որ այս աշխարհին մէջ կը գտնուի, կը նշանակէ թէ առաւօտեան ժամը 6-էն երեկոյեան ժամը 6-ի միջեւ է, այլ խօսքով՝ ցերեկի մէջ է, եւ ուստի՝ կրնայ գործել Յիսուսի այգիին մէջ, կրնայ ապաշխարութեամբ դարձի գալ: Բայց երբ ժամը 6-ը անցնի եւ գիշերը գայ, այսինքն՝ երբ իր երկրաւոր կեանքը իր աւարտին հասնի՝ դարձի գալու առիթ չ'ունենար: Հետեւաբար, երբ Յիսուս ցերեկուան վերջին ժամը կը նշէ, այդպէս կ'ընէ յիշեցնելու համար մեզի, որ դարձի գալու առիթը հիմա՛ է, փրկութեան օրը հիմա՛ է (Բ.Կր 6.2): Մահէն յետոյ չկայ ապաշխարութիւն:

Ճիշդ նոյնը Յիսուս կ'ըսէ. «Այնքան ատեն որ ցերեկ է, պէտք է կատարեմ գիս դրկողին գործերը: Գիշերը կու գայ, երբ ոչ ոք կրնայ աշխատիլ: Քանի դեռ աշխարհի մէջ եմ՝ աշխարհի լոյսն եմ» (Յհ 9.4-5): Այստեղ, Յիսուս «ցերեկ» ըսելով կ'ակնարկէ իր առաջին գալուստէն մինչեւ իր երկրորդ գալուստը երկարող ժամանակաշրջանին, որուն պիտի յաջորդէ «գիշերը», այսինքն՝ իր երկրորդ գալուստը «երբ ոչ ոք կրնայ աշխատիլ»: Այո՛, իր երկրորդ գալուստէն յետոյ ոչ ոք պիտի կարենայ աշխատիլ, այլ բացատրութեամբ, ոչ ոք պիտի կարենայ ապաշխարել եւ փրկութիւն ձեռք ձգել:

Հետաքրքրական է Յիսուսի վերջին հաստատումը՝ «Քանի դեռ աշխարհի մէջ եմ՝ աշխարհի լոյսն եմ»: Խորքին մէջ, Յիսուս «դեռ աշխարհի մէջ եմ» ըսելով, ըսել կ'ուզէ որ տակաւին իր երկրորդ գալուստը տեղի չէ ունեցած, ինք աշխարհի մէջ է ու աշխարհին համար, կը գործէ մարդոց փրկութեան համար, եւ անդադար կերպով կ'երթայ «հրապարակները» եւ մարդիկը կը հրաւիրէ փրկութեան, բայց ժամանակ պիտի գայ երբ դուրս պիտի գայ այս աշխարհէն, այլ խօսքով՝ պիտի դադրի մարդիկը փրկութեան կանչելէն, եւ ատիկա պիտի ըլլայ իր երկրորդ գալուստին:

2.- «Դարձեալ պարսպ կեցած մշակներ տեսաւ»: «Դարձեալ» բառը ցոյց կու տայ որ միշտ ալ պիտի ըլլան մարդիկ որոնք կարիքը ունին լսելու փրկութեան հրաւերը: Մինչեւ ժամը 11-ը, այլ խօսքով՝ մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը կանխող անմիջական ժամանակաշրջանը,

մինչեւ վերջին օրն ու ժամը այս աշխատին, կրնանք եւ պէտք է հրաւիրենք մարդիկը Քրիստոսի այգիին մէջ աշխատելու, այլ խօսքով՝ Քրիստոսի մարմինին՝ եկեղեցիին անդամ դառնալու:

3.- «Պարապ կեցած մշակներ տեսաւ»: Այս բառերուն մէջ երեսուրօական հակասութիւն կայ: Այստեղ յիշուած մարդիկը մէկ կողմէ կը կոչուին «մշակներ», իսկ միւս կողմէ՝ «պարապ կեցած» կ'անուանուին: Խորքին մէջ սակայն, ո՛չ «պարապ կեցած» մարդոց կարելի է մշակ բառը գործածել, եւ ո՛չ ալ «մշակներուն» համար կարելի է «պարապ կեցած» բառերը գործածել: Ինչո՞ւ այս «պարապ կեցած» մարդոց համար «մշակ» բացատրութիւնը կը գործածուի: Յիշեցնելու համար մեզի, որ մարդիկ իրաւունք չունին պարապ եւ անգործ կենալու: Անոնք կոչուած են Աստուծոյ մշակները ըլլալու, Աստուծոյ այգիին մէջ աշխատանք տանելու: Եւ ոեւէ մարդ որ չ'աշխատիր Աստուծոյ այգիին մէջ՝ «պարապ կեցած» կ'անուանուի:

4.- «Տեսաւ»: Այս բառը որոշապէս կը պարզէ որ Քրիստոս կը տեսնէ այն մարդիկը որոնք ծոյլ նստած են եւ ոչինչ կ'ընեն իր փառքին համար, ինչպէս նաեւ կը տեսնէ անոնք՝ որոնք կ'աշխատին ու կը տփնին իր այգիին մէջ, իր ժողովուրդին փրկութեան համար: «Տեսաւ» բառը կը պարզէ որ ոչ մէկ բան կը վրիպի Աստուծոյ ուշադրութենէն: Ան կը տեսնէ ամէն բան եւ տեղեակ է ամէն բանէ:

5.- «Ինչո՞ւ ամբողջ օրը պարապ կեցեր էք հոս»»: Այս հարցումը բացայայտ կը դարձնէ Աստուծոյ արդար ընդվզումը այն անձերուն հանդէպ որոնք անհոգ կը գտնուին իրենց փրկութեան նկատմամբ: «Ամբողջ օրը» պարապ կեցեր էք»: Որքա՞ն մարդիկ կան որոնք «ամբողջ օրը», այլ խօսքով՝ իրենց ամբողջ կեանքը պարապ անցուցեր են, առա՛նց Աստուծոյ եւ առա՛նց աղօթքի: Աստուծոյ արքայութիւնը իրենց փրկութեան համար աշխատող մարդոց տեղն է: Ինքնիր փրկութեան հանդէպ անհոգ գտնուող մարդը տեղ պիտի չունենայ արքայութեան մէջ: Աստուած մի՛շտ կը գործէ (Յհ 5.17): ԶԱստուած սիրող մարդիկ իրենք եւս միշտ պէտք է գործեն:

6.- «Որովհետեւ մէկը չվարձեց մեզ»: Այս հաստատումը զգուշութեան պէտք է հրաւիրէ հաւատացեալներս: Նայինք մեր չորս դին. չկա՞ն արդեօք մարդիկ մեր անմիջական շրջանակին մէջ որոնք կարիք ունին լսելու Քրիստոսի փրկութեան հրաւերը եւ որոնց սակայն չենք խօսած ու չենք վկայած: Ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակը եթէ երբեք այսպիսի մարդիկ Յիսուսի դիմաց կանգնած եւ մեր ներկայութեան՝ ըսեն. «Մէկը չվարձեց մեզ»: Պիտի չամչնա՞նք: Ամօթի մէջ պիտի

չմնա՞նք: Պիտի չցաւի՞նք: Պիտի չուզէի՞նք խօսած ըլլալ անոնց, որպէսզի չմատնուէինք նման նեղ կացութեան:

Իւրաքանչիւր հաւատացեալ ամուր պէտք է հնչեցնէ Քրիստոսի փրկութեան ձայնը իր շրջապատին մէջ: Պէտք չէ առիթ փախցնէ վկայելու Յիսուսի համար: Փրկութեան հրաւերին ընդառաջած մարդը՝ նոյն այդ հրաւերը պէտք է ուրիշին ուղղէ: Փրկութեան աւետիսը պէտք չէ գերեզմանել մեր սրտին մէջ, գայն միայն մեզի համար պահելով: Գերեզմանուած բան մը կը դադրի աւետիս ըլլալէ: Բան մը որպէսզի աւետիս ըլլայ՝ պէտք է գայն տարածել, եւ տարածել ուրախութեամբ եւ ամենուրեք:

7.- «Մէկը չվարձեց մեզ»: Այս բառերուն մէջ ուրիշ հետաքրքրական իմաստ մըն ալ կայ: Զմոռնանք որ կալուածատերը՝ Քրիստոս, ի՞նքն է որ գտաւ այն մարդիկը որոնք «մէկը չվարձեց» զիրենք: Ի՞նչ ցոյց կու տայ այս իրողութիւնը: Տոյց կու տայ որ Յիսուս կը գտնէ այն մարդիկը՝ որոնց ոչ ոք կը փնտռէ: Փրկութեան կը կանչէ այն մարդիկը՝ որոնց ոչ ոք կը կանչէ: Յիշեցէ՛ք Բեթհեզդայի անդամալոյծին բժշկութեան դրուագը: Երբ Յիսուս անոր հարցուց. «Կուզե՞ս առողջանալ», ան պատասխանեց. «Տէ՛ր, մէկը չունիմ...» (Յհ 5:7): Յիսուս կրնար ուրիշին երթալ: Բայց ան գնաց եւ գտաւ անձ մը որ մէկը չունէր, անտէր ու անտիրական էր, մոռցուած ու անտեսուած էր: Այս նշմարտութիւնը կը յիշեցնէ մեզի որ մենք եւս նոյնը պէտք է ընենք: Պէտք է անտեսուած մարդո՛ց տեսութեան երթանք եւ ո՛չ թէ յաճախ այցելու ունեցողներուն: Պէտք է մոռցուածները յիշենք եւ ո՛չ թէ բոլորին կողմէ յիշուած մարդիկը:

8.- «Դուք ալ այգի գացէ՛ք եւ ինչ որ է ձեր իրաւունքը՝ պիտի ստանաք»: «Գացէ՛ք»: Աստուածային հրահանգ մըն է ասիկա որ իրեն հետ խոստում մը ունի՝ «Զեր իրաւունքը՝ պիտի ստանաք»:

Այս հաստատումը հրահանգ ու խոստում է միաժամանակ: Հրահանգ մը՝ երթալու եւ աշխատելու Աստուծոյ այգիին մէջ, եւ խոստում մը՝ որ աշխատողին պիտի տրուի իր արժանի իրաւունքը: Իսկութեան մէջ սակայն, Աստուած մեր իրաւունքէն աւելի՛ն կու տայ մեզի: Մէկ օրուայ աշխատանքի փոխարէն յաւիտենական կեանք ժառանգելը՝ մեր իրաւունքէն աւելի ստանալ չի՞ նշանակեր: Ժամանակաւոր այս կեանքով յաւիտենականը ձեռք ձգելը՝ մեր իրաւունքէն աւելի ստանալ չէ՞: Քիչ մը բարեբարութեան փոխարէն Աստուծոյ անհուն բարեբարութիւններուն տիրանալը՝ մեր իրաւունքէն աւելի ստանալ չի՞ սեպուիր:

«Երբ իրիկունն եղաւ, այգիին տէրը գործավարին ըսաւ.– "Կանչէ մշակները եւ իրենց օրականը տուր, վերջին եկողներէն սկսելով մինչեւ առաջինները": Անոնք որոնք ժամը հինգի առեւտները վարձուած էին, մէկական արծաթ դահեկան ստացան» (Մտ 20.8-9): Քանի մը մատնանշումներ.–

1.– «Այգիին տէրը»: Հոս յիշուած «այգիին տէրը» մեր երկնաւոր Հայրը ինքն է, իսկ գործավարը՝ դարձեալ Յիսուս ինքն է: Հետաքրքրական է որ «այգիին տէրը», այլ խօսքով՝ մեր երկնաւոր Հայրը ինքն չէ որ այգիին մէջ աշխատողներուն վարձքը կու տայ, այլ այդ պաշտօնը կամ իշխանութիւնը կը յանձնէ իր Որդիին: Ասիկա ուրիշ բան ցոյց չի տար եթէ ոչ այն, որ մեր երկնաւոր Հայրը ամէն դատաստան եւ դատելու ու վարձատրելու ամէն իշխանութիւն Որդիին տուած է: Յիսուս ինքն իսկ հաստատեց այս իրողութիւնը երբ ըսաւ. «Հայրը ոեւէ մէկը չի դատեր, այլ դատելու իշխանութիւնը ամբողջութեամբ յանձնած է Որդիին, որպէսզի բոլորն ալ պատուեն Որդին, ինչպէս որ Հայրը կը պատուեն» (Յհ 5.22):

2.– Այգիին տէրը գործավարին կը պատուիրէ կանչել տալ մշակները եւ գործավարը կանչել կու տայ: Այս գնմարտութիւնը մեզի բան մը պէտք է յիշեցնէ: Ե՞րբ կը կանչուին մշակները: Բնագիրը կ'ըսէ. «Երբ իրիկունն եղաւ»: Ի՞նչ պէտք է հասկնալ «երբ իրիկունն եղաւ» ըսելով: «Իրիկուն» բացատրութիւնը ժամանակներու աւարտին, եւ հետեւաբար, աշխարհի աւարտին կ'ակնարկէ: Աշխարհը հետզհետէ իր իրիկունին, իր աւարտին կը մօտենայ: Այդ իրիկունը ամբողջութեամբ վրայ հասած պիտի ըլլայ Քրիստոսի երկրորդ գալուստին. եւ ասիկա տեղի պիտի ունենայ մեր երկնաւոր Հօր կամքով ու հրամանով. այլ խօսքով, ժամանակներու աւարտին, մեր երկնաւոր Հայրը ի՛նքն է որ իր Որդիին պիտի ըսէ որ իր երկրորդ գալուստը կամ էջքը կատարէ դէպի աշխարհ. միշտ այս իրողութիւնն է որ կը բացայայտուի մեր դիմաց, երբ կը տեսնենք որ այգիին տէրը (մեր երկնաւոր Հայրը) ինքն է որ գործավարին (Որդիին) կը պատուիրէ կանչել մշակները եւ անոնց վարձքը տալ, այսինքն՝ իր երկրորդ գալուստը կամ էջքը կատարել եւ դատաստան ընել:

3.– Հետաքրքրական է նկատի առնել որ մեր երկնաւոր Հայրը ի՛նքն է որ իր Որդիին կը պատուիրէ իր երկրորդ էջքը կատարել դէպի աշխարհ եւ ո՛չ թէ Որդին ինք կամաւորաբար եւ իր Հօրմէն անկախ կը կատարէ այդ մէկը, ասով կարծէք ցոյց տալու մեզի որ «միայն Հայրը ի՛նքն է գիտէ ժամանակը աշխարհի կատարածին»: Ասիկա մեզի չի՞ յիշեցնէր մեր Տիրոջ խօսքը իր երկրորդ գալուստին վերաբերեալ. «Ո՛չ ոք գիտէ թէ ե՛րբ

պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ ալ Որդին, բայց միայն՝ Հայրը» (Մտ 24.36): «Ո՛չ ալ Որդին» բառերը բնականօրէն բառացիօրէն չենք հասկնար, որովհետեւ Որդին ինքն ալ գիտէ իր երկրորդ գալստեան ժամանակը. Յիսուս միայն իր մարդեղութեանը մէջ, այլ խօսքով, իբրեւ մարդ՝ չի գիտեր, բայց իբրեւ Աստուած՝ գիտէ: Երբ կ'ըսենք. «Իբրեւ մարդ՝ չի գիտեր», այս խօսքը միայն Տիրոջ համար պէտք չէ հասկնալ, այլ նաեւ ու մանաւանդ մեզի համար, որովհետեւ մարդիկը իրենք չեն գիտեր եւ պէտք չէ գիտնան թէ ե՛րբ տեղի պիտի ունենայ աշխարհի կատարածը: Աստուծոյ կամքը չէ որ մարդիկ գիտնան այդ մէկը, եւ ասիկա Յիսուս ինք բացայայտեց երբ ըսաւ. «Դուք չէք կրնար գիտնալ ժամերն ու ժամանակները, որ Հայրը իր իշխանութեամբ որոշած է» (Գրծ 1.7): Միշտ ալ աշխատանք տարուած է, յատկապէս Եհովայի վկաներուն կողմէ, գիտնալու թէ ե՛րբ աշխարհը իր աւարտին պիտի հասնի: «Ո՛չ ալ Որդին» բառերը անուղղակի կոչ մըն են մարդոց չհետաքրքրուելու աշխարհի կատարածով, եւ միայն ջանալ պատրաստ ըլլալու Տիրոջ երկրորդ գալուստին:

4.- Յիշենք նաեւ, որ որոշ մեկնիչներ «իրիկուն» բացատրութեամբ կը հասկնան մարդ արարածին կեանքին իրիկունը, այլ խօսքով, երբ մարդուն կեանքը իր իրիկունին՝ իր աւարտին մօտենայ, մարդը կը մահանայ եւ կը կանչուի Տիրոջ կողմէ իր վարձատրութիւնը ստանալու համար: Այս բացատրութիւնը հաւանական չի թուիր, որովհետեւ առակը մեզի կը խօսի տարբեր-տարբեր ժամանակներուն Տիրոջ կողմէ կանչուած եւ Տիրոջ այգիին մէջ գործած մարդոց մասին, որոնք սակայն բոլորը միաժամանակ կանգ կ'առնեն գործելէ եւ կը մօտենան գործավարին՝ իրենց հատուցումը ստանալու համար. ասիկա ինքնին ցոյց կու տայ որ «իրիկուն» բացատրութիւնը ակնարկութիւն է Տիրոջ երկրորդ գալուստին եւ աշխարհի կատարածին, որովհետեւ միայն ա՛յն ատեն է որ գործելու ժամանակը պիտի վերջանայ եւ Տիրոջ այգիին մէջ աշխատողները բոլորը միաժամանակ պիտի դադրին գործելէ եւ մօտենան Դատաւորի գահին՝ վարձատրութիւն ստանալու համար:

5.- «Վերջին եկողներէն սկսելով մինչեւ առաջինները»: Ինչո՞ւ վարձատրութիւնը վերջին եկողներէն սկսելով կը հասնի մինչեւ առաջին եկողներուն: Պէտք չէ՞ որ երկա՛ր ժամանակի վրայ աշխատողները նախ իրենք գան եւ վարձատրութիւն ստանան: Գտնելու համար այս հարցումին ճշգրիտ պատասխանը, պէտք է նկատի առնել որ Յիսուսի նպատակը հրեաներուն սորվեցնելն էր, որ իրենք Աստուծոյ կողմէ վարձատրութիւն պիտի չստանան, պարզապէս անոր համար որ ամենէն առաջ կանչուածները եղան: Առաջին անգամ կամ ամէն մարդէ առաջ

կանչուած ըլլալը՝ մեզ վարձատրուողներու առաջին շարքին վրայ չի դնել:

Խորքին մէջ, մէկը միւսէն առաջ վարձատրելու հարց չկայ: Ըլլա՛յ առաւօտ կանուխ եկողները, ըլլա՛յ ժամը 11-ին եկողները, բոլորը միասին պիտի վարձատրուին. այս մասին է որ Պօղոս առաքեալ կը խօսի երբ կ'ըսէ. «Մեզմէ անոնք որոնք ողջ մնացած կ'ըլլան Տիրոջ գալուստին ատեն, մեռածներէն առաջ պիտի չանցնին: Որովհետեւ երբ հրամանը լսուի, հրեշտակապետը ազդարարէ եւ Աստուծոյ փողը հնչէ, Տէրը ինք երկինքէն պիտի իջնէ, եւ նախ յարութիւն պիտի առնեն անոնք՝ որ Քրիստոսի հաւատացիին եւ մեռան: Եւ ապա, **մեզմէ անոնք որ այն ատեն դեռ ողջ պիտի ըլլան՝** անոնց հետ միասին ամպերու վրայ երկինք պիտի յափշտակուին Տէրը դիմաւորելու համար. եւ այնուհետեւ Տիրոջ հետ միասի պիտի ըլլանք յաւիտեան» (Ա.ԹԿ 4.15-17):

«Մեզմէ անոնք որ այն ատեն դեռ ողջ պիտի ըլլան»: Կրնանք ըսել որ Տիրոջ երկրորդ գալուստին, եւ ուստի՝ աշխարհի կատարածին ողջ եղող հաւատացեալները՝ ժամը 11-ին եկողներն են: Այս ողջ եղողներուն վերաբերեալ է որ առաքեալը կ'ըսէ թէ «մեռածներէն առաջ պիտի չանցնին»: Ճիշդ հոս է որ կարծէք առակին մէջ ըսուածին է որ կու գանք: Ողջ եղողները (11-ին եկողները) մեռածներէն (առաւօտ կանուխ) եկողներէն առաջ պիտի չվարձատրուին, այլ՝ բոլորը միասին, որովհետեւ առաքեալը յստակօրէն կը բացատրէ, որ նախ հաւատով ննջածները յարութիւն պիտի առնեն, եւ ապա ողջ եղող հաւատացեալները անոնց պիտի միանան եւ «անոնց հետ միասին ամպերու վրայ երկինք պիտի յափշտակուին Տէրը դիմաւորելու համար»: Այս խօսքը արդէն բացորոշ կերպով ցոյց կու տայ, որ հաւատացեալներ մէկը միւսէն առաջ պիտի չվարձատրուին, այլ՝ բոլորը միասին:

Ինչպէս ըսի, եթէ երբեք այգիին տէրը կը պատուիրէ վարձատրութիւնը վերջին եկողներէն սկսիլ, ատիկա պարզապէս հրեաներուն ցոյց տալու համար է, որ իրենք բոլորէն առաջ եւ բոլորէն աւելի վարձատրուելու ակնկալութիւնը պէտք չէ ունենան, որովհետեւ ատիկա Աստուծոյ ծրագիրին մաս չի կազմեր:

6.- Հաւանաբար նաեւ, վարձատրութիւնը «վերջին եկողներէն» կը սկսի, ցոյց տալու համար ժամը 11-ին վարձուածներուն, որ իրենց փրկութիւնն ու վարձատրութիւնը կախեալ չէ իրենց երկա՛ր ժամանակի վրայ տարած աշխատանքէն, այլ՝ Աստուծոյ ճիշդ շնորհքէն: Յովհաննէս Երզնկացիին կը հաստատէ թէ վարձատրութեան սկսիլը «վերջին եկողներէն՝ Աստուծոյ ողորմութիւնն է որ կը յուշէ»:

7.- «Անոնի օրոնի ժամը հինգի ատենները վարձուած էին, մէկական արծաթ դահեկան ստացան»: Ասկէ առաջ բացատրուեցաւ որ մէկ արծաթ դահեկանը կը խորհրդանշէ փրկութիւնը: Հոս ըսելու գուածը այն է, որ ժամը 5-ին (մեր ժամով 11-ին) վարձուածները, եւ առաւօտ կանուխ վարձուածները, այլ խօսքով՝ իրենց կեանքի առաջին տարիներէն դարձի եկողները, կամ իրենց կեանքի վերջին տարիներուն դարձի եկողները՝ բոլորը միեւնոյն մէկ արծաթ դահեկանը պիտի ստանան, այլ խօսքով՝ միեւնոյն փրկութեան պիտի տիրանան:

«Առաւօտեան վարձուածներուն կարգը որ եկաւ, կը կարծէին թէ աւելի պիտի ստանան բայց անոնք ալ մէկական արծաթ դահեկան ստացան: Երբ օրականը առին, սկսան տիրոջ դէմ տրտնջալ, ըսելով.՝ «Վերջին եկողները միայն մէկ ժամ աշխատեցան, մինչ մենք ամբողջ օրը արեւուն տակ աշխատեցանք. հակառակ ասոր, դուն մեզ անոնց հաւասար նկատեցիր»» (Մտ 20.10-12): Քանի մը մատնանշումներ.՝

1.- Որո՞նք կը պատկերացնեն առաւօտուն վարձուածները: Անոնք կը պատկերացնեն հրեայ ժողովուրդը: Անոնք առաւօտուն վարձուեցան այն իմաստով որ անոնք ամենէն կանուխ եւ ամենէն առաջ կանչուած ժողովուրդը եղան Հին Կտակարանի մէջ, իսկ Նոր Կտակարանի մէջ ալ, ամենէն առաջ անոնց էր որ Աւետարանին պատգամը ուղղուեցաւ:

2.- «Կը կարծէին թէ աւելի պիտի ստանան»: Երկու ձեւով կարելի է հասկնալ «աւելի պիտի ստանան» բառերը: Մէկ կողմէ ցոյց կու տան որ հրեաները կը կարծէին եւ այն համոզումը ունէին որ Խոստացեալ Մեսիային բերելիք փրկութիւնը յատուկ էր միայն իրենց, իսկ միւս կողմէ, «աւելի պիտի ստանան» բառերը կը պարզեն որ հրեաները իրենք գիշտէինք բանով մը աւելի՛ կը կարծէին քան ուրիշները, եւ ուստի, ըստ իրենց, իրենք ուրիշներէն աւելի պէտք էր վարձատրութիւն ստանային:

3.- «Բայց անոնք ալ մէկական արծաթ դահեկան ստացան»: Այո՛, հրեաները իրենք եւս մէկ եւ նոյն արծաթ դահեկանը, այլ խօսքով՝ մէկ եւ նոյն փրկութիւնն էր որ ստացան հեթանոսներուն հետ միասին: Անոնք կը կարծէին որ իրենք յատուկ առանձնաշնորհումներ պիտի ունենան իբրեւ Աստուծոյ «ընտրեալ ժողովուրդը», բայց Քրիստոս իր վերաբերմունքովը անոնց հանդէպ եւ իր պատգամներով, ցոյց տուաւ անոնց որ Աստուած փրկութեան միեւնոյն ծրագիրը ունի թէ՛ իրենց եւ թէ՛ հեթանոս աշխարհին համար:

4.- «Երբ օրականը առին, սկսան տիրոջ դէմ տրտնջալ»: Եթէ երբեք մէկ արծաթ դահեկանը փրկութիւնն է որ կը պատկերացնէ, ինչպէս վերեւ բացատրուեցաւ, այս պարագային, ի՞նչպէս պէտք է հասկնալ առաւօտուն վարձուած մշակներուն տրտնջալը: Ի՞նչպէս կը տրտնջան եւ

իրենք փրկութիւնն է որ կը ստանան, կամ ի՞նչպէս կը տրտնջան եւ իրենք կը հրաւիրուին արծաթ դահեկանը, այլ խօսքով՝ Քրիստոսի պատկերն ու նմանութիւնը ունենալու: Այստեղ Քրիստոս հրեայ ժողովուրդին մասին կ'ուզէ բան մը սորվեցնել մեզի:

Ըսինք, որ անոնք կը կարծէին որ փրկութիւնը միայն իրենց յատուկ է, բայց երբ տեսան որ փրկութիւնը նաեւ ուրիշներուն կը տրուի՝ սկսան տրտնջալ, առարկելով որ իրենք «ամբողջ օրը արեւուն տակ աշխատեցան», մինչդեռ «վերջին եկողները միայն մէկ ժամ աշխատեցան»: Խորքին մէջ, «տրտունջք» բառին գործածութեամբ, Յիսուս հրեաներուն այլամերժ ըլլալն է որ կ'ուզէ բացայայտել:

Հրեաներ փրկութիւնը միայն իրենց իրաւունքը կը սեպէին, եւ ուստի՝ փրկութիւնը ուրիշին տալ՝ կարծէք իրենց իրաւունքը յափշտակել կը նշանակէր, եւ ատիկա բնականօրէն տրտունջքի ալիք մը յառաջ կը բերէր անոնց մօտ: Յիշեցէք անառակ որդիին առակը: Հոն յիշուած կրտսեր գաւակը կը ներկայացնէ հեթանոսները, իսկ երէց գաւակը՝ հրեաները: Երբ երէց գաւակը ագարակէն դարձաւ, «երգի ու պարի ձայներ լսեց» (Ղկ 15.25), եւ հարց տուաւ ծառաներուն թէ ի՞նչ է պատահածը: Երբ իմացաւ որ իր կրտսեր եղբայրը տուն դարձեր է եւ իրեն համար պարարտ հորթը (խորհրդանիշ Քրիստոսի) մորթուեր է, բարկացաւ, նախանձով լեցուեցաւ, տրտունջքի ալիք բարձրացուց եւ մերժեց տուն մտնել: Ինչո՞ւ տրտնջաց: Տրտնջաց, որովհետեւ հրեաները չէին կրնար հաւատալ եւ չէին կրնար ընդունիլ որ հեթանոսները իրենց հետ միասին մասնակից դառնան արքայութեան խրախնամքին եւ ուրախութեան:

5.- Մեկնիչ մը խօսելով «տրտնջալ» բացատրութեան մասին՝ կ'ըսէ. «Հրեաները նախանձի պատճառով էր որ տրտնջացին, որովհետեւ, թէպէտ իրենք առին «արծաթ դահեկան»ի իրենց իրաւունքը, բայց նեղուեցան ու տրտմեցան երբ տեսան որ իրենց եղբայրները եւս նոյն վարձքը առին: Այլ բացատրութեամբ, անոնք չնեղուեցան որովհետեւ բանէ մը գրկուեցան, այլ նեղուեցան այն բարիքին համար որ ուրիշներ ստացան»:

6.- «Վերջին եկողները միայն մէկ ժամ աշխատեցան»: Ուշագրաւ է «առաւօտեան վարձուածներուն» անտարբերութիւնը ժամը հինգին վարձուած մշակներուն հանդէպ: Այստեղ երկու կէտ պէտք է նկատի առնել.--

ա.- Դիտեցէք գանոնք ներկայացնելու իրենց կերպը՝ «վերջին եկողները»: Այս բառերը կը պարզեն որ հրեաներուն համար բոլոր մարդիկը «վերջին եկողներ» կը նկատուին, այլ խօսքով՝ բոլորովին

երկրորդական, բոլորովին մոռացութեան եւ անտեսումի արժանի. բան մը՝ որ յետո՛յ աւելցած է, ե՛տքը եկած է, եւ ուստի՝ կարծէ՛ք կարեւորութիւն չի ներկայացնէր, առաջիններուն հետ չի կրնար հաւասարիլ կամ հաւասար նկատուիլ, եւ եթէ նկատուի՝ տրտունջֆի ալիք կը բարձրացնեն:

բ.– Հետաքրքրական է իրենց խօսքը վերջին ժամուն եկողներուն վերաբերեալ՝ «միայն մէկ ժամ աշխատեցան»: Այս խօսքին մէջ ուրիշին կատարած աշխատանքը, մանաւանդ, փրկութեան համար կատարած աշխատանքը ստորագնահատելու ոգի մը կայ: «Միայն մէկ ժամ աշխատեցան» խօսքը, համագօր է ըսելու՝ «Անոնք բան մը չըրին. անոնք ոչինչ ըրին իրենց փրկութեան համար»: Եւ իսկապէս ալ, հրեաները երբեք չէին գիտեր գնահատել ուրիշին արժանիքները, կարողութիւնները, իրենց փրկութեան համար տարած աշխատանքները: Որքան ալ մարդիկ շատ աշխատին, հրեաներուն համար անիկա «միայն մէկ ժամուայ» աշխատանք կը սեպուի, այլ խօսքով՝ ոչինչ աշխատանք, պարապ աշխատանք:

7.– «Մինչ մենք ամբողջ օրը արեւուն տակ աշխատեցանք»: Ըստ հրեաներուն, ուրիշները «միայն մէկ ժամ աշխատեցան», իսկ իրենք՝ «ամբողջ օրը արեւուն տակ աշխատեցան»: Այս խօսելակերպը ուրիշ բան չէ եթէ ոչ՝ ուրիշը ստորագնահատել եւ իրենց անձերը գովել, ուրիշը գետին զարնել եւ իրենք գիրենք բարձրացնել: Այսպիսիները ուրիշին կատարած հսկայ գործը չնչին կը տեսնեն, իսկ իրենց կատարած չնչին գործը՝ հսկայ:

8.– Միաժամանակ, «ամբողջ օրը արեւուն տակ աշխատեցանք» բառերը ակնարկութիւն են կեանքի ու ժամանակներու բոլոր այն դժուարին հանգրուաններուն որմէ անցան հրեաները Հին Կտակարանի ընթացքին: Անոնք «ամբողջ օրը», այլ խօսքով՝ երկա՛ր ժամանակ աշխատեցան: Անոնք «արեւուն տակ», այսինքն՝ Մովսիսական օրէնքներու դժնդակ ու դժուարին պայմաններուն տակ գործեցին ու ապրեցան:

9.– «Հակառակ ասոր, դուն մեզ անոնց հաւասար նկատեցիր»: Քրիստոս խտրութիւն չի դնէր մարդոց միջեւ: Բոլոր անոնք որոնք իրեն կու գան՝ կ'ընդունի գիրենք: Մեր Տիրոջ խօսքն ու խոստումը՝ «Ինձի եկողը պիտի չմերժեմ» (Յհ 6.37) բոլորին կը պատկանի եւ ո՛չ թէ միայն հրեաներուն:

10.– «Մեզ անոնց հաւասար նկատեցիր»: Այստեղ գործածուած «հաւասար» բառը չի նշանակէր որ բոլոր փրկուած մարդիկը իրարու հաւասար փառք ու փայլք, շքեղութիւն ու փառաւորութիւն պիտի

ունենան: Խօսքը վարձատրութեան (փառքի, փայլքի, շքեղութեան, փառաւորութեան) հաւասարութեան մասին չէ, այլ՝ փրկութեան հաւասարութեան մասին: Հետեւաբար, «հաւասար» բառը փրկութեան համար գործածուած է, այլ խօսքով՝ բոլոր հաւատացեալները իրենց փրկութեամբ հաւասար են, այսինքն՝ մէկ եւ նոյն փրկութիւնն է որ կը ստանան, բայց ո՛չ մէկ եւ նոյն վարձատրութիւնը:

«Կալուածատէրը անոնցմէ մէկուն պատասխանեց, ըսելով.՝ «Բարեկա՛մ, ես քեզ չգրկեցի, դուն մէկ արծաթ դահեկանով չհամաձայնեցա՞ր ինձի հետ. ա՛ն օրականդ ու գնա՛: Ես վերջին եկողներուն ալ քու առածիդ չափ կ'ուզեմ տալ. ես իրաւունք չունի՞մ դրամս ուզածիս պէս գործածելու. կամ կը նախանձի՞ս որ ես այդպէս առատաձեռն եմ» (Մտ 20.13-15): Քանի մը մատնանշումներ.՝

1.- Վերել տեսանք «առաւօտեան վարձուածներուն» անտարբերութիւնը ժամը հինգին վարձուած մշակներուն հանդէպ, տեսանք թէ ինչպէս զանոնք կոչեցին՝ «վերջին եկողները», ինչպէս նաեւ «միայն մէկ ժամ աշխատողներ», բայց կալուածատէրը՝ Քրիստոս, յարգալից կերպով խօսեցաւ անոնց հետ՝ զանոնք կոչելով «բարեկամ»: Հոսկէ կը սորվինք, թէ մենք պէտք է վերաբերինք մարդոց հետ այնպէս ինչպէս Աստուած ի՛նք մեզի հետ կը վերաբերի: Պէտք չէ մարդիկը թշնամի կոչենք երբ անդին Աստուած մեզ «բարեկամ» կը կոչէ:

2.- «Բարեկա՛մ»: Երբ կալուածատէրը՝ Յիսուս, «բարեկամ» կ'անուանէ առաւօտուն վարձուածները (հրեաները), խորքին մէջ, իրեն հետ բարեկամ ըլլալու կո՛չ է որ կ'ուղղէ անոնց: Կարծէք Յիսուս ըսել կ'ուզէ անոնց. «Զիս թշնամի մի՛ նկատէք: Ես ձեզի բարեկամ եմ: Բարեկամութեան ձեռք կ'երկարեմ ձեզի: Եկէք հաշտուիմք: Եկէք ընկերակցութիւն հաստատենք մեր միջեւ»: Հրեաները սակայն չէին կրնար բարեկամ նկատել այնպիսի մէկը որ Աստուծոյ փրկութեան պատգամը կ'ուղղէր նաեւ ուրիշներուն, օտար ազգերուն:

3.- Վարձուածները մշակներ էին. եթէ կալուածատէրը ուզէր զիրենք «ծառայ» կամ «ստրուկ» կոչել՝ կրնար եւ իրաւունք ալ ունէր, բայց նայեցէ՛ք մեր Տիրոջ քաղցր վերաբերմունքին: Ան իր ծառաները «բարեկամ» կը կոչէ: Քրիստոսի կողմէ գործածուած «բարեկամ» բառը, ցոյց կու տայ թէ ան կը փափաքէ որ մեր եւ իր յարաբերութիւնը ըլլայ երկու անկեղծ բարեկամներու յարաբերութիւն, հայր եւ որդիի յարաբերութիւն, հաւատարիմ եւ զիրար սիրող ընկերներու յարաբերութիւն, եւ ո՛չ թէ տէր եւ ծառայի յարաբերութիւն, կամ իշխանի եւ ստրուկի յարաբերութիւն:

4.- «Բարեկա՛մ, ես քեզ չգրկեցի»: Արդարեւ, Յիսուս չգրկեց հրեաները իրենց իրաւունքէն: Եթէ իրենց իրաւունքն էր որ առաջին անգամ Աստուծոյ փրկութեան պատգամը իրե՛նց ուղղուէր՝ Յիսուս յարգեց իրենց այդ իրաւունքը, եւ առաջին անգամ նախ իրե՛նց ուղղեց այդ պատգամը (Մտ 10.5-6):

5.- «Ես քեզ չգրկեցի, դուն մէկ արծաթ դահեկանով չհամաճայեցա՞ր ինծի հետ»: Այս հաստատումը կը յիշեցնէ մեզի այն համաճայնութիւնը զոր Աստուած կնքեց Իսրայէլի ժողովուրդին հետ, ըստ որուն, եթէ ժողովուրդը մինչեւ վերջ հնազանդէր Աստուծոյ եւ աշխատէր Քրիստոսի այգիին մէջ՝ իրեն պիտի պարգեւուէր խոստացեալ վերին Երուսաղէմը՝ Աստուծոյ արքայութիւնը:

6.- «Դուն մէկ արծաթ դահեկանով չհամաճայեցա՞ր ինծի հետ»: Իսկութեան մէջ, կալուածատիրոջ այս հարցումը ուղղուած առաւօտուն վարձուած մշակներուն, կու գար յիշեցնելու հրեաներուն որ իրենք մոռցան եւ անտեսեցին այն համաճայնութիւնը զոր իրենց հայրերը կնքած էին Աստուծոյ հետ:

Հետեւաբար, «չհամաճայեցա՞ր» հարցումով, կարծէք Յիսուս ըսել կ'ուզէ. «Ո՛վ հրեաներ, ո՞ւր է ձեր համաճայնութիւնը: Ո՞ւր է Աստուծոյ այգիին մէջ աշխատելու ձեր խոստումը: Զհամաճայեցա՞ք ինծի հետ, ուստի՝ ինչո՞ւ կը մոռնաք ձեր համաճայնութիւնը: Զխոստացա՞ք, ինչո՞ւ չէք կատարեր ձեր խոստումը»:

7.- «Ա՛ն օրականդ ու գնա՛»: Այս խօսքը ուղղուած «առաւօտ կանուխ» վարձուած հրեաներուն, կոչ մըն է Յիսուսի կողմէ ուղղուած անոնց՝ գոհանալու իրենց տրուած փրկութեամբ, եւ բարկութիւն չցուցաբերելու Աստուծոյ հանդէպ՝ պարզապէս որովհետեւ գթութիւն յայտնաբերեց տարբեր ժամանակներու ընթացքին՝ տարբեր ազգերէն դարձի եկողներուն հանդէպ: Այդ «գնա՛» հրամանով, Յիսուս կը հասկցնէ հրեաներուն որ միջամուխ չըլլան Աստուծոյ գործին ու գործելակերպին:

8.- «Ես վերջին եկողներուն ալ քու առածիդ չափ կ'ուզեմ տալ»: Կրկնութեան գնով, ըսեմք, որ այս խօսքը եւս ուրիշ բան ցոյց չի տար եթէ ոչ այն՝ որ վերջին եկողները եւ առաջին եկողները նոյն արծաթ դահեկանը, այլ խօսքով՝ նոյն փրկութիւնը պիտի ստանան, բայց հարկաւ նոյն վարձատրութիւնը պիտի չստանան, եւ ասիկա մենք բացատրեցինք մեր խօսքին սկիզբը:

9.- «Ես իրաւունք չունի՞մ դրամս ուզածիս պէս գործածելու»: Այս հարցումը կը պարզէ որ մարդոց փրկութիւնն ու վարձատրութիւնը

կախեալ չէ իրենց ցիւղէն ու ջանքէն, իրենց յամառ ու երկա՛ր շունչի վրայ տարած աշխատանքէն, այլ՝ Աստուծոյ ձրի շնորհքէն:

«Իրաւունք չունի՞մ»: Այո՛, Աստուած իրաւունք ունի՛: Ան բացարձակ Տէրն է ամէ՛ն բանի, ամէ՛ն որոշումի: Աստուած իր դրամը իր ուզածին պէս կրնայ գործածել, այլ բացատրութեամբ, իր փրկութիւնը որո՞ւ որ ուզէ՛ կը պարգեւէ, որո՞ւ որ չ՛ուզեր՝ չի պարգեւեր:

Մարդիկ իրենք չէ որ պիտի որոշեն եթէ երբեք իրենք արժանի են փրկութեան թէ ոչ: Հրեաները ինկան այս սխալին մէջ: Իրե՛նք է որ որոշած էին թէ արժանի են փրկութեան եւ ուստի պէ՛տք է որ փրկուին: Բայց Յիսուս «ես իրաւունք չունի՞մ դրամս ուզածիս պէս գործածելու» բառերով, հասկցուց իրենց, որ ասիկա ի՛ր, եւ միայն ի՛ր իրաւունքն է որոշել: Միայն ի՛նք կրնայ որոշել թէ ո՛վ կրնայ փրկուիլ եւ ով չի՛ կրնար փրկուիլ:

10.– «Կամ կը նախանձի՞ս որ ես այդպէս առատաձեռն եմ»: Իսկապէս ալ, հրեաներու նախանձը գրգռուեցաւ երբ տեսան որ խոստացեալ Մեսիան առատաձեռնութիւն ու շնորհք, ողորմութիւն ու բարեբարութիւն կը ցուցաբերէ ո՛չ միայն իրենց հանդէպ, այլ նաեւ հեթանոսներուն հանդէպ:

Այս նշմարտութիւնը առաւել ուժգնութեամբ կը գտնենք անառակ որդիին առակին մէջ, որուն վերաբերեալ վերեւ անդրադարձայ: Հայր մը երկու որդիներ ունէր: Կրտսեր որդին հեթանոս աշխարհն է որ կը ներկայացնէ, իսկ երէց որդին՝ հրեաները: Առակին մէջ կը տեսնենք, թէ ինչպէս երէց որդին, որ կը ներկայացնէ հրեաները, յատկապէս՝ Փարիսեցիները, նախանձով ու դառնութեամբ կը լեցուի եւ կը մերժէ տուն մտնել եւ մասնակցիլ այն խրախնամին որ կազմակերպուած էր իր կրտսեր եղբօր (որ կը ներկայացնէ հեթանոս աշխարհը) դարձի գալուն առիթով: Ասիկա ինքնին ցոյց չի՞ տար որ հրեաները նախանձով լեցուեցան երբ նկատեցին Քրիստոսի առատաձեռնութիւնը եւ անսակարկ սէրը բոլորին հանդէպ հաւասարապէս:

11.– «Կը նախանձի՞ս որ ես այդպէս առատաձեռն եմ»: Այս հաստատումը մեզի ուրիշ բան մըն ալ պէտք է յիշեցնէ: Ինչպէս Աստուծոյ առատաձեռնութիւնը շատերու նախանձը կը գրգռէ, այնպէս ալ որոշ մարդոց առատաձեռնութիւնը՝ կը գրգռէ այլ մարդոց նախանձը, եւ ասիկա բնական երեւոյթ դարձած է դժբախտաբար: Մէկը բարիք մը կը գործէ, յանկարծ կը տեսնենք որ ուրիշ մը անհանգիստ եղաւ: Երբ մեր բարի մէկ արարքը կը գրգռէ ուրիշը, կը նշանակէ թէ այդ «ուրիշը» չար մէկն է եւ թշնամի բարիին: Բարի մարդիկ կատարուած բարի արարքներուն համար կ'ուրախանան եւ ո՛չ թէ կը տրտմին:

«Եւ Յիսուս եզրակացուց.-- "Այսպէս ալ, անոնք որոնք հիմա վերջին են՝ առաջին պիտի ըլլան, եւ առաջին եղողները՝ վերջին: Որովհետեւ կանչուածները շատ են, բայց ընտրուածները՝ քիչ"» (Մտ 20.16): Երեւ մատնանշումներ.--

1.- «Անոնք որոնք հիմա վերջին են՝ առաջին պիտի ըլլան, եւ առաջին եղողները՝ վերջին: Այս խօսքով, Յիսուս կ'ուզէ ցոյց տալ, թէ հրեաները, մանաւանդ՝ օրինապահ Փարիսեցիները, որոնք իրենք գիրենք ամէն բանի մէջ առաջինը կը կարծեն եւ առաջին ըլլալը իրենց իրաւունքը կը սեպեն՝ «վերջին պիտի ըլլան»:

Որո՞նք են վերջին եղողները, որ առաջին պիտի ըլլան: Անոնք երկու խումբ են.--

ա.- Անոնք այն հրեաներն են որ օրէնքը չեն գիտեր, բայց մանաւանդ, անոնք մաքսաւորներն ու շնուփիւն ընողներն են:

Փարիսեցիներուն համաձայն մեծագոյն մեղքերն էին մաքսաւոր կամ պոռնիկ ըլլալը: Ըստ իրենց, մաքսաւոր կամ պոռնիկ եղողին համար չկա՛ր փրկութիւն: Բայց Յիսուս եկաւ անոնց ըսելու. «Մաքսաւորներն ու պոռնիկները պիտի կանխեն ձեզ եւ ձեզմէ առաջ պիտի մտնեն Աստուծոյ արքայութիւնը» (Մտ 21.31): Այս իմաստով, մաքսաւորներն ու պոռնիկները որոնք վերջին էին՝ եղան առաջին, եւ Փարիսեցիները որոնք առաջին էին՝ եղան վերջին:

Տեղին է յիշել Սիմոն Փարիսեցին որ ինքզինք արդար մէկը կը սեպէր: Իր իսկ տան մէջ եւ իր իսկ աչքերուն դիմաց տեղի ունեցաւ փրկութիւնը պոռնիկ կնոջ մը (Ղկ 7.36-38): Այս օրինակը ամենայն յստակութեամբ ցոյց չի՞ տար թէ անոնք որոնք վերջին էին՝ եղան առաջին, եւ անոնք որոնք առաջին էին՝ եղան վերջին:

Ղուկասու Աւետարանին 18-րդ գլուխին մէջ յիշուած Փարիսեցիին եւ մաքսաւորին առակը եւս ցոյց չի՞ տար որ ինքզինք առաջին կարծողը՝ վերջին պիտի ըլլայ, եւ ինքզինք վերջին կարծողը՝ առաջին: Ինքզինք արդար համարող Փարիսեցին՝ յանցապարտ տուն գնաց, իսկ ինքզինք յանցապարտ համարող մաքսաւորը՝ «արդարացած տուն գնաց»:

Յովհաննէսի Աւետարանին 8-րդ գլուխին սկիզբը կը կարդանք շնութեան մէջ բռնուած կնոջ մասին որ Յիսուսի բերուեցաւ Օրէնքի ուսուցիչներուն եւ Փարիսեցիներուն կողմէ: Փարիսեցիները գայն փարկոծելու ակնկալութեամբ ու ախորժակով եկան, բայց Յիսուս պաշտպանե՛ց մեղաւոր կինը, տէ՛ր կեցաւ անոր, քանի՛ց անոր մեղքերը եւ ազա՛տ արձակեց: Փարիսեցիները մեղապարտ մեկնեցան, իսկ մեղաւոր կինը՝ սրբուած ու արդարացած տուն գնաց: Հոս եւս կը տեսնենք թէ

ինչպես վերջին եղողները կրնան առաջին ըլլալ, եւ առաջին եղողները՝ վերջին:

բ.– Անոնք հեթանոսներն են: Օրինապահ հրեաներուն կողմէ «վերջին» նկատուած հեթանոսները՝ Քրիստոսի հայեացքով առաջին ըլլալու կոչուած մարդիկ էին եւ ե՛ն: Քրիստոս իր փրկութեան եւ Աստուծոյ արքայութեան աւետիսը ուղղեց բոլոր ժողովուրդներուն. «Գացէ՛ք եւ բոլոր ժողովուրդները ինծի աշակերտ դարձուցէ՛ք» (Մտ 28.19), իր կամքն էր որ փրկութեան պատգամը քարոզուէր ինչպէս Երուսաղէմի եւ ամբողջ Հրեաստանի մէջ, այնպէս ալ «Սամարիայի մէջ, եւ մինչեւ աշխարհի ծայրամասերը» (Գրծ 1.8), եւ ճիշդ ասիկա՛ էր որ գրգռեց հրեաները, որովհետեւ ըստ իրենց՝ միայն իրե՛նց կը պատկանէր Աստուծոյ արքայութեան աւետիսը:

Հրեաները երբեք փրկութեան արժանի չէին նկատեր հեթանոս աշխարհը, բայց տարբե՛ր էր Աստուծոյ ծրագիրը, որ ուրիշ բան չէր եթէ ոչ դադրեցնել հրեաները իր «ընտրեալ ժողովուրդը» ըլլալու պատիւէն, եւ այդ պատիւը տալու բոլոր անոնց՝ որոնք Քրիստոսը պիտի ընդունէին: Այո՛, Աստուծոյ ծրագիրն էր աշխարհի բոլոր ժողովուրդներէն իրեն համար նո՛ր ժողովուրդ մը կազմել, հնագա՛նդ ժողովուրդ մը, իր կամքը կատարո՛ղ ժողովուրդ մը, աստուածպետական դրութեամբ ղեկավարուող ժողովուրդ մը:

2.– Որովհետեւ կանչուածները շատ են, բայց ընտրուածները՝ քիչ»: Ի՞նչպէս պէտք է հասկնալ «ընտրուած» բառը: Արդե՞օք այս բառը կը նշանակէ որ Աստուած սկիզբէն կ'ընտրէ եւ կ'որոշէ թէ որո՛նք պիտի փրկուին եւ որո՛նք՝ ոչ: «Ընտրուած» բառը երբեք «նախասահմանութիւն» իմաստը չունի: Աստուած բնա՛ւ սկիզբէն չ'որոշեր թէ որո՛նք պիտի փրկուին եւ որո՛նք՝ ոչ:

«Կանչուածները շատ են» խօսքը կը պարզէ որ Աստուծոյ փրկութեան պատգամը ուղղուած է բոլոր մարդոց անխտիր: Պօղոս առաքեալ կը հաստատէ թէ «այդ է բարին եւ այդ կը փափաքի Աստուած, մեր Փրկիչը, որ կ'ուզէ որ բոլոր մարդիկը փրկուին եւ հասնին նշմարտութեան ճանաչումին...» (Ա.Տմ 2.3-4): Ասոր նման շատ համարներ կան որոնք կը փաստեն որ Աստուծոյ կամքն է «որ բոլոր մարդիկը փրկուին»: Եթէ Աստուած սկիզբէն որոշած ըլլար թէ որո՛նք պիտի փրկուին եւ որո՛նք՝ ոչ, այդ պարագային, մենք նման համարներ պէտք չէր գտնէինք Աստուածաշունչին մէջ:

Հետեւաբար, դարձեալ հարց կու տանք, ի՞նչպէս պէտք է հասկնալ «ընտրուած» բառը: Ո՞վ որու կ'ընտրէ: Աստուած մեզ կ'ընտրէ, թէ՛ մենք գի՛նք կ'ընտրենք: Նախ յիշենք որ փրկութեան նախաձեռնութիւնը

Աստուած ի՛նք կատարեց: Ի՛նք աշխարհ դրկեց իր Որդին մեր փրկութեան համար: Ի՛նք «իր Որդիին մահով մեզ իրեն հետ հաշտեցուց դեռ այն ատեն՝ երբ տակաւին թշնամի էինք իրեն» (Հո 5.10): Յստակ է հետեւաբար, որ Աստուած ի՛նք է որ մեզ կ'ընտրէ եւ ո՛չ թէ մենք՝ զինք:

Եթէ ըսենք. «Նախ մե՛նք է որ գԱստուած կ'ընտրենք, եւ յետո՛յ է որ Աստուած մեզ կ'ընտրէ», ըսած կ'ըլլանք, թէ փրկութեան նախաձեռնութիւնը, այլ խօսքով, փրկութեան առաջին քայլը մե՛նք է որ կ'առնենք եւ ո՛չ թէ Աստուած: Այսպիսի խօսք իր վտանգը ունի: Վտանգը այն է, որ մեր փրկութեան պատճառը մե՛նք է որ եղած կ'ըլլանք եւ ո՛չ թէ Աստուած. կարծէք մե՛նք է որ ճշդած կ'ըլլանք եթէ երբեք պէտք է փրկուինք, թէ՛ ոչ: Եւ եթէ այդպէս է, այդ պարագային, մեր փրկուած ըլլալու փառքն ու պատիւը մեզի՛ կ'երթայ եւ ո՛չ թէ Աստուծոյ:

Անմիջապէս մէկը կրնայ հարց տալ ըսելով. «Եթէ Աստուած է որ կը փրկէ եւ եթէ փրկութեան առաջին քայլը ի՛նք է որ կ'առնէ, այդ պարագային, ինչո՞ւ չի փրկեր բոլոր մարդիկը»: Պատասխանը հարցումին շատ պարզ է: Աստուած մեր փրկութեան եւ ամէն մարդու փրկութեան առաջին քայլը առաւ երբ իր Որդին գոհեց իսաչին վրայ մեր փրկութեան համար: Եկրորդ քայլը մե՛նք է որ պէտք է առնենք եւ ո՛չ թէ Աստուած: Ի՞նչ է երկրորդ քայլը: Երկրորդ քայլը Քրիստոսը մեր կեանքին մէջ ընդունիլն է իբրեւ Տէր ու Փրկիչ: Քրիստոս ինքզինք չի՛ պարտադրեր մեզի: Մեր կամքէն անկախ չի՛ գար մեր Տէրը ըլլալու: Մեր կամքին հակառակ չի՛ թագաւորեր մեր կեանքին ու սրտին մէջ: Աստուած չի՛ փրկեր մէկը որ չ'ուզեր ու կը մերժէ փրկուիլ: Աստուած երկինքը չի՛ պարգեւեր մէկու մը որ երբեք չէ հետաքրքրուած երկինքով: Մենք մեր ազատ կամքով պէտք է զինք հրաւիրենք մեր կեանքին մէջ, դառնալու կեանքը մեր կեանքին, լո՛յսն ու յո՛յսը մեր կեանքին:

Աստուած մեզ իր Որդիին իսաչով ընտրեց, հիմա մեզի կը մնայ զինք ընտրել՝ յանձնուելով եւ վստահելով իր Որդիին իսաչին:

3.- «Կանչուածները... ընտրուածները»: Վերջին կէտ մը այս երկու բառերուն մասին: Կանչուիլը՝ բոլորը կանչուած են, բայց ընտրուողները եւ փրկուողները միայն անոնք են՝ որոնք կ'ապրին Քրիստոսի կամքին համաձայն կեանք մը: Ի՞նչ կը յիշեցնէ մեզի այս ճշմարտութիւնը: Կը յիշեցնէ այն՝ որ չի բաւեր միայն անունով քրիստոնէայ ըլլալը, քրիստոնէական տունի մէջ ծնիլը, եկեղեցի յաճախելը, Աստուածաշունչ կարդալը, ողորմութիւն տալը, բարիք գործելը, այս բոլորը ընելը կրնան ցոյց տալ որ մենք «կանչուած» ենք, բայց ե՛րբեք ցոյց չեն տար որ «ընտրուած» ենք:

Ընտրուած մարդը Յիսուսի հետ ամենօրեայ սիրոյ յարաբերութեան մէջ եղող մարդն է, Յիսուսի կամֆը կատարողն է, Յիսուսի խօսքերուն հնազանդողն է, Սուրբ Հոգիով լեցուած եւ առաջնորդուող մարդն է:

Ամէն անգամ երբ Քրիստոսի գալու կոչ կ'ուղղուի ժողովուրդին, ասիկա ժողովուրդը «կանչել» է դէպի Քրիստոս, դէպի Փրկիչը, բայց «ընտրուիլը» ուրիշ բան է: Քրիստոսի մեր կանչուելէն կամ հրաւիրուելէն ետք՝ երբ կ'ընդառաջենք հրաւերին, ա'յն ատեն է որ «ընտրուած» կը սեպուինք:

Ի՞ՆՉՊԷՍ ՇԱՀԱՐԿԵԼ ԴՐԱՄԸ (Քանֆարները)

«Դարձեալ երկինքի արփայութիւնը պիտի նմանի հետեւեալին.–

Մարդ մը կար, որ երբ ուրիշ երկիր պիտի երթար, կանչեց իր ծառաները եւ անոնց յանձնեց իր ստացուածքը, որ շահարկեմ: Եւ համաձայն անոնց կարողութիւններուն, մէկուն տուաւ հինգ հարիւր ոսկի դրամ, միւսին՝ երկու հարիւր եւ ուրիշի մը՝ հարիւր: Եւ ապա նամբորդեց:

Ծառաներէն ան որ հինգ հարիւր ոսկի դրամ ստացած էր, անմիջապէս գնաց, շահարկութեան դրաւ եւ հինգ հարիւր եւս շահեցաւ: Նոյն ձեւով, ան որ երկու հարիւր ոսկի դրամ ստացած էր, երկու հարիւր ալ շահեցաւ: Բայց ան որ հարիւր ոսկի դրամ ստացած էր, գնաց հողը փորեց եւ իր Տիրոջ դրամը հոն պահեց:

Բաւական ժամանակ ետք, այդ ծառաներուն տէրը եկաւ եւ անոնցմէ հաշիւ պահանջեց: Ան որ հինգ հարիւր ոսկի դրամ ստացած էր, հինգ հարիւր եւս բերաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, ինծի հինգ հարիւր ոսկի դրամ տուիր, ահաւասիկ հինգ հարիւր եւս շահեցայ»: Տէրը ըսաւ. «Ապրի՛ս, բարի եւ հաւատարի՛մ ծառայ, քանի այդ փոքրիկ գումարը շահարկելու մէջ հաւատարիմ գտնուեցար, քեզ աւելի մեծ գործերու պատասխանատու պիտի կարգեմ, եկուր եւ մասնակից եղիր տիրոջդ ուրախութեան»:

Ան որ երկու հարիւր ոսկի դրամ ստացած էր, մօտեցաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, ինծի երկու հարիւր ոսկի դրամ տուիր, ահաւասիկ երկու հարիւր ալ շահեցայ»: Տէրը ըսաւ. «Ապրի՛ս, բարի եւ հաւատարի՛մ ծառայ, քանի այդ փոքրիկ գումարը շահարկելու մէջ հաւատարիմ գտնուեցար, քեզ աւելի մեծ գործերու պատասխանատու պիտի կարգեմ: Դո՛ւն ալ եկուր եւ մասնակից եղիր տիրոջդ ուրախութեան»:

Յետոյ մօտեցաւ ան որ հարիւր ոսկի դրամ ստացած էր, եւ ըսաւ. «Տէ՛ր, գիտէի որ խիստ մարդ ես, կը հնձես ինչ որ չես սերմանած եւ կը հաւաքես ինչ որ չես ցանած: Վախցայ, ուստի գացի եւ տուած հարիւր ոսկի դրամդ հողին մէջ պահեցի: Ահա տուածդ քեզի»: Տէրը պատասխանեց. «Չար ու ծո՛յլ ծառայ, եթէ գիտէիր որ կը հնձեմ ինչ որ չեմ սերմանած եւ կը հաւաքեմ ինչ որ չեմ ցանած, պէտք էր որ քեզի յանձնած դրամս շահարկողներուն տայիր, որպէսզի վերադարձիս տոկոսով միասին ետ առնէի գայն: Հիմա առէ՛ք անկէ հարիւր ոսկի դրամը եւ տուէ՛ք անոր՝ որ հազար ունի: Որովհետեւ ունեցողին պիտի

տրուի՝ նոյնիսկ աւելիով, իսկ չունեցողէն պիտի առնուի ունեցած փոքր բաժինն ալ: Իսկ այս անպիտան ծառան դուրսը մութին հանեցէ՛ք: Թող հոն լայ եւ ակռաները կրնտէ» (Մտ 25.14-30):

«Մարդ մը կար, որ երբ ուրիշ երկիր պիտի երթար, կանչեց իր ծառաները եւ անոնց յանձնեց իր ստացուածքը, որ շահարկեն: Եւ համաձայն անոնց կարողութիւններուն, մէկուն տուաւ հինգ հարիւր ոսկի դրամ, միւսին՝ երկու հարիւր եւ ուրիշի մը՝ հարիւր: Եւ ապա ֆամբորդեց» (Մտ 25.14-15): Քանի մը հաստատումներ.–

1.– «Մարդ մը կար»: Մարդը որ իր ստացուածքը ծառաներուն կու տայ եւ կը ֆամբորդէ՝ Քրիստոս ի՛նքն է: Ե՞րբ իր ստացուածքը տուաւ իր ծառաներուն: Տուաւ՝ «երբ ուրիշ երկիր պիտի երթար»: Այս «ուրիշ երկիր» հասկացողութեան մասին փիչ ետք կը խօսիմ:

2.– Ծառաները որոնց ստացուածքը կը բաժնուի՝ բոլոր ֆրիստոնեաներն են, բայց յատկապէս՝ յատուկ կերպով Աստուծոյ կողմէ կանչուած եւ առաքելութեան դրկուած մարդիկն են:

3.– Քրիստոսի կողմէ իր ստացուածքին յանձնուիլը ծառաներուն, ամէն բանէ առաջ ցոյց կու տայ որ չկա՛յ հաւատացեալ մարդ առանց աստուածատուր շնորհի՛ն ու կարողութեան:

4.– Ստացուածք յանձնելը՝ գործ յանձնել կը նշանակէ, իսկ գործ յանձնելը՝ ցոյց կու տայ որ Քրիստոս չ՛ուզեր որ իր հետեւորդները անգործ նստին:

5.– «Անոնց յանձնեց»: Այս բառերը կը պարզեն որ հաւատացեալ մարդը ինչ որ ունի՝ Քրիստոսի կողմէ իրեն յանձնուած է: Քրիստոս ի՛նքն է տուիչն ու բաշխիչը ամէն բանի:

6.– «Յանձնեց»: Քանի յանձնողը Քրիստոս՝ս է, աշխատանքը գոր պէտք է տարուի՝ Քրիստոսի՛ համար պէտք է ըլլայ: Քրիստոսի կողմէ մեր ստացածը՝ Քրիստոսի՛ համար պէտք է գործածուի: Նախորդ առակին մէջ տեսանք որ մարդիկ կոչուած են «մշակներ» (Մտ 20.1): Մենք Քրիստոսի մշակներն ենք: Ինչպէս մշակը իր տիրոջ համար է որ կ'աշխատի, այնպէս ալ մենք՝ Քրիստոսի մշակներս, Քրիստոսի համար է որ պէտք է աշխատինք:

Մենք ո՛չ միայն Քրիստոսի մշակներն ենք, այլեւ՝ անոր տնտեսները, եւ իբրեւ տնտեսներ, պարտականութիւնը ունինք Քրիստոսի կողմը մեզի յանձնուած «ստացուածքը», այլ խօսքով՝ բարիքները, պարգեւները, շնորհքները ուրիշներուն մատակարարելու, ինչպէս Պետրոս առաքեալ կ'ըսէ. «Զեզմէ իւրաքանչիւրը իբրեւ

Աստուծոյ բազմատեսակ պարգեւներուն իրաւ տնտես՝ իր ստացած շնորհքը ուրիշներուն թող մատակարարէ» (Ա.Պտ 4.10):

7.- «Իր ստացուածքը»: «Իր» ստացական ածականը նախ ցոյց կու տայ որ «ստացուածք» Քրիստոսի՝ ստացուածքն է, Քրիստոս ի՛նքն է տէրն ու տիրականը:

Ի՞նչ է այն «ստացուածքը» որ Քրիստոս յանձնեց եկեղեցիին, ինչո՞ւ յանձնեց եւ ի՞նչ նպատակով յանձնեց: Պօղոս առաքեալ քանի մը տողերու մէջ շատ գեղեցիկ կերպով կը պատասխանէ այս երեք զիրար ամբողջացնող հարցումներուն՝ ըսելով. –

«Եւ ինքը՝ Քրիստոսն էր որ "պարգեւներ բաշխեց մարդոց", որպէսզի ոմանք առաքեալ ըլլան, ոմանք՝ մարգարէ, ոմանք՝ աւետարանիչ, ոմանք՝ հովիւ եւ ուսուցանող, Աստուծոյ ժողովուրդը պատրաստելու եւ Աստուծոյ ծառայութեան մէջ դնելու համար, որպէսզի Քրիստոսի մարմինը՝ եկեղեցին անի ու գօրանայ, մինչեւ որ բոլորս հասնինք հաւատքի ամբողջական միութեան եւ Աստուծոյ Որդիին նանաչողութեան. այսինքն՝ մինչեւ հասնինք հաւատքի չափահասութեան, Քրիստոսի կատարեալ նմանութեան» (Եփ 4.11-13):

8.- «Որ շահարկեն»: Եկեղեցին պարտականութիւնը ունի Քրիստոսի կողմէ իրեն յանձնուած «ստացուածքը» շահարկելու, այլ խօսքով՝ պահելու եւ տարածելու (Ա.Տմ 6.20: Բ.Տմ 1.14): Եւ ի՞նչ է այդ ստացուածքը որ Քրիստոս յանձնեց եկեղեցիին եթէ ոչ Քրիստոսապարգեւ սիրոյ օրէնքը, հաւատքի աւանդը, փրկութեան շնորհքը պատգամելու պարտականութիւնը, արքայութեան աւետիսը տարածելու առաքելութիւնը, Աւետարանին ազատագրիչ լոյսը սփռելու գործը (Մտ 28.19-20): Քրիստոս այս բոլորը եկեղեցիին յանձնելէ ե՛տք է որ երկինք համբարձաւ (Գրծ 1.9):

«Շահարկել» բացատրութիւնը ցոյց կու տայ որ մեզի տրուածին վրայ աւելցնելու պարտականութիւնը ունինք: Քրիստոսի կողմէ ոեւէ շնորհք կամ պարգեւ, կարողութիւն կամ գօրութիւն ստացող մարդը՝ պէտք է գայն գործածէ ուրիշներուն բարիքին համար:

9.- «Համաձայն անոնց կարողութիւններուն, մէկուն տուաւ հինգ հարիւր ոսկի դրամ, միւսին՝ երկու հարիւր եւ ուրիշի մը՝ հարիւր»: «Հինգ հարիւր ոսկի դրամ», բառացիօրէն՝ «հինգ քանգար»: «Համաձայն անոնց կարողութիւններուն»: Այս բառերը կը պարգեւն որ Քրիստոս մեր կարողութենէն աւելի մեծ բաներ ո՛չ կը յանձնէ մեզի եւ ո՛չ ալ կը պահանջէ մեզմէ:

10.- Միւս կողմէ նաեւ պէտք է նկատի առնել որ 500 ոսկի դրամը, կամ 200 ոսկի դրամը, կամ 100 ոսկի դրամը այսօրուան դրամով քիչ

գումար մը չէ: Սա ցոյց կու տայ որ Քրիստոս աժան եւ անպէտք բան չի պարգեւեր մեզի, այլ՝ թանկագին բան: Քրիստոսի տուած բոլոր շնորհքները, պարգեւները, կարողութիւնները, ձիրքերը, եւ անոր յանձնած առաքելութիւնը, պարտականութիւնը, գործը, բոլորը թանկագին են: Փառքի Աստուածը՝ Քրիստոս, խոսելի բան չի տար մեզի:

11.- Մէկուն 500 ոսկի դրամ տալը, ուրիշի մը՝ 200, եւ ուրիշի մը՝ 100, նախ ցոյց կու տայ որ Քրիստոս կը ցանչնայ մեզ՝ մեր կարողութիւններով:

Մէկը որ քիչ կրնայ տանիլ՝ Քրիստոս իրեն «շատ»ը չի յանձներ: Եւ մէկը որ շատ կրնայ տանիլ՝ Քրիստոս իրեն «քիչ»ը չի յանձներ:

Հետեւաբար, երբ տեսնենք որ Քրիստոս իր «ստացուածքէն» լայնօրէն կու տայ ուրիշին՝ ատիկա մեզ պէտք չէ անհանգիստ ընէ եւ նախանձով գրգռէ: Քրիստոս խորութիւն չի դնէր մարդոց միջեւ: Անոնց կարողութիւնը նկատի առնելով է որ իր պարգեւները կը բաշխէ:

Եթէ մեզի տրուած «քիչ»ը շահարկութեան չենք դնէր, այլ խօսքով՝ Աստուծոյ փառքին համար չենք գործածեր եւ մարդիկը Քրիստոսի չենք բերեր՝ Քրիստոս երբեք ալ «շատ»ը պիտի չվստահի մեզի:

12.- «Եւ ապա ցամբորդեց»: Այն «ուրիշ երկիր»ը որուն ակնարկութիւն ըրի քիչ մը վերեւ՝ երկինքն է: Քրիստոսի մեկնումը դէպի երկինք նմանցուած է ցամբորդութեան: Այո՛, Քրիստոս այս հանգրուանին հեռո՛ւ է եկեղեցիէն՝ իր մարմինէն: Հեռու է մարմնապէս, ո՛չ հոգեպէս: Բայց ան դարձեալ պիտի գայ, ի մի խմբելու իր բոլոր զաւակները, իր անունին հաւատացողները, իր փառքին համար աշխատողները, իր տուած ստացուածքը բազմապատկողները, զանիկա ուրիշին փրկութեան համար օգտագործողները:

«Մտանքէն ան որ հինգ հարիւր ոսկի դրամ ստացած էր, անմիջապէս գնաց, շահարկութեան դրաւ եւ հինգ հարիւր եւս շահեցաւ: Նոյն ձեւով, ան որ երկու հարիւր ոսկի դրամ ստացած էր, երկու հարիւր ալ շահեցաւ: Բայց ան որ հարիւր ոսկի դրամ ստացած էր, գնաց հողը փորեց եւ իր Տիրոջ դրամը հոն պահեց» (Մտ 25.16-18): Քանի մը բացատրութիւններ.–

1.- Ան որ 500 ոսկի դրամ ստացաւ՝ «անմիջապէս գնաց, շահարկութեան դրաւ եւ հինգ հարիւր եւս շահեցաւ»: Չեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ «անմիջապէս» (Յունարէն՝ *εὐθὺς*) բառին վրայ, որ կը պարզէ եւ կը յիշեցնէ, որ Քրիստոսի հետեւորդ քրիստոնեայ մարդը, երբեք ժամանակ պէտք չէ կորսնցնէ, այլ միշտ եւ մնայուն կերպով պէտք է իր ժամանակը յատկացնէ այնպիսի գործերու,

որոնք Քրիստոսի փառք ու պատիւ կը բերեն, եւ իր թագաւորութիւնը երկրի վրայ տարածելու կը նպաստեն: Պօղոս առաքեալ կը խօսի ժամանակը օգտագործել գիտնալու կարեւորութեան մասին (Եփ 5.16):

2.- «Շահարկութեան դրաւ»: Ճշմարիտ քրիստոնեայ մարդիկ «շահող» մարդիկ պէտք է ըլլան: Ի՞նչ բան շահող: Ամէն բանէ առաջ, անոնք պէտք է «հոգիներ շահող» ըլլան: Ան որ փրկութեան կը կանչուի՝ իր կարգին պէտք է ուրիշները փրկութեան կանչէ: Պօղոս առաքեալ կը հաստատէ որ Աստուած «Քրիստոսի միջոցաւ մեզ իրեն հետ հաշտեցուց եւ նաեւ պաշտօն տուաւ մեզի՝ ուրիշներն ալ հաշտութեան բերելու» (Բ.Կր 5.18): Քրիստոսի թագաւորութեան ու փառքին համար մարդիկ «շահող» հաւատացեալը՝ չի կրնար Քրիստոսի գինուորը նկատուիլ:

3.- Վերեւ բացատրեցինք որ Յիսուս իւրաքանչիւրին իր կարողութեան համաձայն կու տայ իր ստացուածքը: Եթէ այս է իրողութիւնը, հարց կու տանք թէ ինչո՞ւ 100 ոսկի դրամ ստացողը չկրցաւ շահարկութեան դնել իր ստացածը: Խորքին մէջ, ո՛չ թէ «չկրցաւ» շահարկութեան դնել դրամը, այլ՝ «չուզեց» շահարկութեան դնել: Բնագիրը մեզի չ'ըսեր որ փորձեց շահարկութեան դնել եւ չկրցաւ: Բնագիրը պարզապէս կը հաստատէ թէ «գնաց հողը փորեց եւ իր Տիրոջ դրամը հոն պահեց»: Հետեւաբար, 100 ոսկի դրամ ստացող մարդուն մօտ մենք անկարողութիւն չէ որ կը գտնենք, այլ՝ անկամութիւն, յօժարակամութեան պակաս: Բան մը որ կը փորձենք եւ կ'ուզենք ընել բայց անկարող ենք ընելու՝ ատոր համար չենք դատապարտուիր Աստուծոյ կողմէ, բայց բան մը որ կրնանք ընել բայց չենք ըներ՝ ատիկա է որ մեզ դատապարտութեան ենթակայ կը դարձնէ:

4.- «Ան որ հարիւր ոսկի դրամ ստացած էր, գնաց հողը փորեց եւ իր Տիրոջ դրամը հոն պահեց»: Նախորդ բաժնին մէջ ըսինք որ 100 ոսկի դրամ ստացողը ո՛չ թէ «չկրցաւ» շահարկութեան դնել դրամը, այլ՝ «չուզեց» շահարկութեան դնել, այլ «գնաց հողը փորեց եւ իր Տիրոջ դրամը հոն պահեց»: Որո՞նք են հողը փորող եւ Աստուծոյ կողմէ իրենց տրուածը հողին մէջ պահող «հաւատացեալները»: Անոնք ինքնամփոփ եւ ինքնանպատակ կեանք ապրող քրիստոնեաներն են. անոնք Աստուծոյ տուած բարիքները առանձին վայելող եւ անոնցմէ ուրիշին բաժին չհանող մարդիկն են:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ կ'ըսէ. «Ծառը ինքնիր համար չէ որ պտուղ կը բերէ, այլ՝ ուրիշին համար»: Ամէն մէկ քրիստոնեայ պէտք է ծառ մը ըլլայ. ուրիշին համար պտուղ բերող ծառ մը: Աստուած իր պարգեւները չի տար մեզի որպէսզի գանոնք մեզի համար պահենք, այլ՝ որպէսզի գանոնք օգտագործենք մարդոց օգտակարութեան համար,

որպեսզի անոնցմով կարիք մը գոհացնենք, տրտում սիրտ մը ուրախացնենք: «Պարգեւ» ըսելով չեմ հասկնար Սուրբ Հոգիին ինը պարգեւները միայն որոնց մասին կը խօսի առաքեալը (Ա.Կր 12.8-10), այլ ամէն բան, ամէն կարողութիւն, ամէն շնորհք, ձիրք, ստացուածք, հարստութիւն, որ Աստուած տուած է մեզի: Ինչ որ ունինք Աստուծմով եւ Աստուծմէ ունինք, եւ ուստի՝ պէտք է Աստուծոյ փառքին համար գործածենք:

5.- 500 ոսկի դրամ առնողը 500 եւս շահեցաւ, եւ 200 ոսկի դրամ առնողը 200 եւս շահեցաւ: Իւրաքանչիւրը իրեն տրուածին կրկնապատիկը շահեցաւ: Սա ցոյց կու տայ որ հաւատացեալ մարդը շատ բան կրնայ ընել Քրիստոսի թագաւորութեան համար, ուստի, «Ֆիչ բան» ընելով պէտք չէ գոհանայ: Եթէ մենք կրնանք 50 հոգի բերել Քրիստոսի, պէտք չէ բաւարարուինք 25 հոգի բերելով: Եթէ կրնանք 1000 տղար նուիրել հոգեւոր գործի մը յաջողութեան համար, պէտք չէ 500 տղար նուիրել:

Եթէ 100 ոսկի դրամ ստացողը որ շահարկութեան չդրաւ դրամը՝ այսֆան խիստ պատիժի արժանացաւ, որքան աւելի խիստ պատիժի պիտի արժանանան անոնք՝ որոնք 500 եւ 200 ոսկի դրամ ստացած են եւ սակայն զանոնք չեն գործածեր Աստուծոյ փառքին համար:

Երբ Յիսուս կը խօսի 500 ոսկի դրամին դիմաց 500 եւս շահելու մասին, կամ 200 ոսկի դրամին դիմաց 200 եւս շահելու մասին, յստակօրէն ցոյց կու տայ թէ մեզմէ պիտի պահանջէ այնքան՝ որքան տուած է մեզի, աւելի քան պիտի չպահանջէ: Շատ ստացողէն՝ քիչ պիտի չպահանջէ եւ քիչ ստացողէն շատ պիտի չպահանջէ: Յիշեցէք որ Տէրը ինք առիթով մը ըսաւ. «Որուն որ շատ տրուած է՝ շատ պիտի պահանջուի, իսկ որուն որ աւելի շատ տրուած է՝ շատ աւելի պիտի պահանջուի» (Ղկ 12.48):

6.- 500 ոսկի դրամին վրայ 500 եւս շահիլը, եւ 200 ոսկի դրամին վրայ 200 եւս շահիլը, ցոյց կու տայ որ Աստուծոյ թագաւորութեան համար տարուած աշխատանք մը չի կրնար ապարդիւն մնալ, այլ խօսքով՝ առանց արդիւնքի, առանց պտուղի: Ամէն ով որ անկեղծօրէն կ'աշխատի Քրիստոսի այգիին մէջ, անպայման պտուղ կը բերէ եւ անոր «պտուղը մնայուն» կ'ըլլայ (Յհ 15.16), որովհետեւ կը վայելէ զօրակցութիւնն ու օրհնութիւնը Աստուծոյ:

7.- «Հողը փորեց եւ իր Տիրոջ դրամը հոն պահեց»: Բնագիրին մէջ գործածուած «պահեց» բառը մեզի կարեւոր բան մը պէտք է յիշեցնէ: Յիսուս չ'ըսեր թէ 100 ոսկի դրամ առնողը՝ վատնեց, կամ մսխեց, կամ սպառեց, կամ կորսնցուց գայն, այլ կ'ըսէ՝ «պահեց» գայն: Թէպէտ իր

ստացածը չկորսնցուց՝ բայց դարձեալ պատժուեցաւ: Եւ ինչո՞ւ: Որովհետեւ երբ Աստուած մեզի ոեւէ պարգեւ կամ շնորհք, ոեւէ կարողութիւն կամ գործ կու տայ, կու տայ որպէսզի գանոնք գործածենք ուրիշներու օգտակարութեան համար եւ ո՛չ թէ որպէսզի պահենք գանոնք մեր անձերուն համար:

100 ոսկի դրամ առնողը ուրիշին վնաս «չհասցուց», բայց ուրիշին բարիք չընելը՝ իրեն համար չարիք նկատուեցաւ: Քրիստոնեայ մարդը ուրիշին չարիք չընողը չէ, այլ՝ ուրիշին բարիք ընողը: Յակոբոս առաքեալ կ'ըսէ. «Ով որ շիտակը գիտէ եւ չ'ըներ՝ մեղք է որ կը գործէ» (Յկ 4.17):

8.- «Իր Տիրոջ դրամը հոն պահեց»: «Իր» բացատրութիւնը ցոյց կու տայ որ 100 ոսկի դրամը ծառային չէր պատկանէր, այլ՝ իր տիրոջ: Եւ ասիկա մեզի պէտք է յիշեցնէ, թէ ինչ որ մենք ունինք՝ Աստուծոյ կը պատկանի, Աստուծոյ կողմէ մեզի տրուած է: Եթէ մեր ունեցածը «մեր»ը ըլլար, մենք իրաւունք պիտի ունենայինք գայն մեզի համար վերապահել, գայն հողի մէջ պահել: Բայց տուեալ առակով, Յիսուս յստակօրէն ցոյց կու տայ թէ ինչ որ մարդիկ ունին՝ Աստուծոյ կողմէ ստացած են եւ պարտին Աստուծոյ համար գործածել, այլապէս, դատի պիտի կանչուին եւ պատժուին:

«Բաւական ժամանակ ետք, այդ ծառաներուն տէրը եկաւ եւ անոնցմէ հաշիւ պահանջեց: Ան որ հինգ հարիւր ոսկի դրամ ստացած էր, հինգ հարիւր եւս քերաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, ինձի հինգ հարիւր ոսկի դրամ տուիր, ահաւասիկ հինգ հարիւր եւս շահեցայ»: Տէրը ըսաւ. «Ապրի՛ս, բարի եւ հաւատարի՛մ ծառայ, քանի այդ փոքրիկ գումարը շահարկելու մէջ հաւատարիմ գտնուեցար, քեզ աւելի մեծ գործերու պատասխանատու պիտի կարգեմ, եկուր եւ մասնակից եղիր տիրոջդ ուրախութեան»:

Ան որ երկու հարիւր ոսկի դրամ ստացած էր, մօտեցաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, ինձի երկու հարիւր ոսկի դրամ տուիր, ահաւասիկ երկու հարիւր ալ շահեցայ»: Տէրը ըսաւ. «Ապրի՛ս, բարի եւ հաւատարի՛մ ծառայ, քանի այդ փոքրիկ գումարը շահարկելու մէջ հաւատարիմ գտնուեցար, քեզ աւելի մեծ գործերու պատասխանատու պիտի կարգեմ: Դո՛ւն ալ եկուր եւ մասնակից եղիր տիրոջդ ուրախութեան» (Մտ 25.19-23): Քանի մը բացատրութիւններ.–

1.- «Բաւական ժամանակ ետք, այդ ծառաներուն տէրը եկաւ»: «Անմիջապէս» բառին մասին խօսած ատեն, ըսինք որ հաւատացեալ մարդը պէտք չէ ժամանակ կորսնցնէ, այլ պէտք է «անմիջապէս» գործի լծուի: Երբ Աստուած մեզի գործ մը յանձնէ՝ կը սպասէ որ շուտով գործի

լծուինք, բայց չ'ըսպասեր որ շուտով գործը իր աւարտին հասցնենք, այլ անհրաժեշտ եղած ժամանակը կը յատկացնէ եւ համբերութեամբ կը սպասէ որ մեզի յանձնուած գործը կատարենք, ա՛յս է որ ցոյց կու տայ «բաւական ժամանակ ետք» բառերը:

2.- Երեք ծառաներուն ալ նոյնքան ժամանակ յատկացուեցաւ շահարկելու իրենց տրուածը, ուստի 100 ոսկի դրամ ունեցող մարդը չէր կրնար առարկել թէ անհրաժեշտ ժամանակը չունէր իրեն տրուածը շահարկելու: Ասիկա կը բացայայտէ, թէ երբ Աստուած մեզի գործ մը կամ պարտականութիւն մը յանձնէ՝ անոր հետ միասին անհրաժեշտ եղած ժամանակն ալ կը յատկացնէ, եւ ո՛չ միայն ժամանակ կը յատկացնէ, այլեւ ամէն կարողութիւն, ամէն առիթ եւ պատեհութիւն: Եւ ասիկա Աստուծոյ յատուկ գործելակերպ մըն է: Մարդիկ կրնան մեզի պարտականութիւն յանձնել եւ սակայն մեր պարտականութիւնը ընելու համար անհրաժեշտ միջոցներ չտալ կամ չստեղծել, բայց Աստուած այդպիսի բան չ'ըներ: Աստուած գործին հետ միասին՝ գործը ընելու կարողութիւն ալ կը յանձնէ, եռանդ ալ կը շնորհէ:

3.- «Տէրը եկաւ եւ անոնցմէ հաշիւ պահանջեց»: Մեր Տիրոջ այս բառերը կը յիշեցնեն մեզի, որ ժամանակ պիտի գայ երբ մենք հաշուետուութեան պիտի կանչուինք: Մենք Աստուծոյ տնտեսներն ենք: Ինչպէս երկրաւոր տէրերը իրենց տնտեսներէն հաշիւ կը պահանջեն, այնպէս ալ, մեր երկնաւորը Տէրը՝ Յիսուս Քրիստոս, հաշիւ պիտի պահանջէ մեզմէ ամէն բանի համար որ յանձնած է մեզի եւ մեր գործերուն համաձայն հատուցում պիտի ընէ մեզի (Հո 2.6):

4.- Ուշագրաւ է որ 500 եւ 200 ոսկի դրամ ստացողները նախ իրենք կը մօտենան եւ հաշիւ կու տան եւ կը վարձատրուին: Ինչո՞ւ արդեօք: Պատահականութի՞ւնն է: Ո՛չ: Նախ Յիսուս կ'ուզէ ցոյց տալ մեզի որ առաջին հերթին բարիներուն, այլ խօսքով՝ հաւատացեալներուն վարձատրութիւնն է որ տեղի պիտի ունենայ ժամանակներու աւարտին, անկէ ետք է որ չարերը պատիժի ենթակայ պիտի ըլլան:

Այս նշմարտութիւնը փաստող որոշ հատուածներ կան: Օրինակ, ամենէն ապահով հատուածը այն հատուածն է գոր կը գտնենք նոյն այս գլխուն մէջ, եւ գոր մեզի կը խօսի վերջին դատաստանին մասին: Հոն կը տեսնենք թէ Յիսուս նախ աջ կողմը կեցողներուն է որ խօսքը կ'ուղղէ ըսելով. «Եկէ՛ք, Հօրս կողմէ օրհնեալներ, եւ ժառանգեցէ՛ք այն արքայութիւնը, որ ձեզի համար աշխարհի սկիզբէն պատրաստուած է» (Մտ 25.34): «Ապա իր ձախ կողմը կեցողներուն» խօսքը ուղղելով կ'ըսէ. «Անիծեալներ, հեռացէ՛ք ինձմէ, գացէ՛ք յաւիտեանական կրակին մէջ, որ Սատանային եւ անոր հրեշտակներուն համար պատրաստուած է» (Մտ

25.41): Ինչո՞ւ մեր Տէրը նախ կը սկսի բարիները վարձատրելով: Քանի մը պատճառներով.–

ա.– Նախ ցոյց տալու որ ինք միայն արքայութիւնը պատրաստած էր մեզի համար, եւ գանիկա պատրաստած էր «աշխարհի սկիզբէն»: Մտ 25.34-ին մէջ արքայութեան համար գործածուած «աշխարհի սկիզբէն պատրաստուած» բառերը կը պարզեն որ Աստուծոյ ծրագիրը սկիզբէն մի՛այն բարին էր: Գեհեներ «Սատանային եւ անոր հրեշտակներուն համար պատրաստուած է»: Անիկա մարդոց համար չէ պատրաստուած:

բ.– Ցոյց տալու համար որ ինք աւելի հետաքրքրուած է հաւատացեալները վարձատրելով, քան անհաւատները պատժելով:

գ.– Ցոյց տալու համար որ ինք հաճոյք չ'առնէր եւ չ'ուրախանար մեղաւոր անհաւատները գեհեների կրակին մէջ նետելով:

դ.– Նախ արդարները կը վարձատրէ, որպէսզի անզիոց մեղաւորները տեսնեն անոնց վարձատրութիւնը եւ ողբան ու սգան, այդ բոլորէն զրկուած ըլլալուն համար:

5.– Կարելոր է նկատի առնել որ երեք ծառաները միասին հաշիւ տալու կը կանչուին: Ասիկա ցոյց կու տայ որ վերջին դատաստանը ընդհանրական նկարագիր պիտի ունենայ: Յիսուս խօսելով վերջին դատաստանին մասին՝ կ'ըսէ. «Երբ Մարդու Որդին իր փառքով գայ՝ բոլոր հրեշտակներուն հետ, պիտի նստի իր թագաւորական գահին վրայ: Բոլոր ազգերը պիտի հաւաքուին իր դիմաց եւ ինք մարդիկը իրարմէ պիտի գատէ, ինչպէս որ հովիւը ոչխարները այծերէն կը գատէ» (Մտ 25.31-32): Այս համարները յատկօրէն կը պարզեն որ վերջին դատաստանը ընդհանրական դատաստան պիտի ըլլայ, այլ խօսքով՝ բոլորին դատաստանը միաժամանակ տեղի պիտի ունենայ: Այ՛ս է որ կը բացայայտէ յատկապէս «բոլոր ազգերը պիտի հաւաքուին իր դիմաց» բառերը (տե՛ս նաեւ Յտ 20.11-12):

6.– «Տէ՛ր, ինծի հինգ հարիւր ոսկի դրամ տուիր..., Տէ՛ր, ինծի երկու հարիւր ոսկի դրամ տուիր..., Տէ՛ր, գիտէի որ խիստ մարդ ես...»: Սկիզբէն ըսինք, որ հոս յիշուած «տէրը» Քրիստոս է: Երեք ծառաներն ալ իրենց խօսքը Տէր Յիսուս Քրիստոսի կ'ուղղեն: Քրիստոս ի՛նք պիտի ըլլայ մէ՛կ ու միա՛կ դատաւորը: «Հայրը ոեւէ մէկը չի դատեր, այլ դատելու իշխանութիւնը ամբողջութեամբ յանձնած է Որդիին, որպէսզի բոլորն ալ պատուեն Որդին...» (Յհ 5.22): Պօղոս առաքեալ խօսելով դատաստանի օրունան մասին՝ այդ օրը կը կոչէ «Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի դատաստանին օրը» (Բ.Կր 1.14): Այո՛, դատաւորը Յիսուս Քրիստոս ի՛նք է: Ատեանը՝ Քրիստոսի՛ ատեանն է: Առաքեալը կը յիշեցնէ մեզի որ «բոլորս ալ Քրիստոսի ատեանին դիմաց պիտի կանգնինք» (Հո

14.10): Այո՛, ի՛ր դիմաց պիտի կանգնիմք, ո՛չ ուրիշին դիմաց, քանի ի՛նք մեզի համար մեռաւ, ո՛չ ուրիշ մէկը:

7.- «Տէ՛ր, ինձի... տուիր»: Երբէ ծառաներն ալ կը խոստովանին թէ ինչ որ ունին՝ տէրը ի՛նք տուած է իրենց: Նոյնը պէտք է ընէ ամէն մէկ հաւատացեալ: Պէտք է խոստովանի թէ ինչ որ ունի՝ Տէրը ի՛նք տուած է իրեն: Այս իրողութիւնը առիթ մը թող ըլլայ մեզի համար, մտածելու Աստուծմէ մեր առածներուն մասին: Նիւթական հարստութի՞ւն ունինք, դի՞րք ունինք, գա՞հ ունինք, հանգամա՞նք ունինք, իմաստութի՞ւն ունինք, վարչական կարողութիւննե՞ր ունինք, ուրիշը յորդորելու կարողութի՞ւն ունինք, անոյշ բա՞ն ունինք, քաղցր ժպի՞տ ունինք, առողջութի՞ւն ունինք. ինչ որ ունինք՝ Աստուծոյ պարգեւն է մեզի, եւ անհրաժեշտ է որ գայն գործածենք Աստուծոյ գործին համար:

Յիշեալ ծառաներէն սորվինք ըսել. «Տէ՛ր, ինձի... տուիր»: Երբեք չգոռոզանանք եւ ամբարտաւանութեամբ չյայտարարենք թէ մեր սեփական միգով է որ ունեցանք՝ ինչ որ ունինք, կամ եղանք՝ ինչ որ ենք:

8.- «Ահաւասիկ հինգ հարիւր եւս շահեցայ...: Ահաւասիկ երկու հարիւր ալ շահեցայ»: Առաջին երկու ծառաները իրենց շահածը ներկայացուցին Տիրոջ: Ասիկա առիթ ու պատճառ թող դառնայ մեզի, մտածելու որ դատաստանի օրը մենք ի՞նչ պիտի ներկայացնենք Տիրոջ: Զրկւայ որ բարի գործերէ պարպուած մեկնինք այս աշխարհէն: Եթէ մեր ձեռքը պարապ ներկայանանք Քրիստոսի ատեանը՝ պիտի դատապարտուինք:

Հարկաւ ասիկա չի նշանակեր որ դատաստանի օրը մե՛նք է որ պիտի ներկայացնենք մեր կատարած գործերն ու աշխատանքները: Մեր կատարածին մասին զեկոյց պիտի չներկայացնենք: Տէրը շատ լաւ գիտէ մենք ինչ ըրած ու ինչ չենք ըրած: Քրիստոս ի՞նքն է որ դատաստանի օրը պիտի հրապարակէ մեր ըրածները եւ ո՛չ թէ մենք: Յիշեցէք որ Տէրը իր աջ կողմը կեցողներուն պիտի ըսէ. «Անօթի էի եւ զիս կերակրեցիք, ծարաւ էի եւ ջուր տուիք, օտարական էի եւ ընդունեցիք...» (Մտ 25.35-36): Հոս յիշուած մարդիկը որոնք բարեգործութիւն եւ ողորմութիւն ըրած են՝ իրենք չէ՛ որ կը խօսին իրենց ըրածին մասին, այլ Տէրը ի՛նքն է որ կը խօսի:

9.- «Ապրի՛ս, բարի եւ հաւատարի՛մ ծառայ, քանի այդ փոքրիկ գումարը շահարկելու մէջ հաւատարիմ գտնուեցար...»: Առաջին երկու ծառաներուն նոյն այս գնահատանքն է որ կ'ուղղուի: Յատկանշական իմաստ ունեցող հաստատում մըն է ասիկա:

Նախ «Ապրիս» բացատրութիւնը ցոյց կու տայ այն գնահատանքն ու գովասանքը որուն պիտի արժանանան հաւատացեալները: «Ապրիս»

բառը կը պարզէ նաեւ որ Աստուած պիտի պատուէ այն անձերը որոնք կը պատուեն զինք, պիտի մեծարէ զինք մեծարողները, պիտի փառաւորէ զինք փառաւորողները:

Աշխատող հաւատացեալները պիտի լսեն Տիրոջ «Ապրիս»ը: Տէրը խորութիւն պիտի չդնէ մարդոց միջեւ դատաստանի օրը: Ան ոեւէ մարդու աշխատանքը պիտի չանտեսէ եւ պիտի չստորագնահատէ: Այսօր մարդիկ կրնան չգնահատել իրենց ձեռքին կամ իշխանութեան ներքեւ գտնուող անհատները որոնք հաւատարմօրէն կ'աշխատին, բայց Տէրը այդպիսի բան պիտի չընէ: Իսկական հաւատացեալները անոնք չեն որոնք իրենք զիրենք կը գովեն կամ որոնք մարդոց կողմէ կը գովուին, այլ անոնք են՝ որոնք կը գովուին նոյնիմէն Տիրոջ կողմէ:

«Բարի» մարդը սենեակը քաշուած առանձին ապրող մարդը չէ, ո՛չ ալ ուրիշին չարիք չհասցնող մարդն է: Բարի բառին համար բնագիրին մէջ գործածուած (αγαθός) բառը, կը գործածուի այնպիսի անձերու համար՝ որոնք իրենց բարի գործերով ուրիշին օգտակար կը դառնան:

«Հաւատարիմ» բացատրութիւնը մեզի պէտք է յիշեցնէ կարեւոր իրողութիւն մը: Ճիշդ է որ Աստուած մեզմէ բարե-գործութիւն կը պահանջէ, բայց նախ եւ առաջ հաւատարմութիւն կը պահանջէ: Իր բարի գործը հաւատարմութեամբ չընող մարդը՝ ոեւէ վարձատրութիւն պիտի չստանայ: Դատաստանի օրը Աստուած աւելի նկատի պիտի առնէ ո՛չ թէ մեր գործերը, այլ մեր գործերը կատարելու համար մեր ցուցաբերած հաւատարմութիւնը:

Աստուած ամէն բանէ առաջ մեզմէ հաւատարմութիւն կը սպասէ Աստուածաշունչով յայտնուած իր խօսքին հանդէպ: Երկրորդ, կը սպասէ որ կատարեալ հաւատարմութեամբ կատարենք իր կողմէ մեզի յանձնուած գործերն ու աշխատանքները: Երրորդ, հաւատարմութիւն՝ կը նշանակէ հնազանդիլ Աստուծոյ կամքին նոյնիսկ եթէ ան մեր կամքին հակառակ բան կը պահանջէ մեզի:

10.- «Քանի այդ փոքրիկ գումարը շահարկելու մէջ հաւատարիմ գտնուեցար, քեզ աւելի մեծ գործերու պատասխանատու պիտի կարգեմ, եկուր եւ մասնակից եղիր տիրոջ ուրախութեան»:

Այս համարը յստակօրէն ցոյց կու տայ որ Քրիստոս մեր գործերուն համաձայն հատուցում պիտի չընէ: Ան մեր ակնկալածէն շատ աւելին պիտի տայ մեզի: Երբ Տէրը գաւաթ մը պաղ ջուրի փոխարէն կը խոստանայ առատապէս վարձատրել մեզ, ասիկա ցոյց չի՞ տար որ Տիրոջ վարձատրութիւնը մեր կատարած գործերէն անհունօրէն աւելի մեծ պիտի ըլլայ (Մտ 11.42): Կամ երբ Տէրը փոքրիկ գումարը շահարկող մարդուն «աւելի մեծ գործերու պատասխանատու» կը կարգէ՝ ատով

ցոյց տուած չ'ըլլար որ մեր հատուցումը շա՛տ աւելի մեծ պիտի ըլլայ քան մեր կատարած գործերը: Աստուծոյ փառքին համար մեր կատարածը ոչինչ է բաղդատաբար այն փառքին ու վարձատրութեան հետ որ Աստուած ինք մեզի պիտի տայ:

11.- Ըսինք թէ Աստուած հատուցում կամ վարձատրութիւն պիտի տայ, բայց չըսինք թէ ի՛նչ է հաւատացեալին տրուելիք վարձատրութիւնը: Ասկէ առաջ երբ խօսեցանք «այգիի մշակներուն առակին» մասին, հաստատեցինք, որ բոլոր հաւատացեալները նոյն փրկութիւնը պիտի ստանան, բայց ո՛չ նոյն վարձատրութիւնը: Ի՞նչպէս կը պատահի ասիկա: Շատ պարզ է: Նոյն փրկութիւնը ստանալ, կը նշանակէ նո՛յն արքայութեան մէջ ըլլալ, նո՛յն Արքան տեսնել, նո՛յն Արքային սէրը ըմբոշիսնել: Իսկ նոյն վարձատրութիւնը չստանալ, կը նշանակէ նոյնքան մօտիկ չըլլալ Տիրոջ, նոյնչափ չվայելել զինք, նոյն փառքը չունենալ:

Դուք ըսէք, բոլոր հաւատացեալները արքայութեան մէջ նո՞յնչափ մօտիկ պիտի ըլլան Յիսուսի, նո՞յնչափ մտերիմ պիտի ըլլան անոր, նո՞յնչափ պիտի վայելեն անոր ներկայութիւնը, նո՞յնչափ պիտի ըմբոշիսնեն անոր սէրը, նո՞յնչափ շքեղ ու պայծառ մարմիններ պիտի ունենան: Ո՛չ: Ոմանք ուրիշներէն աւելի մօտիկ պիտի ըլլան Յիսուսի: Ոմանք աւելի շքեղ պիտի ըլլան քան ուրիշները: Ճիշդ ասո՛ր է որ կ'ակնարկէ Պօղոս առաքեալ երբ կ'ըսէ. «Ուրիշ է արեւուն շքեղութիւնը, ուրիշ՝ լուսինին շքեղութիւնը, եւ դեռ ուրիշ՝ աստղերուն շքեղութիւնը: Եւ նոյնիսկ աստղերէն ոմանք աւելի շքեղ են քան միւսները» (Ա.Կր 15.41):

12.- «Քեզ աւելի մեծ գործերու պատասխանատու պիտի կարգեմ»: Վերեւ բացատրեցինք թէ վարձատրութիւնը Տիրոջ ներկայութիւնը ըմբոշիսնել է, անոր մտերմութիւնը վայելել է, անոր փառքով զարդարուիլ է: Բայց «վարձատրութեան» մէկ ուրիշ իմաստը կը պարզուի մեր դիմաց երբ նկատի կ'առնենք սոյն հաստատումը՝ «Քեզ աւելի մեծ գործերու պատասխանատու պիտի կարգեմ»:

Ի՞նչ են այն «աւելի մեծ գործերը» որոնց վրայ Քրիստոս մեզ պատասխանատու պիտի նշանակէ: Այն «աւելի մեծ գործերը» երկնային «գործերն» են, Աստուծոյ «գործերն» են, յաւիտենական «գործերն» են:

Երբ հաւատացեալները մարդկային կեանքէն կ'անցնին հրեշտակային կամ հրեշտակներու կեանքին՝ կարծէք «աւելի մեծ գործերու պատասխանատու» նշանակուած կ'ըլլան:

Երբ երկրայինէն երկնայինին կ'անցնին՝ «աւելի մեծ գործերու պատասխանատու» նշանակուած կ'ըլլան:

Երբ ժամանակաւորէն յաւիտեանականին եւ գնայունէն մնայունին կ'անցնին՝ «աւելի մեծ գործերու պատասխանատու» նշանակուած կ'ըլլան:

Այլ բացատրութեամբ, «Քեզ աւելի մեծ գործերու պատասխանատու պիտի կարգեմ» խօսքը, աստիճանի բարձրացում է որ ցոյց կու տայ, մակարդակի եւ հանգամանքի փոփոխութիւն է որ կը պարզէ, պայմանի եւ վիճակի տարբերուիլը կը բացայայտէ:

Բոլորս ալ գիտենք որ անցեալին ոեւէ մէկը որ կ'ապրէր թագաւորական պալատի մէջ, աստիճանի բարձրացում կը ստանար եթէ հաւատարիմ ըլլար իր գործին մէջ: Ասիկա իրական է նաեւ անոնց համար որոնք մաս կը կազմեն Քրիստոսի թագաւորութեան: Քրիստոս ինք եւս «աստիճանի բարձրացում» կը խոստանայ հաւատարմօրէն իր կամքը կատարողներուն: Աստիճանի բարձրացում չե՞նք նկատեր Քրիստոսի գահակից ըլլալը (Յտ 3.21): Աստիճանի բարձրացում չե՞նք նկատեր ժամանակներու աւարտին քահանաներու թագաւորութիւն դառնալը (Յտ 1.6: Ա.Պտ 2.9): Աստիճանի բարձրացում չե՞նք նկատեր «երկինքի հրեշտակներուն նման» ըլլալը (Մտ 22.30): Աստիճանի բարձրացում չե՞նք նկատեր Քրիստոսի յայտնութեան օրը՝ իրեն նման ըլլալը (Ա.Յհ 3.2):

13.- «Եկուր եւ մասնակից եղիր տիրոջ ուրախութեան»: Ահա այս հաստատումին իրագործումն է որ ամէն հաւատացեալ կը սպասէ: Երկինքը ուրախութեամբ լեցուն է այսօր, ժամանակներու աւարտին երկինքի ուրախութիւնը պիտի հոսի նաեւ այս երկրին վրայ, երբ Տէր Յիսուս Քրիստոսը վար պիտի իջնէ իր Հօրը փառքով եւ հրեշտակներուն հետ միասին՝ երկիրը երկնայնացնելու, աշխարհը նորոգելու եւ զանիկա յանձնելու մարդոց որդիներուն:

«Տիրոջ ուրախութեան»: Ուշադրութիւն դարձնենք այս երկու բառերուն: Ուրախութիւնը գոր մեզի պիտի տրուի պարզ ուրախութիւն մը չէ, ցաւին բացակայութիւնը եղող ուրախութիւնը չէ, այլ՝ նոյնիմէն Տիրոջ ուրախութիւնն է: Այո՛, Տէրը ի՛նք պիտի ըլլայ հաւատացեալներուն ուրախութիւնը Աստուծոյ արքայութեան մէջ:

Տարբեր առիթով մը ըսած եմ ու կը կրկնեմ, Յիսուս իր քովէն մեզի բան մը տալով չէ որ մեզ պիտի ուրախացնէ, այլ՝ ինքզինք մեզի տալով: Ո՛չ ալ մենք իրեն բան մը տալով զինք պիտի ուրախացնենք, այլ՝ մենք զմեզ իրեն տալով: Աստուծոյ ուրախութեան առարկան պիտի ըլլայ մարդը ինք, եւ մարդուն ուրախութեան առարկան Աստուած ինք: Աստուած եւ մարդ իրարմով պիտի ուրախանան, իրարմով պիտի կշտանան:

Երբ Բարի Հովիւր գտաւ կորսուած ոչխարը՝ «ուրախութեամբ իր ուսերուն վրայ» դրաւ (Ղկ 15.5): Երբ կը կարդանք որ Յիսուս կորսուած ոչխարներս «ուրախութեամբ իր ուսերուն վրայ կը դնէ», ասիկա ցոյց չի՞ տար որ Յիսուս մեզմով կ'ուրախանայ, որ մե՛նք ենք Յիսուսի ուրախութեան առարկան:

Իսկ մէկ համար անդին կը կարդանք Հովիւին խօսքը ուղղուած իր բարեկամներուն ու դրացիներուն. «Ուրախացէ՛ք ինձի հետ, որովհետեւ կորսուած ոչխարս գտայ» (Ղկ 15.6): Յատկանշական են առաջին երեք բառերը՝ «Ուրախացէ՛ք ինձի հետ»: Այս բառերը կը պարզեն որ արքայութեան մէջ Արքան ի՛նք պիտի ըլլայ մեր ուրախութեան առարկան, պատճառը, աղբիւրն ու առիթը, ինչպէս ըսի:

Տակաւին, կարելի է յիշել անառակ որդիին առակը: Հոն եւս կը տեսնենք թէ ինչպէս Քրիստոս ի՛նքն է ուրախութիւնը մեղաւոր մարդուն: Ի՞նչպէս: Երբ կրտսեր որդին տուն դարձաւ, հայրը հրահանգեց ըսելով. «Բերէ՛ք պարարտ հորթը, մորթեցէ՛ք, ուտեմք եւ ուրախանանք: Որովհետեւ իմ այս գաւախս մեռած էր՝ ողջնցաւ...» (Ղկ 15.23-24): Պարարտ հորթը զՔրիստոս է որ կը ներկայացնէ: Պարարտ հորթը մորթուեցաւ՝ կրտսեր գաւախը որ «մեռած էր՝ ողջնցաւ»: Քրիստոսի մահուամբ է որ մենք ողջնցանք, անմահացանք եւ ժառանգեցինք երկինքի ուրախութիւնը: «Ուտեմք եւ ուրախանանք» բառերը, շատ գեղեցիկ կերպով ցոյց կու տան որ Քրիստոս իր գոհագործական մահուամբ էր որ բացաւ յաւիտեանական ուրախութեան դուռը մեր դիմաց: Առանց ուտելու պարարտ Հորթը, այլ խօսքով՝ առանց յանձնուելու Քրիստոսի, չենք կրնար ուրախութիւն գտնել:

«Յետոյ մօտեցաւ ան որ հարիւր ոսկի դրամ ստացած էր, եւ ըսաւ.-- "Տէ՛ր, գիտէի որ խիստ մարդ ես, կը հնձես ինչ որ չես սերմանած եւ կը հաւաքես ինչ որ չես ցանած: Վախցայ, ուստի գացի եւ տուած հարիւր ոսկի դրամդ հողին մէջ պահեցի: Ահա տուածդ քնքի"» (Մտ 25.24-25): Քանի մը ամփոփ մատնանշումներ.--

1.-- «Մօտեցաւ ան որ հարիւր ոսկի դրամ ունէր»: Ինչպէս 500 եւ 200 ոսկի դրամ ունեցողները մօտեցան եւ հաշիւ տուին, այնպէս ալ 100 ոսկի դրամ ունեցողը մօտեցաւ հաշիւ տալու: Շատ պարզեւներ ունեցող մարդը եւ քիչ պարզեւներ ունեցող մարդը երկուքն ալ հաւասարապէս պիտի կանգնին Քրիստոսի դիմաց հաշիւ տալու: Մարդ թող չմտածէ թէ ինք ոչինչ ունի կամ շատ քիչ ունի եւ ուստի կրնայ գերծ մնալ դատաստանէն եւ հաշուետուութեան չկանչուիլ: Որքան ալ քիչ ըլլայ մեզի տրուածը՝ դարձեալ հաշուետուութեան պիտի կանչուինք:

2.- «Տէ՛ր, գիտէի որ խիստ մարդ ես...»: Երրորդ ծառային պատիժը խիստ ծանր եղաւ, որովհետեւ ան գիտնալով հանդերձ որ իր տէրը խիստ էր, իրեն տրուածը շահարկութեան չդրաւ: Անոնք որոնք գիտնալով հանդերձ որ Քրիստոս իր դատաստանին մէջ խի՛ստ պիտի ըլլայ անգիղջ, եւ անդարձ մարդոց հանդէպ, չեն ապաշխարեք եւ բարեգործութեամբ լեցուն կեանք մը չեն ապրիր՝ անոնց պատիժը շատ անելի ծանր պիտի ըլլայ:

3.- «Խիստ մարդ ես»: Այս արտայայտութիւնը նաեւ կը յիշեցնէ մեզի, որ աշխարհի մարդիկ կը կարծեն որ Աստուած կոշտ ու անգութ է մարդկութեան հանդէպ իր վերաբերմունքին մէջ: Մե՛ղքն է որ կը խստացնէ մարդուն սիրտը, բայց դժբախտաբար, մարդ արարածը կը կարծէ որ Աստուած ի՛նք խիստ է: Աստուած խիստ չէ, բայց խի՛ստ պիտի ըլլայ մեղքի հանդէպ թոյլատու վերաբերմունք ունեցողներուն նկատմամբ:

4.- «Կը հնձես ինչ որ չես սերմանած եւ կը հաւաքես ինչ որ չես ցանած»: Յովհաննէս Երզնկացի, կը հաստատէ թէ սո՛ւտ խօսեցաւ երրորդ այս ծառան, որովհետեւ եթէ իր տէրը չէ սերմանած ու չէ ցանած, հապա ուրկէ՞ ինք (ծառան) քովը ունի հարիւր ոսկի դրամ, եւ հիմա եկած տիրոջ կ'ըսէ. «Ահա տուածդ քեզի»: Ասիկա պատկերն է այն մարդոց որոնք ամէն բան կը ստանան Աստուծոյ կողմէ բայց կ'ուրանան որ բան մը ստացած են:

5.- «Կը հնձես ինչ որ չես սերմանած եւ կը հաւաքես ինչ որ չես ցանած»: Զար ծառային բերնին մէջ գտնուող այս արտայայտութիւնը կը յիշեցնէ մեզի որ չար մարդիկ միշտ չար կարծիք կ'ունենան Աստուծոյ հանդէպ, գայն անիրաւ եւ խտրութիւն դնող մէկը սեպելով: Աստուած ի՛նքն է որ ամէն տեսակ բարիք սերմանած ու ցանած է այս աշխարհին մէջ, մարդկութեան կեանքին մէջ, մեր կեանքին մէջ: Բայց չար ծառային այս խօսքը ցոյց կու տայ որ չար մարդիկ կ'ուրանան որ իրենց վայելած բարիքները՝ Աստուծոյ կողմէ տրուած բարիքներ են: Ապերախտ է աշխարհը, որովհետեւ ապերախտութի՛ւն է առնել Աստուծմէ եւ ուրանալ որ առած ենք:

6.- «Վախցայ, ուստի գացի եւ տուած հարիւր ոսկի դրամդ հողին մէջ պահեցի»: Վախը ծառայի յատուկ է, ո՛չ գաւակի: Հոսկէ կը սորվինք թէ անոնք որոնք զԱստուած իրենց հայրը չեն նկատեք եւ իրենք գիրենք Աստուծոյ գաւակները չեն սեպեր՝ միշտ վախի մէջ կ'ըլլան, միշտ կը վախնան Աստուծմէ:

Վախը պատճառ եղած էր որ այս ծառան իրեն տրուածը շահարկութեան չդնէր: Որքա՛ն յաճախ վախը կամ մտահոգութիւնը

պատճառ կ'ըլլայ որ մենք չօգտագործենք Աստուծոյ կողմէ մեզի տրուած պարգեւները, շնորհները, կարողութիւնները: Վախը կրնայ նաեւ ամօթի հետեւանքը ըլլալ: Եթէ կ'ամչնանք մարդոց դիմաց խոստովանելու որ մենք Քրիստոսի հետեւորդներն ենք՝ ասիկա մեր մէջ վախ կը յառաջացնէ, իսկ վախը որ տեղ գտնէ մեր հոգիին մէջ՝ կ'անդամալուծէ մեր բոլոր կարողութիւնները, եւ կը ջլատէ մեր աշխատանքի ամբողջ եռանդը:

7.- «Տուած հարիւր ոսկի դրամդ հողին մէջ պահեցի»: Երբ Աստուծոյ կողմէ մեզի տրուած բարիքները չենք գործածեր իր փառքին ու թագաւորութեան համար, կը նմանինք ուրիշին ոսկին գողցող եւ զանիկա հողին տակ պահող մարդուն:

Ծառային այս խօսքը կարծէք ցոյց կու տայ որ ծառան ինքզինք խոհեմ, ինչպէս, իմաստուն եւ ճարպիկ կը կարծէ: Այնքան ատեն որ իրեն տրուածը չէր մսխած՝ ուրեմն շիտակ ընթացքի մէջ էր, կը կարծէր:

8.- Ըստ երեւոյթին, ծառան կարծէք ինքնավստահ էր որ իր տէրը զինք պիտի չպատժէր, այլապէս ան պիտի չըսէր. «Ահա տուածդ քեզի»: Բայց պատժուեցաւ: Ծառան իրեն տրուած հարիւր ոսկի դրամը չէր մսխած, չէր սպառած, գուր տեղ չէր գործածած, դատարկ ու անիմաստ բանի համար չէր ծախսած, հակառակ այս բոլորին, դատապարտուեցաւ արտաքուստ իր տիրոջ ներկայութենէն: Ի՞նչ կը սորվինք հոսկէ: Մենք պիտի չվարձատրուինք եթէ երբեք Աստուծոյ կողմէ մեզի տրուածը չարիքի համար չգործածենք, այլ պիտի վարձատրուինք, եթէ զայն բարի գործերու համար գործածենք: Ասկէ առաջ բացատրեցի, որ չարիք չընելը չէ որ մեզ վարձատրութեան պիտի արժանացնէ, այլ՝ բարիք ընելը:

Փրկութիւն ձեռք ձգելու համար չի բաւեր չընդդիմանալ Քրիստոսի կամքին, այլ՝ պէտք է հնազանդի՛լ անոր կամքին: Զի բաւեր հակառակ չկենալ Աստուծոյ խօսքը տարածողներուն, այլ՝ պէտք է գօրավի՛գ կենալ անոնց: Շատե՛ր կան որոնք կը կարծեն որ չէզոք դիրք բռնելով, կամ ընդդիմացող ու հակառակող չըլլալով, կարող պիտի ըլլան փրկուիլ ու վարձատրուիլ: Ասիկա սատանայական խաբկանք է:

Երկինքը բարիին չընդդիմացող մարդոց տեղը չէ, այլ՝ Զարին ընդդիմացող եւ բարիին գործակից եղող մարդոց տեղն է: «Հնազանդեցէ՛ք Աստուծոյ, եւ դէմ դրէ՛ք չարախօսին՝ Սատանային» կը պատուիրէ Յակոբոս առաքեալ (Յկ 4.7): Երբ առաքեալը կը պատուիրէ հնազանդիլ Աստուծոյ եւ դէմ դնել Սատանային, խորքին մէջ ըսել կ'ուզէ որ Աստուծոյ հնազանդիլը՝ ինքնին Սատանային դէմ դնել կը նշանակէ:

Յիշեալ ծառան չհնազանդեցաւ իր տիրոջ որ պատուիրած էր իրեն շահարկութեան դնել իրեն տրուածը:

«Տէրը պատասխանեց.- "Չար ու ծոյլ ծառայ, եթէ գիտէիր որ կը հնձնեմ ինչ որ չեմ սերմանած եւ կը հաւաքեմ ինչ որ չեմ ցանած, պէտք էր որ քեզի յանձնած դրամս շահարկողներուն տայիր, որպէսզի վերադարձիս տոկոսով միասին ետ առնէի գայն"» (Մտ 25.26-67): Քանի մը ամփոփ մատնանշումներ.-

1.- Ինչո՞ւ Յիսուս «չար» կը կոչէ այն ծառան որ իրեն տրուած 100 ոսկի դրամը հողին տակ պահեց: Պատասխանը շատ պարզ է: Աստուծոյ հայեացքով բարին չգործելը՝ չարութիւն է: Աստուծոյ կողմէ մեզի տրուած կարողութիւնները, ձիրքերը, պարգեւներն ու շնորհքները, եւ ամէն ինչ որ ունինք, Աստուծոյ փառքին համար չգործածելը՝ չարութիւն է:

2.- «Ծոյլ»: Այս բառը ցոյց կու տայ որ այն անձը որ իրեն տրուածը չի կրկնապատկեր՝ ծոյլ մէկն է: Օրինակ, եթէ մէկը փրկութեան պարգեւ կը ստանայ Աստուծոյ կողմէ եւ չի տարածեր այդ փրկութիւնը, չի բերեր ուրիշը այդ փրկութեան՝ ծոյլ մէկն է, այնպիսի ծոյլ մը՝ որ իրեն տրուած պարգեւները կը կորսնցնէ ժամանակի ընթացքին, ճիշդ ինչպէս 100 ոսկի դրամ ունեցողը կորսնցուց գանիկա իր ծուլութեան պատճառով:

3.- «Չար ու ծոյլ» բառերուն կողքին մենք ունինք «ծառայ» բացատրութիւնը եւս, որ ցոյց կու տայ թէ Քրիստոսի հետեւորդներուն շարքին մէջ միշտ եղած են եւ միշտ պիտի ըլլան այնպիսի մարդիկ «որոնք կ'ուզեն իբրեւ Քրիստոսի առաքեալ ներկայանալ մարդոց: Եւ զարմանալի ալ չէ, որովհետեւ Սատանան ի՛նքն ալ լուսաւոր հրեշտակի կերպարանքով կը ներկայանայ: Հետեւաբար երբեք տարօրինակ չէ, որ անոր ծառայողները իրենք ալ արդարութեան ծառաներու կերպարանքով կը ներկայանան: Իրենց գործերուն համաձայն պիտի ըլլայ նաեւ անոնց պատիժը» (Բ.Կր 11.13-15), ճիշդ ինչպէս 100 ոսկի դրամ ունեցող ծառային պատիժը իր գործերուն համաձայն եղաւ:

4.- «Եթէ գիտէիր որ կը հնձնեմ ինչ որ չեմ սերմանած եւ կը հաւաքեմ ինչ որ չեմ ցանած...»: Նախ, առաջին բառը՝ «գիտէիր», կը պարզէ որ անապաշխար մեղաւորները շատ լաւ գիտեն որ աստուածային դատաստան մը կը սպասէ իրենց: Երկրորդ, անոնք գիտեն թէ ինչ որ ունին՝ Աստուծոյ կողմէ իրենց կեանքի անդաստանին մէջ սերմանուած ու ցանուած է, եւ իրենք պարտին հաշուետուութեան ներկայանալ:

5.- «Պէտք էր որ քեզի յանձնած դրամս շահարկողներուն տայիր»: Տեսնեմք թէ ինչպէս Տէրը «ծոյլ» կը կոչէ երրորդ այս ծառան: Ո՞վ է ծոյլ ծառան: Ան է՝ որ Տիրոջմէ կ'առնէ բայց Տիրոջ համար չի գործածեր:

Նկատի պէտք է առնել որ ծուլութիւնը ուրիշ իմաստ ունի Աստուծոյ հայեացքով եւ ուրիշ իմաստ՝ աշխարհի հայեացքով: Աշխարհային հասկացողութեամբ, մէկը կրնայ շատ վառվռուն եւ աշխատունակ անձ ըլլալ, բայց Աստուծոյ հայեացքով անիկա կրնայ ծոյլ մէկը նկատուիլ:

Օրինակ, եթէ անձ մը իր պատասխանատուին կողմէ իրեն տրուած պարտականութիւնը ամբողջապէս կը կատարէ՝ չի նշանակեր որ Աստուծոյ ակնոցով դիտուած անիկա աշխատասէր մէկն է: Աստուծոյ ակնոցով դիտուած, աշխատասէր մարդիկը անոնք են՝ որոնք ի՛ր կամքը կը կատարեն եւ ո՛չ թէ կամքը իրենց նմաններուն, ի՛ր ծրագրի իրականացման համար կ'աշխատին եւ ո՛չ թէ մարդկային ծրագրներու իրականացման համար, ի՛ր թագաւորութեան տարածման համար կը ֆրտնին եւ ո՛չ թէ մարդոց թագաւորութեան տարածման համար:

Եթէ տրուած այս բացատրութեան լոյսին տակ դիտենք «պէտք էր որ քեզի յանձնած դրամս շահարկողներուն տայիր» հաստատումը, յստակ կը դառնայ թէ մարդիկ իրենց տրուած կարողութիւնները պարտին նախ եւ առաջ Աստուծո՛յ գործին եւ Աստուծո՛յ ծրագրին իրականացման համար գործածել:

6.- 24-րդ համարին մէջ տեսնենք որ այս ծառան «իհստ» կոչեց իր տէրը: Հետաքրքրական է որ ան ո՛չ սէր ունէր հանդէպ իր տիրոջ եւ ո՛չ ալ կը վախնար անկէ: Ասիկա բացորոշ կերպով ցոյց կու տայ որ մեղքի կեանքը սիրող մարդիկ ո՛չ կը սիրեն զԱստուած եւ ո՛չ ալ կը վախնան անկէ: Որովհետեւ եթէ կը վախնան՝ իրենց տրուածը շահարկութեան կը դնեն, գոնէ իրենց պատիժը նուազ կ'ըլլայ: Եթէ մեղաւորին համար դատապարտելի է զԱստուած չսիրելը, շա՛տ աւելի դատապարտելի է Աստուծմէ չվախնալը: Դատաստանին օրը այսպիսիներուն պատիժը շատ ծանր պիտի ըլլայ, ո՛չ թէ որովհետեւ չսիրեցին զԱստուած, այլ որովհետեւ չվախցան անկէ:

7.- «Որպէսզի վերադարձիս տոկոսով միասին ետ առնէի զայն»: Տոկոս բառով Յիսուս կ'ուզէ սորվեցնել մեզի որ հաւատացեալներ պէտք է իմաստութիւնը ունենան աշխարհէն բարիքներ փողովու եւ զանոնք Աստուծոյ կամքի կատարման համար գործածելու: Եթէ մենք փափաք ու պատրաստակամութիւն ունինք Աստուծոյ կամքը կատարելու՝ Աստուած անպայման առիթներ կը ստեղծէ մեզի իր կամքը կատարելու:

Որքան շատ արդիւնք բերենք՝ այնքան աւելի պիտի ըլլայ մեր վարձատրութիւնը, իսկ որքան նուազ արդիւնք բերենք՝ այնքան նուազ պիտի ըլլայ մեր վարձատրութիւնը: Բայց արդեօք աւելի լաւ չէ՞ փչ արդիւնք բերել քան բնաւ արդիւնք չբերել, քան մը՝ որ մեզ պատիժի ենթակայ պիտի դարձնէ: Հաւատացեալ մարդը կրնայ մէկի տեղ 100

բերել, 60 բերել, կամ 30 բերել (Մտ 13.8), այլ խօսքով՝ կրնայ շատ արդիւնք բերել, կրնայ միջակ արդիւնք բերել, կրնայ քիչ արդիւնք բերել, եւ բոլորն ալ ընդունելի պիտի ըլլան Աստուծոյ դիմաց, բայց բնաւ արդիւնք չբերելը՝ անընդունելի պիտի ըլլայ:

«Հիմա առէ՛ք անկէ հարիւր ոսկի դրամը եւ տուէ՛ք անոր՝ որ հազար ունի» (Մտ 25.28): Ամփոփ մատնանշումներ.–

1.– «Առէ՛ք անկէ հարիւր ոսկի դրամը»: Ինչ որ Աստուած տուաւ մեզի՝ գայն մեզմէ առնելու բացարձակ իրաւունքը ունի: Բայց առնողը այստեղ ինք չէ, այլ վստահաբար իր ծառաներն են, այլ խօսքով՝ հրեշտակները: Զմոռնանք որ Քրիստոսի երկրորդ գալուստին հրեշտակները իրե՛նք են որ պիտի դրկուին Տիրոջ կողմէ չարագործները հաւաքելու եւ զանոնք բոցավառ հնոցին մէջ նետելու (Մտ 13.41-42):

2.– «Առէ՛ք»: Նկատի պէտք է առնել որ Քրիստոս ի՛նքն է որ այս հրահանգը կու տայ: Հրահանգ մը՝ որ կը պարզէ Քրիստոսի դատաւորական հանգամանքը: Քրիստոս իբրեւ շնորհաբաշխ Աստուած՝ առատօրէն կու տայ մեզի, բայց իբրեւ Դատաւոր, կ'առնէ մեզմէ ինչ որ ունինք, եթէ մեզի տրուածը չենք գործածած իր փառքին համար:

3.– «Եւ տուէ՛ք անոր՝ որ հազար ունի»: Հարկաւ այս խօսքը չի նշանակեր թէ մէկուն չստացած վարձատրութիւնը ուրիշի մը պիտի տրուի: Մէկը միւսին վարձատրութիւնը պիտի չստանայ: Իւրաքանչիւրը իր գործերուն համաձայն հատուցում պիտի ստանայ (Հո 2.6): Այստեղ երբ Տէրը կը հրահանգէ որ 100–ը առնուի եւ 1000 ունեցողին տրուի, պարզապէս կ'ուզէ ցուցնել մեզի թէ արքայութիւնը ժառանգող հաւատացեալներուն փառքը անսահմանօրէն մեծ պիտի ըլլայ:

Միաժամանակ, երբ Տէրը կը հրահանգէ 100–ը առնել եւ 1000 ունեցողին տալ, կ'ուզէ ցոյց տալ թէ բոլոր մարդիկ անխտիր կոչուած են արքայութիւնը ժառանգելու, բայց ոմանց անտարբերութիւնը եւ անպատասխանատու վերաբերմունքը պատճառ կ'ըլլայ որ անոնք զրկուին իրենց վերապահուած երկնային փառքէն, եւ այն փառքը տրուի կամ յատկացուի (եիշդ ինչպէս այստեղ 100–ը կ'առնուի եւ 1000 ունեցողին կը տրուի) միայն անոնց՝ որոնք պիտի ըլլան ժառանգորդները Քրիստոսի արքայութեան:

«Որովհետեւ ունեցողին պիտի տրուի՝ նոյնիսկ աւելիով, իսկ չունեցողէն պիտի առնուի ունեցած փոքր քաժինն ալ» (Մտ 25.29): Ամփոփ մատնանշումներ.–

1.– «Որովհետեւ ունեցողին պիտի տրուի՝ նոյնիսկ աւելիով»: Այն անձը որ պահած ու գործածած է Աստուծոյ կողմէ իրեն տրուած բարիքները՝ նոյնիմանքն Աստուծոյ փառքին համար, պիտի դառնայ

ժառանգորդը երկնային բոլոր տեսակի բարութեանց, այս իմաստով, անոր աւելիով տրուած կ'ըլլայ:

Ան որ հիմա՝ ներկայիս, որոշ չափով կ'ապրի Աստուծոյ ներկայութեան մէջ, յետոյ՝ Տիրոջ երկրորդ գալուստին, Տիրոջ ներկայութիւնը ո՛չ միայն աւելիով պիտի շնորհուի իրեն, այլ ամբողջապէս այդ ներկայութեան մէջ պիտի առնուի եւ արբենայ անով:

Եթէ վիրաւոր սիրտերը բուժելու կարողութիւնը ունինք եւ կ'օգտագործենք այդ կարողութիւնը, երբ Տէրը յայտնուի, աւելիով պիտի տայ մեզի, այսինքն՝ կատարեալ միօրայեան պիտի տայ մեզի: Մէկ խօսքով, ինչ որ հիմա ունինք՝ յետոյ աւելիով պիտի ունենանք: Օրինակ, սէ՞ր ունինք, յետոյ ամբողջ սիրոյ ովկիանոսը՝ երկինքը պիտի ունենանք: Ողորմութի՞ւն կու տանք, ժամանակներու աւարտին Ողորմածը ի՞նք մեզի պիտի շնորհուի:

Բայց «ունեցողին պիտի տրուի՝ նոյնիսկ աւելիով» խօսքը, նաեւ առնչութիւն ունի ներկայ կեանքին հետ: Ներկայ կեանքին մէջ ինչ ձիրք, պարգեւ կամ շնորհք որ ունինք՝ եթէ գործածենք զանոնք՝ անոնք աւելի՛ կը զարգանան եւ կ'ամրապնդուին մեր մէջ: Զգործածուող ձիրքն ու կարողութիւնը, պարգեւն ու շնորհքը, ժամանակի ընթացքին կը ժանգոտի եւ ալ բնաւ բանի մը չի ծառայեր:

2.- «Չունեցողէն պիտի առնուի ունեցած փոքր բաժինն ալ»: Հոս գործածուած «չունեցող» բառով Յիսուս ըսել չ'ուզեր թէ կան մարդիկ որոնք ունենան ձիրք, պարգեւ, շնորհք կամ կարողութիւն չունին: Խօսքը այն մարդոց մասին է որոնք որոշ բան մը ունենին, բայց իրենց ծուլութեան պատճառով իրենց ունեցածը ոչնչութիւն դարձաւ եւ այդ ձեւով «չունեցող» նկատուեցան:

3.- «Չունեցողէն պիտի առնուի ունեցած փոքր բաժինն ալ»: Ան որ կը կարծէ թէ ինք որոշ բաներ ունի երկրի վրայ, ո՛չ միայն երկինքը պիտի չտրուի իրեն, այլ «փոքր բաժինն ալ», այլ խօսքով՝ երկիրն ալ իր ձեռքէն պիտի իլուի: Յաւիտեանականին համար չաշխատող մարդէն ժամանակաւորն ալ (որ «փոքր բաժին» մըն է) պիտի իլուի:

«Իսկ այս անպիտան ծառան դուրսը մութին հանեցէք: Թող հոն լայ եւ ակռաները կրնտէ» (Մտ 25.30): Ամփոփ մատնանշումներ.-

1.- «Իսկ այս անպիտան ծառան դուրսը մութին հանեցէք»: Ի՞նչ ցոյց կու տայ ծառային համար գործածուած «անպիտան» բառը: Տոյց կու տայ որ ան Աստուծոյ արքայութեան մէջ ո՛չ մէկ բանի համար կրնայ պիտանի ըլլալ, ո՛չ կրնայ զԱստուած փառաբանել, ո՛չ կրնայ ցնծալ Աստուծոյ ներկայութեամբ, ո՛չ կրնայ ուրախանալ Աստուծով եւ ո՛չ ալ

կրնայ ուրախացնել զԱստուած: Եթէ երկրի վրայ բան մը չըրաւ Աստուծոյ համար՝ երկինքի մէջ ի՞նչ կրնայ ընել:

2.- «Դուրսը մութին հանեցէք»: Քրիստոս ի՛նքն է լոյսը աշխարհին (Յհ 8.12), ուստի, «դուրսը մութին» հանել, կը նշանակէ գայն Քրիստոսի ներկայութենէն զրկել, եւ Քրիստոսի ներկայութենէն զրկուիլը՝ մա՛հ է յաւիտենական, Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Այն օրը, այդպիսիները յաւիտենական մահուամբ պիտի պատժուին, զրկուելով Տիրոջ ներկայութենէն եւ անոր փառաւոր գօրութենէն, երբ անիկա գայ իր սուրբերուն մէջ փառաւորուելու եւ բոլոր իրեն հաւատացողներուն հիացումին առարկան դառնալու» (Բ.ԹԿ 1.9-10):

3.- Եթէ «մութ» բացատրութիւնը մէկ կողմէ ցոյց կու տայ Աստուծոյ լուսաւոր ներկայութենէն հեռու վիճակ մը, միւս կողմէ սակայն, մեղաւոր մարդուն ներքին աշխարհն է որ կը բացայայտէ: Մեղքը սիրող մարդուն ներսիդին մութ կ'ըլլայ: Մեղաւոր մարդը կ'ատէ լոյսը եւ խաւարասէր կ'ըլլայ, ինչպէս Յովհաննէս Աւետարանիչ կ'ըսէ. «Ով որ չար գործ կը կատարէ՝ կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին» (Յհ 3.20): Այո՛, կ'ատէ լոյսը: Մեղաւոր եւ անգիղջ մարդը կ'ատէ՛ լոյսը, կ'ատէ՛ զԱստուած, կ'ատէ՛ ամէն բան որ բարի է ու բարիի գործակից, միշտ անոր համար իրեն տեղ պիտի չտրուի Աստուծոյ արքայութեան մէջ, այլ «դուրսը մութին» պիտի հանուի:

Ոմանց մօտ տարօրինակ մտածում մը կը գտնենք: Անոնք կը հաւատան որ ժամանակ պիտի գայ երբ Աստուած պիտի գթայ գեհեմի մէջ եղողներուն եւ զանոնք արքայութիւն պիտի առնէ: Տարբեր գիրքի մէջ այս մասին խօսած ենք: Այստեղ պարզապէս կ'ուզեմ ըսել, թէ նոյնիսկ եթէ Աստուած գեհեմի մէջ եղողներուն ըսէ. «Հրամմեցէք արքայութիւն եկէք», անոնք պիտի մերժեն: Ինչո՞ւ: Որովհետեւ, իրենք որ իրենց ամբողջ կեանքի ընթացքին սիրած են խաւարը եւ անոր մէջ ապրած, ի՞նչպէս հիմա յանկարծ լոյսը սիրելու եւ լոյսին մէջ բնակելու կարող պիտի ըլլան:

Մահէն անդին չկա՛յ ապաշխարութիւն, հետեւաբար, ի՞նչպէս չապաշխարած մարդիկ կրնան երկինք մտնել եւ Աստուծոյ ներկայութեան մէջ ապրիլ: Յետոյ յիշենք նաեւ որ երկնային կեանքը երկրաւոր կեանքին շարունակութիւնն է, աւելի կատարեալ ձեւով մը: Եթէ մէկը հոս մօտիկ եղած է Քրիստոսի՝ հո՛ն ալ մօտիկ պիտի ըլլայ: Իսկ եթէ մէկը երկրի վրայ ապրած է առանց Աստուծոյ՝ մահէն անդին ալ պիտի շարունակէ ապրիլ առանց Աստուծոյ:

4.- «Թող հոն լայ եւ ակոսները կրնտէ»: «Թող հոն լայ»: Մէկը որ իր ուրախութիւնը չի տեսներ Աստուծոյ հետ իր ունեցած

յարաբերութեան մէջ՝ անոր բաժինը յաւիտեանական լալն ու սուգն է: Սիրտ մը որուն մէջ Աստուած չի բնակիր՝ այդ սիրտը սուգի տուն է, լացի հովիտ է, տրտմութեան անդունդ է:

«Թող հոն լայ» բառերը կրնայ նիւթական հասկացողութիւն ունենալ, բայց նիւթական իմաստին կողքին, ակնարկութիւն է այն ցաւագին ողբին ու կոծին, այն անսահման գոջումին ու վիշտին, որ անապաշխար մարդուն հոգին պիտի ապրի գեհեների կրակներուն մէջ:

«Ակոսները կրճտել» բացատրութիւնը ակնարկութիւն է երեք բանի.–

ա.– Ակնարկութիւն է այն ցաւի սաստկութեան որ անապաշխար մարդը պիտի ապրի գեհեներին մէջ:

բ.– Ակնարկութիւն է այն անտանելի խղճահարութեան գոր ան պիտի ունենայ այդտեղ:

գ.– «Ակոսները կրճտել»ը նաեւ մեզի կը յիշեցնէ թէ այն մարդը որ իր բերնովը չիտստովանեցաւ Յիսուսը իբրեւ Տէր ու Թագաւոր՝ իր բերանը աղիողորմ՝ նիչերով պիտի բանայ գեհեներին մէջ: Այո՛, նշմարտութեան համար չվկայող բերանը՝ ցաւով պիտի աղաղակէ գեհեներին մէջ:

ԱՌԱԿԻՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹԻԻՆԸ

Մեկնիչ հայր մը կ'ըսէ.–

«500 ոսկի դրամ ունեցող մարդը կը խորհրդանշէ այն հաւատացեալը որ իր հինգ գգայարանները իր երկնաւոր Փեսային՝ Քրիստոսի նուիրաբերած է, որպէսզի անոնց ընդմէջէն Սուրբ Հոգին մուտք գործէ իր մէջ եւ լեցնէ զինք:

200 ոսկի դրամ ունեցող մարդը կը խորհրդանշէ այն հաւատացեալը որուն սիրտը ա՛յնքան լեցուած կ'ըլլայ սիրով իր հաւատակից եղբօր հանդէպ, որ անոր հետ միասին կը կազմէ մէկ ամբողջութիւն: Ճիշդ ասոր համար ալ կը տեսնենք որ Բարի Սամարացին (Քրիստոս) երկու արծաթ դահեկան կու տայ պանդոկապետին, որ իր սիրոյ արտայայտութիւնն էր վիրաւոր մարդուն հանդէպ: Կը տեսնենք թէ ինչպէս այրի կիներ երկու լումայ կը նետէ Տաճարի գանձանակին մէջ, որ Աստուծոյ եւ իր նմանին հանդէպ իր սիրոյ ցուցանիշներն էին: Կը տեսնենք թէ ինչպէս երկու հրեշտակներ Տիրոջ գերեզմանին մէջ կեցած էին՝ մէկը Տիրոջ գլուխին կողմը, իսկ միւսը՝ ոտքին, մատնանիշ ընելով այն սէրը որ իրարու կապեց

երկնայիններն ու երկրայինները, եւ այս ձեւով բոլորը մէկ մարմին
եղան, խաչեալ Քրիստոսով... :

Իսկ 100 ոսկի դրամ ունեցող մարդը որ իր ունեցածը հողին տակ
թաղեց, կը խորհրդանշէ եսակեդրոն ու անճնասէր մարդը, որ իր անձին
համար միայն կ'աշխատի եւ իր ունեցածը միայն իրեն համար կը պահէ,
եւ բնա՛ւ սիրով չի կապուիր Աստուծոյ եւ իր նմանին հետ»:

ԾԱՌԱՅԻ ՄԸ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

«Ենթադրենք որ ձեզմէ մէկը ծառայ մը ունի, որ հողագործ է կամ հովիւ: Երբ ծառան դաշտէն դառնայ եւ տուն մտնէ, տէրը իրեն կ'ըսէ՞. "Անմիջապէս գնա՛, ցաշո՛ կեր": Բնականաբար ո՛չ: Ընդհակառակը, անոր կ'ըսէ. "Ընթրիփս պատրաստէ եւ գոգնոցդ կապելով սպասարկէ՛ ինծի, մինչեւ ընթրիփս վերջացնեմ, անկէ ետք կրնաս ուտել ու խմել": Կը կարծէ՞ք որ տէրը իր ծառային երախտապարտ պէտք է ըլլայ իր հրահանգները կատարելուն համար: Զեմ կարծեր: Դուք ալ նոյնպէս, երբ կը կատարէք ինչ որ հրամայուած է ձեզի, ըսէք. "Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք"» (Ղկ 17.7-10):

«Ենթադրենք որ ձեզմէ մէկը ծառայ մը ունի, որ հողագործ է կամ հովիւ: Երբ ծառան դաշտէն դառնայ եւ տուն մտնէ, տէրը իրեն կ'ըսէ՞. "Անմիջապէս գնա՛, ցաշո՛ կեր": Բնականաբար ո՛չ» (Ղկ 17.7):

Քրիստոս պատահական ծառաներու կամ պաշտօններու մասին չի խօսիր, այլ կը խօսի հողագործի եւ հովիւի մասին: Ինչո՞ւ արդեօք: «Հողագործ» եւ «հովիւ» բացատրութիւններով, Քրիստոս կ'ուզէ ֆրիստոնեայ մարդուն, այլ խօսքով՝ հաւատացեալ մարդուն առաքելութեան եւ պարտականութեան երկու գլխաւոր երեսները ցոյց տալ մեզի: Առաջին երեսը՝ Աստուծոյ խօսքը սերմանելու երեսն է, որ կը յատկանշուի «հողագործ» բացատրութեամբ, իսկ երկրորդ երեսը՝ Աստուծոյ խօսքին զօրութեամբ դարձի եկողները հովուելու երեսն է, որ կը յատկանշուի «հովիւ» բացատրութեամբ:

«Հողագործը» սերմանող մարդն է: Ամէն իսկական հաւատացեալ պարտականութիւնը ունի Աստուծոյ խօսքին սերմը ցանելու աշխարհի արտին մէջ: Հաւատացեալ մարդը պէտք է վստահի իր խօսքի զօրութեան կամ ուժգնութեան, պէտք է ապաւինի իր բառերու կամ նախադասութեանց յստակութեան, այլ պէտք է ապաւինի Աստուծոյ խօսքին զօրութեան եւ պարզութեան, որովհետեւ Աստուծոյ խօսքն է որ կը փրկէ մարդոց հոգիները եւ ոչ մե՛ր խօսքը, ինչպէս Յակոբոս առաքեալ կ'ըսէ. «Հեզութեամբ ընդունեցէք ձեր մէջ սերմանուած Աստուծոյ խօսքը, որ կրնայ ձեր հոգիները փրկել» (Յկ 1.29): Մեր բառերը որքան ալ գեղեցիկ ըլլան, որքան ալ ազդեցիկ ըլլան, որքան ալ ուժգին ըլլան, անոնք չեն կրնար մարդիկը դարձի բերել եւ անոնց սիրտերը այլակերպել: Սիրտերը այլակերպողը Սուրբ Հոգին ինքն է:

Ահա թէ ինչու Աստուած Զաբարիա մարգարէին բերնով կը յայտարարէ ըսելով. «Զօրութեամբ չէ եւ ուժով չէ, հապա իմ Հոգիովս» (Զբ 4.6):

«Հովիւր» հովուութիւն ընող մարդն է: Ամէն իսկական հաւատացեալ պէտք է ինքզինքն հովիւ, այլ խօսքով՝ առաջնորդ նկատէ: Հաւատացեալ մարդը կոչոււմը ունի իր միջավայրի մարդոց քայլերը առաջնորդելու դէպի Աստուած եւ դէպի երկինք: Զի բաւեր Աստուծոյ խօսքը քարոզել մարդոց, այլ պէտք է աշխատանք տանիլ զանոնք Քրիստոսի խաչին առաջնորդելու:

Տակաւին, հողագործին պարտականութիւնը միայն սերմը սերմանելը չէ, այլ սերմը սերմանելէ ետք, ան պէտք է մաքրէ այն բոլոր փուշերն ու աւելորդ խոտերը որ կը խեղդեն սերմը եւ թոյլ չեն տար որ ծլի, հասակ առնէ եւ աճի: Ահա նոյնպէս, Աստուծոյ խօսքին սերմնացանը ինքն եւս պէտք չէ բաւարարուի լոկ Աստուծոյ խօսքը սերմանելով, այլ պէտք է աշխատանք տանի զգուշացնելու ունկնդիրները աշխարհի փուշերէն ու տատասկներէն, այլ խօսքով՝ տեսակ-տեսակ մեղքերէն ու հրապոյրներէն, մանաւանդ պէտք է զգուշացնէ զանոնք իսկական փուշերէն, այսինքն՝ սխալ վարդապետութիւններ ու ուսուցումներ քարոզողներէն, որոնք կրնան խաբել ու կործանել մարդիկը:

Եւ սակայն, Աստուծոյ խօսքը քարոզելը եւ հաւատացեալները սխալէն ու մեղքէն զգուշացնելը բաւարար չէ, այլ պէտք է հովիւի նման զանոնք առաջնորդել նշմարտութեան ճամբէն եւ դէպի նշմարտութիւն: Հո՛ւս է որ հովիւին բաժինը կը սկսի: Ինչպէս հովիւին հիմնական պարտականութիւնը առաջնորդելն է իր ոչխարները դէպի խոտաւետ արօտավայրերը, այնպէս ալ, հաւատացեալին հիմնական պարտականութիւնը մարդիկը առաջնորդելն է դէպի Քրիստոսի արօտավայրերը, ուր իրենց կը սպասէ առաքինութեանց բազմատեսակ ծառերը, Հոգիով լեցուն կեանքը, Կենաց Գետը եւ երկնային Մանանան:

«Ենթադրեմք որ ձեզմէ մէկը ծառայ մը ունի, որ հողագործ է կամ հովիւ»: Եզրակացնեմք մեր խօսքը այս հաստատումին վերաբերեալ: «Ծառայ» բառով Յիսուս կ'ուզէ ցոյց տալ մեզի որ իր հետեւորդները՝ իր ծառաներն են, եւ պարտին ծառայել ու աշխատիլ այնպէս ինչպէս հողագործն ու հովիւը կ'աշխատին:

«Երբ ծառան դաշտէն դառնայ եւ տուն մտնէ, տէրը իրեն կ'ըսէ՞. "Անմիջապէս գնա՛, ճաշդ կեր": Բնականաբար ո՛չ»: Յիսուս իր այս բառերով կու գայ սորվեցնելու մեզի որ իր ծառաները պէտք չէ վարձատրութիւն ու հատուցում ակնկալեն իրենց երկրաւոր կեանքի ընթացքին: Արդարեւ, երբ Քրիստոսի դաշտին մէջ ենք, երբ տակաւին

անոր այգիին մէջ կ'աշխատինք ու կը տփնինք, պէտք չէ ակնկալենք որ մեզի ըսուի. «Անմիջապէս գնա՛, մաշո՛ կեր»։ Հաւատացեալ մարդը իր երկրաւոր կեանքի ընթացքին որոշ չափով միայն կը մաշակէ Քրիստոսի ներկայութիւնը, բայց Տիրոջ երկրորդ գալուստէն ետք, ան ամբողջովին պիտի մաշակէ ու պիտի կշտանայ անոր բաղքը ներկայութեամբ։

«Ընդհակառակը, անոր կ'ըսէ. "Ընթրիքս պատրաստէ եւ գոգնոցդ կապելով սպասարկէ՛ ինծի, մինչեւ ընթրիքս վերջացնեմ, անկէ ետք կրնաս ուտել ու խմել"» (Ղկ 17.8)։ Քանի մը հակիրճ բացատրութիւններ.–

1.– Ինչո՞ւ Քրիստոս կ'ըսէ թէ «Երբ ծառան դաշտէն դառնայ եւ տուն մտնէ», տէրը անոր կ'ըսէ. «Ընթրիքս պատրաստէ եւ գոգնոցդ կապելով սպասարկէ՛ ինծի»։ Կարելոր ճշմարտութիւն մը կայ այստեղ որ մեր ուշադրութենէն պէտք չէ խուսափի։ Այստեղ մեզի ուսուցուածը այն է, որ երբ Քրիստոսի հետեւորդները կը վերադառնան դաշտէն, այլ խօսքով՝ երբ կը կատարեն Քրիստոսի կողմէ իրենց յանձնուած գործերն ու պարտականութիւնները, պէտք է նաեւ օրուայ աւարտին կատարեն իրենց պարտականութիւնը նոյնիման Քրիստոսի հանդէպ, եւ ատիկա կ'ըլլայ աղօթքով։ Հետեւաբար, «դաշտէն դառնալ» կը նշանակէ՝ գործէն դառնալ, իսկ «տուն մտնել» կը նշանակէ՝ առանձնանալ Տիրոջ հետ, մենիկ պահ անցնել Տիրոջ հետ։

Իժբախտ աւարտ կ'ունենան այն «հաւատացեալները» որոնք ժրջանօրէն կ'աշխատին Քրիստոսի դաշտին մէջ եւ սակայն աղօթող մարդիկ չեն։ Աւելի՛ գործ կրնայ կատարել այն անձը որ շատ աղօթող ու քիչ գործող ու խօսող է, քան այն անձը՝ որ քիչ աղօթող ու շատ գործող ու խօսող է։ Քիչ չէ թիւը այն հաւատացեալներուն որոնք գործին աւելի՛ կարեւորութիւն կու տան քան աղօթքին։ Նման հաւատացեալներ կը մոռնան որ աղօթքը եւս գործ է, եւ ամենէն մեծ գործը, ամենէն կարեւոր գործը։ Աղօթքով չզսպանակուած գործ մը կամ աշխատանք մը՝ դատապարտուած է ձախողութեան։ Գործի մը յաջողութիւնը պայմանաւորուած է աղօթքով։ Փաստուած եւ յայտնի իրողութիւն է, որ շատ աղօթող ու քիչ խօսող քարոզիչներ շատ աւելի մարդոց դարձի ու փրկութեան պատճառ կը դառնան, քան քիչ աղօթող ու շատ խօսող քարոզիչներ։

2.– «Ընթրիքս պատրաստէ եւ գոգնոցդ կապելով սպասարկէ՛ ինծի»։ Ճիշդ է որ Յիսուս տիրոջ մը եւ իր ծառային օրինակը կու տայ, բայց խորքին մէջ իր եւ իր հետեւորդներուն յարաբերութեան մասին է որ կը խօսի անուղղակիօրէն։ Ընթրիքը պատրաստելն ու գոգնոցը կապելով

սպասարկելը՝ ծառայի պատկերն է որ կը ներկայացնէ: Ծառայի մը՝ որ ուղղակիօրէն իր Տիրոջ է որ կը ծառայէ:

Վերեւ խօսուեցաւ դաշտին մէջ աշխատելուն մասին, իսկ այստեղ կը խօսուի Տիրոջ համար ընթրիք պատրաստելուն եւ անոր սպասարկելուն մասին: Դաշտին մէջ աշխատելը՝ Տիրոջ համար ծառայութիւն մատուցանել կը նշանակէ, իսկ ընթրիք պատրաստելն ու անոր սպասարկելը՝ Տիրոջ ծառայել կը նշանակէ: Այս երկուքը զիրար կ'ամբողջացնեն բայց նոյն բաները չեն: Ի՞նչ է տարբերութիւնը «**Տիրոջ համար ծառայել**»ուն եւ «**Տիրոջ ծառայել**»ուն: Բոլոր հաւատացեալները Տիրոջ համար կը ծառայեն, բայց բոլորը չեն որ Տիրոջ կը ծառայեն: Գործել Քրիստոսի դաշտին մէջ առանց Քրիստոսի գործակցութիւնը վայելելու՝ կը նշանակէ ծառայել Տիրոջ համար առանց ծառայելու Տիրոջ: Որքա՛ն մարդիկ կան որոնք ծառայութիւններ կը մատուցեն Քրիստոսի անունով ու Քրիստոսի այգիին մէջ, առանց սակայն Քրիստոսի ծառաները ըլլալու: Քրիստոսի ծառաները ըլլալու համար՝ պէտք է յանձնուիլ Քրիստոսի, մատուցուիլ Քրիստոսի, վստահիլ Քրիստոսի, սիրել Քրիստոսը, եւ գործել միայն այն ատեն՝ երբ Քրիստոս կը հրահանգէ, ընել միայն այն՝ որ Քրիստոս կը կամենայ, եւ երթալ միայն հոն՝ ուր Քրիստոս կը դրկէ:

3.- Ուրիշ գեղեցիկ խորհուրդ մը եւս կրնանք տեսնել «ընթրիք պատրաստէ» բառերուն մէջ: Ի՞նչ է այն ընթրիքը գոր իւրաքանչիւր հաւատացեալ պէտք է պատրաստէ Քրիստոսի համար: Այն ընթրիքը նոյնիման ներկայութիւնն է հաւատացեալին: «Ընթրիք պատրաստել Տիրոջ», կը նշանակէ մեր անձերը մատուցել Տիրոջ եւ թոյլ տալ որ Տէրը կշտանայ մեզմով, ուրախանայ մեզմով, գուարանայ մեր ներկայութեամբ: Թէ Աստուած կ'ուրախանայ մեզմով՝ աստիկա շատ յստակօրէն կ'երեւի անառակ որդիին, կորսուած ոչխարին եւ կորսուած դրամին առակներուն մէջ:

Քրիստոս հաստատեց որ «երկինքի մէջ ուրախութիւն պիտի ըլլայ մէկ ապաշխարող մեղաւորի համար» (Ղկ 15.7): Աստուած պիտի չուրախանար մեր դարձով եթէ երբեք ան մեր փրկութեամբ հետաքրքրուող մէկը չըլլար: Ինչպէս մեր հեռացումը իրմէ կը տրտմեցնէ զինք, այնպէս ալ մեր մերձեցումը իրեն՝ ցնծութեամբ կ'ողողէ անոր սիրտը: Աստուած կ'ուրախանայ երբ իր գաւակները իր շուրջ համախմբուած կը տեսնէ: Աստուծոյ ուրախութիւնը իր գագաթնակէտին կը հասնի երբ իր գաւակները իրեն հետ են իր տանը մէջ: Կը տխրի ցնծութեան Աստուածը երբ իր գաւակները հեռու կը տեսնէ իրմէ: Կը խոռովի խաղաղութեան իշխանը երբ իր գաւակները զինք

թողուցած այլուր խաղաղութիւն կ'որոնեն: Բայց երբ անոնք դառնան խաղաղութեան իշխանին՝ Քրիստոսի, երբ անոնք դառնան կեանքի արարիչին, կեանքի Տիրոջ ու տուիչին, այն ատեն, միայն այն ատեն, անոնց պիտի տրուի լաւագոյն պատմութեանը, անգին մատանին, գեղեցկագոյն կօշիկը, ապա սկիզբ պիտի առնէ անվախեան ուրախութիւնը, ուրախութիւն մը՝ որ Ամենակարողէն կու գայ (Յոր 22.26): Ուրախութիւն մը՝ որ միայն Աստուծոյ ներկայութենէն կրնայ բխիլ:

4.- «Ընթրիքս պատրաստ է գոգնոցդ կապելով սպասարկէ՛ ինձի»: Հետաքրքրական է հարց տալ թէ ինչո՞ւ Յիսուս կը խօսի «ընթրիք» մասին, փոխանակ խօսելու «նախաճաշի» կամ «ճաշի» մասին: Յիսուս չի խօսիր «նախաճաշի» մասին, որովհետեւ նախաճաշը օրուան սկիզբը տեղի կ'ունենայ, տակաւին ծառաները գործի գացած չեն ըլլար, եւ ուստի, դաշտէն տուն դառնալու հարց չկայ, ընդհակառակը, տունէն դաշտ երթալու հարց կայ: Ո՛չ ալ կը խօսի «ճաշի» մասին, որովհետեւ ճաշը օրուան կէսը հասած ըլլալու պատկերն է որ կը յիշեցնէ, եւ հետեւաբար, ծառաները գործին կէսն է որ կատարած կ'ըլլան: Այլ կը խօսի «ընթրիքի» մասին, որովհետեւ ընթրիքը օրուան աւարտն է որ կը յիշեցնէ մեզի. այս հանգրուանին ծառաները իրենց յանձնուած պարտականութիւնները իրենց աւարտին հասցուցած կ'ըլլան: Հոգեւոր իմաստով մը, կրնանք ըսել, որ Յիսուս «ընթրիք» բացատրութեամբ, կը յիշեցնէ մեզի որ հաւատացեալ մարդիկ պէտք է աշխատին մինչեւ իրենց կեանքի աւարտը, մինչեւ Քրիստոսի կողմէ իրենց յանձնուած գործերու կատարումն ու ամբողջացումը:

5.- «Գոգնոցդ կապելով սպասարկէ՛ ինձի»: «Գոգնոցը կապել»ը պատրաստ ըլլալու վիճակ մըն է որ կ'արտայայտէ: Ան որ Տիրոջ սպասարկել, այլ խօսքով՝ ծառայել կ'ուզէ, պէտք է մնայուն կերպով պատրաստ վիճակի մէջ ըլլայ, պատրաստակամ ըլլայ ընելու ոեւէ գործ, ոեւէ ատեն, ոեւէ տեղ:

6.- «Սպասարկէ՛ ինձի, մինչեւ ընթրիքս վերջացնեմ, անկէ ետք կրնաս ուտել ու խմել»: Վերջին բառերը՝ «անկէ ետք կրնաս ուտել ու խմել» կը պարզեն որ Տէրը մեզի համար երկինքի արքայութեան մէջ սքանչելի ընթրիք պատրաստած է, բայց պիտի չկրնանք մասնակից դառնալ այդ ընթրիքին եթէ նախ մենք չպատրաստենք ընթրիք Տիրոջ համար, ահա թէ ինչու բնագիրը կը խօսի ծառային ընթրիք պատրաստելուն մասին եւ «անկէ ետք» անոր ուտելուն ու խմելուն մասին: Հետեւաբար, «անկէ ետք» բառերը ցոյց կու տան որ

հաւատացեալը նախ իր բաժինը ունի ընելիք, «անկէ ետք» միայն ստանալու համար իր բաժինը, իր հատուցումը:

Հաւատացեալին Տիրոջ տալիք եւ Տիրոջ համար պատրաստելիք ընթրիքը իր ներկայութիւնն է, ինչպէս վերեւ ըսի: Սովորաբար հաւատացեալներ կը խօսին Քրիստոսով կշտանալու մասին. քիչեր կը խօսին Քրիստոսը կշտացնելու մասին: Զըլլանք անձնասէր հաւատացեալներ, այլ մտածենք, թէ ինչպէս Քրիստոս կ'ուզէ մեզ կշտացնել, այնպէս ալ կ'ուզէ մեզմով կշտանալ: Յիշենք որ եթէ ան մէկ կողմէ ըսաւ. «Ով որ ծարաւ է՝ թող ինծի գայ եւ խմէ» (Յհ 7.37), միւս կողմէ սակայն, խաչին վրայ յիշեցուց մեզի որ ինքն ալ ծարաւ է (Յհ 19.28): Մտաբերենք նաեւ որ Յիսուս Սամարացի կնոջմէն ջուր պահանջեց. «Ջուր տուր ինծի» (Յհ 4.7): Այս համեմատութիւնը յստակօրէն ցոյց կու տայ որ մեր Տէրը կ'ուզէ կշտացնել մեզ եւ կշտանալ մեզմով: Այս իրողութիւնը կը պարզէ, որ ինչպէս մարդը կարօտ է Աստուծոյ, այնպէս ալ Աստուած կարօտ է մարդուն: Հարկաւ երբ կ'ըսենք՝ «Աստուած կարօտ է մարդուն», այս չի նշանակեր որ Աստուած մարդուն կարիքը ունի կամ Աստուած որոշ կարօտութենէ մը կը տառապի. նման հաստատում պարզապէս կ'արտացոլացնէ այն մեծ սէրը որ Աստուած ունի մարդուն հանդէպ: Մարդուն հանդէպ Աստուծոյ անհուն սէրն է որ Աստուծոյ մէջ կարօտի զգացում յառաջ կը բերէ մարդուն հանդէպ:

«Կը կարծէ՞ք որ տէրը իր ծառային երախտապարտ պէտք է ըլլայ իր հրահանգները կատարելուն համար: Զեմ կարծեր: Դուք ալ նոյնպէս, երբ կը կատարէք ինչ որ հրամայուած է ձեզի, ըսէք. "Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք"» (Ղկ 17.9-10): Քանի մը ամփոփի հաստատումներ.---

1.- Այս երկու համարները յստակօրէն ցոյց կու տան որ հաւատացեալներ երբ ծառայութիւն մատուցեն Տիրոջ եւ երբ իր կողմէ հրահանգուածը կամ պատուիրուածը կատարեն՝ բարիք մը ըրած չեն ըլլար Տիրոջ, այլ պարզապէս իրենց պարտականութիւնն է որ ըրած կ'ըլլան անոր հանդէպ, եւ որուն համար Տէրը երբեք ալ անոնց հանդէպ երախտապարտ ըլլալու պարտաւորութեան տակ չ'զգար ինքզինք:

Մեծն Կիրեղ կ'ըսէ. «Եթէ կ'ընես այն ինչ որ պարտաւոր ես ընել՝ ինչո՞ւ կը պարծենաս: Նկատի չե՞ս առներ որ եթէ չընես այն ինչ որ պարտաւոր ես ընել՝ վտանգի մէջ կ'ըլլաս, իսկ եթէ ընես՝ դուն քեզ շնորհակալութեան արժանի մի՞ նկատեր: Այս իրողութեան քաջ գիտակից էր Պօղոս առաքեալ երբ ըսաւ. "Անշուշտ պարծենալիք բան մը չունիմ" երբ Աւետարանը կը քարոզեմ, որովհետեւ պարտաւոր եմ

ատիկա ընելու, եւ վա՛յ ինծի՛ եթէ չֆարոգեմ: Եթէ ազատ կամֆոյս ընէի այս ֆարոգութիւնը, վարձատրութիւն պիտի ակնկալէի, բայց իմ կամֆոյս չէ որ կ'ընեմ, ֆանի Աստուծմէ ինծի յանձնուած պարտականութիւն մըն է" (Ա.Կր 9.16-17)»:

2.- Հաւատացեալ մը երբ բարիք մը գործէ՝ բնաւ պէտք չէ մտածէ որ իր բարեգործութեամբ գԱստուած պարտաւոր ու պարտական կը դարձնէ իր անձին հանդէպ: Այլ խօսքով, երբ բարիք գործենք, պէտք չէ այն գաղափարը ունենանք որ Աստուած պարտաւոր է մեր ըրած բարիքին փոխարէն մեզի բարիք ընել:

3.- Անկասկած որ Աստուած պիտի հատուցանէ ու վարձատրէ մեզ մեր ըրած բարեգործութեանց փոխարէն, բայց այդ հատուցումն ու վարձատրութիւնը՝ իր պարտաւորուած ըլլալու արդիւնքը չէ, այլ՝ իր ազատ կամֆին, իր սիրոյն եւ իր կատարած խոստումներուն արդիւնքը: Այլ բացատրութեամբ մը, մենք կ'ակնկալենք որ Աստուած վարձատրէ մեզ, ո՛չ թէ որովհետեւ մենք վարձատրութեան արժանի ենք, այլ որովհետեւ ի՛նք վարձատրող Աստուած է, վարձատրութիւն խոստացող Աստուած է, իր փառքին համար վարձատրող Աստուած է: Աստուած կը վարձատրէ ի՛ր փառքին համար, եւ ո՛չ թէ որովհետեւ մե՛նք փառքի արժանի ենք:

4.- «Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք»: Ի՛նչ որ հաւատացեալ մարդը ընէ եւ ո՛րքան ալ ընէ՝ պարգապէս իր պարտաւորութիւնն ու պարտականութիւնն է որ ըրած կ'ըլլայ: Եթէ հաւատացեալ մարդը այսպէս չըմբռնէ ինքզինք՝ կրնայ պահուան մը համար մտածել թէ ինք պէտք եղածէն աւելին ըրած է, եւ այս ձեւով կրնայ հպարտութեան մեղքին մէջ իյնալ: Այդ հպարտութեան մեղքին մէջ չիյնալու համար է որ Քրիստոս պատուիրեց իր հետեւորդներուն իրենք գիրենք «անպիտան ծառաներ» կոչել երբ ոեւէ գործ կատարեն:

5.- «Ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք»: Ոեւէ հաւատացեալ պէտք չէ յանդգնութիւնը ունենայ մտածելու թէ ինք ըրած է կամ կրնայ ընել նոյնիսկ իրմէ պահանջուածէն աւելին: Ինչ որ հաւատացեալը կ'ընէ կամ կ'ըլլայ՝ պարտաւոր է ընել եւ ըլլալ: Ուստի, ոեւէ հաւատացեալ իր գործերով չի կրնար անդրանցնիլ ու գերազանցել իր պարտաւորուած ըլլալու իրողութիւնը:

Օրինակ, եթէ հաւատացեալ մը կարենայ նոյնիսկ 1.000.000.000 (մէկ միլիար) հեթանոս ֆրիստոնէական հաւատքին բերել՝ իր պարտականութիւնն է որ ըրած կ'ըլլայ, եւ իր պարտականութենէն անդին ոչինչ ըրած կ'ըլլայ: Եթէ ուրիշ մը կարենայ բացարձակ կերպով

սուրբ կեանք մը ապրիլ, եւ ուրիշներն ալ այդ սրբութեան կեանքին հրաւիրել, դարձնել, իր կոչումն է որ իրագործած կ'ըլլայ, անկէ անդին ոչինչ: Նման պարագաներու նաեւ, Քրիստոսի պատուէրն է որ հաւատացեալներ ըսեն. «Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք»:

6.- Կարելոր է անդրադառնալ «անպիտան» բառին: Ի՞նչ կը նշանակէ «անպիտան»: Կը նշանակէ՝ անօգուտ, այսինքն՝ բանի մը օգուտ չունեցող, անարգ: Ինչո՞ւ Քրիստոս իր ծառաներուն կը պատուիրէ իրենք գիրենք «անպիտան ծառաներ» կոչել: Որպէսզի իրենք գիրենք «բան մը» կարծելով՝ չիյնան հպարտութեան մէջ:

Ոեւէ հաւատացեալ պէտք չէ մտածէ թէ առանց իրեն Աստուած ոչինչ կրնայ ընել, թէ Աստուած իր կարիքը ունի, թէ Աստուած կարօտ է իր օգնութեան ու օժանդակութեան: Աստուած ոեւէ մարդու պէտք չունի: Աստուած ամէն բան կրնայ ընել առանց մարդուն: Մարդը ի՛նքն է որ պէտք ունի Աստուծոյ, մարդը ի՛նքն է որ առանց Աստուծոյ ոչինչ կրնայ ընել, ինչպէս Յիսուս ինքն իսկ ըսաւ. «Առանց ինծի դուք ոչինչ կրնաք ընել» (Յի 15.5):

Եթէ երբեք Աստուած մեր գործակցութիւնը կը պահանջէ՝ կը պահանջէ ո՛չ թէ որովհետեւ կարիքը ունի մեր գործակցութեան, այլ՝ որովհետեւ կ'ուզէ մեզ պատուել եւ մեզ վարձատրութեան արժանի դարձնել: Երբ թագաւոր մը իր ծառայէն գործ մը պահանջէ, արդեօք իր ծառային կարիքը ունի ըսելով կը պահանջէ: Ո՛չ: Երբ ծառայ մը իր թագաւորին հետ կը գործակցի, ո՞վ է որ ինքզինք պատուընտրած կը զգայ, թագաւորը, թէ՛ ծառան: Յստակ է որ ծառան: Ահա նոյնպէս երբ Աստուած մեր գործակցութիւնը կը պահանջէ, կամ երբ մեզմէ գործի մը կատարումը կը պահանջէ՝ պէտք չէ խորհիմք որ պատիւ ըրած կ'ըլլան Աստուծոյ երբ կը կատարենք մեզմէ պահանջուածը:

7.- Տարբեր նշանակութեամբ պէտք է հասկնալ «անպիտան» բառը երբ զայն կը գործածենք հաւատացեալին համար, եւ տարբեր նշանակութեամբ՝ երբ զայն կը գործածենք անհաւատին համար: Հաւատացեալը երբ ինքզինք «անպիտան» կը կոչէ՝ իր խոնարհութիւնն է որ արտայայտած կ'ըլլայ, մինչդեռ անհաւատին համար գործածուող «անպիտան» բնորոշումը, անոր ծուլութիւնն է որ կը պարզէ, անոր դատապարտութիւնն է որ կը յուշէ:

8.- Վերեւ բացատրեցի որ «անպիտան» կը նշանակէ՝ անօգուտ, այսինքն՝ բանի մը օգուտ չունեցող: Հաւատացեալին համար կը գործածուի «անպիտան» բառը այն իմաստով որ ան չի կրնար օգուտ մը ունենալ Աստուծոյ, չի կրնար շահ մը բերել Աստուծոյ: Հաւատացեալը

երբ կը կատարէ Աստուծոյ հրահանգները՝ ի՛նքն է որ կը շահի եւ ո՛չ թէ Աստուած, ի՛նքն է որ կ'օգտուի եւ ո՛չ թէ Աստուած:

9.- Եւ վերջին կարեւոր բան մը «անպիտան» բառին վերաբերեալ: «Անպիտան» կոչուողը ծառայութիւն մատուցանողը ի՛նքն է եւ ո՛չ թէ մատուցուած ծառայութիւնը: Ինչո՞ւ Յիսուս կը պատուիրէ ծառային ինքզինք «անպիտան» կոչել, փոխանակ պատուիրելու որ իր կատարած գործը անպիտան կոչէ: Աստուծոյ փառքին համար կատարուած ոեւէ գործ չի կրնար «անպիտան», այլ խօսքով՝ անօգուտ ու անշահ նկատուիլ: Աստուած չ'անտեսեր ու չ'անարգեր Քրիստոսի այգիին մէջ կատարուած ոեւէ գործ եւ գայն «անպիտան» չի կոչեր: Քրիստոսի այգիին մէջ կատարուած ոեւէ գործ օգտակար է ու շահաբեր, բայց օգտակար ու շահաբեր է ո՛չ թէ Աստուծոյ, այլ՝ մեր նմաններուն:

Ի՞ՆՉՊԷՍ ՇԱՀԱՐԿԵԼ ԴՐԱՄԸ (Մնասները)

«Մինչ ժողովուրդը անոր ըսածները մտիկ կ'ընէր, Յիսուս իր խօսքը շարունակեց, եւ Երուսաղէմի մօտեցած ըլլալով ու գիտնալով որ ժողովուրդը կը կարծէ թէ Աստուծոյ արքայութիւնը շուտով պիտի յայտնուի, հետեւեալ առակը պատմեց անոնց.–

Ազնուական մարդ մը կար, որ հեռաւոր երկիր մը գնաց, որպէսզի թագաւորական իշխանութիւն առնէ եւ իր երկիրը վերադառնայ: Նախ քան մեկնիլը, կանչեց իր ծառաներէն տասը հոգի եւ իւրաքանչիւրին տասը ոսկի դրամ տուաւ եւ ըսաւ. «Շահարկեցէ՛ք այս դրամը, մինչեւ վերադարձա՛մ»: Բայց իր քաղաքացիները կ'ատէին զինք. հետեւաբար պատգամաւոր դրկեցին իր ետեւէն, ըսելով. «Չե՛նք ուզեր որ ան մեր վրայ թագաւոր դառնայ»:

Երբ ազնուականը թագաւորական իշխանութիւնը առաւ եւ վերադարձաւ, անմիջապէս կանչեց ծառաները, որոնց դրամ տուած էր, գիտնալու համար թէ ի՛նչ շահած են: Առաջինը եկաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, մէկ տուածիդ դէմ տասը շահեցայ»: Տէրը ըսաւ. «Ապրի՛ս, բարի՛ ծառայ, քանի այդ փոքրիկ բանին մէջ հաւատարիմ գտնուեցար, ահա քեզ տասը քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեմ»: Երկրորդ ծառան ալ եկաւ եւ ըսաւ. «Մէկ տուածիդ դէմ հինգ շահեցայ»: Տէրը ըսաւ. «Քեզ ալ հինգ քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեմ»:

Երրորդը եկաւ եւ ըսաւ. «Տէ՛ր, ահաւասիկ տուած դրամդ, գայն պահեցի թաշկինակի մը մէջ ծրարած: Կը վախնայի քեզմէ, որովհետեւ խիստ մարդ մըն ես: Կ'առնես ինչ որ քու կը չէ եւ կը հնձես ինչ որ չես սերմանած»: Տէրը ըսաւ անոր. «Չա՛ր ծառայ, քու խօսքովդ քեզ պիտի դատեմ: Քանի գիտէիր որ խիստ մարդ մըն եմ, կ'առնեմ ինչ որ իմս չէ եւ կը հնձեմ ինչ որ չեմ սերմանած, ինչո՞ւ դրամս շահարկողներուն չտուիր, քանի գիտէիր նաեւ թէ վերադարձիս գայն տոկոսով միասին պիտի պահանջէի»:

Ապա սպասաւորներուն ըսաւ. «Առէ՛ք իրմէ դրամը եւ տարէ՛ք տուէ՛ք անոր՝ որ տասնապատիկը շահած է»: Անոնք ըսին. «Տէր՛, անիկա արդէն տասնապատիկը ունի»: «Գիտցէ՛ք», – ըսաւ ան, – «ունեցողին աւելիով պիտի տրուի, իսկ չունեցողէն պիտի առնուի ունեցած ամենէն փոքր բաժինն ալ: Իսկ իմ թշնամիներս, որոնք չէին ուզեր որ իրենց թագաւոր ըլլամ, հոս բերէ՛ք եւ իմ ներկայութեանս սպաննեցէ՛ք զանոնք» (Ղկ 19.11-28):

«Մինչ ժողովուրդը անոր քսածները մտիկ կ'ընէր, Յիսուս իր խօսքը շարունակեց, եւ Երուսաղէմի մօտեցած ըլլալով ու գիտնալով որ ժողովուրդը կը կարծէ թէ Աստուծոյ արքայութիւնը շուտով պիտի յայտնուի, հետեւեալ առակը պատմեց անոնց...» (Ղկ 19.11):

Յիսուս Երուսաղէմ կ'երթար ուր պիտի կատարէր Զատկական իր վերջին տօնը, եւ ուր իր անձովը պիտի փոխարինէր հրեաներուն Զատկական Գառնուկը:

Այս համարը կը պարզէ որ Քրիստոսի հետեւորդները կ'ակնկալէին որ «Աստուծոյ արքայութիւնը շուտով պիտի յայտնուի»: Փարիսեցիները որոնք ոխերիմ թշնամիներն էին Յիսուսի, իրե՛նք եւս կ'ակնկալէին ու կը սպասէին Աստուծոյ թագաւորութեան հաստատումին՝ հաւանաբար նոյնիմանք Քրիստոսի ժամանակ (Ղկ 17.20):

Ճիշդ է որ թէ՛ Յիսուսի հետեւորդները, ներառեալ աշակերտները, եւ թէ՛ Փարիսեցիները կ'ակնկալէին որ Աստուծոյ թագաւորութեան գալուստը եւ երկրի վրայ հաստատումը շուտով տեղի պիտի ունենայ, բայց պէտք է գիտնալ որ անոնց միջեւ հիմնական տարբերութիւն մը կար, եւ այդ տարբերութիւնը այն էր՝ որ մինչ Փարիսեցիները կ'ակնկալէին որ շուտով մէկը պիտի յաջորդէր Յիսուսի եւ անիկա՛ պիտի ըլլար Աստուծոյ թագաւորութիւնը հաստատողը, անդին սակայն, Յիսուսի հետեւորդները կ'ակնկալէին որ Յիսուս ի՛նք պիտի ըլլար այդ թագաւորութիւնը հաստատողը:

Թէպէտ Փարիսեցիները եւ Յիսուսի հետեւորդները կ'ակնկալէին որ Աստուծոյ թագաւորութեան հաստատումը տարբեր անձերու միջոցաւ տեղի պիտի ունենայ, եւ սակայն, հետաքրքրական է գիտնալ որ «Աստուծոյ թագաւորութեան հաստատում» ըսելով անոնք նոյն բանը կը հասկնային: Անոնց համար «Աստուծոյ թագաւորութեան հաստատում» կը նշանակէր բարձումը կամ վերացումը Հոմմէական տիրապետութեան եւ վերահաստատումը Դաւիթի թագաւորական գահին:

Ո՛ւր կրնար հաստատուիլ այդ թագաւորութիւնը եթէ ոչ Երուսաղէմի մէջ: Եւ ահա հիմա որ Յիսուս Երուսաղէմ կը մօտենար եւ շրջապատուած էր հազարաւոր մարդոցմով, ատիկա պատճառ դարձած էր որ իր հետեւորդները առաւել եւս մտածէին որ ահա կը հասնէր պահը երբ Յիսուս Աստուծոյ թագաւորութիւնը պիտի հաստատէր:

Յիսուսի աշակերտներուն նիւթական հասկացողութիւնը՝ Աստուծոյ թագաւորութեան հաստատման գծով, պէտք է կարեւոր բան մը յիշեցնէ մեզի: Եթէ երկար տարիներ Յիսուսի հետ ապրած ու գործած, Յիսուսի խօսքերը լսած ու հրաշքները տեսած աշակերտները

սխալ գաղափար ունեին Աստուծոյ թագաւորութեան մասին, ասիկա մեզ՝ Յիսուսի հետեւորդներու, պէտք է գգուշութեան հրաւիրէ, որովհետեւ մենք եւս, կրնանք գանազան աստուածային նշմարտութեանց վերաբերեալ ունենալ սխալ մտածումներ, համոզումներ ու գաղափարներ:

«Ազնուական մարդ մը կար, որ հեռաւոր երկիր մը գնաց, որպէսզի թագաւորական իշխանութիւն առնէ եւ իր երկիրը վերադառնայ» (Ղկ 19.12): Բանի մը հաստատումներ.–

1.– Յիսուս սորվեցնելու ու հասկցնելու համար իր հետեւորդներուն թէ Աստուծոյ թագաւորութիւնը շուտով հաստատուելիք բան չէ, ինքզինք նմանցուց ազնուական մարդու մը, «որ **հեռաւոր** երկիր մը գնաց, որպէսզի թագաւորական իշխանութիւն առնէ եւ իր երկիրը վերադառնայ»: Ընդգծուած հեռաւոր բառը արդէն իսկ յստակօրէն ցոյց կու տայ որ Աստուծոյ թագաւորութեան հաստատումը շուտով իրականանալիք իրականութիւն մը չէ:

2.– Ինչո՞ւ Յիսուս ինքզինք կը նմանցնէ «ազնուական մարդու» մը: «Ազնուական» բառին համար գործածուած է Յունարէն՝ *εὐγενής* (Էւկէնիս) բառը, որ բառացիօրէն կը նշանակէ՝ «պատուական ծնունդ», կամ՝ «ազնուական ծնունդ»: Մեկնիչներ կ'ըսեն թէ Յունարէն այս բառը անցեալին կը գործածուէր թագաւորական ծնունդներուն եւ այլ մեծադիրք ու մեծապաշտօն ծնունդներուն համար: Հետեւաբար, Յիսուսի համար գործածուած «ազնուական» բացատրութիւնը, ցոյց կու տայ իր աստուածային ծագումը, թագաւորական ծագումը, եւ արդէն 12-րդ համարին մէջ կը տեսնենք թէ ինչպէս Յիսուս ինքզինք կը ներկայացնէ «թագաւորական իշխանութիւն» ունեցող անձ իբրեւ:

Մեծն Կիւրեղ խօսելով Յիսուսի համար գործածուած «ազնուական» բնորոշումին մասին՝ կ'ըսէ. «Բանն Աստուածը մարդ եղաւ: Մեղաւոր մարդոց մարմինին նմանող մարմին մը առած ըլլալուն համար՝ կոչուեցաւ "ծառայ" (Փլպ 2.7), բայց ազատ ծնաւ, ա՛յդ է որ ցոյց կու տայ "ազնուական" բառը...: Ան կոչուեցաւ "ազնուական ծնունդ", որովհետեւ Աստուծոյ Որդին է: Կոչուեցաւ "ազնուական ծնունդ", ո՛չ թէ արդար ըլլալուն կամ մարդոց հանդէպ ունեցած սիրոյն համար, այլ որովհետեւ ինք բնութեամբ ազնուական է, ծնած Հօրմէն [անժամանակապէս], վեր ամբողջ ստեղծագործութենէն»:

3.– «Հեռաւոր երկիր մը գնաց»: Ո՞ւր է այդ «հեռաւոր երկիր»ը ուր Յիսուս գնաց, հոնկէ իր թագաւորական իշխանութիւնը առնելու եւ դարձեալ աշխարհ գալու: Շատ պարզ է որ այդ «հեռաւոր երկիր»ը՝ երկինքը ինքն է: Իսկ ինչո՞ւ Յիսուս երկինքը՝ երկիր կը կոչէ այստեղ:

Կարելու է գիտնալ այս հարցումին պատասխանը: Յիսուս երկինքը՝ երկիր կը կոչէ, ցոյց տալու համար մեզի, որ Աստուծոյ թագաւորութիւնը, այլ բացատրութեամբ մը՝ երկինքի թագաւորութիւնը՝ հոս՝ երկրի վրայ է որ պիտի հաստատուի:

Ասկէ առաջ տարբեր-տարբեր առիթներով եւ տարբեր գիրքերու մէջ խօսած ենք այս մասին եւ բացատրած՝ թէ Աստուծոյ թագաւորութիւնը պիտի ընդգրկէ երկինք ու երկիր, եւ թէ՛ սկիզբէն Աստուծոյ ծրագիրն էր նիւթական այս աշխարհը թագաւորութեան վերածել եւ մարդիկը դարձնել անոր յաւիտեանական բնակիչները: Այս ֆիւմարտութիւնն է որ կը բացայայտէ Աստուած երբ կը յայտարարէ. «Այսպէս կ'ըսէ երկինքը ստեղծող Տէրը, այն Աստուածը որ երկիրը կազմեց, զանիկա շինեց եւ հաստատեց, զանիկա պարապ տեղ չստեղծեց, հապա բնակութեան համար կազմեց» (Ես 45.18):

4.- «Որպէսզի թագաւորական իշխանութիւն առնէ եւ իր երկիրը վերադառնայ»: Երկիրը ուր պիտի վերադառնայ Յիսուս ֆիզիքապէս՝ մեր աշխարհն է: Ուշագրաւ է որ Յիսուս երկիրը կը կոչէ «ի՛ր երկիրը»: Յատակ է որ «իր»ը կը պարզէ որ Յիսուս ամբողջ աշխարհը կը նկատէ ո՛չ միայն իր ձեռքին գործը, այլեւ՝ իր սեփականութիւնը: Յիսուսի բացարձակ իրաւունքն է իբրեւ թագաւոր ֆանչցուիլ եւ հնազանդութիւն ընդունիլ այս աշխարհին մէջ, նախ որովհետեւ ինքն է ստեղծիչը, եւ ուստի՝ Աստուածը այս աշխարհին, եւ երկրորդ, որովհետեւ ան իր թագաւորութիւնը իր սեփական արիւնով ձեռք ձգեց:

5.- «Որպէսզի թագաւորական իշխանութիւն առնէ եւ իր երկիրը վերադառնայ» հաստատումը, մեզի կը յիշեցնէ նաեւ որ Յիսուս ի՛նք պիտի ըլլայ մեր առաջնորդը Աստուծոյ թագաւորութեան մէջ: Մէկը կրնայ հարց տալ, թէ մեր երկնաւոր Հայրը ինք կամ Սուրբ Հոգին ինք, մեզ պիտի չառաջնորդե՞ն Աստուծոյ թագաւորութեան մէջ, եւ մեր թագաւորը պիտի չըլլա՞ն: Վստա՛հաբար անոնք ե՛ն ու պիտի շարունակե՛ն մնալ մեր թագաւորը ամբողջ յաւիտեանականութեան ընթացքին: Եւ սակայն, կարելու է գիտնալ հետեւեալը. թէպէտ Սուրբ Երրորդութիւնը՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին մէ՛կ աստուածութիւն ու մէ՛կ թագաւորութիւն է, բայց եւ այնպէս, Որդին ի՛նքն է որ արքայութեան մէջ պիտի ըլլայ մեր առաջնորդը: Արքայութեան մէջ, փրկուածներ Հայր Աստուծոյ եւ Սուրբ Հոգի Աստուծոյ փառքին ֆառագայթներուն մէջ պիտի ըլլան, եւ վայելեն ու ըմբոշինեն զանոնք, բայց առաւելաբար Որդիի՛ն ներկայութիւնն է որ զգան եւ անո՛ր ներկայութեան մէջ է որ պիտի ապրին: Բայց չմոռնանք, որ Որդին տեսնել՝ նոյնիման Հայրը տեսնել կը նշանակէ (Յհ 14.9), որովհետեւ

Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին, թէպէտ իբրեւ անձ երեք են, բայց անոնք մէկ ամբողջութիւն են, մէկ միութիւն են, մէկ իշխանութիւն են, մէկ թագաւորութիւն են, միեւնոյն կամքը ունին, միեւնոյն փառքը ունին, միեւնոյն փառաբանութիւնը կ'ընդունին երկնային բոլոր մարմիններուն կողմէ:

«Նախ քան մեկնիլը, կանչեց իր ծառաներէն տասը հոգի եւ իւրաքանչիւրին տասը ոսկի դրամ տուաւ եւ ըսաւ. "Շահարկեցէ՛ք այս դրամը, մինչեւ վերադարձս"» (Ղկ 19.13): Քանի մը հաստատումներ. –

1.– Աշակերտները կ'ակնկալէին որ Յիսուս շուտով բան մը պիտի ընէ եւ ինքզինք պիտի յայտարարէ իբրեւ Տէր ու Թագաւոր: Այս մտածումը բնականօրէն գիրենք աւելի՛ կը կապէր Յիսուսի, որովհետեւ գիտէին, որ եթէ Յիսուս Թագաւոր յայտարարուէր, իրենք, իբրեւ իր հաւատարիմ հետեւորդները, իրենց յատուկ տեղն ու դիրքը պիտի ունենային այդ թագաւորութեան մէջ, եւ իրենց պիտի տրուէր դատաւորի ու իշխողի պատիւ ու փառք:

Քրիստոսի հետեւորդները փառք ու պատիւ կ'ակնկալէին, Աստուծոյ թագաւորութեան մէջ իրենց համար յատուկ տեղ կ'ակնկալէին, բայց ահա Քրիստոս տուեալ համարով, իրենց գործ ու աշխատանք է որ կը յանձնէ, անոնց դիմաց ֆրտիմքի ու արցունքի նամբան է որ կը բանայ: Կը կանչէ «իր ծառաներէն տասը հոգի եւ իւրաքանչիւրին տասը ոսկի դրամ» կու տայ՝ պատուիրելով անոնց. «Շահարկեցէ՛ք այս դրամը, մինչեւ վերադարձս»: Յիսուս այս ընելով, կ'ուզէ իր հետեւորդներուն սորվեցնել, թէ արքայութիւն մտնելէ առաջ՝ աշխատանք ունինք կատարելիք, գործ ունինք ընելիք, արցունք ու ֆրտիմք ունինք թափելիք:

2.– «Կանչեց իր ծառաներէն տասը հոգի»: Եբրայական մտածողութեան մէջ, ինչպէս թիւ 3-ը կամ թիւ 7-ը ամբողջականութիւն ու կատարելութիւն կը խորհրդանշէ, նոյնպէս թիւ 10-ը ամբողջականութիւն ու կատարելութիւն կը խորհրդանշէ: Յիսուս իր հետեւորդներուն թիւը կը ներկայացնէ 10-ով, ցոյց տալու, որ իր բոլոր հետեւորդները անխտիր, հրեայ թէ հեթանոս, կոչուած են աշխատանք տանելու Աստուծոյ թագաւորութեան տարածման ի խնդիր: Ինքզինք Քրիստոսի աշակերտ սեպոդ ոնէ անձ՝ պէտք է փնտոէ ու գտնէ իր կեանքին մէջ Քրիստոսի կողմէ իրեն յանձնուած «տասը ոսկի դրամը» եւ զայն շահարկութեան դնէ:

3.– Ինչո՞ւ Քրիստոս իր հետեւորդները «ծառայ» կը կոչէ: Սորվեցնելու համար երկու բան: Նախ սորվեցնելու անոնց, թէ ծառայութիւն ունին մատուցանելիք, եւ երկրորդ, յիշեցնելու համար

անոնց, թէ իրենք տէր ու տիրոջ ըլլալու չեն կանչուած այս աշխարհին մէջ: Երբ աշակերտներուն մտքին մէջ, «տէր» եւ Յիսուսի «յաջորդ» ըլլալու գաղափարներ տողանցեցին՝ Յիսուս իսկոյն զանոնք հեռացուց անոնցմէ եւ զգաստութեան հրաւիրեց զանոնք: Քրիստոսի հետեւորդները պէտք է իրենք զիրենք ըմբռնեն ծառաները մարդկութեան: Ծառայութեան հոգիէն պարպուած մարդիկ չեն կրնար աշակերտները նկատուիլ Յիսուսի որ յայտարարեց թէ ինք աշխարհ եկած է ծառայելու եւ ո՛չ թէ ծառայութիւն ընդունելու:

4.- «Իւրաքանչիւրին տասը ոսկի դրամ տուաւ»: Վերեւ ակնարկեցի արդէն թէ «տասը ծառաները» կը ներկայացնեն տարբեր-տարբեր ազգերու եւ ժողովուրդներու պատկանող Քրիստոսի հետեւորդները, որոնց շարքին մէջ կ'իյնան հարկաւ հրեաները իրե՛նք եւս: Ասիկա գիտնալը կարեւոր է, որովհետեւ մենք այստեղ կը տեսնենք որ ծառաներէն «իւրաքանչիւրին տասը ոսկի դրամ» կը տրուի, սա ցոյց կու տայ որ Աստուած իր պարգեւները, յատկապէս փրկութեան պարգեւը, բոլոր մարդոց, անոնք ըլլան հրեայ թէ ոչ հրեայ, հաւասարապէս եւ առանց խտրութեան տուաւ: Յիշեալ նո՛յն գաղափարը ունի Յովհան Ոսկեբերանը ինք եւս: Եզրակացնելով կրնանք ըսել, որ տասը ծառաներուն տասը ոսկի դրամ տալը՝ ցոյց կու տայ որ Քրիստոսով հրեաները դադրեցան Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը ըլլալէ եւ Աստուած աշխարհի բոլոր ժողովուրդներէն իրեն համար նո՛ր ժողովուրդ մը ընտրեց:

5.- «Տասը ոսկի դրամ»ը կը ներկայացնէ Աստուծոյ կողմէ մեզի տրուած պարգեւներն ու շնորհները, ձիրքերն ու կարողութիւնները, նիւթական առաւելութիւններն ու արժանիքները, եւ մեր մէջ եղող ամէն բարի տրամադրութիւն, փափաք ու ցանկութիւն: Բայց մանաւանդ, «տասը ոսկի դրամ»ը կը ներկայացնէ Քրիստոսի կողմէ իր հետեւորդներուն տրուած փրկութեան պարգեւը եւ այդ պարգեւը տարածելու կոչումը: Այս բոլորը կը կոչուին «ոսկի դրամ», («բառացիօրէն՝ մնաս, որ հարիւր արծաթ դահեկան կ'ընէր»): Ինչո՞ւ Աստուծոյ կողմէ մեզի տրուածը կը կոչուի՝ «ոսկի դրամ», կամ՝ «մնաս»: Յիսուս կ'ուզէ ցոյց տալ մեզի թէ Աստուծոյ կողմէ մեզի տրուած բոլոր բաները արժէք ու թանկագին են, եւ թէ՛ Աստուած անպէտք, անարժէք եւ անկարեւոր բան չի պարգեւեր իր զաւակներուն:

6.- Քրիստոսի ժամանակ «տասը ոսկի դրամ»ը մեծ գումար մը չէր ներկայացներ: Համեստ գումար մըն էր եւ կը նկատուէր քանի մը օրուայ աշխատանքի վարձքը: Մեկնիչներէն ոմանք կը հաստատեն թէ Յիսուս այս համեստ գումարը կ'առնէ իբրեւ օրինակ՝ ցուցնելու համար թէ իր

հետեւորդները խոնարհ, համեստ ու հեզ մարդիկ պէտք է ըլլան, եւ հետեւաբար, Աստուծոյ կողմէ իրենց տրուածով պէտք չէ հպարտանան կամ գոռոզանան:

7.- «Շահարկեցէ՛ք այս դրամը, մինչեւ վերադարձս»: Թէ ի՛նչ կը նշանակէ շահարկել Աստուծոյ կողմէ մեզի տրուած դրամը՝ մենք այս մասին բաւական խօսեցանք երբ ասոր համապատասխան առակը բացատրեցինք (Մտ 14.14-16): Այստեղ կը բաւարարուիմ ըսելով, որ Քրիստոսի կողմէ դրամը շահարկելու կոչը՝ կոչ մըն է ուղղուած իր բոլոր աշակերտներուն, գործի ու աշխատանքի լծելու Աստուծոյ կողմէ իրենց տրուած բոլոր տեսակի պարգեւներն ու շնորհքները: Եւ այս մէկը առաջնական հրահանգ է. «Ձեզմէ իւրաքանչիւրը իբրեւ Աստուծոյ բազմատեսակ պարգեւներուն իրաւ տնտես՝ իր ստացած շնորհքը ուրիշներուն թող մատակարարէ» (Ա.Պտ 4.10):

Հաւատացեալը հիմնական երկու պարտականութիւն ունի կատարելիք երկրի վրայ: Աստուծոյ կողմէ իրեն տրուած «տասը դրամը», այլ խօսքով՝ բոլոր պարգեւներն ու կարողութիւնները պէտք է օգտագործէ աստուածատուր այդ երկու պարտականութիւնները կատարելու համար: Այդ երկու պարտականութիւններն են. –

1) Տարածել Քրիստոսի Աւետարանը եւ այդ Աւետարանին զօրութեամբ՝ ընդարձակել Աստուծոյ թագաւորութեան սահմանները աշխարհի մէջ:

2) Աշխատանք տանիլ մարդիկը Յիսուսի բերելու, այլ խօսքով՝ փրկութեան բերելու, որպէսզի անդամ դառնան Աստուծոյ թագաւորութեան:

«Բայց իր քաղաքացիները կ'ատէին զինք. հետեւաբար պատգամաւոր դրկեցին իր ետեւէն, ըսելով. "Ձե՛նք որ ան մեր վրայ թագաւոր դառնայ"» (Ղկ 19.14): Քանի մը մատնանշումներ. –

1.– Որո՞նք են այն մարդիկը որոնք այստեղ «քաղաքացի» կը կոչուին Յիսուսի կողմէ եւ որոնք կ'ատեն իրենց թագաւորը՝ Յիսուսը: Անոնք ընդհանրապէս բոլոր հրեաներն են, բայց մասնաւորաբար Փարիսեցիներն են, հրեայ իշխանաւորներն են, աւագ քահանաներն են, որոնք չէին ուզեր որ Յիսուս իրենց վրայ թագաւոր դառնայ: Ասոր է որ կ'ակնարկէ բնագիրը երբ կ'ըսէ. «Պատգամաւոր դրկեցին իր ետեւէն, ըսելով. "Ձե՛նք որ ան մեր վրայ թագաւոր դառնայ"»:

Քրիստոսի կողմէ ինքնիր անձին համար գործածուած «քաղաքացի» բացատրութիւնը պատիւ մըն է ամբողջ մարդկային սերունդին, բայց մարդիկ, յատկապէս հրեաները եւ մանաւանդ Փարիսեցիները, չանդրադարձան աստուածատուր այդ պատիւին:

«Քաղաքացի» բացատրութիւնը ցոյց կու տայ որ Յիսուս եկած էր մեզի հետ բնակելու, մաս կազմելու մեր աշխարհին, եւ աւելին՝ մեզ անդամ դարձնելու Աստուծոյ արքայութեան, եւ այդ ձեւով մենք քաղաքացի կը դառնանք իրեն եւ ինք՝ մեզի:

«Քաղաքացի» բացատրութիւնը նաեւ ցոյց կու տայ որ Յիսուս ինքզինք չի գտեր մարդկային ցեղէն, ինքզինք մարդկային ընտանիքին հետ միասին մէկ ամբողջութիւն կը նկատէ:

2.- Յիշեցէք որ Ղկ 15.15-ին մէջ եւս կը հանդիպինք «քաղաքացի» բառին: Բայց հոն «քաղաքացի» ըսելով կ'ակնարկուի աշխարհին, կամ աւելի նիշդ բացատրութեամբ մը՝ մեղաւորներու աշխարհին, ուր անատակ որդին գնաց աշխատելու իբրեւ խոզարած: Այս իմաստով, մենք ունինք մեր դիմաց երկու թագաւորութիւններ՝ Աստուծոյ թագաւորութիւնը՝ ուր Քրիստոս կը թագաւորէ, եւ աշխարհի թագաւորութիւնը՝ ուր Սատանան կը թագաւորէ: Բոլոր մարդիկ ուզեն թէ չուզեն, այս թագաւորութիւններէն մէկուն կամ միւսին անդամ պիտի դառնան: Եթէ Քրիստոսի թագաւորութեան անդամ դառնան՝ կ'ըլլան քաղաքացի Քրիստոսի, իսկ եթէ Սատանայի թագաւորութեան անդամ դառնան՝ կ'ըլլան քաղաքացի Սատանային:

3.- «Պատգամաւոր զրկեցին իր ետեւէն»: Այստեղ ունինք զրկուող եւ զրկող: Որո՞նք են զրկուող պատգամաւորները եւ որո՞նք են զիրենք զրկողները: «Քաղաքացիներ» բառին մասին խօսած ատեն, ըսի որ անոնք բոլոր հրեաներն են, բայց մասնաւորաբար Փարիսեցիներն են, հրեայ իշխանաւորներն են, աւագ քահանաներն են, Սադուկեցիներն են. ասոնք զրկողներն են: Իսկ զրկուողները՝ հասարակ ժողովուրդն է: Փարիսեցիներ, հրեայ իշխանաւորներ, աւագ քահանաներ, Սադուկեցիներ, իրենք է որ մնայուն կերպով գրգռեցին ժողովուրդը մերժելու Քրիստոսը, այս ընելով, որոշ հասկացողութեամբ մը կրնանք ըսել որ պատգամաւոր զրկած եղան Յիսուսի, մերժելու զինք իբրեւ թագաւոր:

Բայց միաժամանակ այս նշմարտութիւնը ունի ապագայ կատարում մը: Փարիսեցիներ, հրեայ իշխանաւորներ, աւագ քահանաներ եւ Սադուկեցիներ, միայն Քրիստոսի երկրաւոր կեանքի օրերուն չէր որ հալածանք յարուցանեցին Քրիստոսի դէմ եւ մերժեցին զինք, այլ նաեւ ու մանաւանդ, Քրիստոսի մահէն ու յարութենէն ետք, անոնք ամէն ձեւով շարունակեցին պայքարիլ բոլոր անոնց դէմ որոնք Քրիստոսի Աւետարանը կը քարոզէին: Գործք Առաքելոց գիրքը լեցուն է այդպիսի վկայութիւններով: Կը բաւէ որ կարդաք Գործք Առաքելոց գիրքին 4-րդ եւ 5-րդ գլուխները, եւ հոն պիտի տեսնէք թէ ինչպէս

Պետրոս եւ Յովհաննէս առաքեալները երկու տարբեր առիթներով հրէական ատեան կանչուեցան եւ իրենց խստիւ պատուիրուեցաւ որ չճարոգեն Քրիստոսի մասին: Այս իրողութիւնը ոչ միայն կը բացայայտէ այն ատելութիւնը որ հրեայ պատասխանատուներ ունէին Յիսուսի հանդէպ, այլեւ կը բացայայտէ թէ անոնք զօրեղ կերպով կը մերժէին Քրիստոսը նանչնալ իբրեւ թագաւոր, եւ անոր բերածը՝ աստուածային թագաւորութիւն իբրեւ:

Վերջապէս, ըսեմք նաեւ որ դրկուող «պատգամաւորներու» շարքին կ'իյնան նաեւ բոլոր անոնք՝ որոնք պատմութեան ընթացքին մերժեցին եւ այսօր կը մերժեն Քրիստոսը նանչնալ իբրեւ թագաւոր:

«Երբ ազնուականը թագաւորական իշխանութիւնը առաւ եւ վերադարձաւ, անմիջապէս կանչեց ծառաները, որոնց դրամ տուած էր, գիտնալու համար թէ ի՛նչ շահած են» (Ղկ 19.15): Քանի մը հաստատումներ.–

1.– «Ազնուականը թագաւորական իշխանութիւնը առաւ եւ վերադարձաւ»: Այս բառերը կը պարզեն որ Քրիստոս իբրեւ թագաւոր պիտի վերադառնայ այս աշխարհ: Իբրեւ թագաւոր պիտի յայտնուի իր գալստեան օրը: Քրիստոս ինքն իսկ հաստատեց այս իրողութիւնը երբ ըսաւ. «Երբ Մարդու Որդին իր փառքով գայ՝ բոլոր հրեշտակներուն հետ, պիտի նստի իք թագաւորական գահին վրայ» (Մտ 25.31): Ընդգծուած «իք» անձնական դերանունը ցոյց կու տայ որ այդ թագաւորական գահը որուն վրայ Յիսուս պիտի «բազմի» ի՛րն է, ի՛ր սեփականութիւնն է, գանձիկա ուրիշէն չէ՛ առած, կամ ուրիշը գայն իրեն չէ՛ տուած:

2.– «Կանչեց ծառաները, որոնց դրամ տուած էր, գիտնալու համար թէ ի՛նչ շահած են»: Քրիստոս երբ անձի մը որոշ պարգեւ մը, շնորհք մը, գործ մը, կամ պարտականութիւն մը յանձնէ՝ կը սպասէ որ անոնք գայն կատարեն: Եթէ Քրիստոս այդ սպասումը չունենայ՝ դատաստանի պիտի չկանչէ մարդիկը: Բայց հոս յիշուած «կանչեց» բառն իսկ ցոյց կու տայ որ Յիսուս բոլորը հաշուետուութեան պիտի կանչէ:

3.– Քրիստոսի կողմէ ծառաներուն կանչուիլը եւ անոնցմէ հաշիւ պահանջելը՝ Քրիստոսի դատաւորական հանգամանքն է որ ցուց կու տայ: Քրիստոսի՝ կը պատկանի դատելու բացարձակ իշխանութիւնը: Ինքն իսկ ըսաւ. «Հայրը ոեւէ մէկը չի դատեր, այլ դատելու իշխանութիւնը ամբողջութեամբ յանձնած է Որդիին» (Յհ 5.22):

Քանի մը տող վեր յիշեցի Մտ 25.31-ին մէջ Յիսուսի արտասանած խօսքը իր անձին վերաբերեալ. «Երբ Մարդու Որդին իր փառքով գայ՝ բոլոր հրեշտակներուն հետ, պիտի նստի իր թագաւորական գահին

վրայ»: Ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ «պիտի նստի» բառերուն վրայ: Հարկաւ ո՛չ «գահ» եւ ո՛չ ալ «նստիլ» բացատրութիւնները կրնանք բառացիօրէն հասկնալ, բայց Յիսուս «նստիլ» բառին գործածութեամբ բան մը կ'ուզէ ցոյց տալ մեզի: Ըստ Եբրայական մտածողութեան «նստելով» ուսուցանելը իշխանութեան նշան է, եւ մենք յաճախ կը տեսնենք Յիսուսը նստած վիճակի մէջ կ'ուսուցանէր (Մտ 5.1, 13.2): Ինչպէս նստելով ուսուցանելը ցոյց կու տայ Քրիստոսի Ուսուցիչ ըլլալու բացարձակ հանգամանքն ու իշխանութիւնը, այնպէս ալ, նստելով դատաստան կատարելը՝ անոր Դատաւորական իշխանութիւնն է որ կը բացայայտէ:

4.- «Գիտնալու համար թէ ի՛նչ շահած են»: Քրիստոնեայ մարդուն, այլ խօսքով՝ Քրիստոսի հաւատքը ընդգրկած մարդուն չի վայելեր վնաս կամ պարտութիւն կրել առաքելութեան ցամաքուն վրայ: Ան պէտք է շահող անձ ըլլայ: Ա՛յս է որ ցոյց կու տայ «շահած» բառը: Բայց ի՞նչ պէտք է շահի ան աշխարհի մէջ: Արդէն անուղղակի ակնարկութիւններ եղան այս մասին: Ան պէտք է հոգիներ շահի Աստուծոյ թագաւորութեան համար: Հոգիներ վաստկելու կամ շահելու այդ կոչն էր որ Յիսուս ուղղեց Պետրոս եւ Անդրէաս առաքելներուն երբ անոնց ըսաւ. «Ձեզ մարդու որսորդ պիտի ընեմ» (Մտ 4.19):

Արքայութեան ցամաքն գտած ամէն մէկ հաւատացեալ, պարտականութիւնը ունի ուրիշները եւս այդ ցամաքուն առաջնորդել: Ինքնիր հոգին փրկութեան համար շահող մարդը՝ պէտք է աշխատանք տանի ուրիշներուն հոգիները եւս շահիլ փրկութեան համար:

«Առաջինը եկաւ եւ ըսաւ. "Տէր, մէկ տուածիդ դէմ տասը շահեցայ": Տէրը ըսաւ. "Ապրի՛ս, բարի՛ ծառայ, քանի այդ փոքրիկ քանին մէջ հաւատարիմ գտնուեցար, ահա քեզ տասը քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեմ": Երկրորդ ծառան ալ եկաւ եւ ըսաւ. "Մէկ տուածիդ դէմ հինգ շահեցայ": Տէրը ըսաւ.-- "Քեզ ալ հինգ քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեմ"» (Ղկ 19.16-19): Քանի մը հաստատումներ.---

1.- Ինչո՞ւ մէկ ծառան իրեն տրուած տասը ոսկիին դէմ տասը ոսկի եւս շահեցաւ, իսկ միւս ծառան՝ իրեն տրուած տասը ոսկիին դէմ հինգ շահեցաւ: Ի՞նչ ցոյց կու տայ այս իրողութիւնը եւ ի՞նչ է որ կը փորձէ սորվեցնել մեզի Յիսուս: Յստակ է որ Տէրը կ'ուզէ ցոյց տալ մեզի, որ ժրջանօրէն եւ անխոնջ կերպով աշխատողը՝ մեծ արդիւնքի կը հասնի, իսկ նուազ ժրջանութեամբ աշխատողը՝ նուազ արդիւնքի կը հասնի:

Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Մարդ ինչ որ ցանէ՝ այն կը հնձէ» (Գղ 6.8): Առատօրէն ցանողը՝ առատօրէն պիտի հնձէ, քիչ ցանողը՝ քիչ պիտի

հնձէ: Հետեւաբար, առաջին ծառան կը ներկայացնէ այն հաւատացեալները՝ որոնք աղօթքով եւ անդուլ, անխոնջ եւ անձանձորոյթ կերպով կ'աշխատին ու կը տփնին Աստուծոյ թագաւորութեան տարածման եւ մարդոց փրկութեան համար, (ինչպէս էր օրինակ պարագան Պօղոս առաքելի, որ բոլոր միւս առաքելներէն աւելի աշխատեցաւ եւ օր ու գիշեր տփնեցաւ մարդոց փրկութեան համար), իսկ երկրորդ ծառան կը ներկայացնէ այն հաւատացեալները՝ որոնք նուազ ժամանակ կու տան աղօթքի եւ նուազ խանդով ու ժրաջանութեամբ կ'աշխատին մարդիկը Յիսուսի բերելու համար:

2.- Ըսենք նաեւ որ տարբեր մեկնութիւն մըն ալ կայ թէ ինչո՛ւ մէկ ծառան տասը ոսկիին դէմ տասը ոսկի կը շահի, իսկ ուրիշ մէկ ծառան տասը ոսկիին դէմ հինգ ոսկի կը շահի: Ոմանք կ'ենթադրեն որ թէ՛ տասը ոսկի շահողը եւ թէ՛ հինգ ոսկի շահողը, երկուքն ալ, նոյնչափ եւ նոյն ժրաջանութեամբ աշխատեցան: Եթէ նոյնչափ եւ նոյն ժրաջանութեամբ աշխատեցան, հապա ինչո՞ւ տարբեր արդիւնքի հասան: Մեկնիչներ կը բացատրեն, թէ նոյն արդիւնքին չհասան, որովհետեւ անոնցմէ մին շատ հալածանքներու եւ հակառակորդներու հանդիպեցաւ, իսկ միւսը՝ ընդհակառակը, զօրակցողներու եւ ֆաշալերողներու հանդիպեցաւ: Այս պարագայիս, յստակ է որ տասը ոսկիին դէմ տասը ոսկի շահողը՝ կը ներկայացնէ այն հաւատացեալները, որոնք իրենց շուրջիններուն զօրակցութիւնը կը վայելեն, իսկ տասը ոսկիին դէմ հինգ ոսկի շահողը՝ կը ներկայացնէ այն հաւատացեալները, որոնք իրենց առաքելութեան նամբուն վրայ, մնայուն հալածանքի ու հակառակութեան կը հանդիպին, եւ նման պարագայի, բնականօրէն ակնկալուած արդիւնքը անկարելի է ձեռք ձգել:

3.- Առաջին ծառան որ տասը ոսկիին դէմ տասը ոսկի եւս շահեցաւ՝ «տասը ֆաղափներու վրայ կառավարիչ» նշանակուեցաւ, իսկ երկրորդ ծառան որ տասը ոսկիին դէմ հինգ շահեցաւ՝ «հինգ ֆաղափներու վրայ կառավարիչ» նշանակուեցաւ: Ինչո՞ւ մէկը տասը ֆաղափներու վրայ կառավարիչ կը նշանակուի, իսկ միւսը՝ հինգ ֆաղափներու վրայ: Ի՞նչ է որ Յիսուս կը փորձէ ցոյց տալ կամ սորվեցնել մեզի: Յիսուս կ'ուզէ ցոյց տալ մեզի որ հաւատացեալներ տարբեր-տարբեր վարձատրութիւններ պիտի ստանան Աստուծոյ արքայութեան մէջ: Եւ ասիկա շատ բնական երեւոյթ է: Քանի տարբեր-տարբեր ժրաջանութեամբ աշխատողներ կան՝ բնականօրէն վարձատրութիւններն ալ տարբեր պիտի ըլլան: Բոլորը նոյն ֆանակութեամբ գործ չէ որ կ'ընեն, անոր համար ալ բոլորը նոյն հատուցումը պիտի չստանան:

Խ՞ոնչ են այն տարբեր-տարբեր վարձատրութիւնները որ պիտի տրուին հաւատացեալներուն: Մենք այս նիւթին մասին լայնօրէն խօսեցանք երբ բացատրեցինք Մատթէոսի 25.21 եւ 23 համարները: Այստեղ պարզապէս կ'ուզեմ ըսել, թէպէտ կրկնութեան գնով, որ հաւատացեալին տրուելիք վարձատրութիւնը՝ պիտի ըլլայ այն փառքը, այն շքեղութիւնն ու պայծառութիւնը որով յատկանշուած պիտի ըլլայ իր յարուցեալ մարմինը: Բոլոր հաւատացեալներուն յարուցեալ մարմինները նոյն շքեղութիւնը եւ նոյն փառքը պիտի չունենան: Անոնցմէ իւրաքանչիւրը տարբեր շքեղութիւն եւ տարբեր փառք պիտի ունենայ, եւ այս իրողութեան է որ կ'ակնարկէ Պօղոս առաքեալ երբ խօսելով յարուցեալ մարմիններուն մասին՝ կ'ըսէ. «Կան... երկնաւոր մարմիններ ու երկրաւոր մարմիններ. սակայն ուրիշ է երկնաւոր մարմիններու շքեղութիւնը, եւ ուրիշ՝ երկրաւոր մարմիններու շքեղութիւնը: Ուրիշ է արեւին շքեղութիւնը, ուրիշ լուսինին շքեղութիւնը, եւ դեռ ուրիշ՝ աստղերուն շքեղութիւնը: Եւ նոյնիսկ աստղերէն ոմանք աւելի շքեղ են քան միւսները» (Ա.Կր 15.40-41): Առաքեալին ըսել ուզածը այն է, որ արքայութեան մէջ հաւատացեալներ պիտի ըլլան որոնք արեւին շքեղութիւնը պիտի ունենան, ուրիշներ՝ լուսինի շքեղութիւնը, ուրիշներ՝ աստղերու շքեղութիւնը, եւ աստղերն ալ, այսինքն՝ պարզ հաւատացեալները՝ իրե՛նք եւս իրարմէ տարբեր շքեղութեամբ ու փառքով պիտի ներկայանան:

Այստեղ՝ երկրի վրայ, որքան լեցուն ենք Քրիստոսի սիրով, արքայութեան մէջ ա՛յնքան աւելի փառաւոր պիտի ըլլանք: Մէկ բան սակայն բոլոր հաւատացեալներուն համար միօրինակն է, այն՝ որ արքայութիւնը ժառանգող բոլոր մարդիկն ալ աստուածային փառքով լեցուն պիտի ըլլան: Արքայութեան մէջ փառքէ զուրկ մարդ պիտի չըլլայ: Բոլորը նոյն Քրիստոսի ներկայութեան մէջ պիտի ըլլան ու ապրին, բայց անշուշտ բոլորը նոյնչափ մօտիկ պիտի չըլլան Քրիստոսի: Բոլորը նոյն Տիրոջ սէրն է որ պիտի վայելեն, բայց վստահաբար բոլոր սիրոյ նոյն վայելքը չէ որ պիտի ունենան: Եւ խորքին մէջ հիմնական եւ կարեւոր վարձատրութիւնը ասիկա է՝ Տիրոջ սէրը, Յիսուսի ներկայութիւնը: Հոս որքան լեցուն ենք իրմով, արքայութեան մէջ այնքան աւելի մօտիկ պիտի ըլլանք իրեն եւ վայելենք զինք:

Հետեւաբար, տասը քաղաքի վրայ կառավարիչ նշանակուիլը՝ մե՛ծ փառքի, մե՛ծ պատիւի եւ Տէրունական մե՛ծ մտերմութեան արժանանալ կը նշանակէ: Իսկ հինգ քաղաքի վրայ կառավարիչ նշանակուիլը՝ նուա՛գ փառքի, նուա՛գ պատիւի եւ Տէրունական նուա՛գ մտերմութեան արժանանալ կը նշանակէ:

4.- Քրիստոսի բոլոր իսկական հետեւորդները, եւ հետեւաբար, փրկութիւնը ժառանգող հաւատացեալները կը խոստովանին եւ կը գիտակցին թէ ինչ որ ունին՝ Քրիստոսի կողմէ իրենց պարգեւուած է, Քրիստոսի՝ սեփականութիւնն է որ իր ազատ կամքով կը բաշխէ իր աշակերտներուն: Մենք այս խոստովանութիւնն ու գիտակցութիւնը կը գտնենք թէ՛ տասը ոսկի շահողին մօտ եւ թէ՛ հինգ ոսկի շահողին մօտ: Անոնք իրենց խօսքը Տիրոջ ուղղելով կ'ըսեն. «Տէ՛ր, մէկ տուածիդ դէմ...»: «Տուածիդ» բացատրութեամբ, յստակ է որ անոնք կ'ընդունին թէ իրենց ունեցածը՝ Տիրոջ կողմէ իրենց տրուած իրականութիւն մըն է: Հետեւաբար, մենք չենք կրնար Տիրոջ բան մը տալ որ արդէն իսկ իրը չէ: Դաւիթ մարգարէն քաջ գիտակից այս իրողութեան, կը բացականչէ ըսելով. «Տիրոջն է երկիրն ու անոր լիութիւնը» (Սղ 24.1):

Պէտք է խոնարհութիւնը ունենանք խոստովանելու թէ ինչ որ ունինք՝ Տիրոջ կը պատկանի եւ Տիրոջ կողմէ մեզի տրուած է: Երբ խոստովանինք թէ ինչ որ ունինք՝ Տիրոջ կը պատկանի, եւ ինչ որ ենք՝ Տիրոջմով ենք, այն ատեն միայն կրնանք ամէն փառք Տիրոջ վերառաքել, ինչպէս ըրաւ Պօղոս առաքեալ ինք, երբ ըսաւ. «Ինչ որ ըրի՛ ես չըրի, այլ իմ մէջս գործող Աստուծոյ շնորհքը» (Ա.Կր 15.10): Պօղոս առաքեալ իրեն յանձնուած տասը ոսկի դրամին դէմ ո՛չ թէ տասը ոսկի եւս շահեցաւ, այլ՝ հարիւր շահեցաւ: Ինքն իսկ տուեալ համարին մէջ կը յիշէ թէ «բոլոր առաքեալներէն աւելի» աշխատեցաւ, տփնեցաւ ու չարչարուեցաւ: Հակառակ ասոր, երբեք չյանդգնեցաւ մտածել թէ իր ձեռք ձգած յաջողութիւնները՝ հետեւանքն էին իր տարած աշխատանքին:

5.- «Ապրի՛ս, բարի՛ ծառայ»: Տէրը բարի պիտի կոչէ այն մարդիկը որոնք բարի ու բարեգործ եղած են երկրի վրայ: Տէրը պիտի գնահատէ ու վարձատրէ իր փառքին համար հաւատարմութեամբ աշխատողները: Մեր Տէրը՝ Յիսուս, չի նմանիր աշխարհի տէրերուն, որոնք երբեմն չարը բարի ու բարին չար կը կոչեն: Ան չի նմանիր բռնակալ տէրերուն, որոնք բռնութիւն կը բանեցնեն աշխատաւոր դասակարգին վրայ: Ան չի նմանիր այն տէրերուն, որոնք բնաւ գնահատել չեն գիտեր մէկու մը կողմէ տարուած բարի աշխատանք: Ան չի նմանիր այն տէրերուն, որոնք վարձատրութեան արժանին կ'անտեսեն եւ վարձատրութեան արժանի չեղողները՝ կը վարձատրեն ու կը բարձրացնեն:

6.- «Քանի այդ փոքրիկ բանին մէջ հաւատարիմ գտնուեցար»: Հետաքրքրական է «փոքրիկ» բնորոշումը, որուն վերաբերեալ կ'ուզեմ երկու բան ըսել.---

ա) Ինչ ալ ընեն հաւատացեալները՝ պէտք է ընդունին որ իրենց ըրածը փոքրիկ բան մըն է: Երբեք պէտք չէ յաւակնութիւնը ունենանք մտածելու եւ մանաւանդ յայտարարելու թէ մեր ըրածը մեծ բան է, որովհետեւ ատիկա կրնայ մեզ գոռոզութեան առաջնորդել:

բ) Յիսուս «փոքրիկ» բառը կը գործածէ նաեւ, ցոյց տալու մեզի, թէ այն աշխատանքը գոր կը տանինք փոքրիկ ու աննշան աշխատանք մըն է համեմատաբար այն վարձատրութեան որ պիտի ստանանք դատաստանի օրը: Եւ ալ իսկապէս այդպէս է: Մեր ըրածը ոչինչ է մեր ստանալիքին հետ բաղդատաբար: Ի՞նչ ալ ընենք, ո՛րքան բան ալ իրագործենք մեզի տրուած այս ժամանակաւոր կեանքի ընթացքին, չմոռնանք որ անոր դիմաց ստանալիք ունինք՝ յաւիտեանական կեանքը: Ի՞նչ արժէք կը ներկայացնէ ժամանակաւոր կեանքը համեմատաբար յաւիտեանական կեանքին հետ: Ի՞նչ արժէք կրնայ ներկայացնել «գաւաթ մը պաղ ջուր»ը երբ անիկա կը համեմատուի Կենաց Աղբիւրին հետ:

«Երրորդը եկաւ եւ ըսաւ. "Տէ՛ր, ահաւասիկ տուած դրամդ, գայն պահեցի թաշկինակի մը մէջ ծրարած: Կը վախճայի քեզմէ, որովհետեւ խիստ մարդ մըն ես: Կ'առնես ինչ որ քուկդ չէ եւ կը հնձես ինչ որ չես սերմանաւ» (Ղկ 19.20-21): Քանի մը մատնանշումներ.–

1.– Ինչո՞ւ համար նախ արդարներուն վարձատրութիւնը կը ներկայացուի, եւ անկէ ետք միայն կը խօսուի չար ու ծոյլ մարդոց պատիժին մասին: Առաջին հերթին, որպէսզի ցոյց տրուի մեզի թէ Աստուած պատժող Աստուած մը ըլլալէ աւելի ու առաջ, վարձատրող Աստուած է: Երկրորդ, որպէսզի չար մարդիկ ակնատես ըլլան բարիներու վարձատրութեան եւ անդրադառնան որ իրենք իրենց չար գործերուն գոհը գացին: Երրորդ, որպէսզի ցոյց տրուի եւ յայտնի ըլլայ որ Աստուծոյ սկզբնական ծրագիրը կատարելապէս բարին էր եւ մի՛այն բարին էր: Չորրորդ, որպէսզի արդար մարդոց վարձատրութիւնը տեսնելով՝ չար մարդիկ խղճահարութեան մատնուին ու տանջուին:

2.– «Տէ՛ր, ահաւասիկ տուած դրամդ, գայն պահեցի թաշկինակի մը մէջ ծրարած»: Երբեմն կը հանդիպինք մարդոց, որոնց մօտ կը գտնենք այն համոզումը, որ իրենք փրկութեան արժանի են, քանի մէկու մը չարիք չեն գործած, մէկու մը չեն վնասած, մէկու մը իրաւունքը չեն կերած: Բայց ահաւասիկ մէկը որ ի՛նք եւս «չարիք չէր գործած», ի՛նք եւս «մէկու մը չէր վնասած», ի՛նք եւս «մէկու մը իրաւունքը չէր կերած», բայց եւ այնպէս պատժուեցաւ տիրոջ կողմէ: Այո՛, ան «չարիք չէր գործած», այն իմաստով որ ան իրեն տրուած դրամը չէ՛ր վատնած, չէ՛ր մսխած, չէ՛ր կորսնցուցած, եղածին պէս պահած էր, թաշկինակի մէջ ծրարած էր: Եթէ իրեն տրուածը չէր մսխած ու պատժուեցաւ, ասիկա

պէտք է լրջօրէն մտածել տայ մեզի կարեւոր կէտի մը մասին: Ի՞նչ է այն կէտը: Քրիստոնեայ մարդուն պարտականութիւնը, պարզապէս իրեն տրուած պարգեւներն ու շնորհքները, իրեն տրուած ձիրքներն ու կարողութիւնները եղածնուն պէս պահելը չէ, այլ՝ զանոնք գարգացնելը, անեցնելը, ուրիշներուն օգուտին համար ծառայեցնելը: Քրիստոնէական մօտեցումով, բարի մարդը ուրիշին չարիք չընող մարդը չէ, այլ՝ ուրիշին բարիք ընող մարդն է: Ան որ բարին գիտէ ու չի գործեր չարիք է որ կը գործէ: Յակոբոս առաքեալ կ'ըսէ. «Ով որ շիտակը գիտէ եւ չ'ըներ՝ մեղք է որ կը գործէ» (Յկ 4.17): Երրորդ այս ծառան շիտակը գիտէր ու չըրաւ, ահա թէ ինչո՞ւ պատժուեցաւ: Ուստի, ասկէ ետք չըսենք՝ «Մենք ուրիշին վնաս չենք հասցուցած», այլ նայինք թէ ի՞նչ բարիք գործած ենք ուրիշին, եւ Աստուծոյ կողմէ մեզի տրուածը՝ որքանով օգտագործած ենք այլոց կարիքներուն եւ Աստուծոյ փառքին համար:

3.- «Կը վախնայի բեզմէ, որովհետեւ խիստ մարդ մըն ես»:
Ծառային այս հաստատումը կը պարզէ իր ստախօս ըլլալը: Իսկապէ՞ս կը վախնար իր տիրոջմէն: Եթէ կը վախնար՝ պէտք էր դրամը առածին պէս գործի լծուէր եւ ո՛չ թէ գայն թաշկինակի մէջ ծրարէր ու վերցնէր: Ծառան ո՛չ մէկ պատմառ ունէր իր տիրոջմէն վախնալու, նախ որովհետեւ իրեն պէտք էր հաճ գումարը տրուեցաւ, եւ երկրորդ, իրեն նաեւ պէտք էր հաճ ժամանակն ալ տրուեցաւ: Առաջին ծառաները իրենք էւս նոյն գումարը չստացա՞ն, եւ իրենց էւս նոյն ժամանակը չտրուեցա՞ն: Ինչո՞ւ առաջին ծառաները ժամանակ ունեցան իրենց տրուածը շահարկութեան դնելու եւ ինչո՞ւ երրորդ ծառան՝ ժամանակ չունեցաւ: Խորքին մէջ ան պէտք էր հաճ ժամանակը ունէր, բայց պէտք էր հաճ գործի պատասխանատուութիւնը չունէր: Դասը գոր այստեղէն կը սորվինք այն է՝ որ բոլորս ալ պէտք էր հաճ ժամանակը ունինք կատարելու Աստուծոյ կողմէ մեզի տրուած գործերը, բոլորս ալ պէտք էր հաճ ժամանակը ունինք ըլլալու այն մարդը՝ որ Աստուած ի՛նք կ'ուզէ որ ըլլանք: Հետեւաբար, պէտք չունինք վախնալու Աստուծմէ, պէտք չունինք մտածելու որ ժամանակը սեղմ է եւ պիտի չկրնանք Աստուծոյ կամքը կատարել: Մենք շատ բաներու համար ժամանակ կը կորսնցնենք: Պիտի չխօսիմ այդ «շատ բաներուն» մասին: Բայց մէկ բան կ'ուզեմ ըսել, կարելի է հաճին չափ պարզ ու յստակ, որ եթէ մեզի համար առաջնահերթը Աստուած է եւ աստուածատուր փրկութիւնը՝ մենք առատ ժամանակ պիտի գտնենք յատկացնելու Աստուծոյ գործին ու փառքին համար:

4.- «Որովհետեւ խիստ մարդ մըն ես»:
Մենք մի՞նչեւ հիմա, առակին մէջ բնաւ չտեսանք որ ծառային տէրը խիստ գտնուեցաւ իրեն հանդէպ:

Բայց ծառային այս հաստատումը կը պարզէ, որ ծոյլ ֆրիստոնեային համար՝ Աստուած խի՛ստ է, «անգութ է», «անողորմ է»: Իսկութեան մէջ սակայն, ծոյլ ու անտարբեր մարդիկը, աշխարհի ու մեղքի կեանքը սիրող մարդիկը, իրե՛նք անգութ ու դաժան են, իրե՛նք խիստ ու անողորմ են եւ ո՛չ թէ Աստուած: Յիսուս փաղցր ու փաղցրութեան Աստուած է: Բայց եթէ մէկը չուզէ ենթարկուիլ Յիսուսի կամփին, եթէ չուզէ կատարել անոր սուրբ կամքը, եւ եթէ գիտէ որ իր անտարբերութիւնն ու ծուլութիւնը զինք Գրիստոսի ատեանին մէջ պիտի կանգնեցնեն՝ բնական է խի՛ստ նկատէ Յիսուսը: Ծոյլ աշակերտը չի հանդուրժեր լուրջ ուսուցիչի ներկայութեան: Ծոյլ մարդը չ՛ուզեր իր գլխուն կանգնած տեսնել հաշիւ պահանջող տէր մը: Ան կ՛ուզէ ազատօրէն ապրիլ իր ծուլութիւնը: Ան կ՛ուզէ անգործ պտրտիլ: Այդպիսի մէկու մը համար, բնականօրէն Գրիստոս խի՛ստ է եւ խիստ պիտի ըլլայ:

5.- «Կ'առնես ինչ որ ֆուկդ չէ եւ կը հնձես ինչ որ չես սերմանած»: Այս հաստատումով ծառան ինքզինքին է որ կը հակասէ: Տակաւին քիչ առաջ ըսաւ. «Տէ՛ր, ահաւասիկ տուած դրամդ»: Այստեղ կը խոստովանի որ ինք տիրոջ կողմէ դրամ ստացած է, եւ յանկարծ կը տեսնենք որ խօսքը տիրոջ ուղղելով կ'ըսէ. «Կը հնձես ինչ որ չես սերմանած»: Եւ սակայն, ինչ որ մենք ունինք՝ Տէրը ի՛նք սերմանած է մեր կեանքի անդաստանին մէջ: Ինչ պարզեւ կամ կարողութիւն որ ունինք՝ Տէրը ի՛նք տուած է մեզի: Մենք երբեք իրաւունք չունինք Տիրոջ ըսելու. «Կ'առնես ինչ որ ֆուկդ չէ եւ կը հնձես ինչ որ չես սերմանած»: Աստուած ի՞նչ բան կը պահանջէ մեզմէ որ ինք չէ տուիչը այդ բանին: Օրինակ, մեր կեանքը կը պահանջէ. իրաւունք ունի, որովհետեւ ի՛նքն է տուիչը մեր կեանքին: Մեր սէ՞րը կը պահանջէ. դարձեալ, իրաւունք ունի, որովհետեւ սերը իր պարգեւն է մեզի: Մեզմէ ո՞վ կրնայ թուել այնպիսի բաներ որ Աստուծմէ չէ ստացած: Ինչ կարողութիւն կամ առաւելութիւն որ ունինք՝ իբրեւ նիւթական կամ բարոյական հարստութիւն, բոլորը Աստուծմէ են, եւ մի՛այն Աստուծոյ փառքին համար պէտք է գործածուին:

6.- «Կ'առնես ինչ որ ֆուկդ չէ եւ կը հնձես ինչ որ չես սերմանած»: Հաւանաբար այս խօսքով նաեւ ծառան ըսել կ'ուզէ, որ երբ տէրը իրմէ կը պահանջէ՝ իր տուածէն աւելի, այլ խօսքով՝ երբ իր տուած մէկ ոսկիին դէմ կը պահանջէ աւելի քան մէկ ոսկի՝ ինքնաբերաբար առած կ'ըլլայ ինչ որ իրը չէ, եւ հնձած կ'ըլլայ ինչ որ չէ սերմանած: Այս հարցին գծով պէտք է հետեւեալը գիտնալ: Երբ Աստուած որոշ պարգեւներ ու կարողութիւններ կու տայ մեզի, եւ մենք զանոնք օգտագործելով՝ մեծ առաւելութիւններու կը տիրանանք՝ այդ չի նշանակեր որ այդ

առաւելութիւնները մեր սեփականութիւնն են: Ո՛չ: Ճիշդ է որ անոնք մեր տարած աշխատանքին արդիւնքը կրնան սեպուիլ, բայց չմոռնանք որ մենք պիտի չկարենայինք զանոնք ձեռք ձգել եթէ Աստուած ինք մեզի պարգեւներ ու կարողութիւններ չտար: Եթէ Աստուծոյ տուած պարգեւին ու կարողութեան արդիւնքն են մեր ձեռք ձգած առաւելութիւնները՝ անոնք Աստուծոյ սեփականութիւնը չե՞ն նկատուիր:

«Տէրը ըսաւ անոր. "Չա՛ր ծառայ, քու խօսքովդ քեզ պիտի դատեմ: Քանի գիտէիր որ խիստ մարդ մըն եմ, կ'առնեմ ինչ որ իմս չէ եւ կը հնձեմ ինչ որ չեմ սերմանած, ինչո՞ւ դրամս շահարկողներուն չտուիր, քանի գիտէիր նաեւ թէ վերադարձիս գայն տոկոսով միասին պիտի պահանջէի"» (Ղկ 19.22-23): Քանի մը մատնանշումներ.-

1.- «Չա՛ր ծառայ»: Ի՛նչ դժբախտութիւն է Աստուծոյ ձեռքով, Աստուծոյ պատկերով եւ Աստուծոյ համար ստեղծուած մարդը, «չա՛ր ծառայ» կոչուի եւ այն ալ՝ նոյնիմանք Աստուծոյ կողմէ: Երբ Աստուած իր ձեռքին գործը «չա՛ր» կը կոչէ, կը նշանակէ որ Աստուծոյ կամքին չհնազանդող մարդը իսկապէս չար է:

Աստուած մարդը ստեղծեց բարի (Մկ 1.31): Բայց մարդը բանական արարած ըլլալով՝ կրնայ ընտրել չար բամբայ եւ դառնալ չար արարած: Մարդուն համար յաճախ գործածուած «բանական արարած» բացատրութիւնը ինքնին ցոյց կու տայ մարդուն կարողութիւնը մտածելու եւ որոշումներ առնելու: Քանի մարդը մտածելու եւ որոշումներ առնելու ի վիճակի է, ան հաշուետու պիտի ըլլայ Աստուծոյ:

2.- «Չա՛ր ծառայ» բառերը կը պարգեն որ չարութի՛ւն է Աստուծոյ կողմէ մեզի տրուած պարգեւները, շնորհքները, կարողութիւնները չօգտագործելը իր փառքին եւ մեր նմաններուն բարօրութեան համար: Աստուծոյ համար չապրուած կեանք մը՝ չա՛ր կեանք է: Մարդկութեան օգտակար չեղող կեանք մը՝ վնաս բերող կեանք մը կը սեպուի, իսկ վնասաբեր կեանք մը՝ չա՛ր կեանք է:

3.- «Չա՛ր ծառայ» նաեւ կը նշանակէ՝ չարութեան ծառայ, մեղքի ծառայ: Ոնե՛ւ մարդ որ բարեգործ չէ, չարագործ է: Ոնե՛ւ մարդ որ Աստուծոյ ծառայ չէ, Չարին ծառայ է, Ոնե՛ւ մարդ որ արդարութեան ծառայ չէ, անարդարութեան ծառայ է:

4.- «Քու խօսքովդ քեզ պիտի դատեմ»: Ծառան իր ո՛ր խօսքերուն համար պիտի դատուի: Ծառան իր տէրը «խիստ» որակեց, բայց մենք տեսանք որ անոր տէրը բնաւ խիստ չէր գտնուած անոր հանդէպ: Ծառան իր տէրը կոչեց կամ անուանեց մէկը որ կ'առնէ ինչ որ իրը չէ, բայց մենք բացատրեցինք որ ամէն ինչ իր տիրոջ, այս պարագայիս՝ Աստուծոյ կը պատկանի: Ծառան իր տիրոջ համար ըսաւ թէ կը հնձէ ինչ որ չէ

սերմանած, բայց մենք տեսանք որ Աստուած ի՛նք ամէն բարիք, ամէն պարգեւ ու շնորհք սերմանած է մարդոց կեանքին մէջ: Ծառան իր այս խօսքերուն համար է որ պիտի դատուի: Զգո՛յժ ըլլանք: Մենք եւս պիտի դատուինք, եթէ երբեք այս ապերախտ ծառային նման մեր գթառատ ու քաղցր Փրկիչը կոչենք «խիստ»: Պիտի դատուինք, եթէ յանդգնինք մտածել որ Աստուած մեզմէ կ'առնէ ինչ որ իրը չէ: Պիտի դատուինք մանաւանդ, եթէ խորհինք որ Տէրը կ'ուզէ հնձել, այլ խօսքով՝ մեզմէ պահանջել այնպիսի բաներ որ ինք չէ սերմանած:

5.- «Քանի գիտէիր որ խիստ մարդ մըն եմ, կ'առնեմ ինչ որ իմս չէ եւ կը հնձեմ ինչ որ չեմ սերմանած, ինչո՞ւ դրամս շահարկողներուն չտուիր, քանի գիտէիր նաեւ թէ վերադարձիս գայն տոկոսով միասին պիտի պահանջէի»: Ասկէ առաջ ըսինք, քանի ծառան գիտէր իր տիրոջ խիստ ըլլալուն մասին, պէտք չէ՞ր իրեն տրուած դրամը շահարկողներուն տար, որպէսզի տէրը վերադարձին, գայն տոկոսով միասին պահանջէր: Ծառային պատահածէն կը սորվինք որ իւրաքանչիւր անձ պիտի դատուի նշմարտութեան վերաբերեալ իր ունեցած գիտութեան համաձայն: Եթէ գիտենք նշմարտութիւնը եւ սակայն գիտակցաբար եւ յօժարակամ կը մերժենք հնազանդիլ անոր՝ մեր դատաստանը վստահաբար շատ խիստ պիտի ըլլայ:

Մեզմէ ո՞վ չի գիտեր նշմարտութիւնը: Մեզմէ ո՞վ չի գիտեր որ Յիսուս երկրորդ անգամ դարձեալ աշխարհ պիտի գայ: Ո՞վ չի գիտեր որ երբ գայ՝ հաշիւ պիտի տանք իրեն: Ո՞վ չի գիտեր որ դատաստանը իրական է, գեհեներ իրական է, արքայութիւնը իրական է: Հակառակ որ գիտենք այս բոլորը, բայց մեզմէ քանիներ կը կատարեն կամքը Յիսուսի, քանիներ իրենց տրուած «դրամը» կը շահագործեն. եթէ այդ տրուած դրամը առաջին հերթին եւ ամէն բանէ առաջ փրկութեան պարգեւն է՝ մեզմէ քանիներ այդ պարգեւին տէ՛ր կը կենան, եւ քանիներ կ'աշխատին փրկութեան այդ պարգեւին առաջնորդել ուրիշները նաեւ:

6.- «Ինչո՞ւ դրամս շահարկողներուն չտուիր, քանի գիտէիր նաեւ թէ վերադարձիս գայն տոկոսով միասին պիտի պահանջէի»: Ծառային հարցուած նոյն այս հարցումը օր մը մեզի ալ պիտի հարցուի: Ինչո՞ւ մեզի տրուածը չգործածեցինք Աստուծոյ փառքին համար: Ինչո՞ւ անհոգ գտնուեցանք երբ գիտէինք որ Աստուծոյ Որդին վերադարձին հաշուետուութեան պիտի կանչէ մեզ: Ինչո՞ւ չգործածեցինք մեզի տրուած «դրամը»: Ո՛չ մենք գործածեցինք գայն եւ ո՛չ ալ շահարկողներուն տուինք որ գայն գործածեն: Այլ խօսքով, ո՛չ մեր փրկութիւնը հետապնդեցինք եւ ո՛չ ալ ուրիշին փրկութիւնը

հետապնդեցին: Մեզի տրուած դրամը (փրկութեան պարգեւը), պէտք է փոխանցենք ուրիշին՝ Քրիստոսի խօսքերը փարոզելով: Բայց ի՞նչպէս կրնանք հետաքրքրուիլ մեր նմաններուն փրկութեամբ երբ մենք չենք հետաքրքրուած մեր անձերուն փրկութեամբ:

Մէկը որ ընդունած է փրկութեան «դրամը» իր կեանքին մէջ՝ չի կրնար գայն իր սրտին մէջ գերեզմանել, կամ թաշկինակի մը մէջ ծրարել, ինչպէս ծառան ըրաւ, այլ պէտք է գայն դուրս բերէ իր սրտէն եւ բաժնէ ուրիշին հետ, որպէսզի երբ Տէրը յայտնուի եւ իր դիմաց կանգնինք, մեր ձեռքին մէջ չունենանք միայն իր կողմէ մեզի տրուած փրկութեան «դրամը», այլ ունենանք այդ դրամին «տոկոսը» նաեւ, այլ խօսքով՝ ուրիշ փրկուածներ ունենանք մեր կողքին, եւ կարենանք համարձակօրէն ըսել. «Տէ՛ր, ահաւասիկ ես՝ (տուած դրամդ) եւ տուած դրամիդ արդիւնքները»:

«Ապա սպասաւորներուն ըսաւ. "Առէ՛ք իրմէ դրամը եւ տարէ՛ք տուէ՛ք անոր՝ որ տասնապատիկը շահած է": Անոնք ըսին. "Տէ՛ր, անիկա արդէն տասնապատիկը ունի": "Գիտցէ՛ք", - ըսաւ ան, - "ունեցողին անելիով պիտի տրուի, իսկ չունեցողէն պիտի առնուի ունեցած ամենէն փոքր քաժինն ալ» (Ղկ 19.24-26): Նոյն այս համարներուն հանդիպեցանք արդէն Մատթէոս 25.28-29-ին մէջ եւ բացատրեցինք զանոնք. այստեղ պարզապէս շատ ամփոփ ֆանի մը մատնանշումներ պիտի ընեն.–

1.– Սպասաւորները հրեշտակներն են: Անոնք սպասաւոր կոչուած են, որովհետեւ իրենց պարտականութիւնը Տիրոջ կամքը կատարելն է: Դատաստանի օրը Յիսուս անոնց պիտի վստահի չար ու բարի մարդիկը իրարմէ գատելու գործողութիւնը: Ինքն իսկ ըսաւ. «Աշխարհի վախճանին..., հրեշտակները պիտի ելլեն եւ չարերը գատեն արդարներուն մէջէն» (Մտ 13.49): Այստեղ կը հերքուի կարծիքը կամ համոզումը այն անձերուն որոնք կ'ըսեն թէ հրեշտակները մեզ լաւապէս չեն ֆանչնար, եւ թէ անոնք մեր առօրեայ կեանքի պայմաններէն անտեղեակ են: Եթէ անոնք մեզ լաւապէս չեն ֆանչնար՝ ի՞նչպէս Յիսուս անոնց կը վստահի չար մարդիկը արդար մարդոցմէն գատելու այնքան պատասխանատու գործը: Աստուածաշունչին մէջ բազմահարիւր են այն համարները որոնք ցոյց կու տան թէ հրեշտակները մեզ շատ լաւ կը ֆանչնան, բայց մեր նիւթի սահմանէն դուրս չգալու համար, այդ մասին պիտի չխօսին: Բայց թոյլ տուէ՛ք պարզապէս ձեզի յիշեցնելու Պօղոս առաքեալին հետեւեալ խօսքը. «Հրեշտակները Աստուծոյ ծառայող հոգիներ են եւ իր կողմէ կը դրկուին օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն» (Եբր 1.14): Եթէ հրեշտակները չեն

գիտեր թէ որո՞նք արդար են եւ թէ որո՞նք փրկութիւնը պիտի ժառանգեն՝ անոնք ինչպէս կրնան դրկուիլ օգնելու համար անոնց՝ որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն»:

2.- «Առէ՛ք իրմէ դրամը եւ տարէ՛ք տուէ՛ք անոր՝ որ տասնապատիկը շահած է»: Հոս հետաքրքրական են երկու բառեր՝ «Առէ՛ք» եւ «Տուէ՛ք»: Տէրը բացարձակ իրաւունքը ունի առնելու մեզմէ ինչ որ տուած է մեզի եւ տալու զանիկա ուրիշին: Բայց արդար է Տէրը: Ան պիտի չառնէ իր տուածը մեզմէ, եթէ մենք հաւատարիմ գտնուած ենք իր տուածին հանդէպ եւ օգտագործած ենք զայն իր անունով ու իր փառքին համար: Ինչ որ ունինք, ժամանակ պիտի գայ երբ ատիկա կա՛մ պիտի աւելնայ եւ կա՛մ մեր ձեռքէն պիտի խլուի: Ուստի, զգո՛յժ ըլլանք թէ ի՛նչպէս կը վերաբերինք մեզի տրուածին հետ: Եթէ չենք ուզեր որ մեզի տրուածը խլուի մեր ձեռքէն՝ ուրեմն, աշխատանքի դա՛շտ նետուինք, եւ գործածենք ամէ՛ն պարգեւ ու ամէ՛ն շնորհք, ամէ՛ն կարողութիւն եւ ամէ՛ն առաւելութիւն՝ Աստուծոյ թագաւորութեան տարածման ու բարգաւաճման ի խնդիր: Աստուծոյ թագաւորութեամբ չհետաքրքրուող եւ անոր տարածման համար չաշխատող մարդիկ՝ տեղ պիտի չունենան այդ թագաւորութեան մէջ:

3.- Երբ տէրը հրամայեց որ դրամը առնեն չար ծառայէն եւ զայն տան տասնապատիկը շահողին, սպասաւորները տիրոջ ըսին. «Տէր՛, անիկա արդէն տասնապատիկը ունի»: Տէրը պատասխանեց. «Գիտցէ՛ք... ունեցողին աւելիով պիտի տրուի»: Այս հաստատումով, Քրիստոսի բացարձակ արդարութիւնն է որ երեսն կու գայ: Արդարութիւնը կը պահանջէ, որ անոնք որոնք իրենց երկրաւոր կեանքի ընթացքին շատ չարչարուած ու շատ աշխատած են Աստուծոյ արժայութեան համար, «աւելիով» ստանան, «աւելիով» վարձատրուին, «աւելիով» փառաւորուին: Այո՛, «Ունեցողին աւելիով պիտի տրուի»: Աւելիով պիտի ստանան բոլոր անոնք որոնք ուրիշներէն աւելի՛ յոգնած եւ տփնած են Քրիստոսի թագաւորութեան համար:

4.- «Իսկ չունեցողէն պիտի առնուի ունեցած ամենէն փոքր բաժինն ալ»: Ուշագրաւ է «չունեցող» բառին գործածութիւնը: Եթէ ան բան մը չունի՝ հապա ի՞նչ բան է որ կ'առնուի իրմէ: Խորքին մէջ, ան որոշ բան մը ունի, բայց «չունեցող» կը սեպուի, որովհետեւ բնաւ իր ունեցածը չէ գործածած: Օրինակ, եթէ մէկը գանձ մը ունի, բայց զանիկա հողին տակ պահած է, ո՛չ կ'օգտուի անկէ, ո՛չ ալ անով ուրիշին օգտակար կը դառնայ, կրնա՞նք «չունեցող» նկատել զայն: Անշո՛ւշտ ոչ: Հետեւաբար, երբ մարդ իր ունեցածը չի գործածեր, «չունեցող»ի պէս կ'ըլլայ:

«Չունեցող» կը կոչուի, ո՛չ թէ որովհետեւ չունի, այլ որովհետեւ իր ունեցածը կամ իրեն տրուածը չէ գործածած, սա կը նշանակէ որ որոշ բան մը ունի, որ սակայն պիտի առնուի իրմէ որքան ալ պատիկ բան ըլլայ իր ունեցածը, ահա թէ ինչու Յիսուս կ'ըսէ. «Պիտի առնուի [իրմէ] ունեցած ամենէն փոքր բաժինն ալ»: Այո՛, մեղաւոր մարդուն ձեռքէն «ամենէն փոքր բաժինն ալ» պիտի առնուի, այլ խօսքով՝ ոչինչ պիտի մնայ իրեն, յոյսի ո՛չ մէկ նշոյլ, օգնութեան ո՛չ մէկ աղբիւր, միտքարութեան ո՛չ մէկ խօսք, եւ կարօտ պիտի ըլլայ կաթիլ մը ջուրի, ինչպէս դժոխքին մէջ տանջուող մեծահարուստը կարօտ եղաւ:

«Իսկ իմ թշնամիներս, որոնք չէին ուզեր որ իրենց թագաւոր ըլլամ, հոս բերէք եւ իմ ներկայութեանս սպաննեցէ՛ք զանոնք՝» (Ղկ 19.27): Քանի մը մատնանշումներ.–

1.– Որո՞նք են Քրիստոսի թշնամիները որ չէին ուզեր որ Քրիստոս թագաւոր ըլլայ իրենց վրայ: Անոնք ամէն բանէ առաջ, 14-րդ համարին մէջ յիշուած այն «քաղաքացիներ»ն են, որոնք, ինչպէս ըսինք, կը ներկայացնեն Փարիսեցիները, հրեայ իշխանաւորները, աւագ քահանաները եւ Սադուկեցիները, բայց հարկաւ Քրիստոսի թշնամիներուն շարքին մէջ կ'իյնան Քրիստոսը մերժող բոլոր հրեաները եւ բոլոր դարերու բոլոր մարդիկը: Այո՛, անոնք մերժեցին զՔրիստոս իբրեւ թագաւոր երբ Պիղատոսի դիմաց կանգնած պոռացին. «Մենք կայսրէն զատ ուրիշ թագաւոր չունինք» (Յհ 19.15):

2.– Ինչո՞ւ Յիսուս «թշնամի» կ'անուանէ զինք իբրեւ թագաւոր մերժող մարդիկը: Արդեօք պարզապէս որովհետեւ զինք կը մերժե՞ն: Ո՛չ: Հրեաներուն կեցուածքը Յիսուսի հանդէպ միայն մերժողական կեցուածք մը չէր, այլեւ՝ ատելութեան ու դառնութեան կեցուածք մը: Չմոռնանք որ 14-րդ համարը մեզի կ'ըսէ թէ «իր քաղաքացիները կ'ատէին զինք»: Բայց այս ալ չի բաւեր: Իրենց մերժողական կեցուածքին եւ ատելութեան թոյնին կողքին, անոնք նաեւ ընդդիմադիրներ էին Քրիստոսի, հակառակորդներ էին անոր սուրբ Աւետարանին: Այս մասին խօսեցանք երբ բացատրեցինք Մտ 22.6-ը: Հոն կը տեսնենք թէ ինչպէս արքայութեան հարսանիքին հրաւիրեալները (հրեաները) «ծառաները բռնեցին ձեռքերն եւ սպաննեցին»: Բռնել ու ձեռքերը՝ Քրիստոսի փրկութեան Աւետարանին ընդդիմանալ կը նշանակէ, իսկ սպաննելը՝ Աւետարանին քարոզութիւնը ամբողջութեամբ դադարեցնել կը նշանակէ: Եթէ տրուած այս բացատրութիւնները նկատի ունենանք, պարզ կը դառնայ թէ ինչու Յիսուս «թշնամի» կ'անուանէ զինք մերժողները: Արդարեւ, Քրիստոսի Աւետարանին քարոզութեան ընդդիմացողները՝ «թշնամի» են Քրիստոսի:

3.- Ի՞նչ պիտի ըլլայ ճակատագիրը անոնց որոնք կ'ընդդիմանան Քրիստոսի արքայութեան Աւետարանին: Համարին շարունակութիւնը մեզի կ'ըսէ թէ ի՛նչ է անոնց աւարտը. «Հոս բերէք եւ իմ ներկայութեանս սպաննեցէ՛ք զանոնք»: Մա՛հ է բաժինը անոր որ Անմահին դէմ կը մարտնչի: Յաւիտենական պատիժ է բաժինը այն անձին որ դէմ կը դնէ Յաւիտենականին: Քրիստոսի Աւետարանը մերժողին՝ դժոխքի սեւ գիրքն է որ կը սպասէ:

4.- «Իմ ներկայութեանս սպաննեցէ՛ք զանոնք»: Քրիստոսի հակառակորդները Քրիստոսի ներկայութեանն է որ պիտի բերուին: Անոնք նոյնիման Քրիստոսի դիմաց է որ պիտի պատժուին: Անհաւատին Քրիստոսի ներկայութեան բերուիլը ինքնին մա՛հ է: Ո՞ր անաստուածը պիտի ուզէր կանգնեցուիլ Աստուծոյ առջեւ: Ո՞ր ապերախտ ու դաւանանք պիտի ուզէր բերուիլ Քրիստոսի դիմաց: Տիրոջ գալստեան օրը մեղաւոր մարդիկ իրենց խօսքը լեռներուն ու ժայռերուն պիտի ուղղեն եւ ըսեն. «Մեր վրայ ինկէ՛ք եւ ծածկեցէ՛ք մեզ անոր աչէն, անոր՝ որ գահին վրայ կը նստի. ազատեցէ՛ք մեզ Գառնուկին բարկութենէն, որովհետեւ անոր բարկութեան ահաւոր օրը եկաւ, եւ ո՞վ կրնայ անոր առջեւ դիմանալ» (Յիտ 6.16):

5.- Պատժողը Քրիստոս ինք պիտի չըլլայ, ինչպէս արձակուած հրամանն իսկ ցոյց կու տայ՝ «բերէք... սպաննեցէ՛ք»: Գեհեմ նետողները հրեշտակները իրե՛նք պիտի ըլլան, բայց ասիկա խորքին մէջ պատկերաւոր բացատրութիւն է: Մեղաւոր մարդը իր ոտքերով պիտի ֆալէ դէպի գեհեմին կրակը: Աղփատ Ղազարոսին համար կ'ըսուի որ հրեշտակը զինք Աբրահամին ֆով տարաւ, բայց մեծահարուստին համար մեզի չ'ըսուիր թէ հրեշտակները եկան եւ զինք դժոխք նետեցին: Ինչո՞ւ արդեօք: Մեզի սորվեցնելու համար որ Աստուած ինք պատասխանատու չէ մեր դժոխք նետուելուն. մարդը ի՛նքն է որ ինքնիր ձեռքով ինքնիր տունը կը ֆանդէ, հետեւաբար, ի՛նքն է որ ինքնիր ոտքերով գեհեմ պիտի երթայ:

6.- Վերջին կէտի մը անդրադառնամ: Քրիստոսի թշնամիները պիտի բերուին Քրիստոսի ներկայութեան տեսնելու համար փառքը Քրիստոսի եւ փառքը Քրիստոսի հետեւորդներուն, եւ բոլորին դիմաց պիտի պատժուին ու գեհեմի պիտի դատապարտուին, որպէսզի այս անգամ արքայութեան զաւակները տեսնեն անոնց պատիժը եւ գովերգեն Աստուծոյ արդարութիւնը:

Եւ առաջին անգամ ու ամենէն խիստը հրեաները իրե՛նք պիտի դատուին ու դատապարտուին, որովհետեւ ամենէն աւելի իրե՛նք ընդդիմացան Քրիստոսի, ամենէն աւելի իրե՛նք հալածեցին Յիսուսի

հետեւորդները. անոնք ոչ միայն իրենք անձնապէս մերժեցին Յիսուսի Աւետարանը, այլեւ դրդեցին որ ուրիշներ եւս մերժեն. ո՛չ իրենք արքայութիւն մտան եւ ոչ ալ մտնել ուզողներուն թոյլ տուին որ մտնեն (Մտ 23.13):

Եւ անոր համար ալ, անոնք դատաստանի օրը «սպաննուելու» պիտի բերուին Քրիստոսի դիմաց: Բայց այդ «սպաննութիւնը» իրենց պիտի չհասնի միայն դատաստանի օրը: Հրեաներ միշտ սպաննուեցան դարերու ընթացքին: Բոլորս ալ գիտենք որ Ք.Ն. 70 թուականին, հռոմէական զօրքերը Տիտոս զօրավարին հրամանատարութեամբ քաղցին Նրուսաղէմի վրայ եւ անոր ու անոր շրջակայ գիւղերուն մէջ սպաննեցին շուրջ 600.000 հրեայ: Քրիստոս խօսած էր այս մասին, բայց հրեաներուն սիրտը այնքան քարացած էր որ անկարող էին հասկնալու Տիրոջ խօսքին իմաստը: Դարձեալ, գիտենք որ Ք.Ն. 134 թուին երբ հրեաներ փորձեցին ապստամբիլ այն օրուայ կայսրին՝ Ատրիանոսին դէմ, վերստին մեծ ջարդի ենթարկուեցան եւ Նրուսաղէմ քաղաքը կրակի տրուեցաւ:

Բայց հրեաներուն ամենէն մեծ ապստամբութիւնը՝ Քրիստոսի դէմ ուղղուած ապստամբութիւնը եղած է ու կը մնայ: Մինչեւ այսօր, անոնք կարելի եղած բոլոր միջոցներով կը պայքարին Քրիստոսի եւ իր հետեւորդներուն դէմ: Եւ անոնք պիտի շարունակեն իրենց թշնամութիւնը հանդէպ Քրիստոսի՝ մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը, երբ պիտի լսեն ԱՐԴԱՐ ԴԱՏԱԻՈՐԻՆ խօսքը. «Իսկ իմ թշնամիներս, որոնք չէին ուզեր որ իրենց թագաւոր ըլլամ, հոս բերէք եւ իմ ներկայութեանս սպաննեցէք զանոնք»:

ԹՉԵՆԻԻՆ ՕՐԻՆԱԿԸ

«ԹՉԵՆԻՆ ձեզի թող օրինակ ըլլայ: Երբ տեսնէք որ անոր ճիւղերը կը կակուղնան եւ տերեւ կ'արձակեն, գիտէք թէ ամառը մօտ է: Նոյնպէս ալ, երբ բոլոր ըսածներս կատարուին, գիտցէք թէ Մարդու Որդիին գալուստը մօտ է եւ արդէն հասնելու վրայ: Վստահ եղէք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, իսո՛քներս պիտի չանհետանան» (Մտ 24.32-35):

Նախ ցոյց տանք թէ ի՛նչ բան պատճառ եղաւ որ Յիսուս թՉԵՆԻՆ օրինակը յիշէ:

Նոյն այս գլխուն սկիզբը, կը տեսնենք թէ երբ Յիսուս աշակերտներուն խօսեցաւ տաճարի ակերումին մասին (որ տեղի պիտի ունենար 70 թուականին, Հռոմայեցի Տիտոս զօրավարին զինուորներուն ձեռքով), աշակերտները ուզեցին գիտնալ թէ ե՞րբ պիտի պատահի ատիկա, եւ հարց տուին Տիրոջ ըսելով. «Ըսէ՛ մեզի, ե՞րբ պիտի պատահի ատիկա. ի՞նչ նշանով պիտի գիտնանք թէ ե՛րբ պիտի ըլլայ ի՞նչ գալուստդ եւ աշխարհի վախճանը» (Մտ 24.1-3):

Աշակերտներուն ուղղած այս հարցումները առիթ մը դարձան որ Յիսուս ընդարձակ կերպով խօսի թէ՛ տաճարի կործանումին մասին եւ թէ՛ աշխարհի վախճանին մասին (Մտ 24.4-51): Ե՞րբ տեղի պիտի ունենայ աշխարհի վախճանը: Թէ ե՞րբ տեղի պիտի ունենայ Քրիստոսի երկրորդ գալուստը եւ աշխարհի վախճանը՝ մարդ չի գիտեր, երկնային մարմինները իրենք եւս չեն գիտեր:

Թէպէտ Յիսուս չըսաւ թէ ե՛րբ տեղի պիտի ունենայ իր երկրորդ գալուստը, բայց եւ այնպէս, խօսեցաւ այն նշաններուն (պատերազմներ, սովեր, համաճարակներ, երկրաշարժներ, սուտ մարգարէներ, անօրէնութիւններ, հալածանքներ, նեղութիւններ, սպաննութիւններ, եւ այլն) մասին որոնք պիտի կանխեն իր գալուստը:

Այս նշաններուն մասին խօսելէ անմիջապէս ետք, Յիսուս կը խօսի իր երկրորդ գալուստին մասին, եւ այս առիթով, թՉԵՆԻՆ օրինակը կու տայ:

«ԹՉԵՆԻՆ ձեզի թող օրինակ ըլլայ: Երբ տեսնէք որ անոր ճիւղերը կը կակուղնան եւ տերեւ կ'արձակեն, գիտէք թէ ամառը մօտ է» (Մտ 24.32):
Քանի մը հաստատումներ.–

1.- ԹՊԵՆԻՆ ԿԱՄ ԱՅՆ ԾԱՌԵՐ Ի՞ՆՉԱՅԷՆ ԿՐՆԱՆ ԳՈՅԵ ԵՎ ԴԵՂԻ ՏԻՐՈՅ ԳԱՐԱՍՏԻՆ ՄՕՏԵԿԱԾ ԸՂԻՎՐ: Ի մտի ունենանք հետեւեալ քանի մը կէտերը.-

ա.- Ինչպէս գիւղերուն կակուղնալէն եւ տերեւներուն արձակուելէն քիչ ժամանակ ետք է որ ամառը վրայ կը հասնի, այնպէս ալ երբ կը լսենք պատերազմներու, սովերու, համաճարակներու, երկրաշարժներու, եւ այլ տեսակ նեղութիւններու եւ հալածանքներու մասին, գիտնանք որ անոնց պատահելէն քիչ ժամանակ ետք է որ Տիրոջ երկրորդ գարուստը տեղի պիտի ունենայ: Այլ իսոյքով, նման դժբախտութիւններ, մանաւանդ երբ անոնք անտանելի հանգամանք ստանան, նշաններ են որ Յիսուս գալու վրայ է:

բ.- Ինչպէս ճշդուած է ծառերուն ծաղկելուն եւ պտուղ բերելուն ժամանակը, այնպէս ալ ճշդուած է մեր Տիրոջ երկրորդ գալստեան ժամանակը (Ս.մբ 2.3): Ինչպէս ծառը իր ժամանակէն առաջ տերեւ չ'արձակեր եւ պտուղ չի տար, նոյնպէս ալ Յիսուս ժամանակէն առաջ աշխարհ պիտի չդառնայ:

գ.- ԹՊԵՆԻՆԻՆ չոր գիւղերը կը պատկերացնեն այն նեղութիւնները որոնցմէ կ'անցնի հաւատացեալը: Բայց հաւատացեալ մարդը պէտք չէ մոռնայ, որ ինչպէս չոր գիւղերուն չոր վիճակը կը փոխուի կակուղ վիճակի, այնպէս ալ, Տիրոջ երկրորդ գալուստին, մեր նեղութիւնները պիտի փոխուին ուրախութեան:

դ.- Երբ նախամարդը մեղքի մէջ ինկաւ եւ ինքզինքն թՊԵՆԻՆԻ տերեւներով ծածկեց, բայց երբ Յիսուս աշխարհ եկաւ, ցամփեցուց թՊԵՆԻՆ իր տերեւներով միասին (Յովհաննէս Երզնկացի): Տերեւները մեղքի խորհրդանիշ են այստեղ: Յիսուս ծառն ու տերեւները ցամփեցնելով՝ կարծէք մեղքն է որ ցամփեցուցած, այլ իսոյքով՝ սպաննած եղաւ: Բայց Յիսուս իստելով թՊԵՆԻՆԻ տերեւներուն բացուելուն մասին՝ կ'ուզէ ցոյց տալ մեզի թէ մեղքը մնայուն կերպով պիտի փորձէ գլուխ ցցել, եւ թուզի տերեւներուն նման լայն բացուիլ եւ իր շուքին տակ առնել մարդիկը: Եթէ տերեւները մեղքի խորհրդանիշ են, ինչպէս ըսինք, այդ պարագային ինչո՞ւ Յիսուս կը իստի տերեւներուն բացուելուն մասին: Ի՞նչ ըսել կ'ուզէ եւ ե՞րբ լայն պիտի բացուին մեղքին տերեւները: Պիտի բացուին՝ ժամանակներու աւարտին՝ երբ Նեոք պիտի ծնի, երբ անօրէնութիւնը իր գագաթնակէտին պիտի հասնի, երբ կեանքը անտանելի պիտի դառնայ. եւ ճիշդ այն ատեն է որ Տէրը պիտի յայտնուի իր հրեշտակներուն հետ միասին: Ուստի, տերեւներուն բացուիլը՝ ժամանակներու աւարտին մեղքին հաստատելիք տիրապետութեան ակնարկութիւն է: Տէրը իր յայտնութեամբ վերջ պիտի դնէ այդ տիրապետութեան:

ե.- Սուրբ Ամբրոսիոս խօսելով թգեմիի ծառին տերեւներ արձակելուն մասին՝ երկու բացատրութիւններ կու տայ.-

Առաջին.- Ինչպէս բոլոր ծառին վրայ պտուղ կ'երեւի, այնպէս ալ բոլոր մարդիկ պիտի դաւանին Տէրը, եւ Իսրայէլ ինք եւս պիտի դաւանի Տէրը, եւ երբ դաւանի, այն ատեն կրնանք ակնկալել Տիրոջ երկրորդ գալուստը, երբ արդէն ամառը հասած կ'ըլլայ եւ յարութեան պտուղները պատրաստ կ'ըլլան հաւաքուելու:

Երկրորդ.- Ամբրոսիոս կ'ըսէ նաեւ թէ թգեմիի ծառին տերեւներ արձակելը՝ կրնայ ներկայացնել այն մեղաւոր մարդիկը որոնք կը ծածկուին ծաղիկներով, որոնք սակայն ներքնապէս անպտուղ ու դատարկ են, անոնք մանաւանդ, կը ներկայացնեն հրեայ ժողովուրդը որ ծածկուած էր օրէնքներու տերեւներով, որոնք սակայն պտուղ չունէին:

գ.- Յիշեմք նաեւ որ որոշ հայրեր թգեմիի ծառին տերեւներ արձակելուն մէջ տեսած են Անօրէնին (Նեոին) յայտնութիւնը «կորուստի սահմանուած հակառակորդը, որ պիտի ընդդիմանայ աստուած կոչուած եւ մարդոցմէ պաշտուած ոեւէ բանի» եւ «որ Սատանային ներգործութեամբ պիտի գայ, ամենայն զօրութեամբ կեղծ հրաշքներ եւ սքանչելիքներ պիտի կատարէ, եւ ամէն տեսակի չար խաբեբայութեամբ պիտի հրապուրէ անոնք՝ որ կորուստի ցամբուն մէջ են» (Բ.Թ.ս 2.3-4, 9-10):

է.- Տակաւին, կան ուրիշներ որոնք թգեմիի ծառին տերեւներ արձակելուն մէջ կը տեսնեն հրեայ ժողովուրդին դարձը դէպի Քրիստոս ժամանակներու աւարտին, եւ անոնց հաւատքի պտուղ բերելը:

2.- Ինչո՞ւ Յիսուս իր երկրորդ գալուստը նմանցուց ամառուան գալուստին: Քանի մը բացատրութիւններ առաջարկուած են.-

ա.- Ոմանք բացատրած են, որ Յիսուս իր գալուստը նմանցուց ամառուան, որպէսզի ցոյց տայ մեզի թէ իր գալուստով՝ մեր սիրտերն ու հոգիները առաւել եւս պիտի վառին իր սիրով:

բ.- Ուրիշներ հաստատած են թէ Յիսուս իր գալուստը նմանցուց ամառուան, որովհետեւ ամառն է որ արտերուն բերքերը կը հնձուին: Կարծէք Յիսուս ըսել ուզեց, որ ժամանակներու աւարտին պիտի դրկէ իր հնձուորները (հրեշտակները), որպէսզի աշխարհի չորս կողմէն հաւաքեն Աստուծոյ գաւակները:

գ.- Գիտեմք որ «ձմեռ» բացատրութիւնը Յիսուսի բերնին մէջ ընդհանրապէս խորհրդանիշ եղած է մեղքի (Մտ 24.20): Հետեւաբար, երբ Յիսուս կը խօսի ամառուան գալուստին մասին, եւ երբ իր գալուստը կը նմանցնէ ամառուան գալուստին, խորքին մէջ ըսել կ'ուզէ, թէ իր գալուստով՝ վերջ պիտի դրուի մեղքի տիրապետութեան:

դ.– Վերջապէս, կարգ մը գրիչներ, «ամառ»ը խորհրդանիշ նկատած են վերջին դատաստանին: Ինչպէս ամառը իրեն հետ տաքը կը բերէ, այնպէս ալ Յիսուս իր երկրորդ գալուստով իրեն հետ երկու տեսակ տաք պիտի բերէ: Իր սիրոյն տաքը՝ արդարներուն համար, եւ գեհեմին տաքը՝ չարագործ մարդոց համար:

Ե.– Ինչպէս կասկած չունինք որ ամառը պիտի գայ, այնպէս ալ կասկած պէտք չէ ունենանք որ Յիսուս երկրորդ անգամ պիտի գայ:

Դարձեալ, ինչպէս ձմեռուան կը յաջորդէ գարունն ու ամառը, այնպէս ալ նեղութեանց ու փորձութեանց կը յաջորդէ Քրիստոսի գալուստը եւ բնակիլը մեր սիրտերուն մէջ, այլ խօսքով՝ նեղութեանց ժամանակ է որ կը գգանք Յիսուսի ներկայութիւնը մեր անձերուն մէջ:

Թ՛գեմինի օրինակով, Յիսուս կ'ուզէ սորվեցնել մեզի թէ իր փառքը ծածուկ կերպով կը գտնուի մեր անձերուն մէջ, միշտ ինչպէս ծառին փառքը (տերեւները, ծաղիկները, պտուղները) ծածուկ կերպով կը գտնուին իր մէջ եւ միայն ամառն է որ հանդէս կու գան: Արդ, ինչպէս ծառը ձմեռ ատեն կ'երեւի առանց փառքի ու գեղեցկութեան, այլ խօսքով՝ առանց տերեւի, ծաղիկի ու պտուղի, նոյնպէս ալ մենք, ներկայիս, կը նմանինք ձմեռուայ անտերեւ, անծաղիկ ու անպտուղ ծառերուն, չունինք փառք ու գեղեցկութիւն, բայց ժամանակ պիտի գայ երբ վերջ պիտի գտնէ ձմեռը եւ վրայ պիտի հասնի ամառը եւ մենք վերստին կեանքով պիտի լեցուինք (Սուրբ Յովհաննէս Ոսկեբերան):

3.– Ինչո՞ւ Յիսուս կը խօսի թ՛գեմինի միւղերուն կակուղնալուն մասին, ապա տերեւներ արձակելուն մասին, ապա ամառուան վրայ հասնելուն մասին: Քրիստոս այստեղ աստիճանական ընթացք մըն է որ կ'ուզէ ցոյց տալ մեզի: Թ՛գեմինի միւղերուն կակուղնալէն շուրջ ամիս մը ետք է որ տերեւները կը սկսին կամաց-կամաց բացուիլ, եւ տերեւներուն բացուելէն շուրջ ամիս մը ետք է որ ամառը կու գայ, եւ ամառուան գալէն ամիսներ ետք է որ պտուղները կը սկսին երեւիլ: Ի՞նչ է ըսել ուզուածը, կամ ի՞նչ խորհուրդ կը կանգնի ասոր ետին: Ըսել ուզուածը այն է, թէ՛ որպէսզի տեղի ունենայ Տիրոջ երկրորդ գալուստը, որոշ բաներ կան որ պէտք է պատահին: Ինչպէս թ՛գեմին պտուղ տալէ առաջ, որոշ ընթացք է մը կ'անցնի, նախ միւղերը կը կակուղնան, ապա տերեւները կը բացուին, ապա ամառը կու գայ, այնպէս ալ, Քրիստոսի երկրորդ գալուստէն առաջ «շատ բաներ» կան որ պիտի ըլլան, ինչպէս նաեւ «յատուկ բաներ» կան որ պիտի ըլլան:

Այդ «շատ բաներուն» շարքին են սուտ քրիստոսներու երեւումը, պատերազմները, սովերը, համաճարակները, երկրաշարժները, սուտ մարգարէները, անօրէնութիւնները, հալածանքները, նեղութիւնները,

սպաննութիւնները (Մտ 24.4-14): Այս բաներուն բազմանալը եւ սուր հանգամանք ստանալը նշան է որ Տիրոջ գալուստը մօտ է: Իսկ «յատուկ բաները» որ պիտի ըլլան Տիրոջ երկրորդ գալուստէն անմիջապէս առաջ՝ արեւին խաւարիլն է, լուսինին փայլփին կորսուիլն ու արիւնի գոյն ստանալն է, երկինքի աստղերուն թափիլը կամ պակսիլն է, երկնային մարմիններուն սասանիլն է, եւ ի վերջոյ, Մարդու Որդիին նշանին (Խաչին) երեւիլն է երկնակամարին վրայ (Մտ 24.29-30): Աստուծոյ վերջին նշանները պիտի ըլլան, որովհետեւ մարդկութիւնը չի կրնար ապրիլ առանց արեւին, լուսինին, աստղերուն ու երկնային մարմիններուն: Անոնց խախտումը՝ խախտումն է մարդկային սերունդին եւ աշխարհի կեանքին:

«Նոյնպէս ալ, երբ բոլոր ըսածներս կատարուին, գիտցէ՛ք Մարդու Որդիին գալուստը մօտ է եւ արդէն հասնելու վրայ» (Մտ 24.33):

«Երբ բոլոր ըսածներս կատարուին...»: Ի՞նչ բաներ ըսաւ Յիսուս զորս պէտք է պատահին իր երկրորդ գալուստէն առաջ: Նոյն այս գլխուն 4-29 համարներուն մէջ Յիսուս խօսեցաւ այն բոլոր բաներուն մասին զորս տեղի պիտի ունենան իր գալուստէն առաջ: Բազմահարիւր են ժամանակներու աւարտին մօտեցած ըլլալու նշաններն ու ապացոյցները: Յիշեմք անոնցմէ կարեւորագոյնները. –

1.– Յիսուս հաստատեց թէ ժամանակներու աւարտին «արեւը պիտի խաւարի» (Մտ 24.29: Մր 13.24): Իսկ ի՞նչ կ'ըսեն այսօրուան գիտնականները: Այսօր, որոշ գիտնականներ կու գան ըսելու որ արեւը 70-75 տարուայ կեանք ունի, իսկ ուրիշ գիտնականներ՝ 90-95 տարուայ կեանք կը սահմանեն արեւին: Գիտութիւնը այս հաստատումը կ'ընէ, նկատի ունենալով որ արեւի դիմացը եղող օզոնը (OZONE) զոր կ'արգիլէ որ արեւին մանիշակագոյն եւ վտանգաւոր ճառագայթները աշխարհ հասնին, հետզհետէ սկսած է տկարանալ եւ նեղփեր երեւան բերել: Այս իրողութիւնը չի՞ պարզեր որ Տէր Յիսուսին գալուստը մօտ է:

2.– Յիսուս հաստատեց թէ ժամանակներու աւարտին «լուսինը այլեւս պիտի չփայլի» (Մտ 24.29: Մր 13.24): Բնականօրէն երբ արեւը խաւարի, «լուսինը այլեւս պիտի չփայլի», որովհետեւ լուսինը իր լոյսը արեւէն է որ կը ստանայ: Սա ցոյց չի՞ տար որ Փրկիչին երեւումը մօտ է:

3.– Մեր Տէրը՝ Յիսուս, խօսելով իր գալուստը կանխող նշաններուն մասին, հաստատեց թէ «երկինքէն աստղերը պիտի իյնան» (Մտ 24.29: Մր 13.25): Աստղերուն իյնալը բառացիօրէն պէտք չէ հասկնալ: Մեկնիչներ աստղերուն իյնալը՝ անոնց լոյսին մարիլը իբրեւ հասկցած են: Այսօր աստղագէտներ կը հաստատեն թէ 14 աստղեր երկնակամարին

վրայ կորսնցուցած են իրենց լոյսը, եւ այդ իսկ պատճառով, ալ չեն երեւիր: Ասիկա չի՞ փաստեր որ մեր Տիրոջ գալուստը մօտ է:

4.- Յիսուս կը խօսի ժամանակներու աւարտին տեղի ունենալիք պատերազմներու մասին (Մտ 24.6-7): Պատերազմագիտութեամբ զբաղողներ կը հաստատեն թէ անցնող մէկ դարու ընթացքին 25 անգամ աւելի պատերազմներ տեղի ունեցան քան անցնող բազմահարիւր դարերուն: Եւ հետաքրքրական է նկատի առնել որ անցնող դարու ընթացքին շատ աւելի հաշտութեան համաձայնագիրներ կնքուեցան քան Քրիստոսը յաջորդող 19 դարերուն: Պատերազմներու պատմութեամբ հետաքրքրուող անձեր կը հաստատեն, որ այսօր թերթերն ու լրատուական միջոցները 30 անգամ աւելի շատ տեղ կու տան պատերազմական լուրերու, քան 50-80 տարիներ առաջ: Ասիկա Տոյց չի՞ տար որ Քրիստոսի երկրորդ գալուստը մօտ է:

5.- Յիսուս կը խօսի տեղի ունենալիք սովի մասին (Մտ 24.7): Պատմութեան ընթացքին սովեր միշտ եղած են, բայց սովամահուածներ գրեթէ չեն եղած: Այսօր աշխարհի մէջ ցորենի արտերը 25 անգամ աւելի ընդարձակ են քան անցեալ դարերուն, հակառակ այս իրողութեան, այսօր շատ աւելի մարդիկ աշխարհի մէջ անօթութենէ կը մեռնին քան ռեւէ ատեն պատմութեան ընթացքին մեռած են: Կ'ըսուի որ ներկայ ժամանակներուս, օրական աւելի քան 10.000 հոգի կը մեռնի ուտելիքի չգոյութեան պատճառով: Ասիկա եւս նշաններէն մին է Տիրոջ գալուստեան մօտալուտ ըլլալուն:

6.- Յիսուս կը խօսի տեղի ունենալիք համաճարակներու մասին (Մտ 24.7): Համաճարակը ամէն ինչ լափող ու փնացնողն է: Անցնող 50 տարիներուն կրակը շատ աւելի տեղ լափեց աշխարհի մէջ քան անցնող 500 տարիներուն: Կը բաւէ որ նկատի առնէք Ամերիկայի, Եւրոպական որոշ երկիրներու եւ յատկապէս Լիբանանի մէջ կրակի բռնուած մասերը եւ պիտի համոզուիք այս նշմարտութեան: Բայց համաճարակը միայն կրակը չէ: Համաճարակի շարքին են այն հիւանդութիւններն ու ժանտախտները որոնք անցնող դարուն տիրող ներկայութիւն դարձան աշխարհի մէջ ռեւէ դարէ աւելի:

7.- Յիսուս կը խօսի տեղի ունենալիք երկրաշարժներու մասին (Մտ 24.7): Երկրագիտութեամբ զբաղողներ կը հաստատեն թէ 1900-էն 2000 դարաշրջանի ընթացքին, 20 անգամ աւելի երկրաշարժներ տեղի ունեցաւ աշխարհի մէջ քան 1500-էն 1900 երկարող չորս դարերու ընթացքին:

Օտար հեղինակ մը ըսած է. «There have been more severe earthquakes in the last two hundred years than in the preceding one

thousand years»: Նկատի պէտք է առնել որ վերջին դարու երկրաշարժները ոչ միայն թիւով աւելի են, այլ նաեւ ուժգնութեամբ: Ներկայիս, գրեթէ ամէն օր պզտիկ երկրաշարժներ տեղի կ'ունենան աշխարհիս չորս կողմերը:

8.- Յիսուս խօսելով ժամանակներու աւարտին մասին եւ իսուֆը ուղղելով իր հետեւորդներուն՝ կ'ըսէ. «Այն ատեն ձեզ նեղութեան պիտի մատնեն ու սպաննեն եւ բոլոր ազգերը պիտի ատեն ձեզ իմ պատճառով» (Մտ 24.9): Պատմութեան ընթացքին միշտ հալածանքներ յարուցուած են քրիստոնեաներու դէմ, յատկապէս առաջին չորս դարերուն ընթացքին: Այսօր սակայն, յետ ժամանակէ աւելի քրիստոնեաներ իրենց քրիստոնէական հաւատքին համար ատելութեան առարկայ կը դառնան, կը հալածուին, կը սպաննուին, իրենց իրաւունքներէն կը զրկուին, անարդար դատերու ու դատապարտութիւններու կը հանդիպին: Մեզմէ ո՞վ չի գիտեր այն մահաոխի՞ հալածանքներուն մասին որ սկիզբ առին Ինտոնեսիայի մէջ 1945-ին եւ կը շարունակուին մինչեւ այսօր, գրեթէ ամէն օր իլելով տասնեակ եւ երբեմն հարիւրաւոր քրիստոնեաներու կեանքը:

Ո՞վ չի գիտեր որ այսօր ամբողջ Իրաքի մէջ, բայց մանաւանդ Մօսուլի մէջ, սաստիկ հալածանքներ կը յարուցուին քրիստոնեաներու դէմ եւ կը պարտադրուի անոնց կամ լքելու իրենց եկեղեցիներն ու տունները եւ կամ մահուան ենթարկուելու: Տասնեակ հազարաւոր քրիստոնեաներ լքեցին Իրաքը:

Ո՞վ չի գիտեր որ Հնդկաստանի մէջ հալածանք կայ քրիստոնեաներու հանդէպ եւ յատկապէս հոն գացող միսիոնարներուն նկատմամբ:

Ո՞վ չի գիտեր Ադուանիստանի եւ Թուրքիոյ մէջ քրիստոնեաներուն դէմ տաժուած ատելութեան եւ յարուցուած հալածանքներուն մասին:

Տակաւին չենք իսուիր Զինաստանի, Սուտանի, Ափրիկէի, Սուէտական Արաբիայի, Եգիպտոսի, Ալներիայի, Հնդկաստանի, Բագիստանի եւ այլ բազմաթիւ երկիրներու մասին ուր հալածանք կայ քրիստոնեաներուն հնադէպ:

Այս բոլորը ուրիշ բան չեն պարզեր եթէ ոչ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի իսուֆին կատարումը, այն՝ թէ ժամանակներու աւարտին իր հետեւորդները պիտի ատուին, նեղութեան պիտի հանդիպին, եւ պիտի հալածուին:

9.- Յիսուս կը հաստատէ թէ իր գալուստը տեղի պիտի ունենայ այնպէս ինչպէս ջրհեղեղը տեղի ունեցաւ Նոյի օրերուն, երբ «մարդիկ

կ'ուտէին ու կը խմէին, այր կամ կին կ'առնէին» (Մտ 24.38): Յիսուսի այս խօսքը ակնարկութիւն է երկու բանի.–

ա.– «Ուտել, խմել, կին առնել, կին տալ» բացատրութիւններով Յիսուս կ'ակնարկէ այն մարդոց որոնք կապուած են այս նիւթական ու մարմնաւոր աշխարհին եւ կ'ապրին գուտ մարմնաւոր կեանք մը: Այլ խօսքով, այս բառերով Յիսուս կ'ակնարկէ լոկ այս աշխարհին համար ապրող եւ հոգեւոր իրականութիւններով բնաւ չհետաքրքրուող մարդոց:

բ.– «Այր կամ կին կ'առնէին» խօսքը նաեւ ակնարկութիւն է ամուսնական կեանքին, բայց հարկաւ մաքուր ամուսնական կեանքին չէ որ կ'ակնարկէ, այլ՝ բարոյապէս ինկած կեանքին: Մեզմէ ո՞վ չի գիտեր որ այսօր աշխարհի մեծագոյն մեղքն ու անօրէնութիւնը՝ անբարոյութիւնն է, եւ անբարոյութեան ամենէն գարշելի տեսակը՝ միասեռականութիւնը: Անասուններու մօտ մենք երբեք միասեռականութիւն չենք տեսներ: Սա ցոյց կու տայ որ միասեռական մարդիկ անասուններէն աւելի գէշ են: Որոշ երկիրներու մէջ եւ որոշ կազմակերպութեանց կողմէ միասեռականութեան պաշտօնապէս ընդունումը նշաններէն մին է Տիրոջ երկրորդ գալստեան մօտալուտ ըլլալուն:

10.– Յիսուս կ'ըսէ թէ ժամանակ պիտի գայ երբ անօրէնութիւնը այնքան պիտի բազմանայ որ «շատերուն սէրը պիտի ցամփի» (Մտ 24.12): Պէտք կ'ա՞յ խօսելու ներկայիս աշխարհի մէջ գոյութիւն ունեցող անօրէնութեանց մասին, որ թէ՛ իր տեսակով եւ թէ՛ իր քանակով կը գերազանցնէ բոլոր ժամանակներու բոլոր անօրէնութիւնները:

11.– Յիսուս կը հաստատէ որ նախքան իր գալուստը «արքայութեան Աւետարանը պիտի քարոզուի ամբողջ աշխարհին» (Մտ 24.14): Յիսուս այստեղ հեթանոսներուն քրիստոնեայ ըլլալուն մասին չէ որ կը խօսի, այլ՝ պարզապէս անոնց «Արքայութեան Աւետարանը» լսելուն մասին: Եւ բոլորս ալ գիտենք, որ այսօր, գրեթէ աշխարհի մէջ երկիր, քաղաք կամ գիւղ չկայ որ չէ լսած Քրիստոսի Աւետարանին բարի լուրը: Բայց պէտք է յիշել նաեւ որ քիչ չէ թիւը ամէն օր քրիստոնեայ դարձող հեթանոսներուն: Եւրոպացի միսիոնարներ կը վկայեն որ Չինաստանի մէջ օրական 5-6 հազար չինացիներ քրիստոնեայ կը դառնան, ինչպէս նաեւ քրիստոնեայ կը դառնան բազմահազար Ափրիկեցիներ եւ Իսլամներ:

12.– Պօղոս առաքեալ կը հաւատայ որ ժամանակ պիտի գայ երբ հրեաներ պիտի ընդունին Քրիստոսը, որմէ ետք «մեռելներու յարութիւնը տեղի պիտի ունենայ» (Հո 11.15-26): Այստեղ պէտք է գիտնալ չորս բան.–

ա.- Առաջին երկու դարերուն ընթացքին բազմահազար թիով հրեաներ ընդգրկեցին քրիստոնէական հաւատքը, եւ ասիկա առաքեալին խօսքին կատարման առաջին նախանշանները հանդիսացան:

բ.- Ներկայ հրեաներուն մեծամասնութեան կողմէ Քրիստոսի հանդէպ ցուցաբերուած ընդդիմութիւնը, համեմատաբար իրենց հայրերուն ցուցաբերած ընդդիմութեան հետ՝ շատ մեղմ է եւ շատ նուազ:

գ.- Ներկայ Իսրայէլի մէջ աւելի քան 250.000 Իսրայէլացիներ կան որոնք ընդգրկած են քրիստոնէական հաւատքը: Տակաւին չենք խօսիր այն հարիւրհազարաւոր հրեաներուն մասին որոնք քրիստոնեայ եղած են եւ կ'ըլլան Ամերիկայի եւ Եւրոպական զանազան երկիրներու մէջ:

դ.- Այսօր, Իսրայէլի մէջ վերստին Երուսաղէմ քաղաքը ձեռք ձգելու եւ հոն Սողոմոնի տաճարը վերակառուցելու միտում ու փափակայ: Ասիկա ամենէն զօրեղ նշաններէն մին է որ Տէր Յիսուսի գալուստը մօտեցած է:

13.- Առաջին դարերուն ամբողջ եկեղեցին Քրիստոսի վերահաս գալստեան յոյսով կ'ապրէր: Այսօր սակայն իրողութիւնը տարբեր բան է: Այսօր Քրիստոսի երկրորդ գալուստը ուրացողներ կան եւ անոնք հեթանոսները չեն, այլ անուանապէս քրիստոնեաներն են, որոնց թիւը բազմահարիւր հազարներով է: Պետրոս առաքեալ մեզի կը յիշեցնէ որ «վերջին օրերուն հեգնողներ ու արհամարհողներ պիտի գան, որոնք իրենց սեփական ցանկութիւններէն առաջնորդուած պիտի հարցնեն. "Ո՞ր մնաց Քրիստոսի երկրորդ գալստեան խոստումը: Մեր հայրերը մեռան եւ դեռ ամէն ինչ կը մնայ եղածին պէս, ինչպէս որ էր ստեղծագործութենէն ի վեր"» (Բ.Պտ 3.3-4): Առաքեալին «վերջին օրերուն» բառերը յստակօրէն ցոյց կու տան որ մենք վերջին օրերուն մէջ կ'ապրինք, քանի Տիրոջ աշխարհի վերադարձի իրողութիւնը մերժողներուն թիւը անհաշիւ է:

14.- Պօղոս առաքեալ կը յիշեցնէ մեզի թէ «Սուրբ Հոգին յայտնապէս կ'ըսէ, թէ վերջին ժամանակներուն շատեր պիտի լինեն հաւատքը, ականջ տալով մոլորեցուցիչ չար ոգիներու եւ դեւերու ուսուցումներուն, որոնք կը քարոզուին կեղծաւոր եւ ստաբան մարդոց կողմէ» (Ա.Տմ 4.1-2): Ուշադրութիւն դարձուցէք որ առաքեալը «վերջին ժամանակներուն» մասին է որ կը խօսի երբ կը հաստատէ որ մարդիկ պիտի լինեն իրենց հաւատքը եւ ականջ տան «չար ոգիներու եւ դեւերու ուսուցումներուն» որոնք պիտի «քարոզուին կեղծաւոր եւ ստաբան մարդոց կողմէ»: Մեզմէ ո՞վ չի գիտեր որ բոլոր ժամանակներէն աւելի, այսօր է որ հոգեւոր կեանք փնտոող մարդիկ կամայ թէ ականջ տան

կու տան սխալ վարդապետութեանց, որոնց մասին խօսիլը մեզ անհունապէս պիտի հեռացնէ մեր նիւթի ծիրէն: Այս վերջին քսան տարիներուն չէ՞ որ Ամերիկայի ու Եւրոպայի մէջ անհաշիւ եղաւ թիւը սուտ քարոզիչներու որոնք երբեմն գիտնալով եւ երբեմն առանց գիտնալու «չար ոգիներու եւ դեւերու ուսուցումներ»ն են որ կը փոխացեն իրենց ունկնդիրներեան: Այսօր երբ մէկը կ'ելլէ եւ կ'ըսէ. «Աշխարհի մէջ մեղք չկայ, մեղքը յարաբերական է»՝ ասիկա «չար ոգիներու եւ դեւերու ուսուցում» չէ՞: Կամ երբ քարոզիչներ կ'ելլեն ու կը փորձեն Քրիստոսի գալստեան տարին նշել՝ ասիկա «չար ոգիներու եւ դեւերու ուսուցում» չէ՞: Կամ երբ քարոզիչ մը կ'ըսէ. «Ժամանակ պիտի գայ երբ Աստուած յաւիտեանապէս պիտի չէզոքացնէ կամ անյայտացնէ դժոխքը»՝ ասիկա «չար ոգիներու եւ դեւերու ուսուցում» չէ՞: Կամ երբ միասեռականներու առաջնորդներ եւ միասեռականներ կը յայտարարեն թէ իրենք այդպէս ստեղծուած են Աստուծոյ կողմէ՝ ասիկա «չար ոգիներու եւ դեւերու ուսուցում» չէ՞: Աստուածաշունչը յստակօրէն չ'արգիլե՞ր միասեռականութիւնը եւ զանիկա սրբապղծութիւն չի՞ համարեր (ՂԼ 18.22: Գրծ 1.26-28):

15.- Առաքեալը դարձեալ խօսելով Քրիստոսի երկրորդ գալուստը կանխող ժամանակին մասին կ'ըսէ. «Ժամանակ պիտի գայ երբ մարդիկ ականջ պիտի չկախեն առողջ վարդապետութեան, այլ՝ իրենց սեփական ցանկութիւններուն համապատասխանող եւ զիրենք հանոյացնող բաներու մասին խօսող ուսուցիչներ պիտի փնտոեն: ՊԻՏԻ ՉՈՒՋԵՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԼՍԵԼ» (Բ.Տմ 4.3-4): Շատ տեղին ու շատ դիպուկ է առաջին ու վերջին տողը, գոր կ'արժէ ուշադրութեամբ կարդալ. «Ժամանակ պիտի գայ երբ մարդիկ ականջ պիտի չկախեն առողջ վարդապետութեան...: ՊԻՏԻ ՉՈՒՋԵՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԼՍԵԼ»: Այսօր ոչ միայն Քրիստոսէ հեռու եղող աշխարհին մէջ, այլեւ նոյնիմֆն «հաւատացեալներու» շարքերուն մէջ մարդիկ կան որոնք չեն ուզեր նշմարտութիւնը լսել, եւ չեն ուզեր ականջ տալ առողջ վարդապետութեան:

Երբ մէկը չ'ուզեր հաւատալ տիեզերական դատաստանի մը գոյութեան, կամ Քրիստոսի երկրորդ գալստեան, կամ դժոխքի գոյութեան ու յաւիտեանականութեան, ի՞նչ կ'ընէ, չ'ե՞րթար եւ չի՞ փնտոեր այնպիսի ուսուցիչներ որոնք իրենք եւս չեն հաւատար այս բոլորին: Առաքեալը այսպիսիներուն մասին է որ կը խօսի երբ կ'ըսէ. «Իրենց սեփական ցանկութիւններուն համապատասխանող եւ զիրենք հանոյացնող բաներու մասին խօսող ուսուցիչներ պիտի փնտոեն»: Ես շա՛տ կը զարմանամ թէ ի՛նչպէս մարդիկ իրարու խօսքին աւելի՛ հաւատֆ

կ'ընծայեն քան Աստուծոյ խօսքին: Այդպիսիներ նոյնիսկ կը յանդգնին քննադատել ու սրբագրել Աստուածաշունչը, եւ կը մոռնան որ Աստուածաշունչը գրուած է որպէսզի մե՛զ սրբագրէ եւ ո՛չ թէ որպէսզի մե՛նք գայն սրբագրենք:

16.- Սրբագան առաքեալը կը հաստատէ թէ «վերջին օրերուն դժուար ժամանակներ պիտի գան, որովհետեւ մարդիկ պիտի դառնան անձնասէր, դրամապաշտ, ամբարտաւան, հպարտ, հայիոյիչ, ծնողներուն անհնազանդ, ապերախտ, սրբութիւնները ոտնակոխող, տմարդի, անգութ, չարախօս, անհանդուրժող, դաժան, բարիին թշնամի, մատնիչ, անպատկառ, գոռոզ, եւ աւելի հեշտամէք սիրող՝ քան զԱստուած: Երեւութապէս Աստուածապաշտ են անոնք, բայց խորքին մէջ չեն հաւատար աստուածապաշտութեան գօրութեան» (Բ.Տմ 3.1-4): Մեզ շատ կը զարմացնէ առաքեալին վերջին երկու տողերը, որոնք յստակօրէն ցոյց կու տան թէ առաքեալը աշխարհի մարդոց մասին չէ որ կը խօսի, այլ «երեւութապէս Աստուածապաշտ» մարդոց մասին, այլ խօսքով՝ իրենք զիրենք հոգեւոր ձեւացնող, եկեղեցի յանախող, քարոզիչ կամ քարոզ լսող, հոգեւորական թէ հոգեւորութիւն ծախող անձերու մասին: Եթէ «Աստուծոյ հետեւորդները» եւ «զԱստուած քարոզելու կանչուածները» իրենք ա՛յսքան մեղաւոր պիտի ըլլան, հապա ի՛նչ ըսենք աշխարհի մարդոց եւ Սատանայի հետեւորդներուն մասին:

17.- Պօղոս առաքեալ կը վկայէ որ «Տիրոջ Օրը պիտի չգայ՝ մինչեւ որ նախ չգայ Տիրոջ դէմ վերջին ապստամբութիւնը, եւ չյայտնուի անօրէնութեան մարմնացումը եղող մարդը, կորուստի սահմանուած հակառակորդը, որ պիտի ընդդիմանայ աստուած կոչուած եւ մարդոցմէ պաշտուած ոեւէ բանի: Մինչեւ իսկ Աստուծոյ տաճարին մէջ պիտի նստի եւ ինքզինքին համար պիտի յայտարարէ թէ աստուած է» (Բ.Թս 2.3-4): Այստես յիշուած «անօրէնութեան մարմնացումը եղող մարդը» գորս կը կոչուի «հակառակորդ», նոյնիման Նեոն է, որ ՀակաՔրիստոսն է, ուրիշ անոր համար ալ կոչուած է՝ «հակառակորդ»: Ասիկա պիտի ըլլայ մէկը որ «Աստուծոյ տաճարին մէջ պիտի նստի եւ ինքզինքին համար պիտի յայտարարէ թէ աստուած է»: Հաւանաբար Նեոն Աստուծոյ տաճարին մէջ նստելու արարքը բառացիօրէն պէտք չէ հասկնալ: Այլ պարզապէս կը նշանակէ Նեոն տիրապետութիւնը, կամ իշխանութիւնը, կամ ներկայութիւնը, կամ ազդեցութիւնը Աստուծոյ տաճարին մէջ, Քրիստոսի եկեղեցիին վրայ: Որոշ հեղինակներ փորձած են «Աստուծոյ տաճար» ըսելով հասկնալ մարդ արարածը, որուն մէջ Նեոն կրնայ նստիլ, այլ խօսքով տիրել ու իշխել անոր վայ: Ինչ ալ ըլլայ հոս յիշուած «Աստուծոյ տաճարը», եկեղեցին թէ մարդը ինք, մէկ բան յստակ է, որ

առաքելաբան մեզի ցոյց կու տայ թէ ժամանակներու աւարտին Նեոն ու Սատանան գորաւոր տիրապետութիւն պիտի բանեցնեն գրեթէ ամէն տեղ, եւ պիտի յանդգնին ոսնձգութիւններ ընել նոյնիսկ սրբազան վայրերէ ներս:

18.- Յիսուս կը յիշեցնէ մեզի որ ժամանակներու աւարտին «սուտ ֆրիստոսներ եւ սուտ մարգարէներ պիտի ելլեն եւ մեծ հրաշքներ ու նշաններ կատարեն՝ որպէսզի մոլորեցնեն եթէ կարենան, նոյնիսկ Աստուծոյ ընտրեալները» (Մտ 24.5: Մր 13.6): Յայտնութեան գիրքը կը խօսի գազանի մը մասին «որ երկրէն կ'ելլէր» (13.11): Զարեհ Արք. Ազնաւորեան խօսելով այս գազանին մասին կ'ըսէ. «Այս գազանը աշխարհէն է, մարդկային ծագում ունի, եւ խորհրդանիշ է կրօնական իշխանութեան մը, որ աշխարհի իշխանութեանց կը ծառայէ, եւ որ աւելի ուշ «սուտ մարգարէն» կը կոչուի (Յյտ 16.13, 19.20, 20.10)»:

Ո՛չ միայն աւետարաններուն մէջ, այլ Յայտնութեան գիրքին մէջ եւս մեր Տէրը կու գայ յիշեցնելու մեզի որ ժամանակներու աւարտին յայտնուելիք սուտ մարգարէն (որ կը կոչուի երկրորդ գազան) բազմաթիւ հրաշքներ պիտի գործէ, եւ երկրի բոլոր բնակիչները պիտի մոլորեցնէ առաջին գազանին (որ Նեոն է) դիմաց (13.13-14): Պօղոս առաքել նաեւ կը խօսի այն Անօրէնին (որ սուտ մարգարէն է) մասին, «որ Սատանային ներգործութեամբ պիտի գայ, ամենայն զօրութեամբ կեղծ հրաշքներ եւ սքանչելիքներ պիտի կատարէ» (Բ.Քս 2.9):

Անցեալին միշտ եղած են սուտ ֆրիստոսներ ու սուտ մարգարէներ, ինչպէս օրինակ, Խրուշչեւ կոչուած այն անձը որ ինքզինք ներկայացուց Ռուսիոյ ֆրիստոսը իբրեւ:

Կամ Մաօ-Չէ-Մունկ անունը կրող այն մարդը որ ինքզինք յայտարարեց «Աստուծոյ կողմէ դրկուած փրկիչը» եւ բազմամիլիոն Զինացիներու կողմէ ընդունուեցաւ «մեսիա» իբրեւ:

134 թուականին, հրեաներ հաւաքուեցան Բարկոքբա անունով հրեայի մը շուրջ եւ անոր գլխաւորութեամբ ապստամբեցան Հոռմի դէմ եւ հրեայ կրօնաւորներ Բարկոքբան յայտարարեցին թէ Բարկոքբան ինքն է հրեայ ժողովուրդին ակնկալած մեսիան:

«Սուտ ֆրիստոսներու» եւ «սուտ մարգարէներու» յայտնութիւնը միայն անցեալին պատկանող իրականութիւն մը չէ: Այսօր, ամբողջ Եւրոպայի մէջ, բայց յատկապէս Ամերիկայի մէջ, կը վիտան սուտ ֆրիստոսները՝ որոնք նախակարապետներն են Նեոին, եւ կը վիտան սուտ մարգարէները՝ որոնք նախակարապետներն են այն սուտ մարգարէին որ պիտի յայտնուի ժամանակներու աւարտին եւ գորս Յայտնութեան 13.13-ին մէջ կը կոչուի «երկրորդ գազան», եւ որուն

պարտականութիւնը պիտի ըլլայ մարդիկը «առաջին գագանին», այսինքն՝ Նեոի երկրպագութեան առաջնորդել (Յտ 13.13-14):

Ժամանակակից շատ մը «սուտ ֆրիստոսներու» եւ «սուտ մարգարէներու» անուններ թուած եւ անոնց մասին խօսած էի այս էջերուն մէջ, բայց յետոյ մտածեցի որ անոնց անուններուն ներկայութիւնը առակներու մեկնութեան այս հատորին մէջ սրբապղծութիւն է, եւ ուստի բոլորը վերցուցի:

Ժամանակակից «սուտ ֆրիստոսներու» եւ «սուտ մարգարէներու» մասին յստակ պատկերացում ունենալու համար, կը բաւէ որ կարդաք Աստուածաշունչի մասնագէտ՝ Hank Hanegraaff-ի «Christianity In Crisis 21st Century» գիրքը:

19.- Գիտութեան հսկայ յառաջխաղացքը եւ մարդոց դէպի գիտութիւն ու գիտականութիւն վազքը եւ հեռացումը պարզէն ու պարզութենէն, ինքնին ապացոյց մըն է Տիրոջ մօտալուստ գալստեան:

20.- Կլիմայի փոփոխութիւնը, օդին ապականութիւնը, հիւանդութեան տեսակներուն առատացումը եւ այլ երեւոյթներ, կու գան յիշեցնելու որ Տիրոջ գալստեան ժամանակը մօտեցած է:

«Վստահ եղէք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին»:

«Այս սերունդը» բացատրութեամբ, Յիսուս նախ կ'ակնարկէ հրեաներուն: Հետեւաբար, Յիսուս ըսել կ'ուզէ, որ մինչեւ իր երկրորդ գալուստը, հրեաներ պիտի շարունակեն մնալ իրենց ըմբոստ եւ անհաւատ ընթացքին մէջ: Ուրեմն, «այս սերունդը չանցած», կը նշանակէ՝ այս սերունդին անհաւատութիւնը չանցած, իրենց անհաւատութենէն չհրաժարած՝ Յիսուս պիտի գայ:

Այստեղ կ'արժէ անդրադառնալ հետեւեալ կէտին: Պօղոս առաքեալ Հռոմայեցիներուն 11-րդ գլխուն մէջ բազմաթիւ անգամներ, ուղղակի եւ անուղղակի կերպով, կը հաստատէ թէ ժամանակներու աւարտին՝ Տիրոջ երկրորդ գալուստէն առաջ, հրեաները դարձի պիտի գան: Սովորաբար մեկնիչներ առաքեալին այս խօսքը բառացիօրէն չեն հասկնար: Անոնք կ'ըսեն, թէ երբ Պօղոս առաքեալ կ'ըսէ թէ (բոլոր) հրեաները դարձի պիտի գան, պարզապէս կ'ակնարկէ պատմութեան ընթացքին զանգուածաբար դարձի եկած, եկող եւ գալիք հրեաներուն:

Երկրորդ, «այս սերունդը» բացատրութեամբ, Յիսուս կ'ակնարկէ ընդհանրապէս նաեւ բոլոր անհաւատներուն: Ան ըսել կ'ուզէ թէ մինչեւ իր գալուստը, շատ մարդիկ պիտի շարունակեն մնալ իրենց անհաւատ ընթացքին մէջ:

Որոշ մեկնիչներ, «այս սերունդը» խօսքը ակնարկութիւն կը նկատեն հաւատացեալներուն: Ըստ այս մեկնութեան, ժամանակներու աւարտին, նոյնիսկ ամենէն վատ օրերուն հաւատացեալներ պիտի ըլլան երկրի վրայ ապրող, եւ հաւատացեալներուն թիւը չսպառած՝ Տիրոջ գալուստը տեղի պիտի ունենայ: Երրորդ այս մեկնութիւնը հաւանական չի թուիր:

«Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան»: Բանի մը հպանցիկ նշումներ.–

1.– Տուեալ գօրեղ հաստատումով Յիսուս կ'ուզէ վստահութիւն ներշնչել մեզի թէ պիտի պատահի՛նք իր բոլոր ըսածները, եւ պիտի պատահի մանաւանդ իր երկրորդ գալուստը:

2.– Երբ Յիսուս կը յայտարարէ թէ «նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան», ցոյց տուած կ'ըլլայ մեզի թէ իր խօսքը աւելի գորաւոր է քան երկինքն ու երկիրը: Հոսկէ կը սորվինք կարեւոր բան մը: Մեր յոյսը պէտք է ղենենք այս աշխարհին վրայ, որովհետեւ անցողական է այս աշխարհը: Երկինքն ալ անցողական է, որովհետեւ Պետրոս առաքեալ յստակօրէն կը հաստատէ թէ «երկինքը մեծ շառաչիւնով պիտի չքանայ, երկնային մարմինները պիտի վառին ու հալին» (Ա.Պտ 3.10): Անցողական բաներուն կապուած մարդը՝ ինքն ալ անոնց հետ պիտի անցնի: Բայց ահաւասիկ Յիսուս կը խօսի բանի մը մասին որ չ'անցնիր, եւ այդ բանը իր խօսքն է՝ «խօսքերս պիտի չանհետանան»: Հետեւաբար, հաւատանք իր խօսքերուն եւ անոնց կապուինք, որովհետեւ անոնք յաւիտեանական են: Հաւատանք իր տուած բոլոր խոստումներուն, որովհետեւ անոնք պիտի կատարուին: Մարդիկ կրնան խոստմնադրուի ըլլալ, բայց Աստուած խոստմնադրուի չ'ըլլար: Մարդիկ կրնան բան մը ըսել բայց չկարենան իրենց ըսածը կատարել, բայց Յիսուս իր բերնով ըսածը՝ իր ձեռքովը կրնայ ընել. յիշեցէ՛ք Աստուծոյ հզօր խօսքը. «Իմ խորհուրդս պիտի հաստատուի եւ իմ ամէն կամքս պիտի կատարուի...: Ե՛ս խօսեցայ ու ե՛ս պիտի կատարեմ: Ե՛ս խորհեցայ ու ե՛ս պիտի գործադրեմ» (Ես 46.10–11):

3.– «Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան»: Այս խօսքը նաեւ կը յիշեցնէ մեզի Տիրոջ խոստումը, այն՝ որ պիտի անհետանան ներկայ երկինքն ու երկիրը, որովհետեւ Աստուած իր գաւակներուն խոստացած է նոր երկինք մը եւ նոր երկիր մը «ուր արդարութիւնը պիտի իշխէ» (Բ.Պտ 3.10–13: Ես 65.17: Յյտ 21.1):

4.– Աստուած երկինքն ու երկիրը իր խօսքով ստեղծեց, ուստի չի կրնար իր խօսքը անհետանալ եւ երկինքն ու երկիրը իրենց տեղը մնան:

ՈՉ ՈՔ ԳԻՏԷ ՕՐԸ ԿԱՄ ԺԱՄԸ

«Զգո՛յշ եղէ՛ք, արթուն մնացէ՛ք եւ աղօթեցէ՛ք, որովհետեւ չէ՛ք գիտեր թէ ժամանակը ե՛րբ է: Անհկա կը նմանի այն մարդուն, որ իր տունը կը ձգէ եւ ուրիշ երկիր կ'երթայ: Զգացած՝ իր ծառաներէն իւրաքանչիւրին պարտականութիւն կու տայ եւ դոնապանին ալ կը պատուիրէ որ արթուն մնայ: Ուրեմն, դու՛ք ալ արթուն մնացէ՛ք, որովհետեւ չէ՛ք գիտեր թէ տանտէրը գիշերուան ո՛ր պահուն կու գայ, երեկոյեա՞ն, կէս-գիշերի՞ն, հաւախօսի՞ն թէ առաւօտուն: Որպէսզի չըլլայ որ յանկարծ գայ եւ ձեզ քնացած գտնէ: Արդ, ինչ որ ձեզի կ'ըսեմ, բոլորին կ'ըսեմ.– "Արթո՛ւն կեցէ՛ք"» (Մր 13.33–37):

«Զգո՛յշ եղէ՛ք, արթուն մնացէ՛ք եւ աղօթեցէ՛ք, որովհետեւ չէ՛ք գիտեր թէ ժամանակը ե՛րբ է» (Մր 13.33): Քանի մը հակիրճ մատնանշումներ.–

1.– «Զգո՛յշ եղէ՛ք»: Այս բառերով, կանխագէտ Աստուածը՝ Յիսուս, մեզ կը հրաւիրէ զգուշութեան: Յիսուս սկիզբէն գիտէր եւ ուզեց որ մենք եւս գիտնանք, որ ժամանակներու աւարտին, իր երկրորդ գալուստէն առաջ, սուտ ֆրիստոսներ ու մարգարէներ պիտի յայտնուին, սուտ վարդապետներ ու վարդապետութիւններ յառաջ պիտի գան, ուստի, հաւատացեալ մարդը զգո՛յշ պէտք է ըլլայ, արթո՛ւն պէտք է ըլլայ, որպէսզի չիյնայ Զարին թակարդին մէջ:

2.– «Արթուն մնացէ՛ք»: Հաւատացեալ մարդը հոգեւորապէս պէտք է միշտ արթուն ըլլայ, այլ խօսքով՝ պէտք է կարող ըլլայ կարդալու ժամանակները, եւ զանազանելու իրարմէ Զարին գործն ու Բարիին գործը: Կեղծ ֆրիստոնեաներ ամենայն դիւրութեամբ կրնան անկեղծ ձեւանալ եւ խաբել մեզ, ուստի պէտք է արթուն ըլլալ: Յիշեցէ՛ք որ Յիսուս խօսեցաւ որումի եւ ցորենի մասին. մենք գիտենք որ որումն ու ցորենը երբ տակաւին չեն մեծցած՝ իրարու կը նմանին. զանոնք կը սկսինք իրարմէ զանազանել միայն այն ատեն երբ ցորենի հասկը սկսի լեցուիլ. ի՞նչ է այստեղ Քրիստոսի ուսուցածը: Տէրը կ'ուզէ ցոյց տալ մեզի, որ մենք միշտ ալ շրջապատուած պիտի ըլլանք որումանման մարդոցմով՝ որոնք ընդօրինակած պիտի ըլլան ցորենանման մարդոց ինքնութիւնը, նպատակ ունենալով խաբել ու կործանել մեզ: Մտաբերեցէ՛ք որ Պօղոս առաքեալ հաստատելէ ետք որ Սատանան կրնայ լուսաւոր հրեշտակի կերպարանքով ներկայանալ, անմիջապէս կ'աւելցնէ. «Անոր

(Սատանային) ծառայողները իրենք ալ արդարութեան ծառաներու կերպարանքով կը ներկայանան» (Բ.Կր 11.14-15):

3.- «Եւ աղօթեցէք»: Յիսուս խօսելէ ետք զգոյշ ըլլալու մասին, արթուն ըլլալու մասին, հիմա կը խօսի աղօթելու մասին: Մարդկային զգուշաւորութիւնն ու արթնութիւնը ոչինչով օգտակար կը դառնան մեզի եթէ աղօթող հաւատացեալներ չենք: Երբ Յիսուս կը խօսի արթուն ըլլալու մասին՝ խօսքը բնականօրէն սրտի ու հոգիի արթնութեան մասին է: Աղօթքն է որ մեր սիրտն ու հոգին արթուն կը պահէ եւ թոյլ չի տար որ անոնք իյնան մեղքի ու մոլորութեան մէջ: Միաժամանակ աղօթքն է որ մեր սիրտն ու հոգին արթուն ու բաց կը պահէ Աստուծոյ ձայնին, կոչին ու կանչին, եւ մանաւանդ՝ Սուրբ Հոգիի հոժիւններուն:

4.- «Որովհետեւ չէք գիտեր թէ ժամանակը ե՛րբ է»: Ինչո՞ւ Յիսուս չյայտնեց իր գալստեան ժամանակը: Երկրորդ գալուստի ժամանակին չբացայայտուիլը՝ պատճառ մըն է որ հաւատացեալներ մնայուն կերպով արթուն վիճակի մէջ ըլլան: Եթէ Յիսուս իր գալստեան ժամանակը յայտնէր՝ անկասկած որ անհրաժեշտ եղած արթնութիւնը պիտի չցուցաբերէինք: Ոմանք պիտի մտածէին ըսելով. «Տակաւին շատ ժամանակ կայ, հիմա այս կամ այդ գործը ընեմ, յետո՛յ Տիրոջ կը յանձնուիմ»: Բայց որովհետեւ չենք գիտեր գալստեան ժամանակը՝ ատկա պատճառ կ'ըլլայ որ մնայուն աղօթական կեանք մը ապրինք:

5.- Տակաւին, Յիսուս իր գալստեան ժամանակը չյայտնեց, որովհետեւ ան շատ լաւ գիտէ որ իր գալստեան ժամանակը անգիտանալը՝ մեզ պիտի մղէ զգոյշ ու արթուն ըլլալու: Մեզմէ ո՞վ չի գիտեր որ յաճախ տգիտութիւնն է որ մեզ կը մղէ զգոյշ ըլլալու: Օրինակ, կը նախընտրենք զգուշանալ դպնալու բանի մը որ անձանօթ կը թուի մեզի: Կամ, կը զգուշանանք վարելու այնպիսի ինքնաշարժ մը որ չենք վարած նախապէս: Կամ, չենք ուզեր քալել նամբայէ մը որ ծանօթ չէ մեզի: Եւ այլն: Հետեւաբար, Տիրոջ գալստեան ժամանակը չգիտնալը՝ մեզ մնայուն զգուշութեան մէջ կը պահէ:

6.- Եւ դեռ, Յիսուս չյայտնեց իր գալստեան ժամանակը, որպէսզի միշտ իր գալստեան յոյսով եւ ակնկալութեամբ ապրինք, եւ մեր հայեացքները միշտ սեւեռած պահենք երկինքին: Զմոռնանք նաեւ որ երբ մնայուն կերպով կ'ապրինք Տիրոջ յայտնութեան յոյսով՝ երբ Տէրը յայտնուի՝ անակնկալի չենք գար: Յիշեցէք որ Պօղոս առաքեալ խօսքը Թեսաղոնիկէի հաւատացեալներուն ուղղելով կ'ըսէ. «Դուք, եղբայրներ, իսլաւարին մէջ չէք, որ Տիրոջ Օրը գողին պէս ձեզ անակնկալի բերէ» (Ա.Թս 5.4):

7.- «Ձե՛ք գիտեք թե՛ ժամանակը ե՛րբ է»: Վերջապէս, մեր ուշադրութեանն պէտք է լինի որ այս բառերը կը պարզեն որ Տիրոջ գալստեան ժամանակը նշողուած է, բայց մենք է որ կ'անգիտանանք զայն: Ամբակում մարգարէին գիրքին մէջ ունինք համար մը որ ցոյց կու տայ որ Տիրոջ յայտնութեան ժամանակը արդէն նշողուած ու որոշուած է: Երբ Ամբակում մարգարէն հարցումով մը Աստուծոյ կը դիմէ, Աստուած կը պատասխանէ անոր՝ ըսելով. «Տեսիլք որոշուած ժամանակի համար է, բայց դէպի վախճանը կ'արտորայ եւ սուտ պիտի չելլէ. եթէ ուշանայ՝ անոր սպասէ, քանզի անշուշտ պիտի գայ, ետ պիտի չմնայ» (Ամբ 2.3): Խօսքը Տիրոջ երկրորդ գալուստին մասին է: Այս խօսքին մէջ տեղ գտած «որոշուած» բառը, կը պարզէ որ որ Տիրոջ երկրորդ գալստեան ժամանակը արդէն «որոշուած» է եւ ոչ թէ պիտի՛ որոշուի:

«Անիկա կը նմանի այն մարդուն, որ իր տունը կը ձգէ եւ ուրիշ երկիր կ'երթայ: Զգացած՝ իր ծառաներէն իւրաքանչիւրին պարտականութիւն կու տայ եւ դռնապանին ալ կը պատուիրէ որ արթուն մնայ» (Մր 13.34): Քանի մը հակիրճ մատնանշումներ..-

1.- «Անիկա կը նմանի այն մարդուն...»: Ինչո՞ւ այստեղ Քրիստոս ինքզինք կը կոչէ «մարդ»: Զմոռնանք որ տուեալ ամբողջ հատուածը կը խօսի աշխարհէն իր մեկնումին մասին, եւ դէպի աշխարհ իր վերադարձին մասին: Յիշեմք որ Ղուկաս յատկօրէն ակնարկութիւն կ'ընէ Յիսուսի մարմնապէս այս աշխարհէն մեկնելուն եւ դէպի երկինք համբառնալուն մասին, եւ միաժամանակ կը հաստատէ թէ Յիսուս աշխարհ պիտի վերադառնայ միշտ այնպէս՝ ինչպէս մեկնեցաւ (Գրծ 1.9-11), այլ խօսքով, մարմինով համբարձաւ եւ մարմինով պիտի վերադառնայ: Հետեւաբար, Քրիստոս այստեղ ինքզինք կը կոչէ «մարդ», ցոյց տալու համար թէ ինք իբրեւ մարդ մեկնեցաւ, եւ երբ երկրորդ անգամ յայտնուի, որքան ալ իր աստուածային փառքը մեծ ու փառաւոր ըլլայ, իր մարդկային մարմինը աներեւոյթ պիտի չմնայ: Յիշեցէ՛ք որ տարբեր առիթներով եւս երբ Յիսուս խօսեցաւ այս աշխարհէն մեկնելուն մասին՝ ինքզինք կոչեց «մարդ» (Մտ 25.14), կամ՝ «ազնուական մարդ» (Ղկ 19.12):

2.- «Որ իր տունը կը ձգէ...»: Ի՞նչ պէտք է հասկնալ «իր տունը» ըսելով: Ոմանք «տուն»ը ակնարկութիւն կը նկատեն եկեղեցիին, այլ խօսքով՝ հաւատացեալներուն: Ուրիշներ զայն ակնարկութիւն կը նկատեն ամբողջ աշխարհին, եւ ասիկա աւելի հաւանական է, որովհետեւ, չմոռնանք որ Աստուծոյ վերջնական նպատակն ու ծրագիրը ուրիշ բան չէ եթէ ոչ համայն աշխարհը եւ համայն տիեզերքը վերածել իր

թագաւորութեան, որ պիտի ըլլայ իր սեփական «տուն»ը, եւ ինք՝ Տանտէրը:

Յթէ բնագիրը «տուն» բառին փոխարէն գործածէր «տնեցիներ» բառը, այն ատեն պիտի կարենայինք ըսել որ ակնարկութիւնը հաւատացեալներուն է, բայց «տուն»ը չի կրնար ակնարկութիւն ըլլալ հաւատացեալներու բազմութեան, որովհետեւ «տուն» ըսելով մենք բնակարանը կը հասկնանք եւ ո՛չ թէ բնակիչները:

3.- «Եւ ուրիշ երկիր կ'երթայ»: Ո՞ւր է այն երկիրը ուր Յիսուս մեկնեցաւ մարմնապէս: Անիկա երկինքն է: Իսկ ինչո՞ւ երկինքը «երկիր» կը կոչուի: Այս մասին խօսեցանք երբ բացատրեցինք Մտ 19.12-ը: Հոս, պարզապէս կ'ուզեմ ըսել, որ Յիսուս երկինքը «երկիր» կը կոչէ, ցոյց տալու համար որ իր գալուստով, երկինք ու երկիր մէկ ամբողջութիւն պիտի ըլլան եւ մէկ թագաւորութեան պիտի վերածուին: Աստուծոյ յաւիտեանական թագաւորութիւնը պիտի ընդգրկէ երկինք ու երկիր, համայն տիեզերքը, եւ չմոռնանք որ Աստուածաշունչը բազմաթիւ անգամներ կը խօսի Քրիստոսի երկրորդ գալուստով գոյութեան գալիք նոր երկինքի ու երկրի մասին (Բ.Պտ 3.13: Ես 65.17, 66.22: Յյտ 21.1):

4.- «Չգացած՝ իր ծառաներէն իւրաքանչիւրին պարտականութիւն կու տայ»: Իւրաքանչիւր հետեւորդ Քրիստոսի՝ ծառայ մըն է Քրիստոսի, եւ կատարելիք պարտականութիւն ունի Քրիստոսի «տունը» ըլլալու կոչուած այս աշխարհին մէջ: Ինչ գործ որ Աստուած յանձնած է մեզի կատարելու՝ անկասկած որ այդ գործը կատարելու զօրութիւն ու կարողութիւն ալ տուած է: Աստուած պարտականութիւն չի յանձներ մեզի՝ առանց այդ պարտականութիւնը կատարելու զօրութիւն շնորհելու եւ առիթներ ստեղծելու: Աստուած գործին հետ միասին, գործակիցներ ու օգնականներ նաեւ կու տայ մեզի:

5.- «Եւ դո՞նապանին ալ կը պատուիրէ որ արթուն մնայ»: Ո՞վ է կամ որո՞նք են դո՞նապանները: Բարսեղ Մաշկեւորցի Վրդ. կը հաստատէ թէ անոնք քահանաները, վարդապետները եւ եպիսկոպոսներն են: Ինչո՞ւ Յիսուս զանոնք «դո՞նապան» կը կոչէ:

«Դո՞նապան» բացատրութեամբ, Յիսուս նախ կ'ուզէ ցոյց տալ որ հոգեւորական դասը իշխանութեան եւ հեղինակութեան տէր մարդիկ են, բայց մանաւանդ, կ'ուզէ ցոյց տալ որ անոնք պարտականութիւնն ու պարտաւորութիւնը ունին հսկելու հօտի փրկութեան եւ ապահովութեան համար: Երբ գայլը պիտի յարձակի ոչխարներուն վրայ՝ փարախին դռնէն է որ փարախ կը մտնէ. դո՞նապանին պարտականութիւնն է փարախին դուռը գոց պահել որպէսզի ոչխարները հեռու մնան վտանգէն. ըսել ուզուածը այն է, որ դո՞նապանները, այլ խօսքով՝

իշխանութեան տէր մարդիկ (հոգեւոր հովիւներ, առաջնորդներ, կղերականներ) պարտին պաշտպանել իրենց հօտին անդամները, իրենց ժողովուրդին գաւակները, ընդդէմ սխալ վարդապետութեանց եւ տեսակ-տեսակ մոլորութեանց:

Իսկ ի՞նչպէս պէտք է պաշտպանել մեր բանաւոր հօտը: Առաջին՝ աղօթքով: Հոգեւոր հովիւը իր հօտին համար աղօթող մարդ պէտք է ըլլայ: Այն եկեղեցին որուն հովիւը աղօթող մարդ չէ՝ անոր անդամները հոգեւորապէս չեն անիր եւ անպաշտպան են Չարին յարձակումներուն դիմաց (բացի հարկաւ եթէ անդամները իրենք աղօթող են): Երկրորդ՝ Աստուածաշնչական ճշմարտութիւններով գինելով հօտի անդամները: Մեզմէ ո՛վ չի գիտեր որ աշխարհի մէջ միշտ եղած է, եւ այսօր ամէն ժամանակէ աւելի կողմ-կողմի կան որոմն ու ցորենը, այլ խօսքով՝ սուտն ու ճշմարիտը: Այդ սուտին ու կեղծիքին դիմաց, հոգեւոր հովիւը պարտի գինել իր հաւատացեալները, եւ գինելու համար, բաւարար չէ քարոզը, այլ պէտք է դասախօսութիւններ եւ համագումարներ կազմակերպել, որոնց ընթացքին յստակօրէն եւ մանրամասնօրէն բացատրուի մեր ժողովուրդի գաւակներուն՝ մեր եկեղեցւոյ տեսակէտներն ու հաւատալիքները, միշտ ու միայն Աստուածաշունչի պրիսմակէն դիտուած:

«Ուրեմն, դուք ալ արթուն մնացէք, որովհետեւ չէք գիտեր թէ տանտէրը գիշերուան ո՛ր պահուն կու գայ, երեկոյեա՞ն, կէս-գիշերի՞ն, հաւախօսի՞ն թէ առաւօտուն» (Մր 13.35): Քանի մը հակիրճ մատնանշումներ.--

1.- Յիսուս կոչ կ'ուղղէ իր ծառաներուն արթուն մնալու: Յստակ է որ խօսքը հոգեւորապէս արթուն մնալու մասին է: Որո՞նք են հոգեւորապէս արթունները: Անոնք են՝ որոնք յանձնուած են Քրիստոսի եւ Սուրբ Հոգիով արթնութիւն ապրած են: Անոնք են՝ որոնք աղօթող հոգի ու սիրտ ունին: Անոնք են՝ որոնք իրենց ուշադրութիւնը դէպի երկինք դարձուցած են եւ հոնկէ կը սպասեն Փրկիչին վերադարձին:

2.- «Որովհետեւ չէք գիտեր թէ տանտէրը գիշերուան ո՛ր պահուն կու գայ»: «Տանտէր» բառը կը պարզէ որ երբ Յիսուս աշխարհ վերադառնայ, պիտի վերադառնայ իբրեւ տէր ու տանտէր, իբրեւ իշխան ու իշխող, իբրեւ թագաւոր ու թագաւորող: Ան պիտի վերադառնայ ամէն ինչ իր իշխանութեան ներքեւ առնելու համար: «Տանտէր» բառը նաեւ ցոյց կու տայ որ Յիսուս ի՛նք պիտի ըլլայ պաշտամունքի ու փառաբանութեան հիմնական առարկան Աստուծոյ թագաւորութեան մէջ: Բնականօրէն Սուրբ Երրորդութիւնը մէկ աստուածութիւն է եւ այդ մէկ աստուածութիւնն է որ պիտի պաշտուի ու երկրպագուի

արժայութեան մէջ, բայց տիրական ներկայութիւնը Որդին ի՛նքն պիտի ըլլայ: Կրնանք ըսել, որ Աստուծոյ թագաւորութիւնը Սուրբ Երրորդութեան թագաւորութիւնը պիտի ըլլայ, բայց եւ այնպէս Քրիստոսակեդրոն թագաւորութիւն մը պիտի ըլլայ:

3.- «Զէք գիտեր թէ տանտէրը գիշերուան ո՛ր պահուն կու գայ, երեկոյեա՞ն, կէս-գիշերի՞ն, հաւախօսի՞ն թէ առաւօտուն»: Այստեղ մեր ունեցածը «գիշեր»ը հաշուելու Հոռմէական կերպն է: Նոր Կտակարանին մէջ ժամերը հաշուելու երկու կերպեր յիշուած են՝ Երբայական կերպը եւ Հոռմէական կերպը:

Զարեհ Արք. Ազնաւորեան կ'ըսէ. «Երբայեցիներուն «Գիշեր»ը կը սկսէր երեկոյեան ժամը 6-ին եւ կ'երկարէր մինչեւ առաւօտեան ժամը 6-ը, իսկ «Ցերեկ»ը կը սկսէր առաւօտեան ժամը 6-ին եւ կ'երկարէր մինչեւ երեկոյեան ժամը 6: Բայց ցերեկուան ու գիշերուան ժամերը տարբեր ձեւերով կը հաշուէին: Ցերեկի ժամերը կը հաշուէին առանձին-առանձին. ուստի «առաջին ժամ»ը կ'ըլլար առաւօտեան ժամը 7, «երրորդ ժամ»ը՝ առաւօտեան ժամը 9-ը, «վեցերորդ ժամ»ը՝ կէսօրը, «իններորդ ժամ»ը՝ կէսօրէ ետք ժամը 3-ը, եւլն: Միւս կողմէ, Գիշերը բաժնուած էր երեք «պահ»երու.- Առաջին պահը՝ երեկոյեան ժամը 6-10, Երկրորդ պահը՝ ժամը 10-2, իսկ Երրորդ պահը՝ գիշերուան ժամը 2-6: ՆԿ-ին մէջ ունինք նաեւ գիշերը հաշուելու Հոռմէական կերպը, որ գիշերը կը բաժնէր 4 պահերու.- «Իրիկուն», երեկոյեան 6-9, «Կէս Գիշեր», գիշերուան 9-12, «Հաւախօս», գիշերուան 12-3, եւ «Առաւօտ», առտուն 3-6 (Մր 13.35)»:

Թէ ինչո՛ւ Մարկոս Աւետարանիչ գիշերուան ժամերը հաշուելու համար՝ կ'որոշեցրէ Հոռմէական կերպը, վստահաբար անոր համար որ ան իր Աւետարանը առաջին հերթին ուղղած է Հոռմի հաւատացեալներուն եւ Հոռմի շուրջ գտնուող եկեղեցիներուն:

Իսկ թէ ինչո՛ւ Յիսուս իր գալստեան մասին խօսած ժամանակ, ցերեկուան ժամերը յիշելու փոխարէն, գիշերուան ժամերը կը յիշէ, վստահաբար մեզի ցոյց տալու համար, թէ իր գալստեան ժամանակը անակնկալ կերպով եւ չսպասուած մէկ պահուն տեղի պիտի ունենայ: Թ՛գեմնիի օրինակին մասին խօսած ժամանակ ըսինք, որ Յիսուս այդ օրինակը տուաւ ցոյց տալու համար որ իր գալուստը անակնկալ կերպով տեղի պիտի չունենայ: Արդ, հակասութի՞ւն կայ մեր ըսածին մէջ: Տիրոջ գալուստը անակնկալ կերպով տեղի պիտի ունենայ, թէ՛ այնպիսի ժամու մը երբ ամէն մարդ կ'ակնկալէ: Խորքին մէջ, երկու բացատրութիւններն ալ շիտակ են: Տիրոջ գալուստը անակնկալ կերպով տեղի պիտի չունենայ, այն իմաստով որ «արեւուն, լուսինին, եւ աստղերուն հետ

կապ ունեցող նշաններ պիտի պատահին» (Ղկ 21.25), եւ «Մարդու Որդիին նշանը (խաչը) պիտի երեւի երկինքի մէջ» (Մտ 24.30), եւ բնականօրէն մենք պիտի տեսնենք այդ բոլորը եւ պիտի գիտնանք որ Տիրոջ գալուստը մօտ է, բայց միւս կողմէ այդ գալուստը անակնկալ կը սեպուի, որովհետեւ, նախ չենք գիտեր թէ ե՛րբ «արեւուն, լուսինին, եւ աստղերուն հետ կապ ունեցող նշաններ պիտի պատահին», եւ ե՛րբ «Մարդու Որդիին նշանը (խաչը) պիտի երեւի երկինքի մէջ», եւ երկրորդ, չենք գիտեր նաեւ թէ երկնային մարմիններուն հետ կապ ունեցող նշաններուն պատահումէն եւ Տիրոջ խաչին երեւումէն քանի՞ օր ետք կամ քանի՞ ժամ ետք տեղի պիտի ունենայ Տիրոջ գալուստը:

4.- Որոշ մեկնիչներ «երեկոյ», «կէս-գիշեր», «հաւախօս», «առաւօտ» բացատրութեանց մէջ կը տեսնեն մարդուն կեանքին հիմնական չորս մասերը՝ պատանութիւն, երիտասարդութիւն, չափահասութիւն եւ ծերութիւն: Եթէ ընդունինք այս բացատրութիւնը, Յիսուսի ըսել ուզածը եղած կ'ըլլայ այն՝ որ ինք կրնայ ոեւէ ատեն գալ, մեր պատանութեան տարիներուն, կամ մեր երիտասարդութեան ժամանակ, կամ չափահասութեան ատեն եւ կամ ծերութեան ժամանակ, այլ խօսքով, միշտ պատրաստ պէտք է ըլլալ, որովհետեւ ոեւէ ատեն Տէրը կրնայ յայտնուիլ:

«Որպէսզի չըլլայ որ յանկարծ գայ եւ ձեզ քնացած գտնէ» (Մր 13.36): Քանի մը հակիրճ մատնանշումներ.--

1.- Որո՞նք են քնացածները: Այստեղ «քնացած» ըսելով, կ'ակնարկուի հոգեւոր արթնութիւն չապրած մարդոց, այլ խօսքով՝ մեղքի կեանք ապրող մարդոց: Մեղքի կեանք ապրող մարդը՝ քնացած, մեռած ու կորսուած կը նկատուին (Ղկ 15.24):

Ինչպէս գողը մարդուն արթուն եղած ատենը չէ որ անոր տունը կը մտնէ, այլ անոր քնացած ժամանակ, կամ տուն չեղած ժամանակ, այնպէս ալ, մեղքը կը յարձակի մեր վրայ եւ կը զգեսնէ ու կը կողոպտէ մեզ, եթէ երբեք հոգեւորապէս քնացած ըլլանք:

Ինչպէս քնացած մարդը պէտք է արթննայ, լուացուի եւ պատառ մը ուտէ որպէսզի կարենայ գործի երթալ, այնպէս ալ, մեղքի անկողինին մէջ քնացած մարդը, պէտք է արթննայ եւ դուրս գայ մեղքի անկողինէն, լուացուի Տէր Յիսուսի արիւնով եւ լեցուի Սուրբ Հոգիով՝ որպէսզի կարենայ գործի լծուիլ Քրիստոսի այգիին մէջ:

Սիրելի՛ ընթերցող, եթէ մեղքի կեանքը սիրող անապաշխար մեղաւոր մըն ես, որքան ալ դուն քնացած արթուն ու քնարակ մէկը կարծես, լաւ գիտցիր որ Աստուածաշունչին ու Աստուծոյ հայեացքով դուն քնացած մէկն ես, եւ արթուն չես համարուիր մինչեւ որ անձնապէս

Յիսուսի գաս եւ զինք ընդունիս սրտիդ մէջ իբրեւ Տէրդ, Թագաւորդ, Փրկիչդ ու Աստուածդ:

Աշխարհի մարդիկ իրենք գիրենք արթուն, ցարպիկ, ցարտար եւ իմաստուն կը կարծեն: Սատանան ի՛նքն է որ այդպէս մտածեցնել կու տայ իրենց: Կան այնպիսի աշխարհասէր մարդիկ, որոնք երբ կը մտածեն հոգեւոր կեանք ապրող մարդոց մասին՝ կը յոխորտան ըսելով. «Աստուծոյ կեանքին համը չեն առած, աստուծոյ կեանքին արժէքը չեն գիտեր, կեանքը վայելել չեն գիտեր»: Այդպէս մտածողներուն կ'ըսեմ. «Լուրջ հոգեւորները իրենք են որ իսկական կեանքը կը վայելեն, որովհետեւ իսկական կեանքը Քրիստոս ի՛նքն է. իրենք է որ կեանքին արժէքը գիտեն, որովհետեւ կեանք մը որ չունի Քրիստոսը իր մէջ՝ այդ կեանքը արժէք չունի, իմաստ չունի. իրենք է որ կեանքին համը կ'առնեն, որովհետեւ Քրիստոս ի՛նքն է համը կեանքին, համովցնողը կեանքին»:

«Արդ, ինչ որ ձեզի կ'ըսեմ, բոլորին կ'ըսեմ.– "Արթուն կեցե՛ք"»
(Մր 13.37):

Մեր Տէրը իր խօսքը սկսաւ «արթուն մնացե՛ք» կոչով, եւ ահա խօսքը կ'աւարտէ նոյն կոչը ուղղելով. «Արթուն մնացե՛ք»:

Քրիստոս իր խօսքը առաջին հերթին կարծէք իր տասներկու աշակերտներուն ուղղեց, բայց յետոյ իր խօսքը ընդհանրացնելով, գայն ուղղեց բոլորին. «Ինչ որ ձեզի կ'ըսեմ, բոլորին կ'ըսեմ.– "Արթուն կեցե՛ք"»: Այո՛, Քրիստոս կը սպասէ եւ կ'ուզէ որ իր բոլոր հետեւորդները արթուն ըլլան, պատրաստ ըլլան, աղօթող ըլլան, իր գալուստը սպասող եւ ակնկալող ըլլան:

Սիրելի՛ եղբայր եւ քույր, արթուն ես դուն, պատրաստ ես Տիրոջ դիմաց կանգնելու եթէ երբեք ան այսօր կամ այս պահուս յայտնուի: Եթէ քեզի ըսուի որ հիւր պիտի գայ տունդ, անմիջապէս տունդ մաքրելու չե՞ս սկսիր: Անշուշտ: Իսկ հիմա որ Տէրը ինք քեզի կ'ըսէ թէ պիտի գայ եւ շուտով պիտի գայ, չե՞ս ուզեր մաքրել սիրտդ ու հոգիդ եւ չե՞ս ուզեր իբրեւ բնակարան պատրաստուիլ իրեն համար:

Գիտե՞ս թէ որքան մեծ պիտի ըլլայ այն ամօթը որ քեզ պիտի պատէ եթէ Տէրը յանկարծ յայտնուի եւ քեզ անպատրաստ վիճակի մէջ գտնէ: Ի՞նչ պիտի զգայիր եթէ քու երկրիդ նախագահը, կամ քու ուսուցիչդ, կամ ոեւէ անձ որուն հանդէպ ակնածանք ու սէր ունիս, դուռդ զարնէր եւ դուն դուռը բանայիր, եւ ան քեզ գիշերանցով գտնէր, մագերթ թափթփած, երեսդ չլուացուած: Ամօթի մէջ պիտի չմնայի՞ր: Միշտ այս տեսարանը յիշելով՝ գէշ պիտի չզգայի՞ր: Եթէ վատ պիտի զգայիր անպատրաստ վիճակի մէջ քու նմանիդ դիմաց երեւելով, որքա՛ն աւելի վատ պիտի զգաս երբ Տէրդ ու Աստուածդ յայտնուի եւ քեզ

անպատրաստ վիճակի մէջ գտնէ, մեղքի մագերդ երկնցած եւ անօրէնութեան փոշին երեսդ ծածկած:

Ենթադրէ պահ մը որ Յիսուսի գալուստը տեղի ունեցաւ նիշդ այն պահուն երբ դուն մեղք կը գործես: Օրինակ, ենթադրէ պահ մը որ բամբասանք, գողութիւն կամ շնութիւն ըրած ատենդ յանկարծ երկինքը փայլատակէ եւ Տէրը յայտնուի: Նման պարագայի, պիտի չնախընտրէի՞ր որ ժայռերը քեզ ծածկէին քան այդ վիճակովդ Տիրոջ դիմաց բերուէիր:

Հետեւաբար, հեռո՛ւ կեցիր մեղքէն եւ մօտեցի՛ր Աստուծոյ եւ Աստուած ինք քեզի պիտի մօտենայ (Յկ 4.8), արթո՛ւն կեցիր, զգո՛յշ եղիր, աղօթո՛ղ եղիր, հաւատքն ու սէրը սրտիդ մէջ հրաբուխի նման մշտարծա՛րծ պահէ, որպէսզի երբ հաւատքի Հիմնադիրն ու սիրոյ Աստուածը՝ Տէր Յիսուս Քրիստոսը յայտնուի, դուն ալ փառքով իրեն հետ միասին յայտնուիս, այնուհետեւ, յաւիտենապէս երկինքի փառքին մէջ մնալու համար: Ամէն:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

- 1.- Ներսէս Շնորհալի եւ Յովհաննէս Երզնկացի, «Մեկնութիւն Սուրբ Աւետարանին որ ըստ Մատթէոսի», Կոստանդնուպոլիս, 1825:
- 2.- Ստեփանոս Սիւնեցի, «Մեկնութիւն Զորից Աւետարանչաց», Էջմիածին, 1997:
- 3.- Իգնատիոս Վարդապետ, «Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Ղուկասու», Կոստանդնուպոլիս, 1824:
- 4.- Բարսեղ Շնորհալի Վարդապետ, «Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Մարկոսի», Կոստանդնուպոլիս, 1826:
- 5.- Գրիգոր Նարեկացի, «Նարեկ», Անթիլիաս, 2005:
- 6.- Զարեհ Արք. Ազնաւորեան, «Սերտողութիւն Մատթէոսի Աւետարանին», 1992-1993, անտիպ:
- 7.- Matthew Henry, «A Commentary on the Whole Bible», Vol. V. U.S.A.
- 8.- Աստուածաշունչի ժամանակակից մասնագէտ եւ Աւագ Քահանայ՝ Դադրոս Մալդի, («Մեկնութիւն Մատթէոսի Աւետարանին», Ընդհանրական Եկեղեցւոյ հայրերէն ֆաղուած բացատրութիւններ), Եգիպտոս, 1983:
- 9.- Աստուածաշունչի ժամանակակից մասնագէտ եւ Աւագ Քահանայ՝ Դադրոս Մալդի, («Մեկնութիւն Ղուկասու Աւետարանին», Ընդհանրական Եկեղեցւոյ հայրերէն ֆաղուած բացատրութիւններ), Եգիպտոս, 1985:
- 10.- Աստուածաշունչի ժամանակակից մասնագէտ եւ Աւագ Քահանայ՝ Դադրոս Մալդի, («Մեկնութիւն Մարկոսի Աւետարանին», Ընդհանրական Եկեղեցւոյ հայրերէն ֆաղուած բացատրութիւններ), Եգիպտոս, 1984:
- 11.- Kenneth E. Bailey, «Jesus Thought Middle Eastern Eyes» (Cultural Studies In The Gospels). IVP Academic, an imprint of Intervarsity Press, Downers Grove, Illinois, 2008.
- 12.- Paul Feghali et Antoine Aoukar, Nemetallah Khoury et Youssef Fakhry, «New Testament Interlinear Greek – Arabic», Universite Antonine, Faculte des Sciences Bibliques, Oecumeniques et des Religions, 2003.

Հեղինակին ամբողջական գործերը

- 1.– Ճշմարիտ վերածնունդը
- 2.– Բա՛ց սրտիդ դուռը, Յիսուս կը սպասէ
- 3.– Ես եմ Ճամբան, Ճշմարտութիւնը եւ Կեանքը
- 4.– Մանուկներուն Արքայութիւնը
- 5.– Ամենօրեայ անում Աստուծոյ Հոգիով եւ Խօսքով
- 6.– Աստուածաշունչին պատասխանները
Ժողովուրդին հարցումներուն
- 7.– Աստուածաշունչին պատգամը
այսօրուան մարդուն
- 8.– Գիտնանք պատասխանները որոշ հարցումներու
- 9.– Ամենօրեայ հոգեւոր ուսուցում
- 10.– Մեր հոգը Աստուծոյ ձգել
- 11.– Հաւատացեալները վարդերն են արքայութեան
- 12.– Մեր Տիրոջ եւ Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի
առակներուն բացատրութիւնը (Ա. հատոր)
- 13.– 62 հարցումներ եւ անոնց պատասխանները
- 14.– Ճանչնանք Աստուածաշունչը
հարցումներու միջոցաւ
(գարգացման մրցումի համար)
- 15.– Սուրբ Կոյս Մարիամ եւ Հայ Մայրը
- 16.– Մեր Տիրոջ եւ Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի
առակներուն բացատրութիւնը (Բ. հատոր)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խօսք	7
1.– Այրի կնոջ եւ դատաւորին առակը	9
2.– Երկու որդիներուն առակը	55
3.– Տասը կոյսերուն առակը	74
4.– Աններող ծառային առակը	93
5.– Հարպիկ տնտեսին առակը	121
6.– Ժայռի վրայ շինել տունը	148
7.– Նոր կարկտանը հին հագուստին վրայ չի դրուիր	157
8.– Նոր գինին հին տիկերու մէջ չի դրուիր	162
9.– Հրագը գրուանի տակ	168
10.– Արթուն ծառաներ	177
11.– Հաւատարիմ եւ անհաւատարիմ ծառան	196
12.– Հարսանիքի հրաւիրեալներուն առակը	207
13.– Չար մշակներուն առակը	228
14.– Աշտարակ շինողին եւ պատերազմի պատրաստուող թագաւորին առակները	248
15.– Պարտատէրն ու երկու պարտապանները	261
16.– Մեծ խնոյքին առակը	284
17.– Այգիի մշակներուն վարձը	305
18.– Ի՞նչպէս շահարկել դրամը (Քանգարները)	335
19.– Ծառայի մը պարտականութիւնը	358

20.- Ի՞նչպէս շահարկել դրամը (Մնասները)	367
21.- Թ՞գեցնիին օրինակը	390
22.- Ոչ ոք գիտէ օրը կամ ժամը	404
Մատենագիտութիւն	413
Հեղինակին ամբողջական գործերը	414